2/-

891.99-34
L-14
Լրաց.
398.21(47.925)

ԳՐԱԴԱՐԱՆ է 1961 թ.

Ս. Ա. ԼԱԼԱՑԵԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱԻԱՌ

ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆ

Ա. ՀԱՏՈՐ.

1089.



ԹԻՖԼԻՍ — ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

A III 2666

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ

ՀԱՅ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԵԱՆ

ՀՕՆՈՒԱԾ
ՎԵՂԵԹԱՓԱՄ
ՄԱՐԳԱՐԻՏԻ
ՑԻԶԱՏԵԿԻՆ
Իր մայր՝
ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ
կողմից.

Ա. ԳԻՐՔ.

Թիֆլիս.

ԱՆԱՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Աստարակ *)

Ամանակով մի թագաւոր կար, կենում էր Անայ քաղաքումը։ Դրան իրեք հատ տղայ ունէր, մենձ տղէն ու միջնեկ տղէն խնդրեցին հօրը, թէ իրաւունք տու մեզ գնանք էրկու հատ աւ բերենք քիզ հըմար։

— Որդիք, գնացէք, իրեք սար իրաւունք ունէք աւ էթալու, համա չէթաք Ղարարուլուա Ղահրամանի սարը, ոչ մի մրչիմ, ոչ մի օց իրաւունք չունի էտ սարը նի՛լնի. դա իրա ամարանոցն ա, էթաք էլ օդուտ չէք ունենալ։

Տղէքը իրանց նետնիրը վեկալան, իրանց ձիանը նի էլան, գնացին։ Գնացին հասան էտ իրեք սարի կուշտը։

— Է, ախպէր, ասեց մենձը, արի էթանք էն սարը, որ թագաւորը ասըմ էր, տեսնենք մեզ ինչ կըլի։

Գնացին էտ սարը. տեսան մարալը մի ղըհիցն ա ման գան լի, կըխտարը մի ղըհիցն ա ման գալի, ինչ ջուրա անասուասիս՝ էտ սարըմը կար, ծաղկընիրով, յաղրընիրով լիքը։

— Դէհ, ախպէր, ասեց, նետդ վեկալ, տեսնենք քանի մարալ, կըխտար ու ջէյրան կարանք վի քցիլ։

---

*) Պատմեց 1912 թ. Օգոստոսի 23-ին Աստարակ գիւղում նոյն գիւղացի Գեորգ Մկրտչեան Գեորգեանը, որ 60 տարեկան մի ծերունի է, անգրագէտ. պարապում է այգեպանութեամբ եւ նեֆիմութեամբ, որի պատճառով յանախ ճանապարհորդում է շրջակայ գիւղերն ու գաւառները։ Շատ ափսոյտ եւ խելացի անձնաւորութիւն է։

Մինձ ախպէրը իրեքը վե քցեց, պուճուր ախպէրը էրկուսը· քաշ տալով բերին յաղբերի ղրաղին վե դրին։

— Դէհ, ախպէր, ըն կրակ անենք, մի խորոված անենք, ուտենք։

Մըն էլ տեհան մի ագռաւ էկաւ քարերին կանցեց ու ղըռաց, ղըռաց, ղըռաց։

— Ախպէր, մեր կերածը հարամ ա, որ սրան վե չը քցենք, նեռով տու թող սատկի, մեր գահլէն տարաւ, ասեց մինձ ախպէրը պուճուրին։

Պուճուրը նեռը քցեց դիպաւ ոչ, ագռաւը բանձրացաւ, մի պուճուր սև ամպ դառաւ, մի ընենց սելաւ թափեց, որ հարիր վիթանոց քարերը քաշեց ածեց ծովերը։ Ցղեքանցն էլ սելաւը քշեց տարաւ. Մեի փափախը մնաց քարի արանքը։

Թագաւորը տեհաւ որ տղէքը չեկան, հինգ օր համբերեց չէկան, ասեց. Պուճուր տղա, իմ տակի ձին նիլ, գնա սարերը ման արի, տես քու ախպէրանքը ինչ տեղ են։

Պուճուր տղէն ձին նի էլաւ գնաց էն իրեք սարը ման էկաւ, զատ չտեհաւ։

— Գնամ, ասեց, Ղարաբուլուտ Ղահրամանի ախչկա սարն էլ ման գամ, տենեմ ինչ նշան կա։

Նի էլաւ տեհաւ որ մենձ ախպօր քթակը քարի արանքումը մնացել ա. Հէյ վախ, ասեց, իմ ախպէրը ըստեղ փնասվել ա։ Դե կալաւ քթակը, տարաւ հոր կուշտը։

— Ա՛յ, որդի, ինչ խաբար։

— Գնացի իրեք սարը ման էկա, հէչ բան չտեհա, գնացի Ղարաբուլուտ Ղահրամանի ախչկա սարը՝ տեհա ախպօրս փափախը քարի արանքումն ա, վերեմ կալել բերել քեզ շանց տամ։

— Շատ լաւ ա էլել, որ ըտենց ա էլել. ասեց հէրը, խիչի ինձ լսեցին։ Դու էլ չլսես՝ ըտենց էլ դու կըլես։

Մէրն իմացաւ, շատ արտասունք թափեց, հեղեղի պէս յաշքերիցը թափըմ էր, էտ ձէնին պուճուր տղէն նի մտաւ մօր օթախը. Մէր. ասեց, իմ հոգու պարտքը ըլի, որ էթամ էտ Ղարաբուլուտ Ղահրամանի ախչկա շլինքը կտրեմ, բերեմ շանց տամ քեզ, որ դու հովանաս։ Համա, հօրս չասես, ես պըտի թաքուն էթամ։ Պուճուր տղէն նի մտաւ գոմը, ասեց. Թավլարաշի, որ ձին ա գլխաւոր ձին, ինձ շանց տուր։

— Որդի Ջան, ինչ պըտի անես ձին։ Փու ձի նի լիլու վախտը չի, հալա Ջահել ես։

Առ հա մի սիլլա դրա սըֆաթին. Անիրաւ ծերունի, ես քեզնից բան եմ ուզըմ, դու խի՞ ես խնահըմ։

— Է՜, Թագաւորի որդի, ես մեղ՝Աստուա. քու պապի ձիու քուռակը կը նիլնես ու կեթաս, Աստուած քեզ հետ։

Դէ, հաւաշ, ես քեզ մի բան էլ ասեմ — վեկալ պապիդ թուրը, վեկալ Հազարէն զալխանը, ու պապիդ դուրդը։ կախ էլած ա, արի տանեմ շանց տամ։

Օթախի դուռը բաց արուց թավլարաշին, ասեց. Համեցէք, Թագաւորի որդի, էս թուրն ա պապիդ. էս պապիդ զալխանն ա, էս էլ դուրդն ա։ Աստուած քեզ ուժ տա, որ բանացընես։

— Դէ գնա, թավլարաշի, քուռակը թամքա, ու դուս քաշա։

Տղէն գնաց խաղնէն նի մտաւ, իրա չափ փոզ վեկալաւ դրուց խուրջինը, դուս էկաւ, տեհաւ թավլարաշին ձին թամքել իրա ճամփէն ա պահըմ։

— Է՜, ծիրունի, ասեց, ինձ չանիծես, ոտիդ մեռնեմ, նրա համար եմ ասըմ, որ քեզ մի սիլլա տվի, ես քեզ մեղ՝Աստուա. դէ փէշա բռնա։

Մի քանի բուռը վոսկի տվուց, պապի զէնքերը վեկալաւ ու նիլաւ ձին՝ գնաց։ Գիտի ոչ ուր ա էթըմ։ Մի բարակ ճամփա ընկաւ յառաջը՝ գնաց ու գնաց։

Իրիկունը թագաւորը հարցրուց թագուհուցը, թէ մեր տղէն յոուր ա, չի երևըմ։

— Ես էլ չգիտեմ ուր ա, ասեց։

Մի ընիշա բէ քցա վրիս, էթամ տեսնեմ էտ տղէն ինչ էլաւ։

Թառասուն հատ գոմ ունէր, եռեսուն ինը ման էկաւ, տեհաւ հէչ բան պակաս չէր, մտաւ էն մի գոմը, տեհաւ բոզ ձիու քուռակը չկա, կանչեց թավլարաշուն, ասեց. Հալիվոր, յամեն բան թամամ ա, բա մեր բոզ ձիու քուռակը յոուր ա։

— Թագաւորն ապրած կենա, դու գիտես ոչ որ քու տղէն գնացել ա Դարարուլուտ Դահրամանի ախչկա գլուխը բերելու։

Ծնկանը տվուց ու յուշաթափ էլաւ թագաւորը։

Խաբարը գնաց կնկանը, կնիկը ընչար ջուր բերիլը, աւատա կէս մահացաւ։

— Թագաւոր, ասեց, ինչ բանի ես, տղա ա, գնացել ա՝ կըդա։

Ա՜յ կնիկ, էտ անիծածը հազարաւոր մարդիկ ա սըզանել, իմ տղէն նրան ինչ կարա անի։ Գնաց, էլ գալ չի. իմ իլլաճը ինչ կըլի։ Իմ թագաւորութունը ում պըտի հասնի։ Ասեց ու սկսեց լաց ընիլ։ յաշկերիցը սելավի պէս արտասունքը թափվեց։

Կնիկը ասեց. Ա՜յ մարդ, հօ դու ջահիլ չես, տղա ա՝ գնացել ա կըդա, մ՝ քու տունը Աստուած շինի։

Տղէն գնաց մի նախրչու թուշ էլաւ։

Տեհաւ նախրչին նոթերը կիտել աւ։

— Բարով քեզ, նախարչի, ասեց։

— Աստու բարին։

— Էտ խմ ես նոթերդ կախ արել։

— Թագաւորի որդի, գնա քու բանին, ինչ ունես ինձ հետ։

— Նախարչի, ինչ ուզես՝ կըտամ, հըլա ասա տենեմ ընչի հըմար ես նոթերդ կիտել։

— Թագաւորի որդի, ասեց, էս քաղաքի կէսը սէլաւը տարել է։

— Ե՞փ, այ աղա։

— Բա գիտես ոչ, որ էս քաղաքը Դարարուլուտ Դահրամանի աիչկա քաղաքն է. խարճի համար հինգ հրոպա հղացրին, էկաւ սէլաւը տարաւ. ինքն էլ անխարճ առնել գնաց։

Թագաւորի տղէն ձիուցը վեր էկաւ, խուրջինը բաց արուց, իրեք բուռը վոսկի տվուց նախարչուն։

— Խմ՞ ես տալի էս փողը ինձ։

— Ոտիդ մեռնեմ, էտ ասչկա տեղը ասա ինձ. ես դրա հետ բան ունեմ։

— Որ ըսենց փափագըմ ես նրա երեսը տեսնելուն, էտ բանձր տունը տեսնը մ ես, ընտեղ մի հալիվոր մարդ կա, գնա նրա կուշտը, նա քեզ կասի։

Թագաւորի տղէն ձին քշեց գնաց, էտ դռանը վեր էկաւ։

Նոքարն էկաւ ձին քաշեց նեքսեւ, խուրջինը վեկալաւ, նի մտաւ օթախը։ Տեսաւ մի հալիվոր մարդ բամբակով չորս գիտը շինած, մէջը նստած է։

— Բարյաջողըմ, ափու ջան, ասեց։

— Աստու բարին, որդի ջան, հազար բարի ես էկել։

Ընկաւ հալիվորի ոտը։

— Ի՞նչ խարար է, ջանըմ. որ դու իմ ոտն ես ընկնըմ։

— Ափու ջան, ես Անոյ թագաւորի տղէն եմ, կարելի է ճանանչես, մենք էլ իրեք ախպէր ենք, էրկու ախպէրս գնացին, որ հօրըս հըմար աւ բերեն, գնացին չեկան. իրեք սար ման էկա՝ գնացի Դարարուլուտ Դահրամանի աիչկա սարը, մենձ ախպօրս քթակը քարի արանքըմը գտաւ։

— Հըմի բա դու յուր ես էթըմ։

— Էկել եմ քու կուշտը, որ քեզնից ճամփա յիմանամ, էթամ իմ ախպօրանց հայիվը (ոխը) առնեմ։

— Է՛, որդի, շատ գժար է դրա տենելը, թէ տեսնես էլ շատ գժար կը տեսնես, լաւն էն է, որ ետ դառնաս՝ գնաս, ափսոս ես։

Թագաւորի տղէն ըլեթ խնդրեց, աղաչեց, որ ճամփա շանց տա, էթա։

— Է, որդի, ասեց հալիվորը, վեկաց էտ պղինձը վեր կալ, մի

լաւ խաշիլ էփա ես ուտեմ, եռոց ամէն բան կասեմ։

Տղէն վէ կացաւ եգին եգին կրակն արուց, խաշիլն արուց, եղն ածեց մէջը, դրուց հալիվորի յառաջը։

Լաւ կերաւ հալիվորը։ Շատ ապրիս, ա՛յ տղայ, ըսդար վախտ ա ըսենց անոշ խաշիլ կերել չի։ Դէ յարի նստի՝ ես պատմեմ։

Տղէն նստեց։

— Ա՛յ տղա, ասեց, մի վեկաց յարի կուսս ըռնա, ինձ վեկացըրու։ Կուռը ըռնեց, հալիվորին վեկացրուց տեղիցը։

— Դէ ինձ հետ յարի, ա՛յ տղա։

Գնացին, մի օթախի դուռ բաց արին։ Մի հատ ծովեղէն գեամ տվուց դրան, էկան ըլեթ յիրանց տեղը նստեցին։

— Դէհ պատմա, ոտիդ մեռնեմ, ասեց թագաւորի տղէն։

— Որդի, էտ գեամը գիտե՞ս ինչ գեամ ա.—կեթաս մեր սարը, մի բարակ ճամփա կընկնի յառաջդ, կը քշես ու կեթաս. օխտն օր, օխտը քշիր որ էթաս՝ դէմ կառնես մի ծովի, որ դէմ առար ծովին, ձիուդ վէ կըգաս, ձիդ կանես չայլաղը. ըստեղից վէ կունես օխթը կտոր գըմակ, մի սաղ ոչխարի կէս ջանդակը, մի պուճուր դաստա էլ կանանչ խոտ վէ կունես։ Էտ բոլորը կը դնես խուրջընիդ մէջը. որ վեր էկար, ձիդ արիր չայլաղը, կըտանես գեամը կը քցես ջուրը, քաշելուն պէս ծովեղէն ձին դուս կըգա, դու քանի փախչես՝ ձին քամակիցդ կըգա։ Ետ կըդառնաս ձիուդ վրա, ձին կեթա ձիուդ կուշտը կոխ կանի, կեթաս կը ըռնես, կը թամքես ու նի կըլես։ Կեթաս կհասնես ծովի էն գըհի տուտը, ձիու գեամը կը հանես, կը կապես մեշքիդ, քու խուրջինը վէ կունես. ըղար տեղը գիտեմ, էլ ուրիշ բան չի գիտեմ։

Տղէն դառաւ ասեց. Հալիվոր, որ հասա, դրանից հետը իմ իլահն ի՞նչ կըլի։

— Որդի. ըղար տեղը գիտեմ, էլ դատ չգիտեմ։

— Դէհ մնաս բարով, հալիվոր, շատ շնորհակալ եմ։

— Աստուած քու հետ ըլի, մենակ քեզ մուղտի կաց, ափսոս տղա ես, ինձ որ լըսես՝ էթալ չես։

— Ընչի՞ հըմար, հալիվոր։

— Թանօխթը տարի ես Դարարուլուա Վահրամանի կիրակուր էփողն եմ էլել, մենակ ոչ յիրան եմ տեհել, ոչ ձին։

— Բա դրա կիրակուրը ո՞նց ես տարել։

— Տարել եմ դրել օթախը, յինքն էկել նստել կիրել ա։

— Դէհ գնա, Աստուած քու հետ ըլի։

Տղէն ձին նստեց գնաց։ Գնաց՝ շատն ու քիչը Աստված գի-

տի, գնաց հասաւ ծովի ղրաղը, հալիվորի առաջին պէս ծովեղէն-ձին բռնեց ու նի էլաւ, յանցկացաւ ծովի էն դիէը։ Ետ թամաշ արուց, տեհաւ ըտեղ մի ձեռք աներ կա, որ չուտես, չխմես, էտ աներին թամաշ անես։ Տղէն մնաց կանգնած թամաշ անելով։ Յաշքը քցեց էս պատին, էն պատին, դարգեահ չըտեհաւ, որ նի մնի։ Խուրջինը ձեռին կանգնած ա։ Անկարծ տեհաւ մի ջահէլ ախչիկ, քսան յուս մէկ ուսին ա կախ էլած, քսանը մէկ ուսին։

Ասեց. Ի՞նչ անեմ, թէ ես անկարծ ղրան բարով տամ, վայ թէ բիրտան ինձ սըպանի։

Ախչիկն էլ անկարծ տեհաւ ծովի ղրաղին արևի ցօղի հետ մի տղա կանգնած ա։

— Ախպէր, ասեց, էտ ինչ բան ա. հրեղէն ես, թէ հողեղէն։

— Չէ, քիր ջան, ասեց տղէն, ես հողեղէն եմ, էկել եմ քու կուշտը։

— Դէ որ ըտենց ա՝ համեցէք։ Դէ կանգնի, մայ տղա, թէ քե մարիֆաթ ունենաս՝ ես կիմանամ, նոր կըտանեմ իմ կուշտը։

Սկսեց թամաշ անել էտ տղին։

Տղէն թամաշ արուց, որ մի ասլան պողպատի դռան քամակին կապած ա, դափլանն էլ էն դիէն էր կապած ղնջըլով.

Ասեց. Լաւ կըլի էս գմակի կէսը քցեմ ասլանին, կէսը դափլանին, տեսնենք ինչ կըլի մեր իլլաճը։ Մինը մի ձեռն առաւ, մինը մի ձեռը, էն մի ձեռինը քցեց ասլանի յառաջը, էն մինը քցեց դափլանի յառաջը։ Դրանք էտ գմակովն էլան, տղան անց կացաւ։ Ախչիկը տեհաւ, որ տղէն խելքը գլխին տղա ա։

Տղէն գնաց հասաւ մի յուրիշ դարպաղի, տեհաւ էրկու դոշ կա կապած, դոշ չէն՝ մի մին ասլան են։ Հանեց կանանչ խոտը, քցեց դրանց յառաջը՝ անց կացաւ։ Գնաց տեհաւ մի դուռ հետ արած ա, էտ դուռը բաց արուց, էտ էլ անց կացաւ, գնաց մի յուրիշ դարպաղի կուշտ. թամաշ արուց, տեհաւ մի հատ ալ ձի, որ խրխընջում ա՝ երկինք դեռինք դողում ա։

Ախչիկը էկաւ, ու տղի բիլակը բռնեց, ասեց. Յարի էթանք իմ օթախը, ուր ես էթում։

Տեհաւ տղէն շատ խամ տղա ա, ափսոսեց։ Տարաւ իր օթախը, ասեց. Ա՜յ տղա, էտ ուր ես էթում անիմանալ, կամ ուր դեհան ես գալի, կամ յուր ես էթում։

Տղէն յիրան քցեց ախչկա ոտը։

Ախչիկը բռնեց տղի կուռը, ասեց. Վեր, վեր, վեր, ափսոս ես, էտ ինչ ես անում, քու ջահէլութունին արժան ա։

Դէն, քեզ մեղա, քու Աստծուն մեղա, ես կասեմ իմ ցաւը, քալքի դու մի իլլաճ անես։ Իրեք ախպէր ինք, Անայ թագաւորի

էլ տղէքն ենք. մի օր էրկու ախպէրս գնացին որ հօրս հրմար աւ բերեն, գնացին էլ չեկան։ Եռայ ես գնացի մեն էկա, մենձ ախպօրս քթակը քարի արանքումը գտա։

— Ո՞ր սարն էր, այ տղա։

Ղարաբուլուա Ղահրըմանի ախչիկա սարն էր։ Լսել եմ, որ էտ ախչիկը էլել ա սէլաւ ա արել, իմ ախպերանցը քշել ա տարել, հրմի էկել եմ, որ յիմանամ, սուտ ա թէ ղորթ ա։

Ախչիկը ծիծաղաց, ասեց. Մէնակ դու ես, այ տղա, բռենց հաղարաւորն ա պատահել։ Որ քեզ ճամփա շանց տամ, ինձ ի՞նչ կըտան։

— Դու իմ քիրն ես, կօրուստ ունենաս՝ գանեմ բերեմ տամ քեզ։

Որ բռենց ա, ինձ մին ու ճար ախպէր ունեմ, բռնված ա, օխտը տարի ա, եթէ նրան բերես ինձ տաս՝ ես քեզ լաւութիւն շատ կանեմ։ Քեզ իլլաճ անի, Ղարաբուլուա Ղահրըմանի ախչկա տակի խալլու ձին իլլաճ կանի, գնա ընենց մտի մըսուրքը, որ ձին էլ չիմանա, կեթաս լաց կըլես, ձին քեզ կասի. Իսան օղլի, խի՞ ես լաց ըլըմ, դու նրան ցաւդ կասես՝ նա քեզ իլլաճ կանի։

Տղէն դլուխ տվուց ախչկանը, շնորհակալ էլաւ, գնաց։ Գընաց, ուսուլով մտաւ ձիու մսուրքը, մդկըտաց, գոռաց, ճչաց, հէնց լաց էլաւ, որ ձիու խիզճն էկաւ, լիզու էլաւ՝ ասեց. Իսան օղլի, խի՞ ես լալիս, քու ցաւն ի՞նչ ա։

Վիրև Աստված, ասեց, նեբքիը դու, իմ ցաւից ազատողը դու պըտի ըլես։

— Ասա տեսնեմ քու ցաւն ի՞նչ ա։

Ասեց. Ընդար տանջանքով էկել եմ հասել ըսաի, որ էտ ախչիկն տանեմ։

— Տեհած կաս էտ ախչիկը։

— Չէ, կաթիտ ղուրպան, տեհել չեմ։

— Դու ո՞ւմ տղէն ես։

— Ես Անայ թագաւորի տղէն եմ։

— Դէ որ բռենց ա, վե՞ կաց, լոլ ա լաց ըլես։ Կեթաս քառասուն օթախ բաց կանես, քառասուն օթախը անց կը կենաս, մի հատ օթախ կա. վոսկով զարդարած, ախչիկը էտ օթախըմը քնած ա, մենակ թէ՝ վրա չիրծնես պաչես, կը վեկենա միսդ կը քրքրի։ Էտ հատակի ախչիկ ա, նրա յերեսը իսան (մարդ) չի տեսել։ Եռեսուն ութը օր քնել ա, մերմ ա էրկու օր, որ վե կենա։ Մի հատ տախտ կա էտ օթախըմը դրած, վրին մի բուդուրկա (շիշ) կա, մի ըսուտքան. Հազարէն դասատն բիլբուլը ծովի վրին կախ տված ա. որ նի կը ճենես օթախը՝ յառաջինը դլուխ կըտաս

Հազարէն դասատան բիլբուլին, եաոյ կը դառնաս բուղուրկին։ Եաոյ ոնների տակի էրկու շամադանը վի կուռնես, կը տանես գլխավիրեը վի կը դնես։ Գլխավրինը կը բերես ոնների տակը կը դնես ու ձեռդ կառնես ըստաքանը, բուղուրկից կը լըքցընես։

— Տղէն ասեց. Կաթիզ մեռնեմ, էտ ջուրը ինչ ջուր ա։

— Ջահար ա, հաստա անմեռաս ջուր ա։ Կը խմես՝ կասես՝ օխայ, էս ինչ լաւ ջուր էր. ես իմ կեանքըմս ըսենց ջուր չի խմած։

Բիլբուլը կասի թէ հազար բարի ես էկել. խօսալ չես։ Հա, բիլբուլը կասի, գիտեմ քաւ մինքը, դու մեղաւոր չես, ձին ա մեղաւոր, էլի ձէն չես հանիլ։

Տղէն գլուխ տվուց ձիուն, եաս դառաւ։ Գնաց քառասուն օթախը բաց արուց, ընենց քրթինք ա թափել վրին, որ յաշքերի գիլեքից (բիր) էլ ա թափըմ սելավի նման։ Նի մտաւ ախչկա օթախը. գլուխ տվուց Հազարէն բիլբուլին, եաս դառաւ ախչկանը թամաշ արուց, տեսաւ որ յամէն մի ձեռի վրա տասը փթանոց ծակ քար կա, որ օյանմիշ էլաւ, էն քարերը շըխկացընին, նոր ձէնին քնի, որ տենի մարդ չկա։ Էտ ախչկան որ տեսաւ՝ տղի մազերը բիզ բիզ էլան, համարեա օլրմի (մահուան) դու

գնաց։ Դառաւ էկաւ դրբա տախտը, գլուխ տվուց բուղուրկին, ձեռը քցեց բուղուրկին, ըստաքանը լըքցրուց, ու խմեց, ընենց դառն էր, որ օցի եաղաւ, ասեց, օխայ, ինչ անոշ ջուր էր, իմ կեանքըմս ըսենց ջուր խմած չի։ Նոր դառաւ էկաւ դրբա ախչիկը. վօսկի ապլուխը երեսը քաշած, վաթսուն յուս մազերը դլխատակը դրած։ Գլխավիրեի շամադանները վի կալաւ ոնների տակը վի դրուց, ոնների տակինը տարաւ գլխավիրեի վի դրուց. թամաշ արուց, տեսաւ էրկու շամադան կա, վօսկի, անդին քարով շարած, ընենց վառու�՝ ա, ոնց որ կրակը։ Էտ շամադանի մէջը մուռմը դրուց, մինն էն կողքին դրուց, մինն էս կողքին դրուց։ Էկաւ ոնների տակին կանգնեց. միքիչ կացաւ, ախչիկը եաց (շարժվեց) ու քարերը շըղշըղկացրուց, էտ օթախը սաղ եաց. ախչիկը դառաւ մէկէլ կողքին՝ քնեց։ Մըն էլ տեսաւ սարը էկաւ ախչիկը։ Տղէն ասեց. Առողջութուն, թագաւորի ախչիկ։

Բիլբուլն ասեց. Խէր ըլի, ա՛յ ազա, խի՞ ես էկել։

— Տղէն ասեց. Բեղ տենելու եմ էկել։

— Հա, ասեց, գիտեմ, ձին ա ասել քեզ, դուն մեղաւոր չես։

Էտ քշերը տղէն ընչար լիս կանգնած մնաց. էկաւ էքսի օրը. էկաւ էն ժամանակը, որ սարը էր դալի. էլի էն ժամանակը սարը էկաւ։ Առողջութուն, թագաւորի ախչիկ, ասեց տղէն։ Էտ օրն էլ անցկացաւ, տղէն կանգնած մնաց։ Առաւօտը լիսը բացվելուն

պէս բիլբուլը սկսեց խօսալը, շատ սիրուն, քաղցր խօսալը։ Էկաւ սարը գալու վախտը՝ սարը էկաւ։

— Առողջութուն, Թագաւորի ախչիկ։

Ախչիկը նստեց, որ պատկերն ընկաւ տղի յերեսին, տղէն ուշագնաց էլաւ։ Մի հինգ հրոպէից տղէն օյանմիշ էլաւ։

Կեանքիդ ողջութուն, Թագաւորի որդի, ասեց ախչիկը։ Իմ սէհրին կորաւ, իմ պատկերը տեսող չէր էլել, որ դու տեսար՝ ես քունը, դու իմը։ Մենակ պաս պըտի մնանք, ընչար էթանք քու հօր կուշտը։ քու էրկու ախպօրը ես եմ ղրկել, հէրդ դապուլ կանի՞ ինձ առնելը։ Քանի որ մնանք ըստեղ, ոչ քու նաֆասը պըտի իմ նաֆասին դիպչի, ոչ իմը պըտի քունին դիպչի։

Բիլբուլը խօսաց թէ Աստուած կատարի, Աստուած կատարի։

— Դէ, էյ տղա, էստեղ արի, յուշդ չէթա, իմ վախտուն յուսանի տակին իրեք հատ բալանիք կա, տար էրկու օթախը բաց արա, իսկ էն մի օթախը բաց չանես։

Տղէն վեր կացաւ, բալանիքը ետ արուց, մատերը բանցրացընելու ժամանակը հոգին էր տալի, ախպէրքանքն էլ մոտանն արուց, բալանիքը վերկալաւ, մի օթախի դուռը բաց արուց, տեսաւ մի հատ ձիու թամբ կա, մի հատ զեամ կա, մի ապրշումի ծածկոց կա, էտ իրեք կտոր բանը արեի նման փայլում էր։ Դուռը շինեց, գնաց էն մի օթախը, տեսաւ բաց չիլելմ, բոթեց (հրեց), զոռով բաց արուց, տեսաւ մի մենձ օթախ, լիքն անդին քարով, վօսկով։ Ետեղից էլ ետ դառաւ, էլի դուռը շինեց։ Էկաւ էն մէկէլ օթախի կուշտը։ Ես որ բաց անեմ, նա ինձ ինչ պըտի անի, մի բան որ ինձ առել պրծել տա։ Սկսեց օթախի դուռը բաց անելը։ Բաց արուց, տեսաւ դատ չկա։ Թամաշ արուց պատին, տեսաւ մի հատ ձաի հուլ, զեղին զայթանով կապած, կախ ընկած։ Մըն էլ տեսաւ որ էտ հուլի զայթանը յիրան յիրան երկարեց, դիպաւ էս պատին, դիպաւ էն պատին, ջարդեց ծովի ղրազի շուշէն, ընկաւ ծովը։ Ետ դառաւ էտ դուռը չինեց, փորու փոշման էկաւ Թագաւորի ախչիկ կուշտը։

— Հըմի ոնց ես շըլինքդ դուս քաշեմ, ասաց ախչիկը։

Տղէն ծպտուն չհանեց։

Հըմի վե կենամ յաշկերդ հանեմ իմ պատկերը տեսել ես, անհնար ա, կարալ չեմ հանել, յաշքա դուս գա։ Էդուց ինձ հըմար ախ կանես, ձեռդ չեմ ընկնել։ Օխտը տարի պըտի դու ման գաս ինձ, որ նորից ձեռ բերես։ Ինամ չունեմ (իցէ թէ) էթաս ձիու մասուրքը ընկնես՝ ոնց որ լաց ես էլել՝ ընենց լաց ըլես, իցէ թէ ձին իլլաճ անի քեզ, թէ չէ քու բանը չի ինձ գանելը։

1084 A III 2666

Էտ ծովը արևելքի թագաւորի սահմանքն էր, էտ արևելքի թագաւորը յիրա տունը կատարքմ էր, ձկնապաններին կանչեց, տասը թոռչու, ասեց. Որդիք Ջան, ըսօր ինչ ձուկ կը բռնէք, կը բերէք ինձ, ինչ որ ձեր վարձն ա, մէկին էրկու ինձանից կատանաք։ Ձկնապանները գլուխ տվին, էտ դառան. վեկալան յիրանց թոռները, գնացին դըրա ծովը, յառաւօտվանից ընչար յիրիկնապահ հէչ բան չկալան. մի թոռչին շատ սամթին թոռ քցող էր. Տղէք, ասեց, մի տարի ըստեղից մի ձուկն եմ հանել, որ մի թագաւորուքթուն ածէր, կանանցէք, մըն էլ պըտի քցեմ։

Թոռը քցեց. քաշելուն պէս՝ մի վօսկէ ձուկ դուս էկաւ։

— Տղէք, ասեց, էս ձկնից ով ա տեսել։

— Շատ արդար ես ասըմ, բանց ձուկը մենք տեսել չենք մեր կեանքի մէջը։

— Սրա փորըմը զատ կա, տենը՞մ էք իժդար ա ուռած։

— Տղէք, բերէք մորթենք էտ ձուկը։

— Է՞, ափսոս ա ձուկը, բերէք տանենք թագաւորին տանք, միքանի մանէթ կառնենք խարջլրդ կանենք։

Ձկնապանը գնաց դալալի կուշտը, ասեց. Ախպէր, գնա թագաւորի վօսկէ բոդնոցը, տէկէլ յիրա թամուզ աղլուղը վէկալ բեր։

Դալալը գնաց ապլուղը և վօսկի բոդնոցը բերուց, կանանչ խոտ քաղեցին դրին ձկան տակը, աղլուղը քաշեցին յէրեսը, տարան ավին թագաւորին։

Թագաւորը տեսաւ որ էտ տեսակ ձուկը յիրա կեանքի մէջը տեսած չի, ասեց. Նազիր, էս տեսակ ձուկը տեսած կա՞ս։

— Չէ, թագաւոր, էս յառաջի անգամն ա։

— Դէ տար, իմ ալմազ դանակովը մորթա, տես փորինը ինչ ա, վեկալ բեր։

Նազիրը ձեռները քշտեց, ձուկը առաւ, տարաւ, մորթեց, փորը բաց արուց, տեսաւ մի հատ հուլ, գեղին զայթանով. բերուց թագաւորին տվուց։

— Ա՛յ, տղէք, ասեց թագաւորը, էս ի՞նչ բան ա։

— Թագաւոր, ասեց վազիրը, ինձ մի հէր ունեմ հարիր հատուն տարեկան ա, թէ իմանա, իմ հէրը կիմանա։

Գնացին բերին հալիվորին, մտիկ տվուց, ասեց Ճանանչըմ չեմ, թագաւոր։

Ասեց. Ըսենց բան ես չեմ ունեցել, ինչ ճանաչեմ։

Ասեց. Մի թամուզ աղլուղ բերիլ տուր, հուլը սրբա, այ տղա, էս հուլը Ղարարուլուա Ղանրըմանի ախչկա հուլն ա, էս հուլն ա, որ ախչիկը տեսնես ինչ տեսակ ա, յուշըտ կեթա քառասուն օր։

— Ես էտ ախչիկը ձեռք կը բերեմ, ասեց թագաւորը, որ ձեռք բերի քեզ լաւ կը շահեմ։ Դէ, հալիվոր, գնա քու տունը։

Թագաւորը դալալը քցեց քաղաքի մէջը՝ թէ ինչ մարդ, ինչ կնիկ կարենա Դարարուլուտ Դանրըմանի ախչիկը գտնի բերի, լիզուն ինչ պըտըրի՝ կըտամ։

Ընտեղ կար մի հոգեվախ կնիկ, էկաւ թագաւորի կուշտը։

— Հը՛, պառաւ, ասեց թագաւորը, կարես ձեռ բերիլ։

Ասեց, իմ բանն ա, որդի ջան, ես տարվա գլուխ էկած բանը մի սըհաթըմը քանդըմ եմ. իմ բանն էլ էտ ա։

— Դէ ուզա տամ։

— Թեզանից կուզեմ տասներկու բուդուրկա օխտը տարվա գլխի, մի հատ դայըղ, էրկու մարդ նստելու տեղ, մի հատ տաւարճուղ (մաղախ) մէջը լիքը հաց, օխտը օր թող դայըղչին դայըղը քշի, որ ես տարվեմ, ետոյ մենակ գնամ բերեմ։

Թագաւորը պառաւի ուզածները տվուց, պառաւը օխտն օր ման էկաւ ծովի յէրեսին, տարվեց յամէն բան, դայըղչուն ճամբու դրուց, յինքը մենակ նստեց դայըղը՝ քշեց։ Քշեց էկաւ ծովի էն յերեսը։ Էտ տաւարճուղը պահեց աւազըմը, դայեղն էլ պահեց աւազըմը, յերեսը աւազոտ արուց պառաւը, ծովի ղրաղին նստեց։

Դանք Անայ թագաւորի տղի կուշտը։

Էտ հուլը կորցնելուց ետոյ տղէն խնդրեց ախչկանը, թէ ձին նստեմ, ծովի ղրաղը ման գամ՝ սիրտս բացվի։

— Ա՜յ տղա, ասեց ախչիկը, քեզանից ձին ո՞վ ա խընայըմ, նիլ ման արի իժդար կուզես, մենակ իմ թամքը չդնես, ուրիշ թամք կա գոմըմը, էն դի։

Թագաւորի տղէն գնաց մանդալու, էկաւ տեսաւ մի ծեր կնիկ աւազըմը խրուած լաց ա ըլըմ։

— Բարով քեզ, նանի, ասեց։ Հուր ես, հրեղէն ես, ի՞նչ մարդ ես։

— Հոգածին իսան եմ, որդի։

— Բա ըստի ի՞նչ ես անըմ, մայ նանի։

— Նանը քե զուրպան ըլի, իմ ցաւերիցը վազն արի, որդի։

— Ասա տեսնեմ քու ցաւը ի՞նչ ա, ես քու ցաւին իլլաճ կանեմ։

— Որդի, էս ա օխտն օր ա ըստեղ ես լաց եմ ըլըմ, ո՞վ ա իմ տէրը։

— Ախր ինչի՞ համար ես լաց ըլըմ։

— Դէ, որդի, ձիուդ վրիցը ցած արի, ասեմ։

Ուզեցաւ որ ձիու վրից վեր գա, ձին գոռաց, ճըչաց, հրկինք գետինք դողաց։

Ձիու փորատակին մի զամշի տվուց, ջիգեարը փորի մէջը վառեց։

Ձին ասեց. Ախ, երախտամոռ իսան (մարդ)։

Տղէն վեր էկաւ ձիուց։

Պառաւն ասեց. Մենք էթըմ ինք երուսազէմ, էս իմ անիրաւ յընկերինը ինձ թողին ըսաեզ, ձիս տակիս որ սատկեց, ես էլ ծեր կնիկ ինց էթայի յընկորտանցս ձիու հետ. մնացի ըսաեզ վեր ընկած։ Սատված քեզ զօրացնի, որդի, դու չըլէիր ես սովից կը մահանայի։

Տղէն ասեց. Վէ կաց, վեկաց, էթանք մեր տուն։

Պառաւն ասեց. Եաւաշ, տաւարճուղս վեր ունեմ, էթանք։

Տաւարճուղը վեր կալաւ, նստեց տղի թարքը՝ գնացին։ Գնացին տուն՝ ախչիկն ասեց.

— Էս ինչ. մայ մարդ, կենտ գնացիր, ջուխտ էկար։

— Վնաս չունի, կնիկ, ծեր կնիկ ա, ինչ պրտի անի մեզ, թող մի քանի օր մնա, ճամփա կը քցենք կերթա։

— Ինձ որ լսես՝ ասեց ախչիկը, դրան դուս կանես։

— Է՞, դրա էլածն ինչ ա, մնըմ ա՝ թող մնա, դրա ձեռից ինչ կըգա։

Էտ պառաւը մնաց։

Մի քանի օրից հետոյ պառաւը սկսեց օթախները մաքրել, թամըղացնել։

— Մարդ, էս շատ լաւ կնիկ էր, որ բերել ես, ասեց ախչիկը։

Մի օր ախչիկը հրամայեց յիրա աշչուն՝ տասներկու ռանգ կիրակուր կեփես։ Մեզ պառաւ ունենք. կը զրկենք կըտաս կը բերի։

Կիրակրները պատրաստեց, բերուց օթախը, դնաց տաւարճուխիցը վեց բուդուրկա գինի հանեց, բերուց դրուց սուփրեն։

— Նանի, էս ինչ բան ա։

— Սա երկնային գինի ա. որդի ջան, խմողը շատ ուրախ հաց կուտի։

Ստաքանները լըքցըրուց պառաւը, տվուց տղին, տղէն էլ տվուց ախչըկանը, յամէնքը մի ըստաքան խմելուց հետոյ Նանիյ ասին, շատ լաւ բան ա, էտ բիրատի մենք կը խմենք։

Նանի ուզածն էլ էտ էր, խմեցին, ախչիկն էլ խուրդ ընկաւ, տղէն էլ։ Պառաւը բանեց ախչըկա ոնից, քաշեց դըրա ծովը, քցեց դայըզը ու քշեց։

Օխտն օր անցկացաւ, ախչիկը հէնց խմցաւ յիրա տեղը քնած ա, յաշկերը բաց արուց, տեհաւ ծովի վրին դայիզումն ա։

— Նանի, ասեց, ինձ ուր ես տանըմ։

Զարբա տանեմ, արի քեզ տանեմ ընենց մի թագաւորի տղի տամ, որ օրական ինձ օրհնես, ինչ ես էն դառցըվորին առել նստել։

Խարարը գնաց Արևելքի թագաւորին. Աչքդ լիս ըլի, պառաւն ախչիկը բերուց։

Թագաւորը դրկեց քառասուն ախչիկ, բանեղից ուրախութիւնով տարաւ յիրա տունը։

Թագաւորը մոռացեց, թէ ես ինչ ընծա տամ էս թաւուր ախչըկանը։

Վեզիրն ասեց. Ա՛յ անաշէն, քթածդ հուլը տուր յիրան։

Թագաւորը տվուց։ Ախչիկը շատ ուրախացաւ, որ յիրա հուլը գտաւ։

Ինձ տար մի ջոկ օթախի մէջ դի, ասեց, էլ իմ յէրեսը մարդ չգա, դու էլ չգաս՝ ընչար քառասուն օր, քառասուն օրից հետոյ կէթանք կը պսակվինք։

Դանք տղի կուշտը։

Օխտ օրից հետոյ տղէն յաշքը բաց արուց, տեհաւ մաղերի քոքն էլ ա ցաւըմ. վեկացաւ դէս ման էկաւ, դէն ման էկաւ, գտաւ ոչ թագաւորի ախչիկը. Հէյ վախ, ասեց, պառաւը տարել ա իմ անգին քարը։ Բա իմ իլլահը ինչ պըտի ըլի։ Թէղ գտա, թէղ կորուցի իմ ակն ու արիգակը, ասեց ու աչքերիցը վերածեց։

Գնաց գըբա կիրակուր էփող ախչկա կուշտը. լաց էլաւ, աղաչեց։

— Ջանըդ դուս գա, ասեց ախչիկը, էտ քեզ քիչ ա, որ յամէն մարդի հաւատըմ ես։ Գնա էլի ընկի ձիու մսուրքը, բալքի ձին քեզ իլլահ անի։

Գնաց ընկաւ ձիու մսուրքը, շատ լաց էլաւ, շատ մղկտաց։

— Հմի ինչ ա, բերախտ խան, ասեց ձին։ Հըլա տված դամշուդ տեղը չի սաղացել։

— Ի սէր Աստու, ես արի, դու մի անիլ, ինձ հասցրու իմ տեղը։

— Դէ վեկաց շորերդ հանա, ընենց կը թիմարես ինձ, որ իմ քրտինքը ինձ վեր օդոդի։ Վեկաց, տռնախս ու յաշքերս պաչա, ես կը բախշեմ, բան չկա։

Տղէն վեկացաւ յաշքերն ու տռնաղը պաչեց, ձիուն ընենց թիմար տվուց, որ ձին քըրտնքըմը կորաւ։

— Դէ գնա, ասեց ձին, Ղարարուլուտ Ղանրըմանի ախչըկա դուխըմը մի սև աղլուխ կա, վեկալ բեր։

Գնաց բերուց։

— Դէ գնա էն օթախի մաքուր թամքն էլ բեր։

Թամքն էլ գնաց բերուց, դրուց ձիու վրա։

— Դոլան զուշղունս էնպէս կը ձգես, որ փորս էրկու տակ-վի։ Դէ արի նիլ ինձ։

Տղէն նստեց ձին, ալլուղը կապեց յիրա յաշքերը, ձին թռաւ։

— Տղա, ասեց, յաշքերդ բաց արա, հասել ենք տեղ։

Տղէն յաշքերը բաց արուց, տեսաւ որ ծովի էն դրպը, մի քաղաք են վեր էկել։

Բշեց ձին գնաց մի պառաւի թուշ էլաւ։

— Բարով քեզ, նանի ջան։

Ձին սկսեց մի գոռալը. որ գոռաց, էտ քաղաքը թընդոցն ընկաւ։

— Նանի ջան, կըլի որ էս քըշեր մեզ տեղ տաս։

— Որդի, ասեց, քե տեղ կըտամ, մենակ ձիուդ տեղ չունեմ։

— Որ բանց ա, արի քեզ փող բախշեմ, ձիուս էլ տեղ տուր։

Տղէն մի բուռը վոսկի տվուց, պառաւի հանդը (երակը) թիլացաւ, քաշեց ձիուն էլ տեղ տվուց։

— Դէ, որդի ջան, նստի մի քիչ հաց դնեմ կեր, ճամփից էկած ես, սոված կըլես։

— Նանի, բա ձեր քաղաքը խի՞ ա ըսենց տխուր։

— Է՞ որդի ջան, դրա նաղլը շատ ա։

— Ի՞նչ ա նաղլը, նանի ջան։

— Էս մեր հարևան քաւթառ պառաւը գնացել ա մի հատ ջահիլ ախչիկ ա բերել մեր թագաւորի հըմար, ախչիկը կանցել ա թէ չեմ առնիլ։

— Նանի, ես որ քեզ մի մատանիք տամ, կարես տանի էտ ախչկան տա, ու ինչ որ ասի՝ դաս ինձ ասես։

— Թէ լաւ։

Պառաւը վեր կալաւ մատանիքը, գնաց դըբա ախչիկը. Դէնէք, դէնէք, անելով մատը ցըցեց։

Ախչիկը տեսաւ որ դրա մատը մի մատանիք կա, կանչեց կուշտը, ասեց. Էս ով տվուց քեզ էս մատանիքը։

— Ախչիկ ջան, դրա տէրը մեր տանը զոնաղ ա։

— Ձին ինչ ռանգ ա։

— Կապիտ իալլու. ընենց ա գոռում, որ երկինք գետին հըրմ ա։

— Հա, ասեց, ես էս քշեր նրա ձէնը իմացա։

Կեթաս կասես էն տղին, յառաւօտը քշերով ես թագաւորին պատվէր կըտամ, որ համամը պատրաստի, ինչդար զօրք կա, իրեք դաթ կանցացնի ընչար համամի դուռը, ձին նիլլի գա՝ իմ օթախի դուռը, ասի էս ձին ծախըմ եմ, թագաւորը կասի,

ինչ տամ. յինքն ասի. Փէշքաշ ա։—Չէ կասի, դինն տամ։ Էն վախտը ես դուս կըգամ՝ կասեմ։

Պառաւը գնաց տղին ասեց։ Յառաւօտը լիսը բացվեց, տղէն սարքեց ձին, գնաց մէյդանի գլխին կանգնեց։ Խապարը գնաց Թագաւորին, թէ Թագուհին ասիմա իրեք դաթ զօրք կանգնացըրու ընչար համամի դուռը, ես վախըմ եմ, էթամ համամ, գամ քեզ առնեմ։

Թագաւորը շատ ուրախացաւ, հրամայեց քոմմա զօրքը էկան կանգնեցին ըտեղ։

Տղէն ձին քշեց, էկաւ զօրքի մէջ տեղը կանգնեց։ Թագուհին որ դուս էկաւ՝ ձին մի գոռաց։

Թագաւորն ասեց. Էս ինչ ձի ա։

Ասեցին. Ծախու ա։

Ասեց. Ի՞նչ տանք, այ տղա։

Ասեց. Թեզ փէշքաշ ա, Թագաւոր, իմացել եմ քու հարստանիքն ա, քեզ փէշքաշ եմ բերել։

— Չէ, ես փէշքաշ բան չեմ ուզըմ, դինն ասա տամ։

Թագուհին յառաջ էկաւ, ասեց. Էս ինչ խօսք ու զրից ա։

— Էս ձին ծախու ա, Թագուհի, գնահատա առնենք։

— Մի նիլ տենենք ինչ ջուռա ձի ա, ասեց Թագուհին Թագաւորին։

— Տղէն վէր էկաւ, Թագաւորն ուզեց որ նիլլի, ձին քամակը շուռ տվուց, մի քացի տվուց Թագաւորին՝ յուշը գնաց։

Ախչիկն ասեց. Ի՞տ էր քու տղամարդութունը, մի ձի էլ չես կարըմ նիլնիլ, ձին մի ինձ տուր։

Զեռը քցեց ձիու եալը՝ Թռաւ ձիու քամակը, ասեց. Ա՛յ տղա, էտ զալխանը տուր դէսը, էտ գուրզն էլ տուր։ Թուրն էլ տուր։

Տղէն քոմմա տվուց։

Ասեց. Գնացէք մի շատ լաւ ձի էլ բերէք։

Թագաւորն ասեց. Ի՞նչ ես անըմ։

Ասեց. Էս տղէն նիլլի, մի քիչ հաղ անենք, դու Թամաշ արա։

Գնացին մի լաւ ձի բերին, տղէն Թռաւ, նի էլաւ։

— Ա՛յ տղա, ասեց, դու էս ճամփով գնա դըրա ծովը, տես ես ինչ եմ անըմ։ Տղէն գնաց։ Ախչիկը Թուրը քաշեց, Հաղարէն զալխանը ձեռն առաւ, աջ ու ձախ կոտորեց, էկաւ Թագաւորի գլուխն էլ Թռցրուց ու գնաց։

Գնաց ծովի դրաղին հասաւ էտ տղին։

— Ա՛յ տղա, ասեց, վէր արի ծովի դրաղին։

Մարդը օրղանդուն բռնեց՝ կնիկը վեր էկաւ։

— Գիտե՞ս, ասեց, ես էս ա քառասուն օր քնահարամ եմ, նստի, գլուխս դնեմ ծնկանդ, մի քիչ քնեմ, վեկենամ էթանք. հա-մա տես՝ ինձ չպաչես, թէ չէ՝ կըտամ պինչ ու բերանդ կը ջարդեմ։

Տղէն նստեց, ախչիկը գլուխը դրուց ծնկին՝ քնեց։ Արեգակի ուժը դիպաւ ախչկա յէրեսին, սկսեց քրտինք գալը։ Տղէն բուռը բռնեց քրտնքի տակը, լցվեց, խմեց, ասեց. Օխայ, ջանս դինջացաւ։ Աչքը քցեց վօսկէ մազերին, կամար ունքերին, ֆինջան աչքերին, զաւթ չելաւ՝ կռացաւ պաչեց։ Որ պաչեց՝ ախչիկը վի կացաւ, Ը՞նչ արիր, ա տղա, ասեց, ու տարաւ բերուց մի հատ սիլլա տվուց։ Տղի ուշքը գնաց, յինքը նի էլաւ ձին յելաւ գնաց։

Իրեք օր յանկացաւ, տղէն օյանմիշ էլաւ. տեհաւ ոչ կնիկ, ոչ ձի, ոչ բան։ Ծովի քամին փչըմ ա, հաղարաւոր ձէն հետը. սկսեց լաց ըլիլ. գնաց ծովի էն գլուխը. էկաւ էս գլուխը։ Տեհաւ որ մի իլխըչի հրէս ձիանը բերուց արուց չայլըղը։

— Ա՛յ տղա, ասեց, խի՞ ես լաց ըլըմ, ի՞նչ ա էլել քեզ։

— Ա՛յ ջանըմ, դրաղ կաց, իմ ցաւը շատ ա։

— Ա՛յ մարդ, մի՞ սատ տենեմ ինչ ցաւ ունես քեզ. բալքի մի իլլաճ եմ անըմ։

— Ես Ղարարուլուա Ղահրըմանի ախչիկը ասել ի, ընենց մի անկարգութիւն արի, խռովեց, վեկացաւ գնաց, հրմի ճնացել եմ ծովի էս յէրեսին, ձի չունեմ նիլլնեմ էթամ։

— Ա՛յ տղա, քու կնկա ձիու մէրը էս իլխու միչին ա, էս օխտը տարի ա, գալիս ա ըսանեղ լաց ա ըլըմ, տամ քեզ նիլ, տար հասցրու յիրա քուռակին, թող կարօտները առնեն, էլեթ կբերես, կը տաս ինձ։

Տղէն նի էլաւ ձին, քշեց ծովը, մկրատի պէս ձին կտրեց անցկացաւ, գնաց գոմի դռանը կանգնեց։ Տղէն թամքը վեկալաւ, ձին քաշեց նեքսեց։

Ձին որ տեհաւ յիրա մօրը, ուրախացաւ՝ ասեց. Էն զամշին որ տվել իր փորիս տակին, քեզ բաշխեցի, գնա։

Տղէն գնաց ախչկա յառաջը կանգնեց։

— Էլեթ էկար, սեերես, ասեց ախչիկը։

— Մեղ Աստու, ես սղալվեցի։

— Դէ լաւ, ասեց, բաշխեցի, արի նստի։

Էտ քշեր ըտեղ ճնաց, յառաւօտը ախչիկն ասեց. Դու մեր ախչկան խօսք ես տվել, որ գնաս նրա ախպօրը բերես, կարաս բերի։ Ես էրկու հետ գնացել եմ, չեմ կարացել բերիլ։

Տղէն ասեց. Յոյս Աստված կը բերեմ։

— Դէ վեկաց գնա, ըեր։

Տղէն գնաց։ քուռակի մօրը քաշեց դուս, նի էլաւ, գնաց։ Ծովն յանցկացաւ, գնաց մի սըղլուա (ցից) սարի վրա կանգնեց։ Տեհաւ մի ձեռք տուն կա ըսեղ, բուխարուցը մուխը ցից դուս ա գալի, մարդ էլ չկա։ Զին ասեց. Տղա, ինձ քշա, գնա էն գըլուխն ու արի էս գլուխը, դուրդ քցա, փորցենք տեսնենք ուժ ունիս։

Զին քշեց էն գլուխը, ձիու սաղրու (քամակ) հետ դդվեց, թամքի միջին կանգնեց ու դուրդը քցեց։ Բցելուն պէս՝ պատի մի դիրը փուլ էկաւ։

— Ապրիս, տղա, ասեց մագիտանը, գիտեմ որ հըմի կը յաղթես։

Զէն ասուց. Տնեբի տէր ախպէր, դուս էկէք, կռվի վախտն ա։ Բանտ հոգի դուս էկան։

— Ա՛յ մարդ, դու մի մարդ՝ մենք՝ քսան, կենա կենա պըտի կոիւ անենք, որիս բախտը կը կտրի, թող կտրի։

Զին ասեց. Տղա, ինձ մի դամշի կը քաշես, որ ջիդեարս փորիս մէջ վառվի, ես ինձ կը քցեմ, թուրդ ընենց քցես որ իմ մի մազը կտրի ոչ, որ կտրվի, դէմ կանեմ քեզ արեգակին կը շինեմ քեզ անձող, վե կածեմ։

Բանձրանալու պէս ընենց թուրը քցեց տղէն, որ քսանի գլուխն էլ կտրեց, յիրենք էլ չիմացան։

Զին ասեց. Ա՛յ տղա, վեր արի, իմ զօլան դուշդունը բռշայրու, միքիչ նաֆաս առնենք, հատ կռվենք։

Տղէն վեր էկաւ, զօլան դուշդունը բռշայրուց, ձիուն նաֆաս տվուց, խուրջնից էրկու կտոր դմակ հանեց, տվուց ձիուն կերաւ, միքիչ ման ածեց քրտինքը ցամաքեց, էլի զօլան դուշդունը դայիմացրուց նի՛լաւ։

— Տղա, ասեց ձին, էս էկող տղէքը շատ դոչող մարդիկ են, քեզ լաւ մուղաթ կտց։

Տղէն տեհաւ, որ քսան տղա էլ էկան։

Թամաշ արուց յիրա մագիտանին, տեհաւ աչու յաշկիցը յարտասունք ա թափըմ։

— Ա՛յ տղա, ասեց ձին, ինձ վրա հոդածին չէր նստած քեզանից դայրը, ես քեզ հըմար եմ ցաւըմ, թէ չէ ինձ հըմար մին ա։

Մըն էլ տեհան քսան հոգին էկան, ապրելի (Ապարիէլի) պէս։ Հը՛, ասին, մեր քսան ախպօրը կերար դու, մենք պըտի քու օսկոռները հալենք ուտենք։ Ասեցին ու ձին քշեցին։

Տղէն դամշին քաշեց ձիու ջանին, ձին քցեց իրան, իժդար թուր քցեցին, մի մազը չկարեցան կտրեն թէ տղի, թէ ձիու։

— Ա՜յ տղա, սրէն քունն ա, ասեցին, քցի թուրդ։

Տղէն թուրը քցեց տասնը ինը տղի գլուխները կտրեց։ ուզեց մին էլ քցի՝ էն մեի գլուխը կտրի՝ տեհաւ Ղարաբուլուտ Ղահրըմանի ախչիկն էկաւ։

— Հը՛, ասեց, էկա՞, վախիլ մի։ Հաստատ տղամարդ ես դու, առա՛ որ առա։ Դէ թող էդ մեի շըլինքն էլ ես կտրեմ։

Ոնց որ գըրդին (բաղէ) հասնի գըշին՝ ընենց էլ էտ ախչիկը հասաւ էտ տղին. գլուխը թոցըրեց, թուրը գրեց ճակատին, գլուխ տվուց տղին։

— Ներողութուն, ասեց, ես սխալված եմ էլիլ, որ քեզպէս կտրիճին սիլլով ավել եմ։

— Ներողն Աստված ա։

— Դէ, էս ես թուրը կը քաշեմ, ըսանդ կը կանգնեմ, դու մաի նեքսեն, տղին դուս բէ։

Տղէն թուրը քաշեց, նի մտաւ հարամու տունը, տեհաւ գնջլով կապած ա տըղէն, սկսեց գնջիլը ետ անիլը։

Հըմի ինչ գիտի էտ տղէն թէ ազատող ա, թէ սըպանող ա, ընկել ա ոտները տղաչըմ ա. Ինձ մի սըպանէք, մի հոր ճըրաղ եմ։

Տղէն գնջիլը քանդեց, տղին դուս բերուց։ Տղէն որ Ղարաբուլուտ Ղահրըմանի ախչկան տեհաւ՝ ուրախացաւ, ասեց. Էլ ինձ չեն սըպանիլ։

Մի ձի էլ գոմիցը հանեցին, էտ տղին նստացրին, քշեցին գնացին։

Հասան ծովի գրաղը, կնիկն ասեց մարդին. Էս մարդի ձին խամ ձի ա, չի կարա ծովը յանցկենա, ես կնիկմարդ եմ, ընդար ուժ չունեմ, որ գրան պահեմ, դու կարաս էտ տղին պահիլ։

Ախչիկը էլի փորձըմ էր տղին, ուզըմ էր տեսնի, թէ կըռնեբըմը հունար կա՞ թէ չէ։

Տղէն ասեց. Էս սըհաթը։Ձեռը քցեց տղի գոլթուղը, վեկալաւ ոնց որ մի տաբուծ վեր ունի մի ղըշի, գրուց թամքի յառաջն ու քշեց ձին։

Ծովիցը դուս գալուն պէս ախչիկն ասեց. Ա՜յ տղա, դու գլուխ ես՝ ես ոտը, յարի՛ յառաջ ընկի։

Տարան տղին ավին քվորը, ասին. Է՞ս ա քու ախպէրը։

— Թէ հա, ելկնքից գեսինք շնորհակալ եմ։ Քիր ու ախպէր փաթրթվեցին յիրար։

Մի քանի օր ըտեղ մնացին, Ղարաբուլուտ Ղահրըմանի ախչիկը կանչեց էտ ախչկան յիրա կուշտը ասեց. Ես գնալու եմ, թէ որ ետ էկա՝ էկա. թէ չեկա՝ իմ հոր թագաւորութէնը

քեզ։ Վեկալաւ յիրա Հազարէն գաստան բիլլուլը, տղի հետ ձի նստեցին, գնացին։ Ծովիցը դուս գալուց ետոյ՝ ախչիկն ասեց.

Ա՜յ տղա, յառաջ ընկիր, իրաւունքը քունն ա, ձեր տունն ինք էթամ։

Բշեցին գնացին Անայ թագաւորի քաղաքին մօտացան։

— Դէ ձիս բռնա, ա՜յ տղա, ասեց ախչիկը, թուրը քցեց շը-լինքը, գնաց կանգնեց թագաւորի յառաջը.

— Ես եմ, ասեց, Ղարարուլուա Ղահրըմանի ախչիկը, ես սը-պանեցի քու էրկու տղէն, գալալ կանգնես, որ առնեմ քու պուճուր տղիդ։

— Հալալ ա քեզ, որդի ջան, ասեց Անայ քաղաքի թագաւորը, վեկացաւ ախչկա ճակատը պաչեց, ձեռիցը բռնեց տարաւ նեքսեն։

Օխտն օր օխտը քշեր հարսանիք արին, էտ տղին ու ախչըկանը վսակեցին։ Մի վախտ յանցկացաւ, թագաւորը մեռաւ, էտ տղէն դառաւ թագաւոր։ Սրանք հասան յիրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։ Երկնքիցը իրեք խնձոր վեր ընկաւ, մինը ասողին, էրկուսը լսողներին։

ԱՐԳԱՐ ԹԱԳԱՒՈՐ.

(Աշտարակ *)

Ժամանակով մի թագաւոր կար, անունը Արգար էր, ունէր իրեք տղա։ Արգար թագաւորը Աստու կշտին յուխտ էր արել որ տղէքը չափը լցցնեն, իրեք տղէն մի հոր ախչիկ ուզեն, որ կնանիքը յիրար հետ վարվեն։ Տղէքանց չափը որ լցցվեց, թագաւորն ասեց. Գնացէք իմ մուրազը տեղը տվէք, իրեք քիր դուէք յամէն մինըդ մինը առէք, վեկալէք էկէք։

Տղէքը վեկացան գնացին, Արեշատ թագաւորի տանը վեր էկան։ Իրեք տարի ըտեղ կացան, հէչ բան չասեցին։

Օրվա մի օրը՝ թագաւորը կնկանը ասեց, թէ մի հարցրու, տես էտ տղէքը խի՞ ենն էկել։

Կնիկը հարցրուց, տղէքն ասեցին թէ էկել ենք քու ախչըկէքը ուզենք։

— Բա էսքան վախտ խի՞ իք բանտ ըլում, խի՞ չիք ասըմ։

— Ամանչըմ ինք։

Կնիկն էկաւ թագաւորին ասեց, թագաւորը ասղի էլաւ, յիրեն ախչիկէքը տվուց դրանց։ Պսակեց, յամէն մի ախչկա բաժինք յիրա հետ դրուց, ճամփա քցեց։ Վեկացան էկան էտ մարդիկը։ Էկան Արարատանու դուռը, պրտի էտ քշերը էտ դղըմը կենան։ Ամէն տղա յիրա կնիկը վեկալաւ՝ յիրա չատըրըմը քնեց։ Լիսը բաց էլաւ, տեհան որ պուճուր տղէն չկա։ Դէս տղա, դէն տղա, տղա չկա։ Էս ախչիկը քարերը կոծըմ ա, ձեռին իլլաճ չկա։

Թագաւորի մենճ տղէն ասեց. Ախպէրներնք դա որ խալխի ախչիկ ա, մեր ախպէր համար յաւըմ ա, բա մենք ի՞նչ անենք. մենք էլ ըներենք մեր կնանոնց բաժընքիցը մի զատ փոխ տանք մեր հարսին, որ դա էլ կառավարվի։ Բերին ամէն մէկը մի բան տվին էտ ախչկան։

---

*) Պատմեց 1912 թ. օգոստ. 25-ին Աշտարակ գիւղում նոյն Գեորգ Մկրտչեան Գեորգեան վարսունամեայ անգրագէտ ծերունին։

Ախչիկը մտածեց. թէ էթամ կնստիս տունը՝ իմ յէրէսին ով թամաշ կանի, կասեն սարաբը դու էլար, որ մեր տղէն կորաւ, թէ էթամ իմ հօր տունը, պըտի ասեն. Ինչ ընբախտ ախչիկ իր, որ քու յէրէսիցը էն տղէն կորաւ։ Լաւն էն ա ըստի մի ձեռք տուն շինեմ, էթող էկողից խաբար առնեմ։

Վեկացաւ մի ձեռք տուն շինեց, նստեց միջին, էթող, էկողից խաբար առաւ, ինքն էլ տղամարդի շոր հագաւ։

Օրվա մի օրը մի քօռ, մի սաղ ման ին գալի։ էտ ձէնն ընկաւ աշխարքը, թէ ինչ մարդ էթըմ ա մի նաղլ ասըմ էտ տղին, մի վօսկի ա տալի։

Քօռն ասեց. Ցարի էթանք, էրկու նաղլ ես գիտեմ։

— Իրեքն էլ, սաղն ասեց, ես գիտեմ, հինգ վօսկին էրկու տարի կարալ չենք աշխատի։

Գնացին միքիչ հաց կերան, ընկան ճամփա։ Էկան դըղի կէսը, քօռը ծարաւեց։ Ասեց. Ախպէր, ես ծարաւ էրվեցի, Աստու սիրու խաթեր ըլի, ջուր։

Ասեց. Ես վօրդիան քեզ ջուր բերեմ։

Ասեց. Թամաշ արա, տես սարերըմը կանանչ տեղ կա։

Սաղը թամաշ արուց, տեհաւ մի բանձր սար կա, փէշին միքիչ կանանչ տեղ կա։

— Դէ, ասեց, էթանք, ըտի ջուր կըլի։

Ընկնելով, կանանելով էտ քօռն ու սաղը գնացին հասան էտ սարը։ Սաղը տեհաւ որ ըստի մի հատ խնձորի կա, ճխկանը մի մեռել դրած կա. մի հատել յաղբուր կա, յաղբրի գլխին էլ մի բոդնոցով հաց կա, գինի կա, ամէն բան կա։

Քօռը ջուր խմեց, ոչ ասեց. Մի կտոր հաց էլ ըլէր ուտէի։

Սաղն ասեց. Ըստի յամէն բան կա, նստի ուտենք։

Նստեցին կերան, վեկացան, գնացին։ Հասան էտ տունը։ Նի էլան վիրև, բարյաջողըմ, ախպէր ջան, ասեցին ու նստեցին։

Էրկու նաղլը քօռն ասեց, իրեք նաղլ էլ սաղն ասեց։ Բերուց հինգ վոսկին տվուց դրանց։

Քօռը սաղին ասեց. Հըլա էտ մարդին հարցրու տես՝ ճամփի տեհած բանն էլ ա նաղլը։

— Հա, նաղլ ա, գիտէք, ասեցէք, մին ա։

Սկսեցին ասիլը։

— Դէ, քօռ ախպէր, դու ըստի կաց, մենք ձի նիրնենք էթանք էտ տեսնենք, ասեց ախչիկը։

Վեկացան գնացին սարը, քթան էտ յաղբուրը, էտ ծառը։

Ախչիկն ասեց. Սաղ ախպէր, դէ դու ձիանը քաշի գնա, իմ ճամփին պըհա։

Սաղը գնաց, ախչիկը ձեռը քցեց էտ մեռելը վե բերուց, տեհաւ որ վոտի բթից ընչար բուկը աջ ու ձախ կօճակ ա շարած։ Սկսեց դուս ածելը (արձակել)։ Տեհաւ որ բկին դայթանով քցած մի պուճուր, սև, ծակ քար կա, քարը հանեց շընքիցը։ տղէն սարբը էկաւ ու նստեց։ Տեհաւ որ յիրա մարդն ա։

— Խի էկար, այ կնիկ։

— Էկա, բա ինչ անէի, ասեց, ու լաց էլաւ, ոչ մահ կա՝ մահը տանի, ոչ էլ դու գալիս ես, ես ինչ անեմ։

Դրանք փաթբթվեցին իրար, թեքընկան։

Մի վախտ զարթնեց կնիկը, տղան ասեց. Դէ կնիկ ջան, իմ պատանը հագցըրու, կօճակները մէր քցա, քարն էլ քցա շընքինքս, վե գնա, էլ չգաս, թէ չէ հուրիքը կըգան քեզ կը ՁՆասեն։

Ախչիկը վեկացաւ գնաց տուն, յէքսի օրը սաղին ու քօռին ճամփու քցեց, յինքը էկաւ էլի էտ տղի կուշտը։ Ըսենց մի հինգ տասը օր էկաւ, յիրար հետ ժամանակ անցկացրին։

Օրվա մի օրը հուրիքն էկան, տեհան որ տղի ռանգը քցած ա, հուրի մենձ ախչիկը տեհաւ որ էս տղի կոճակները աջ ա քցած, ասեց. Հը՝, էն զանճըղը էկել ա քեզ քթել, հա, դէ վե կալէք սրան տարէք սև ծովը ու սիպատակ ծովը անցկացրէք, տարէք անմահական աղբրի բախչըմը վե դրէք, որ օցը յիր պորտովը, դուշը յիր թեռվը էտ տեղը տեհած չի։ Տենեմ դա էլ վոնց պըտի դա տեհնի դրան։

Հուրիքը վեկալան դրան, տարան, սև ծովը ու սիպատակ ծովը անցկացրին, տարան անմահական յաղբրի բախչէն վե դրին։

Էն յէքսի օրը ախչիկը էկաւ որ զատ չկա, լաց էլաւ, մըղկըտաց։

Մնաց ինը ամիս, ինը օր, ինը հրոպպա, էտ կնիկը ապատվեց, բերուց մի տղա։

Տղէն դատաւ չորս տարեկան, մօրն ասեց. Այ մէր, ըսաի խի ենք կենըմ, էս սարբմը, էթանք քաղաք, աշխարք տեսնենք, ըսաի ինչ կա։

Կնիկը տղին առաւ, գնաց մի քաղաք։ Գնաց, քաղաքը նի մենկու պէս թագաւորի նազիրը պատահեց, համա շատ աչքից շու մարդ էր, մեր գեղի (Աշտարակի) Աթարէկն էր։ Ասեց. Է՞ս ինչ լաւ էլաւ, ես յինքս ի ման գալի էստեսակ սիրուն օղլուշաղի, յինքը յիրա վոտովը էկաւ։

Ասեց. Ա՞յ հարս, յարի էթանք մեր տուն։

Ընկան նազիրի քամակը, գնացին։ Հաց բերին կերան, քըշերը տեղ քցիլ ավուց, որ քնեն։ Բշերը վեկացաւ, էկաւ մտաւ էտ հարսի ծոցը։

Ասեց. Վէկաց, դու իմ ախպէրն ես, ամօթ ա։

— Չէ, ասեց, ես իմ կու

Ասեց. Ա՜յ ազա, էս ինչ ես բերել։

— Ընդամենը քար եմ բերել, քեռի, որ քեզ էլ թագաւորին էլ բոլ ա։

Քեռին խուրջինը վեկալաւ տարաւ թագաւորին։ Թագաւորը տեսաւ՝ զարմացաւ, կանչեց վազիրին, ասեց, թէ ազէն անդին քարը բերուց, դրա հնարն ինչ կըլի, յուր զրկենք, որ ես չգա։

— Որ բանից ա, ասեց վազիրը, զրկենք գնա անմահական ջուր, անմահական խնձոր բերի։ Ետեղ էթողը ես չի դալ։

Թագաւորը կանչեց նազիրին ասեց. Ես շատ հիւանդ եմ, Լոխմանը ասել ա որ եթէ անմահական ջուր, անմահական խնձոր բերեն, կը լաւանամ, քվորդ ազէն պըտի էթա բերի, նրանից զոչաղ ազա չկա։ Բերուց՝ բերուց, չբերուց գլուխը կը կտրեմ։

Գնաց քվոր ազին ասեց, թէ պատրաստվի էթաս։

— Ո՞ւր։

— Պըտի գնաս անմահական ջուր, անմահական խնձոր բերես, թագաւորը ուտի լաւանա։

— Կէթամ, քեռի, դարդ մի անիլ, Աստված ողորմած ա։

Ջին նի էլաւ, քշեց։ Քշեց գնաց էլի էն հալիվորին ռաստ էկաւ։

— Բարաջողըմ, պապի ջան։

— Աստու բարին, բալա ջան։

— Էս ուր ես էթում։

— Էթում եմ անմահական ջուր, անմահական խնձոր բերեմ, որ թագաւորը ուտի լաւանա։

— Գիտես ինչ կա, բալա ջան, քու հէրն ընտեղ ա։

— Ինչ ա ասում։

— Բա, ընտեղ ա, անմահական ազերի բախչեմը, կեթաս նրան էլ կտեսնես։

— Պապի ջան, էս բախչէն որդի ա։

— Սև ծովը յանցկըկենաս, Սիպատակ ծովը յանցկըկենաս՝ կեթաս էս բախչէն։

— Բա էս ռատկած քուռակովը ես ոնց յանցկենամ Սև ծովը ու Սիպատակ ծովը։

— Բալա ջան, կեթաս, ծովի զրաղը մի ցից քար կա, էն ցից քարը կը պակես, տակին մի հատ գեամ կա, էն գեամը կըվեր ունես, կը կոխես ծովը, բանեղից մի հատ սև ձի դուս կըգա, ընենց դուս կըգա, որ կասես ինձ կուտի, համա վախիլ մի, ձեռդ քցա յուսն ու տու գեննովը, գեամն, նիլ։

— Դէ Աստաս բարով, ափու ջան։

Տղէն ձին քշեց գնաց ծովի զրաղը, գեամը հանեց, հրեղէն

ձին բռնեց, նի էլաւ քշեց։ Քշեց Սև ծովը յանցկացաւ, Միպատակ ծովը յանցկացաւ, գետամը հանեց կապեց մէջքը։ Ձին բրախեց, յինքը գնաց ղբրա բախչէն։ Գնաց տեհաւ որ ծովի ղբաղին մի հասար կա քաշած, դուռը չէր էրևում, համա անմահական ֆոտ էր գալի էտ տեղից։ Գնաց վերև, տեհաւ որ լեռ քարից մի դռան տեղ ա էրևում։ Ձեռով բրդեց, դուռը բացվեց։ Նի մտաւ նեքսև, ման էկաւ բախչէն։ Գնաց մարմար հաւուզի կուշտը, տեհաւ մի ջահէլ ղլա քնած ա, մանդը մանդը քրտնած ա։ Թող, ասեց, յերեսս լվանամ, մի քիչ ջուր խմեմ, նոր գամ տենեմ ինչ մարդ ա։ Յերեսը լվաց, ջուր խմեց, եռ թամաշ արուց, տեհաւ որ մի բոթնոցով հաց՝ յամէն բան միջին։ Նստեց հացը կերաւ, բեղերը սրբեց, էկաւ քնած մարդի կշտին նստեց։

— Ա՜յ մարդ, հերիք ա քընես, վեր։

Էտ մարդը չիմացաւ.

— Տօ վեր է՜. բրդեց։

Հէրը վե կացաւ, ասեց. Ա՜յ ղլա, հրեղէն ես, հողեղէն ես, ասա տենենք ով ես։

— Վե՛ կաց, կոխ բռնենք։

— Ա՜յ ղլա, ասեց, դու ինչ ուժ ունես, որ ուզում ես ինձ հետ կոխ բռնես։

— Վե՛ր տենենք, շատ մի խօսալ.

Վեկացան էտ դղումը կպան յիրար, ինչ արուց չկարացաւ տալ գեննովը ղլին, ընչար յիրիկվա ժամի վախտը չարչարվեցին, ոչ մինը մընին չկարացաւ տա գեննովը. գետինն էլաւ վարած ֆող, ոնց որ գուբանը քցես՝ վարես։

— Դէ յարի դինջանանք, նոր ամէն մարդ յիրա գլխի էկածն ասի։

Նստեցին դինջացան, ղլէն ասեց. Դու ինձանից մենձ ես, դու յառաջ ասա, եռոց ես կասեմ։

Ասեց. Ինձ սիրտ չունեմ, դու ասա։

— Դէ որ ըտենց ա, կասեմ դու լսա։

Տղէն ասեց յիրա գլխի էկածը, ասեց. Ես Արգար թագաւորի թոռն եմ, իմ հէրը կորել ա, մէրս կա, նազիրի տանն ա, թագաւորը հիւանդ ա, ինձ ղրկել են, որ գամ անմահական ջուր, անմահական խնձոր տանեմ, որ լաւանա։

— Ա՜յ ղլա, ասեց, դու իմ ղլէն ես, Արգար թագաւորը իմ հէրն ա։ Քու մէրը բոյով բուսաթով, լաւ մաղերաւոր կնիկ ա, յաջու կողմը, յերեսին խալ ունի։

— Հա՛, ասեց ղլէն, ունի։

— Որ ըտենց ա, դու իմ ղլէն ես, յարի քեզ տանեմ պը-

հեմ, որ հուրիքը չկան քեզ փնասեն։

Տարան տղին պտեց բախչամը, միքիչ յանցկացաւ հուրիքն էկան։

— Ա՜յ տղա, ասեց ռանգդ իմ ես թողբրել, չըլի էն ա-նըզգամն էկել ա։

— Չէ, ասեց։

— Բա ինչ ա էլել։

— Էն կնկանից մի տղա է էլել, էկել ա ինձ հասել, ինդրեմ ինձ բաշխէք, փնաս չտաք։

— Դէ գնա տղիդ բեր, տենենք։

Գնաց, տղին վեկալաւ բերուց, հուրիքը տեհան, շատ հա-ւանեցին։

— Մենք մի ախպէր ունենք, օխտը տարի ա բռնված ա, որ քու տղէն էթա բերի տա մեզ, մենք քեզ էլ, յիրան էլ ազատ կանենք, ասեց մեծ հուրին։

Տղէն ասեց. Շատ լաւ, ես կէթամ կըբերեմ։

Հուրիքը վեկալան էտ էրկրսին, տարան յիրանց հօր կուշտը ասեցին. Հէր, էս տղէն ասում ա թէ կէթամ ձեր ախպօրը կը բերեմ։

— Որ բերի, ինչ ուզի կըտամ, ասեց հէրը։

Ընդեղ քըշերը կացան հէր ու տղա, յառաւօտը քշերով ասեց. Մի ամաչիլ, տղա, ինչ ուզում ես, ուզա։

— Թագաւորն տվրած կինա, ասեց տղէն, ուզում եմ քու ձին, քու հազարէն դալխանը, քու շընքի ջնարդար թուրը, կը ճնեմ քու օթախը ինչ գուրզ որ ուժս կը պատի, վեկուռնեմ, կէթամ։

— Ասեց. Լաւ։

Տղէն քաշեց թագաւորի հրեղէն ձին, թեր քցեց հազարան դալխանը, կախեց ջնարդար թուրը, բերուց քառասուն փթանոց գուրզը, քշեց, տատղների հետ հազալօն գնաց։

Գնաց մի ջաղացի թուշ էլաւ. էտ ջաղացպանը քնած էր. վեկացնեմ, ինչ անեմ, չըվեկացնեմ ինչ անեմ. պէտք ա վեկա-ցընեմ, ասեց, ձին կապեց դռանը, ուզեց նի մանի՝ ձին խոսաց.

Ասեց. Յուր ես էթում, ա՜յ տղա, հէնց կը սիլի՝ քար կը դառնաս, կաց, կաց տեղիդ ձէն տու։

Տղէն գեամը պահեց ձեռին, բղաւեց. Ուստա. ուստա. մէկ էլ բռաց՝ Ուստա։ Ասեց. արի տեսնեմ ինչ ես ասում։

— Ձին ասեց. Էթալ մի։

— Ուստա, ասեց, դէ դուս արի, գործ ունեմ ինձ։

— Դու մեղաւոր չես, ձիդ ա մեղաւոր, գամ, էլ իլլաճ չկա։

— Զին ասեց. Զախու դինս (կողմս) կանին։

Յանցկացաւ ձիու ձախու դինը։

— Անասուն, յամէն բան պըտի դրան սարվացնես դու։ Հազար բարին ես էկել, ջահել տղա։ Դան ես ըներել ջաղացը։

— Չէ, ուստա։

— Բա, ինչ ես ասըմ։

— Հուրի թագաւորի տղէն ինչ տեղ ա բռնուած։

— Հա, հա, հա, էտ ես ասըմ։ Դէ ձէն տու Ալմաստ, դուս արի, բան եմ ասըմ, Ալմաստը կը գա քի կասի։

Տղէն բղաւեց. Ալմաստ, Ալմաստ, դուս արի, բան եմ ասըմ։

Տեհաւ մի հատ սիրուն ախչիկ դուս էկաւ, հուրըքանց մէջ էլ չկա դրա պէս, քառասուն յուսը աջ դընից ա կախ էլած, քառասուն յուսը ձախ դընից, բոլորն էլ ոսկէթիկ։

— Ինչ կա, այ տղա։

— Ձեր հուրի թագաւորի տղէն ինչ տեղ ա բռնված։

Զին ասեց. Յաշքն ընկաւ քեզ, բանդ ալչու ա։

— Ա՛յ տղա, էթանք էրկու ըստաքան գինի խմինք, ասեմ, գնա Աստված բանդ յաջողա։

Ախչիկն ընկաւ յառաջը, տղէն քամակը, որ ձին քաշի. ախչիկը որ երըմիշ էր ըլըմ (քայլում էր), տղի հոգին քանդվըմ էր։

Զին կապեց թաւլու մեխիցը, նի մտաւ նեքսև, նորից բարով տվուց դրան։

— Հազար բարին, հազար բարին ես էկել, մեր տունը քեզ փեշքաշ։ Բա ես քեզ ինչ փեշքաշ տամ, որ էկել ես մեր տունը։

Ա՛յ տղա, առ յանկաջիս մի հատ օղը տամ քեզ. հմի դու ինչ կըտաս դու գիտես։

— Զատ մի տալ, այ տղա, ասեց ձին։

Տղէն ասեց. Ես ինչ ունեմ, որ ինչ տամ։

Լքցրուց էրկու ստաքան գինի, մինը յիրա յառաջը դրուց, մինը տղի։ Վեկալաւ ախչիկը ըստաքանը, ասեց.

Բարով էթաս, բարով գաս։ Համա շատ դժար տեղ ա, գիտես, այ տղա։ Խմըմ եմ քու կենդանութեանդ թասը, Աստված քեզ կենդանի ետ դարձընի։

Տղէն վե կալաւ. Ես էլ քեզ սաղ տենեմ աշխարհքի երեսին. դամ մնաս բարով անեմ էթամ։

Տոլապի դուռը բաց արուց ախչիկը, չորս հատ մուշամբա հանեց, Զիու ոտները կը կոխես մէջը, կը գաս։ Տղէն տարաւ մուշանրէքը ձիու ոտները հագցըրուց, ետ դառաւ, էկաւ ախչկա

կուշտը։ Ախչիկն յառաջ ընկաւ, դէ ձիդ եւ արա, նիլ, արի։ Եւ դառաւ որ ձիու գեամը եւ անի, տեսաւ ձիու յաշքերից արտասունքը գլլոր գլլոր թափվում ա։ Հը՛, ա՛յ ձի, խի՞ ես լաց ըլում։

— Է՞, բալամ, ասից ձին, աշխարքի ընչի՞ն ես խարար, եա սաղ դամ, եա մեռած։

— Տենը՞մ ես էտ սև սարը, ասից ախչիկը, ըտի մի հատ տղա կա, էտ սարը նրանն ա, աշխարի յերէսին անասուն, բանական, անրան չի կարա էտ սարը նիլնի, ա՛յ էտ սարը պրտի նիլլես։

— Դէ, արի պուշտի անենք, գնա, Աստված քեզ հետ ըլի։

Պուշտի արուց, ջիրիցը հանեց մի աղլուխ, տվուց տղին, ասից. Ինչ վախտ կռիւ կանես՝ աղլուխը կը հանես յերեսիդ թամաշ կանես, էլի էն մարդը կը դառնաս, կռվից բեզարիլ չես, մենակ աղլուխը չկորցնես։ Դէ էթաս բարով։

Տղէն քշեց ձին, վեր էկաւ ձորը ու նի էլաւ սարը, ընչար սարը նիլլիլը՝ արին էկաւ ձիու յաշքիցը։ Նի էլաւ գուզը, տեսաւ մի հատ տղա նի էլած ձին ընենց ա քշում յերեն եռեվից, ոնց որ մի կրակ։

— Ա՛յ տղա, ասից ձին, կաննի աջու գիհը, մահ կա, եա դառնալ չկա։

Տղէն կաննեց աջու գիհը։

— Քեզ ո՞վ իրաւունք տվուց, որ գաս էս սարը նիլլես, գոռաց տղէն. գիտէ՞ր ոչ որ էս սարը տէր ունի։

— Ես էկել եմ քեզ համար, գլուխդ մեզ հարկաւոր ա, ասից տղէն։

— Կռվենք։

— Կռվենք։

— Սրէն ռեմն ա։

— Բունն ա, ես զոնաղ եմ։

Տղէն տեսաւ սրա ձեռի քառասուն փթանոց գուրզը, սարսափեց, ասից. Ըտեղ կաց, ես իմ գուրզը բերեմ։

Գնաց, ձեռի գուրզը վե քցեց, նի մտաւ նեքսեն, մի հատ գուրզ բերուց, որ մեր տղի գիւրզից թեթեւ էր։

— Էն, ասից մեր տղէն, էտ գուրզով բան չի անիլ, վե կունենք։

— Բցա՛ գուրզդ։

Գուրզը քցեց տղէն։

— Սա գուրզդ, ասից, հանաքի վախտ չի։

— Ա՛յ հայ, ասից, որ սա իմ տված գրզին դիմացաւ, սրան յաղթել չիլի։

— Օխտը գուրզ ունիս քցելու, օխտը նեա ունիս քցելու,

օխտը հատը էլ թուր ունիս քցելու, քցա, թէզ արա, սաղ ջանդակս հեռաց իրարից, թէզ արա։

Տղէն յինքն յիրան ասեց. Զուր ա, սրա յառաջից փախչիլ հարկաւոր ա։

Վեց գուրզը քցեց, ըսկի բան չարուց։

— Նեռը քցեմ, բալքիմ մի իլլաճ անեմ։

Զին ասեց. Տղա, յաշքս բռու

նաս, հուրի թագաւորի տղէն ընտեղ բարակ զնջլլով կապած ա, ետ կանես՝ հա չի թամաշ անես հա, էլի քար կը կտրես, վե կուենես կը բերես։

Տղէն նի մտաւ էտ տղի կուշտը, տղէն հա արուց, ոռէ ոռ, ոռէ ոռ էկաւ ձիու կուշտը։

— Ադլբիրդ թամաշ արա, այ տղա, ասեց ձին։

Տղէն բաց արուց տեհաւ քիչ քրտնած ա։

— Չի, ասեց ապլուիս քրտնած ա։

— Էլի փորձանք ունենք։

Թռաւ ձիու քամակը, տղէն քաշեց թարքը, քշեց։ Էկաւ էն տեղը, որ ախչիկը շանց էր տվել։

Տեհաւ մի հատ ձիաւոր ըզաւալով գալիս ա. Ա՜յ մարդ, էտ հսիրը յուր ես տանում, կաց, կռիւ անենք։

Չին ասեց. Տղա, վախիլ մի, դրա գողը յանցկացանք։

Ետ դառաւ, տղէն վե դրուց, տեհաւ, որ էն ախչիկը որ հեռը պռոշաի էր արել, հրեսիկ արար տղի շորերը հագին, ձին նի էլած եկաւ։

— Հը՛, այ տղա, ասեց, էսօր կռվի սրէն իմն ա, բոլ ա դու կռիւ անես։

Եռոյ դարձաւ էն կռվի էկող տղին ասեց. Կանգնիր, կռիւ անենք։

— Անենք։

— Սրէն ումն ա քցելու, ասեց տղէն։

— Թունն ա, ասեց Ալմասար։

— Չէ, քունն ա, քանի որ դու զոնաղ ես, ասեց տղէն։

Ալմասար դուրդը քցեց, քցելուն պէս դիպաւ ձիուն, հէչ բան չելաւ ձիուն։ Մի հատ էլ թուր քցեց Ալմասար, էլի բան չելաւ, չունքի յաշդը հա էր՝ տղէն էր։ Մի հատ էլ նետ քցեց. ձին հաւալամիշ էլաւ, էլի բան չելաւ։

— Ախչի, համբերա, ասեց Արգար թագաւորի թուրը, որ կարում չես իմ ես մէյդան մտնում։

Չին ասեց. Տղա, ես ընենց կը թռչեմ, որ կըգամ ուսին մօտիկ, դուրդ քցա, էրկու կտոր արա, համա մուղաթ կաց իմ մաղը չկտրես հա, ինձ կըրարկացնես՝ արևին դէմ կանեմ քեզ անձոր կանեմ վե կածեմ։

Հաւալամիշ էլաւ ձին, թուրը ընենց քցեց տղէն, որ ձիուցը մի մաղ էլ չկտրվեց, մէջ տեղիցը տվուց էրկու կտոր արուց։

Վեր ընկնող տղէն ձէն տվուց. Ա՜յ տղա, մրն էլ։

— Իմ մօրիցը մի հետ իմ էլել, ասեց, առաւ հուրի տղին թարքը, Ալմասոի հետ ձին քշեցին էկան։ Էկան Ալմասոենց տունը,

Աբգար թագաւորի թոռը Ալմաստին խնդրեց, թէ ձիգ տուր հուրի թագաւորի տղէն նիլլի։

— Իմ ֆոդին էլ ուզես՝ խնամիլ չեմ, մենակ ինձ միտ բերես, այ տղա հա։

Վեկալան էկան հուրի թագաւորի տունը. տղի թևիցը բռնեց, նեքսև տարաւ, ասեց. Համեցէք, թագաւոր, էս քու տղէն։

— Ա՛յ տղա, ուզա տամ, ախչիկ ես ուզում, անգին քար ես ուզում, ուզա տամ։

— Քու սաղութունն եմ ուզում, թագաւոր։

— Է՜հ, իմ սաղութունը քեզ օգուտ չի անիլ, ուզա տամ։

— Որ ըտենց ա, քու ձին եմ ուզում, քու թուրն եմ ուզում, քու զալխանը, քու գուրզը։

— Տվի, որդի, դու մեղաւոր չես, ձին ա մեղաւոր։

— Կը խնդրեմ, որ մեզ ճամփու քցես, մեր ճամփէն պահող կա։

Կանչեց հօրը, ասեց Աբգար թագաւորի տղին, կանչեց իրա էրկու ախչիկանը, ասեց. Կեթաք վի կունէք անմահական ջուր, անմահական խնձոր, ոնց որ բերել էք էս մէյիտը, ընենց էլ կը տանէք ծովի զրադին վի կը դնէք, կըգաք։

Վեկալան անմահական ջուր, անմահական խնձոր, Աբգար թագաւորի տղին դառցրին մեռել, ասից մինը բռնեց, ձեռից մինը, վեկալան տարան։

Տղէն յիրա մադեանը նստեց, ծովերն յանցկացաւ։ Գնաց էն դիտը, շատ ուրախացաւ, ասեց. Փառք քեզ Աստված, անջաղ յանցկացանք սալամաթ։ Էկաւ հօր կուշտը, հուրի թագաւորի ախչիկը ասեց. քանդի՞ էս կոճակները։ Քանդեց կոճակները, ճամի քարը հանեց, հերը սարը էկաւ ու նստեց։ Հը՛, որդի ջան, ասեց, կշտի՞ս ես։

— Բա որդի պըտի ըլեմ, ասեց տղէն։ Յարի նստի՞ իմ ձին, ես յառաջ կընգնեմ՝ կեթանք։

Հերը նիլաւ ձին, տղէն ընկաւ յառաջ՝ գնաց։ Հասան հալիվորին։

— Բարաջողում, հալիվոր ջան, ես քու խելքին զուրբան, բերի հօրս, դու որ չըլէիր՝ ես կարալ չի գտնիլ։

Հերը վեր էկաւ, հալիվորի ձեռը պաչեց, էլի նի էլաւ ձին։

— Գիտէք ինչ կա, Աբգար թագաւորի տղա, ասեց հալիվորը, բարով վայելես էս թագաւորութունը։

Համա կնիկդ շատ ա մենծացել. էս ջրիցը, խնձորիցը կըտաք՝ կը ջահիլանա։

— Դէ, ափու ջան, ըտեղ կաց, ես էթամ իմաց տամ իմ մօրը։

Տղէն յառաջ ընկաւ գնաց տուն, մի խնձոր ձեռին էր,

տվուց մօրը՝ կերաւ չանելայաւ, տուաւ էկաւ հօր դէմը։ Մարդ ու կնիկ յիրար փաթըթվեցին, ուրախացան, էկան տուն։ Էկան տուն որ՝ քաղաքը խառնվել ա յիրար։

— Է՞ս ինչ ա, ինչ ա ըլել։

Ասեցին, թէ թագաւորը մեռել ա, թաղան զուշը քցել են, որ ում գլխին վե գա, էն ըլի թագաւոր։ Մըն էլ տեհան զուշը պատվեց, էկաւ վեր էկաւ Արգար թագաւորի տղի գլխին։ Սաղ ժողովուրդը գոռաց, թէ մեր թագաւորն ա, որ թագաւորն ա։ Օձեցին գրին թագաւոր։ Նի էլաւ թախտը։ Յամէն բան կարգի դրուց։

Օրվա մի օրը թագաւորը յիրա տղին ասեց. Դէ գնա, որդի, պատիդ, Արգար թագաւորին ու մօրս, ախալօրտանցս տես յարի։

Տղէն ձին հագրեց, նիլաւ, օխտը օր, օխտը քշեր ձին գնաց, մի մենձ չայիրի յառաջ կանգնեց. տեհաւ մի հատ լաւ տղա գալիս ա դըրա յիրան։ Բարով ասուց, բարով առաւ։

— Որդիանց ես, ա՛յ տղա, հարցրուց Արգար թագաւորի թոռը։

— Լաւ հարցուղօրով ես խօսում, ա՛յ տղա, միքիչ զայդին խօսաս ինչ կըլի, ասեց էկող տղէն։

— Դէ մեր զայդէն ըռնց ա, ախպէր։

— Ես Արգար թագաւորի միջնեկ տղէն եմ։

— Ոսիդ մեռնեմ, ասենս Արգար թագաւորի տունը։

— Դէ ըսեց ասա, ջանըմ։ Գանգատ ունե՞ս։

— Եսոյ կասեմ քեզ։ Մդար Արգար թագաւորը սաղ ա։

Հասան յիրա տունը. ձիուցը վեր էկան, գնացին Արգար թագաւորի կուշտը։

— Էս ինչ մարդ ա, ա՛յ տղա, ասեց Արգար թագաւորը յիրա տղին։

— Թագաւոր, ասեց թոռը, ինչ ես տալի մի յաշկալիսէք ասեմ։

— Ասա տենեմ, որդի ջան։

— Ես քու թոռն եմ, հօրս էլ բերել եմ. էթանք մեզ զօնաղ, հօրս էլ տես՝ ուրախացի։

Թագաւորն ընկաւ թոռի ճառվը։

Առաւօտը վեկացան, գնացին հասան յիրանց տունը։

Հէր ու տղա փաթըթվեցին յիրար, լաց էլան։ Մի վախտ ըսեզ կացան, եսոյ դառան յիրանց տունը։ Նրանք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։ Երկնքիցը յիրեք խնձոր ընկաւ, մինն ասողին, մինը լսողին, մինն էլ յանկաճ գնողին։

ՀՐԱՑԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Ա.շտարակ *)

Ժամանակով մի մեծատուն կար, մի տղա ունէր՝ անբմբ Հրայի. էտ հարսի գործն էն էր, որ յիրեն ամբարները ցորնով լիքը պահէմ էր, դալիս էր էն ժամանակը, որ ժողովուրթը նեղութիւն ին քաշէմ, սէլերը բարձէմ էր, տանէմ բաժանէմ։ Էլաւ որ մեծատունը մեռաւ, իրաւունքը ընկաւ տղի ձեռը։ Տղէն էլ հոր պէս սէլերը բարձէմ էր ցորնով, տանէմ բազարը, տալի ազքատներին։ Էտ մեծատունը մի արար ունէր տան զարաւուլ, մեծատունն որ մեռաւ, արարի յաշկն ընկաւ մեծատան կնկա վրին։ Յինքն յիրան մտածեց. էս կնիկն ա ու էս տղէն, յարի մի ճար անեմ, էս տղան կորցընեմ՝ էտ կնիկն առնեմ նստեմ էս կարողութենի վրին։ Մի օր գնաց տղի հետ բազարը, ճամփին ասեց. Այ տղա, խի՞ չես փսակվում։

— Ընենց յարմարին ախչիկ չկա, որ առնեմ։

— Յարի քեզ մի լաւ տեղ ղրկեմ. գնա Հուրի թաքաւորի երկիրը, նրա ախչիկը առ բեր։ Հուրի թագաւորի ախչիկը երկնքի լիսնեակից սիրուն ա, չես կարալ երկու զանաթ յէրէսին թամաշ անիլ։

— Ախար հեռու ա ղրանց երկիրը, ոնց էթամ։

— Ես թահրը կասեմ։ Էթանք մի լաւ ձի առնենք, վեր ուենենք էս ձորըմը մորթենք, փորը դուս տանք, քեզ կոխեմ մէջն ու փորը կարեմ։ Ղշերը կըգան, վեկունեն քեզ, կը տանեն Հուրի թաքաւորի երկիրը։

Տղէն հաւատաց էտ արարին, գնացին մի ձի առան, մորթեցին, փորը դուս տվին, տղէն նի մտաւ ձիու փորի մէջը՝ արարը կարեց, վեկացաւ ուրախ ուրախ էկաւ տուն, ասեց. էս լաւ էլաւ, տղէն կորաւ, ես մօրը կառնեմ։

---

*) Պատմեց 1912 թ. օգոստ. 27-ին Ա.շտարակ գիւղում Յոյն Գէորգ Մկրտչեան Գէորգեան վաքսուն ամեայ անգրագէտ գիւղացին։

Մէրը հարցրուց թէ տղէս յուր ա։

— Դիտում չեմ, ինձնից յառաջ էկաւ։

Տեսաւ որ արաբի միտքը ծուռն ա, արաբին դուս արուց՝ դուռը շինեց. էլ ինձ պէտքը չեսյասեց, գնա կորի։

Ղշիրը էկան ձիուն վեկալան տարան։ Տարան Բեալլա-գեօղի երկրումը վե դրին, ու սկսեցին ուտել։ Կերան, կերան, հասան տղին, տղէն դուռ էկաւ ձիու վորի միջիցը ընդի կանչեց։ Ձեռ ու ոտը լվաց, տեհաւ մի յաշկանի պառաւ կնիկ ջուրն էկաւ. յաջ ծիծը քցել ա ձախ յուսը, ձախ ծիծը յաջ յուսը, էկաւ էտ տղին բարով տվուց, ասեց. Իսան-օղլի, խի՞ ես կանչել ըտեղ։

— Բա ինչ անեմ, նանի, զարիր եմ։

— Յարի էթանք մեր տունը. վեկացան գնացին։

— Ա՜յ որդի, ասեց պառաւը, յարի քեզ ես պահեմ, տղէքս կըգան քեզ կուտեն, օխտը դէվ են։

Յիրիկունը տղէքն էկան։

— Ա՜յ մէր, մեր տանից խանի փոտ ա գալի։

— Ա՜յ որդիք, սարից ձորից դուք էք գալի. խանի փոտ ձեզանից կը գա, էլ ումից պտի գա։

Մի քիչ կենալուց ետո, ասեց. Որդի ջան, էսօր մի խանի ճուտ եմ կալել։

Ասեցին. Հլա ըէ տենենք։

Վեկացաւ Հրաինին վեկալաւ ըերուց տղէքանց կուշտը։

— Ա՜յ տղա, որդիանցի ես։

— Ես Դուրուկ քաղաքիցն եմ։

— Ո՞ւմ տղէն ես։

— Մեծատան տղէն եմ։

— Մեծատան. Ատված նրա հոգին լուսաւորի, շատ լաւ մարդ էր, օխտը տարի մենք նրա ցորնովը կառավարվել ենք, նա չըլէր՝ մենք սովամահ կըլէինք։ Էտ ինչ լաւ էլաւ որ դու քու ոտովը էկել ես, բարով, հազար բարով ես էկել։ Վեկաց վիրի գլուխը նստի։ Ա՜յ մէր, ըեր, ինչ լաւ բան ունես՝ ըեր, էլ ըսենց մարդ մեր տունը գալ չի։

Բերին էտ տղին մի շաբաթ պահեցին, ուտացրին խմացրին։

Մի շաբթից տղէն վեկացաւ որ էթա։

— Բա յուր ես էթում, ա՛յ չարդ տանեմ։

— Էթում եմ Հուրու թագաւորի աղջիկը առնեմ։

— Տեհնել ես էտ աղջիկը, գիտես ճամփէն։

— Ես տեսել չեմ, լսօղանց եմ։

— Յարի քեզ տանեմ քառասուն հարամու տների կուշտը վե դնեմ, գամ, չունքի նրանք որ մեզ տենեն՝ մեղ կը սրպանեն։

նրանք քեզ կը տանեն Հուրի թագաւորի երկիրը։

Վեկալաւ տղին դրուց յուսին, վազեց։ Տարաւ դրուց տան կուշտը, յինքը ալրիալը եւ դաւաւ, էկաւ տուն։

Հարամիքը էկան տեհան որ մի ջահիլ տղա մի քարի վրի նստած ա։ Առան տարան հարամբաշու կուշտը։

Տղէն բարև տվուց հարամբաշուն, կանչեց։

Հարամբաշին հարցրուց.

— Ի՞նչ մարդ ես։

— Ես Դուրուկ քաղաքի Մեծատան տղէն եմ։

— Մեծատան տղէն։ Տղէրք, ճանանչում էք ում տղէն ա։

— Չէ, հարամբաշի։

— Հալբաթ՝ կերել մարսել էք, իսի կը ճանանչէք։ Միտներդ ա, որ իրեք թագաւորի երկիր յանցկացանք, խոտ ինք ուտում, եռոյ դնացինք Դուրուկ քաղաքը հարցնելով հարցնելով Մեծատան տունը քթանք, մեզ պահեց օխտը տարի. էս էն մարդի տղէն ա։

— Ինչի՞ համար ես էկել։

— Էկել եմ էթամ Հուրի թագաւորի ախչիկը առնեմ։

— Իրեք օր ըստի կաց, որդի, քու հոր լաւութունի տակից դուս դանք, եռոյ քեզ կը տանեմ Հուրի թագաւորի քաղաքը։ Վախիլ մի, ախչիկը կառնես։ Դէ տըղէք ջան, նի էլէք ձիանը, ընկէք սարերը, յամէն ջուռա բան բերէք, որ էս իրեք օրը ուտենք, խմենք, քէֆ անենք։

Էս իրեք օրը կերան խմեցին, վրա չորս օրը՝ հարամբաշին տղին քաշեց թարքը՝ վեր կալաւ տարաւ, թաքաւորի խնամաքարի վրին նստացրուց, ինքը թողուց դնաց։

Տղէն վե կացաւ՝ խնամաքարի վրի զանդակները քաշեց։ Նազիրն էկաւ ասեց. Ինչ մարդ ես։

— Էկել եմ թաքաւորի ախչիկը ուզելու։

Դնաց թաքաւորին խմաց տվուց, էկաւ առաւ տարաւ։

Թաքաւորն ասեց. Ո՞րդիանցի ես։

Ասեց. Դուրուկ քաղաքից եմ, Մեծատան տղէն։

— Ձեր տունը քաղաքի ինչ տեղն ա։

— Թաքաւորի տներին կպած ա, մառմառ քարից յաղբուրն էլ տակին։

— Ա՜յ հազար բարի ես էկել, այ տղա, մենք ձեր հոր հացը շատ ենք կերել քանց թէ մեր հացը, ես ուրախ ի, որ քէ պէս մարդի տղէն դար իմ ախչիկը ուզէր։ Մենակ մի պայման ունեմ քեզ հետ անելու։

— Ի՞նչ պայման։

— Էս պայմանը որ՝ իմ ախչկա յերեսը մարդ չպըտի ասնի, քու մօրից սաւայի, որ տեսաւ, յերեսի օրը իմ ախչիկը ըստեղ աւ

Տղէն ասեց. Շատ լաւ։

Կանչեց ախչիկանը կուշտը, ասեց. Ախչիկս էս ա, ա՛յ ապա, կառնե՞ս։

Տղէն տեսաւ որ, երկնային լոս ա ախչիկը, ֆոքին փառաւորվեց, կարաց ոչ խօսա։

Բերին հարսանիքը բռնեցին, օխտը օր, օխտը գշեր քեֆ արին, սրանց վոսկեցին։ Բաժինքը բարձեցին դաթրներին, նի էլան ձիանքը, գնացին յիրանց երկիրը։ Մէրը տեսաւ որ էկողը յիրա տղէն ա, քան դաթիր հետը բարձած, մի սև արաբղի շորեր հագած շատ բոյով ախչիկ հետը գալիս ա։

— Վա՛յ, ասեց, ափսոս իմ տղէն, էս ինչ գաղրվորւած, սև ախչիկ ա ասել էկել։

Մէրը էկաւ, փաթրթվեց տղվը, հարսին բարևեց, նի էլան վիրև։ Ախչիկը ման էկաւ օթախները, տեսաւ որ յամէն բան թամամ ա՝ ուրախացաւ։ Նի մտաւ՝ շորերը հանեց, հաբաւ յիրա թաքաւորական շորերը՝ տղի մէրը տեսաւ, խելքը գնաց։ Արժանա՞ քեզ, ա՛յ ապա, ասեց։

Մի քանի տարի սիրով սաւղով ապրեցին, հարսը եա ընկաւ (յղիացաւ)։

Օրերի մի օրը հարսը բալկոնի փանջարին նստած էր, քաւսուն յուսը կախ էլած բամին տանում բերում էր։ Թաքաւորի տղէն բերուց գրանց ապրբրմը ձին ջրի։ Տեսաւ ձին ջուր չխմեց, եա դառաւ ձիուն շատ ծեծեց, տեսաւ ընդամ չի, մի գաֆիլ յաշկը քցեց վիրև, տեսաւ քաւսուն յուս տանում բերում ա բամին։ Ասեց. Մարդերը որ էս ա, յինքը ինչ կըլի։ Կրտացաւ, յաղբրի մէջ պատկերը տեսաւ, հարկն թաղացաւ, տարաւ ձին կապեց, դուս էկաւ։ Հարց ու փորձ արուց, յիմացաւ, որ Մեծատան տղի կնիկն ա, Հուրի թաքաւորի ախչիկը։ Ասեց. Ես ապա չըլնեմ, թէ որ դրան ձեռ չրերեմ։

Վէ կացաւ գնաց բազար. սկսեց տղի հետ ախպէրացութուն անելը. տարաւ բերուց յիրանց տունը, մին օր էլ ասեց. Ես քեզ անել պահեմ ինձ բաւար։

Մի վախտ քաշեց, թաքաւորի տղէն նշան տվուց մի ախչկա։ Էկաւ էս տղին տարաւ քաւոր արուց։ Փառկեցին, հարսը բերին տուն, փառաճաշի օրը թաքուհին խնդրեց, որ մեր քաւորակինը գա մեր յարկի մէջը քթնվի։ Թաքաւորը կանչեց քաւորին, շատ խնդրեց, որ մօրն ու կնկանը էթա բերի։ Տղէն ասեց անկարելի ա, գալ չէն։ Եատ մի քանի թաս գինի խմացրին,

ասեցին, յարի մեզ հետ էթանք, բալքի բերենք։ Թաքաւորը, թագուհին ու քաւորը յիրար հետ գնացին քաւորի տունը, հարսը փախաւ, տաի կացաւ. Հրային գնաց թևիցը բռնեց քաշելով բերուց թաքաւորի կուշտը։ Թաքաւորը տեհաւ դէն ու դէն էլաւ, (հիացաւ) քաշելով քաշկըռտելով վեկալան տարան հարսանքատուն։ Վախտուն օթախ լիքն էր, նորահարսին թողին, քոմմա էկան քաւորի կնկանը թամաշ արին։ Մնէլ մի մի ըստաքան վե կալան քաւորի ու քաւորկընկա կենացը խմելու. մի մի ըստաքան էլ քաւորին, քաւորի կնկան ու քաւորի մօրը տվին։

Քաւորը վեկալաւ ասեց թէ կնիկ ջան, նի կը մանես էտ վախտուն օթախը, կենտ կենտ գլուխ կըտաս՝ կրգաս թաքաւորի կուշտը կը կանգնես։

Քաւորակինը ճարը կտրած մտաւ վախտուն օթախը՝ բիրագընին գլուխ տվուց, էկաւ թաքաւորի կշտին կանգնեց։ Մնէլ բոլորը կանգնած գոռացին, թէ ուզըմենք, որ քաւորակինը մի հաղ անի։

Մարդը գնաց ասեց. Կնիկ ջան, հունարը մնաց քեզ, ինձ ամանչացնիլ մի։

Կնկա սրտիցը դու խաբար տուր, ասեց, թէ կեթամ տուն, դու կը տեսնես թէ ինչ կանեմ։

Ճարը կտրեց, ասեց. Ածեցէք։

Ջաղլիքը ածեցին, ջիրիցը երկու հատ արբրշըմի ալուխ հանեց, ալուզ թէ ալուզ, յիրան թողին՝ ալրբխին թամաշ արին։ Սկսեց հաղալը։ Ժողովուրթը իրար ին հեղտում, նիլնըմ ին յիրար շալակ։ Հաղալուց հետ գլուխը բանցրացրուց որ գլուխ տա, բոխալը որ չտեհան՝ շատերի խելքը մաղվեց։ Հաղը պրծաւ, էկաւ կեսուրին ասեց, թէ գնանք, որ կարէք, ես էլ մնալ չեմ։ Թաքաւորն ասեց կեսուրին. Որ չըմնա, դու տար, ես դառ յարի։ Կեսուրը հարսին տարաւ տուն, յինքը ետ դառաւ էկաւ։ Հարսը էտ հրոպէին շորերը փոխեց, յիրա արարդզու շորերը հագաւ, ձին դուս քաշեց, նի եկաւ՝ գնաց դըրա իրա հոր քաղաքը։

Հրային յառաւօտը էկաւ տուն, տեհաւ որ ոչ ախչիկ կա ոչ բան, նոր ծնկներին տվուց, լաց էլաւ, հոմա ինչ արած՝ գետի գիւլ, գետի բիլրուլ, խատար ալա, խատար գիւլ։ (Գնաց վարդը, գնաց սոխակը, ուզըմ ես լաց իլ, ուզըմ ես ծիծաղա)։

Տղէն յառաւօտէնց վեկացաւ, նստեց ձին, հարրած մարդի նման ընկաւ ճամփէն գնաց։ Ճամփէն մոլորեց, օխտը օր օխտը քշեր անհաց անջուր քշեց դուս էկաւ Հալաղ։ Հարցրեց մի բաղպանի, թէ Հուրի թաքաւորի երկիրը որ ճամփով են էթըմ։

— Է՛, ախպէր ջան, ասեց, կորցրել ես ճամփէն, հըմի վաղուց հասած պըտի ըլէիր ընտեղ։

— Ի՞նչ կուզես, ինձ տանես հասցնես Հուրի թաքաւորի քաղաքը, իմ խելքը գլխիս չի։

— Որ ըսենց ա, յարի էս քշեր իմ կշտին կաց, յառաւօտէնց քեզ ճամփա քցեմ, ինձ մի ախպօր տղա ունեմ, յամէն ճամփա ճանանչում ա, ինչ կը տաս տու, նա քեզ կը տանի կը հասցնի տեղ։

Քշերը ըսեղ կացաւ գոնաղ, տղի վրէն տարի յանցկացաւ, լիսը բաց էլաւ՝ ըսղանը գնաց ախպօր տղին վէ կալաւ ըսրուց, տեսնաւ որ մի գալուզանլու տղա ա, ընկան ճամփա գնացին։ Գնացին հասան Հուրի թաքաւորի քաղաքը։

Տղէն մի բան տվուց ետ դարձրուց, յինքը գնաց դուզ ախչկա օթախը. յիրիկուն էր, ակուշկից տեսնաւ, որ մի ջահել տղա կնկա հետ հաղ էր անում։ Հէ՛յ վախ, ասեց, կնկանն էլ էյթիբար չկա։ Ուզեցաւ նեռով տա՝ կշտի տղէն տարրն էկաւ, ասեց հըլա միքիչ էլ համբերեմ, տեսնամ ինչ ա դուս գալի։ Տեսաւ, որ տղէն աւելի շատ հանաք արուց, ձեռները քցեց կնկա ծծերին, հայ վախ, հայ, ասեց ու նեռը լարեց, որ քցի, տղէն ասեց. Ա՛յ մէր, ըսկի հանաքի դիմանում չես։ «Ա՛յ մէր» խօսքը որ լսեց՝ Հրայի ձեռները թիլացաւ, դուռը ծեծեց։ Դուռը բաց արին, յիրան քցեց կնկա ոտը, ես մեղա Աստու, կնիկ։

Էս քշերը էտեղ թեք ընկաւ, քնեց, յառաւօտը կնկա հետ վէ կացաւ գնաց թաքաւորի մօտը. գլուխ տվին կանգնեցին։

— Էկար հա, մէ տղա, ասեց թաքաւորը, ես քեզ հետ ինչ ի խօսացել։

— Հարար նեղոգութուն, ջահելութուն էր անցաւ, ես էլ եմ փոշմանել։ Խնդրում եմ մեզ ճամփու քցես էթանք, մեր հօր օջաղը մնացել ա դարդակ։

Թաքաւորը ճամփու քցեց թոռին, ախչկանը, փէսին։ Էկան հասան յիրանց երկիրը։ Մի քանի տարի յանցկացաւ վրովը, տղէն յառաջը կանգնեց ասեց. Ափու, ես պլտի էթամ, պապիս, տատիս վեր ունեմ ըսրեմ, մի քանի վախտ ըստի կենան, միխթարվեն։

— Գնա, ասեց հէրը, բարով գաս։

Տղէն գնաց, պապին ու տատին վէ կալաւ էկաւ, մի վախտ ըսեղ կացան, կերան խմեցին, յուրախացան, վէ կացան գնացին յիրանց երկիրը։ Նրանք հասան յիրանց մուրաղին, մենք էլ հասնենք մեր մուրաղին։ Երկնքից իրեք խնձոր վեր ընկաւ, մինը ասողին, երկուսը յանկած գնողին։

ՀՈՒՐԻ ԹԱՔԱԽՈՐԻ ԱԽԶԿԱ ՀԵՔԻԱԹԸ.

(Աշտարակ *)

Ժամանակով մի սովդաքեար կար, ունէր մի շատ լաւ տղա։ Տղէն էկաւ մեծացաւ, կնիկը մարդին ասեց. Ա՛յ մարդ, մեր իշնէն ա պակաս, որ մեր տղէն տալիս չես յուսումնարան։

— Ա՛յ կնիկ, ոնց բաժանենք մեր ըրեխէն մեզնից։

— Որ բաներց ա, ա՛յ մարդ, մի պատկեր քաշող բեր, պատկերը քաշի՝ տա մեզ, կը գնեմ զութին. ինչ վախտ որ միտս ընկնի՝ կը հանեմ թամաշ կանեմ, կը գնեմ զութին։

Գնաց պատկեր քաշողին բերուց, տղի պատկերը քաշել տվուց, տվուց մօրը, վե կալաւ տղէն գնաց Հալէպ։ Գնաց մի սովդաքեարի տան դօնաղ մնաց։ Էտ սովդաքեարի հետ տղէն տարան տվին մի լաւ յուսումնարան. վարժապետն ասեց, թէ օխտը տարուց եաը կը դաս՝ տղէտ կը տանես։

Սովդաքեարը էտ գառաւ էկաւ, ընկաւ յիրա սովդաքեարութեան հետ։ Էս քաղաքից էն քաղաք, էն քաղաքից էն քաղաք յանցկացաւ, քաշեց վեց տարի։ Վեկացաւ էկաւ յիրա տունը։

Կնիկն ասեց. Ա՛յ մարդ, մեր տղին տեհար թէ չէ։

— Թէ՝ չէ։

— Ա՛յ բաւ տունը շինվի, հաւտ կորցնողն օխտն օր մեռնի ա գալի, բա քու սիրտը ինչ ջուտա սիրտ ա, որ էս ա վեց տարի ա, գնացել չես քու տղին տեհել։

— Դէ գնացել չեմ, էլի, հըմի կերթամ։

Մենք գանք տղին։

Էտ վարժապետը տասնըմին հրեխա ին կարթըմ, տասնըմիններ էլ թաքաւորի տղէք ին։ Միններ էլ էտ սովդաքեարի տղէն

---

*) Պատմեց 1912 թ. Օգոստոսի 28-ին Աշտարակ գիւղում նոյն Գէորգ Մկրտչեան Գէորգեանը, 60 ամեայ անգրագէտ ծերունին, որ սովորել էր Դարաչիչակում Զրդուխլեցի Կարապետ Մանուկեանից։

էր։ Էս սովդաքեսրի տղէն քամբքիցն յառաջ էր, թէ տեսքով թէ յուսումով։ Վարժապետը դրան շատ էր սիրում։ Օխտը տարին որ թամամեց, տղէրն յուսումը վերջացրին, վարժապետն ասեց. Գնացէք աւի, որդդ որ աւ լեզի, ես նրան մի հատ լաւ փէշքաշ կը տամ։

Տատնեկու մոնթն էլ նի եղան ձիանը, գնացին։ Դուռ էկան տարը՝ մի քարի կշռի կանգնեցին։ Տէհան որ տատնեկու ճամփա կա, ասեցին. Էկէք բաժանվինք, յամէն մինս մի ճամփա բռնենք ու էթանք, մեր բախտիցն ինչ ուստա գա՝ վեր ունենք բերենք տանք վարժապետին։

Սովդաքեսրի տղէն ասեց. Տղէք, էկէք էս գանակը գնենք էս քարի տակը, ետ գալուս տատնեկուսս էլ ըստեղ թող ըլնենք, յիրար հետ էթանք։

Ասեցին շատ լաւ, գանակը դրին քարի տակը, յամէնքը մի ճամփա բռնեցին ու գնացին։ Վերջի նեղ ճամփէն ընկաւ սովդաքեսրի տղին. էս տղէն գնաց, գնաց, տեսաւ մի ջէյրան, մի քարի տակի թէք ընկած ա, ասը բռնցրացրել ա՝ ճուտին ծիծ ա տալի։ Ճուտը ծծում ա ծծում, ետ ա գառնում մօր հետ հաղ ա անում, մէրն էլ դրա յերեսը, մնեերը լիզում ա։

Տղէն ուզեց նեռալ տա վեր քցի, խիղջը ավուց ոչ, նատեց թամաշ արաւ։ Թամաշ արաւ, նոր միտն ընկաւ յիրա հէրն ու մէրը։ Սա որ անտառն ա յիրա մօրն ըղդար սիրում ա, ասեց, բա ես։ Օխտը տարի ա մօրս տեսել չեմ, եարար էրնակ կըլի՞ որ մօրս ծիծը պաչեմ։

Հենց բռեց թամաշ անելով քունը տարաւ՝ քնեց։ Մնել յաշկը բաց արաւ, տեսաւ որ մի լսի կատր ախչիկ ծունկը դրել ա յիրա գլխատակին. քառասուն սկեթել յուսը կախ արել յերեսին, որ շվար անի։ Մնաց մտթալ. ոչ ա գլուխը բռնցրացրնի, ոչ ա յերեսին թամաշ անի։ Հենց յիմացաւ, թէ յէրաղ ա, յաշկերը սրփեց։

Ախչիկը ծիծաղաց. Յէրաղ չի, յէրաղ, վէ, վէ. ես հուրի Շամամ թաքաւորի ախչիկն եմ. իմ մէրս ասում ա, որ ես ու դու մի օր ենք ծնվել, յիրար պրտի առնենք։ Դէ վեկաց էթանք իմ մօր կուշտը։

Տղէն ասեց. Ես ինց գամ, որ վարժապետիս համար աւ պրտի առնեմ։

Ախչիկը ծծերը բաց արաւ, տղի գինն ու յիմանը յանցկացաւ։

— Դէ յարի էթանք, վարժապետը ուրն ա, է։

Նի էլան ձիանը՝ գնացին։ Ախչիկն ընկաւ յառաջ, տղէն ընկաւ քամակը։ Մխելի տեղ գնացին՝ մի դուզ տեղ կանգնեցին։ Ախ-

չիկն ուզեց էս տղին փորցի, տենի մենակ սիրուն ա, թէ հունար էլ ունի։

— Գիտես ինչ կա, ա՛յ տղա, ասեց ախչիկը, պըտի էս գոլմը մխելի գուրզ քցենք։

— Քցենք, ասեց տղէն։ Համա իմ կուռը զօրիլ չի քեզ գուրզ քցեմ, ես ոնց քեզ գուրզ քցեմ։

— Քցա՛, բան չկա։

Ախչիկն էկաւ մէյդանի գլուխը կտրեց, գուրզը քցեց, տղէն եան տվուց՝ գուրզը էկաւ գլոռալով յանցկացաւ։

Ասեց. Էս ուզըմ ա ինձ վի քցի, եաւաշ տես ես ինչ թաւուր կը քցեմ։

Ձիուն տրտրեց, ձին էկաւ քրտընեց, ախչիկը տեհաւ, որ տղի յաշկերը արինը կոխեց, ասեց. Քաշկա ասած չըլէի, դէ էն ա էտ թաւուր տղէն հունար կունենա էլի։

Տղէն ասեց. Տեղդ կաննի, գուրզն էկա՛։

— Քեզ գմիշ չեմ անըմ, ձիուդ գլուխը գնաց, ասեց տղէն ու քցեց գուրզը։

Ձիու գլուխը գնաց, ախչիկն յիրան քցեց գետին, ձին վեր ընկաւ սատկեց։

— Յարի էթանք, ասեց ախչիկը, ես մեղ Ասաւ։

Ախչիկը նի եկաւ տղի թարքը՝ գնացին։

Ախչիկը նազուկ մաննելով որ ճամփէն չէր շանց տալի, տղի ֆոքին փառաւորըմ էր։

Գնացին ծովի զրաղը, մի տան վեր էկան։ Ախչիկն առաւ տղին տարաւ նեքսև, ասեց. Ա՛յ մէրը, գնացի տարը, պատահեցի էս տղին, ճանանչեցի, որ քու տեհած յէրազի տղէն էս ա ըլելու, առա հետս բերի։

Մէրը շատ յուրախացաւ, ասեց. Արըի իմ ախչիկը, իսկն էս ա իմ տեհած տղէն։ Մատանիքդ հանա, ա՛յ տղա, նշան տաւ։

Տղէն մատանիքը հանեց, տվուց Հուրու Թաքուհուն, Թաքուհին տվուց ախչկան, դրուց մատը, յիրանը հանեց տվուց տղին։

Թաքուհին ասեց. Ատոված շնհաւոր անի, մի բարձի ծերանա՛ք։

Տղէն քշերը ըտեղ կացաւ, յառաւօտենց ձին նի եկաւ՝ գնաց։ Գնաց պատահեց մի գիտարի, թուրը քցեց, շըլինքը կտրեց, սրտի էշխիցը կապեց թարքին, գնաց։ Գնաց տեհաւ, որ տղէքը դարտակ կաննած են քարի կշտին։

— Ա՛յ մարդ, ասեցին, քեզ ի՞նչ էլաւ։

Ասեց. Անջադ. ձեր աւերն յուր ա։

— Ման էկանք, դատ չըքթանք։

Վեկացան գնացին վարժապետի կուշտը, գլխատրը տվին վարժապետին։ Վարժապետը հանեց յիրա մատանիքը, տվուց էտ սովդաքեարի տղին։

Մի քանի օր յանցկացաւ, էտ տղի հէրն էկաւ սովդաքեարի տունը վեր էկաւ, վե կալաւ սովդաքեարին, էկաւ վարժապետի կուշտը, հախը տվուց, առաւ տղին, գնաց սովդաքեարի տունը։

Սովդաքեարն ասեց. Աստված քի բախշի, ինչ լաւ տղա ա. ես պրտի ըլեմ սրա քաւորը։

— Աստված արժանացընի, ասեց հէրը։

Տղէն հօրը խնդրեց, որ մի լաւ ձի առնի յիրա հըմար։ Սովդաքեարն ասեց. Ինձ մի ծանօթ ունիմ, մի պառաւի տղա ա, մի ձի ունի, որ կասես հրեղէն ա, թէ տվուց՝ շատ լաւ ա։

Գնաց պառաւի կուշտն ասեց. Ձիդ ի՞նչ մի լաւ տղա կա, տանք նրան։

Պառաւի տղէն ասեց. Ես ձի կը ծախեմ, իմ ձիուն գին չունի, ծովեղէն ձի ա։

— Յարի՛ տու, մինն էլ կառնես, ասեց սովդաքեարը, դու քեասիբ մարդ ես, ինչ պրտի անես լաւ ձին։ Հարուստ մարդ ա, ինչ ուզես՝ կըտա։

Վեկալաւ ձին, բերուց տղի կուշտը, տղի հէրը տեսաւ։

Տղէն հարցրուց. Էս ձիու կերը ինչ ա։

Օրն էրկու կոսը գմակ ա, ասեց պառաւի տղէն։

Տղէն շատ յուրախացաւ, գիտէր որ գմակ ուտող ձին ծովեղէն ա ըլըմ։

Տղէն ասեց. Էտ ձին ինչ տեղ ես տալ։

— Ջահել տղա, ասեց պառաւի տղէն, ծովի գրաղին մեն ի գալի, տեսա մի հատ պուճուր քուռակ դուս էկաւ, արածըմ էր, Ջիրիս քեամանդ կար, քցեցի քամանդով կալա՝ բերի, դառաւ ըսենց ձի։

— Դէ ուզա՞ տամ, ասեց տղի հէրը։

Սովդաքեարն ասեց. Ես վճռեցի, որ չորս տոր կապես քցես քշեսը, օխտը քաշ վոսկի ուժա։

— Ձէ, չէ, սովդաքեար, էս տղէն վոսկի տղա ա, դրան հալալ ա էս թաւուր ձի նիլիլը։ Ինչ տաս՝ ապի եմ։

Բոլ փող տվուց, պառաւի տղէն շնորհակալ էլաւ՝ գնաց։ Սովդաքեարի տղէն ձին քաշեց նեքսեւ, շորերը հանեց մի լաւ թիմար տվուց, տեսաւ իժդար ջանը տրորըմ ա՝ հէչ քեարը չի ըլըմ, ասեց. Իսկն էս իմ ձին ա, էշին էկաւ ձիու վրա։

— Սովդաքեար, ասեց հէրը, ըստի սառաճ կըլի՞, մի լաւ թամբ շինել տանք։

— Ըսուեղ էրկու ջուրա սառած կա, ասեց սովդաքեարը, մինը հասարակն ա, իսկ էն մինը թագաւորի տղէքն են շինել տալի, որ յիրանց լայաղ ա, հըմի դու գիտես, որին կուզես, նրան շինել տանք։

Հօրը տղէն ասեց. Ես կէթամ քաւորի հետ իմ ձեռովը շինել կըտամ։ Տղէն քաւորի հետ գնաց մի շատ լաւ թամբ էլ առաւ բերուց, դրուց ձիու վրա, նի ելան ու գնացին։ Գնացին հասան լիրենց տուն։ Մէրը որ տղին տեհաւ, փոքին վառվըմ էր տղի հըմար, վրա պրծաւ, փաթըթվեց ճտովը ընկաւ։ Էկան նստեցին, կերան, խմեցին։ Մի քանի օրից հետը տղէն պատմեց, թէ տասներկու տղով գնացինք որ վարժապետի հըմար աւ բերենք, ես մի ճամփով գնացի, նրանք էլ ջոկ ջոկ ճամփով գնացին։ Ես գնացի տեհա մի մարալ թէք ընկած, ուր բանցրացրել ա՝ յիրա ճուտը ծծըմ ա, յինքն էլ ճուտի գլուխը, ոտները լիզըմ ա։ Խիղճս տանջեց որ էտ անասունին վե քցեմ, նստեցի՝ թամաշ արի, իմ հէրն ու մէրը միտս ընկան, թէ էս անասուն ա, յիրա ճուտին ըզար սիրըմ ա, բա ես ինչ անեմ, որ օխտը տարի ա իմ հօրն ու մօրը տեհել չեմ։ Քունս ըստի տարել էր՝ քնել ի, յաշկս մի դափիլ բաց արի, տեհա մի ջահիլ հուրի ախչիկ, գլուխս դրել եմ ծնկանը, մազերն էլ էկել ա իմ յէրեսին շվաք ա տալ։ Ասեց. Վա՜ր, այ տղա, վեր, դու իմ մօր տեհած յէրազի տղէն ես, ես ու դու յիրար պըտի առնենք, վե՜ կաց էթանք մեր տուն, իմ մէրը քեզ տենի։ Վեկացանք գնացինք նրանց տունը, մէրը տեհաւ ինձ, հա ասեց, էս իմ տեհած յէրազի տղէն ա, մատանիքդ հանա նշան տու։ Մատանիքս հանեցի, դրուց ախչկա մատը, ախչկա մատանիքը հանեց դրուց իմ մատը, հրէս։ Խօսք տվի որ էթամ հօրըս ու մօրս բերեմ, փոսակվեմ, ախչիկը տանեմ։

Հէրն ու մէրը վեկացան, սարք ու կարգ տեհան, մի քանի բարեկամների հետ նի էլան ձիանը, էկան Հալէպ, վեկալան սովդաքեար քաւորին, գնացին։ Շատ գնացին, քիչ գնացին, Աստված էր խաբար, գնացին մի սարի գլխի վեր էկան, մութն ընկաւ։ Շատ էլ ցուրտ էր։ Տղէն տեհաւ որ անկրակ կարալ չեն ապրիլ, հօրն ասեց. Ա՜յ հէր, մենք անկրակ չենք կարալ ապրիլ, թող էթամ ես չորանների մի կրակ վեր ունեմ բերեմ։

— Է՜, որդի, վայ թէ էթաս կարենաս ոչ բերես՝ մենք էլ ըստի մնանք։

— Չէ, ախու, թէկ կրդամ։ Վեկացաւ, ձին նստեց գնաց։

Ձին ասեց. Հողածին, էս ինձ յուր ես քշում, յուր ես էթում։

— Ախար տենում ես ցուրտ ա, էթում եմ կրակի։

— Ա՛յ հա՛յ, բերիր հա՛, էս փողը նի մնողը դուս կը դա։

— Խի, էս ում փողն ա։

— Մի հատ ախչիկ կա, Արարիշամ ա անումը, որ էթանք բանեվ, էլ մեզ բաց չի թողալ, եսիմ ուժ ունենա, որ նրա հետ կռվես։

Տղէն ասեց. Ետ դառնանք։

Ձին ասեց. Էլ չելաւ, ուզես չուզես՝ պրտի էթաս։

Ձին քշեց. Հէրն ու մէրը թող մնան ընտեղ քաւորի հետ լալմիշ ըլելով։ Տեհաւ լիսը բաց էլաւ, տղէն չեկաւ, լաց էլաւ ու քարերը կրծեց։ Օխտն օր կացան բանեվ։ Օխտն օրից ետը քաւորն ասեց. Ջուր ա կենալներս, էկէք ետ դառնանք, թէ սաղ ըլի՝ կըգա կը քթնի մեզ։ Յիրանք ետ դառան դըրա քաւորի տունը։ Մնացին բանեվ դոնաղ։

Գանք տպի կուշար։

Տղէն գնաց, գնաց, լիսը բացվեց, ասեց. Վա՛ դամ ձիս թիմարեմ։ Ձիուցը վէր էկաւ, սկսեց թիմարել, բէզաֆիլ ձեռը դիպաւ ձիու յաշկերին, տեհաւ ջուր ա, ասեց. Անասուն, էս ինչ խարար ա։

— Է՛յ, մ՚ տղա, հարար ինչից ես խարար, ինչ պտի դա մեր գլուխը։

— Ունենք Աստված, չունենք դարտ, մի օր էլել ենք, մի օր էլ մեռնել պտենք։ Դարտ մի անել։

Նի էլաւ ձին, քշեց։ Քշեց, մին էլ տեհաւ մի ընենց ձէն ա գալի որ սարսափելի. սար ու ձոր զողըմ ա։

Ձին ասեց. Հողածին, լսեցիր, էտ հրա ձէնն ա, բալի յիրան ես տենեմ։

Տեհաւ մի ահագնա մարդ, ձին նի էլած, արարզվի շորերը հաբին, հարիր փթանոց զուրզը որ թափ ա տալիս՝ սար ու ձոր թնդըմ ա։

Ասեց. Ա՛յ տղա, ինչ մարդ ես։

— Ձին ասեց. Տեհար, տղա։

— Քեզ ով իրաւունք տվուց, որ դաս իմ փողը տրորես, հրա իմ փողը իսան օգլու ում տեհած չէր, ասեց էտ ձիաւորը, դէ կանգնի կռվենք։

— Կռվենք, ասեց տղէն։ Ձի, քու բախտն եմ ընկել, դու գիտես, դառաւ տղէն ձիուն։

— Ինձ ինչ կա, քու բիլակին տուն, ասեց ձին։ Դէ հըմի քի տենենք։

— Տղա, կանգնի, էկաւ, ասեց։

— Թող դա, ասեց։

Ձիաւորը որ զուրզը քցեց, գետինը վարելով գնաց։

— Տղա, կաս թէ չկաս։

— Կամ, ոնց չկամ, ասեց տղէն։ Ձին հաւալամիշ էր էլէլ՝ դուրդը տակովը յանց էր կացել։

— Դիտես, այ տղա, ըսօր օխան օր ա հաց չեմ կերել, սոված եմ, թողաս էթամ մխելի հաց ուտեմ, մխելի քնեմ, դամ։

— Իրաւունք կա, գնա։

Ձիաւորը ձին քշեց, գնաց հաց ուտելու։ Դուրդը թողեց ընենց վեր ընկած։ Ձին ասեց. Ա՛յ տղա, յարի էթանք տես էն դուրդը կարաս վեր ունի։

Ձիու միտքն ինչ էր, որ տենի յիրա յաշկովը, թէ տղէն ուժ ունի թէ չէ, թէ ուժ չունի, բաց թողա փախչի։

Տղէն գնաց դրդի կշտին վեր էկաւ, ձին թամաշ արուց, կռացաւ, ձեռը քցելուն պէս դուրդը վի կալաւ. թեթև բան ա, ասեց։

— Դէ վի դի յիրա տեղը, ասեց ձին, ընենց որ բելլու չանի։

Տղէն կամաց վի դրուց դուրդը յիրա տեղը, յիրա դուրդը վի կալաւ, նի ելաւ ձին։

Ձին ասեց. Տղա, տենը՞մ ես սրա բախչի հասարը, կեթանք հասարի տակը, դրա բախչըմը յամէն բան էլ կա, անմահական խնձոր, անմահական ջուր էլ կա, մի հատ յաղբուր ունի դրան, որ ես ու դու լեղանանք կը ջահելանանք, մեզ ախտով չելել, վախել մի. էն ջրից համ դու կը խմես, համ ես, համ էլ էն խընձորից մի իրեք հատ վի կալ, քի պէտքը կը դա։

Տղէն ասեց. Շատ լաւ։

Դէ քշա էթանք։

Էկան հասարի տակը, տղին ասեց. Փորես տակը մի դամշի քաշա։ Մի դամշի քաշեց, ձին թռաւ. Տղէն տեսաւ մի բախչա, մի ընենց բախչա, որ յաշկերը չորս էլաւ տղի։ Մառմառ հաւզի վրին բաց արած էր մի սուփրա յամէն բան էլ կար միչին, տղէն էլ զաթի սոված էր։ Դէ կեր, տղա։

Ձին ուզում էր փորցի, տենի թէ յիրան եմ (կեր) տալիս՝ նոր յինքը հաց ա ուտում, թէ չէ։

— Ձի ջան, քեզ եմ չոված ես ոնց հաց ուտեմ, ինձ պահողը դու ես, ախար։

Տեսաւ ծառիցը մի ոչխարի ջանդակ ա կախ տված, ընը դըմակը, դանակը ջիրիցը հանեց, չորս կտոր դմակ կտրեց, տվուց ձիուն։ Թամքը վի կալաւ, ընենց մի թիմարեց, ձիու քէֆն էկաւ։ Մի ջոկ տեղ յաղբուր կար. ձեռները լվաց ու նստեց հացի, մի բուխուրկա էլ անմահական ջուր դրուց կուշտը, հա կերաւ, հա վրին անմահական ջուրը խմեց։ Օխայ։

Կերաւ պրծաւ, բեղերը սրբեց, ձին քաշեց անմահական յաղբրի տակին լաւ լեղացրուց, ջուրը խմացրրուց, էկաւ իրենք հատ անմահական խնձոր քաղեց՝ նիլաւ ձին՝ գնաց։ Գնաց, թուրը քաշեց դրուց ճակատին ու կանգնեց։

Թող էտ ըտեղ կանգնած մնա, մենք գանք տղի մօր կուշտը։

Մէրը տեսաւ, որ տղէն չկաւ, ասեց. Աւատաս տղէս գնաց ախչկա կուշտը, ախչիկն առաւ, նստեց թաքաւոր, հօրն ու մօրը մօռացաւ, ես պըտի էթամ ըսրեմ։

Մարդն ու քաւորը շատ խնդրեցին, որ չէթա, զալտ չելաւ. ասեց. Ադբընեբս կտրատվըմ են, կարալ չեմ դիմանալ։

Վեր կացաւ ձին նի էլաւ, մէն մենակ ընկաւ ճամփա գնաց դըբա խնամու տունը։ Շատ գնաց, քիչ գնաց, էկաւ սարը՝ մութն ընկաւ վրին, ձիուց վեր էկաւ, մի քարի տակի նստեց։

Տղի ձին ասեց. Տղա, մէրդ ձի նի էլաւ, էկաւ մեր քամակին, յարի էթանք կուշտը, մեզկ ա, վեր կընկնի, կը մեռնի։

— Հէր-մէր չգիտեմ, ես պըտի մեռնեմ, ես պըտի իմ խօսքը տեղ տանեմ, ասեց տղէն ու տեղիցը չը եռաց։

Մէրը տեսաւ մի սովդաքեար էկաւ, յիրանից մի քիչ ցած վեր էկաւ։ Ասեց, ես լաւ էլաւ, կեթամ կուշտը, քըշերը կը կենամ, յառաւօտենց կը վեկենամ, հետները կեթամ։

Գնաց հասաւ սովդաքեարին, բարով տվուց, բարովը առան, նստեց։

— Ի՞նչ կնիկ ես, հարցըրուց սովդաքեարը։

— Իմ ցաւը շատ ա, ասեց։

— Երկար քշեր ա՝ ասա, յանց կը կենա։

— Ինձ ըսենց մի տղա ունէի, տանըմ ինք որ փսակենք, գնաց որ կրակ ըսրի, կրակ անենք. ցուրտ քշեր էր, ասեցի, տաքանանք, գնաց ու չեկաւ։

— Ո՞ւֆ, քու բանը շատ դժար ա, նանի։

— Տղէդ որ դհովը գնաց։

— Ընենց, դըբա ներքև գնաց։

— Այ հայ, խեղճ ողորմելիք, թէ Արաբիշամի ձեռը ընկած ըլի, դուս գալը շատ դժար ա։

— Դէ հմի գիտեմ ոչ, թէ ինչ ա ըլել։

— Դուք յառաւօտենց ուր էք ուզըմ էթաք։

— Հուրի թաքաւորի քաղաքը պըտի էթամ։

— Լաւ ա, մենք էլ էն դիհն ենք էթըմ, հնկեր կըլենք, յիրար հետ կէթանք։

Յառաւօտենց վեր կացան, ընկան ճամփէն գնացին։ Ընչար յիրիկուն հասան Հուրի թաքաւորի քաղաքը։

Էս կնիկը վե կացաւ դուռ գնաց թաքաւորի կուշտը։ Ախչիկը տեհաւ մի կնիկ դարբաղիցը նի ա մնում, ասեց. Եաւաշ հարցնեմ տեսնեմ էս ինչ կնիկ ա, որ ըսենց անիծսալ նի ա մնում։

— Հարցնիլն ամօթ չըլի, նանի ջան, ոբդիանցի ես, ես յուր ես էթում։

— Ոբդի ջան, էթում եմ թաքաւորի տեսանը։

— Խի՞ ես էթում։

— Է՛հ, ոբդի ջան, իմ ցաւը շատ ա, ինձ հետ բան չունես, յարի շանց տուռ, ես էթամ։

Տեհաւ որ էս կնկա իսօսալը, դէմքը յիրա մարդի նմանութունն ա տալի, յիրա մէջն ասեց. Կա չկա էս տղի գլուխը մի օյին ա էկել, հայ վախ, հայ։—Ցարի էթանք, ասեց։

Տարաւ դուռ թաքաւորի կուշտը։

— Խի՞ ես էկել, այ կնիկ, ասեց թաքաւորը։

— Ես ձեր խնամին եմ։

— Ո՞նց խնամին։

— Մեր տղէն ձեր ախչկա հետ նշան ա դրվել։

— Հա, հառ, բա տղէդ յուր ա։

— Գալիս ինք, որ հարսիս տանենք, գնացինք մի սարի վրա վեր էկանք. քշերը շատ ցուրտ էր, տղէս ասեց. Էթամ մի կրակ բերեմ, մէրս մեղվ ա, տաքանա, գնաց ու էկաւ ոչ։ Մտածեցի թէ կարելի ա էկած ըլի ըստի, ես էլ վե կացա էկա։

— Վայ, Աբաբիշամի ախչկա ձեռն ա ընկել. ըտիան շատ դժար դուս կը գա։

Լաց էլան, հաց կերան, ախ ու վախ արին. քշերը հասաւ՝ քընեցին։

Ախչկա կողքը սատանէքը նի մտան. Հայ վախ, ես կորցըրել եմ իմ յաշկիս լիսը, ես կը քնեմ քշերը։ Ընչար լիս տանջըվեց, յառաւօտը մօրիցը թաքուն նի ելաւ ձին՝ գնաց։ Մէրը վե կացաւ հարցրուց թէ ախչիկս յուր ա։

Ասեցին. Աբաբղի շորեր հագաւ՝ ձին նի ելաւ գնաց։

— Հայ վախ, ասեց, սէրն ըսենց մի բան ա, յինքն էլ հագաւ աբաբղի շորերը, ձին նի ելաւ, մի հատ թաղան ղուշ ունէր, քցեց յառաջը, գնաց։ Ղուշը գնաց, ձին գնաց։ Ախչիկն էլ յուրիշ ճամփով գնաց։

Գանք սովդաքեարի տղի կուշտը։

Էն ձիաւորը հաց կերաւ կշտացաւ, քնեց դինջացաւ, վե կացաւ նի ելաւ ձին, էկաւ մէյդանի գլուխը կտրեց, տեհաւ որ տղէն կանգնած ա՝ թուրը ճակատին։ Տեհաւ տղէն էն տղէն ա,

համա ուժը մեին հարիր աւելացել ա։

— Տղա, ասեց, կանց գալիս եմ։

Նի մտաւ յիրա բախչէն, թամաշ արուց մտումտա հաւզին, անմահական խնձորին, տեհաւ որ ջուրը պղտոր էր անմահական խնձորից էլ իրեք հատ չկար, ձէն տվուց արարներին. Ըստի ով մտաւ։

— Տեհել չենք, թաքաւորի որդի։

— Ջուրը պղտոր ա, իրեք խնձոր չկա, բախչէն մարդ ա մտել։

— Խարար չենք։

— Ըլլի թէ էն տղէն ա մտել։

— Տեհել չենք։

Բաշեց թուրը, իրեքի շըլինքն էլ կտրեց քցեց հասարից էն դինը, նի ելաւ ձին, էկաւ մէյդանի գլուխը կտրեց։

Տղի ձին ասեց. Վախենաս ոչ, էկաւ։

— Էլ նոր վախենամ. մահ կա ետ դառնալ չկա։

— Մ՚ի տղա, կռվելու վախտն ա։

— Սրէն ու�ա։

— Բունն ա, ասեց տղէն, ես զոնաղ եմ։

Ձիաւորը քշեց ձին, լքցրրուց էկաւ՝ մէյդանի կըշտին թամքի միջին կանգնեց ու գուրզը քցեց՝ էկաւ, գոռաց։

Ձին ասաց. Օյաղ կաց, ես թըռա։

— Կաս, տղա։

— Ասեց. Կամ։

— Ասեց, Սրան իլլաճ չիլի, առաւ էս տղէն ինձ, իմ հոր անմը խայտառակ էլաւ։ Վեր էկաւ ձիուց, յիրա գուրզը վի կալաւ։

— Էս գոնուշ գալիս ա նեատը, մուղաթ կաց, գնաց գլուխդ, ասեց ձիաւորը։

Ձին ասեց. Ես ընենց կոդքանց յանց կը կենամ, որ նեատը անվնաս յանցկենա։ Նեատ եան յանցկացաւ, քարերը ջարթիլով գնաց։

Ձիաւորն ասեց. Կաս թէ չկաս։

Ասեց. Կամ, կամ։

— Ա՚յ հայ, ինձ զոռեց էս տղէն։ Ասեց. Ինձ մի հատ էլ թուր ունեմ քցելու։ Նոր սրէն կըգա քեզ։

— Բցա, ասեց։

Ձին ասեց. Տղա, դրա միտքը ընենց ա որ պըտի նի ըլնի, վի գա յուսիդ վրին, ճիտըդ կտրի յանցկենա, որ ես մնամ սաղ։ Վախիլ մի, ես ինձ հէնց կը քցեմ, որ նրա ձիուցը բանցրը կըլեմ մի բարդաբոյ, հա թող թուրը քցի։

— Դու գիտես, այ ձի։

Ձիաւորը մի զամշի ավուց ձիուն, ձին հաւալամիշ էլաւ, ապի ձին էլ ընդուց աւել նի եկաւ, մնաց նրանից վերև։ Ձիաւորը հա թուրը քցեց, հա թուրը քցեց, ասեց. Ձին էլ հեռը գնաց, ափսոս։

— Կաս ապա։

— Կամ։

— Է, դրա հետ կըռվիլը դուրս ա։ Վերջըմը բալքի կոխ պըրծընեմ, տամ դեննովը, ճիտը կտրեմ, իմ ֆոգին ազատվի դրա ձեռից։

Ձին ասեց. Տղա, ձիուն հենց կըտաս, որ տեղն ու տեղը մնա կանգնած, գլուխն էթա. դու ինձնից վեր կըգաս, ձեռդ կը քցես մազերը, կը դնես տակդ ու թուրդ կը քաշես՝ կը դնես շը-ըընքին։ Կտրես հա։

— Ասեց. Շատ լաւ։

— Սրէն քունն ա, ապա, յարի։

Տղէն ասեց. Դայիմ կաց, էկա, գնաց ձիուդ գլուխը։

Դուրդը քցեց, քցելուն պէս ձիու գլուխը թռաւ, ձին կանգնած մնաց, յինքը ձիուց վեր էկաւ. ձեռը քցեց մազերը, վեր կալաւ, ավուց դեննովը, թոզ ու դումանը վերկալաւ, ծունկը դրուց սրտին, թուրը քաշեց՝ դրուց ճըտին։

Հա, ասիդ մեռնեմ, մի կարիլ, որ ես էկա, էտ մի արինն էլ ես անեմ, ձէն ավուց Հուրի թագաւորի ախչիկը, էկաւ ապի ձեռը բռնեց, էտ վախտը հուրի ախչկա մէրն էլ էկաւ, տեսաւ էրկի ոտների տակին մի աժդահա մարդ մեռնուած ա. ոտներն եռացընըմ ա, ասեց. Թէ որ գլուխը կտրած չըլեն, ես պըտի ազատեմ էտ ապին, ափսոս ա։

Ընկած ձիաւորն ասեց. Ա՜յ ապա, յաջու ձեռս մի բաց թող, դու ըլես քու մոր ծծած կաթը։

Որ յաջու ձեռը բաց թողուց, խրխին պոկեց, սիպտակ ծը-ծերը քցեց դուռ։ Տղի խելքը գնաց։ Ասեց. Էս էլ ա ախչիկ, բանը խարար էլաւ։

Զանգաչը հասաւ՝ ասեց. Ա՜յ բալա Ջան, էտ մի տղէն ինձ բախշա, մնացողը դու գիտես, ինչ կուզես արա։

— Թե բախշեցի, այ մէր, ասեց ու ծունկը վեր կալաւ. վերից, կուռը բռնեց, բանցրացրուց։

— Հազար բարի էք էկել, ասեց վեկացած ախչիկը, համե-ցէք իմ տունը հացի գոնաղ։

Տղէն ասեց. Ձին ընդի շըլինքը ծուռը մնացել ա, էթամ բերեմ, էթանք։ Հանեցուն պէս ձիու յաշկերը պատեց, ձին ու-

բախացաւ, որ տղէն լէն էլած վախտը յիրան մաքնան չարուց։ Ձին վազելով էկաւ, գնացին էն ախչկա տունը, յիմացան որ էտ ախչկա անքմը Արաբիշամ էր։ Գնացին նեքան, Արաբիշամը գնաց շորերը փոխեց, մազերը սարքեց, էկաւ։ Էրկու Ջաուիէն ինունցն էկան, ասեցին. Մեր նոր թաքաւորը որն ա։

Արաբիշամը վի կալաւ ասեց. Էն իմ մէրն ա, էն իմ քիրն ա, էս էլ ձեր թաքաւորն ա։

Հուրի ախչիկն յիրան կերաւ։

Նստեցին սուփրի վրին, Հուրի ախչիկը քսվելով քսվելով էկաւ կալաւ էտ տղիցը. տեհաւ որ չէ՝ միտքը փոխել ա։

Ըտեղ էրկու հատ Հաղարան բըլբուլ կար, սկսեցին խօսալ։

Հուրի թաքաւորի ախչիկն ասեց. Էրնակ մարդ հասկանա թէ ինչ են ասում էտ բիլբուլները։

Արաբիշամը ասեց. Բիլբուլներն ասում են, թէ մեղնից մին բաց թողէք, որիդ գլխին որ կանեցինք, նա էտ տղին առնի։

— Տղէն ասեց. Շատ լաւ գրից ա։ Համա Հուրի թաքաւորի ախչկա փորովը արին էր էթում։

Բերին մի բիլբուլը բաց թողին, հաղալով խօսալով էկաւ Հուրի թաքաւորի ախչկա գլխին վէր էկաւ։

Արաբիշամն ասեց. Հէյվախ, իմ աշխատութունը դուր գնաց։

Միքիչ յանցաւ, ըլէդ ասեց. Իմ մէր, մեր դշի կերը պակաս ա էլել, թող կեր տանք, էլի բաց թողանք, ում գլխին կանենի՝ նրան առնի։

Էլի բաց թողացին դուշը, բանցրացաւ՝ դնա շատ խօսաց, վեր էկաւ, կանենց Հուրի թաքաւորի ախչկա գըլխին։

Հուրի թաքաւորի կնիկն ասեց. Էտ յէրաղը ես վաղուց ի տեսել, մատիլը դուր ա։

Արաբիշամը ասեց. Է՞ մէր, իմ բանը շատ դժար ա, ես քեզ խնդրում եմ. դու ինձ ախպէր, ես քեզ քիր, ինչ տղա քեզ զոռեց, էն տղին տաս ինձ։

— Յաշկիս վրա, ասեց տղէն։

Մի տեղ քցեցին սուփրաքեարի տղի համար, մի տեղ էլ քըցեցին իրեքի համար, քնեցին։

Լիսը բաց էլաւ։

— Դէ սարքէք, էթանք։

Արաբիշամը խնդրեց Հուրի թաքաւորի մօրը, թէ մէր, էս ծառի խնձորն անմահական խնձոր ա, էս էլ անմահական ջուր ա, մի բուդուրկա ջրից վի կունես, մի քանի հատ էլ խնձոր, քեզ հարկաւոր կըլի, մենձ կնիկ ես։

Մէրը վեր կալաւ, ձիանը նստեցին, գնացին, Արաբիշամն էլ հետները։

Էկան Հուրի թաքաւորի տունը։

— Է՜հ իմ ունեցածն էս ա, ասեց Հուրի թաքաւորի կնիկը Արաբիշամին, քեզ փէշքաշ։

— Շատ շնորհակալ եմ, ինչ պտի անեմ, աշխարհի մալը իմն ա։

Սուփրէն բաց արին, որ հաց ուտեն, մնէլ տեհան տղի հէրը, մէրը, քաւորը հրէս էկան։ Հուրի թաքաւորի ախչիկը վեր կացաւ տեղիցը, կանչեց։ Արաբիշամն էլ վեր կացաւ, տղէն էլ վեր կացաւ, գնաց փաթըթվեց մօրը։ Լացն ու խնդըմը խառնըվեց յիրար։

Եատ էկան նստեցին հաց կերան, խմեցին։ Երկու բութուրկա գինի բերին։ Ստաքանը տվին քաւորին։ Քաւորը վեր կալաւ՝ լըքցրուց ասեց.

— Թաքաւոր, քեզնից կը խընդրենք, որ մեր ամանաթը տաս մենք էթանք։

Արաբիշամը ասեց. Յուր էթաք, բա ես։

— Քեզ էլ մի իլլաճ կանենք, ասեց տղէն։

Արաբիշամը ուրախացաւ։

Արաբիշամը ասեց. Դուք ման էկող սովդաքեար էք, տեսնում եմ, դուք շատ քիչ բան կը գիտենաք, էս իմ ախպօր պէս տղա աշխարհքի մէջ կա։

Քաւորը վեր կալաւ ասեց. Որդի ջան, էտ քու ասած տղի տեղը ես գիտեմ. Հարաւային թաքաւորին մի տղա ունի, ախտ ա արել, ինչ մարդի յինքը զօռի, նրա քիրը առնի. Իմ պարտքն ըլի, էթամ, յիմաց տամ գա, ախպօրդ հետ կուվի, որ քեզ առնի։ Թող մեր հախլուն տանենք, որ սրա տունն յանտէր ա։

Յառաւօտենց լիսը բացվեց, բարին բացվի ձեր վրա, հարսանիք բռնեցին, օխան օր, օխտը քշեր յուրախութուն արին, էտ տղին ու Հուրի ախչկան փսակեցին. վեր կալան տարան դուզ քաւորի տունը։ Ըսեղ մի լաւ քէֆ արին, յանցկացան գնացին սովդաքեարի տունը, էլ մարդ չմնաց, յաչքալիսէք էկան, բոլորին էլ շահեց։

Արաբիշամն էլ էկել էր դրանց հետ, մի քանի ամիս կացաւ, էլի սովդաքեարի տղէն վեր կացաւ, տարաւ յիրա տունը, վեր դրուց։

Դանք քաւորի կուշտը. Քաւորը բեռները սարքեց, գնաց Հարաւային թաքաւորի երկիրը։ Էտ երկրի խասիաթը ինչ թաւուր էր.—Սովդաքեարները փէշքաշ ին տանում թաքաւորին, որ

թաքաւորը իրաւունք տա յիրանց ապրանքը էտ երկրի մէջ ծախելու։

Բաւորը փէշքաշը առաւ, տարաւ թաքաւորին, թաքաւորը շատ սիրով ընդունեց։ Բաւորը հարցրուց թաքաւորից. Թաքաւորն ապրած կենա, քու տըղիդ ախտող էլաւ թէ չէ։

— Հէյ, որդի, իմ տղին ով կարա ախտի, դա ընենց մարդ ա որ ախտվի։

— Ես մեր տեղը գիտեմ, որ քու տղէն նրան կ'ախտի ու նրա քիրը կտանի, շատ սիրուն ախչիկ ա, էլ թայը չկա, անբան էլ Արարիշամ ա։

Տղէն ասեց. Ես էտ ախչկա տալրդը տակ եմ, պըտի էթայի, էտա լաւ ա, որ դու ասցիր, յատաւօտը կէթամ մենակ։

Բաւորը պարտականութունից դուս էկաւ, գնաց յիրա ապրանքի կուշը։

Թաքաւորի տղէն յատաւօտանց յիրա ձին նիլաւ, հարցնելով, հարցընելով էկաւ, Հուրի թաքաւորի տանը վեր էկաւ։

Հարցրուց Հուրի թաքաւորը. Խէր ըլի, յուր ես էթըմ։

Թաքաւոր, ես էթալ պրտեմ Արարիշամի հողը, որ կուվեմ, տեսնենք Աստված ինչ կրատ։

— Օ՞յ, այ ապա, մուղաթ կաց, զօր տեղ ա։

Յատաւօտը լիսը լաց էլաւ, տղէն նի էլաւ. յիրա ձին, Հուրի թաքաւորը տարաւ Արարիշամի երկրի ճամփէն շանց ավուց, գնաց։

Տղէն հասաւ Արարիշամի փողը, տեսաւ էտ փողը շատ անիծած փող ա, ձին կարըմ չի երմիշ ըլի։ Մի քիչ էլ ձին քշեց, ձին կանգնեց, էլ երմիշ էլաւ ոչ, տղէն վեր էկաւ, ձիու շըլինքը կարեց։ Մի դուղ կար՝ յանցկացաւ, Արարիշամի անները էրեաց։ Արարիշամն ու սովդաքեարի տղէն գնացել ին ու, յամէնքի յառաջին մի հատ գիտար՝ էկան տեսան մէյդանի գլխին մի հատ ապա ա կանգնած, որ նմանը հէչ չկա։

Արարիշամն ասեց. Էս տղէն լաւ ապա չի էրևում, կուվող ապա ա էրևում։ Բարով ավին, յանցկացան գնացին։

— Է՛ ախպէր, ասեց Արարիշամը, ես կըուվեմ, թէ դու։

— Սովդաքեարի տղէն ասեց. Ես խօսք եմ տվել, որ կուվեմ։ Ես քեզ խնդրըմ եմ, որ ես կուվեմ, քու անբանդ չկոտրվի։

— Դու գիտես։

Գշերը քնեցին ընտեղ, յատաւօտանց Արարիշամին արտաբղղի շորերը հագաւ, էկաւ մէյդանի գլուխը կարեց։

— Բարով քեզ, ա՛յ ապա։

— Ասսու բարին, հազար բարին։

— Ի՞նչ մարդ ես, ասեց Արարիշամին։

— Էկել եմ կռվելու։

— Կարմս կռվիր։

— Շատ լաւ։ Ես քեզանից կը խնդրեմ, քու անունդ ինձ ասես, ասեց տղէն։

— Իմ անունը Արարիշամ ա։

Սովդաքեարի տղէն էկաւ, բալկոնից դրանց Թամաշ արուց։

Թաքաւորի տղէն ասեց. Ես ոտով, դու ձիով ի՞նչպէս կռիւ անենք։

Արարիշամը ձիուցը վէր էկաւ, ձին գնաց յիրա տեղը։

Ասեց. Էկաւ դուրդը, այ տղա։

Բցելուն պէս դիրաւ տղին, տղէն մինչև ծծերը թաղվեց աւազի մէջը։ Տղէն ալրիալն յիրան թափ տվուց, աւազից դուս էկաւ։

Սրէն էկաւ տղին։

Տղէն քցեց. Էկա՞ւ դուրդը. դուրդը գնաց, դիրաւ ախչկան, ախչիկը մինչև յուսը խրվեց աւազի մէջը, համա ալրիալը տղէն հասաւ՝ ախչկան վի կալաւ՝ դրուց ծնկան տակը, թուրը քաշեց։

Սովդաքեարի տղէն հասաւ, տղի բիլակը բռնեց, ընենց հուզ տվուց, որ Թաքաւորի խելքը գնաց։

— Էա իմ քիրն ա, այ տղա, ի՞նչ ես անում, տվի քեզ։

Տղէն թուրը դրուց տեղը, ախչկա ձեռը բռնեց, էկան տուն։

— Ի՞նչ ես ուզում, ուզա՞ տամ, ա՛յ տղա, ասեց սովդաքեարի տղէն։

— Ասեց. Բու քիրը։

— Տար վայելա, ասեց տղէն, հանեց Արարիշամի մատանիքը, տվուց տղին, տղէն էլ յիրա մատանիքը տվուց Արարիշամին։

Թաքաւորի տղէն ասեց. Ես մեկ էթամ, մեկ գամ, ծանրութուն կելի, յարի, ախպէր, քիրդդ վի կալ, էթանք մեր տուն, ընդեղ փսակվենք։

Յատաւօտենց քշերհանա վի կացան, նի էլան ձիանը, հազարան բիլբուլները, անմահական ջուր, անմահական խնձոր վի կալան, գնացին Հարաւային Թաքաւորի տունը։

Թաքաւորը վի կացաւ բալկոնը, տեհաւ որ էրկու տղա, մի լաւ ախչիկ գալիս են։ Տղի մինն յիրա տղէն ա, մինն էլ յիրա տղից լաւ տղա ա։

Էկան վեր էկան, Արարիշամը վաղեց, գնաց Թաքաւորի ձեռը պաչեց։

— Տղա, էս ի՞նչ բան ա։

— Մեր հարսն ա, էս էլ հարսի ախպէրն ա։

— Ախտեցիր նրան։

— Ախտեցի։

— Ախպէրն էլ զօչմզ ա։

— Շատ։

Բշերը քնեցին, յառաւօտենց վի կացան, հարսանիքը բռնեցին. օխտն օր օխտը քըշեր ուրախութուն արին, էտ տղին ու Աբարիշամին փոսկեցին։

Մի քանի օրից հետ Թաքաւորը խնդրից խնամուն, թէ էս ղըզըմը մի քիչ հաղ արէք, քէֆս բացվի։

Ջիանը դուս քաշեցին, Թաքաւորի տղէն յիրա ձին նի էլաւ, սովդաքեարի տղէն յիրա ձին. նի եկան կըպան յիրար։ Թաքաւորը տեհաւ, որ օխտը յիրա տղի պէս զօչաղ ա, ասեց. Բոլ ա, բոլ ա։ Տղէն թուրը գրուց ճակատին, էկաւ Թաքաւորի յառաջը կանգնեց։

Թաքաւորը կուռը բռնեց, տարաւ նեքսեւ։ Կերան խմեցին, յուրախացան։ Միքանի օր հետ էտ տղէն վի կացաւ, էկաւ յիրա երկիրը։ Նրանք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։ Երկնքիցը իրեք խնձոր վէր ընկաւ, մինն ասողին, էրկուսը լսողին։

ՕՀԱՆ ՈՐՋՊԱՐԻ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Աշտարակ*)

Ժամանակով մի որջպար կար, անունը Օհան էր, մի հատ Աստու յիրեսից ընկած տղա ունէր։ Հէրը տեսաւ, որ էտ տղիցը խելքը բան չի կարում, ասեց Լաւ կըլի, որ դլխիցս ռատ անեմ։ Հէնց էտ մի տղէն ունէր։

Ասեց. Կնիկ, տղեն պըտի վեր ունեմ, տանեմ տամ փէշակի։

Ասեց. Տար։

Վե կալաւ, գնաց։ Տղէն էլ ընդար հասած չէր — ջահել տղա էր։

Շատ գնացին, քիչ գնացին, Ասուած ա գիտում, գընացին մի դաշտ տեղ վէր էկան, տեսան, ըսեղ մի ձեռք տուն կա։

Տղէն ասեց. Ափու, էս ինչ լաւ էլաւ, քշերն ըսեղ կը-կենանք։ Բանից էլ խարար չի հեղեր, թէ ինչ տեղ ա։ Նի մտան նեքսեն։ Տեսան քառասուն հարամի նստած։

— Էս ինչ լաւ էլաւ, ասեցին հարամիքը, մենք ընկել ենք սար ու ձոր աւի ենք ման գալի, աւը յիրա ոտով էկաւ։ Ա՛յ մարդ, ինչ մարդ ես։

— Ես էս տղէն բերել եմ, տամ ձեզ յաշկիրա։

Հարամիքը ծիծաղացին։

— Վե կունենք, բիձա. մեր արհեստն ինչ ա, որ դու կարօղում ես մեր արհեստին։

— Ի՞նչ ուզում ա ըլի, դուք ըսօր ապրում էք էտ արհեստով, թող էս էլ ձեզ պէս ապրի։

— Դէ, բիձա, յառաւօտը վե կուց գնա. տղէն որ արհեստը սարվեց, մենք վե կունենք, կը բերենք, կըտանք քեզ։

— Ա՛յ տղա, ասեցին, դորակը (փոքրիկ կուժ) վեկալ, ըսեղ մօտիկ յաղբուր կա, լեցրու բեր։

Տղէն դորակը վեկալաւ, գնաց գըրա յաղբուրը, ջուրը լեք-

---

*) Պատմեց 1912 թ. սեպտ. 26-ին Աշտարակ գիւղում նոյն Գեորգ Մկրտչեան Գեորգեան վարսուհամեայ անգրագէտ ծերունին։

ցըրուց, ուզեց որ քաշի՝ տեհաւ գորակը գալիս չի, մնել թափ տվուց՝ մի սիպտակ բիլակ էրևաց, մի ձեռով գորակը բռնեց, մի ձեռով էլ բիլակը։ Էտ բիլակատէրը ճղղաց ու մի հատ թաս վրա տրուց ղըրա էտ տղէն, բիլակը բաց թողուց, գորակը լիքը վի կալաւ, էկաւ թասի կուշտը, թասը ֆողոտ էր, սրբեց, ղրուց ծոցը, վի կալաւ գնաց հարամու տունը։ Հարամիքը ճնացին զարմացած, յիրար յերես թամաշ արին։

— Ա՛յ տղա, էտ Ջուրը ոՐդիան բերիր։

— Ձեր տան կշտի յախտրիցը։ Գորակը կոխեցի Ջուրը, որ Ջուր հանեմ, գորակը դուս չէր գալի, ուժով քաշեցի, մի հատ բիլակ դուս էկաւ, ընդար սիպտակ էր, կատնատս ձին ընէր, եատ որ բիլակը բռնեցի, էն մի ձեռը տարաւ ծոցը, մի թաս հանեց, քցեց, բիլակը թողի, հասա թասին, հրէս, ծոցիս ա։

Հարամիքաշին առաւ թասը, թամաշ արուց, խելքը գնաց. Ասեց. էտ թասին գին չունի։ Վեկացաւ ու տղի ճակատը պաչեց։ Տղա, հալալ ա քեզ։

Դէ տղէք, էլ մեզ հարամութունը հարամ ա, ասենք էս թասը խուրդենք, քանի սաղ ու կենդանի ենք, ուտենք, հատնիլ չի։ Դէ, ասեց, ձիս դուս քաշէք, էթամ խուրդեմ, փողը բերեմ, կէս անենք, ամէն մարդ յիրա փողը վեր ունի, էթա յիրա տունը։

Հարամիքաշին ձին նիլաւ գնաց քաղաք, տարաւ մի սարաֆի կուշտ, որ խուրդի։ Սարաֆն ասեց. Մեր բանը չի էտ, էտ որ խուրդի՝ ֆլան Ջհնուտ սարաֆը կը խուրդի։

Վի կալաւ տարաւ էտ երևելի Ջըհնտի կուշտը. Առ, ասեց, խուրդա էս թասը։

Ջըհնուտն առաւ թասը ձեռը, պրտրտեց, տեհնաւ որ անդին բան ա, ասեց. Տանենք թաքաւորի կուշտը, ա՛յ տղա, թասը գնահատան՝ փողը տամ։

Գնացին թաքաւորի կուշտը, Ջըհնուտն ասեց. թաքաւոր, էն տարին որ իմ լալ ու Ջաւտիր դուքանը կարեցին, էտ թասը դուքանումն էր, հմի գողը բռնել եմ, խնդրեմ վճռես, իմ տպրանքը տանես, տաս։

— Ա՛յ տղա, էս թասը քու ձեռին ոՐդիան ա ընկել։

Թաքաւոր տպրած կենա, մեզ մի յաշկերա ունենք, նա ա բերել յաղպրիցը։

— Դուք ինչ փեշակի մարդ էք, որ յաշկերա ունէք, դուզն ասա, թէ չէ զլուխտ կ թացնեմ։

— Որ արդարն ասեմ, մենք քառասուն հարամի ենք, մեզ մի նոր յաշկերա բռնեցինք, էտ թասը նա ա բերել։

Թաքաւորը մարդ ղրկեց եւաբն ինքը ընկերներին ու յաշ-

կերաին վի կալան ըերին։

Աշկերտն էկաւ, Թաքաւորին օխան անդամ գլուխ տվուց, ասեց. Թաքաւորն ապրած կենա, էտ Թաս ըերողը ես եմ. Թէ որ էտ Թասիցը տասնըմէկն էլ ըերի, անուամբ ջըհուտ քու քաղաքըմը չըպըտի մնա, որ չըերի, յառաջ իմ շըշինքը քաշա, ետո հնկորտանցս։

— Դէ տարէք էս քառասուն մարդին էլ ըռնեցէք, Թող էս աղէն էթա, էտ Թասիցը ըերի։

Տղէն հարամըշաղ ձին նի եկաւ, Թասն առաւ, որ ըտենց տասնըմինն էլ ըերի, ու գնաց՝ գնաց. շատ գնաց, Թէ քիչ գնաց, Ասաված գիտի, գնաց մի Թաքաւորանիստ քաղաքի առատ էկաւ։ Գնաց նի մտաւ մի տուն։ Տեսաւ ըտեղ մի մեծ կնիկ կա. ընդար ա նոթերը կիտած, կոխ, որ ըուն ունքիցը վեր ընկնի հարիր կտոր կըլի։

— Նանի, նոթերդ խի՞ ես կիտել ըտենց։

— Օֆ, ինձանից ըան չունես, հացդ կի, քեզ հըմար նստի։

— Ասաված սիրես, նանի, խի՞ ես նոթերդ կիտել, ասա, բալքի քու դարդին դարման եմ անըմ։

— Ա՜յ բախտավար. քի պէս տղա ա գնացել մուղաթ կացել, կարացել չի իլլաճ անի։

— Ի՞նչ ա, նանի, ասա։

— Մեր Թաքաւորին մի շատ լաւ տղա ունէր, մեռել էր, տարանք Թաղեցինք. ցերեկը Թաղած ա մնըմ, քշերը հանըմ են, գնըմ գեղնի յերեսը, պատանք-մատանք ճրդճրդած։

— Դէ նանի, յարի հացը վեկալ, էլ հաց չեմ ուտըմ։

— Ա՜յ, տղա, խի՞ չես ուտըմ, կեր, կեր։

— Չեմ ուտըմ, վի կալ, հարամ ըլի։

Պառաւը էտ տղին վի կալաւ, տարաւ Թաքաւորի կուշաը, ասեց, որ էս տղէն ասըմ ա, ես գերեզմանին ընենց մուղաթ կը կենամ, որ քար չը եռա, Թէ որ մուղաթ չըկացա՝ իմ շըլինքը կտրա։

Թաքաւորը ասեց. Գնա մուղաթ կաց։

Գնաց գերեզմանից հեռաւ նստեց, Թամաշ արուց։ Էկաւ քշերվա կէսը, որ ղշերն էլ ին քնած, սեհաւ իրեք հատ աղունիկ վեր էկան. խրխիքը հանեցին, պառան իրեք հատ շատ սիրուն ախչիկ, մինը մընի հետ խօսաց, ասեց. Հաց ուտենք, Թէ Թաքաւորի տղէն ըերենք, նոր հաց ուտենք։

— Ա՜յ տունդ շինվի, էնԹաւորի տղէն ընտեղ քնած մենք հաց ուտենք, հացը կուլ կենՔ։

Մինը մէջքից դաստախուանը ետ արուց, մի կարմիր, Թը-

պըլխի ճիպոտ տուաւ ձեռը, տվուց դատաւորներին, ասեց. Դէ բացվի, դատաւորներ։

Դատաւորները բացվեց, յամէն բան մի՛ջին։

Նստ վեկացան, գնացին գերեզմանի կուշտը, միներ ճիպոտով, տվուց քարին, ասեց.

— Բա՛ր, բացվի։

Բարը բաց էլաւ։

— Ծո՛ղ բացվի։

Ծողը բաց էլաւ։ Վեկալան մեռելը, դրին գնոնի յէրէսին, ճիպոտով տալուն պէս՝ օյանմիշ էլաւ՝ նստեց։ Մի ձեռք շոր բերին, հագցրին տղին, ու տարան դատաւորի գլխին նստացրին, յիրանք էլ ջերկով գէմը նստեցին։

Տղէն թամաշ արուց, տեհաւ որ իրեք տիչիկը մի սրի են նստած, տղէն սուփրի ճակատումն ա նստած. ասեց. Էս շատ լաւ էլաւ, նեստ ընենց բցեմ, որ իրեքին դիպչի, տղին դիպչի ոչ։

Նեստը քցեց, քցելուն պէս՝ իրանը վեցին յիրար, դատաւորներն էլ թողին, ճիպոտն էլ թողին, իրիրը անջաղ հարան ու թռան։ Տղէն էկաւ թաքաւորի տղի կուշտը թուրը ձեռին, ասեց.

— Բարրիկուն, թաքաւորի որդի։

— Ամոթ ըարին, հազար ըարին, ա՛յ տղա։

— Ես քու հոր պահապանն եմ, նստենք, միքիչ հաց ուտենք։ Հացնեերը կերան տղէն ասեց. Դէ, արի քեզ գնեմ տեղը։

— Ա՛յ ջանըմ, անջաղ եմ տղամարդ, արի էթանք մեր տունը։

— Ձէ, պրտի մենես տեղդ։

— Դատաւորները կապեց մէջրը, ճիպոտը վեկալաւ, տեսաւ մի մատանիր էլ դատաւորի պռնկին ա, վեկալաւ, դրուց մատը։

— Դէ մատ տեղդ։

Տղէն մատ տեղը, ճիպոտով տվուց, յամէն բան յիրա տեղն տուաւ։

Էկաւ լիսը բաց էլաւ. մարդ էկաւ, տեհաւ որ գերեզմանի քարը հեռացել չի, ասեց որ կրա՝ էնենց կա։ Նստիրը գնաց թաքաւորին ասեց. Թաքաւոր, յաշկդ լիս ըլի, ասցար որ թողել ենք, ընենց մնացել ա, քար չի հեռացել։

Տղէն էկաւ թաքաւորի կուշտը, թաքաւորն ասեց. Ա՛յ տղա, ասց ես պահել գերեզմանը։

— Գնանք թաղուհու հետ, տեսէք։

Վե կացան թաքաւորը, թաղուհին, նստիրն ու էկա տղէն գնացին գերեզմանը։

— Թաքաւոր, տեսար յաշկովդ որ քար չի հեռացել. որ տղիդ սաղ սալամաթ հանեմ, տամ քեզ, ինձ ինչ կըտաս։

— Ի՞նչ ուզես, կըտամ։

— Դէ դուք գնացէք ձեր տունը, ես էս հրոպայումը հանեմ, բերեմ։

Թաքաւորն ու Թագուհին նաղրի հետ գնացին տուն, տղէն հանեց տղին, բիլակը բռնեց, խօսալով բերեց Թաքաւորի տունը։

— Սա քու որդին, Թաքաւոր։

Յուրախացան։ Աշխարհքն յաշկալիս էկան Թաքաւորին։

— Ուզա՛ տամ, ասեց Թաքաւորը։

Տղէն հանեց Թասը ասեց. Էս Թասից տասնըմին Թաս եմ ուզում։ Իմ քառասուն ախպէրներնը սրա համար բռնված են։

— Ըտուց չունեմ, որդի Ջան, ախչիկ ուզա՝ տամ, խաղնա ուզա՝ տամ, քաղաք ուզա՝ տամ, մենակ ըտուց չունեմ ինձ։

Տղէն ձին նի էլաւ, ասեց. Զատ չեմ ուզում քեզնից, ու գնաց։

Գնաց, գնաց, շատն ու քիչը Ասուած գիտի, գնաց մի Թաքաւորի քաղաքի ռաստ էկաւ։ Ծովի ղրաղումն էր էտ քաղաքը։ Նի մտաւ մի տուն էտ տղէն, տեհաւ տան տէրը նոթիերը շատ կիտած ա։

— Ախպէր, դէ զոնաղ ես էկել, հազար բարի ես էկել, որ հաց չկա դնեմ յառաջդ ուտես, ես ի՞նչ անեմ։

— Ինձ հաց շատ ունեմ, ախպէր Ջան, քեզ էլ կուտացնեմ, դու դարդ մի անիլ։

Դաստախուանը հանեց, ճիպոտով տվուց, յամէն բան բացվեց։

— Էրեխանցը կանչե՞ս, գան մի պինդ ուտեն լիանան։

Էկան, կերան կշտացան։

— Դէ, ասա տեսնեմ, էս ի՞նչ բան ա, ձեր քաղաքումը խի՞ չի հաց կա, հոգ չունի՞ք, վարէք ցանէք, հնձէք բերէք կառավորվէք։

— Մենք վարուցանքի տեղ չունենք, ախպէր Ջան։

— Բա ձեր հացը ի՞նչ տեղից ա գալի։

— Մենք գեամով ծովի էն ղրաղիցն ենք բերիլ տալի։

— Բա խի՞ չէք բերիլ տալի։

— Ա՜յ մարդ, մի ձեռն ա դուս էկել ծովի մէջ տեղիցը, ըստիան էթալուս բան չկա, էթում ենք ցորեն, ալիր բարձում ենք, գալի էտ տեղը, էտ ձեռը քաշում ա գեամիքը տաղ բաթմիշ անում. հնար չենք քթնում, որ ձեռիցը պրծնենք։

— Որ էթամ էտ ձեռին հնար անեմ, գեամին լիքը բերեմ, աշխարը լիացընեմ, Թաքաւորը իմ ուզածը կըտա։

— Ա՛յ հաց, ընենց կըտա, լիղուտ ինչ պըտտի՝ կըտա։

— Դէ վե՛, էթանք Թաքաւորի կուշտը։

Վե՛ կացան, գնացին Թաքաւորի կուշտը, տղէն ասեց. Թաքաւոր, ինչ կըտաս, որ էթամ գեամիքը բերեմ, լիացնեմ ձեր երկիրը։

— Ինչ ուզես՝ կըտամ։

— Լաւ, ասեց. Նի մտաւ գայլը, գեամիրը ննջուցը քըշեցին։ Բառասուն գեամի ցորեն, ալիր լիքը լեցուին, գայլը յառաջ քցեց, էկաւ ձեռի կուշտը, տեսաւ մի սիպտակ ձեռը, ասկէ բիլտաղուկը արմկին, ջրի մէջը ֆըռֆռըմ ա։ Ձեռով բիլտակը գայլիմ բռնեց, թափ ավուց, թափ տալուն պէս՝ բիլտաղուկը ձեռին մնաց, բիլտակատէրը թռաւ։ Եան ավուց գեամիրը, էկան յանց կացան, անվնաս էկան քաղաքը։ Լիուբունը ընկաւ քաղաքը։

Տղէն էկաւ թաքաւորի կուշտը՝ ասեց. Դէ թաքաւոր, իմ ուզածը տուր, էթամ։

— Թաքաւորն ասեց. Ի՞նչ ես ուզըմ։

Տղէն հանեց թասը, ասեց. Տասնըմին բսենց թաս եմ ուզըմ քեզնից։

— Ա՛յ հա՛յ, ասեց թաքաւորը, էտ իմ սաղ կարողութունը ա՞ժի, ես էսենց տասնըմինը ո՞րտեղից տամ։ Ուզա ախչիկս՝ տամ, թաքաւորութունս՝ տամ, քաղաք՝ տամ։

— Չէ, մի զատ էլ հարկաւոր չի, իմ քառասուն ախպէրը բռնըված են, իմ քո՛նը չի տանըմ, ըտենց տասնըմինը պըտի տանեմ, որ ազատեմ։

— Դէ որ ըտենց ա, ես մի նաւապետին տենեմ, ասեց թաքաւորը, յառաւօտենց քեզ մի ջուղար կըտամ։

Թաքաւորը կանչեց նաւապետին. Հուրի թաքաւորի ախչիկերանց ճաշարանի տեղը գիտես։

— Գիտեմ։

— Լաւ, մի տղա կա, նրան կը տանես շանց կըտաս։

Կանչեց տղին, ասեց. Գնա՛, էս նաւապետը քեզ շանց կըտա Հուրի թաքաւորի ախչկերանց ճաշատունը, ընտեղ կը քթնես էտ թասիցը։

Ձին թողուց էն մարդի տանը, ինքը նի էլաւ գայլը ու գնաց։ Օխտն օր, օխտը քշեր գնաց, գնաց հասաւ ծովի ղրաղը։ Տեսաւ մի պուճուր դուռը կա էրկաթից։ Նաւապետն ասեց. Էս ա դուռը, բալամ։ Դու ֆի պըտի դուս գաս, որ գնամ՝ դամ էթանք։

Ասեց. Մի տասնըհինգ օրից հետ

Դուռը բսթեց, նի մտաւ նեբսե։ Տեսաւ մի ծեր հալիվոր մարդ, ձեռները քըշտած կիրակուբ ա էթըմ։

— Բարաջողըմ, ասեց, ափու ջան։

— Ասսու բարին, հազար բարի, խան օղլի։

Համա էն տեսակ սիրուն էր էտ հալիվորը, որ էրկու դանատ (անգամ) կարալ չիր յեբեսին թամաշ անես։

— Ա՜յ տղա, օձը յիրա պորտովը, գուշը յիրա թևովը ըստեղ գալ չէր, դու ոնց ես էկել։

— Ձեր սէրն ա բերել ինձ։

— Սէրըմ սովրաթըմ կենաս, այ տղա։ Դէ, ասեց, յարի մարի հօրդան գոշակի տակը. ժամանակ ա, հուրիները կը գան, կը տեսնեն քեզ, ֆնաս կը տան, ափսոս ես։

Տղէն մտաւ հօրդան գոշակի մէջ, տաղ արուց։

Միքիչ յանցաւ՝ Հուրի թաքաւորի ախչիկերքն էկան։

— Հը՛, էս ինչ իսանի ֆոտ ա գալի ըստեղ։

— Ա՛յ քու տունը շինվի, ասեց կիրակուր էփողը. մենք իսան ենք, մեզնից ա գալի։

— Չէ՛, զարիը մարդի ֆոտ ա գալի։

— Դլխներդ վկա՝ չէ։

— Է՜հ, ճաշը հազիր ա։

Սուփրէն բերին քաշեցին, իրեք քիրն էկան, նստեցին։ Նստելու վախտը Հուրի թաքաւորի նազիրը մի նամակ ձեռին ուզեց նի մնի։ Ասեցին. Համբերա, թող ճաշ անենք, նոր։

Ճաշին մենձ քիրը գինին ածեց, ասեց. Ես մի կենաց պըտի խմեմ.— Ես խմըմ եմ էն տղի կենացը, որ քառասուն հարամին կաչեցան ոչ օխտը տարի իմ ջրի համը տեսնեն, էն տղէն էկաւ տարաւ։ Էն անիծածը ընենց հուի տվուց բիլակս, որ ծոցիս թասը հանեցի, վրա արի, որ հոգիս ազատեցի։ Կեցցէ՛ էն տղէն։

Էն մի քիրը ծիծաղաց. Բալքի իմն եմ ասըմ։

— Բուենն էլ ասա։

Էլ ես ստաքանները լքցրին։

— Ես խըմըմ եմ էն տղի կենացը, որ սուփրէն ու ճիպոտը իրեց ինձնից, ու իմ մեոցրած մեուին՝ յարութուն տվուց։ Կեցցէ՛ էն տղէն։

Պատիկ քիրը ծիծաղաց։

— Ես էլ խըմըմ եմ էն տղի կենացը, որ բիլակս հուի տվուց, քառասուն գեամին հացով տարաւ լիացրուց աշխարքը։ Կեցցէ՛ էն տղէն։

Կիրակուր էփողն ասեց. Զըլի էս տղէն էլած ըլի, որ սիրտ արուց նի մտաւ ըստեղ։ Ասեց. Էտ տղէն որ ըստեղ գար՝ ինչ կըտայիք։

— Ինչ որ ուզէր կըտայինք, ասեցին իրեքն էլ։

Մնել բիրդան տղէն հօրդան գոշակի միջից դուս էկաւ, կանչեց, ասեց. Բարև ձեզ, հուրի մալաքներ։

Ախչկերքանց պռունկները պատռեց։ Ասեցին. Յարբ, յարի հաց ուտենք։

նստեցին, հաց կերան։

— Էս վախտը հազիրը նի մտաւ, օխտը անքամ գլուխ տվուց, նամակը տվուց մինձ ախչկան, ձեռը կապից կանգնեց։

Նամակը բաց արուց, կարթաց, սկսեց յաշկերիցը հեզեզի պէս յարտասուանք թափիլ։ Միչնակը ձեռիցն առաւ կարդաց՝ նա էլ լռանց. պուճուրն առաւ, պուճուրը դնա շատ։

— Էս նամակի մէջ ինչ ա գրած, որ ըդար լաց էք ըլում, ասից ազէն։

Ասից. Պատմենք։

Ասից. Պատմա։

Գնաց առլապը բաց արուց, մի պատկիր հանից, ցերուց գրուց տղի յառաջ՝ ասից. Մի ախպէր ունիմ, էսա օխտը տարի ա Ազրայէլի ձեռին բռնված ա, կարըմ չինք իլլաճ անիլ, թէ իլլաճ անենք՝ դու կանես, ինչ ուզես կըտանք։

— Ասից. Կեթամ կը բերեմ։

— Որ բերես, դու կը բերես, մարդ չի կարալ բերիլ։

— Բա իմ քառասուն ախպէրը, որ բռնված են, գրանց իլլաճը։

— Դրա իլլաճը հեշտ ա, քեզ օրուճաշում կը հասցընենք տեղ։

— Տեղ հասնելը հեշտ ա, ինձ ըսենց տասնըմին թաս ա պէտքը։

— Ը՛հ, ինաշէն, քանը կտանք, էս էլ բան ա։

— Դէ էթանք թաքաւորի կուշտը։

Գնացին թաքաւորի կուշտը։ Տղէն օխտը հետ գլուխ տվուց, ձեռը կապից կանգնեց։

— Թաքաւորն ասից. Էս խան օղլուն իմ ես բերիլ։

— Բերել եմ, որ էթա ախպօրս ազատի։

— Է՛հ, էս պրտի ազատի։ Կարես ազատի։

— Ասասնով։

— Դէ լաւ, գնա ազատա, Ազրաիլը տեսնել ես։

— Զէ։

— Լաւ կը բերես։ Ինչ ես ուզում որ բերես։

— Մենեմ թաւլիզ մէջը, իմ սըրտի ուզած ձին դուս քաշեմ, քու վրի թուրը քցեմ իմ շլենքը, մի հատ էլ դալխան, նեռը հետը քցեմ յուսա, մի հատ էլ գուրզ առնեմ ձեռս՝ կեթամ կը բերեմ։

—Ըտանք հազիր ա, դու բան ուզա։

— Մարդ էլ ուզում եմ, որ տանի Ազրաիլի սարը ինձ շանց տա։

— Գնա, Աստված քեզ հետ, տեսնենք ինչ կըլի։

Տղէն նի մտաւ գոմը, մի շատ լաւ ձի դուս քաշից, հէչ

արեգակի յերես չէր տեսել, աստղերի հետ հաղում էր, Թուրը քցեց շալինքը, նետն ու դալխանը քցեց յուսը, դուրդն առաւ ձեռը, էկաւ Թաքաւորի դռան յառաջին կանգնեց։ Ձին մզկրտալով խրխնջաց։ Թաքաւորը դուս էկաւ, որ տղին տեսաւ, ոչ յէ, ջանը դող ընկաւ, ասեց. Շան որդին կը բերի տղին։

— Դէ, ասեց, նաղրին ասա՝ գա ձին նիրելի, էթաք։

Նաղիրը նի էլաւ՝ յառաջ ընկաւ՝ գնացին։ Գնացին, Ջանջավաղ սարի տակին կանգնեցին։

— Ընչանք ըստի իրաւունք ունէի գալու, ասեց նաղիրը։

— Դէ մնաս բարով, ասեց տղէն ու քշեց։

Քշեց՝ գնաց նի էլաւ էտ սարը, տեսաւ մի բանձր տներ կա ըտեղ. մի բարակ ճվոց ա գալի։

— Տնելի տէր, գոռաց, դուս յարի, ղանլի եմ ուզում։

Էրկու հատ արաբ դուս էկան, ասեցին. Ի՞նչ մարդ ես։

— Ղանլի եմ ուզում։

Էկան՝ մէյդանի գլուխը կտրեցին, ասեցին. Էս ի՞նչ զատ ա, որ մեր տղին քնահարամ անենք, վի կայընենք։

Տղէն տեսաւ որ ճամփէն կտրել են, Թուրը քաշեց, դրանց էրկուսի շալինքն էլ կտրեց, վեր էկաւ ձիուցը՝ գլխները վի կալաւ, շըպըռտեց բալկոնը։

Թխկոցին Ազրաիլը վի կացաւ. էկաւ բալկոնը, տեսաւ՝ մի դալի ղանլի դոռում ա՝ ի՞նչ ջուռա ա կանչում։

— Կաց, ասեց, գալիս եմ, մենձ Թիքէդ յանկաջդ կը Թողամ։

Վեր էկաւ, ձին հաղրեց ու նի եկաւ, էկաւ մէյդանի գլուխը կտրեց։

— Բարով, հազար բարի էկար, աչ տղա, գրդի սրէն-նոքաթն ում ա։

— Թունն ա, քցա, ես զոնաղ եմ. օխտը դուրդ ունես, օխտը նետ ունես, օխտն էլ Թուր՝ քցա, Աստված եա քն կըտա, եա ինձ։

Ազրաիլը քցեց դուրդը, սար ու ձոր դողաց, վրա պրծաւ տղէն, դուրդը կալաւ, ասեց.

Հանաքի վախտ չի, առ դուրդդ կարգին քցա։

Օխտը դուրդ քցեց, տղին հէչ բան չարուց. օխտը նետ քցեց, բան չը բաշարեց. օխտը հատ էլ Թուր քցեց, քարերին դիպաւ, մէշտեղից կտրեց։

— Սրէն քունն ա, ասեց, կանգնեց։

Տղէն ձին քշեց։ Ձին շատ քրտնեց, յաշկերիցը քրտինքը կըթաց (կաթեց)։ Գնաց մէյդանի գլուխը, Թամքի միջին կանգնեց ու դուրդը քցեց, Ազրաիլի գլուխը ջնջեց, ջանդակը վեր ըն-

կաւ։ Էկաւ գլուխը կարեց, տեհաւ յինքն յիրան գլուխը թող էլաւ գնաց։

— Տօ, ասեց, էս գլուխն յուր ա էթում, թուրը քաշեց մի ավուց, մեշտեղիցը երկու էլաւ։

— Տղա, Մեկ, ասեց գլուխը։

— Ջէ, ասեց, իմ մօրից ես մի հետ եմ էլել։

Ջին կապեց գնեցը, ու նի մտաւ նեքսեն։ Գնաց տեհաւ Հուրի թաքաւորի տղէն օթախըմը ժնջըլով զայիմ կապած ա։

Ժնջիլը ես արաւ, ասեց. Դէ արի էթանք, հասցընեմ քու հօրը։

Վէր էկաւ թաքաւորի տղէն, նի էլաւ ձին, քշեցին։ Էկան հասան քաղաքին մօտիկ, էս թաքաւորի տղէն ասեց. Ա՛յ տղա, որ ինձ տանես հօրս կուշտը, կասես պուճուր տիչիկդ եմ ուզում, Մեկ մատիդ մատանիքը։

Էկան տուն։ Հէրը, մէրը, քվորատանքը փաթըթվեցին տղին, լաց էլան։

— Թաքաւորն ասեց. Ուզա՞ տամ, որդի։

— Ասեց. Քու ջանի սազութունը։

— Ասեց. Ուզա՞, ուզա։

— Ասեց. Ուզում եմ քու պուճուր տիչիկը, քու մատի մատանիքը, տատանումին հատ էլ թաս։

— Տվի, տար, իրեր տեսնես։

Օխտն օր, օխտար քշեր հարսանիք արին, էս տղին ու տիչիկան փրատեցին, տարան դրին մի օթախ։ Տղէն հանեց թուրը, դրուց մէջտեղ։

Տիչիկն ասեց. Ինձ հաւան չես, թէ իմ հօրը, որ թուրդ դրիր մեր մէջ տեղը։

Ասեց. Ախար իմ քառասուն տիպէրն ա բանված։

Յառաւօտը վե կացան, տատանումին թասը տուան, գնացին յիրանց երկիրը։ Տարաւ էս տիչիկը իրենց տանը վե դրուց, հէրը մնաց զարմացած, յինքը գնաց թաքաւորի կուշտը, հանեց տատանիկու թասն էլ դրուց թաքաւորի յառաջը։

Կանչեցին ջհուտին. Յարի տեսնենք քու թասը ոնն ա, ճանանչի։

Ջրհուտը որը վե կալաւ, տեհաւ մինը մեյեր լաւ, յիմացաւ ոչ ոնն էր յիրանը։

Թաքաւորը տեհաւ որ ծանութունը ջնրաբմն ա, բերիլ ավուց քառասուն տիպօրը, մեր զատարին (զահիճ) կանչեց կուշտը, քամա ջնրտնելին քամեց, քամեցին էլ զիմա-զիմա արուց։

Նստրի մինը թաքաւորին ասեց. Էս տղի հետ մի տիչիկ էլ էկաւ, հրլա կանչա տես։

Յինքն էլ ձեր թաքաւոր էր, ժառանգ էլ չունէր, կանչեց էտ ախչկան, տեհաւ՝ մարթալ մնայ, ձեռ ու ոտը գինիից կորվեց։

— Ասեց. Ախչի ջան, ում ախչիկն ես։

— Ասեց. Հուբի թաքաւորի։

— Էս տղին տանել ես։

— Առել եմ։

— Կուս անարատ ես։

Կանչեց ժողովրթին, ասեց. Ես իմ յօժար կամքով իմ թաքաւորութունը տալիս եմ էս տղին, յօժար էք. (բիրտի գոռացին՝ Յօժար ենք) յիրա մատի մատանիքը հանեց, դրուց տղի մատը։

— Որ էս թաքաւորութունը ինձ տուիր, ես էլ էս թաքաւորի մատանիքն եմ բաշխում քեզ, ասեց տղէն, ու Հուբի թաքաւորի մատանիքը տվուց թաքաւորին։

Տղէն դառաւ թաքաւոր, էտ քառասուն հարամուն էլ շինեց նազիր, վազիր։

Նրանք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։ Երկնքից իրիք ինձոր վեր ընկաւ, մինն ասողին, էրկուսը լսողին։

ՉԻՑՐԱՆ ՕՂԼԻ.

(Աշտարակ*)

Ժամանակով մի աղքատ մարդ կար. տեհաւ որ էտ քաղաքը իրեն ձեռնտու չի, կարըմ չի ապրի, էթանք, ասեց, այ կնիկ, յուրիշ քաղաք, բալքի ընդի լաւ ապրինք։

Կընիկն էլ երկու հոգիս էր. վե կացան, գնացին։ Գնացին դէմ էլան Թուրթամը Թաքաւորի քաղաքին. տեհան որ քաղաքի չորս դիհը հասարը քաշած ա, երկու դարգեահ ունի, մինը նի մտնելու, մինը դուս գալու։ Հասան էտ հասարի տակը, կնկա ցաւը բռնեց։ Դարգեահչիքը դռները շինեցին։ Էտ կնիկը ծունկ չոքեց գեննին, բերուց մի տղա։

Էտ քշերը էտ քաղաքի Թաքաւորը յէրաղ տեհաւ, որ հասարի քամակին մի կնիկ ա ազատվել, մի տղա ա բերել, էտ տղէն պըտի մենձանա, յիրա գլուխը կտրի։ Կանչեց դարգեահչոնցը, ասեց. կեթաք, հասարի չորս դիհը ման կըգաք, կը տեսնէք, թէ որ կնիկ ազատված կըլի, վե կունէք, կը բերէք։

Դարգեահչին գնաց, դարգեահը բաց արուց. միքիչ գնաց, տեհաւ մի աղքատ կնիկ ազատվել՝ թեք ա ընկել. տղէն հին շորի մէջ փաթըթած նվըմ ա։ Մի հալիվոր, չիրուխը ձեռին՝ կանգնած ա։

— Դէ յարի էթանք, բիձա, Թաքաւորը կանչում ա քեզ։

— Ա՜յ մարդ, ես Թաքաւորի հետ ինչ գործ ունեմ, ես քեսիր մարդ, ինձ յուր ես տանըմ, Թազա ծննդկան կնիկ։

— Շատ մի խօսալ, վեկաց։ Ձարնները կտրված վեկացան գնացին Թաքաւորի կուշտը, օխտը հետ գլուխ տվին, վրա ուրթին ձեռ բռնեցին, կանգնեցին։

— Հալիվոր, էս կնիկը քու կնիկն ա։

— Հրաման քեզ, Թաքաւոր, ծառայինդ ա։

— Էտ էրէխէն ինչ ա։

---

*) Պատմեց 1912 թ. օգոստ. 26-ին Աշտարակ գիւղում նոյն Գեորգ Մկրտչեան Գեորգեանը, 60 ամեայ անգրագէտ ծերունին։

— Տղա ա, թաքաւոր։

— Ի՞նչ տամ՝ էտ էրեխէն տաս ինձ։

— Ես էրեխա կը ծախեմ։

— Ծախա, մինն էլ կը բերի, էլի։

Նազիրն ասեց. Ա՛յ մարդ, իրեք հարիր ոսկի ուզա, տար մարդու պէս տպրի, ինչես սոված զկռաբմ։

— Դու գիտես, ասեց, թաքաւոր։

— Ի՞նչ տամ։

— Ինչ կըտաս՝ տուր։

— Նազիր, տար էրեխուն քաշա, յիրա քաշովը վոսկի տու, էթա։

Տարան էրեխուն քաշեցին, քաշովը մին վոսկի տվին, աղքատը թողուց տղէն, գնաց։

Թաքաւորը կանչեց Նազրին. ասեց. Էս տղէն վե՛ կունես, կը տանես սարը, կը մորթես, շորերը արնոտ կանես, կը բերես կըտաս ինձ։

Նազիրը տղէն առաւ՝ գնաց, ճամփին մտածեց. Ա՛յ Ջանըմ, էս պըտի դառնա մարդ, գա մեր թաքաւորի գլուխը կտրի, էս էլ բան ա, որ մեր թաքաւորը մտածըմ ա, ես պըտի ճամփին մի ղուշ վե՛ քըցեմ, էտ շորերը արնոտ անեմ, տանեմ տամ թաքաւորին։

Նազիրը տարաւ տղին, դրուց մի քոլի տակ, մի ղուշ վե՛ քցեց, շորերը արնոտ արուց, տարաւ տվուց թաքաւորին։

Էրեխէն ըտեղ ծվաց, ծվաց, էտ ծվոցին մի Ջէյրան սուրուցը Ջկնըվեց, էկաւ էտ տղին կաթ տվուց։ Արանքն յանց կացաւ իրեք տարի, տղէն ընկաւ սուրուի քամակը, ծտի տվուց ու մոր հննուցը վազեց։ Էրեխէն դառաւ ինը տարեկան, ռաստ եկաւ (պատահեց) մի օր էտ թաքաւորի տղին։

Տղէն ճուց մաթալ, ասեց. Եարար Ջէյրանն էլ խան կը բերի։

Յիրիկունն էկաւ տուն, հօրն ասեց. Թաքաւոր, էտ եաշումդ Ջէյրանից տղա տեհած կես։

— Ա՛յ որդի, սուտ կըլի, յաշկիդ էրեսացել կըլի։

— Ջէ, կուզես յէքուց էթանք, տես։

Յէքսի օրը հէր ու տղա նի էլան ձիանը ու գնացին սարը։ Տղէն ձին քշեց, ընկաւ մարալի սորուի մէջը, հինգն էկան դըբա թաքաւորը, հինգը գնացին դըբա սարը։ Տղէն դըբա թաքաւորի դիէն էր, թաքաւորը տեհաւ՝ մաթալ ճուց։ Տղա, քի տղա, Ջէյրանի կաթը կիրել էր, դոմէշ կտրել։

Թաքաւորն ասեց. Լաւ ա որ բերեմ իրեք զաթ ժնջիլ քըշեմ, քամանդով կալնեմ էտ տղէն։

Անագին ծախս արուց, ժնջլները սարքեց, ընկաւ ետեր, ոդէն հասաւ ժնջլին, ալրիալը կտրեց, յանցաւ, թռաւ հասաւ յիրան մօրը։

Թաքաւորը մնաց մոլորված. նաղիրն ասեց. Թաքաւոր, ինձ մի հէր ունեմ, հարիր յիթսուն տարեկան ա, կանչենք հրլա տեսնենք՝ ինչ ա ասում։

Կանչեցին հալիվորին, ասեցին. Հալիվոր, ըսենց մի ջէյրանի ոդա կա, ինչ անրմենք, կարում չենք կալնիլ, դրա հնարը ինչ կըլի։

Ասեց. Թաքաւոր, միքանի տարի ես քու հօրը նաղիր ի, ըսենց մի բան պատահեց, Ըսպահանու անդին լար բերիլ տվինք, նրանով բռնեցինք։

Թաքաւորը մարդ դրկեց Ըսպահան, անդին լար բերին, էտ սարի չորս դնից սարքեցին, անագին ձիաւորով գնացին ջէյրանները քշեցին, ջէյրանի ոդէն էկաւ, դէմ էլաւ էտ անդին լարին, թափ տվուց, տվուց՝ կարաց ոչ կտրի, գոռաց, սար ու ձոր թընդաց, էկան ոդին բռնեցին։ Բերին անդին լարով կռնները կապեցին, վեկալան տարան։ Մէրը ենտուց շատ լաց էլաւ։ Բերին յիրին թաց ոդէր դրին կուշար, որ կամաց կամաց խօսիլ սարվի։ Տատն օր չքաշեց, սարվեց։

Թաքաւորը շատ հաւանեց. ասեց որ սա յուսում առնի, շատ ղօռ կըլի. տվուց յուսումարան։ Միքանի օրից հետ թաքաւորի ոդէն ասեց, թէ ես իմ հօր կարողութունը պըտի յիմանամ։ Գնաց քառասուն օթախի հեսուն ինը բաց արուց, տեսաւ յամէն բան կար, մի օթախի դուռը գռնապանը չթողուց որ բաց անի։ Առ հա մի սիլլա գռնապանի բերին։ Շուն, շան որդի, թողում չես իմ հօր կարողութունը ես տենեմ, քացով տվուց՝ դուռը բաց արուց։ Տեսաւ մի հատ պատկեր կա, էնքան սիրուն, որ տղի խելքը գնաց, վեր ընկաւ։ Խարարը գնաց հօրն ու մօրը։ Վազեցին էկան, ջուր բերին, ածեցին գլխին, օյանմիշ էլաւ։ (Օյանմիշ էլաւ—ուշքն էկաւ գլուխը)։

Ասեցին. Ա՞յ ոդա խէ՞ բանենց էլար։

Ասեց. Մեռնեմ սրա կշտին, ապրեմ սրա կշտին. ինչ ուզում ա ըլի, ես պըտի էթամ, դրան բերեմ։

Ջէյրան-օղլին էկաւ, տեսաւ տղի գլխին թոփ են էլել, ասեց. Էտ ինչ բաս ա։

Ասեցին. Տղէն Թաքաւոն յուսատէր ախչկա պատկերը տեսել ա, ասում ա, էթալ պտեմ բերեմ։

— Էտ քու բանը չի, ես կէթամ կը բերեմ, ասեց Ջէյրան-օղլին։

Թաքաւորի տղէն տեղից վեր կացաւ, սիլլով տվուց Ջէյրան-օղլուն, թէ էա ինչ ես ասում։ Ջէյրան-օղլին վեր կացաւ ձեռը քցեց տղին, բանցրացրուց, ասեց. Ո՞նց ես, տամ քարովը, քարի հետ հաւասարվես։

Թաքաւորը ասեց. Ի՞նչ ես անում, ա՛յ տղա, քու ախպէրն ա, ախար։

Յառաւօտը վեր կացան, յիրար հետ ձիանը նստի էլան, գնացին։

Թաքաւորի տղէն ասեց. Ես զուր խի՞ տվի սիլլով Ջէյրան-օղլուն տղա ա, կը տանեմ հետս, ձիս կը ջրի, ինձ համար հաց կը շինի, կուտեմ։

Գնացին, գնացին, շատն ու քիչը Ասուած գիտի, ճամփին Ջէյրան-օղլին ասեց. Կեթանք մի դէվի կը պատահենք, որ տեսնաս, վախենաս ոչ։

Տղէն ասեց։ Խի՞ պըտի վախենամ, մարդը դէվից կը վախենա։

Գնացին, սարը նստի էլան, տեսան մի ջանավոր փռնչալով գալիս ա, հէնց որ տեսաւ Թաքաւորի տղէն, վախից պռօշը ճղվեց, արինը շռռալով թափվեց։

— Հը՛, ա՛յ տղա, ի՞նչ բանի ես, ասեց Ջէյրան-օղլին։

— Էս ինչ դժար էր։

— Բա որ ասում, կը վախենա։ Յարի՛, բան չկա։

— Ի՞նչ մարդ էք, իսան օղլիք, ասեց դէվը։

— Էկել ենք քեզ զօնաղ, ասեց Ջէյրան-օղլին։

— Համեցէք, ես սարերն եմ մեն գալիս իսանի, դուք ձեր ուսովը էք գալի. վաղուց ա իսանի միս չեմ կերել, կարօտել եմ։

— Կե՛ր, նոր պարծեցի, ախպէր։

Գնացին, մտան յէրը, տեսան մի չոլախ դէվ հրէսիկ կիրակուր ա խառնում մի ահագին շերեփ ձեռին, հա խառնում ա, հա յաշկի պոչով թամաշ անում Ջէյրան-օղլուն։

Ասեց. Մի տատ էա չերեփը, տենում կիրակուրը աղի ա թէ ալանի։

Դէվը ըլլակին տաք շերեփովը տվուց թէ քու բանը չի։ Ջէյրան-օղլին վրա պրծաւ, ըլլակը հուլի տվուց, շերեփը ձեռիցն տուաւ։

— Ո՛ւֆ, ախպէրտինք, էս իմ կուսը ջնջեցց, ասեց դէվը։

Ջէյրան-օղլին շերեփը լցրուց ու կերաւ, կերաւ, կերաւ, դէվին ասեց. Տաղ կերար, ախպէր, մի քիչ էլ թող մեզ համար։

Էն մենձ դէվը ասեց Ջէյրան-օղլուն. Ըստի մի քար կա, զօնաղ ախպէր, վեր կենաս էթանք ճամփից դնենք ղրաղ։

Գնացին քարի կուշտը, Ջէյրան-օղլին ասեց. Դէվ ախպէր,

մի վեկալ տենենք ինչ թաւուր ա։

Դէվն ասեց. Մենք օխտն ախպերով կարում չենք վեր ունել. թող անելով ենք բերել սարիցը։

— Հլա՛ վեկալ, տեսնենք։

Կռացաւ դէվը, որ քարը վեր ունի, խառնվեց, ոտները դող ընկաւ։

Ասեց. Դրա՛ղ կաց, էտ ինչ ա որ դրա համար դողում ես. վե՛ կալաւ քարը, դրուց ընտեղ։

Դէվը տեսաւ, մազերը բիդ բիդ էլան, էկաւ ասեց. Ախպերտի՛նք, եսիմն ա, ես սա Զէյրան-օղլին ա, ես մի ջանավար ա. հարցնենք հլա տեսնենք։

— Դոնաղ-ախպէր, ասեց, հարցնելը ամօթ չըլնի, դու հօ Զէյրան-օղլին չես։

— Զէյրան-օղլին եմ, ախպէր, դուք ինչ դիտէք Զէյրան-օղլուն։

— Բու էլած օրը սար ու ձոր գոռաց. Զէյրան-օղլին էլաւ, իմ իրեք հարիր վաթսընվեց տամարս իրար վրա թռան։ Որ դու Զէյրան-օղլին ես, խօսք չունիմ ասելու, քվորս համար էք էկել, առէք տարէք։

Յառաւօտենց լիսը բացվեց, բարին բացվի ձեր վրին, թաքաւորի տղին ու հարսին թողին յէրումը, յիրենք վե՛ կացան, գնացին աւի։

Վեց դէվը գնաց մի դհով, Զէյրան-օղլին գնաց մի դհով։

Թաքաւորի տղէն ու Բառասուն յուսատէր ախչիկը մնացին կիրակուր էփելու։ Թաքաւորի տղէն ջուրը լցրուց պղինձը, կրակ արուց, կոտարեցին միսը, լցրին պղինձը։ Կիրակուրը էփելուց հետո, Բառասուն յուսատէրը ասեց. Թաքաւորի տղա, ծունկդ դի, միքիչ քնեմ։ Տղէն ծունկը դրուց, ախչիկը գլուխը դրուց վրէն՝ քնեց։ Տղէն սկսեց մազերի հետ հաղ անելը. տեսաւ իրեք հատ բալլիք. իրեն բինիշը դրուց ախչկա գլխատակը, ինքը վե՛ կացաւ դռները բաց անի։ Երկու դուռը բաց արուց, միջին դատ չկար. էն մինն էլ բաց արուց՝ տեսաւ որ սիպտակ դէվը ժնջըլով կապած ա սնիցը. մի պղինձ փլաւ՝ մի ոչխար վրէն, մի պղինձ էլ ջուր՝ յատաջը դրած։ Հասնըմ չի որ ուտի, տենըմ ա, կիսաջան ա ընըմ։

— Վա՛յ դու բարով ես էկել, ա՛յ տղա, ասեց սիպտակ դէվը։ Զարդ տանեմ, երկու քաւկիր էտ փլաւից տաս ուտեմ, էտ անիրաւները քառասուն օր ա ընենել են, մի կտոր հաց չեն տվել, որ ուտեմ։

Տղէն քաւկիրը վե՛ կալաւ, մի տասը քաւկիր փլաւ տվուց սիպտակ դէվին։

— Մին էլ, տղա, մին էլ, տղա, սաղ պղինձը կերաւ։

— Դէ մի քիչ էլ ջուր տու խմեմ։

Ասեց. Ախր ես կարալ չեմ վեր ունիլ։

Ասեց. Էտ ժնջիլը տու դնեմ բերանս։

Տղէն ժնջիլը տվուց, դէվը դրուց բերանը ու քաշեց, քաշեց պղինձը մօտացրուց, դրուց բերնին քամեց։

Մնէլ ըսենց անելուն պէս՝ ժնջիլները կարվեց, մէկը դիպաւ Թաքաւորի տղի ճակատին։ Տղի յուշքը գնաց, վեր ընկաւ։ Սիպտակ դէվը վեր կացաւ, տղին կոխեց դարմանի մէջը, էկաւ Բառասուն յուսաւոր ախչկան վեր կալաւ ու գնաց։ Գնաց մտաւ յիրա տունը։

Յիրիկունը դէվերն էկան, օխտը աւ ին բերէլ։ քիչ հետ Ջէյրան-օղլին էկաւ՝ տասնըչորս աւ էր յուսին քցել բերել։ Էկան մտան նեքսի, դրանք ասեցին մեր քիրն ուր ա, Ջէյրան-օղլին ասեց. իմ ախպէրն յուր ա։ Ջէյրան-օղլին շերեփը վեր կալաւ՝ ըստու ընտու գլխին տվուց, ասեց. Իմ ախպերը բերէք։ Գնացին տեհան, ախպէրը դարմանի տակին նվըմ ա։ Բացով տվին, վեր կացաւ։

— Ա՜յ տղա, էս ի՞նչ պատահեց քեզ, ասեց Ջէյրան-օղլին։

— Ախպէր ջան, մի սիպտակ դէվ կար կապած, գնացի փլաւ տվի կերաւ, ջուր տվի՝ խմեց, ժնջիլները կարեց, էլ չիմացա թէ ինչ էլաւ։

— Ա՜յ, հայ, ասեցին, մեր բռնաւորին քու ախպէրը փախցըրել ա, մենք մեղաւոր չենք. էկել էր որ մեր քիրը տանէր, բռնել ինք օխտն ախպէրով կապել, ժնջիլը կարել ա, մեր քիրը վեր կալել, գնացել։

— Ամանաթ՝ ամանաթ, իմ ախպէրը ձեզ ամանաթ, ես էթամ ձեր քվորը բերեմ։ Որ էկել եմ տեհել իմ ախպէրը ձեզանից նեղացած ա էլել, ձեր շըլինքը կը թոցնեմ։

Ջէյրան-օղլին քաշեց ձին, նի էլաւ, գնաց։

Դէվերն ասեցին. Էտ էլ էկողը չի, հաւաշ դրա ախպօր հոգին հանենք։ Բերին ախպօրը ժնջիներով կապեցին տանը՝ ճրագ-թաթ շինեցին, ճրագը դրին գլխին։

Ջէյրան-օղլին գնաց, հասաւ Սիպտակ դէվի տունը, նի մըտաւ, տեհաւ Բառասուն յուսաւոր ախչիկը նստած։ Վեր կացաւ տեղիցը կանգնեց։

— Ախչի՜, ասեց, խի՞ էկար։

— Ես մեղաւոր չեմ, քու ախպէրն ա մեղաւոր։

Միքիչ հետ Սիպտակ դէվը էկաւ, գլուխը կախ քցեց, տեհաւ որ Ջէյրան-օղլին ախչկա կշտին նստած ա, ասեց. Էս իմ

բանը լուրթ էլաւ։

— Յարի նեքսև, յարի նեքսև, ասեց Զէյրան-օղլին։

Ոնները գալիս չի, ոնց գա։ Զէյրան-օղլին դուս էկաւ, Սիպտակ դէվը փախաւ, ալրիալը հասաւ ու գլուխը կտրեց, եւ դառաւ, էկաւ հարսի կուշտը. հարսին առաւ ձիու թարքը ու գնաց։ Գնաց հասաւ տուն, ախչկանը վի դրուց, նի մտաւ նեքսև, տեսաւ որ ախպէր չկա, ախպէրը գառել ա սիպտակ գաճ։

— Ակապէր ջան, ինձ շինել են ճրագ-թաթ, ինձ ըսափան ապատա։

Զէյրան-օղլին որ տեսաւ ախպօրը շինել են ճրագ-թաթ, քաշեց թուրը, հինգ դէվի գլուխը կտրեց, երկուսը էկան, ընկան ոնները, ի սէր Աստու, մեր օճախը խանդաբիլ մի։

— Դէ ձեր քիսը ոսը ձեսը սարքեցէք, որ մենք յառաւօտենց շատ թէղ էթանք։

Լիսը բաց էլաւ, հարսին քաշեց թարքը, յառաջ քշեց դէրա տուն։

Էկան ճամփի կէսը, չօպանին (հովուին) փող ավին, որ էթա թաքաւորին յաշկալիս, թէ ողէքդ էկան հարսիդ հետ։

Նոր թաքաւորը օյանմիշ էլաւ, որ սա յիրա յէրաղ տեհած ադէն ա, որ յիրա գլուխը պըտի կտրի։ Կանչեց վէզրին, ասեց. Վէզիր, եւ քեզ տղին տվի, որ տանես ըսպանես, թէ պահես։

— Թաքաւոր, խիղճս չավուց որ ըսպանէի, թողի քոլի տակին, ասի եան գէլը կուտի, եա կը նվա, կը նվա՝ կը մեռնի։

Ասեց. Դասաբ, շըլինքը կարա, որ իմ խօսքը գեսինն ա քցել։

Դասաբը կարեց, տարան ղէն քցեցին։

Նոր հնարեց մի հատ գեղով ձի, որ տանեն վեշքաշ անեն Զէյրան-օղլուն, որ նի ըլնի՝ էրվի։

Զէյրան-օղլին ասեց ախպօրը. Էս յաղբրի կշտին մի քիչ գինջանանք, քաղաքից խաբար գա՝ էթանք։

Զէյրան-օղլին գնաց ուռաս տակին թեք ընկաւ. մէկ էլ տեսաւ իրեք հատ ադունիկ էկան ծառի վրա վեր էկան։

Մինն ասեց. Ավսոս Զէյրան օղլու ամակը։

Էն մինն ասեց. Խի։

Ասեց. Էսա թաքաւորը մի գեղած ձի ա ղրկելու՝ նի ըլնի, կեբվի։

— Նի չիլիլ։

— Հէնց էտ ա հա, Շանմար օձի իւվէն (ընակավայրը) դրա տանն ա, Զէյրան-օղլուն կը խափի, կասի որ ախա եմ արել, որ էտ հարսը բերիր, ըստեղ մի օր պըտի կենաս, յամենալաւ էլ

տեղն ա։ Շահմար օձը կըդա կծելու, Ջէյրան օղլին թուրը կը քցի, շահմար օձից մի կաթիլ արին կը թափի տղի վրէն, քար կը դառնա։ Ասեցին ու թռան։

Նոր Ջէյրան-օղլին օյանմիշ էլաւ, ա՛յ հա՛յ, ով պըտի ինձ միա ըների, որ էտ տեղից հանի։

Տեհաւ որ մի ձի հաղալով ըներում են. ըներին, ասեցին. Թաքաւորը էս ձին քեզ փէշքաշ ա ղրկել, նիլ, էթանք թաքաւորի յէրէսը։

— Հըլա նիլ՝ տեհենք էտ ձին ինչ երիշ ունի։

— Ինձ հրամայած չի, որ նիլլնեմ։

— Նիլ, թէչէ կըգամ, ղլուխդ կը կարեմ։

Մէհտարը նի էլաւ, մէկէլ տեհան վառվեց, դառաւ անձող։

Խարարը գնաց թաքաւորին, թէ նի չելաւ տղէն։

Ասեց. Ըստի գնա լաւ ղազար կա, թող գա։

Էկան հասան թաքաւորին։

Թաքաւորը շատ յուրախացաւ յիրա տղի ու հարսի վրա, համա Ջէյրան-օղլու սրտովը արին էր էթըմ։

Թաքուհին էկաւ սըփթա, Ջէյրան-օղլու թշերը պաչեց, եռտ տղի ու հարսի։

Թաքաւորը յառաջ էկաւ ասեց. Գիտէս ինչ կա, բալա ջան, ես սխտ ի արել, որ էտ տեղից սալամաթ դաք, մի օր էս օթախումը կենաս, յամենալաւ տեղն ա, գնա։

Ջէյրան-օղլին նի մտաւ օթախը, տեհաւ ըիրդան դուռը շինեցին։ Հէյ վա՛խ, ասեց, գնաց իմ ջանը։ Ընդար փորձանքի մէջ ընկաւ չվախեցաւ, էկաւ ըսեղ մնելու վախտը վախեցաւ։ Թուրը հանեց, էկաւ քարի յառաջը, նստեց։ Տեհաւ մի կարմիր շահմար օձ գլուխը քարից հանըմ ա՝ քաշըմ նեքսեն։ Մնէլ անկարծ վրա էկաւ Ջէյրան-օղլուն, տղէն թուրը քցեց, քցելուն պէս՝ օձը ընտի սատկեց, տղէն ընտի քար դառաւ։

Տղէն գնաց հօր կուշտը, յամէն բան յիմացաւ, էկաւ կնկանը ասեց թէ հէրս էրաղ էր տեհել թէ էտ Ջէյրան-օղլին յիրա գլուխը կտրելու ա, էտ օթախն արուց՝ շահմար օձի արինը կաթեց վրէն՝ քար դառաւ։

Թառաւն յուսաւորը ասեց. Ի՞նչ կըլի, էթաս բալնիքը ըներս, էթանք թամաշ անենք։

Տղէն գնաց ըներուց, կնիկն առաւ, պահեց յիրա մօտ, բաղի ըիր էթըմ էր կշտին նստըմ լաց ըլըմ, կէսառի, մարդի ասածը ասում, ետ դառնում։

Օրերի մի օրը գնաց էլի լաց ըլնելու, ընդար լաց էլաւ՝ վրէն ննջաց։ Թշերն յէրաղ էկաւ, որ քու էրկու տղէն մորթես,

արնովը լուանաս քարը՝ համ քու տղէքը կը լաւանան, համ քու էտ մարթը։

Էկաւ տղէքը մորթեց, արինը քսեց քարը, տեհաւ տղէն յաշկիրը բաց արուց։ Փաթըթվեցին յիրար։

— Ֆիր ջան, ասեց Զէյրան-օղլին. դու որ ինձ էս լաւութունը արիր՝ հալալ ըլնի իմ ամակը քեզ։

Ետո թուրը քաշեց՝ դուս էկաւ, գնաց թաքաւորի կուշտը։ Թաքաւորի յաշկը որ նի առաւ Զէյրան- օղլուն՝ իրեք հարիր վաթսընվեց տամարը եռաց, հոդին սկսեց քանդվիլը։

Զէյրան-օղլին ասեց.

— Գանդատաւորը ետ քաշվի, որ ըսօր գանդատը իմն ա։

Գանդատաւորը ետ քաշվեց, Զէյրան-օղլին գնաց կանգնեց թաքաւորի յառաջը, ասեց. Թաքաւոր, մի մարթ մի հատ բախչա ունենա, սաղ նորահաս ծառ ըլի, մինն էթա քոմմա կոտորի, նրան որ կալնես՝ ինչ կանես։

— Նրա յաշկերը կանգած տեղը կը հանեմ։

— Նաղիր, գրիր, էտ։ Թաքաւոր, մի մարդ մի եգեղեցի շինի, էթաս տենես մի մարդ քլուխին ասել ա՝ քանդմ ա, նրան որ բռնես՝ ինչ կանես։

— Իրկու հատ լաւ լէն տախտակ կը բերեմ, տախտակի վրէն երկար կը մեկնեմ, ոնների բթիցը կը բռնեմ, կոտորելով կըդամ գլուխը։

— Վազիր էս էլ գրիր։ Տախտակ բերէք։

Տախտակը բերին, թաքաւորն յինքը շորերը հանեց, մեկնըվեց, Զէյրան-օղլին ասեց. Իմ դազարը (դատը) իմ ձեռով ես պըտի անեմ։ Թուրը քաշած ձեռին էր, ոնների բթիցը բռնեց՝ կոտորելով էկաւ գլուխը։ Գլուխն էլ կոտորեց։ Ածեցին մի ջվալի մէջ, տարան մի տեղ փորեցին։ Հաքաւ թաքաւորի շորերը, նստեց թաքաւոր։ Խարաբը գնաց Բառասուն յուսաւոր ախչկանը, վազէ վազ էկաւ. օխտն անգամ գլուխ տվուց, ձեռը կապեց կանգնեց։

— Ես խնդրըմ եմ, որ էլ դազար չանես, մնացածը ինձ բախշես։

— Գնա, քեզ բախշեցի։

Յամէն բան կարգի դրուց, զրկեց բերել տվուց յիրեն հօրն ու մորը, գնաց յիրա Զէյրան մորն էլ ձէն տվուց՝ էկաւ դրա ձեռները լիզեց, յերէսը լիզեց. նա էլ նրա յերէսը պաչեց, բերուց յիրա տունը։ Շատ անգամ գլուխը ծնկին կը դնէր, կը քնէր։

Նրանք հասան յիրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։ Երկնքից իրեք խնձոր ընկաւ, մինը ասողին, երկուսը լսողներին։

Ասեց. Բերի։

Ասեց. Տուր.

Յուսը տվուց յիրան։ Տղէն յառաջ ընկաւ, էտ թամաշ արուց, տեսաւ աղվէսը դառել ա մի լաւ ախչիկ. էն ախչիկը, որ յուսը բերել ա, նրա նման ա տալի։

Ախչիկն ասեց. Ես էն աղվէսն եմ, տար տուր ինձ հարամբաշուն, ձին նստի գնա, ես կըգամ, քեզ կը հասնեմ։

Տղէն ախչկանը տարաւ հարամբաշուն։ Հարամբաշին տեսնելուն պէս խելքամաղ էլաւ, ասեց. Գնացէք, ձին թամքէք, տվէք յիրան։

Գնացին, ձին թամքեցին, տվին էտ տղին՝ գնաց։

Էտ ախչիկը հարամբաշու կշտին նստած էր, հարամբաշին ուզեցաւ սաթաշմիշ բլի (գրկախառնի) դրան. Տե՛ս, ասեց ախչիկը, ինչ թաւուր տղամարթ ես, բա քեզ յուրիշ օղլուշաղ չունիս, ըստ մի հետը խօսանք. էլ հօ ես էթողը չեմ։

Հրամայեց, յիրա բառասուն կնանիրն էկան կանգնեցին։ Բառասունն էլ տեսան, որ գա քոմմէքիցը սիրուն ա։

Ասեց. Սրան վի կալէք, տարէք բախչէն ման ածելու։

Գնացին բախչէն, ման էկան։

Ասեց. Թվորտինք, քոմմէքս էլ մի մարթի կնիկ ենք, իրաւունք տվէք, յանց կենամ պատի էն դրէին, ջրվէթ անեմ՝ գամ։

Դրանք ասեցին. Գնա, բիրադնիս մենձը դու ես, իմ ես իրաւունք ուզում։

Դա պատն յանց կացաւ էն դիէը, դառաւ էն աղվէսը, պոչը քցեց ոսդրուն (մէջքին) ու փախաւ։ Որտեղ ես Վասակ քաքուլ տղա, էկաւ։

Էն տեղը հասաւ Վասակ քաքուլ տղին, որ մօտեցել ա դրի թաքաւորի քաղաքին։ Ասեց. Վեր յարի ձիուցը։

Վասակ քաքուլ տղէն ձիուցը վեր էկաւ քաղաքի դրտղին, ձին կապեց մի մարտք։ Աղվէսը դառաւ մի ձի, մի սև ձի, հարամբաշու ձիու նման, ասեց. Տար ինձ տու թաքաւորին, քու դշերն տա ու գնա, ես կըգամ քեզ կը հասնեմ։

Տղէն էտ ձին վի կալաւ, գնաց թաքաւորի կուշտը. թաքաւորը տեսնելուն պէս ասեց. Գնացէք երկու դուշ ավէք էտ տղէն տանի։ Ձին առան քաշեցին դոմը։ Էտ տղէն դշերը վի կալաւ, էկաւ նստեց յիրա ձին, էն ինչ որ մարտքիմը կապել էր, ու գնաց։

Թաքաւորն ասեց. Մի էտ ձին դուս բերէք տեսնեմ, դրա համար ահագին զօշուն եմ փչացրել։

Ձին դուս քաշեցին, մէհտարը ման էր ածում, որ թաքաւորը

քու տան հարամին քու ախչիկն ա, որ թաքաւորը էս ախչկան սըպանի, յաշկը վի չի ունըմ, որ ինձ ախչիկ ունենամ։

Էկաւ թաքաւորը նստեց յիրա տեղը, կանչեց տղին։

— Ա՜յ տղա, քշերս դու դարավուլ քաշեցի՞ր։

— Հրաման քի, թաքաւոր, դողն էլ քթել եմ։

— Ո՞վ ա։

— Իմ էս պուճուր քիրը, էկէս քշերին տեհա մարթագէլ դառաւ, էկաւ ձին կերաւ, նեռով տվի՝ ճկիթը կտրվեց, վի կալա դրի ջէրս, եռա ընկա ենեուցը, տեհա էկաւ, օրօրոցը մտաւ։ Հրէս ընէլ ճկիթը։

Թաքաւորը զարմացաւ, ասեց. Ըռենց բան կըլի, յարի էթանք տեհենք։

Էկան տեհան, որ ախչկա ճկիթը կտրված ա, լալիս ա։

Մէրը գոռաց, գոչաց. Ես եմ էս մի էրէխէն, ինձ սըպանա, դրան ձեռը մի տա, տղէն սուտ ա ասմ. մախսուս ա էկէլ մատը կտրել։

Նապիր, վապիր էկան էրեխուն տեհան, գնացին դատ անելու։

Թաքաւորն ասեց. Նապիր, վապիր, կարելի՞ ա, որ մէկ ամսական էրեխան մարթագէլ դառնա, ձի ուտի։

Ասին. Կարելի ա։

Տղէն յառաջ էկաւ, ասեց. Որ ըռենց ա, թաքաւոր, էս էս ախչիկը պըտի սըպանես, էս ես գլուխս կառնեմ կեթամ։

— Էթում ես՝ գնա, ես իմ էրեխէն սըպանել չեմ։

Տղէն նի մտաւ գոմը, յիրան ձին վի կալաւ, նի էլաւ գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, Ասուած էր գիտում, գնաց հասաւ մի մեշի։ Տեհաւ մի պառաւ կնիկ ցախ ա թոփ անըմ։

— Բարաջողըմ, ասեց, նանի։

— Ասուս բարին, հազար բարի։ Բա էտ ուր ես էթըմ։

— Ես էլ գիտում չեմ։

— Դէ որ ըռենց ա՝ յարի էթանք մեր տունը զօնաղ։

Տղէն գնաց պառաւի տունը զօնաղ. նստացրուց՝ հաց ուտացրուց, հարց ու փորձ արուց, յիմացաւ յամէն բան, յիրիկնապահին՝ պառաւը ասեց տղին. Ա՜յ տղա, յարի ես քեզ տանեմ պահեմ, տեհենք ինչ դուս կըգա, թէ չէ յիրիկվան իմ մարդը քօռ դէնը ա, կըգա՝ քեզ կը ֆնասի։

Պառաւը տղին տարաւ, մի տեղ պահեց։

Յիրիկունը մարդն էկաւ, ոչխարը բերուց, համբարեց, տեղաւորեց։ Էկաւ նստեց, ասեց. Ըստեղից խանի ֆոտ ա գալի, էս ինչ ֆոտ ա։

— Ա՜յ մարդ, ասեց պառաւը, մենք իսան ենք ու կանք, ֆոսը մեզնից կըգա։

— Չէ, կնիկ, զարիր իսանի ֆոսա ա գալի։

Կնիկը ծածկեց յամէն բան։

Թշերը նի մատն յիրար կուշտ, պառաւն ասեց Բօռ դէվին. Ա՜յ մարդ, էն տարվա տղէն որ բերել ի, մի՞տդ ա, որ ասում ի մեռել ա։

— Ի՞նչ տղա, այ կնիկ։

— Էն տղէն, որ բերի, քա, միտդ չի՞։

— Միտս ա, ախար էն մեռաւ։

— Չէ, չէ, էն մեռնողը իմ տղէն չէր, էն քթիլ ի ես, իմ տղէն ավել ի իմ քվորը պահել էր, հիմի բերել ա, մի տենես ինչ թաւուր տղա ա դառել։

— Հա, ըդդար լաւ տղա ա դառել որ գովում ես, մի կանչի տենենք։

— Գնած ա, թող մնա, յառաւօտենց կը տեսնես։

Յառաւօտը լիսը բացվեց, պառաւը գնաց տղին բերուց. Բօռ դէվը տեսաւ որ, օվ օվ օվ, տղա, մի ազիզ տղա։

Ասեց. Ո՞ւմ տղէն ես, ադա Ջան։

Ասեց. Բու տղէն եմ, ում տղէն եմ։

Ասեց. Հասատատ. բա յարի մի թշերդ պաչեմ։

Բօռ դէվը շատ յուրախացաւ, խատեց տղին, յաշկերը յէրեսը պաչեց։

— Է՜, բալա Ջան, ես ծերացել եմ, յարի էթանք ոչխարը համբրեմ, տամ քեզ, վոտիդ մեռնեմ, դու տար արածացրու։

— Էթանք։

Բօռ դէվը ոչխարը համբրեց, տվուց տղին ասեց. Էս իրեք սարը կը տանես կարածացնես, համա էն դիհը տանել չես։

— Ընչի՞ համար, ախու։

— Էյ որդի, էս իմ յաշկը քօռացնողը իմ քիրն ա էլել, էն սարըմն ա կենում։

— Վա՛յ, վայ, քիրն էլ ախպօր յաշկը կըքօռացընի։

Բօռ դէվին էրկու շուն ունէր, մէկի անումը Ազան էր, մէկի անումը Գազան էր։ Տղէն վե կալաւ էտ էրկու շունը ու ոչխարը գնաց էն սարը, որդի դէվի յաշկը քօռացրել ին։ Գնաց տեսաւ որ մի մեծ չինարու տակ մի սուրու ոչխար նստած ա, յինքն էլ բերուց էն դիհը նստացրուց. տեսաւ մի լաւ մեղաւոր կնիկ, տասնըհինգ յուս էս դիհը կախ էլած տասնըհինգ յուս էլ էն դիհը կախ էլած, նստած թամաշ ա անում յիրան։

Տղէն էկաւ կուշտը՝ ասեց. Բարը լիս քեզ, հօքիր։

— Աստծու բարին, հազար բարին։

Էկան յիրար կշտի նստեցին։

— Բալա ջան, ո՞ւմ տղէն ես, հարցնիլը ամօթ չելի։

— Ես Բօռ դէվի տղէն եմ։

— Իմ ախպէր։

— Հրամանք ես։

Վեկացաւ, դրա յաշկերը պաչեց, թշերը պաչեց, ասեց. Ասուն վառք, որ իմ հօր օջախը պըտի թաղանա, ախար իմ հէրն էլ լաւ մարդ էր, ես գիտըմեմ, է։ Գիտես, ինչ կա, ախպօր տղա, մենք յառաջ ախպօրս հետ զումար ինք հաղըմ, հինգ ոչխարով, տասը ոչխարով, քսան ոչխարով, հաղըմ ինք, վախտ յանցկացը-նում, յարի մենք էլ հաղանք։

— Հաղանք, հօքիր, ինչ եմ ասըմ։

Կնիկը ձեռը տարաւ ջէրը՝ իրեք հատ վէք հանեց. ասեց. Գնա մի պուհուր տափակ քար բե։

— Խի՞։

— Գնա բե, արդարութունը լաւ բան ա, վէքերը կը քցենք քարի վրէն, քու բախտից ինչ կըդա՝ դու կը տանես, իմ բախտից ինչ կըդա՝ ես կը տանեմ։

Տղէն գնաց, մի սալ բերուց, դրուց մէջ տեղ, սկսեցին վէ-քերը քցիլը։

— Բանիսը, հոքիր։

— Տասը՛, հը, յառաջինն ա։

Քցեց տղէն, տարաւ տասը։

— Քցա քսանը։

Քցեց՝ էլի տարաւ։

— Քցա քառասունը, զումարը ըսենց բան ա։

Քցեց՝ էտ էլ տարաւ։ Ըտենց տանելով քոմմա տարաւ։ Կնիկը վե կացաւ յիրա կուլապը (վերարկու) ու փէտը առաւ դարդակ տուն գնաց, ասեց. Ախպօր որդի, յէքուց էլ կը գաս, իմ յաշկերը դուս գա, ես քեզ ը՞նչով պատվեցի, յէքուց միքանի կտոր բան կը շինեմ, կըդաս, ըստեղ հաց կուտենք։

Տղէն կնկա ոչխարն էլ քշեց գնաց տուն։ Բօռ դէվը տեսաւ որ էրկու յիրա ոչխարի զդար ոչխար տղէն քշում բե-բում ա։

— Ա՛յ տղա, էտ ինչ ոչխար ա, ասեց Բօռ դէվը։

— Ափու ջան, ասեց տղէն, ոչխարը զօռեց էն դիէը, խամ տղա ի, կարացի ոչ յառաջը առնեմ, գնացի տեսա որ քու քիրը մի չինարի ծառի տակ նստած ա, ասեց. Յարի զումար հաղանք, ես էլ հաղացի, էս ոչխարը տարա։

— Է՛լ տանես ոչ, զատէդ առնեմ, էլ չը տանես, իմ յաշկը քօռացնողը դա ա, մի խաթա կը բերի քու գլխին՝ իմ տունը կը քանդվի։

— Էլ տանիլ չեմ։

Հօքիրը գնաց տուն, յամէն բան աղուով սարքեց, որ ուտողը հազար կտոր ըլի, ինչ ա՝ յառաւօտը էտ տղին ուտացնի, որ էտ տղէն պատաի, յինքը ոչխարը քշի, ըերի յիրա տունը։

Յառաւօտը բոդնոցի մէջը սարքեց ու վե կալաւ գնաց, դրուց յախրբրի գլխին, յինքն էլ կշտին նստեց։

Բշիրը քնահարամ էր մնացել, քունը յաշկերը կոխել էր, մին բաց էր անում, մին խփում։ Մըն էլ տեհաւ, տղէն էկաւ։

— Ա՛յ տղա, ասեց, քեզ ինչ էլաւ ըդար չախ։

— Դէ, հօքիր, անջախ, ճամփէն երկար էր։

— Հօրիր ջան, ես գիտեմ, դու քընահարամ կըլես, ես էլ նոր հաց կերա՝ վեկաց, գլուխդ դիր ծնկանս, մի քիչ քնի, եատ վե կը կենաս՝ հաց կուտենք։

Քնահարամ կնիկ, գնելուն պէս խռմփաց, սար ու ձոր խռմփոցը բռնեց։ Տղէն կուլարը ծալեց, գրուց գլխի տակ, ծունկը հանեց, յինքը վե կացաւ, նի էլաւ չինարին. բուն ծէրի ճուղքը կռացրուց, բերուց հօքօր եռսուն յուսը դրա ճղքերիցը կապեց, զաֆիլ որ ճուղքը բաց թողուց, հոգին մարեց. ճուղքը կնկան առաւ՝ բանդրացաւ։ Կնիկը ձէնը քցեց, սար ու ձոր լացցրեց։ Շունը էկաւ ոտով տվուց՝ բոթնոցը շուռ տվուց ջրի մէջ։

Տղէն յիրիկունը ոչխարը քշեց, գնաց տուն։

Հէրը դուս էկաւ, տեհաւ տղէն գալիս ա, շատ ծանդր։

Վա՛յ հարայ կենա, տղէս հիւանդացած չըլի։

— Բարիրիկուն, ախու ջան։

— Բարին, հազար բարին։ Էտ ընչի՞ ես ծանդր գալի։

— Է՛ ախու ջան, քէֆս լաւ չի, գլուխս յառաւօտվանից ցաւըմ ա։

— Վա՛յ իմ յաշկերը դուս գա, արևը տված կըլի գլխիդ, սրանից դէնը ես կը տանեմ, որդի՛ ջան։

Էլ հօրը բան չասեց թէ հօքօրը կախ եմ տվել, ընենց արուց, որ յինքը գնա յաշկովը տենի։

Յառաւօտը քօռ դէվը վեկացաւ, քշեց սարը ոչխարը, գնաց տեհաւ մի բարակ ձէն ա գալի, ասեց. Մի գնամ տենեմ էս ի՞նչ ձէն ա։ Շունը քցեց յառաջ՝ գնաց. Տեհաւ ինչ՝ չինարի ծերիցը մի գաս կախ էլած ա, տեհաւ յիրա քիրն ա։

— Ախպէր ջան, ինձ մի իլլաճ արա։

— Էտ քեզ ըտենց ով ա արել։

— Ախ քու ոդէն, ախ քու ոդէն. գիտես քու ժառանգի հունարը, մուռնիրդ, ինագը հանեցիք, դէ հմի գնա, յարխէին ման արի։

— Օխա՛յ, ասեց Բօռ դէվը, մի գամ յիրիկունը, ոտից բռնեմ լիզելով ընչար գլուխը գամ, հմի գիտեմ, որ հասատատ իմ ոդէն ա։

Էկաւ յիրիկունը շշկիլ շշկիլ ոչխարը արուց նեքսև ու ձէն տվուց կնկա՞ը.

— Ինիկ Ջան, էտ հասակըմը Ջան ասած չկար կնկանը, կնիկը զարմացաւ թէ էս ինչ բան էր, ասեց. Տղէն ինց ա։

— Թէ շատ լաւ ա։

— Դէ կանչա, կանչա տեսնենք։

Մէրը ձէն տվուց. Ամիր-Շամիր Ջա՛ն։

— Համմէ։

— Յարի, հէրդ կանչում ա։

Վազելով էկաւ հօր կուշտը։ Հը՛, ավու Ջան, հօ ֆնաս չի պատահել։

— Ձէ, բոյիդ մեռնեմ, յարի իմ կուշտը։

Բռնեց ոտիցը պաչելով էկաւ գլուխը, որ սար ու ձոր համ առաւ։

Մէրն ասեց. Ա՛յ քու տունը շինվի, էրեխուս սըպանեցիր, բոլ ա, է։

— Է՛յ կնիկ, դու որ յիմանաս իմ տղի արածը ինչ ա, դու ինձնից շատ կը պաչես։

— Էտ ինչ ա արել։

— Տօ իմ եռատուն հինդ տարվա դուշմանին կախ ա տվել, հասատատ իմ տղէն ա, ես քեզ էլ դուրբան, քու տղին էլ։ Դէ պառաւ, դու գնա քու տեղը քնի, ես իմ տղին իմ ծոցը պըտի առնեմ, քնեմ։

Տղէն առաւ ծոցը դրուց, քնեց, քանի զարթնեց՝ սիրեց։ Յառաւօտը յիրա ոչխարը վե կալաւ՝ գնաց։ Տեսաւ ճչոց մչոցը կարվել ա։

Ասեց. Էթամ տեսնեմ ինչ էլաւ էտ ոնիծածը։

Գնաց տեսաւ՝ շորացել ա, ոնց որ տառեխը։

Տղէն յինքն յիրեն մտածեց, ասեց. Էս ես ինչ եմ անում, իմ հօր թաքաւորութունը թողել եմ, էկել եմ Բօռ դէվին եմ տղութուն անում. լաւն էն ա ըլէթ էթամ իմ հօր տունը։

Պառաւն էկաւ, տեսաւ տղի նիսթը կախ ա.

— Հը՛, որդի Ջան, ասեց. Ամի՞ ես նիսթդ կախել։

— Ես էթալ պտեմ իմ հօր տունը։

— Վայ, որթի, իրի՞ ես տենց անում. հօրիցդ շատ կարողութուն ունենք, ձի՞ ասես ունենք, վոսկի՞ յաղրուր ունենք, յամէն բան ունենք, էթալ մի։

Ասից՝ տանեմ մեր կարողութունը շանց տամ, բալքի հաւէսի գա, էթա ոչ։ Տարաւ յամէն ինչ շանց տվուց տղին, տարաւ մի օթախ, մի յաղրուր կար, տղին ասից. Թաքուլդ կոխա ջրի մէջ, ասա. Դառնա վոսկի։ Տղէն քաքուլը կոխից ջրի մէջ՝ դառաւ վոսկի։ Գնացին մի ջոկ յաղրրի վրա. ասից. Յէրէսըդ լվա, ասա դառնամ Հուրի թաքաւորի տղի նման։ Յէրէսը լվաց, տեհաւ որ յէրէսը պսպղաց. Ասից. Դէ գնա՞ մի հայլի բէ, նանի՞ ջան։ Հայլին բերուց, թամաշ արուց, տեհաւ տղա՞ քի տղա։ Տարաւ մի ջոկ օթախ էլ. մի հատ խնձոր վի կալաւ, տվուց տղին։

— Էս ի՞նչ խնձոր ա, նանի՞ ջան, ասից տղէն։

— Որ կը տենձանես՝ դիլիմ արա, կէսը.կի, էլ ետ կը դառնաս ջահէլ տղա։ Ասենց կարողութուն ունենք հա, էս բաց թողաս յուր էթաս, քու հօրը ասենց բաներ չունի հօ, դէ նստի կի՞ էլի, Ասուած քեզ կեր ա կամեցել, էլ յուր ես էթըմ։

— Նանի՞ ջան, իմ հօր փողը ասենց բաղցը ա, էթալ պտեմ։

Պառաւի մէջքը կոտրվից, հէյ վախ, ասից, զուր ա, ճնալ չի։ Ա՛յ որթի, որ ճնըմ չես, զու գիտես, ասից ու լաց էլաւ։ Դէ յարի, էթանք իրեք բան էլ ունեմ, տամ՝ գնա։

Պառաւը տղին տարաւ մի օթախ, մի տոլար բաց արուց, մի կոտոր աղ տվուց, մի հատ դանակ. ետո տարաւ գոմը, իրեք ձիուց մաղը քաշից, տվուց տղին։

— Դէ, ասից, զու կաց ըստեղ, ես գալիս եմ։

Գնաց մի պուճուր բութուրկա բերուց, մէջը լիքը ջուր՝ բերանը գայիմացած։ Ա՛յ տղա, ասից, էս ջուրն էլ քեզ պէտքը կը գա։ Դէ յարի դրանց հունարն ասեմ, որ էթաս։ Օխտ օր ես ասիլ չեմ Բօռ դէվին, զու արիէին օխտ օր կէթաս, օխտ օրէն ետը ես թամաշ կանես, կը տեսնես քամակիցդ մի թող ա վեր ելըմ, իմաց կաց, որ իմ մարդն ա, գալիս ա քեզ հաղար կտոր պըտի անի։ Դանակը կը քցես քամակդ, կը դառնա մի էքա սուր սար, ընչանք ոտները կտրատելով էտ սարը դէվի նի՞ ելիլը՝ զու էփէճա կէթաս. կը տեսնես չէ՞՝ ամալ աճալդ էն ա կալնելու ա՝ տղը քցա՞ քամակդ, կը դառնա տղի սար՝ ատագին, կտրած ոտ՝ աղ. ինչ կանի։ Մրմնջալով, գոռալով պըտի գա հնոնուցդ, տեսար էտ սարն էլ յանց կացաւ, ձեռիդ բութուրկէն տուր քարով, կը դառնա մի ատագին ծով, էլ կարալ չի յանցկենալ։ Կասի. Ա՛յ տղա, կաց հլա տեսնեմ քեզ էտ ով ա սարվացրել, ինձ ասա, գնա։ Ասա՝ Բոռ կնիկն ա սարվացրել։ Կասի. Ա՛յ մէջքը

կոտրի իմ կնկա, կը թողա կը գա։ Կը պրծնես ձեռիցը։ Ինչ ժամանակ էլ որ էս ձիերի մաղը քաշես, ձին կչտիդ կաննած կըլի։

Տղէն պառաւի ձեռը պաչեց, ընկաւ ճամփէն գնաց։ Օխտն օր գնաց, վրա ուրթին՝ ետ թամաշ արուց, տեսաւ որ մի գիլ ճվվոց ա գալի, երկինք գետինք թոզը բռնել ա։ Ասեց. Կա չկա, էս Բօռ դէվը ա գալի, կաց էս դանակը քցեմ։

Դանակը քցեց, դառաւ մի ահագին սար, սուր սուր քարերով։ Բօռ դէվը ոտները կտրատելով նի էլաւ, տղէն տեսաւ որ էտ սարը յանց կացաւ՝ աղի կտորը քցեց։ Դառաւ մի աղի սար։ Կտրած ոտը աղը վառեց, մրմնջացրուց, համա էտ աղի սարն էլ յանց կացաւ. վիրնուց բութուրկէն տվուց քամակի քարովը, տեսաւ ահագին ծով դառաւ։ Բօռ դէվը էկաւ՝ ծովի ղրաղին նստեց.

— Ա՛յ հայ, ասեց, էտ քեզ ով սարվացրուց, ինձ ասա՛ ու գնա։

Ասեց. Բու կնիկը։

— Ախ, ասեց, մի տուն հասնեմ՝ ես գիտեմ, ասեց ու ետ դառաւ։

Տղէն գնաց. Գնաց հասաւ յիրա հօր քաղաքը։ Տեսաւ ձէն ձուն չկա, գնաց մտաւ յիրա հօր պալատը, քիրը վե կացաւ էկաւ յառաջը, ասեց. Բարով, ախպէր ջան, դու բարով էկար, էս ա քառասուն օր ես ֆող եմ ուտըմ, լաւ էր որ էկար։

Ասեց. Քիր, ուտըմ ես ինձ, կեր, թող մի նիլնեմ կտուրը, իմ հօր քաղաքին թամաշ անեմ, վե գամ՝ կեր։

Ասեց. Լաւ, նիլ։

Տղէն նի էլաւ, հանեց ծոցի սիպտակ ձիու մաղը՝ ալբիալը ձին էկաւ։ Ձին նստեց տղէն, ասեց. Ա՛յ քիր, գնացի ես, դէ յարի։ Հրեղէն ձին գնաց, քիրն ընկաւ ննոցը ճչալով. հա՛յ հայ էր որ կալներ էտ հրեղէն ձիուն, էկաւ նի ելաւ էն չինարին, որ հօքօրը կալս էր տվել, ձէն տվուց. Ագան, Գաղան։ Էկան շները։ Վեր էկաւ ծառիցը, սև ձիու մաղը քաշեց՝ սև ձին էկաւ՝ նի էլաւ։ Մի դհիցը յինքը կախ արուց քվոր հետ, մի դհիցը շները։ Տվուց քվորը, վեր ընկաւ՝ շները թափեցին ալբիալը ցրվեցին։ Շները էկան, էտ աղի ոտները լիզեցին, ասեցին. Բօռ դէվը էկաւ, յիրա կնկանը հազար կտոր արուց, որ դու էլ գաս, քեզ էլ ըտենց կանի, գլուխդ առ գնա։

Տղէն շներին սիրեց, կարմիր ձին քաշեց՝ գնաց։ Գնաց, մի բարակ ճամփի ասաց էկաւ, քշեց գնաց էտ ճամփովը։ Շատ գնաց, քիչ գնաց, Աստված գիտի, գնաց տեսաւ մի հատ արարդզդու շոր հագած մի սիրուն ախչիկ քնած ա։

Ասեց. Վեկացընեմ՝ ինչ անեմ, վե կացընեմ ոչ՝ ինչ անեմ, լաւն էն ա վեկացընեմ։ Ձէն տվուց, էտ ախչիկը վեկացաւ, ասեց.

Քիչ հեռացի, ես էլ իմ սարքը տենեմ, դամ կռվենք։ Տղէն հեռացաւ, ախչիկը նի եկաւ ձին, էկաւ։

Տղի ձին խօսաց, ասեց. Ա՜յ տղա, էտ որ կա՝ Նազիկ Թաքաւորի ախչիկն ա, մուրազ ա տրել, որ յիրան զօռող տղին առնի. մուղաթ կաց, զօրա կռվող ա, շատ տղի գլուխ ա կերել։

Ախչիկն էկաւ կանգնեց։ Տեհաւ որ դրուստ շատ լաւ կռվող ա, յաշկերիցը կրակ ա թափում։ Կախ էկաւ յիրա ձիուն թամաշ արուց, տեհաւ որ յաշկերիցը սելաւի պէս արտասունք ա գալի։

— Ա՜յ ձի, ասեց, խի՞ ես լաց ըլում։

— Է՜հ, ցաւիցս խարաբ չես։

Սկսեցին կռվիլը։

— Հը՛, տղա, սրէն ու�ա։

— Բունն ա, դու զոնաղ ես։ Ախչիկը դնաց էկաւ գուրզը ընենց քցեց, որ սար ու ձոր շըղշըղկոցն ընկաւ, տղէն վրա պրծաւ՝ գուրզը կալաւ։

— Ա՛ռ, զայտով գուրզդ քցա, ես էրեխա չեմ։

Ախչիկն ասեց. Առաւ ինձ, ես իմ գրզի ուժը գիտէի, դրան հարիր կտոր անել պտէր։

— Կարելի ա քնահարամ ի, մին էլ քցեմ, ասեց ախչիկը, մին էլ դնաց էկաւ՝ ձիու թամքըմը կանգնեց ու գուրզը քցեց։ Սար ու ձոր էլի դըղըրտաց։

— Ա՛ռ գուրզդ, բոլ ա, մէջտեղիցդ հարիր կտոր կանեմ, ասեց տղէն ու գուրզը տվուց յիրան։

— Երկու հատ էլ նետ քցելու ունես, քցա։

Ախչիկը քցեց։ Տղէն ձիուն զամշի տվուց, ձին հաւալամիշ էլաւ, նետը յանցաւ։

— Կա՞ս տղա, թէ չկաս, ասեց ախչիկը։

— Կամ, ասեց տղէն։

Ախչիկը վեր էկաւ ձիուցը, յիրա նետը վի կալաւ, էլի մնէլ քցեց։ Տղէն էլի ձիուն զամչի տվուց, ձին հաւալամիշ էլաւ, նետը յանցաւ, ընկաւ գետին։

Ախչկա յաշկերը արինը կոխեց։ Կա՞ս թէ չկաս։

— Կամ, ասեց թէ չկամ։ Հըմի կը տեսնես ինչ կանեմ քեզ։ Համա էրկու թուր էլ ունես՝ քցա։

Ախչիկը քաշեց թուրը՝ վրա պրծաւ տղին։ Էլ ետ տղէն զամշին քաշեց ձիուն՝ հաւալամիշ էլաւ։ Քցեց, տեհաւ դարտակ յանցկացաւ։ Ասեց. Մի կանանչ է, մէջ տեղիցդ օխտը կտոր կանեմ։

Տղէն ասեց. Կանանչ եմ, կանանչ, վեր յարի, թուրդ վի կալ։

Ախչիկը մինն էլ քցեց, էլի դուրս յանցկացաւ։ Է՜, այ տղա, ասեց ախչիկը, դու ինձ ախտեցիր, վի դալ պտենք, ըստեղ կոխ

պրծընենք (բռնենք). թէ ըստեղ էլ ախտեցիր, դաթի ես քունը, դու իմը։

Վեր էկան, ախչիկն ասեց.

— Բարով, հազար բարով, ա՛յ ապա, հիմի կոխ պրծընենք։

Վրա պրծան յիրար, ախչկանը մի սամթ ունէր, յուսերից բռնած վախաը, յինքը մեկնվըմ էր, ապին քցում։ Պըտըտվեց, պըտըտվեց, բռնեց ապի յուսերքիցը, ապէն տեհաւ որ մանները մտել ա մսի մէջը, արինը ավուց գլուխը, յաշկերիցը կրակ թափեց։ Ա՛խ, ասեց, մի գնեմ ծնկանս տակը, ես գիտեմ թէ քեզ ինչ կանեմ։

Ախչիկը որ մէկնվեց, ապէն ծունկը դրուց սրտին՝ թուրը քաշեց։ Թուրը որ քաշեց, ախչիկը ծըծերը բացեց։ Տղէն թուրը վի դրուց։ Վեր, ասեց, ախչի, վեր։

Ախչիկը վեկացաւ, ասեց. Դէ գանակդ հանա, ծամիս մէկը կտրա, մանեկիս ըթերը քամակիս կապա, արա յառաջդ, էթանք իմ հօր կուշտը։

Տղէն ախչկա ծամը կտրեց, մանեկի ըթերը կապեց քամակին, արուց յառաջը, յինքը ձին նի էլաւ, նրա ձին էլ քաշեց։

Եփոր թաղաքին մօտեցան, ախչիկն ասեց. Ա՛յ ապա, թուրդ հանա դի ճակատիդ, զգալով գնա, վախենաս ոչ։

Տղէն թուրը հանեց, դրուց ճակատին, ընենց գոռաց, որ թաքաւորը թախտին վի թռաւ, դուս էկաւ։ Դուս էկաւ տեհաւ որ ախչիկը եսիր արած բերած ա։ Որ տեհաւ՝ յաշկի լիսը բուռը թափվեց։ Հէյ վախ, ասեց, էս ի՞նչ հոդածին ա, որ իմ ախչըկանը զօսել ա։

Ախչիկն ասեց. Հէ՛ր, մի ապա եմ ճարել, որ նմանը աշխարհքումս ըլել չի։

— Վա՛ կացէք, վի, ասեց թաքաւորը։

Տղէն թռաւ ձիուցը, էկաւ որ ախչկա մաղը եա անի, ախչիկն ասեց. Իրաւունք չունես, էթալ պատնք ատենը։

Նի էլան, գնացին թաքաւորի յառաջը կանգնեցին։

Թաքաւորը սկսեց յաշկերիցը թափել։

Վէզիրն ասեց. Խի՞ ես լալիս, մի ապի պըտի տայիր, հաղը լաւ ապա ա պատահել։

Թաքաւորն ասեց. Էլ իմ սրտնը պահողը ով կըլի։

Տղէն վրա բերուց. Թու ջանը սաղ ըլի, ես կը պահեմ, թողալ չեմ որ մի գուշ յանց կենա։

Կարելի ա իմ ախչիկը քու պատկերին ա խափվել, ասեց թաքաւորը, թէ որ դու ըդար զօչաղ ես, իմ ապին Նուռէի դավրիշը բռնել ա, թէ գնացիր բերիր՝ էնա կը հաւատամ, որ դու

ախչիկանս զօռել ես, կըտամ քեզ։ Որ բերես տղէս՝ լիզուս ինչ պըտըտի՝ կըտամ։ Դէ յէքուց յառաւօտնց վեկաց գնա։

Գիշերը քնեց տղէն ըտեղ, աքլորը կանչեց, քնից օյանմիշ էլաւ, ասեց. Այ հա՛յ, ես մի ախչիկա խաթեր էթամ Նուռէի դարվիշի հետ կռվեմ. համա ինչ արած, էթալ պտեմ։ Մնէլ տեհաւ ախչիկը դուռը բաց արուց.

— Ա՜յ տղա, հօրս տան թէ ես գիտեմ ոչ դրա տեղը, թող ախչիկդ գա ինձ շանց տա, ետ դառնա։ Թէ որ յուրիշ մարթ գիտէ՝ ուրիշ մարթ զրկա, բան չկա։

Յառաւօտը լիսը բաց էլաւ, տղէն գնաց թաքաւորի կուշտը, ասեց. Թաքաւորն տպրած կենա, էթալը էթամ, համա տեղը գիտեմ ոչ, կուզես ախչիկանըդ զրկա ինձ հետ դա, շանց տա, ետ դառնա։ Թէ յուրիշ մարթ կա, ուրիշ մարթ զրկա, հետն էթամ։

Թաքաւորը շատ մտածեց էտ բանի համար. զրկեմ՝ ինչ անեմ, զրկեմ ոչ՝ ինչ անեմ։ Վայ թէ ախչիկը առնի, էթա, ես մնամ ղեինքս ծուռը։

Նազրի մինն ասեց. Դու յուրիշ բան մտածիլ մի, թաքաւոր, սա ընենց տղա չի, յաշկերիցը վարթ ա թափըմ։

— Որ ընենց ա, ախչի, գնա շորերդ փոխա, արարզգի շորերը հագի, տար էտ տղին շանց տուր, վե կաց, յարի. դառնաս հա՛, խափվես ոչ տղին, մենք մնանք ըստէ կասկածաւոր։

Հարաւ ախչիկը յիրա շորերը, նի էլաւ ձին, գնացին։ Գնացին, տղէն բոզ ձիու մաղը քաշեց, բոզ ձին էկաւ, նի էլաւ՝ գնացին։

Ախչիկն ասեց. Իմ հոգիս, զարթնէ (բացի) էս, էլ կռիւ արած կես թէ յառաջի անդամն ա կռիւդ՝ ետ դառ էթանք ձեր տունը, թէ չէ՝ յուրիշների հետ էլ ես կռիւ արել, էթանք։ Շատ դժար տեղ ա, հա՛։

— Ի՞նչ դժար ա։

— Դէ կաց, պատմեմ քեզ։ Նուռէի դարվիշը անմահ ա, հազար անգամ մանդը խորոված թիքա եմ արել, էլի սաղացել ա, կուշտս կանգնել, անճախ հոգիս ազատել եմ՝ էկել մեր տունը։

— Ախչի, ինչ տեղ որ Աստված ըլի, մենք ինչ բան ենք թէ Աստված կամեցել ա՝ կապանեմ, տղէն վե կունեմ, կը բերեմ։

Հասան Նուռէի դարվշի դարգեանը՝ տղէն ասեց ախչկանը.

— Դէ ետ դառ։

— Ես ոնց ետ դառնամ, թող իմ արինն էլ քու արընի հետ խառնըվի, իմ արինը քունից կարմիր ա։

— Ետ դառ։

— Ընենց բան կըլի՞, առ Թուրս իմ շլինքը կտրա՝ նոր ասա՛ հետ դառ, ասեց ախչիկը։

— Է՜ հմի հօրդ ո՞նց հաւատացնեմ, որ ես եմ բերել քու ախպօրը։

— Ախպէրս յամէն բան կասի. դեհ ես ըսաի կը կաննեմ, դու ինչ հունար ունես՝ խարջա։

Տղի ձին ասեց. Տղա, գիտես ինչ կա. Նուռէի դարվիշը բախչի միջին մի յախբուր ունի, յախբըրի ոտը տեսնում ես, դուս ա էկել, գեօլ ա կաննել ընտեղ, էն սև ջուրը. որ դու կուբ անես, գլուխը կտրես, թող կըլի կեթա կընկնի էտ գեօլի մէջը, էլի կը սաղանա։

— Բա ինչ կըլի դրա հնարը։

Կեթաս գեօլի յառաջը կը քանդես, թամուղ դուս կը տաս ջուրը, նամը կը կտրես։ Թաքաւորի ախչըկանը կասես. Ֆող բեր, քար բեր, փեշով ձեռով կրա, բե լքցրա էտ փոսը՝ դրդա։ Եսոր էն էկած ջուրն էլ դայիմ կը կտրես, որ նամ չըտա, էն վախտը կուբ արա, արխէին, էլ վախիլ մի։

Գեօլը կտրեցին, ոտի ջուրն էլ կտրեցին, լաւ ֆողեցին, նամը կտրվեց։ Տղէն գնաց մէյդանի գլխին կաննեց՝ գոռաց.

— Դարվիշ ախպէր, դուս յարի, զոնաղ եմ էկել։

Մի տարար դուս էկաւ, ասեց. Ինչ ես ջանավարի պէս գոռում, էս ա դուս ա դալի։

— Թէղ արա՛, ասա՛ դուս գա, ասեց տղէն։

Արարը գնաց դարվիշի կուշտը։

— Էտ ինչ ձէն էր, արար, ասեց դարվիշը։

— Մի դալուղանլի տղա գուրմ ա, քու ճամփէն ա պահըմ. ասեց արարը։

Դարվիշը դուս էկաւ, նստեց յիրա դեղին ձին, քցեց թեին դալխանը, կապեց թուրը, առաւ ձեռը յիթնուն փթանոց դուրզը՝ քշեց։ Ձին հաւալամիշ էլաւ։

— Սրէն ու�ա, ա՛յ տղա, ասեց։

— Ասեց. Փունն ա։

— Չէ, ասեց դարվիշը, դու զոնաղ ես, քունն ա։

— Շատ լաւ։

Ձին ասեց. Ա՜յ տղա, մի հատ դամշի կտաս սաղրուս՝ ես հաւալամիշ կըլիմ, ընենց վե՛ կը գամ էտ դարվըշի վրէն՝ որ թուրդ քցես՝ գլուխը կեթա։

Տղէն ետ թամաշ արուց, տեսաւ որ ախչիկը կաննած փորի աղիքները հանում ա, տարաւ բերուց ընենց մի դամշի տվուց ձիու սաղրուն, որ ձին հաւալամիշ էլաւ, բանձրացաւ երկինք,

վեր էկաւ դարվիշի վրէն։ Տղէն թուրը քցեց՝ դարվիշի գլուխը թոցրրուց։ Տեհաւ գլուխը կանգնում չի, թոլ ա ըլըմ։

Ձին ասեց. Տղա, վի յարի հնդուցը գնա, մանդը մանդը կոտորի։ Տղէն ձիու վրիցը վեր էկաւ, ընկաւ գլխի քամակը, էն գնաց, յինքը խփեց կոտորեց, հասաւ փոսի կուշտը, ճնացել էր մի փրթոշի ղդար. էն էլ կոտորեց։

— Դէ, ասեց ձին, էլ բան չկա, յարի գնա։

Մըն էլ տեհաւ ախչիկն էկաւ, փաթըթվեց՝ բիլակը պաչեց։ Յիրաբ հետ նի մտան տունը։ Թրիրը քաշեցին մտան օթախը, տեհան էտ անիրաւ դարվիշը մի Հազարան բիլբուլ ունի, որ խօսում ա՝ սար ու ձոր կանանչըմ ա։ Նի մտան էն դէի օթախը. տեհան ախչըկա ախպէրը ժնջըլով կապած ա։ Ախչիկը որ ախպօրը տեհաւ՝ ֆոքին քանդըվեց, ընկաւ վրէն։ Տղէն ժնջիլը հետ արուց, իրեք սըհաթ քիր ու ախպէր ընկած մնաց ճնացին։ Իրեք սըհաթից հետ օյանմիշ էլան։

Տղէն ասեց. Ախչի, յերէսդ սրրա։

Ախչիկը տղլուխը հանեց, յերէսը սրրեց։

Ախպէրն ասեց. Ա՛յ քիր, դու ըլես, քու Աստվածը, ինձ ազատողը դու իր, թէ էս տղէն։

— Էս տղէն էր։

— Ա՛յ տղա, որ ըսանց ա, իմ քիրը տվի քեզ, բարով վայելես։

— Դէ՛ վի կացէք, էթանք, մեր յաշկը ճամփին ա, ասեց տղէն։

Վի կալան Հազարէն դաստան բիլբուլը։

— Ա՛խ, ասեց ախչկա ախպէրը, քանի՞ հետ ես էկա քեզ համար ու ըսնվեցի. Ես քեզ ատանում ընենց պահում, որ դարվիշն էլ ընենց պահած չըլի։

Նի էլան ձիանը՝ քշեցին, յիրենց քաղաքին մօտացան։

Ախպէրն ասեց. Ա՛յ քիր, զէ յառաջ ընկի, գնա մեր հօրն ու մօրը յաշկալես տար։

Ախչիկը քշեց գնաց տուն, խաբար տարաւ հօրն ու մօրը, թէ յաշկնեբդ լես ըլի, Ամիր-Շամիրը գալես ա, համ իմ ախպօրն ա բերում, համ էլ Նուռէի դարվէշի Հազարան բիլբուլը։

Թաքաւորը վի կացաւ, վէզիր նազիրով, սազով սանթուրով, մարթով զօշունով էկաւ Ամիր-Շամիրի յառաջը։

Ամիր-Շամիրը քշեց ձին, թուրը հանեց, դրուց ճակատին, ասեց. Ըհը, թաքաւոր, էս քու տղէն, էս էլ քու Հազարան դաստան բիլբուլը։

Թաքաւորն արմացաւ, զարմացաւ, քաշեց յառաջ Ամիր-Շամիրի վօսկէ քաքուլը պաչեց, գնաց տղի շընքովն ընկաւ։

Վէ կացան, էկան տուն։

Թաքաւորն ասեց։ Ուզա տամ, Ամիր-Շամիր ջան։

— Քու աղուքնուն եմ ուզում։

— Ուզա տամ, էտ բան չէր։

— Ուզում եմ քու ժողովրդի կէսը։

— Տվի, որթի։

Յառաւօտը բռնեցին հարսանիքը. օխտը օր, օխտը գշեր քէֆ արին, յուրախացան, Ամիր-Շամիրին ու Ալմասին փսակեցին, բերին տուն։

Մրքանի օրից հետ Ամիր-Շամիրը առաւ յիրան կնիկը, թաքաւորի տված ժողովուրդը, վէ կացաւ գնաց յիրա հօր աւեր քաղաքը։ Քաղաքը շէնացրուց, կարգ ու կանոն դրուց, յիրա հօր յիշատակը թաղացրրուց։

Իրեք տարուց հետ Ալմասն աղատվեց, բերուց մի հատ լաւ տղա։ Տղա, ինչ տղա, էլ կարալ չեմ ասել, յաշկ պլտի ըլի որ տենի, լեզու պլտի ըլի, որ գովի։

Տղէն դառաւ օխտը տարեկան, պապը նոր միտը բերուց յիրա ախչիկան, վեկացան գօրք վեկալան, էկան յիրանց ախչիկան տեսնելու։ Էկան Զինաթի ծառի տակը վէր էկան, որ գշերը ընդեղ մնան։ յառաւօտը էթան յիրանց ախչիկա տուն։

Գոնք Ամիր-Շամիրի տղի կուշտը։ Տղէն ձին նի էլաւ, գնաց աւի, իրեք տար մեն էկաւ, հէչ բան չտեսաւ, էկաւ Քօռ դէվի սընոտը, մի հատ մարալ զուս էկաւ ձիու յառաջը։ Մարալը գնաց, յինքը գնաց, մարալը գնաց, յինքը գնաց, գնաց տեսաւ որ մի Քօռ դէվ մի զօրքի յառաջը բռնել ա կոտորում ա. որ դէվը զարմ չի է, երկինք գետինք զողում ա։

— Է՛, թաքաւոր, ասեց տղէն, դուք դինջացէք, ըսօր կռիւն իմն ա։

Ասեց ու քշեց գընաց Քօռ դէվը, գընոք վէր էկան՝ թամաշ արին։

Տղէն ձին քշեց, թուրը հաղացրրուց, թուրը քցելուն պէս՝ դէվի գլուխը ֆռռաց։ Թուրը դրուց ճակատին՝ էկաւ թաքաւորի յառաջին կանգնեց. էս էր, ըզդար վախտ բռնա իք ըլել։

— Ընենց կըլի, որթի՝ ջանել ես։

Քշերը ընդեղ կացան դրոնք, յառաւօտը ընկան ճամփա։

Ճամփին թաքաւորն ասեց.

— Այ տղա, ում տղէն ես։

Ասեց. Ամիր-Շամիրի տղէն եմ։

Ասեց. Դորթի։

— Բա չէ, սուտ։

— Մօրդ անբան ինչ ա։

— Ալմաստ։

— Վա՛յ դու իմ թոռն ես, ասեց թաքաւորը ու փաթըթվեց տղին։ Տատը մդար դիմանըմ ա։

Մէրդ սաղ ա, այ բալէս, ասեց ու յինքն էլ փաթըթվեց։

— Սաղ ա, տատի ջան, դուք իմ մօր ինչն էք։

— Քու մէրը մեր ախչիկն ա, ա՛յ բալամ։

Գնացին, հասան տուն, կիրան խմեցին ուրախացան, դրանք հասան յիրենց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։

Երկնքից իրեք խնձոր ընկաւ, մէկը ասողին, էրկուսը լըսողին։

ՍՈՒՐԱ.

(Աշտարակ*)

Ժամանակով մի շատ մենձ սովդաքեար կար. էրկու հատ ազա ունէր, ազէքը ջանէլ ին, մենձը շատ խելօք էր, պուճուրը խելքից պակաս էր։ Սովդաքեարը մեռաւ, համա շատ շատերին հացի տէր, չրաղ էր արել։ Էտ սովդաքեարի ունեցածը ում ձեռն ընկաւ՝ կերան, զատ չէթողացին, կնիկը նեղութենի մէջ ընկաւ, էթում էր, հաց կիտում (մուրում), բերում տղէքանցը պահում։

Իմ միտը կարողը յատաջ լենութուն չտեսած ըլի եռտ նեղութուն։ Մի օր մէրը հաց կիտելուց չարչարված էկաւ տուն, օֆ, ասեց, էրնակ թէ Աստված իմ հաքին տանի, ըսդար տանջանք չի ըլի, որ ես տանջվում եմ։ Մենձ տղէն ասեց. Մէր, ուղղ Աստվածը էլի կաս, յատաւօտենց վե կըկենամ, կէթամ մի սովդաքեարի փէշ կը բռնեմ, կէթամ, Աստուած մի կտոր հաց կըտա։

Յատաւօտենց վե կացաւ, մի ճոթ հաց կար տալումը, թըշկից, ազլբիի մէջ գրուց, մէջքը կապեց ու գնաց, նի էլաւ մի պուճուր կոնդի գլուխ, տեսաւ զաթրների գնկզընկոցը գալիս ա, նստեց, լաց էլաւ։ Հէյ վախ, ասեց, իմ հէրնէլ մի ժամանակ սովդաքեար էր։ Տեսաւ մի սովդաքեար էկաւ, բարև տվուց ու կանգնեց, ասեց. Տղայ, ինչ ազա ես։

Տղէն ասեց. Սուրայի սովդաքեարի տղէն եմ։

— Հը՛, ասեց, ես քու հօր չրաղն եմ. էտ ինչ ա պատահել, բոյիդ գուրբան։

—Անցել ա, էլ քու տեսածը չկա։

— Ափսոս, հազար ափսոս, էլ զատ չունէք։

— Վա՛յ, վա՛յ վա՛յ, էրնակ քոռացած ըլէի, ես տեսնէի ոչ մօրդ հաց կիտելը։ Վեր յարի, էթանք ձեր տունը, քու մօր հետ խօսենք, թող վեր ունենամ տանեմ հետս, մի կտոր հացի տէր անեմ։

---

* Պատմեց 1912 թ. Օգոստոսի 28-ին Աշտարակ գիւղում ճոյն Գեորգ Մկրտչեան Գեորգեան վաքսուցամեայ անգրագէտ ծերունին։

Վեկացան՝ էկան տուն, բեռները գնացին։ Էկան տուն, մօրը որ տեհաւ՝ յաշկերը դուս էկաւ, էլ կարաց ոչ խօսալ։ Մի քիչ հաց հանեց ջիբիցը մի քանի վոսկի ավուց մօրը, ասեց. Նանի ջան, ես քու աղէն հետս կը տանեմ, հոգուս պարտքը ըլի, որ մի կտոր հացի տէր անեմ, ձեր ամակը իմ վրէն շատ ա։

— Դու գիտես, որդի, ամանաթ, ամանաթ, իմ աղէն քեզ ամանաթ։

Գնացին, հասան բեռներին, յանցան գնացին մի քաղաք։ Մի քանի օր ընտեղ առուտուր արին։ Տեհաւ սովդաքեարը, որ աղի խելքը յամէն բանի հասնըմ ա, շատ յուրախացաւ, ասեց. Ասածով ես սրան մի կտոր հացի տէր կանեմ։

Սովդաքեարի աղէն տեհաւ, որ թէ էս քաղաքըմը մի համբալ ըլի՝ ըլ վող կաշխատի։ Էկաւ մուննաթ արաւ սովդաքեարին որ յիրենց կացած օթախը էրկու տարի ժամանակի քրեհի տա յիրեն, յինքը մնա էդ քաղաքըմը՝ վող աշխատի։

Սովդաքեարն ասեց. Յարի ինձ լա, ինձ հետ էթանք, ես քեզ մի կտոր հացի տէր կանեմ։

Տղէն ասեց. Ես խնթրըմ եմ, ինձ թող ըստեղ։

Տղին թողուց ընտեղ, յինքը բեռները բարցեց, գնաց։

Սովդաքեարի աղէն ասեց. Էս քաղաքըմը ինձ մարդ ճանանչըմ չի, ես որ համբալութուն անեմ, ով ա ասելու թէ Սուրայի սովդաքեարի աղէն ա, ասել իմ տեղն ա։ Գնաց՝ մի փալան կարել ավուց, յանցկացրուց մէջքը, գնաց դանթարի (հասարակական կշիռ) տակը կանգնեց։

Մի ջհուդ էկաւ ասեց. Ա՛յ աղա, մի արբշիմի թայ ունեմ, ինչ սամ տանես մեր դուքանը։

— Էրկու մաջիթեա։

— Լաւ, ասեց, տար։

Առաւ շալակը, ջհուդը ընկաւ յառաջը՝ աղէն ետնուցը, ջահել վախտը, ուժը վրէն, թրոցրրուց։

Մրն էլ տեհաւ էն գիրցը մի մարդ էկաւ՝ ասեց.

— Ջհուդ, մեր հաշիւը ընչանք թի մնա։

Խօսքը յիրար հասաւ, ովին ջհրդին սրսանեցին, յիրար խառնրվեցին, թայը մնաց տղի շալակին. վեկալաւ, բերուց յիրա օթախը։

Ընենց յամէն օր միայար բանրմ էր էա աղէն, օրական մի երկու մաճիթիա տանըմ։

Յարի տես որ էա քաղաքի թաքաւորին մի հատ ախչիկ ունէր, քառասուն հատ էլ ջառիա ունէր։ Յարի տես որ համ նազրի յաշկն էր էա ախչկա վրէն, համ վազիրի։ Նազիրը գնաց մի ան-

ասուած պառաւ քթաւ, ասեց. Վազիրը կուզի թագաւորի ախչիկը առնի յիր ուղին, ինչ կուզես կըտամ, որ քանդես, իմ ուղին առնի։

Պառաւն ասեց. Ես ընչանք յիրիկուն ման եմ գալիս շինած բան քանդելու հըմար, էտ իմ բանն ա։ Դէ գնա ինձ հըմար մի ձեռք շոր առ, մի քահրըպար տէր ողորմեա առ, առնեմ ձեռս, էթամ։

Նազիրը գնաց մի ձեռք շոր առաւ, մի երկար քահրըրար տէրողորմեա առաւ, բերուց տուուց պառաւին, պառաւը հաքաւ, տէրողորմէն առաւ ձեռը, գնաց թագաւորի բալկոնի տակը, կանչեց, ասեց. Ա՜խ, թագաւոր, իմ յոշկերը դուս գա, որ դու բանից խաբար չես։ Թագաւորը տեսաւ որ մի պառաւ կնիկ բալկոնի տակը յիրան յիրան խօսում ա, կանչեց վիրև, ասեց. Էտ ինչ ախ ու վախ էր։

Ասեց. Թագաւոր, խաբար բանից խաբար ես։

— Ի՞նչ ա էլել, նանի ջան։

— Քու ախչիկը օրը հազար ուղի հետ նստում ա կանցում, բա դու ինչ թաւուբ նամուս ունես, որ թողում ես։

— Ի՞նչ ես ասում, նանի։

— Արդար եմ ասում. իմ նամուսը վեր չի կաչնում, էկա քեզ յիմաց տվի, ինչ ուզում ես արա, դու գիտես, ես էլ ծեր կնիկ եմ, իմ հոգին կորցնել չեմ։ Գիտես ընչեր ա անում, ընչեր ա անում։

—Նազիր, ըստեղ յարի, ասեց թագաւորը, կեթաս մի հատ դուքիկ շինել կը տաս մի մարդու բոյի, վեկունես, կը դաս։

Նազիրը գնաց բերուց, գրուց օթախը, դուռը շինեց, բալնիքը բերուց, տուուց թագաւորին։

Յառաւօտենց լիար բացվեց, վեղիրն էկաւ, թագաւորն ասեց. Դուքին վեկալ, տար ախչկանս տուն, մոդերիցը բռնա, դի դուքու մէջ, վեկալ բեր։ Վազիրը գնաց թագաւորի ախչկան դրուց դուքու մէջ, ճվճրվալով բերուց թագաւորի կուշար։ Գրկից մի համբալ բերուց, ասեց. Այ ապա, սա քեզ մի վոսկի, էս դուքին տար քցա սև ծովն ու յարի։

Համբալը դուքին շալակեց, վե կալաւ գնաց։ Հասաւ ծովի դրաղը, վե դրուց դուքին, ասեց. Մի բան որ յիրեք օրվա հախը ասել եմ, Ասաս վասքը շատ ըլի, գլուխս գնեմ դուքու վրին քնեմ, հատ կրցեմ ծովը, կեթամ տուն։ Գլուխը դրուց դուքու վրա, տեսաւ որ գաթրի զանգակի ձէն ա գալի, վեկացաւ նստեց։ Ասեց. Զլի իմ բերող սովդաքեարը ըլի, ամօթա իմ համար՝ վե կենամ, իմ վալանը պրեմ։ Վեկացաւ, յիրա վալանը պրեց, էկաւ տեսաւ՝ էկողը յիրան բերող սովդաքեարն էր։

—Ա՛յ տղա, ըստի ինչ ես անում։

—Ոտիդ մեռնեմ, մի քանի շահի փող եմ աշխատել, ըստեղ նստել ի, որ ճամփին մարդ պատահի, տամ տանի հասցընի մօրս, լաւ էլաւ որ դու պատահեցիր, առ էս մի քանի վոսկին, մըն էլ էս դութին, անարատ տանես տաս մօրս, ձեռք չտաս։

Սովդաքեարը դրուց դաթի բեռի մէջն ու քշեց գնաց, տարաւ տուաց սովդաքեարի կնկանը։ Պառաւը բաց արուց դութիկը, տեհաւ մի սիրուն ախչիկ վի կացաւ կանգնեց։

— Ախչիկ ջան, ինչ ախչիկ ես։

— Ես թաքաւորի ախչիկն եմ, քու հարսը, ինձ առել ա քու տղէն, էս էրկու օրն էլ կը դա։

Պառաւը տարաւ յիրեն օթախները շանց տուաց, պատմեց թէ յառաջ յիրանք մենձ սովդաքեար են էլել, հմի կարօտութէնի մէջ են, համա Աստուվ էլի կը տեսնեն լաւ օրեր։

Հարսն ասեց. Նանի ջան, մի քանի վոսկի ունեմ, առ տար, խուրդա, ինձ համար մի ձեռք տղամարթի շոր առ, բեր։

Պառաւը գնաց տղամարթի շոր առաւ բերուց, հարսը հագաւ, մազերը կոլոլեց կոխեց փափախի մէջը, դառաւ տղամարթ, դուս էկաւ քաղաքի մէջ ման էկաւ, ուստա, ֆահլա ըռնեց, մի ձեռք լաւ տներ շինեց, յամէն բան հազրեց նստեց, տպրեց։

Օրվա մի օրը անխելք ախպերը մտածեց, թէ իմ ախպէրը պըտի գար՝ չեկաւ, հլա էս ա ինձ համար ա զրկել էտ ախչիկը, էթամ կշտին քնեմ։ Գնաց մտաւ օթախը, ասեց. Բարի յիրիկուն, ախչի։

— Աստուծ բարին, ախպէր ջան, ասեց հարսն ու տեղիցը կանգնեց։

—Գիտես ինչ կա, ախպօրիցս զիր ա էկել, որ էտ ախչիկը քեզ հրամար ի զրկել, քշերը կշտին կը քնես, ցերեկը կեթաս քու բանիդ։

—Ամօթ ա, ախպէր ջան, ամօթ ա, իմ ախպէրն ես, ամօթ ա։

Իլլաճը կտրվեց հարսի, տեհաւ որ միտքը ուրիշ ա, կանիցը ըռնեց, քաշեց զրրա բալկոնը, տեհաւ բաց չի թողնում, վի կաւաւ ու քցեց նարդըվանի տակը։ Տղէն որ օյանմիշ էլաւ՝ տեհաւ որ արնի մէջը մկրտվել, քիթ, պատնդ ջարթվել ա։

Գնաց յերես մերեսը լվաց, գնաց մօրը ասեց. Ա՛յ մէր, մի գիր եմ ստացել ախպօրիցս, շատ նեղրմը հիւանդ ա, ինձ փող տուր էթամ հասնեմ ախպօրս, տեսնեմ մեռել ա՝ թաղեմ, սաղ ա՝ բերեմ։

Մէրը հանեց փող տուաց, նի ելաւ ձին, գնաց։ Հասաւ էտ քաղաքը, հարց ու փորց արուց, քթաւ ախպօրը։

— Ա՛յ տղա, խի՞ ես էկել. խէր ըլի, ի՞նչ խարար ա։

— Խէրն էլ գլխովդ դիպչի, շառն էլ։

— Ի՞նչ ա ըլել, ա՛յ տղա։

— Էլ ի՞նչ պըտի ըլի, մեր հօր անբմը կորաւ. էս դնա էն դախպին սըպանա աղատվենք, էս դուս արա։ Ընդար լրբութուն ա արել, որ ասեր ա շինել, փող կիտել, զարթարանք առել։ Ջհանդամ, մեր ասերի տեղը շինած չըլնէր, էլի ցաւ չէր։

Տղէն էստ իմացել էր, որ էտ ղութու մէջ թաքաւորի ախչըկանն ին դրել, ավին իրան, որ տանի ջուրը քցի։ Ախպէրը որ ընենց խօսաց, հաւատաց. ախպօրը թողուց ըսեղ, խանչալն առաւ, էկաւ։ Ամեն էլ ժամանակ էր, ձէնն էկել գետինը ծածկել էր։ Էկաւ տեսաւ որ յիրանց տան տեղը ընենց մի տուն կա, որ թաքաւորի պալատ ըլէր կասես։ Ջիուցը վեր էկաւ, ձին կապեց դըրսե, յինքը նի էլաւ վերև։ Դուռը բաց արուց, նի մտաւ ախչըկա կուշտը, ասեց. Էրը—անպամ, ընչանք ես լրբութուն անես, հօրդ անբմը խայտառակեցիր, էկար ըստեղ իմ հօր անբմն էլ խայտառակես։

Խանչալը խրեց էս կողքին, էն կողքին, մաղերիցը բռնեց քցեց բալկոնից ներքև, վեր էկաւ, ձին նի էլաւ՝ գնաց։ Ախչիկը մնաց ըսեղ, ձրնի վրա արնաքամ էլած։ Դու մի ասիլ մի սովդաքեարի կնիկ մնեալ ա, կնկա ա ման գալի զզուն, տեսաւ մի ախչիկ, ձնի վրա ընկած , կիսամահ էլած։

— Տղէք, ասեց, կանչեցրէք բեռները։

Բերուց էտ ախչկա արըննները սրբեց, բամբակի մէջ դրուց, բարձեց դախբին, գնաց։ Տարաւ մի թաքաւորանիստ քաղաք, հարցըրուց թէ ըստեղ լաւ լոխման կա։ Ասեցին կա։ Կանչել տվուց, էտ եարէքը տատն օրվա մէջ լաւացրուց։ Էկաւ ամառը. էրկու չադիր տվուց, մինը յինքն էր նստում, մինը թաքաւորի ախչիկը։

Մի քշեր միտքը փոխվեց, ասեց. Քսան բեռը հում արրշըմ ծախեցի, տվի լոխմանին անջաղ դրա եարէքը սաղացրի, էթամ կուշտը. թուշն էլ ա պաչեմ, սիրտս էլ ա հովանա։

Նի մտաւ չադիրը։ Հը՛, ա՛յ տղա, խի՞ ես էկել, խէր ըլի, ի՞նչ ա պատահել։

— Ըսկի, էկել եմ մի քիչ քէֆ անենք։

— Ամօթ քեզ հմար, մարթ էլ իրա վարձքը կըտա գեննովը, ամօթ քեզ հմար. հմի կեթանք ձեր տունը, կըփսակվենք, կըլնենք մարդ ու կնիկ։

Սովդաքեարը ամանչեց, էտ դառաւ էկաւ իրա չադիրը։

Լիսը բաց էլաւ, թաքաւորի ախչիկը վե կացաւ գնաց դըրսա

ծովի ղրաղը, որ յէրևսը լվանա։ Մի գեամբչի ապրանքը թափել էր. պտի ետ դառնար։

— Ա՛յ ապա, ասեց, որ հետդ դամ, կը տանես ինձ։

— Խլ՞ չեմ տանիլ, ուրախութիւնով։—Ա՛յ Աստու աչողութուն, ա՛յ Աստու աչողութուն, Աստուած որ տա՝ յիրա տառվը կը դա։

Ախչիկը նի ելաւ գեամին, գնացին։ Համա ի՞նչ թաւուր ա քշում գեամին, դու պրծար։

Գեամին հասաւ ծովի կէսը, գեամբչու միտքը փոխվեց. էկաւ դէրա ախչիկը։

— Ի՞նչ կա գեամբչի։

— Օխտը տարի ա կնիկս մեռել ա, կնկա կարօտ եմ մնացել, յարի մի քիչ քէֆ անենք։

— Ամօթ քեզ համար, գեամբչի, մարթ էլ արէն ծովի միջին էտ թաւուր լան կանի, էն որ ես քեզ պրտի տանեմ, կեթանք ձեր տուն, կը կանչես մարթիկ, կը փսակվենք։

Գեամբչին ամանչեց, տաղ արաւ։

— Ի՞նչ ունես ըսկի, գեամբչի, ասեց ախչիկը։

— Քեզ նման մի հատ ախչիկ ունեմ հասած, ա՛յ ախչիկ ա հա, ա՛յ ախչիկ ա հա։

Էկան ծովի ղրաղը դուս էկան, ախչիկն ասեց դայրղչուն. Գնա ախչկանդ վե կալ ըե իմ կուշաը, դու գնա տէրտէրին յիմաց տու՝ գա փսակվենք։

Դայրղչին գնաց յիրա ախչիկը ըերաւ, դրեց թաքաւորի ախչկա կուշան ու յինքը ետ դառաւ, գնաց դրա տէրտէրին։

— Թաքաւորի ախչիկն ասեց. Ախչիկ Ջան, ըսկի գեամի քշել գիտես։

— Էտ իմ գործն ա, շատ վարտ ես եմ քշում։

— Դէ յարի էթանք մի քիչ ման դանք՝ դանք։

Ելքանը (առագաստ) սարքեցին, դէրա դլխավորը գնաց գեամին։

Գեամբչին տեսաւ որ ոչ ախչիկ կա, ոչ կնիկ, ոչ էլ գեամի։ Էտ գեամին գնաց, կանչեց թաքաւորի սընընբմը դուս էկաւ։ Գեամին կանչացրին։ Կայէն թաքաւորը եռեսուն ութը ախչիկ ունէր, երկուսը պակաս էր, որ քառասունը թամամէր, որ էթար փսակվէր։ Ուրախացան, ասեցին երկուսն էլ Աստված դրկեց։ Էկան որ տանէին թագաւորի կուշաը՝ թագաւորի ախչիկն ասեց. Մենք ծովի ախչկերը ենք, էկել ենք թագաւորի հրամար, գնացէք թաքաւորի 38 ախչիկն էլ ըերէք, մի քիչ ծովի վրա ման դանք, ետ դանք էթանք փսակվենք։ Գնացին թաքաւորի եռե-

սունը ութ ախչիկը բերին. մատն դեամին, թաքաւորի ախչիկը քշեց դեամին։ Դեամին դնաց դէմ առաւ մի մէշի։ Դեամին կապեցին, վեր էկան։ Թաքաւորի ախչիկն յառաջ ընկաւ՝ դնացին։ Դնացին տեհան որ մէշի մէջ տեղը մի ձեռք տուն կա, նի մատն որ հրէս, քառասուն ձեռք հօրդան դոշակ ա քցած. աղջկերանց հրամայեց, որ տունն տալին, ջրջրհանեն, հօրդան դոշակը վերնեն թափ տան, էլ էտ քցեն։ Սարքեցին, յամէն մէկը մի հօրդան դոշակի վրա նստեցին, ինքն էլ նստեց յամենալաւ հօրդան դոշակի վրա։ Մութն ընկաւ, քառասուն հարամի նի մատն, տեհան քառասուն ախչիկ քառասուն հօրդան դոշակի վրա նստած, սուփրէն քցած հացրած։ Արմացան, դարմացան։ Որ Աստված տա, ըսենց կըտա։ Վրա պրծան ախչկերանցը։ Թագաւորի ախչիկն ասեց. Ձեր հարամբաշին ուրդ էք, յառաջ էկէք։ Յառաջ էկաւ հարամբաշին, ասեց. Ինչ կա, սիրունիկ ջան։

Թաքաւորի ախչիկն ասեց. Դուք էս ինչ ջուտա մարթ էք, մենք ծովեղէն ախչիկ ենք, էկել ենք ձեզ առնելու, յէրուց քշերով վե կըկենաք, էրկու ձիաւոր կը ղրկես քաղաք յամէն բան կը բերի, հարատնիք կանենք, յամէն մէկս մէկիդ հետ կը փոակվենք, կըլենենք մարթ ու կնիկ, կարգին կապրենք։

Հարամբաշին տեհաւ որ խելօք ա խօսում, ասեց. Յամէն մարթ յիրա եփրնջին վեր ունի, էթա ձիու կշտին դնի, ես էլ եմ գալի։

Հարամիքն յիրանց եավրնջիքը վե կալան դուս էկան, ախչկերքը դուրը ենտուց շինեցին, յառիկին թեք ընկան քնեցին։

Յառաւօտը շատ թէզ վեկացրրուց թաքաւորի ախչիկը. Դէ թէզ տուն ու դուս թամբդացրէք, յամէն բան սարքեցէք, որ էտա կը գան։ Հարամբաշին էրկու հարամի ղրկեց քաղաք, յամեն բան, բոլ գինի բերել տվուց։ Սուփրէն քցեցին, յամէն հարամի մի ախչիկա կշտին նստեց։ Թաքաւորի ախչիկն էկաւ հարամբաշու կըշտին նստեց, սկսեցին ուտել խմելը։ Եվ որ գլինները մի քիչ տաքացան, թաքաւորի ախչիկը վե կալաւ տասներկու ստաքան՝ դրուց մի ըսթնոցի մէջ, գինի ածեց տվուց հարամբաշուն, ասեց. Դէ խմեցէք էս իմ սիպտակ ծծերի խալի համար։ Ասեց, ու ծծերը շանց տվուց ու ծածկեց։ Հարամիքը գժուածի պէս տասներկու ստաքան յամէն մինը խմեցին։

Թաքաւորի ախչիկը, էլի տասներկու ստաքան լքցրուց տվուց հարամբաշուն, ասեց. Էս էլ իմ քառասուն յուսանի մազերի խաթեր խմեցէք, ասեց ու յուսերը բաց արուց։

Հարամբաշանց խելքը գնաց. խմեցին, վեր ընկան։

Թաքաւորի ախչիկն ասեց. Դէ ախչկերքը, յամէն մարթ յի-

բա մարթի շորերը հանի՝ յինքը հաքնի։ Յինքն էլ հանեց հարամ-բաշու շորերը՝ հագաւ, յինքն էլ յիրա շորերը հարամու կողքին դրուց։

—Դէ, ասեց, վէր կացէք, էթանք։ Գնացին ձիերը քաշեցին, նիլան ու գնացին։ Գնացին հասան մի քաղաք։ Տեհան քաղաքը շատ խառնըված ա։ Ասեցին. Էս ինչ ա էլել։

— Բա չես ասի, ասեց օղարաշին, մեր թաքաւորը մեռել ա, թաքաւորական դուշը քցըմ են, ում գլխին վեր էկաւ՝ նա կըլի թաքաւոր։

Մէկ էլ տեհաւ, էդ դուշը էկաւ յիրա, ախչկա գլխին վեր էկաւ։

Ժողովուրթը մնացին զարմացած, ասեցին. Մենք օտարական թաքաւոր չենք սիրում, թաղա քցեցէք դուշը։

Ախչկանը տարան մի օթախի մէջ պահեցին, դուշը մըն էլ քցեցին։ Ղուշն էկաւ, բուխարու երդիկովը մտաւ էլի էտ ախչկա գլխին վեր էկաւ։

Ժողովուրթը մաթալ մնաց, ասեցին, որ մեր թաքաւորը սա ա, որ սա ա։ Յանցնեցին թախտը յիրան։

Թաքաւորի ախչիկը դուս էկաւ տեհաւ որ քաղաքը շատ անկարգ քաղաք ա, բերուց կարգեր դրուց, ընենց որ մարթ չէր կարալ եռալ (շարժվել). օրական տասը մարթ տարաղաջի էր քաշըմ (կախում էր)։ Յիրա նաղիր վաղիրը բիրադի դուս արուց, յիրա կշռի ախչկանցը դրուց, որ յիրա սեկրետը (գաղտնիքը) մարդ չիմանա։ Եստ դուս էկաւ մանդալու, տեհաւ քաղաքի գլխին մի շատ լաւ յաղբուր կա, բերուց յիր շիքիլը ախչկա շորերով քաշել տվուց, դրուց յախբրրի կուշտը, մի հատ էլ դարաւուլ դրուց, որ ով որ դա ըտեղ ջուր խմի, տենի էտ պատկերը, ախ քաշի՝ բռնեն բերեն յիրա կուշտը։

Մի քանի օրից ետը՝ մի մարդ ու կնիկ էկան նստեցին էտ յախբրրի գլխին, ջուր խմեցին, գինջացան, տեհան էտ պատկերը, ահ քաշեցին, լաց էլան։ Դարաւուլը դրանց բռնեց բերուց թաքաւորի կուշտը։

Թաքաւորը դրանց տեհաւ՝ յաշկերը լքցըվեց, գնաց էն օթախը, ասեց. Տարէք էտ մարդկանց կարգին պահեցէք։

Էտ մարդիքը ուրախ էլան, կնիկն ասեց. Գլուխ քար, յամէն որ կեթամ էտ պատկերը կըտեսնեմ, կը մխիթարվեմ։

Մի երկու օր էլ յանց կացաւ՝ մի ջահել տղա էկաւ էլի էտ յաղբրի կուշտը, ջուր խմեց, տեհաւ պատկերը, ախ. քաշեց։ Դարաւուլը դրան էլ բռնեց, բերուց թաքաւորի կուշտը։ Թաքաւորը հրամայեց, որ դրան էլ մի լաւ օթախ տան։

Ասեց. Ձկամ մնում։

Սումբաթը հանեց փողը ավեց, էա չրաղը առաւ, գնաց։

Սումբաթը կանչէց, ասեց. Որ էթում էս, գնա, մէր տունը, խանըմիդ յէրէսին թքա, անցի, գնա։

Զրաղը վէ կացաւ գնաց։ Մէկ օր գնաց, հինգ օր գնաց, գնաց հասաւ Սումբաթէնց տունը։ Դուռը ծէծէց, դարավաշը դուս էկաւ, դարավաշի հետ բանցրացաւ խանըմի օթախը, դուռը բաց արէց. Ամօթ քեզ համար, ասեց, թքէց ու հետ դառաւ։

Խանումը դարավաշնէրին հրամայէց, թէ դրան բռնէք, տէնանք ընչի համար պըտի իմ յէրէսին թքի։

Դարավաշնէրը բռնեցին, ասեց. Ընչի համար թքէցիր իմ յէրէսին։

Ասեց. Ընդրա համար թքէցի, որ քու յէրէսիցը քու մարթը համ սաղ կարողութունը կորցրեց, համ դառաւ նոքար։

— Էտ ինչ էս ասում, ասեց, էտ ինց էլաւ։

Զրաղն ասեց. Ընէնց մի բաղրկեան ա էկէլ, քշերը քու ծոցին քնել ա, պատկերդ քաշել ա, տարել ավ Սումբաթին։

— Թէ՝ ղորթ։

— Ղորթ։

Ախչիկը մտածեց, թէ էրեսում ա էն պատաւի արածը կըլնի, չունքի բաղրկեանը էկաւ, ես ծէծէլ ավի, դուս արի, ինձ չտեսաւ, էլ իմ պատկերը ինց պըտի քաշէր։

Ասեց. Ի՞նչ տեղ ա աղէդ։

Ասեց. Ֆըլան տէղը նոքար ա։

Ասեց. Ընդիան յուր պըտի էթայինք։

Ասեց. Պըտի էթայինք Թէհրան։

Ասեց. Մի ընէնց ճամփա գիդաս, որ մենք մի էրկու օր յառաջ էթանք ընդէղ։

Ասեց. Էրկու օր չէ, յիրեք օր յառաջ տանէմ քեզ ընտէղ։

— Դէ, ասեց, առ քեզ փող, գնա էրկու հատ լաւ ձի առ, էրկու ձեռք էլ ասպարը առ, մի ձեռք թաքաւորական թամուզ շոր առ, մի ձեռք էլ վեզիրի շոր առ, ըէ։

Զրաղը գնաց քամմա առաւ, ըէրէց։ Ախչիկը շորերը փոխէց, թաքաւորական շորերը հագաւ, ասպարը կապէց, ձին նիլլաւ գնաց։ Զրաղն էլ վեզիրի շորերը հագաւ, ասպարը կապէց, ձին նիլլաւ ընկաւ հետը։

Գնացին, մի տասն օրից հետը հասան Թէհրան քաղաքի դրաղը, յիմաց ավին թաքաւորին, թէ Ինդլիզի թաքաւորի տղէն դալիս ա քեզ տէսութուն։

Թաքաւորը զօրք ա դրկում յառաջը, պատվով վէր ա ունում

համբալ ի, ինձ կանչեցին, էտ զուլթին տվին ինձ, թէ տար քցա սև ծովը։ Վե կալա տարա սև ծովի ղրաղը, ինձ ընրող սովդաքեար կար, տեհա էկաւ, զուլթին տվի յիրան, թէ տար մեր տունը, տուր մօրս։ Ետո մի վախտ քաշեց, տեհա մի անխելք ախպէր ունէի, էկաւ։ Հարցրի խի՞ ես էկել, ա՛յ տղա։ Ասեց. էտ ղրկած ախչիկդ հաղարների հետ նստրմ ա կանցրմ, ես էլ նամուսի տէր՝ ասեցի. Ախպէր, դու իմ տանը կաց, ես հմի կըգամ։ Վե կացա նիլա ձին, գնացի հասա մեր տունը, տեհա մեր տան տեղը մի ընենց տուն կա, որ Թաքաւորն էլ չունի էտ տներից, մտա նեքսև, խանչալս քաշեցի, ըստի ընդի ծակեցի, մազերից բռնեցի՝ բալկոնից քցեցի ներքև, վեր էկա, ձիս նի էլա, էկա ախալօրս կուշտը։ Որ գործից պրծա, վե կացա էկա մեր տունը, մօրիցս հարցրրի, թէ էն ախչկա վարքն ու բարքը ինչ թաւուր էր, մէրս ասեց, որ անարատ էր։ Խիղճս ինձ տանջեց, վե կացա աշխարհքէ աշխարհք ման գալով էկա հասա էս քաղաքը։

— Յիմացար, քու ղրկած ախչիկը անարատ էր, հարցրուց ախչիկը։

— Անարատ էր, Թաքաւոր։

— Ժողովուրթ, յիմացէք, որ անարատ էր։

— Ա՛յ սովդաքեար, յառաջ յարի. դու խի՞ ախ քաշեցիր, քեզ ինչ ա պատահել։

— Ես էլ, Թաքաւոր, բեռներս բարձած էթըմ ի, տեհա էտ ախչիկը արնի միջին մկրտված ընկած ա բալկոնի յառաջ, ես էլ կնիկ չունէի, վե կալա էտ ախչիկը, գրի բամբակի մէջ, վե կալա տարա մի քաղաք։ Գնացի գտա Լոխմանը, Լոխմանն էկաւ էտ ախչկան լաւացրուց։

Օրերի մի օրը, դէ մարդ ի, գնացի ախչկա չադիրը, ընենց մի բան ասեց, որ մնացի մոլորած։ Յէքսի օրը վե կացա, տեհա որ չադրրի միջին ախչիկ չկա։ Ես էլ ման եմ գալիս, տեսնեմ ես ինչ ի արել գրան, որ նեղացաւ գնաց։

— Է՛, բան ու ման էլաւ ըսկի, ասեց Թաքաւորը։

— Չէ՛, չէ՛, հոբիս վկա, չէ՛։

—Ժողովուրթ, յիմացէք, որ էտ ախչիկը անարատ ա։

Կանչեց գեամբչուն։ Գեամբչին էկաւ կանչեց։

— Գեամբչի, դու խի՞ ախ քաշեցիր։

— Էտ ախչիկը ինձ պատահեց, Թաքաւոր, վե կալա գեամով բերի գրաղը։ Ինձ էլ մի շատ լաւ ախչիկ ունէի հասած։ Ինձ՝ թէ դու գնա ախչիկդ բե իմ կուշտը, դաւ գնա տէրտէրի, որ գա փատկի մեզ։ Գնացի ախչիկս բերի, գրի գրա կուշտը, ես գնացի

տէրտէրին, տէրտէրը բերի տուն, ետ դառա, տեհա ոչ ախչիկ կա, ոչ գեամի։

— Որ նի մտաք գեամին, բան ու ման էլաւ։

— Չէ, թաքաւոր, չէ։

— Դէ դու էլ ըտի կանանի։

Կանչեց կայէն թաքաւորին, ասեց. Կայէն թաքաւոր, դու խի՞ ախ քաշեցիր։

Ասեց. Ա՛յ քու տունը շինվի, իմ եռեսունըութ ախչիկն ա տարել էտ ինաշէնը, ես չման դամ, ով ման դա։

— Դասար, կանչեց թաքաւորը, կորիր էս թաքաւորի շինքը. եռեսունը ութ ախչիկանով դու չէիր ռաղի ընըմ, հըլա էրկուսն էլ իր ուղըմ։

Դասարը կայէնի շինքը կորեց, ջանդակը տարան քցեցին ասլան դափլանին։

Կանչեց հարամբաշուն։

— Հարամբաշի, դու խի՞ ախ քաշեցիր։

— Էտ քառասուն ախչըկերքը ինձ ըռաստ էկան, մեզ հարփացրին, մեր շորերը հանեցին, հաքան, փախան։ Հմի ես ման եմ դալի, որ դրա ծծերը կոտորեմ, իմ ջանը դինջանա։

— Դասար, ասեց թաքաւորը, դրա գլուխն էլ կորա։

Գլուխը կորեցին, ջանդակը տարան քցեցին ասլան դափլանի յառաջը։

Թաքաւորը կանչեց տեղիցը, կանչեց գեամըչուն, ասեց. Էս քու ախչիկն ա, վե կալ։ Էս մի ախչիկն էլ քեզ կնիկ, գեամիտ էլ ֆլան տեղը կապած ա, նիլ գնա քու բանին։

Կանչեց սովդաքեարին.

—Սովդաքեար, կնիկ առե՞լ ես թէ որբվերի ես։

— Որբվերի եմ։

— Էս մի ախչիկն էլ տվի քեզ, վե կալ տար, էս էլ քու տասներկու բեռ աբբրշըմի փողը։

Կանչեց հօրը, ասեց. Թաքաւոր, որ էս տղէն էն ղութին տանէր քցեր ծովը, ի՞նչ կանէիր։

— Հէչ բան, որթի։

—Որ ըտենց ա, էտ տղի վարձքը քոմմեքից շատ ա, թաքը վե ղրուց ղըլխիցը, ես եմ քու ախչիկը, էտ տղին կը հանեմ։

Ժողովուրդը մնաց մաթալ։ Դառաւ ժողովըրթին՝ ասեց. Իժդար հըմի որ ես ձեր թաքաւորն ի, ինձնից մի պակասութուն տեհա՞ք։

— Չէ, թաքաւոր, չէ, չէ, չէ։

— Ես յանցընում եմ էս տղին, թէ կուզէք իմ մարթին թաքաւոր դնէք, մենք կը կենանք, թէ չէք ուզիլ, ես իմ մարդը վէ կունեմ, կեթամ իմ տունը։

Ժողովուրթն ասեց. Որ կնիկը ըդդար խելք ունէր, մարդն իժդար կունենա, մեր թաքաւորն ա ու մեր թաքաւորը։

Բերին օխտն օր, օխտը քշեր հարսանիք արին, էտ տղին ու ախչըկանը փսակեցին, դրին թաքաւոր։ Հէրն ու մէրը մխիթարվեցին, դնացին յիրանց թաքաւորութեան վրա։ Նրանք հասան յիրանց մուրաղին, դուք էլ հասնէք ձեր մուրաղին։

Երկնքից իրեք խնձոր վէր ընկաւ, մինն ասողին, էրկուսը լսողին։

ԳԻՒԼՇԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Աշտարակ *)

Ժամանակով կար մի ախքատ մարդ, կենում էր Շահ—օղլի Շահաբասի թագաքում: Ինչ ասած Շահ օղլի Շահաբասն էլ ժառանգ չունէր. յիրա վրին պաս էր դրել, որ ընչար յիրան ժառանգ չելի, չեմա յիրան Գիւլշան բախչէն:

Օրերի մէկ օրը էտ ագքատն ու կնիկը յիրար հետ խօսացին: Կնիկը մարդին ասեց. Ա՛յ մարդ, թէ որ էրկու շալակ ցախ բերես, մեր հաթը կուտենք, մեր հանը կը պէնք, ժամանակին կը հարկաւորի մեզ, հիւանդութուն կա, թուլութուն կա: Մարդն ասեց. Շատ լաւ ես ասում, կնիկ, յէքուց շատ թէզ ինձ ձէն տուր, որ ես էթամ, էրկու շալակ բերեմ: Մեր հանը կը տամ հացի, մեր հանը կը բերեմ կը տամ քեզ՝ կը պրէնս:

Գշերն աբլորը կանչեց, կնիկը ձէն տուց. Մարդ, վե կաց, վախտն ա, անջախ էթաս գաս:

Էտ մարդը վե կացաւ, յէրեսը լվաց, յիրա Աստուն փառք տուց, ասեց. Ա՛յ կնիկ, ես գնացի, դուռդ զայիմացրու: Վե կացաւ գնաց ծովի դրացը, տեսաւ իրեք մարդ գիր են գրում:

Ասեց. Ա՛յ մարդ, էդ ինչ չախ էք էկել, որ ինձնից յառաջ էք ընկել, ասդ ցախերը թոփ էք արել, բա ես ինչ պրտեմ անեմ:

— Ա՛յ մարդ, ասեցին. մենք ցախ թոփ անող չենք:

— Բա ի՞նչ մարդ էք:

— Մենք լիսն ու մութը բաժանողն ենք:

— Ոտիդ մեռնեմ, ընձ էլ իլլաճ կարաք անի՞ լ, էթալ գալով, ցախ կրելով իլլաճս կարվել ա: Լաւ իմացէք, որ ժառանգ էլ չունեմ ինձ:

— Ա՛յ մարդ, քեզ Աստուած բան շատ ա տվել:

Ագքատն ասեց. Ի՞նչ:

---

*) Պատմեց 1912 թ. օգոստ. 27-ին Աշտարակ գիւղում նոյն Գեորգ Մկրտչեան Գեորգեան վարսուցամեայ անգրագէտ ծերունին:

— Աստված քեզ ավել ա մի ջուխտ որդի, մինը պըտի արևելի թաքաւորութիւնը տիրի, մինը արևմըտի թաքաւորութիւնը պըտի տիրի։ Որ ըտենց շատ խնդրըմ ես, ծերունի, յարի ես քեզ մի հատ ձու տամ, որ քշերը լիս տա, իսկ ցերեկը դնես ամանի տակ։ Յուրըշի բան չասես։ Յամէն յիրիկուն ձուն կը դնէք ձեր առաջը, յամէն մէկդ քառասուն ծունդը կը դնէք, «Եկեսցէն» կասէք, Աստված կաղաչէք, ու կը մտնէք ձեր տեղը։

Էտ մարդը ձուն առաւ, դրուց ծոցը, ցախը շալակեց, էկաւ բաղարը, ծախեց, փողն առաւ դնաց տուն։

— Է՞ կնիկ, ասեց, յաշկդ լիս ըլի։

— Ա՛յ մարդ, ի՞նչ ա պատահել։

— Կնիկ, խօսալ մի, որ Աստված մեզ ավել ա։

— Ի՞նչ ա ավել։

— Էս ձուն ա տվել։

— Ա՛յ քու տունը շինվի, մեր տունը լիքը ձու ա, դրա էլածն ի՞նչ ա։

— Ա՛յ կնիկ, էս ընենց ձու ա, որ քշերը լիս կը տա, էլ ճրագի ծախս ունենալ չենք։

— Հըմի տենենք, ա՛յ մարդ։

Էկաւ մութն ընկաւ, հին կարպետը քցեցին ոնների տակը, չունէին զաթի, հէնց էտ էր, ձուն բերին դրին յառաջները, սկսեց ձուն լիս տալը, չորս պատը լիս դառաւ։

— Ա՛յ մարդ, հատատատ որ Աստված մեզ ավել ա։

Մարդ ու կնիկ սկսեցին «եկեսցէ» ասելը և քառասուն ծունդը դնելը։

Էտ էլաւ յիրանց պարտքը, որ յամէն յիրիկուն աղօթքները անեն։

Շահ օղլի Շահաբասը հրամայեց դալալին, որ ոչ մի տեղ ճրագ չը պըտի ըլի, որ յինքը պըտի քշերը ման դա, քաղաքը շատ անկարգացել ա, տենի էդ լրբութունը ինչ տեղ ա։

Յիրան վազիրին հրամայեց. Երկու ձեռք դարվիշի շոր կը բերես։ Վազիրը գնաց, երկու ձեռք շոր բերուց, մինը յինքը հաքաւ, մինը վազիրը։

Քշերը սկսեցին ման գալը։ Ասեց. Վազիր, նիլ մի բարձր տեղ, տես ինչ տեղ ա ճրագ Քրեքում։

Վազիրը նի էլաւ մի բարձր տեղ, ասեց. Թաքաւոր, ոչ մի տեղ ճրագ կա ոչ. մէնակ քաղաքի տըրամը մի ճրագի շաղաւուրթ ա Էրեքում։

— Էթանք, ասեց, գողերը ըտեղ կըլեն։

Գնացին հասան էդ տիքատի տունը։

— Դիտես ինչ կա, վաղիր, ջահել ժամանակդ ըսկի անկարքութիւն արել ես։

— Ես անկարգ մարդ չեմ, նեռոզութիւն։

— Որ անկարգ մարդ չես, խի՞ չես ոնեերդ հանըմ, որ թըզկոց չըլի, յիմանան։ Դէ վե կաց նիլ (բարձրացիր)։

Վաղիրը նի էլաւ հերթիկը, թամաշ արուց, տեհաւ մի մարդ, մի կնիկ թէք ընկած քնած են, մի կրակ մի քերեղանի մէջ դրած վառվըմ ա։

— Թաքաւոր, իմ ասելով չես հասկանա, դու էլ նիլ, տես ինչ կա։

Թաքաւորը նի էլաւ կտուրը, տեհաւ մի կնիկ մի մարդ քնած են, ընենց որ կոտորես յիմանալ չեն։ Տեհաւ քերեղանի մէջ դրած մի ձու, լիս ա տալի։

— Ա՛, նաղիր, ասեց, իմ խաղնի կորած քարն ա էդ, էս լաւ էլաւ որ գթանք։

— Դէ վեր յարի դուռը նշան արա, որ յառաւօտենց կանչենք էդ մարդը տարադաճ քաշենք (կախաղան հանենք)։

Լիսը բաց էլաւ, վե կացան, մարդը ասեց կնկանը. Դէ կնիկ, իմ պարանը տու, ես էթամ ցախի։

Կնիկը վե կացաւ, պարանը տվուց մարդին, դուռը ծեծեցին։

— Ի՞նչ մարդ ես, այ մարդ։

— Յարի, թաքաւորը թէզ կանչըմ ա քեզ։

— Ա՛յ մարդ, ես ի՞նչ եմ արել, իմ արածը ի՞նչ ա։

Էրկու բուռնցք տվուց էդ աղքատի գլխին, թէ խօսալ մի, գնա յառաջ, տարաւ։

Տարաւ Շահ—օղլի Շահարասի կուշտը։ Հասնելու պէս օխտը հետ գլուխ տվուց, ութ դիանդա ձեռը կապեց կաննեց։

— Ա՛յ մարդ, ասեց Շահարասը, էն քարը քեզ ով ա տվել։

— Թագաւորն ապրած կենա, ինձ ծովի զրաղից լիսն ու մուքը բաժանող իրեք մարդ են տվել։

— Խափիլ մի, շլինքդ կը կտրեմ։ Զէն տվուց, մի միլչի (աչքեր հանող) և մի խանի դասաբ էկան կշտին կաննեցին։

— Թաքաւոր, ինձ սըպանիլ մի, դուզն են ասըմ, լիսն ու մուքը բաժանողն ա տվել ինձ։

— Դէ որ ընենց ա, կեթաս էդ քարը կը վերունես կը բերես կը տաս ինձ, ինչ որ արժողութիւնն ա, ես փողը կը տամ։

Ըսկսեց աղաչելը թաքաւորին. Ինձ տեհար հօ, թաքաւոր, ես փախչողը չեմ, կը բերեմ օխտն օր եղը կը տամ քեզ, ինձ օխտն օր ժամանակ տուր։

—Դէ, գնա, քեզ օխտն օր ժամանակ։

Էկաւ տուն, լաց ըլելով ասեց. Է կնիկ, Աստված տվուց ու տարաւ։

—Ի՞նչ ա ըլել, ա՛յ մարդ, ի՞նչ ա էլել, պատմա տեսնեմ։

— Քարը պըտի տանք թաքաւորին, դրա իլլաճը ի՞նչ կըլի, որ քարը կէս ըլի, կէսը տանք թաքաւորին, կէսը մնա մեզ։ Յարի, օխտն օր ժամանակ ա տված, օխտն օր պաս ու ծոմ պըհենք, լաց ըլենք, Աստված աղաղակենք, բալքի քարը էրկու կտոր ըլի, մինը տանք թաքաւորին, մինը մնա մեզ։

Օխտն օր մարդ ու կնիկ ծոմ ու պաս պըհեցին, ու աղաչեցին Աստուն, օխտն օրից յետոյ քարն էլաւ էրկու կտոր, մինը տարան թագաւորին, մինը մնաց յիրանց։

Մի քշեր անկարծ քնած ին մարդ ու կնիկ, կնիկը զարթնեց, մարդին ասեց. Ջեռդ բեր հըլա։

Մարդը տարաւ ձեռը, դրուց կնկա փորին, տեհաւ էրեխէն փորի մէջը հաղըմ ա։

— Դէ, ասեց, յարի էս կողքիս թամաշ արա։

Տեհաւ որ էրկու էրեխա ա։

— Մարդ, ասեց. Աստված տվել ա մեզ, թէ որ բարի ծնունդ ըլենս։

Ինենը ամիս, ինենը օր, ինենը հրոպպա թամբմեց, էդ կնիկը ծնեց էրկու տղա։ Շատ շնորքով տղէք, որ արևին ասըմ ին դուս մի գալ, որ ըստի մենք կանք։

Մի ժամանակ յանցկացաւ, ախքատը սկսեց մանգալ, որ յիրան քաւոր քըթնի. որդի դիպաւ, ըլող չելաւ։

— Է, կնիկ, ասեց, որ ըտենց ա, պէտք ա ման գամ դրանց տվողին քթնեմ, որ գան յիրանց տված հարամը հալալեն։ Դէ կնիկ, ինձ հըմար էրկու հաց կապա։

Կնիկը հացը կապեց, էդ մարդն առաւ ընկաւ սար ու ձոր, գնաց հիւսիսային սարի մէջը մտաւ, տեհաւ էդ իրեք մարդը ըտի նստած, ջրի ղրաղին գրըմ են։

— Բարև ձեզ, ասեց, ինձ անգին քար ընձայող մարդիկ. էկէք ձեր տված էրէխէքը հալալեցէք, ընդար անճար եմ, որ ինձ քաւոր ըլող կա ոչ։

— Դէ գնա դու, աղքատ, յառաւօտը շատ թէգ ես Շահօղլի Շահաբասին դռնաղ եմ, Ղերեխի մինը ես վե կունեմ, մինը Շահաբասը։ Կեթաս ձեր տունը արխէին, դուռ ու տունդ թամուզ կը սրբես, կը ջրջրհանես, որ գանք, թամուզ տենենք քու տունդ։

Վէ կացաւ, էդ մարդկանց մինը մի ջահել տղա էր, գնաց Շահաբասին դռնաղ, ընենց նստեց, կաննեց, որ Շահաբասը մնաց մաթալ, յիմացաւ որ դա էլ թաքաւոր ա։

Ասեց. Թագաւոր, քու ախքատներին խի՞ չես թամաշ անում (նայում)։

— Ի՞նչ ա էլել, թագաւոր ախպէր։

— Գիտես ի՞նչ, թագաւոր ախպէր, վե կը կենաս բռնած մարդկանց միջին անմեղ մարդ շատ կա, կազատես, փակած դուռ ունես՝ բաց կանես, բաց դուռ ունես կը փակես, լսել եմ որ քու Գիւլշան բախչի դուռը փակ ա, էն էլ բաց կանես, ձեր տաղիցը ընչաը ախքատի տունը խալիչա կը փռես, շամադանները կը գնես էս գիրը, էն գիրը, յամէն մի շամադանին մի դարաւուլ կը գնես, որ չանցնի ճրագը, էթանք էտ ախքատի էրեխէքը մինը ես վեր ունեմ, մինը դու։

Ուրախութիւնով ունթունեց թագաւորը. վե կացան գնացին, Երեխու մինն յինքը վե կալաւ, մինն էլ Շահարամը, տարան եկեղեցի, պատարագով կնքեցին, բերին դրին սանամօր գիրկը։

Էտ լիսն ու մութ բաժանող թագաւորն ասեց. Թագաւոր ախպէր, եվ որ էս ադէքը կը մենձանան, քու ձեռով կը տես կարգալու։

— Որ բանից ա, ասեց Շահարամը, որ ադէն լաւ էլաւ, էն իմ ա, կը վերունեմ ինձ, ինձ ժառանգ չունեմ։

Ելէս ախքատը սկսեց յիրա ցախ բերելը։ Նաչարի ադէն թէզ կը մենձանա, ութ-տասը տարեկան դառան ադէքը, կնիկը մարդին ասեց. Էլ ինչ դարդ ունենք, թագաւորի ադէս քաւոր ունենք, գնա թագաւորին ասա մեր Երեխանցը տա կարգալու։

Ազգատը վե կացաւ, շրշկիլ մրշկիլ (արագ արագ) գնաց թագաւորի կուշտը։

— Ի՞նչ կա, սանահէր։

Էրեխէքանց յուսումի վախտն ա, թագաւորն ապրած կենաս։

— Դէ գու գնա տուն, յուսու

Հէրը վե կացաւ, գնաց էրեխանցը բերուց, ասեց. Իմ ունեցածը էս երկու էրեխէն ա, ձեզ փէշքաշ։

Հաքցրին թագաւորի բերած շորերը, լենթը կապեցին կռանը, ընչար կարել կապելը տասներկու աշըղ էկան։ Դէհ, ասեց Շահարասը, ածեցէք, էթանք մեր բախչէն։ Դէհ, ինաք բարով, սանամէր ու սանահէր, մենք գնացինք։

Շահարասը մի էրեխու կուռը բռնեց, թաքուհին մի էրեխու կուռը բռնեց, սաղով սաղանդարով գնացին դըրա բախչէն։

Նի մտան բախչէն, յամէն բան հազիր էր, նստեցին, կերան խմեցին։ Մըն էլ տեհան մի ջուխտ բիլբուլ էկան, վեր էկան էտ տղէքանց վրին, մինը կաննեց մի տղի գլխին, մինն էլ կաննեց մի տղի գլխին։ Ըսկսեցին խօսալ։

Թաքուհին ասեց. Թաքաւոր, էրնակ յիմանայինք էս բիլբուլների ասուածունը։

Պուճուր տղէն ասեց. Թաքաւոր, որ ինձ իրաւունք տաս, ես կասեմ։

— Իրաւունք ա, որթի, ասեց։

— Բիլբուլն ասըմ ա, որ ավսոս Շահարասի աշխատանքը, մինս պտի արևելքի թաքաւորութունը ըստանանք, մինս արևմտի թաքաւորութունը ստանանք։

— Թաքուհի, պտի Աստված մարթիս տա, ասեց թաքաւորը, խալխի տղէն մարդի տղա ըլիլ չի։

Մենձը վե կալաւ թէ, թաքաւոր, ջահելի խօսքն էլ ես վասմի դընըմ։

Թաքաւորն ասեց, թէ՞ որ ըտենց ա, բախշեցի ձեզ, իմ ամակը թող զուր չը կորչի։

Ըտեղից վե կալաւ էկաւ էրեխանցը դըրա տուն, յիրա թախտը, կանչեց վարժապետին, թամբահ տվուց ասեց. Վարժապետ, քանի տարըմը մի էրեխէն յուսումը կաւարտի։

Ասեց. Օխտը տարըմը, թաքաւոր։

—Էս երկու էրեխէն կըտանես, յուսում կը տաս։

Վարժապետն առաւ տղէքը գնաց, օխտը տարին թամամեց, թաքաւորը վե կալաւ թաքուհուն, յիրա տասներկու վազիրներին գնաց յուսումարան, զուռը բաց արուց. վարժապետը, սաղ յուսումարանի մոնթերը տեղըներիցը կաննեցին. էն երկու բլբուլը, որ բախչըմը տղէքանց գլխին խօսըմ ին, էկան փանջարէն կաննեցին. շիշըխկացրին։ Թաքաւորը ասեց. Փանջարէն բաց արէք, թող էտ բիլբուլը գա։

Բիլբուլն էկաւ, յամէն մինը մընի գլխին վեր էկաւ։ Ըսկսե-

ցին խօսալը։ Շատ խօսացին, թաքաւորը հրամայեց թէ իրեք հարիւր տղի միջին ով կարա էտ ղշի ասուքունը ասի։

Սմա պուճուր ոանիկը մատը բանցրացրուց։ Ասեց, Թաքաւոր, պատմեմ։

Ասեց. Պատմա, որթի։

— Բիլբուլն ասըմ ա, որ հազար ափոս թաքաւորը, որ ավել ա մեզ յուսումի, մինս պտենք արևելքի թաքաւորութունը տիրել, մինս արևմուտքի։

Շահարասը վարժապետի հախիաթը տվուց, ասեց. Դէհ, էկէք գնացէք, ձեր մուրազին հասէք։

Տղէքը գնացին յիրանց հօրն ու մօր կուշտը, մեան բարով արին, ընկան ճամբա գնացին։

Շատ ու քիչ Ասոված գիտէր, գնացին, տեհան ճամբէն էրկուատակվեց։ Դէհ, ախպէր, ասեց, մեաս բարով, էս իմ ճանփէն ա, էտ էլ քու ճամփէն ա։ Էս մինը կենթա արևելք, էտ մինն՝ արևմուտք։

Մենձ ախպէրը շատ գնաց, քիչ գնաց, մէշի մէջ մութն ընկաւ. տեհաւ մի յաղբուր կա, ասեց. Գենին մեամ, ինձ կը փասեն, ուելի լաւ ա ծառը նիլնեմ, քըշերը կենամ, յառաւօտենց ընկնեմ ճամփէն։ Արևելքին մօտացել էր, նիլաւ ծառը, քշերը յանցկացրուց։

Արևելքի թաքաւորի աղէն աւչի էր, սարը ման էկան, բերուց որ ձին էտ յախրըրըմը ջրի, ինչ արուց, ձին ջուր չը խմեց, դու մի ասիլ տղի պատկերքը ընկել ա ջրի մէջը, ձին դրանից հուշտ ա ըլըմ։ Մի զաֆիլ թամաշ արուց ծառին, տեհաւ որ մի սիրուն տղա կպած ա ծառիցը։

— Ա՛յ տղա, դու չես տենըմ, որ ես իմ ձիուն սըպանեցի, մարթ ես, թէ հրեղէն ես։

— Չէ, ախպէր, ես էլ քեզի պես մի մարթ եմ։

— Դէ վեր յարի, տենենք ո՞ւմ տղէն ես, ով ես։

— Ես, ասեց Շահ-օղլի Շահարասի մենձ տղէն եմ։

— Բա յո՞ւր ես էթըմ դու։

— Ես մի սիրուն ախչկա եմ ման գալի։

—Էտ քու ասածը իմ տանը կա, դէհ իմ ձին բռնա, ես խաբար անեմ հօրս՝ դան քիզ պատվով տանեն։

Տղէն ձին բռնեց, թաքաւորի տղէն վեր կացաւ, գնաց յիրանց տունը։ Թաքաւոր, ասեց. յաշկդ լիս ըլի։ Տղէն մի քիչ խելքից պակաս էր։

— Ա՛յ տղա, ինչ ա էլել։

— Էկել են մեր ախչիկը ուզելու։

— Ո՞վ։

— Շահ-օղլի Շահարասի տղէն։

— Հըմի ընչի՞ ես էկել, ձիդ բաց թողել։

— Էկել եմ, որ մի քանի մարթիկ տանեմ, էն տղէն վեր ունեմ՝ բերեմ։

Թաքաւորը բարկացաւ տղի վրա. Բարով բերես, ասեց, ձիդ տարաւ, տարաւ, ոչ գնա, ոչ էլ էն։

— Վախենալ մի, Թաքաւոր, էն ընենց տղա չէր, դու ինձ մարթիկ տուր։

Թաքուհին դուս էկաւ, հարցրուց. Էտ ինչ խարար ա։

— Թէ Շահարասի տղէն էկել ա իմ քիրն ուզելու։

— Որ ըսենց ա, ղրկենք մեր ախչիկը հաղրվի, որ տղէն դա։

Տղէն վի կալաւ տասը լաւ մարթ ու գնաց դըրա էտ տղէն, առաւ, պատվով բերուց տուն։

Թաքաւորը շատ ունթունեց էտ տղին, հարցրուց. Որթիս, ինչ ես կամենըմ, ուզա տամ։

Ասեց. Քու սաղութունը, Թաքաւոր, յուրիշ ոչինչ։

Տեղ քցեցին, տղէն գնաց օթախըմը քնեց։ Յառաւօտը դուս էկաւ, գնաց մառմառ հաւըղըմը յերեսը լվանալու՝ Թաքաւորի ախչիկը փեշքիրը բերուց, քցեց տղի ձեռին։ Տղէն սրբեց յերեսը, տվուց փեշքիրը ախչկանը, վի կալաւ գնաց։

Ախչիկը գնաց մօր կուշտը, ասեց. Մէր, ապրեմ էս տղի կշտին, մեռնեմ էս տղի կշտին։

Թաքուհին գնաց Թաքաւորի հետնա խօսալու։

— Թաքաւոր, էտ տղին հարցրու տես ընչի՞ ես էկել, բալքի ամանչըմ ա։

Թաքաւորն էկաւ հարցրուց տղին. Որդի՛ ջան, խի՞ չես խօսըմ, յառաջի անքամը ասեցի թէ ուզածդ ուզա տամ, ամանչիլ մի, ասա։

— Թաքաւորն ապրած կենա, թէ որ ուզըմ ես, ախչիկդ տուր ինձ, դրա համար էլ էկել եմ։

— Որ ըսենց ա՝ իմ Թաքաւորութունի հետ իմ ախչիկն էլ տվի քեզ, ինձնից ետը իմ Թաքաւորութունը քունն ա։

Էկան օխտն օր, օխտը քշեր հարսանիք արին, էտ տղին փառկեցին։ Մի քանի ամսից Ետո տղէն ուտացաւ անոր Թաքաւորութունը, որովհետև աստերը շատ ծերացել էր. տղէն էլ խելքից պակաս էր, անջաղ էթըմ էր մէշէն, գալի։

Անկարը քաղաք էր, ընենց կարը գլուց որ ոչ մի երկրըմ էտ կարքերը կար ոչ։ Ինչ թուջար որ դար, պէտք ա Թաքաւորին ընծա տանէր, որ Թաքաւորը իրաւունք տար ապրանքը ծախելու։

Էտ տղէն թող ըտի թաքաւորութուն անի, դանք պուճուր տղիցը սալլըղը տանք։

Պուճուր տղէն գնաց, տեհաւ սարի մէջտեղը մի ձեռք աներ կա։ Էս լաւ էլաւ, ասեց, ես թաքաւորի որթին եմ, լաւ էլ տեղ ռաստ էկաւ, քշերը կը կենամ, յառաւօտենց կեթամ։

Նի մատաւ նեքսեն, տեհաւ քառասուն հարամի նստած. Բարով ձեզ, ասեց, հարամի տեղէրտինք։

— Հազար բարի, թաքաւորի որթի։

Հարամ—բաշու խասիաթին էլ ընենց էր, որ ինչ մարթ դիմէր յիրան, շլինքը պըտի կտրէր։

— Ա՛յ տղա, ասեց հարամ—բաշին, ինչ տեղի տղա ես դու։

— Ես Շահ-օղլի Շահաբասի տղէն եմ, ասեց։ Հօրիցս նեղացած եմ, էթըմ եմ դըրա արևմուտ։

— Ա՛յ տղա, ով ինձ պատահել ա, շլինքը կտրել եմ, համա որ քե տեհա, շատ դիրս էկար, քեզ ինձ պըտի տղա շինեմ։

— Ընչի՞ համար, հարամ—բաշի։

— Գիտեք, ասըմ ա, էս մեր արևմուտի թաքաւորի աղջիկը շատ լաւ կռիւ անող ա. ինչ տղա որ գալիս ա ուզի՝ հետը կռվըմ ա, թէ որ զօռըմ ա՝ գլուխը կտրըմ ա, յիթնուն տղի գլուխ կտրել ա։ Ախտա ես, քու գլուխդ էլ կեթա, յարի ես քեզ իմ զօչաղութունը սարվացընեմ, նոր գնա, դու որ թաքաւոր դառնաս, ինձ վաղիր գնես. բոլ ա ինչ հարամութուն արել եմ։

Մի հատ ձի տվուց էտ տղին, մի հատ նետ ու անեղ տվուց, մի հատ էլ գուրզ տվուց։

Յառաւօտն, ասեց, մի հատ պհած ալ ձի ունեմ, բախշիլ պըտեմ քեզ. դուս դանք մէյդան, տենենք քու զօչաղութունը, ես տեհել եմ էն աղջկա զօչաղութունը։

Էթը բաց էլաւ, դուս էկան մէյդան, քառասուն հոգին մի դիրը կանենց, մենակ տղէն մի դիրը կաննեց։

— Ա՛յ տղա, ասեց հարամ—բաշին, իրաւունք ունես, յառաջ սրֆթա գուրզը քունն ա, քըցա։

Տղէն ձին քշեց, գնաց ու էկաւ՝ գուրզը քցեց հարամ—բաշուն, ասեց. Հարամ—բաշի, ձիդ գնաց, մենակ քեզ դմիշ չարի։

Տալուն պէս ձին տակին թըպրբտաց, ու սատկեց։

—Է՜, ա՛յ տղա, էտ յուսը քեզանից չունէի, գնա, ապատ իրաւունք ունես, էտ աղջիկը կառնես։ Յարի՞ քեզ ճանփի խարջըղ էլ տամ, որ տղամարթու պէս էթաս խանը հազրվես, որ լիսը բացվի էթաս մէյդանը՝ աղջկա հետ կռվես։

Հանեց մի բոլ խարջըղ տվուց, ճակատը պաչեց, ասեց. Գնա, Աստված քեզ հետ, մենակ ինձ միտ բերես։

Տղէն քշեց, գնաց, վեր էկաւ խանը, ձին տեղաւորեց, յինքը նիլաւ օթախը։

Խանչին հարցրուց. Որտեղացի՞ ես, խէր ըլի։

Ասեց. Ես Շահ-օղլի Շահարասի տղէն եմ, էկել եմ թաքաւորի ախչկա համար։

— Է՛ որթի, զուր ես էկել։

— Ընչի՞ համար։

— Քանի որ էս ախչկան ախտող ըլիլ չի, քանի տղի գլուխ ա կտրել, ասիսա ես, ես դառ։

— Մեռնեմ՝ մէյդան մնիլ պտեմ յառաւօտենց, ապրեմ՝ մէյդան մնիլ պտեմ։

Խանչին մարթ ղրկեց ախչկանը, թէ ըսենց մի տղա ա էկել, յարի՛ տես։

Ախչիկը, որ անբմը Գիւլշան էր, հաքաւ յիրա թամուղ շորերը, քառասուն ջառու հետ վեր կացաւ, երքելով էկաւ դրբա խանը։ Նի մտաւ նեքսն, որ տղին տեհաւ՝ ձեռ ու ոտը դեննիցը կտրվեց։

— Յառաւօտենց էս տղէն ինձ պլտի ախտի ու ինձ պլտի առնի, ասեց, էլ էս թաւուբ տղա ես ոբդի պլտի քթնեմ, որ առնեմ, իմ ձեռս զօրիլ չի, որ դուրդ քցեմ։

Ախչիկը ետ դառաւ դրբա յիրանց տունը, ասեց հօրը. Թաքաւոր, մի՛ ընենց տղա ա էկել, որ երկնքի հրեշտակից լաւ ա, ես մնացել եմ մտթալ, թէ դրա վրին ես ոնց դուրդ քցեմ։

Հէրը ասեց. Որթի, թէ որ գիտես ուժդ ախտիլ չի, մարթ ղրկենք, բերենք ըստեղ, յառանց կռվի, քեզ տանք։

Ախչիկը վեր կալաւ ասեց. Հէր, ես մեռել եմ, որ անկռիւ ես նրան առնեմ, որ յէքուց իմ յէրեսովը տա։

Մարթ ղրկեց թաքաւորը տղի կուշաը, կանչեց։

Տղէն ասեց. Ընչաը մէյդան դուս գամ ոչ, ես քու կուշաը գալ չեմ։

Բարի լիսը բացվեց վըրնեբին, տղէն վեր կացաւ, յերեսը լվաց, հաց կերաւ, վեր էկաւ ձին հաղրեց, քաշեց, նի էլաւ. էկաւ մէյդանի գլուխը կանգնեց։

Խաբարը գնաց թաքաւորին։

Ախչիկն էլ արարզի (սև շորեր) շորերը հաքաւ, ձին նստեց էկաւ, գլուխ տվուց տղին, մէյդանի տրտրմը կանգնեց։

Թաքաւորը հրամայեց գուքան բաց չմնա, բիրագի գան մէյդան թամաշա, արթարութունով տեսնեն որն ա զօրում, ախչիկը թէ տղէն։

Էկան ժողովուրթը սաղ թոի էլան։

Թաքաւորն ու թաքուհին ջոկ տեղ նստեցին, ժողովուրթը ջոկ։

Գլուխ տվուց տղէն թաքաւորին, ասեց. Իրաւունք տուր կովելու։

Սկսեցին կռիւ անել։

Ախչիկն ասեց. Տղա դու գլուխն ես, ես ոտը, սգիթա դու քցել պըտես, քցա։

Տղէն իրեք գլուխ ձին քշեց, ախչիկը տեսաւ տղէն հաստատ տղամարդ ա, ասեց. Շան տղէն շատ զօրա տղա ա, բա ինձ տանել պտի։

Տղէն գնաց էկաւ, օխտը հետ գլուխ տվուց թաքաւորին ու թաքուհուն։

Թաքաւորն ասեց թաքուհուն. Ախչիկս ձեռիցս գնաց, համա ինչ տղա ա, էրանեկ գուրգը ձիուն դիպչի, ախչկանս չը դիպչի։

Տղէն գնաց էկաւ, ձիու սաղրու (քամակ) հետ դզվեց, թամքի մէջը կանգնեց. Հա, ասեց, ախչի, ձիուդ գլուխը գնաց, ու գուրգը քցեց։ Բցելուն պէս՝ ախչկայ ձին ընկաւ սատկեց, տղէն ձիուցը վեր էկաւ, թուրը քաշեց դրուց բերանն ու վազեց, ախչկան վե կալաւ, տվուց գետինը, ծունկը դրուց սրտին, վախտուն հուստակը ձեռով բռնեց ու քաշեց վիրև, թուրը քաշեց, որ շլինքը կարի, թաքաւորն ու թաքուհին վրա էկան, ասեցին. Տղա, էտ մի ախչիկը ինձ բաշխա, թաքաւորութեանս հետ քեզ տվի։

Տղէն թուրը դրուց տեղը, ախչկա բիլակը բռնեց, կանգնացըրուց։ Բոմմա ժողովուրդը բղաւեց. Հալալ ա քեզ էտ ախչիկը։

Նոր ախչկա աչու բիլակը բռնեց ու գնաց դրա թաքաւորի տունը։

Հասնելուն պէս հանեց յիրա մատանիքը, տվուց ախչկան, ախչկա մատանիքը դրուց յիրա մատը։

Ժողովուրդն էկաւ՝ թէ թաքաւոր, արժան ա դրան թաքաւորութունը։

Բերին օխտն օր, օխտը քշեր շատ շնորքով հարսանիք արին, փառկեցին։ Փառկեցին, թաքաւորն ասեց. Ես ծերացել եմ, իմ թաքաւորութունս էլ ըսօրվանից քեզ տվի։ Դառաւ թաքաւոր։ Էտ քաղաքն էլ անկարք քաղաք էր, յամէն բան յիրա տեղը կարքի տակ դրուց, իսանն յիրա տեղից չէր կարում եռալ քշերը։

Օրերի մի օրը մի գիր էկաւ էտ տղին արևելքիցը, որ յէքուցվանից սկսել պըտենք կռիւ անել։

Դա էլ պատասխանը գրեց, թէ թողէք էս էլ իմ թաղարէքը քաշեմ, կռվում ենք՝ կռվեք։ Էն ժամանակը թաքաւորը թաքաւորի հետ էր կռվում, զօրքը ոչ։

Տղէն մի գիր գրեց էն հարամբաշուն, որ համեցէք, հաստատ իրաւունք ունես վազիր դառնալու։

Հարամբաշին ասեց. Տղէք. ինչ որ արինք բոլ ա, ինչ մարթ էթա յիրա տունը. իմ մեացած ապրանքն էլ ձեզ։

Էկաւ թաքաւորի կուշտը, դառաւ վազիր։

— Է՛, ասեց, վազիր. արևելքից մի գիր ունեմ, տա կարթա, տես սրա հնարն ինչ կելի։

Հարամբաշին ասեց. Թաքաւոր, յամէն բանի իլլաջ կելի, էտ նոր էկող թաքաւորին իլլաջ չելիլ. կը բռնվենք մենք։

Թաքաւորն ասեց. Ընչի համար։

Ասեց. Նա Ղազհանու անդին լարով (հիսած կաշէ լար) քև կը կալնի, մուղաթ կաց քեզ չբցի։

Յառաւօտենց շատ թէզ դուս էկան դաշտը. տեհաւ երկնքի աստղերին համբարք կա, մենակ դրա էկած զօշընին համբարք չկա։ Զօշունը մի գիհ ընկաւ, էրկու թաքաւորը մի գիհ ընկան։

Ասեց. Զահէլ թաքաւոր, հաստատ հետս կռվը՞մ ես, թէ քաղաքդ տալիս ես։

Արևմտի թաքաւորն ասեց. Ֆանի սաղ ու կենթանի եմ, ես քեզ մի հատ քար չեմ տալ։

— Դէ, ասեց, ազատ իրաւունք ունես, գուրզդ քցա։

— Հարամբաշին ասեց. Թաքաւոր, յաշկդ ես պըհա, ափսոս ես, քեամանդով քև կըրանի։

Ընդեղից արևելքի թաքաւորը բանցրացաւ ու անդին լարը (քեամանդ) քցեց. քցելուն պէս ընկաւ արևմտի թաքաւորի շլինքը։ Ձևոը քցեց լարին քաշեց, քաշեց. կարեցաւ ոչ կարի։ Բերուց կշտին կանանցրուց։ Ձեռները անդին լարով կապեց, քցեց ձիու յառաջը, զօշունն էլ հետը։

Խարարը գնաց կնկանը, թէ մարթիդ քեամանդով տարան։

Կնիկը հաքաւ արարզդի շորերը, հերսիցը յաշկերիցը կրակ էր վե թափըմ. քշեց զօշընի յառաջը։

— Հը՛, ասեց, թաքաւոր, համբերի, ես էլ եմ թաքաւոր, կռիւ անիլ պտինք։

Ախչիկը ճչաց. ճչալուն պէս արևմտի թաքաւորի յաշկիցը հեղեղ թափվեց, ասեց. Ես զուր գնացի, կնիկս էլ իմ կրակն ընկնիլ պտի։

Էտ դղըմը օրան օր, օխտը քշեր էտ ախչիկը կռիւ արուց, մի փաս կար, քշեց ձին, բուզուրմիշ էլաւ, արևելքի թաքաւորը քեամանդը քցեց, շլինքիցը բռնեց։ Դրա կռնեբն էլ կապեց, արուց ձիու յառաջը։

Դնաց, հասաւ արևելքը, յինքն իրան մտածեց, թէ մին օր մեի յաշկերը հանեմ, մի օր էն մեի յաշկերը հանեմ, նոր քցեմ զընդանը։

Քշերը տարան բռնատանը բռնեցին էտ կնկանն ու մարթին, ջոկ ջոկ։

Յառաւօտենց թաքաւորը կանչեց միլչուն (աչք հանող) ասեց. Ինչ ժամանակ որ ես կը հրամայեմ՝ յաշկերը հանա, էն հրոպէին կը հանես։

Կանչեց թաքաւորին. Էկաւ գլուխ ավուց, կանգնեց։

Ասեց. Մանկութունից ինչ որ գլուխտ էկել ա, պատմիլ պտես, թէ ոչ յաշկերդ հանիլ պտեմ։

Թաքուհին էլ կշտին նստած ա, յիրան նազիր, վազիրներն էլ կողքը։

Խարարը գնաց ժողովրթին թէ էն ջանէլ թագաւորի յաշկերը հանիլ պտեն, մէր ու մանուկ էկան թող էլան թախտը։

Արևմուտքի թաքաւորը սկսեց յիրա գլխի էկածը մի մին պատմիլը *)։

Որ պատմեց պրծաւ՝ արևելքի թաքաւորը յիմացաւ, որ էտ յիրա ախպէրն ա, սկսեց լաց ըլիլը ու փաթըթվեց ճտովը։

Տղէն ասեց. Էն օխտն օր քեզ բանտ անող տղէն իմ կնիկն ա, թէզ ազատ, մեզկ ա։

Գնաց էտ ախչկանը վե կալաւ, բերուց յիրա կուշտը, կնիկն էլ հասկացաւ, որ յիրա տէրն ա։

Վազեց տէրը հարի ճակատը պաչեց, ասեց. Հալալ ա քեզ, որ իմ ախպօրը առել ես, օխտն օր ինձ բանդ արիր։

Մի քանի օր ըտեղ մնացին զօնաղ, վերջը արևելքի թաքաւորն ասեց. Դէ, վեկալ քու կնիկը, քու զօշունը, գնա քու երկիրը։ Հանդելուն պէս մի ձեռք օղշուշաղի շոր կարել կըտաս, որ գին չունենա, վե կունես ու կը գաս իմ կուշտը, որ յիրար հետ էթանք մեր ծնողներին տեսնենք, մըն էլ Շահ-օղլի Շահարասի լաւութունի տակից դուս գանք։

Արևմտի թաքաւորը առաւ յիրա կնիկը, գնաց յիրա երկիրը, էտ շորերը կարել տվուց, գրուց խուրջինը, թաքաւորութունը տվուց անորը, յինքը զօշուն վեկալաւ, էկաւ մենձ ախպօր կուշտը։

Ախպէրն էլ յիրան պատրաստութունը քաշել էր, մօր համար ու Շահ-օղլի Շահարասի կնկա համար։

Վեկացան էկան Շահ-օղլի Շահարասի տնուրը։ Արևելքի թաքաւորը քշերվա կիսին մի հատ նետ քցեց ձէնով, որ յիմանա Շահ-օղլի Շահարասը։

Էտ ձէնին թաքաւորը վեկացաւ, տեսաւ որ ճրաքով լիքն ա քաղաքի չորս դիմը, ոտ ու ձեռը շաղվեց. Այ, հայ, ասեց, իմ

---

* Շատերն ամբողջովին կրկնում են.

թաքաւորութունը գնաց ձեռիցս, սկսեց լաց ըլլլ։ Վեկացաւ մի ձիաւոր ղրկեց, թէ գնացէք տեսէք էտ էկողները ինչ մարթիք են։

Գնացին, ըտոնց տարան թաքաւորի կուշտը, ասեց. Մենք դոստ մարթ ենք, էկել ենք թաքաւորին ղոնաղ։ Յառաւօտենց վախենալօն Շահ-օղլի Շահարասը ղօշունն առաւ, ղէմ գնաց։

Յինքը յիրան Շահարասը մտածեց. Ես ինչ սամ սրանց, որ ինձնից յօժար ըլնեն։

Գնաց էտ թաքաւորի չադիրը, համեցէք ասուց, հանթէսով առաւ էկաւ տուն։

Քշերը ըտեղ մնացին։ Շահարասը ասեց կնկանը. Տեսնես նրանք ինչ բանի համար են էկել, թէ էս քշեր վեկենանք՝ սրանց գլխընները կտրենք, ախտոս են, ջահել են, թէ կտրենք ոչ, ինչ տանք որ յօժար ըլնեն, թողան էթան։

—Ընչի՞ ես խառնվել, թաքաւոր, ասեց Շահարասի կնիկը, էն մեր սանահօր տված ձուն բախշենք, հերիք ա նրանց։ Շատ ուրախութունով ըռաղի կըլնեն։

Բարիլիսը բաց էլաւ ձեր վրէն, մեր վրէն, Շահարասը գնաց թաքաւորների կուշտը, ասեց. Բարի լիս, ջահել թաքաւորներ։

— Ասաւ բարին, հազար բարին, ասեցին թաքաւորներն ու տեղջներիցը կանգնեցին։

— Գիտե՞ս ինչ կա, թաքաւոր, ասեցին էրկու թաքաւոր ախպէրները։

— Ի՞նչ կա, ասեցէք, պատրաստ եմ։

— Պըտենք էրկու խուրջին վերնենք էտ քուչովը էթանք ցած։

— Ասեց. Շատ լաւ, էթանք։

Էրկու խուրջինը վեկալան, գնացին. քաղաքիցը դուս էկան, հասան էն յիրանց տունը։

Շահարասը էտ թամաշ ասուց, որ էտ էրկու թաքաւորների յաշկերիցը կրակ ա թափում։

Մենձ ախպէրը մի մարթի հրամայեց, թէ էս էրկու խուրջինը վեկալ, տար էտ ախքատի տունը, ասա թէզ հաքնեն, որ թաքաւոր ա գալիս ձեզ ղոնաղ։

Էտ մարթը նի մտաւ տուն, տեսաւ էրկուսն էլ տկլոր կախ էլած թունդիրը, թունդիրն էլ անցած։

— Բիձա, ասեց, վեր, թաքաւորը գալիս ա քեզ ղոնաղ։

— Ա՛յ որթի, ասեց հալիվորը, մեզ ինչ ունենք, որ թաքաւորը գա մեզ ղոնաղ։

— Շատ խօսալ մի, թէզ ասա, առ էս շորերը հաքէք, որ թաքաւորը կանգնած ա։

Կսիկը մարթին թէ՝ Աստված տվիլ ա, շոր ա, հաքնենք էլի։

Հալիվորն ու պառաւը հաքան շորերը։ Շահարասը տեհաւ, որ հեղեղի պէս ա գալի արտասունքը, նոր մտածեց, որ էս տղէքը յիրա սանիկներն են։

Նի մտան նեքսն, Շահարասն ասեց, Բարով քեզ սանահէր։

— Աստու բարին, հազար բարին։

Տղէքն էկան փաթաթվեցին հօրն ու մօրը, լաց էլան, ասեցին. Մենք քու տղէքն ենք, ճանանչում չէք։

Մէրը որ էս յիմացաւ, յուշը գնաց, ջուր տվին, յուշն էկաւ գլուխը, փաթաթվեց տղին ու լաց էլաւ։

Մի փիչ մնացին, Շահարասն ասեց. Էկէք քոմմէքս էլ էթանք մեր գիւղրախչէն։

Գնացին գիւղրախչէն, նստեցին գինջացան։ Մըն էլ տեհան էն էրկու բիլբուլը էկան, յամէն մինը մընի գլխին վեր էկաւ ու խօսաց։

Տղէքն ասեցին. Բաւար, մենք քու սանիկներն ենք, մի՞ռդ ա որ ես էն ժամանակն ասեցի թէ բիլբուլն ասում ա, թէ մինս արևելքի թաքաւորութունը տիրիլ պրտի, մինս արևմուտի. հրէս կատարվեց բիլբուլի ասուծունը։

Կերան, խմեցին, սկսեցին ուրախանալ. եռս վե կացան, էկան թաքաւորի օթախը։ Սանիկները Շահարասին խնդրեցին, որ վերնեն էրկու խուրջին, լիրանց բերած շորերը հաքնեն։

Շահարասը վե կալաւ տարաւ հաքնելու, տեհաւ հէչ գնահատիլ ըլիլ չի էս շորերը, յամենատաշի շորերն ա։ Ինքն էլ բերուց նրանց տված քարը փեշքաշ արուց նրանց, ասեց. Էս էլ իմ տված ընձէն ըլի ձեզ։

Էս քշերը բանեց մնացին, յառաւօտենց քշերով Շահարասը էրկու հատ ձի բերիլ տվուց, մինը տղէքանց հէրը նիլնի, մինը մէրը։

Շահարասն ասեց. Տարէք ձեր հօրն ու մօրը, որ միխիթարվեն ձեզնով, թող հէրը մենձի հետ էթա, մէրը՝ պուճուրի։

Գնացին հասան էն ճանփէն, որ յիրարից բաժանվիլ պտէին, էրկու ախպէրթենքը յիրար հետ պուշտի արին, մենձը վե կալաւ հօրը, պուճուրը վե կալաւ մօրը, գնացին յիրանց քաղաքները։

Դրանք հասան յիրանց մուրազին, դըք էլ հասնէք ձեր մուրազին։ Երկնքից իրեք խնձոր ընկաւ, մինն ասողին, էրկուսը լսողներին։

ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ

ԿԱՄ

ԱԼՕ-ԴԻՆՕԻ ՆԱՂԼԸ.

(Աշտարակ*)

Ժամանակով մի թաքաւոր ա ըլնում, իրեք տղա ա ունենում, երկուսը խելօք, մինը միքիչ խելքից պակաս։ Էս խելքից պակասի անումը Ալօ Դինօ ա ըլում։ Էտ թաքաւորին մի լաւ յիքի ա ըլում. էտ յիքու միջին մի հատ խնձորի ծառ ա ըլում, վրին իրեք խնձոր։ Օրերի մի օրը մի ազքատ հալիվոր գալիս ա ըտի ողորմութուն ուզելու։

Բաղմանչին ասում ա, որ ինչ պըտուղ ուզում ես, քաղում տամ։

Ասում ա. Էտ իրեք խնձորից մինը քաղա տուր։

Բաղմանչին ասում ա. Թէ կարելի չի, էտ թաքաւորի համար ա, յուրիշ ինչ կուզես՝ տամ։

Հալիվորն ասում ա. Թէ վարելի չի, էտ խնձորներիցը տալ պտես։ Վերջը շատ ա մուննաթ անում, էտ խնձորներից տալիս չին, յիքուն անընծում ա, յիքին զաղալաթափ (տերևաթափ) ա ըլում։

Բաղմանչին հարցնում ա հալիվորին. Թէ ինց պըտի ըլի, որ էս յիքին կանանչի։

Ասում ա. Ընչար Հաղարան ըլրուլը բերեք ոչ, կանանչիլ չի։

Թաքաւորը գալիս ա յիքին, տենում չորացած. կանչում ա բաղմանչուն, նեղանում թէ էս յիքին ինց ես պահել, որ չորացել ա։

Բաղմանչին պատասխանում ա թաքաւորին, թէ մի հալիվոր էկաւ ողորմութուն ուզեց, ինչ պատուղ տվի, ընդունեց ոչ, էս իրեք խնձորից մինը ուզեց, տվի ոչ, յիքուն անընծեց, չորացաւ։ Եատ

---

*) Պատմեց 1912 թ. օգոստ. 21-ին Աշտարակ գիւղում նոյն գիւղացի Աւետիս Գրիգորեան 66 տարեկան անգրագէտ ծերունին։

տարին շատ շատ էր, մաջալ չարի էփիլ տայի, յառաւօտվանից սոված էմ, վէ կաց, էս միսը խորոված արա՝ ուտէնք։

Կնիկը խորոված կանի, դու զօռա՝ թող մի թիքա ուտի, եփոր կերաւ, քնելու վախտը գնա դու դրսէ, յարի նեքսէ, նա որ կէթա դուս՝ ինչքան տանը ջուր կա՝ թափա, մի փարչի միչի ջուր ածա, կախ տու, դու գնա քու տեղը մտի, քնի. երկուզ մի անի, քշերվա մի վախտը եփոր ծարաւացաւ, էն ուզղակի կը դառնա յօց, էն ժամանակը քու ջանը կսկսի ուռվիլը, դու երգիւզ մի անի, թեզ վնաս չի տա, թող վէ կենա, էթա։ Կէթա, ջուր կը խմի, կը գա եա, էլի կը դառնա կնիկ քու ծոցին կը պարկի։ Եփոր լիսը բացվի, յարի իմ մօտը։

Էս ազէն յիրիկունը կնկանը բան չասեց, յէրսի յառաւօտը էն գլխէն գնաց ոչխարի միս առաւ, ընդեց դուքանումը պահեց, յիրիկունը էկաւ տուն, կնկանն ասեց. Ըսօր մուշտարիս շատ շատ էր, միան առա, մաջալ չէլաւ էփիլ տայի, ինաց, վէ կաց, խորոված արա, ուտէնք։

Կնիկը վէ կացաւ, օջաղը վառեց. խորոված արեց, դրեց մարթի յառաջը, գնաց, դրաղ նստեց։

Ասեց. Ա՛յ կնիկ, ես ուտէմ՝ բա դու ըռեզ նստէս, ախար մեկ ա, սրա փոքը սաղ քաղաքը բռնել ա, դու մի կտոր էլ ա չէս ուտում։

Ասեց. Թեզ անուշ ըլնի՝ կեր։

Ասեց. Ա՛յ կնիկ, մի թիքա էլ ա կեր։

Կնիկն ամօթու մի թիքա կերաւ։

Հացը վեկալան, տեղերը քցեցին, մարթը գնաց դրսէ, էկաւ, կնիկը գնաց դրսէ, մարթը տան միչի ջրերը քամմա թափեց, մի փարչ ջուր լցրեց, պատիցը կախ արեց, էկաւ պառկեց, քնեց։ Կնիկն էլ դրսէից էկաւ՝ քնեց։ Կէս քշերին մարթը տեհաւ, որ ջանը սառեց, սառելուն քիմի, զարթնեց, տեհաւ կնիկը յօց դառաւ, տեղաշորիցը դուս էկաւ, օթախի մէջը ֆշշալէն դէս ման էկաւ, դէն ման էկաւ, տեհաւ փառչը կախ տված ա՝ բանցրացաւ խմեց, էլի վեր էկաւ, էկաւ տեղաշորի մէջ մտաւ, էլաւ էլի կնիկ։

Յառաւօտը էս մարթը վէ կացաւ, դուզ գնաց էն բազրկանի մօտը, ասեց. Ոնց որ դու ասել իր, ընէնց էլ էլաւ։

Բազրկանն ասեց. Ես չէմ գիտում, որ քու կնիկը յօց ա, ես ով էմ, ոչ հայ։

Տղէն ասեց. Վիրև Աստված, նեքքև դու, ինձ ազազա էս անիրաւի ձեռիցը։

Ասեց. Երգիւզ մի անի, կազատեմ։ Էս յիրեք տարվա միչին քեզ համար ըսկի գաթա թխել ա։

Ալո-Դինոն ասեց մինձ ախպօրը. Էկէք գուք էրկուսդ էս անմիտս ճամփով գնացէք, ես էս գեղան գեալմազի ճամփովը կերթամ։

Մինձ ախպէրը շատ ուրախացաւ, ասեց. Թող էթա, կորչի էս գիժը մեզնից։

Էթալու վախտը թամբահ տվին հալիվորին, ասեցին. Պապի, Ասսու սիրուն, որըս որ թէղ կըգանք, ըսաի պէի, ընչար որ իրեքս էլ հավաքվենք, յիրար հետ ետ դառնանք տուն։

Էս էրկուսը վի կացան, գնացին ետ Թիֆլիս, ետ յէրևան, շատ փորցանքների մէջ ընկան, յիրանց ձիանն էլ ծախեցին կերան, յիրանց շորերն էլ ծախեցին կերան, վերջը գնացին համամչու ծառայեցին. մինը համամը վառող էլաւ, մինն էլ քիւլհանչի էլաւ։

Ալո-Դինոն էլ ձի նստեց գնաց։ Շատ գնաց, թէ քիչ գնաց, Ասսված գիտի, գնաց ընկաւ մի կարմիր ֆոդ, մէշի մէջ, ծառերը կարմիր, ֆոդը կարմիր, քարը կարմիր։ Էտ հրոպպէին Ասսու հրամանով Ալո-Դինոյի ձին լիղու էլաւ, ասեց.

— Ալո-Դինո, յուր ես քշում ինձ։

Ասեց. Բա ինչ անեմ, պըտի էթանք։

Ասեց. Էս կարմիր դէվի ֆոդն ա, յիրիկունը սրան զօնաղ հնք։ Յինքը իրեք գլխանի ա։

Յիրիկունը գնացին կարմիր դէվի տունը, տեհան մի կնիկ կար։ Էտ կնիկը շատ տխուր էկաւ էտ տղին, ասեց. Ա՜յ տղա, յարի քեզ պըհեմ։

Ալո-Դինոն ասեց. Ի՞նչ յպըհելու վախտ ա, ես սոված եմ, հաց բեր ուտենք։

Ասեց. Նստի։

Ալո-Դինոն նստեց, դէվի կնիկը գնաց հաց բերելու, մի էրկու իրեք բոթնոց հաց բերուց, Ալո-Դինոն ասեց. Ի՞նչ ես անում, ինձ համար հաց բեր։

Դէվի կնիկը տեհաւ, որ էտ մարթը կշտանում չի, ասեց. Յարի էթանք բակը, դէվի կիրակուրը ընտեղ ա, իժդար սիրտդ կուզի՝ կեր։

Գնաց, տեհաւ հինգ լիտրը բրինձ էփած, էրկու հատ էլ եզ մորթած պղնձի մէջ դրած ա, իրեք լոխմա արուց էտ վլաւը ու կուլ տվուց. մի եզը քցեց մի չանի տակը, մինն էլ քցեց մի չանի տակը ու ջարթեց, օսկոս մսոկոս յիրար հետ կերաւ։

Դէվի կնիկը էտ տղին էլի ափսոս էկաւ, ասեց. Յարի քեզ պեհեմ, ափսոս ես։

Ալո-Դինոն ասեց, թէ Ես դէվի համար եմ էկել։

Ասեց. Եղայս, համա բոլ էմ աշխատէ, էկել էմ քեզ տանէմ, էրէխէքանցը տանէմ։

Ասեց. Ա՛յ մարթ, մենք ընտեղ չէնք կարա ապրի, քաղաք ա, ծախսերս շատ կըլնի, ըստեղ պեղ տեղ ա, ոնց ուզենք, ընենց կը կառավարվենք։

Ասեց. Ա՛յ կնիկ, մի վախի, ընքան աշխատել էմ, որ քու օխտը պրան էլ ուտի՝ չի հատնի։

Յառաւօտը վէ կացան, էլած չէլածը բաշխեցին բնասիր հարեւաններին, յիրանք գնացին յիրանց թաղա տունն ու տեղը։

Նրանք հատան յիրանց մուրազին, ով որ կարօտ ա՝ նա էլ հատնի յիրա մուրազին։

Երկնքից յիրեք հատ խնձոր ընկաւ, մէկն ասողին, մէկը լսողին, մէկն էլ յանգաջ գնողին։

Ասեց. Անկարելի ա, տամ, չտամ՝ էթալ պտեմ։

Գնաց մի ֆող ընկաւ, տեհաւ որ ֆողը սիպտակ, քարը սիպտակ, ծառը սիպտակ, դէվի զոնաղխանէն էլ սիպտակ։

Ձին լիզվաւորեց, ասեց. Վա՜յ տրի, ինձ մ'իքիչ ման ածա։

Ալօ-Դինօն վեր էկաւ, ձին ման ածեց։

Ձին ասեց. Էս, ասեց, Սիպտակ դէվի ֆողն ա, յիրիկունն ընտեղ զոնաղ պըտի ըլենք, ըտի Կարմիր դէվի պէս չի, սրան ունի օխտը գլուխ։

Ալօ-Դինօն ասեց. Վնաս չունի, օխտն էլ կը թուցնենք։

Յիրիկնապահին գնացին զոնաղ. տեհան որ դռները շինած ա, Ալօ-Դինօն բանցը ձէնով ձէն տվուց, ասեց. Ո՞վ կա տանը, էկէք, ձին քաշեցէք։

Տեհաւ որ մի հատ կնիկ էկաւ, դռները բաց արուց, ասեց. Հրէա, ձիդ տար գոմը կապա։

Ալօ-Դինօն տարաւ ձին կապեց, յինքը նի էլաւ վիրև։

Ասեց. Մի քիչ հաց բե, ուտեմ։

Կնիկը բերուց մի հինգ վեց բոդնոց հաց։

Ասեց. Էս էրեխու ես խափը՞մ, հաց բե, հաց։

Դէվի կնիկը բերաբեց քառասուն փիլաքեանը նիլլելով վեր գալով, ասեց. Համեցէք, էթանը, դէվի կիրակերի վրին կաննի կեր, իժդար սիրտդ ուզըմա։

Գնաց տեհաւ, որ մի քսան ունկանի պղինձ, մէջը քսան լիտրը բրինձ փլաւ քցած, իրեք հատ էլ եղ մոբթած՝ վրին դրած։ Կաննեց, էրկու չանչուլ տվուց, էտ փլաւը մի դրբի կուլ տվուց. յամէն եղը էրկու կտոր տըուց ու կուլ տվուց։ Գնաց յիրա տեղը նստեց։

Մ'իքիչ կացաւ՝ տեհաւ որ օթախը ժաժ էկաւ, դէվի կնկանը հարցրեց, թէ օթախը խի՞ ժաժ էկաւ։

Ասեց. Ա՜յ տղա, դէվը գալիս ա, յարի ես քեզ պըտեմ։

Ասեց. Ինչ պըտես, ես դէվի հըմար եմ էկել։

Մ'իքիչ կացաւ, տեհաւ դէվն էկաւ։ Դէվն էկաւ՝ յամենան մի անասուն՝ ասլան, յաղջ, դել թոի արուց բերուց յիրանց բակը։ Նի էլաւ յիրա օթախը, տեհաւ մի մարդ նստած ա, ձեռ բռնեց ասեց. Բարով, Ալօ-Դինօ։

Ալօ-Դինօն ասեց. Դու ի՞նչ յիմացար՝ ես Ալօ-Դինօն եմ։

Ասեց. Դու էլած օրը սարերը, քարափները, ծառերը, խոտերը ձէն տվին, բիրագի միհեաց գոռացին թէ Ալօ-Դինօն մօրիցն էլաւ։ Դու Ալօ-Դինօն պըտի ըլնես, որ էկել ես ըսաի, թէ չէ յուրիշ մարդ իմ տեղից ըսաեղ կարալ չի գալ։

Կանչեց կնկանը, թէ հաց բե ուտենք։

Կնիկն ասեց. Էտ ոդէն քու բաժինը բիրադի կերել ա։

Ասեց. Վնաս չունի, թազա բերած աւերը մորթենք։

Բերած աւերը մորթեցին, էփեցին, նստեցին էրկըսով կերան։ Էտ դէվը տեհաւ, որ էս մարթը ոչ օսկոռ ա հանում, ոչ բան, ձեռն ընկածը կուլ ա տալիս։

Կերան պրծան, դէվն ասեց. Հը՞մի կռիւ անենք, թէ յառաւօտը։

Ալօ-Դինոն ասեց. Դու գիտես։

Դէվն ասեց, թէ մեր մէջ ադաթ կա, որ յիրիկունը զոնադին պրտենք, պատվենք, յառաւօտը կռվենք։

Յառաւօտը լիսը բացվեց, Ալօ-Դինոն ձէն տվուց դէվին, ասեց. Վե՛ կաց տեղիցդ, կռվի վախտն ա։

Դէվը վե՛ կացաւ տեղիցը, յիրան գուրզը վե՛ կալաւ, գուս էկաւ մէյդան։

Ալօ-Դինոն յիրա ձին նի էլաւ, գնաց մէյդանը կտրեց։

Ձին ասեց. Ալօ-Դինո, ինձ, ասեց, իրեք զամշի կտաս՝ դէվի գուրզ քցելու վախտը, ես կը բանցրանամ երկինքը, գուրզը կը դա, մեր տակովն յանցկըկենա։

Թամբան տալու վախտը վէ կացան, գնացին մէյդան։

Դէվն ասեց. Սրէն քունն ա, իմը։

Ալօ-Դինոն ասեց. Ես զնաղ եմ, սրէն բունն ա։

Դէվն ասեց. Հազիր կա՞ց, էկաւ գուրզը։

Դէվն իրեք անգամ գուրզը ձեռի մէջին պըտըտեց, որ քցի, Ալօ-Դինոն ձիուն իրեք զամշի տվուց, ձին բանցրացաւ, գուրզն էկաւ, տակովը յանց կացաւ։ Դէվն ասեց. Հա, թող ու գումանը էկաւ վակեց։ Հը, ասեց. Ալօ-Դինո, որդի ես, կաց, ասեց, մի թուքունի պէս քաշեմ պինչս։

— Հը՛, ասեց, դէվ, ասեց, ինչ մարքի ես, ես հազիր եմ։ Հը՛, ասեց, կանենի, դէվ, սրէն իմն ա։

Դէվը կանենց, Ալօ-Դինոն ձին լցրեց, քցեց, գնաց դէվի վրին։

Ասեց. Կանենի, թուրն էկաւ։

Թուրը վրա բերելուն պէս՝ օխտը գլուխն էլ կտրեց։ Վեր էկաւ ձիուցը, դէվի քիթն ու պռոշները կտրատեց, լցրուց խուրջինը ու վե՛ կացաւ, գնաց դէվի օթախը։

Դէվի կնիկը վազեց յառաջը, ասեց. Ես քեզ զուրան, էտ ինչ լաւ բան արիր, դէվին սրպանեցիր։ Յարգ մի պռոշտի անենք։

Ալօ-Դինոն ասեց. Ձէ, ըտենց կարելի չի, ասեց, դու իմ միշնեկ ախպօր նշանածն ես։

Ըտի նշան տվուց, նշան առաւ, մի իրեք օր ըտի ղօնաղ մնաց, իրեք օրից ետը ասեց. Մնաս բարով։

Ասեց. Ա՜յ բու տունը շինվի, յուր ես էթըմ։

Ասեց. Էթըմ եմ Հազարան բլբուլը բերեմ։

Ասեց. Այ տունդ շինվի, Հազարան բլբուլը դու կարալ չես բերիլ։

Ասեց. Անկարելի բան ա, էթալ պտիմ։

Գնաց, ընկաւ Սև դէվի ֆողը, ձին լիզու էլաւ, ասեց. Ալօ-Դինօ, տենը՞մ ես, որ էս ֆողն էլ ա սև, քարն էլ ա սև, ծառն էլ ա սև, խոտն էլ ա սև, էս քառասուն գլխանի Սև դէվի ֆողն ա։

Գնաց ըտի, տեհաւ մի քառասուն ունկանի պղինձ ա դրած, քառասուն լիդը ըրինձ մէջը, փլաւ են էփիլ, չորս հատ էլ եզ, մորթած, դրած վրին։ Իրեք օր Ալօ-Դինօն հաց չէր կերիլ, էկաւ, տեհաւ փլաւը, բերնի ջուրը գնաց, չորս բամփաջ (բուռն) տվուց, կուլ տվուց. եզները կերաւ, բերանը սրբեց, գնաց օթախը նըստեց. յիրիկնապահին տեհաւ օթախը եռաց. ասեց. Էս ով ա դալի։

Ասեց. Դէվը դալիս ա, վախտն ա։

Դէվը էկաւ տուն, յիրա աւերը բերուց, արուց բակը, յինքը բանցրացաւ վիրև. գնաց, տեհաւ մի մարթ նստած ա օթախըմը։

Դէվը միտք արուց, ասեց. Էս ով պըտի ըլի, Ալօ-Դինօյից սաւայի մարդ չի ըլիլ. գնաց ձեռ բռնեց, ասեց. Ալօ-Դինօ։

Ասեց. Դու ինչ յիմացար իմ անըմը Ալօ-Դինօ ա։

Ասեց. Ես սարերումը աւ անելուս յիմացա, որ քարերը, սարերը, ծառերը, խոտերը ասեցին. Ալօ-Դինօն էլաւ մօրիցը։ Դէհ, ասեց, Ալօ-Դինօից սաւայի մարթ կարալ չի գալ իմ ֆողը։ Նոր ետ դառաւ կնկանն ասեց. Կնիկ, վեկաց հաց բե ուտենք։

Կնիկն ասեց. Ֆու փայն էտ տղէն կերիլ ա։

Ասեց. Վնաս չունի. վեկացէք թաղա բերած աւերը մորթեցէք, էփեցէք, բերէք։

Վէ կացան, թաղա բերած աւերը մորթեցին, էփեցին, բերին դրին յառաջները՝ կերան։ Սև դէվը տեհաւ որ Ալօ-Դինօն ըսկի օսկոռ չի հանըմ, ինչ դնըմ ա բերանը՝ կուլ ա տալիս։

Դէվը ասեց. Հը՞մի կռիւ անենք, թէ յառաւօտը։

Տղէն ասեց. Դու գիտես։

Դէվը ասեց. Մեր ադաթը էն ա, որ յիրիկունը ղօնաղը կը պըհենք, յառաւօտը կը կռվենք։

Մնաց, յառաւօտը վէ կացան, գնացին կռվի։ Իրեք օր, իրեք քշեր կռիւ արին, վերջը Ալօ-Դինօն դէվին ախտեց։ Վեր էկաւ ձիուցը, դէվի քիթ ու մռութը կտրատեց, լցրուց խուրջինը, եռ դառաւ, գնաց դէվի օթախը։

Դէվի կնիկն էկաւ բարովեց, ասեց. Լաւ արիր, որ դէվին սրպանեցիր, սրանից հաց դու իմն ես, ես՝ քունը։ Տեղերը քցեցին, քնեցին։ Մի էրկու շարաթ մնաց ըսի, մի օր Հազարան բլբուլը միան ընկաւ, մի ախ քաշեց։

Կնիկն ասեց. Խի՞ ախ քաշեցիր. ինձանից լաւը պըտի առնես։

Ասեց. Ա՜յ տունդ շինվի, մեր յիրին չորացել ա, ես էկել եմ՝ որ էթամ Հազարան բլբուլը բերեմ. էկել եմ նստել էստի։

Կնիկն ասեց. Նրա բերիլը շատ դժար ա, նրա տէրը Զաչանց թարաւորն ա, նրա տէրը քառասուն օր քնած ա, որ զարթնեց, ասեց, քեզ պէս քսանն էլ ելի, կը սրպանի։

Ասեց. Ինչ կուզի՝ թող ելի, էթալ պըտեմ։

Վէ կացաւ, գնաց դէմ էլաւ մի եգա ծովի։

Զին ասեց. Ալօ-Դինօ, ես ծովեղէն չեմ, էտ ծովը կարալ չեմ յանցկենալ։

Ալօ-Դինօն ձին ծովի զրաղին բրաթ տվուց, մէշկը դէմ արուց մի քարի, քնեց։ Թէ քնած էր թէ զարթուն էր՝ Ասուած գիտէր՝ մի ձէն յիմացաւ, ասեցին որ Ալօ-Դինօ, էտ քարը պոկա. էտ քարի տակին իրեք հատ ծովեղէն ձիու գեամ կա։

Վէկացաւ քարը պոկեց, տեսաւ որ գրուստ իրեք ծովեղէն ձիու գեամ կա. վէ կացաւ, ասեցին, որ էրկուսը կապա մէշկդ, մինը կախ արա ծովը, ծովեղէնը դուս կգա։ Նա կուզենա որ քեզ կուլ տա, դու Ջալդ արա ձեռդ քցա ձիու եալը, զայիմ բռնա։ Էն վախտը գեամը տու ձիու բերանը։ Զին կասի. Հը՛, Ալօ-Դինօ, ինչ կուզես՝ ես կատարեմ։ Ասա՝ Հազարան բլբուլը կուզեմ։

Ալօ-Դինօն էրկու գեամը փաթաթեց յիր մէշկը, մինն էլ կախ արուց ծովը։ Ծովեղէն ձին դուս էկաւ, ուզեց որ Ալօ-Դինօին կուլ տա. Ալօ-Դինօն ձեռը քցեց, զայիմ բռնեց, թռաւ թամակին նստեց։ Զին ասեց. Ալօ-Դինօ, ինչ ես ուզում՝ կատարեմ։

Ասեց. Հազարան բլբուլն եմ ուզում։

Զին ասեց. Էտ իմ բանը չի, ես քեզ կը տանեմ ծովի էն զրաղը. իմ մենձ քիրն ընդի ա, նրա բանն ա, իմ բանը չի։

Զին տարաւ ծովի էն դէի զրաղը, Ալօ-Դինօի մտիցն ընկաւ, գեամը թողուց ձիու գլխին, ձին առաւ մտաւ ծովը։

— Վայ, ասեց, ձին գեամը տարաւ, ես ինչ անեմ։ Էտ ծովի տակն (կղզին) բաւականին ման էկաւ, գնաց տեսաւ մի հալիվոր մարթ նստած ա։ Ասեց. Բարև քեզ, ափու։

Ասեց. Որթի՞, դու էլ ես ընկել Հազարան բլբուլի շառը։

— Բա, ասեց, ես էլ էկա որ Հազարան բլբուլը տանեմ, ձին գեամը տարաւ, ընկաւ ծովը, մնացի ըսի։ Էտ ասելու վախտը

ձեռը տարաւ մէշկը, տեհաւ էրկու գեամ էլ ունի։ Հալիվորը որ տեհաւ էտ տղէն էրկու գեամ էլ ունի, ասեց. Որ բլբուլը կը բերես, Աստված սիրես՝ ինձ շանց տու, նոր տար։ Հարիր յիցցուն տարի ես ըստեղ եմ էտ բլբուլի խաթեր։

Ալօ-Դինօն գեամի մինն առաւ ձեռը, մինը կապեց մէշկը, գնաց կալս արուց էն գէր ծովը, մի ծովեղէն ձի դուս էկաւ, ուզեցաւ Ալօ Դինօին կուլ տա։ Ալօ-Դինօն ձիուն տվուց գենոնվը, վերին նստեց։

Ձին ասեց. Տղա, ինչ մուրազ ունես, ասա՝ կատարեմ։

Տղէն ասեց. Հազարան բլբուլն եմ ուզըմ։

Ասեց. Ա՛յ տղա, էտ բանը շատ դժար ա, ասեց։ Հրէ ասեց, Զաչոնց Թաքաւորի պալատի ծովի գիհը բլբուլի զաֆազը դրած ա, կարաս ինձ մի ընենց զամշի տաս, որ իրեք հարիր վաթսունը վեց տամարս դողա, ես բանցրանում ընչար փանջարէն, ձեռդ քցես՝ մի հետից զաֆազը վեր ունես, թէ վե չըկալաբ, էրկուսա էլ վե կընկենք, կը մահանանք։

Տղէն ասեց. Շատ լաւ կըլի։ Բաշեց զամշին. ձիուն ընենց տվուց, որ ջիգարը վառվեց, իրեք հարիր վաթսունը վեց տամարը վառվեց, ձին բանցրացաւ, հասաւ փանջարին, տղէն ձեռը քցեց, զաֆազը վե կալաւ. ձին վե էկաւ, էլի էն տաէն կաննեց, ասեց. Վե յարի, դնա քու բանիդ, ես ըզդարը անջախ կատարեցի։

Ալօ-Դինօն էկաւ հալիվորի կուշտը, էտ բըլբուլը շանց տվուց, հալիվորը բըլբուլը տեհնելու պէս՝ մահացաւ։ Ալօ-Դինօն էտ հալիվորին ըստեղ թաղեց, յիրա զուշը վե կալաւ, յիրան ձին նստեց էկաւ։ Էկաւ, հասաւ Սև դէվի ֆողը, վեր էկաւ յիրա կնկա կուշտը. ասեց. Բըլբուլ ջան, մի խօսա էս սև սարիրը կանանչեն։ Բըլբուլը խօսաց, սարերը կանանչեցին։ Կնիկը տեհաւ բլբուլի շնորքը, զարմացաւ։ Մի ամիս, եա էրկու ամիս ըստի մնացին։ Մի օր Ալօ-Դինօն ասեց. Ա՛ կնիկ, վե կաց, էթանք մեր հայրենիքը։ Մեր Թաքաւորութունը խանդաբված ա, սարաբ էս զուշը։

Վե կացան մարդ ու կնիկ, դէվին իժդար թանդագին բաներ ունէր, վեկալան. ձի նստեցինն, քշեցին էկան Սիպտակ դէվի ֆողը, միշնեկ ադրօր հարսին վեկալաւ, էն դէվի թանդագին բաներն էլ վեկալաւ ձիերին բարձեցին, քշեցին էկան Կարմիր դէվի ֆողը։ Մի էրկու օր էլ բաի մնացին, Կարմիր դէվի թանդագին բաները թօփ արին, բարձեցին ձիանունը, էկան հալիվորի կուշտը։

Հասան հալիվորին, Ալօ-Դինօն ասեց. Բարաչողըմ, պապի։

Ասեց. Բարով, հազար բարով, թաքաւորի տղա։

Ասեց. Իմ էրկու ախպէրն էկան գնացին, թէ ոչ։

Ասեց. Չէ, թաքաւորի տղա, էլա մարթ էկել չի։

— Դէ որ մարթ էկել չի, ասեց, էս իրեք հարսին ու էս դուշն ըսոի պըտնես, ես էթամ, իմ ախպօրտանցս բերեմ։

Հալիվորն ասեց. Շատ լաւ, թող մնան ըսոի Աստուն ամանաթ։

Տղէն գնաց քաղաքները ման էկաւ, ոչ մի տեղ քթաւ ոչ ախպօրտանցը։ Գնաց մի քաղաք, մի տուն զոնաղ էլաւ։ Հարցրեց էս տան տիրոնջը, ասեց. Ըսոի զարիր մարթը ինց կարան քթնիլ։ Էս տան տէրն ասեց. Մեզ, ասեց, զարիրական ժամ ունինք, դու կէթաս յառաւօտը զանգակները կը քաշես, օխտը եզ կը մորթես, զարիրական մարթիկը կիմանան որ էս եկեղեցըմը ժամ պատարագ կա, մատաղ կա, կը թափեն կը գան։ Թէ քու մարթիկդ քթնես՝ ընոի կը քթնես։

Գնաց քշերով օխտը եզ առաւ, մորթիչ տվուց, էփիլ տվուց, սեղանը պատրաստեց, զանգակները տվուց։ Զանգակները որ տվուց, էս էրկու ախպէրը հարցրին տանտիրոնջը, թէ զանգակները ընչի համար են տալի։

Ասեց. Ներա համար են տալի, որ անըմը զարիրական մարթը էթա մատաղ ուտի։

Մենձ ախպէրն ասեց. Խաղէին, մեզ էլ բաց թողաս՝ էթանք, մենք էլ մատաղ ուտենք, գանք։

Խաղէինը բաց թողուց, էկան տեհան, որ իժդար զարըբական կա՝ նստած մատաղ են ուտըմ։

Ալօ-Դինոն տեհաւ, որ յիրա էրկու ախպէրն էկան, ըսոոնց գինի տվուց, մատաղ տվուց, ասեց. Ինձ ճանաչը՞մ էք, ես ով եմ։

Ասեցին. Չէ։

Ասեց. Բա դուք ինչ տեղ էք ծառայըմ։

Ասեցին. Մինս քիւլհանչի ա, մինս համամչի։

Վեկալաւ էս էրկու ախպօրը, էկաւ խաղէինի կուշտն, ասեց. Սրանց հախը տուր, ես տանըմ եմ սրանց։

Ասեց. Սրանք քու ինչն են, որ տանըմ ես։

Ասեց. Սրանք իմ ախպէրտինքն են։

Մենձ ախպէրն ասեց. Դու ով ես, որ մեր ախպէրն ես։

Ասեց. Ես Ալօ-Դինոն եմ։ Վայ հողը ձեր գլխին, մեր թաքաւորութունը թողել էք, էկել էք մինդ քիւլհանչի էք դառել, մինդ էլ համամչի։

Ասեց. Թէ դու մեր ախպէրն ես, ասա տեսնեմ մենք ընչի՞ են գնացել։

Ասեց. Հազարան բիլբուլի. էն ա ես բերել եմ։

Ասեց. Ո՞ւրդի ա։

Ասեց. Էն հալիվորի մօտին, էկէք՝ էթանք։

Տարաւ յամէնքին մի ձեռք թամուլ շոր առաւ, հաբցրուց, վի կալաւ, գնացին հալիվորի մօտ։

Գնացին, բարով տվին հալիվորին. ախպէրտինքը տեհան որ ըտի իրեք հարս կա կանանած։ Ասեց. Ալօ-Դինօ, սրանք ով են։

Ալօ-Դինօն ասեց. Էս մինը, ասեց, Կարմիր դէվի նշանածն ա, այ պռօշները կոտորել եմ, հանեց շանց տվուց, էս մինը քեզ։

Էս մինն էլ Սիպտակ դէվի նշանածն ա, սրան էլ սըպանել, պռօշները կոտորել եմ, հրէս տեհէք։ Էս էլ միշնեկ ախպօրս նշանածն ա։ Էս էլ սև դէվի նշանածն ա, էս էլ իմն ա։

Մենձ ախպէրը նախանձվեց, ասեց. Սիրուն ցինքն ա վեր ունըմ, փիսը մեզ տալի։

Վի կալան Հազարան բլլուլը, նստեցին ձիերը, յամէն մարթ յիրա նշանածին քաշեց յիրա թարքը, քշեցին գնացին։ Շատ գնացին, քիչ, Աստված գիտի, գնացին, ճամփին, մէջի մէջ մէ ջրի ֆոր պատահեց։ Ըտի ասեցին, թէ ով պըտի ջուր հանի, մեր ձիերն էլ են ծարաւ, մենք էլ ենք ծարաւ։ Միշնեկին ասեցին. Դու նի միտ ֆորը, միշնեկը մտաւ ոչ, մենձ ախպօրն ասեցին. Դու նի միտ ֆորը։ Մինն էլ մտաւ ոչ։ Ետո ասեցին. Ալօ-Դինօ, դու նի միտ։

Ալօ-Դինօի կնիկն յառաջ էկաւ ասեց. Դու մնիլ մի, քեզ ֆորըմը կը թողան։

Ալօ-Դինօն ասեց. Բա իմ ախպէրտինքը ծարաւ մնան։ Ես մնիլ պտեմ։

— Դէ որ մնըմ ես, ասեց, առ իմ թաթմանիս մի հատը, պըհա մօտիդ, մնէլ առ իմ ոննամանիս թայը, պըհա մօտիդ։ Ես թաքաւորից կուզեմ իմ թաթմանիս ու ոննամանիս թայը, թէ որ քթան բերին, կիմանամ որ դու ֆորից դուս ես էկել։

Ալօ-Դինօն որ մտաւ ֆորը, ախպէրտինքը խորուրթ արին, որ Ալօ-Դինօին թողան ֆորի մէջ, որ չէթա թաքաւորի կուշտը պարծենա, թէ ցինքն ա բերել Հազարան բիլլուլը։

Ալօ-Դինօին թողին ֆորի մէջ. յիրանք վի կալան Հազարան բըլլուլն ու հարսներին, գնացին յիրանց քաղաքի դլուխը, խաբար արին թաքաւորին, թէ ալշկդ լիս՝ տղէքդ էկան։

Թաքաւորը՝ ոնց որ կարքն էր, յիրա ժողովուրթը վի կալաւ, էկաւ տղեքանց յառաջը, մենձ պատվով, հանդէսով տարաւ տուն։

Տարաւ տուն, հարցրուց. Էս հարսները ով են։

Մենձ ախպէրն ասեց. Էս մինը իմ նշանածն ա, էս մինն էլ քու միշնեկ տղինն ա, էս էլ դարաւաշ (աղախին) ենք բերել։

Ալօ-Դինօի կնիկն ասեց. Թաքաւոր, սուտ ա ասում, ես դրա կնիկը չեմ, ես տէր ունեմ։

Թաքաւորն ասեց. Որդիք, ձեր միչին վէճ կա, ես հաւատում չեմ, որ Հազարան բլբուլը դուք բերած ըլիք, էկէք բլբուլը խօսացրէք, որը որ խօսացրուց՝ նա բերած կը լի։

Մենձ ախպէրն ասեց. Ես եմ բերել, կացէք խօսացնեմ։

Ասեց. Դէ խօսացրու, թող մեր բախչէն կանանչի։

Մենձ տղէն էկաւ, ասեց. Բլբուլ Ջան, խօսա, թող բախչէն կանանչի։

Բլբուլը խօսաց ոչ։

Միչնեկ տղէն էկաւ, ասեց. Թաքաւորն ապրած կենա. դա չի բերել, ես եմ բերել։

Ասեց. Դէհ, որթի, դու խօսացրու։

Էկաւ ասեց. Բլբուլ Ջան, խօսա, թող բախչէն կանանչի։

Էլի խօսաց ոչ։

Մնացին մտածմունքի մէջ. բախչէն կանանչեց ոչ։

Մենք խաբարը Ալօ-Դինօից ասենք։

Ալօ-Դինօն ֆորքմը մնաց, շատն ու քիչը Աստված գիտէր, մի բաղրկեան էկաւ ֆորի կուշտը, հրամայեց յիրա նոքարներին որ ջուր բաշեն ֆորիցը։ Ալօ-Դինօն ֆորքմը հասկացաւ, որ մարթ ա էկել ֆորի դրադը, ուզում են ջուր քաշեն, ձէն տվուց, ասեց.

— Յիմանում չեմ, հայ էք, թուրք էք, ինձ էս ֆորից հանեցէք, իմդար ջուր ուզէք, ես կը տամ։

Մարթիկը կախկալը (վէդրօի նման ման) կախ արին ֆորի մէջ, իմդար ջուր հարկաւոր էր, հանեցին, եստ մնել Ալօ-Դինօն ձէն տվուց, թէ ինձ էլ հանեցէք։ Զմանը կախ տվին, Ալօ-Դինօն կապեց մէջկը, տասը, տասանըհինգ ֆոքով քաշեցին, հանեցին ֆորի միջից։ Դուս էկաւ, հարցրուց բաղրկեանը, ասեց. Ինչ մարդ ես։

Ասեց. Ադա, ես ճամբորթ ի, քշերը մութն էր, էկա, ընկա էս ֆորը։

— Բա, ասեց, յուր ես էթում։

Ասեց. Պտի էթամ ֆլան քաղաքը։

Յիրիկունը մնաց բաղրկեանի կշտին, հաց կերան, յառաւօտը վե կացան, բեռները բարձեցին, ընկան ճամբա, էկան էտ թաքաւորի քաղաքը։ Ալօ-Դինօն դուրս էկաւ էտ բաղրկեանի քարվանից. գնաց յիրանց քաղաքը, մի հալիվորի տղա դառաւ։

Հալիվորը օրվա մի օրը լսեց, որ թաքաւորի մարթը ձէն ա տալի, թէ թաքաւորը տղին փնտրում ա, ասենց մի հատ թաթման կա, էս թաթմանից ով կարա կարիր

Էկաւ, Ալօ-Դինօին նաղլն արեց, ասեց. Մի հատ թաթ-ման են ման ածըմ, ու հարցնըմ թէ ով կարա էս թաթմանիցը կարի, թաքաւորի հարսն ուզըմ ա։

Ալօ-Դինօն ասեց. Ես էլ քու կշտին մնալ չեմ, էթըմ եմ յաշկերտ ըլնելու։

Գնաց մի դերձակի կշտի ընչար յիրիկուն կաննեց։

Ուստէն ասեց. Ա՜յ տղա, ինչ տղա ես։

Ալօ-Դինօն ասեց. Ես յանտէր տղա եմ, ի սէր Աստու ինձ էս արհեստը սարվացրու։

Ուստէն ասեց. Որթի, յարի գնա ընտեղ նստի դուքանըմը։

Ուստէն գիտէր ոչ թէ դա ով ա, ես ում տղէն ա։

Ալօ-Դինօն վե կալաւ աւիլը, դուքանը սրբեց, ջուր բերուց, շաղ տվուց, ուստէն տեհաւ որ շատ լաւ, խելօք տղա ա։ Յէքսի օրը թաքաւորի նաղիր վազիրը էս թաթմանը ման ին ածըմ էս դերձակների դուքանները։ Էկան հասան էս տղի դուքանի կուշտը, ասեցին. Ուստա, էս թաթմանից կարես կարիլ, ասեց. Կարալ չեմ կարիլ։ Տղէն տեղիցը վեկացաւ, մօտ էկաւ, ասեց. Ես կը կարեմ, ուստա։

Ուստէն բարկացաւ յաշկերտի վրին, թէ՝ Յերկկ ես էկել, ոնց ես կարըմ։

Ասեց. Ես կը կարեմ, ուստա։

Ուստէն շատ բարկացաւ յաշկերտի վրին, նաղիրն ու վազիրը բարկացան ուստի վրին, ասին. Խի՞ ես արդելում, որ էս մարթը փորձի։ Թէ որ կարեցար ոչ ըսենց կարիլ, յառաւօտը թաքաւորը քու գլուխը կը կարի։

Ասեց. Շատ լաւ կըլնի։

Ուստէն մնաց տարակուսված։

— Ուստա, ասեց, խի՞ տարակուսված մնացիր։

Ասեց. Դու յիրկկ ես էկել, ես քսան տարվա ուստա եմ, ես կարալ չեմ կարի, դու ոնց ես կարելու Ջուր տեղը գլուխդ խի՞ ես վրա տալիս։

Ասեց. Ուստա, ես կը կարեմ, թէ որ հինգ փութ ֆինդուխտ բերես, ջարդեմ ուտեմ։

Ուստէն գնաց չորս փութ ֆինդուխտ առաւ, բերուց, տվուց յաշկերտին։

Ասեց. Ուստա՝ խի՞ մի փութ պակաս բերիր։

Ասեց. Վնաս չունի, փող չունէի, ըդարն էլ բոլ ա։

Տղէն ֆինդուխտը ջարդեց ու կերաւ, ընչար լիսը բացվեց։

Ուստէն ասեց. Էթամ տեսնեմ կարիլ ա։ Էկաւ տեհաւ որ մի թաթման վազիրների բերած թաթմանի հետ վեր ա դրած։ Էկաւ

որ վիր ունի, տունի Ալօ-Դինօն ասեց. Ուստա, իրաւունք չունես ձեռ տալու, խարար կանես։

Էտ խօսվածքի միջին, թաքաւորի նաղիրն ու վաղիրն էկան.

— Հա, ասեցին, ուստա, կարել ես։ Ուստէն վախեցաւ, ջուղապ չտվուց։

Տղէն յառաջ կաննեց, թաթմաններրը ընրուց, տվուց, ասեց. Համեցէք։

Մտիկ արին, տեհան, որ շատ զարմանալի կարած ա։

— Դէ, ասեցին, ուստա, համեցէք էթանք, որ թաքաւորը ձեր հախը տա։

Ալօ-Դինօն ասեց. Ուստա, վեկաց նաղիր ու վաղիրի հետ գնա, մեր հախը առ, յարի։

Ասեց. Որթի, ես կարալ չեմ, դու գնա, բալքի հաւանեց ոչ, ասեց, թող քու գլուխը կտրի։

Ալօ-Դինօն վեկացաւ, նաղիր վաղիրի հետ գնաց։ Թաքաւորին շանց տվին թաթմաններին, ասեց. Իմ բանը չի, տարէք հարսին շանց տվէք, թէ որ կը հաւանի, լաւ։

Հարսը տեհաւ՝ թաթմաններին հաւան կացաւ, հանեց ուստին իրեք հարիր մանէթ փող բախշեց։

Յաշկալիս էկան թաքաւորին, ասեցին. Հարսը թաթմաններին հաւան կացաւ։

Ասեց. Ուստին կանչեցէք գա։ Ուստէն էկաւ, թաքաւորին գլուխ տվուց կաննեց։

Տեհաւ որ շատ լաւ, սիրուն տղա ա, ասեց. Դու ես կարել էս թաթմանը։

Ասեց. Հրամանք ես, թաքաւորն ապրած կենա։

Թաքաւորը կանչեց երկու հարիր մանէթ էլ յինքը բաշխեց ուստին։

Ալօ-Դինօն փողերը վեկալաւ, էկաւ դուքան, ասեց. Ուստա, համեցէք, էս քու փողերը։

Ուստէն ուրախացաւ, փողերը վեկալաւ։

Ալօ-Դինօն ասեց. Ուստա, դու լաւ մարդ չես։

Ասեց. Ընչի՞ համար։

Ասեց. Նրա համար, որ ես քեզնից ուզեցի հինգ փութ ֆինդուխա, դու գնացիր չորս փութ բերիր, ես էլ քու կշտին մնում չեմ։

Ընտիան դուս էկաւ, գնաց ոտնաման կարողի կուշտը, գըռանը կաննեց, ուստէն ասեց. Ա՜յ տղա, ինչ տղա ես։

Ասեց. Ուստա, յանդէր տղա եմ, տէր չունեմ, տիրական չունեմ, քու վարցքիդ խաթեր ինձ էտ փէշակը սարվացրու։

Տղէն գնաց, դուքանըմը նստեց։ Ուստէն էկաւ ջուր ուզեց. էտ տղէն վեր կացաւ, կուժը վեր կալաւ, գնաց ջուրը, ջուրը բերուց, լցրուց, տվուց ուստին, ուստէն խմեց, էտ վախտը թաքաւորի նազիր վազիրը մի ոտնամանի թայ ձեռներին ման ին գալիս, թէ ով կարա ըսենց մի թայ ոտնամանի կարի։

Էտ տղէն վեր կացաւ ասեց. Ուստա, ես կը կարեմ։

Ուստէն բարկացաւ տղի վրա, ասեց. Յէրէկ ես էկել, ըսօր ինց ես կարըմ։

Ասեց. Ուստա, բարկանալ մի, ես կը կարեմ։

Ուստէն մնաց տարակուսած։

Նազիրն ասեց. Որ կարեցիր ոչ, ձեր էրկսի գլուխն էլ կը կարի թաքաւորը։

Ուստէն ասեց. Դէ որթի, դու գիտես։

— Ասեց. Ուստա, թէ որ քսան փութ ֆնտուխտ բերես՝ ես էս քշեր ուտեմ, կը կարեմ։

Ուստէն գնաց, տասնըվինը փութ առաւ, մի փութ պակաս առաւ։

— Դէ, ասեց, ուստա, դու գնա տուն, ես կը կարեմ։

Ուստէն էկաւ տուն համփերեց ոչ, քշերվա մի վախտ ասեց. Էթամ տենեմ կարը՞մ ա, թէ ոչ։

Էկաւ երթկից մտիկ արուց, տեհաւ, որ տղէն ֆնդուխտ ա ուտըմ, ասեց. Էս սալախանէն որտեղից ինձ պատահեց, յառաւօտն իմ գլուխը գնաց։

Յառաւօտը լիսը բացվեց, ուստէն էկաւ դուքանը, տեհաւ որ մի ոտնամանը էրկուս ա դառել։

Ուստէն վեր կալաւ, որ ոտնամանը տենի, յաշկերտն ասեց։ Ուստա, իրաւունք չունես ձեռը տալու դրան։

Ասեց. Ընչի՞ հրմար։

Ասեց. Դու յէրէկ թողըմ չիր, որ ես կարեմ։

Էտ խօսվացքին՝ թաքաւորի նազիրն ու վազիրն էկան ասեցին. Ուստա, կարե՞լ էք։

Ուստէն ասեց. Ես խարաբ չեմ, յաշկերտին հարցրէք։

Յաշկերտը վեր կացաւ, տվուց թաքաւորի նազիր վազրին։ Տեհան որ շատ լաւ կարած ա։

— Դէ, ուստա, ասեց, մինդ էկէք էթանք, որ թաքաւորը ձեր հաթը տա։

Ուստէն ասեց. Որթի, դու գնա հետները։

Տղէն գնաց նազիր վազիրի հետ, տարան ոտնամանը թաքաւորին շանց տվին։ Թաքաւորն ասեց. Իմ բանը չի, հարսի բանն ա, տարէք տվէք, տեհէք հարսը հաւանըմ ա։

Տարան հարսի կուշտը, հարսն յիմացաւ որ յիրա ոտնամանն ա, ոդին ճանաչեց, ասեց. Խի՞ չես գալի Ասեց. Էլա ժամանակ չունեմ։ Թաքաւորի հարսը հանեց մի հինգ հարիր մանէթ բաշխեց ուստին։ Էկան Թաքաւորին ասեցին, թէ ոտնամաններին հաւան կացաւ հարսը։

—Կանչեցէք, ասեց, ուստին՝ գա։

Կանչեցին, ասեց. Ուստա հարսը հաւան կացաւ ոտնամաններին.

Ասեց. Հրամանք ես, հաւան կացաւ։

Հանեց մի հինգ հարիր մանէթ էլ Թաքաւորը բաշխեց ուստին։

Վեկացաւ էկաւ դուքանը, փողերը տվուց ուստին, ասեց. Ուստա, ես էլ քու կշտին մնալ չեմ, դու փիս մարթ ես։

Ասեց. Խի՞։

Ասեց. Ես քսան փութ ֆնտուխա ուզեցի, դու տասնըվեցնը փութ բերիր։ Ես էլ մնալ չեմ քու կշտին։

Վեկացաւ, էկաւ հալիվորի կուշտը, որին տղա էր դառել։

Հալիվորն ասեց. Որթի, որտեղ իր ընդար վախտ։

Ասեց. Ջանէլ տղա եմ, ինձ համար քաղաքըմը մեն ի գալիս։ Հա, ասեց, ախաւ, չըլնի միտդ պակսել ա, առ փող տամ, տար խարջա։

Հանեց մի տասը բուռը վռակի տվուց հալիվորին։

Հալիվորը մի օր գնաց բաղարը, տեհաւ որ ընդար զօրք ա էկել որ հոդ ու հաշիւ չկա։

Հարցրուց հալիվորը, թէ էս ինչ զօրք ա։

Ասեցին թէ Զաչոնց Թաքաւորը էկել ա ըլբուլ զլի ըներդին ա ման գալի։ Թաքաւորին ասում ա. Ես ըլբուլ զլին ըներդ տղին զրկա դա, ես քու թախտդ կը վերջացնեմ։ Հալիվորը էկաւ, տղին խարար տվուց։

Տղէն ասեց. Գնա Թաքաւորին խնդրա, ասա որ դու ըլես էն Ալօ-Դինօ տղի արկը, պտի Ալօ-Դինօի ձին տաս, իմ տղէն նստի էթա էս Թաքաւորին ջուղտպ տա, որ քու քաղաքի մի հաւին վնաս պատահի ոչ։

Հալիվորը գնաց ձին ուզեց, Թաքաւորը ասեց. Ինչ բերել են ձին, էն ընենց կապած մնում ա, մարթ չի կարալ կուշտն էթալ, ով կարա էն ձին հանի գուս։

Ալօ-Դինօի կնիկն ասեց Թաքաւորին. Թաքաւոր, հրաման տու, ես էթամ հանեմ էդ ձին, տամ հալիվորին։ Հարսը հասկացաւ, որ յիրա մարթն էր էս հալիվորին զրկել։

Թաքաւորն իրաւունք տվուց, հարսը գնաց ձին բերուց, Թամբան տվուց, թէ խելօք կեթաս քու տիրոնչ կուշտը, քաշեթ

տվուց հալիվորին, հալիւորը ձին քաշելով բերուց, տվուց Ալօ-Դինօին։

Ալօ-Դինօն ձին նստաց, էկաւ մէյդանը, տեհաւ որ յիրար մենձ ախպէրը մի ձի ա նստել, էթում ա, որ Թաքաւորին պատասխան տա։

Ալօ-Դինօն հարցրուց, ասաց. Ա՛յ տղա, յուր ես էթում։

Թաքաւորի տղէն ասաց. Բլբուլ զուշը բերել եմ, էթում եմ Թաքաւորին պատասխան տամ։

Գնաց մտաւ Զաչոնց զօրքի մէջը, ասաց. Ո՞րն ա Թաքաւորի չատիրը։

Ասեցին. Հրէն, էն կարմիր չատիրն ա։

Գնաց, օխտ հետ Թաքաւորին գլուխ վի բերուց։

Ասաց. Դու ես Թաքաւորի որթին։

Ասաց. Հրամանք ես, ես եմ։

Ասաց. Դու բերիր Հաղարան բլբուլը։

Ասաց. Հրամանք ես, ես բերի։

Ասաց. Ո՞նց բերիր։

Ասաց. Էկա ձեր մէշիցը ծառի վրէն կանգնած էր, բանեցի, բերի։

Ասաց. Չելաւ, չելաւ։ Դու չես բերողը, գնա ուստ իլ։ Հրամայեց զօրքին, որը փէտով, որը ձեռով ծեծեցին, ճամփու քցեցին։ Լաց ըլելով էկաւ տուն։ Միշնեկ ախպէրն ասաց. Խի անտեղի դու ծեծվեցիր, չէ՞ որ ես եմ բերել զուշը։

Մենձ ախպէրն ասաց. Որ դու ես բերել, գնա պատասխան տուր։

Միշնեկ ախպէրը ձին հիլաւ, հպարտ հպարտ գնաց զըբա զօրքը։

Ալօ-Դինօն եռեվից հասաւ, ասաց. Ա՜յ տղա յուր ես էթում։

Ասաց. Բլբուլ զուշը բերել եմ, էթում եմ Թաքաւորին պատասխան տամ։

Ալօ-Դինօն ասաց. Գնա, դու էլ կը ծեծվես, ետ կը դաս։

Գնաց զօրքի մէջը հարցրուց, ասաց. Թաքաւորի չատիրը որն ա։

Շանց տվին, ասեցին. Էն կարմիր չատիրն ա։

Գնաց օխտ հետ գլուխ տվուց Թաքաւորին, վրա ուրթին ձեռը կապեց, կանգնեց։

Թաքաւորն ասաց. Դու ես իմ բլբուլ զուշը բերել։

Ասաց. Հրամանք ես, ես եմ բերել։

Ասաց. Ո՞նց բերիր։

Ասաց. Թաքաւորը սաղ ընի, յիրիկունը մութն էր, մեկ

տեղա էտ դուշը սարիցն էկաւ, գնաց մտաւ յիրա բունը, ձեռս կոխեցի բնի մէջը, բռնեցի բերի։

Ասեց. Ձիլաւ, չիլաւ, բլբուլը դու չես բերիլ, սուտ ես խօսըմ։

Հրամայեց զօրքին, դրան ծեծելով դուս քշեցին։

Թամակիցը հրաման էկաւ, թէ եա բլբուլ դուշը բերողն եմ ուզըմ, եա երկիրդ քանդըմ եմ։

Ալօ-Դինոն էկաւ Թաքաւորին խնթրեց, ասեց. Իրաւունք տուր ես էթամ, ջուղար տամ։

Թաքաւորը չէր ճանաչըմ որ յիրա տղէն ա։

Ասեց. Դէ որթի, թէ կարաս՝ գնա ջուղար տուր։

Ասեց. Թաքաւորն տպրած կենա, քեզ հետ ես պայման եմ անըմ, և քեզնից ստորագրութուն եմ ուզըմ։ Եթէ ես էտ թաքաւորին ջուղապ տվի, քու երկրիդ յատանց վնաս տալ գնաց, իրեք սրհաթ թաքաւորութուդ ինձ տուր, որ ինչ դատեմ՝ դատեմ։

Թաքաւորը ստորագրութուն տվուց էտ տղին, տղէն պայմանն տաւ՝ գրուց ծոցը, վեկացաւ գնաց Զաչոնց թաքաւորի կուշտը, գլուխ տվուց, կանգնեց։

Ասեց. Դու ես թաքաւորի որթին։

Ասեց. Ես եմ։

Ասեց. Իմ Հազարան բլբուլը դու բերիր։

Ասեց. Հրամանդ ես, ես բերի։

Ասեց. Ինչ ջուղա բերիր։

Ասեց. Էկա Կարմիր գէվի փողը, յինքն իրեք գլխանի էր, Կարմիր գէվին սրպանեցի, գնացի Սիպտակ գէվի փողը, յինքը օխտը գլխանի էր. դրան էլ սրպանեցի, Կարմիր գէվի նշանածը ուզեցի իմ մենձ տխտօրս, Սիպտակ գէվի նշանածը ուզեցի միշտնեկ տխտօրս, էկա Սև գէվի փողը, յինքը քսանուն գլխանի էր, իրեք որ կոխ տրինք, վերջը գէվին սրպանեցի, կնիկը ես տաւ։ Էկա մի մենձ ծովի պատահեցի, էտ ծովի դրսովին մի քար կար, մէջտա գէմ արի էտ քարին, չիմացա, քնած ի թէ զարթուն, մի ձէն իմացա, ասեցին թէ էտ քարի տակին ծովեղէնի գեամ կա, վե կացա քարը պոկեցի, իրեք գեամը հանեցի, գեամի մինը ծովը քաշեցի. ծովեղէնը դուս էկաւ, էտ ծովեղէնը ինձ բերուց քու ծովի կուշտը, ծովեղէն ձին ասեց, որ դրա հնարքը իմ մենձ քիրը գիտի, մեկ գեամը քաշեցի. ձին դուս էկաւ, նիլա, ասեց. Ի՞նչ մուրազ ունես՝ ասա կատարեմ։ Ասեցի իմ մուրազն էն ա որ Հազարան բլբուլը պըտի տանեմ։ Ձին ասեց. Ինձ մի ղամշի կտաս՝ որ իմ ջիգարս վառվի, որ քեզ բանձրացնեմ թաքաւորի փանջարի յատաջը, մի հետից ղաֆազը վեկալ։ Ձին բանձրացաւ,

ես դաֆազը վեկալա, էկա։

Ասեց. Ալո-Դինոն դու ես։

Ասեց. Հրամանք ես, ես եմ։

Ասեց. Ոնց հաւատամ որ դու ըդար զոչաղութունը արել ես։

Ըտեղ ձիու վրիցը խուրջինը վեր բերուց, Կարմիր դեվի, Սիպտակ դեվի յանկաճներն ու պուշները լցրուց յառաջը։

Թաքաւորը համոզվեց որ սա ա բերել. ասեց. Որթի քեզ փեշքաշ ա իմ դուշը, ու զորքը քաշեց, գնաց։

Յիրա հէր թաքաւորը մտիկ տվուց, տեհաւ որ Զաչոնց թաքաւորը յիրա զորքը քաշեց, յառանց ՁԼաս տալու գնաց։

Տղէն էկաւ հոր կուշտը, ասեց. Ինձ ճանաչում Ես։

Ասեց. Չէ, չեմ ճանանչում։

Ասեց. Ես քու Ալո-Դինո տղէն եմ։

— Դէ, ասեց, որ դու իմ տղէն ես, ըլլուլ ղըշին խոսացըրու, թող մեր յիքին կանանչի։

Տղէն էկաւ ասեց. Բլբուլ Ջան, խոսա, թող բախչէն կանանչի։

Ասելուն պէս բլբուլը խոսաց, յիքին կանանչեց։

Նոր թաքաւորը հասկացաւ, որ յիրա տղէն ա։

Ալո-Դինոն հանեց թաքաւորի տված սաորագրութունը, ասեց. Իրեք սնաթ թաքաւորութունդ իմն ա։

Թաքաւորն ասեց. Իրաւունք ունես։

Նստեց, դատ կտրեց յիրա ախալօրտանց վրա։

Ախալէրտինքը յանցառու էլան, որ յիրենք մեղաւոր են։

Թաքաւորին հարցրուց թէ՝ ինչ պատիժ տամ սրանց։

Թաքաւորն ասեց. Որթի, դու գիտես։

Ալո-Դինոն ասեց. Չէ, սրանք ինձ սրպանեցին ոչ՝ ես էլ սրանց չեմ սրպանի։ Ես ինդրում եմ, յամէն մեկ կնիկը տաս յիրանց, ու երկրավատանկ անես քու հողիցը, քանի սաղ եմ, էլ իրաւունք չունենան մնելու էս փողը։

Իրեք սնաթից հետո թաքաւորը յիրա թաքաւորութունը սատացաւ։

Մնաց մի երկու տարի, թաքաւորը մահացաւ, յիրա Ալո-Դինո տղէն նստեց թաքաւոր։

Ներանք հասան յիրանց մրուրաղին, մենք էլ հասնենք մեր մուրաղին։

Երկնքից իրեք խնձոր վէր էկաւ, երկուսը լսողներին, մինն էլ ասողին։

ԹԱՄԲԱԼ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Աշտարակ *)

Ժամանակով մի մարթ ա ըլում, ունենում ա մի թամբալ տղա։ Էս տղէն ընդարձ թամբալ ա ըլնում, ուզում չի որ յիրա համար ջուր վերնի՝ խմի։

Օրվա մի օրը Էս թամբալը տենում ա, որ յիրանց դռնովը տաւարի ոսի ձէն ա գալի։ Հէրը գալիս ա տուն, ասում ա. Ավու, էս տաւարը յուր էն տանում։

Հէրն ասում ա. Որիի, տաւարը տանում են վար տնելու, ցանք տնելու։

Թամբալն ասում ա. Ավու, լեքուց ինձ էլ գիր եղների վրին, տար հանդը, համա ինձ տես ոչ թէ եղներին քշա։

Հէրն ասեց. Լաւ, ասիլ չեմ։ Վե կալաւ տարաւ հանդը, ընչանք ճաշ վար արուց, եռաւ թամբալն ասեց թէ՝ ես սոված եմ։

Ասեց. Ա՛յ որիի, գէ վեր յարի եղների յուսիցը, թող եղները արածեն, ես էթամ՝ հաց բերեմ։

Ասեց. Զէ, ես վե չեմ գալ։

Հէրը բաց թողուց, գնաց հացի։ Թամբալը մտածեց, տեհաւ որ մարթ կա ոչ, սկսեց եղներին քշի, թէ տենեմ եղները իմ քշելով էլ կէթան, թէ ոչ։

Եղնիքը մի տասը լոք գնացին, էլ իժդար ծեծեց, գնացին ոչ։ Թամբալը մտիկ արուց, տեհաւ, որ մարթ կա ոչ, եղնիքի յուսից վեր էկաւ. ասեց. Տեսեմ խոփն ընչի՞ ա գէմ տանել, որ եղնիքը էթում չեն։ Ցողը ձեռով եղ տարաւ, տեհաւ, որ մի քառասուն տնկանի պղինձ, մէջը լիքը վօսկի ա։ Էս վոսկու վրին չորս հատ վոսկու գալիր կար։ Տղէն էս խազնի վրէն նստեց, չորս բոլորն էլ ցողը թոփ արուց։ Տիչ եռաւ տեհաւ, որ յիրանց գեղի տանուտէրը յիրա գլրի հետ էթում ա, ասեց, թէ որ վօսկին տամ հօրս, ինձ համար տաւար կառնի, ոչխար կառնի, ինձ շատ կը բանացնի,

---

* Պատմեց 1912 թ. Օգոստոսի 28-ին Աշտարակ գիւղում նոյն գիւղացի Աւետիս Գրիգորեան անգրագէտ ծերունին։

լաւն էն ա, որ կանչեմ տանուտէրին, տամ յիրան։ Ձէն տվուց տանուտէրին. Տանուտէր, յարի, յարի, յարի։

Դղիրն ասեց. Տանուտէր, յարի էթանք, տեսնենք ի՞նչ ա ասում Թամբալը։

Տանուտէրն ասեց. Բան չունեմ, էթանք մեր համփէն։

Թամբալն էլի ձէն տվուց, յարի, յարի։ Տանուտէրն էկաւ մօտացաւ։ Որ մօտացաւ՝ Թամբալը մի՛տկը փոխեց, ասեց. Խի՞ տամ էս վասկին սրան, ասեց. Դու տանուտէր ես, դեղ ես կա-ուավարում, ասա տեսնեմ, մեր էս սև եզը կարմիր եղի ի՞նչն ա։

Տանուտէրը մի լաւ ծեծեց ըսրան, ետ դառաւ։

Տղէն ասեց. Էս փողի ըալբալէն շատ կը քաշեմ, հլա չավածծ, ծեծը կերա։ Լաւն էն ա որ տանուտէրին կանչեմ, տամ յիրան։ Մըն էլ ձէն տվուց, թէ տանուտէր, յարի, յարի։ Էլի դղիրն ասեց. Տանուտէր, յարի էթանք, սրանում մի բան կա։ Ետ դառան, էկան մօտիկ, Թամբալն էլի միտկը փոխեց, ասեց՝ խի տամ, փողն էլ մարթի տան։

Տանուտէրն էկաւ ասեց. Ի՞նչ ա, ա՛յ պիժ, Թամբալ։

Ասեց. Դու տանուտէր ես, համա խելքդ բանի հասնում չի։ Մեր սև եզը կարմիր եղի քեսին ա։

Ըսեզ էլի տանուտէրը ծեծեց, ձիանը քշեցին, գնացին։

Եզով տեհաւ, որ հէրը գալիս ա, յաշկերը սրփեց։ Հէրն էկաւ մօտիկ, տեհաւ որ տղէն եզնըքի վզից վեր ա էկել։

Հէրը ասեց. Որթի, յարի, ըսեզ էս կանանչների վրէն հաց ուտենք։

Տղէն ասեց. Ես գալիս չեմ ըսեզ, դու յարի ըսոր։

Հէրն ասեց. Ախաբ ըսի՞ փող ա, կիրակուր եմ բերել, կը փո-ղոսի։

Ասեց. Ինչ ուզում ա ըլի, ես ըսի գալ չեմ։

Հէրը՝ իլաջը կարվեց, հացը բերաց տղի կուշաը, տեհաւ որ տղէն նստել, փողը քաշում ա կոդքերը։

Հացը կերան, պրծան. Դէհ ասեց, վե՛ կաց տեղիցդ, կիսատը վարենք։

Ասեց. Դու գնա՝ քու կիսատը վարա. ես ըսեխան վե՛ կենալ չեմ։

Հէրը գնաց կիսատը վարեց, ասեց. Մուրթն ընկաւ, վե՛ կաց էթանք տուն։

Ասեց. Էթում ես, գնա, ես գալիս չեմ։

Հէրն ասեց. Գալիս չես, գալ մի, գիլանը կը գան քեզ կուտեն։

Թամբալը վախեցաւ, ասեց. Ախաւ, յարի, յարի, բան եմ

ասում։ Ասեց. Ինձ խրատաս գիր ընես, տես էս պղինձը մէջը լիքը վօսկի ա, էս վօսկիքը քեզ ըլի, մենակ էս չորս վօսկի զալիրը պտի տանեմ թագաւորին տամ։ Դէհ, ասեց, գնա մեր սէլը բեր, վօսկին տար տուն։

Հերը գնաց, սէլը բերաւ, վօսկիքը հանեց, բարձեց սէլին, ադէն յիրա փոխանը հանեց, էս չորս զալիրը քցեց մէջը, գնացին տուն։ Վօսկիքը տեղաւորեցին, Էկան նստեցին։ Կնիկը տեսաւ, որ մարթի նիսթը կախ ա, ասեց. Ա՛յ մարթ, խի՞ ես նիսթդ կախ արել, էլ բսօրվանից էլ լաւ ծը։

Ասեց. Բա ինչ անեմ, չորս վօսկի զալիր կար, էս մեռածը վե կալաս գլուց փոխանի մէջ, որ յէքուց տանի թագաւորին տա։ Որ թագաւորն էս բանը տեսնի, կը զա մեր վօսկիքն էլ կը խլի, կը տանի։

Կնիկն ասեց. Դարդ անիլ մի, ես կը հանեմ, դու վե կաց քնի։

Թամբալը քնեց, կնիկը գնաց մի կճուճ բերաւ, ջարդեց, տարաւ լցրաւ փոխանի մէջը, վօսկու զալրքները հանեց, տարաւ պրծնեց։

Յառաւօտը թամբալը զարթնեց, շորերը անհագնել, յերեսը անլվա, չիփլաղ գնաց մտաւ թագաւորի պալատը։

Թագաւորը ասեց. Ինչ ա, Թամբալ։

Ասեց. Քեզ համար փէշքաշ եմ բերել։

Նազիրին ասեց. Բաց արա էս մարթի փոխանը։

Նազիրը բաց արաւ փոխանը, տեսաւ որ մէջը լիքը կճըճի կտորտանք ա։

Ասեց. Թամբալ էս ինչ ես բերել։

Ասեց. Էս բերել եմ, որ ինձ համար քարեր ընես, գլվանքա, կէս գլվանքա, կէս լիդրը, հա մի լիդրը, ես յէքուց բազարըմը գաղար պրտեմ ծախեմ, որ մարթ ընձանից գանգատաւոր չըլի։

Թագաւորը բարկացաւ, ասեց. Տարէք սրան բռնէք։

Տարան, բռնեցին։

Ետս թագաւորն ասեց. Սրա գլխին մի օյին են հանել, գնացէք տեսէք թէ բռնատան մէջ ինչ ա անում։

Գնացին, տեսան որ ձեռով չափ ու ձև ա անում։

Թագաւորն ասեց. Գնացէք բերէք։

Բերին թագաւորի մօտ, կանգնացրին, ասեց. Խի՞ իր ըսենց չափ ու ձև անում։

Տղէն մտածում էր թէ՝ Իմ վօսկու զալրքները ըզդար էն, իսկ սրանք մանդը են, էս ոնց ա ըլել, որ մանդրացել ա։ Համա ուզեց ոչ թագաւորին ասի, թէ յինքը վօսկու զալրքները բերել ա.

ասեց. Թաքաւորն ապրած կենա, ես քեզ վրա ու քու մօրդ վրա դարմանըմ եմ։ Քու գլուխդ ըղդար ա, մօրդ զատը ըղդար, ինց ա միջովը դուս էկել։

Թաքաւորն ասեց. Տարէք էտ դժին քցեցէք մի մարաք, կրակը ավէք, թող վառվի։

Տարան քցեցին մարաքի մէջը, դարմանը կրակ տվին։ Տղէն քիչ մնաց որ հեղդուի, ասեց. Թաքաւորն ապրած կենա, ինձ ըստիան հանա, ես ուղիղն ասեմ։

Թաքաւորն ասեց. Հանեցէք։

Հանեցին, բերին Թաքաւորի յառաջը, ասեց. Դէ ասա ուղիղը։

Տղէն էլի միտկը փոխեց, ասեց. Թաքաւորն ապրած կենա, դարմանի մուխը մարթ ա հեղտըմ։ Էլ ըտենց բան անիլ մի։

Սինոթապետները ասեցին. Էտ ջուռա գժին պատժիլ չեն, բրախ տու, թող կորչի, մենք էլ կը պատժվենք։

Թաքաւորը յանկաճ արուց սինոթապետներին. Դէ, ասեց, կորի գնա ձեր տունը։

Ճամբին խելօքացաւ տղէն, էկաւ հօրն ասեց. Բիր մեր տները շինենք, գնա, ասեց, մեզ համար կով առ, եզն առ, ոչխար առ, բե պըհենք։

Հէրը տեհաւ, որ տղէն խելօքացել ա, տղին հարսանիք արուց, փսակեց. Նրանք հասան յիրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

Երկնքից իրեք խնձոր վեր էկաւ, մինն ասողին, էրկուսը լսողներին։

ԱՐԵՒԱՀԱՏ ԵՒ ՕՁՄԱՆՈՒԿ

(Աշտարակ*)

Ժամանակով մի թաքաւոր ա ըլում։ Էտ թաքաւորը մի օր դուռ ա գալիս բակոնը ման գալի, տեսնում ա՝ որ մի օձ յիրա ճուտերը բերել ա բակի միջին սիրում ա։ Թաքաւորն էտ որ տեսնում ա, ասում ա. Տէր Աստված, ինչ կըլի որ ընձ էլ մի զաւակ տայիր, ես էլ սիրէի իմ զաւակին. բա ես էս օձի զղար էլ կայի ոչ, որ մի օձի ճուտ էլ ա ինձ տալիս չես։ Էտ ժամանակը Աստու ողորմութիւնի դուռը բաց ա ըլում, Աստված լսում ա թաքաւորի խնդիրը ու օձի ճուտ ա տալի։

Գալիս են թաքաւորին յաշկալիս, ասում են. Թաքաւոր, յաշկդ լիս, կնիկդ ազատվեց, համա ինչ անես, որ մի օձի ճուտ ա բերել։ Թաքաւորն ասեց. Փառք Աստու, ինչ անեմ, էլի զաւակ ա, էտ ա կամեցել Աստված։

Էտ օձի ճուտը օրական մենձանում էր, մի շապտվա վրին համարիա դառաւ մի ուշապ։ Թաքաւորի սինոթապետները ասեցին. Սրան ընչով կշտացնենք։ Ինչ բան տվին, կերաւ ոչ. Հա զո

էր, ուտելիք էր ուզում, ուզում էր պատերը քանդի։

Մի օր նազրի ախչիկն էկաւ որ էտ օձին տեսնի, օձը էտ ախչկա թեւից բռնեց, քաշեց նեքսն, կուլ տվուց. բոի յիմացան, որ դրա կերածը ախչիկ պտի ըլի։

Թաքաւորը հրամայեց, որ յամէն օր մի ախչիկ տան ուշապին ուտի։ Սալդաթները գնացին չոլերը ման գալու, որ յանտէր ախչիկ գտնեն, բերեն տան ուշապին։

Օրվա մի օրը մի ախչիկ գտան, անումը Արևնատ, բերին թաքաւորի կուշը։

Թաքաւորն ասեց. Տարէք, տվէք իմ տղին։

Էլ կարում չին որ դուռը բաց անէին էտ ուշապի երկուղիցը, Արևնատին տարան երդիկիցը կախ արին՝ տվին ուշապին։

---

*) Պատմեց 1912 թ. Օգոստ. 22-ին Աշտարակ գիւղում նոյն Աւետիս Գրիգորեանը։

Արևհատն ասեց. Բարիլիս քեզ, Թաքաւորի որթի։

Ուշապը խրիին պատռեց, դառաւ մի լաւ տղա, էկաւ ախչկա կուշտը. շատ սիրեցին յիրար։

Թաքաւորն ասեց. Գնացէք տեսէք՝ ախչկան կերթ՞ա, թէ ոչ։

Գնացին տեսան, որ ուշապը դառել ա մի լաւ տղա։

Տղէն ասեց. Խի՞ էք դռները փակել, բաց արէք։

Դռները բաց արին, գնացին Թաքաւորին ասեցին. Քու ուշապը մի լաւ տղա ա դառել։ Էն ախչկա հետ ասում ա խօսում։

Թաքաւորը շատ ուրախացաւ, էկաւ յիրա տղի կուշտն ասեց.

— Բարի լիս, որթի։

Տղէն ոտի կանգնեց, Արևհատն էլ ոտի կանգնեց, գլուխ վեր բերին Թաքաւորին։

Թաքաւորը շատ ուրախացաւ, տեսաւ որ յիրա տղէն շատ կատարեալ տղա ա, Արևհատն էլ շատ արռով ախչիկ ա։

— Է, ասեց, որթի, հըմի ինչ ես ուզում։

Տղէն ասեց. Թաքաւորն ապրած կենա, ինձ փոսկի Արևհատի հետ։

Թաքաւորը հարսանիք արուց, օխտն օր, օխտը գշեր կերան խմեցին, Արևհատի ու Օձմանուկի կենացը խմեցին։

Հարսանեքից ետո Թաքաւորը կանչեց Արևհատին ու ասեց. Որթի, մի պատմի տեսնենք՝ դու ո՞ւմ ախչիկն ես։

Արևհատը ասեց. Թաքաւորն ապրած կենա, ես մի յանտէր ախչիկ եմ, հեր ունեմ ոչ, մեր ունեմ ոչ, մի խորթ մեր ունէի. յամէն օր ինձ մի գրվանքա բուրթ էր տալի ու ասում. Տաւարը տար արածացրու, էս բուրթն էլ կը մանես, յիրիկվանը կը բերես։

Ուտելու էլ մի կատր չոր հաց էր տալիս ու ասում, հացի կէսը յիրիկունը ետ կը բերես։

Մի օր Թէշին ձեռիս քարափի գլխի կանգնած մանում ի, գաֆիլ քարափը ծակվեց, Թէշիս ընկաւ մէջը։ Կռացա մտիկ տվի, տեսա մի պառաւ կա գաղի (այրի) միջին. ասեցի. Նանի, մի Թէշիս տուր, ըտի ընկաւ։

Պառաւն ասեց. Որթի, ես կարում չեմ տեղիցս կանգնիլ, յարի Թէշին վեր կալ տար։

Ասեցի. Դուռը որդի ա։

Ասեց. Որթի, ձորի միջից յարի։

Ձորի միջովը գնացի, տեսա էտ գաղի դուռը բաց, մտա ներքև, որ Թէշիս վերցնեմ, մըն էլ տեսա դուռ կա ոչ։ Ասեցի. Նանի, դուռը ինչ էլաւ։

Նանն ասեց. Որթի, հլա յարի իմ կուշտը, բան պտեմ ասիլ, ետս ես դուռը շանց կը տամ։

Գնացի պառաւի կուշտը, պառաւն ասեց. Մի աւիլը վե կալ, իմ տունս սրփա։

Աւիլը վե կալա, պառաւի տունը սրփեցի, պառաւն ասեց. Որթի Ջան, մեր տունն ա թամուզ, թէ ձեր տունը։

Ես պառաւին ասեցի. Նանի, ձեր տունը թամուզ ա. համա թամուզ չէր, շատ կեղտոտ էր։

Նորով ասեց. Որթի Ջան, յարի նստի, գլուխս դնեմ ծնկանդ, մի քիչ քութութա։

Գնացի, նստեցի, պառաւը գլուխը դրուց ծնկանս՝ քութութեցի։

Ասեց. Որթի Ջան, իմ գլուխն ա թամուզ, թէ քու մօր։

Ասեցի. Նանի Ջան, քու գլուխը թամուզ ա։

Նոր ասեց. Բունս տանեմ ա, թող մի քիչ դնեմ ծնկանդ վրա, իմ քնած վախտը մի սև Ջուր կը գա, ինձ յիմաց մի տալ, նոր մի կարմիր Ջուր կը գա, էլի յիմաց մի տա, Ենոնա մի դեղին Ջուր կը գա գետի նման, Ջուրը գալուն պէս՝ ինձ յիմաց տուր։

Ասեցի, լաւ. Պառաւը քնեց. տեսա, սև Ջուրն էկաւ, ձէն հանեցի ոչ, մի քիչ յանցկացաւ՝ տեսա կարմիր Ջուրն էկաւ, էլի ձէն հանեցի ոչ, մէն էլ տեսա՝ դեղին Ջուրն էկաւ, ասեցի. Նանի, նանի, վե կաց, դեղին Ջուրն էկաւ։

Նանը տեղիցը վե թռաւ, ոտերիցս բռնեց, գլուխս կոխեց Ջրի մէջ, մազերս դառաւ բոլորը վօսկի։

Նոր պառաւն ինձ դուռը շանց տվուց, ասեց. Դէհ, գնա, որթի, Աստված քեզ հետ ըլի։

Դուս էլա գաղեց, էկա մեր տաւարի կուշտը, ասեցի, ինչ ասեմ, ինչ չասեմ, ես էս վօսկէ մազերով էթամ տուն, իմ խորթ մէրը ինձ•կը ծեծի, մազերս կը պոկի։ Գնացի մի չորանի աղաչեցի, որ մի գառ մորթի. միսը յիրան ըլի, գառինը ինձ տա։

Չորանն ասեց. Շատ լաւ կըլի, ա՛յ քիր, Ես էլ քեզ էտ լաւութունը կանեմ։

Չորանը վե կացաւ, մի գառ բերուց, մորթեց, ասեց. Ա՛յ քիր, նստի, մի քիչ խորոված անեմ, ուտենք։

Խորոված արեց, կերանք, նոր գառինը վե կալա, քաշեցի գլուխս, մազերս ծածկեցի։ Ընչանք յիրիկուն գնացի արևի տակ, գառինը գլխիս չորացաւ, տաւարը քշեցի, բերի տուն։

Մէրս ասեց. Ա՛յ, անզգամ. խի՞ չես քոմմա բուրթը մանել, բարկացաւ ինձ վրա, մի քանի սիլլա տվուց։ Դէ՛, ասեց, յարի գլուխդ լվանամ, ըսօր շաբաթ ա։

Ասեցի. Ուզում չեմ, իմ գլուխը լվանալ մի։ Իմ պուճուր քիրը, որ իմ մօր հալալ ախչիկն էր, վրա թռաւ իմ գլխիս գառինը պո-

կեց, վօսկէ մաղերս փուվեց գեննին։ Մէրս ասեց. Ա՛յ, անզգամ, էս ինչ բան ա։

Նստեցի քոմմա ասեցի մօրս. մէրս ասեց. Տօ լիրը, յառաւօտը կը տանես իմ ախչիկանն էլ շանց կըտաս էտ քարափը, որ իմ ախչիկն էլ վօսկէ մաղ ունենա։

Յառաւօտը, լիսը որ բացվեց, մէրս տաւարը դուս հանեց, մի գրվանքա բուրթ տվուց քվորս, մի կտոր չոր հաց, գնացինք։ Գնացինք, քվորս շանց տվի քարափը, գնաց կանգնեց գլխին, թէշին մանեց. էլի քարափը ծակվեց, թէշին ընկաւ մէջը, կռացաւ տեհաւ, մի պառաւ կնիկ նստած ա, բարկացած ասեց. Նանի, թէշիս տուր։ Պառաւն առեց. Որթի, յարի, վե կալ տար, ես մենձ կնիկ եմ, կարալ չեմ տեղիցս կանգնիլ։

Ախչիկը բարկացած ասեց. Սրա դուռը որդի ա։

Ասեց. Զորի միջովն յարի։

Աղչիկը ձորի միջով վեր էկաւ, տեհաւ մի զաղի դուռ բաց ա, նեքսև մտաւ, կռացաւ որ թէշին վե ունի, տեհաւ դուռը կա ոչ, ասեց. Նանի, դուռը կորցրի, յուր ա։

Նանն ասեց. Որթի, հլա յարի, բան պրտեմ ասիլ։

Գնաց պառաւի կուշտը։

— Մի, ասեց, աւիլը վե կալ, մեր տունը սրփա։

Ախչիկը սրփեց պրծաւ, պառաւն ասեց. Որթի, մեր տունն ա թամուզ, թէ ձեր։

Ախչիկը բարկացած ասեց. Մեր տունը թամուզ ա, ձեր տունը մուռատու։

— Դէհ, ասեց, որթի, ինչաս չունի, մենձ կնիկ եմ, իմ սրվոցս ով ա։ Դէհ մի քիչ նստի, գլուխս դնեմ ծնկանդ, մի քիչ քութութա։

Ախչիկը նստեց, պառաւը գլուխը դրուց ծնկան վրա, ախչիկը քութութեց։ Որ պրծաւ՝ պառաւն ասեց. Որթի, իմ գլուխն ա թամուզ, թէ քու մօր գլուխը։

Ախչիկը բարկացած ասեց. Վա՛յ քու գլխին, իմ մօր գլուխը թամուզ ա։

Պառաւն ասեց. Որթի, ես մի քիչ կը քնեմ, մի դեղին ջուր կը գա, ինձ յիմաց տաս ոչ, մի կարմիր ջուր կը գա, ըլէտ յիմաց տաս ոչ, եռո մի սև ջուր կը գա՝ ինձ յիմաց տուր։

Պառաւը քնեց, ախչիկը տեհաւ, որ դեղին ջուրն էկաւ, ձէն տվուց ոչ, եռո էկաւ կարմիր ջուրը՝ էլի ձէն հանեց ոչ, էկաւ սև ջուրը, պառաւին ձէն տվուց, պառաւը զարթնեց, ախչկա ոտներից բռնեց, կախեց ջրի մէջը, հեռաճ ախչիկը սև սևացաւ, մի մսի կտոր էլ ճակտիցը կախ էկաւ։

Պառաւն ասեց. Որթի, դուռը բաց ա, դնա։

Աղջիկը մտիկ արուց, տեսաւ որ դուռը բաց ա, թեշին վեր կալաւ՝ էկաւ իմ կուշտը։ Տեսա՝ զարհուրեցի, մի այբեջար բան էր դասել, ասեցի. Աղջի, խի՞ ըսենց էլաւ։

Ասեց. Ես՞մ, պառաւն ինձ կոխեց սև ջրի մէջ, ըսենց էլաւ։

Վեկացանը գնացինք տուն, մէրս որ տեսաւ յիրա աղջկանը էս օրին՝ փէտը վեր կալաւ ինձ ծեծեց, տանից դուս արուց, էկա հանդը՝ նոտեցի ծառի տակը, լաց ի ըլըմ, քու սալդաթները էկան ինձ ըսենցին, բերին։

Ասեցի. Յուր էք տանում։

Ասեցին. Բեզ տանում ենք թագաւորի տղի համար։

— Ես էլ վեր կացա էկա, թագաւորն ապրած կենա։

ՍՈՑԼԱՄԱԶ ԽԱՆԸՄԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Աշտարակ *)

Ժամանակով մի սովդաքեար կար, ունէր մի հատ տղա։ Տղէն աշխարի հէչ բանից խաբար չէր։ Տղի չափը լցվեց, Ստամբոլու դիցը մի հատ սովդաքեար էկաւ գնաց։

— Սովդաքեար, տղիդ փատկել ես, թէ ոչ, հարցրուց։

— Չէ, չեմ փատկել։

— Որ ըտենց ա, էտ իմ տեհած ախչիկը տուր իմ տղին։

Բերին նշանը դրին։

— Բա մեր հարսն ենք տանենք։

— Ամսի վերջին կը գաս, կը տանես։

Տղէն վե կալաւ մի քանի լաւ մարթիք, գնաց Ստամբոլ, շատ շնորքով հարսանիք արուց, հարսն առաւ, էկաւ։

Տեղ քցեցին, որ քնեն, տղէն ասեց. Կաց, մի փէտ ունեմ, էթամ բերեմ։

Գնաց պհած տեղիցը փէտը վե կալաւ էկաւ, քաշեց հարսին տուր տվուց, որ օլրմի (մահուան) դուռը հասցրուց, գնաց թէր ընկաւ, մենակ քնեց։ Էն մի քշերն էլ, ըլէտ ծեծեց, իլլաջից քցեց։ Էտ էլաւ դրա գործը, յամէն քշեր կը ծեծէր, կեթար յինքը ջոկ կը քնէր, հարսը ջոկ։ Հայվանը գիտէր թէ ամուսնութունը կնկան ծեծելու մէջն ա։

Օրերի մի օրը հարսի ջանին հասաւ, մի գիր գրեց մօրը, թէ ինձ եսիր (գերի) տվիր, թէ մարթի։ Յարի ինձ իլլաջ (ճար) ա-բա. յամէն օր ինձ ծեծում ա։

Մէրը վե կալաւ ընձէք խնամու հըմար, փէսի հըմար, էկաւ ախչկա տունը։ Տեհաւ որ ախչիկը ձեռաց գնացել ա, յամէն յիրիկուն ծեծ ա, որ ուտում ա։

Մէրը հարցրեց ախչկանը, թէ էտ ինչ բան ա, ախր խի՞ ա յամէն յիրիկուն քե ծեծում։

*) Պատմեց 1912 թ. օգոստ. 24-ին Աշտարակ գիւղում Յոյն Գեորգ Մկրտչեան Գեորգեան վարսուցամեայ անգրագէտ ծերունին։

— Մէջ, դրա վարքն ա բանէնց, գաղտնութիւնն ա պակաս։

— Բա դրա իլաջը ինչ կըլի։

— Որ քեզ մի անգամ էլ կը ձեռի, կասես. Աչ լիսղ սիղ-ալկի, իմ ալաձն ինչ ա, որ ինձ օրական ձեռըմ ես, քի տենեմ, որ Սոյլամազ խանըմի սէրը ընկնի սրտիդ մէջը, բալքի իմ ֆոքին ազատվի քեզնից։

Մէրը վե կացաւ, գնաց յիրա տունը։

— Է, կնիկ, իմ վէտը ոբդի ա, ասեց մարդը, վազաց ա ոիրար հետ սէր ու սոյրաթ արել չենք։

—Ասեց Թաքաի տակին ա։

Կնացաւ, Թաքաի տակիցը վէտը հանեց, ըլէտ ձեռեց էտ ախչկանը։

— Աչ լիսղ խաւարի, ասեց ախչիկը, ինձ քանի ձեռես։ Քեզ տենեմ, որ Սոյլամազ խանըմի սէրը ընկնի սրտիդ մէջը, ինձ բաց թողաս էթաս՝ իմ ֆոքին ազատվի քեզնից։

Էն յրոպրմը վէտը ձեռին թիլացաւ, վե քցեց ու գնաց յիրա տեղը քնեց։

Էն բաշտէն (գլխէն) վե կացաւ ազէն, թազա շորերը հագաւ, նի մուտաւ գոմը, մի շատ լաւ ձի դուս քաշեց, մի խուրջին վօսկի վե կապաւ, ընկաւ ճամբէն, գնաց։ Ջի՛մանըմ թէ յուր ա էթըմ։ Տեհաւ՝ էն գիրը մի ազվաքեար գալիս ա։

— Ազվաքեար ախպէր, ասեց, ում ֆոքն ա էս ֆոքը։

— Որթի ջան, էս Սոյլամազ խանըմի ֆոքն ա. մեքելի կեթաս, թաքաւորի շայիրը կը պատահի քեզ. յախրրի գրազին կը նստես՝ հաց կուտես, իրեք հատ ախչիկ ոտոտ կը գա, նրա ջաոիկքն են, նրանց կը հարցնես՝ նրանք քի կասեն։

Գնաց նստեց շայրրրմը, յախրրի գրազին, ուտեաւ իրեք հատ սիրուն ախչիկ էկան. մինը ճերին ասեց թէ՝ եարաբ ինչ ոգա ա սաւ։

Մի ախչիկը մոտեցաւ ասեց. Աչ ոգա, ինչ ոգա ես գալ։

— Իմ քվերտինք, ասեց ազէն, ես էկել եմ Սոյլամազ խանըմին առնելու։

Ասեց. Կառնես գալ, ինչ եմ ասում, կառնես։

— Գիտես ինչ կա, աչ ոգա, մենք իրեք հետ քեզ հետ նստրդի հաղալ պանք, թէ գալ մեզ տարար՝ էս մեր լաւ շորերը քեզ, թէ որ մենք տարանք, քալ ունեցածը մերն ա, անիսօ վե կը գնես, մենք կը տանենք քեզ թաքաւորի ախչկա կուշը, նա ինչ որ կասի մեզ, մենք էլ էն կանենք։

Բերին նստրդին գրին, հաղացին. իրեքն էլ էտ ազին ասրան։

— Դէ վե կաց, աչ ոգա, վախտն ա, տանենք քեզ թաքա-

ւորի ախչկա կուշաը, մենք գիտենք՝ որ հմի էա ախչիկանը կառնես։

Ձէն տվին. Սոյլամազ խանը՞մ։

Դուս էկաւ թագաւորի ախչիկը։

Ասեցին. էս եսիրը բերել ենք, ինչ անենք։

Մի թղթի վրին գրեց թէ՝ կը հանէք դրա թագա շորերը, մի հին շոր կը բերէք, կը հագցնէք, կը տանէք գոթի գոմը, յառաւօտենց տանըհինդ գոթիր կանէք յառաջը, գարաւուլով տանի արածացնի, յիրիկունը գա՝ գոմըմը քնի։

Ախչիկէքը տղի շորերը հանեցին, մի ձեռք հին շոր բերին, հագցրին, էրկու գարաւուլով տարան գոթերի գոմը, տանըհինդ գոթիր տվին, որ տանի արածացնի, բերի, գոմըմը քնի։

Օխտը տարի գոթիր արածացրուց։

Օրերի մի օրը յիրանց քաղաքից մի սովդաքեար պատահեց։

— Բարով քեզ, սովդաքեար ախպէր, ասեց տղէն։

— Աստու բարին, բարով։

— Մի նամակ ունեմ, տանէք տամ Նահիր սովդաքեարին։

— Տուր։

Տղէն ուզում էր գրի թէ՝ ես Սոյլամազ խանըմի կշտին բռնաւոր եմ, յիրիկունը հասնի նամակս, կնկանս գլուխը կարեցէք, յառաւօտը հասնի՝ յառաւօտը կտրէք, սխալվեց, գրեց կնկա վրա թէ՝ յիրիկունը հասնի նամակս՝ հօրս ու մօրս շլինքը կտրա, յառաւօտը հասնի՝ յառաւօտը կտրա։

Հասաւ նամակը հօրը, կարթաց հէրը, ասեց. Կնիկ, ըստի յարի, տես ինչ նամակ ա գրել տղէդ, հարսին էլ կանչա գա։

— Յարի մեր շլինքը կդրա, որթի, որ մարթդ գրել ա։

Հարսը ընչար էա օրը կեսաուի հետ խօսացած չէր, յառաջ կանչեց հարսը, ասեց. Իմ ծնողներ, իմ բախտիցն ա. մենակ մի բան խնթրել պըտեմ։

— Ի՞նչ ես ուզում, որթի ջան։

— Կեթաս՝ կառնես ինձ հրմար մի ձեռք թաքաւորի տղի շոր, որ հագնեմ, իմ սիրունութունին հաւասար ըլի, մի հատ շատ լաւ ձի եմ ուզում քեզնից, մի խուրջին լօսկի եմ ուզում քեզնից, էլ յուրիշ բան ուզում չեմ. ես կեթամ տղին կը բերեմ. իմ պարտականութունն ա, քանի որ լծան տակ եմ մտել։

Կեսաւը գնաց, մի ձեռք տղամարթու շոր կտրել տվուց, թաքաւորի տղի լայաղ շոր, բերուց, հարսը հագաւ, մազերը խուզեց, նիլաւ ձին, խուրջինը կապեց թաբքը, մի հատ դուրդ վի կալաւ, մի հատ թուր՝ մեաս բարով արուց՝ գնաց։

Գնաց, Սոյլամազ խանըմի չայրերի մէջ, յախպէր կշտին վեր

էկաւ. խուրջինը դրուց յառաջը, հացը հանեց, որ ուտի։ Տեհաւ իրեք հատ սիրուն ախչիկ էկան։

Զառիէքը յիրար ասեցին. Այ թաքաւորի տղա։

Զառիի մինը ասեց. Ախպէր ջան, ո՞ր թաքաւորի տղէն ես դու։

— Իմ քվորտինը, Արեւշատ թաքաւորի տղէն եմ։

— Յո՞ւր ես էթում, Ատուած յաջողա։

— Լսել ենք որ բատի մի Սոյլամազ խանում կա, տեսնենք կա՞ր տանի, թէ ոչ։

— Գիտես ինչ կա, ախպէր. մենք նրա ջառիէքն ենք, մենք իրեքս պրատենք նարդի հաղանք, թէ դու մեզ տարար՝ մենք քու մառջը տանք, թէ որ մենք տարանք, դու մեր մառջը տաս։

— Դէ լաւ հաղանք։ Ի՞նչ ունէք, քվորտինը։

— Մեր հաբի շորերն ա, մեր կատ վօսկէ բիլազուկն ա, մեր յանկաջի օղերն ա, մեր ունեցածը էտ ա։ Հըմի քուն տաս։

— Ինձ էլ ունեմ մի հատ լաւ ձի, մատիս կա չորս հատ լաւ մատանի, մի խուրջին էլ վօսկի ունեմ. թէ որ կը տանէք՝ կը տամ ձեզ, իմն էլ էտ ա։

Նարդին բերին դրին յառաջները, տղէն ձիու ճիպոտը դրուց յիրա կողքը. Դէհ քցեցէք, ասեց։

Քցեցին, մընին տարաւ։

— Էս մին, ախչկերը, ասեց։

— Մին։

Մի հետ էլ հաղաց, էն մընին տարաւ։

— Էտ երկու՝ քվորտինը ջան, դուք յիմացաք, որ երկսիդ տարա։

Մինը մընին ասեց թէ՝ սնաւեր, տարաւ, խայտառակ կըլենենք, սիպտակ փաչէզ բաց արա, շանց տու, որ յաշկը քցի փաչիզ՝ բալի տանենք։

Ախչիկը փաչէն բաց արուց հաղալու վախտը, տղէն ճիպոտով տուուց դրա փաչին թէ՝ լաչատ զանջըզ, էս հաղ ա, թէ լըռփութուն ա։ Հաղը տարաւ։

— Է՞ ախպէր, ասեցին, վիրև Ատուած, նեբքև դու, մենք յանեն մինս մի առակ ասենք, որ դրա վրէն Սոյլամազ խանումը խօտա, տան քեզ։ Դէ, էկէք էթանք։

Զառիէքը յառաջ ընկան, սովդաքեարի ախչիկը ընկաւ ետնուցը՝ քնաց։

Գնացին հասան Սոյլամազ խանումի օթախը, նարդըվանի տակին կանգնեցին, ձէն տվին. Սոյլամազ խանո՛ւմ։

Սոյլամազ խանումը դուս էկաւ, տեհաւ էտ տղին, շատ հա-

ւանեց, ձեռով արուց թէ՝ համեցէք։ Գնաց վիրն, տախտի վրէն նստեց։ Սոյլամազ խանըմի եօրդան գոշակը քցած էր, մի գիր գրեց յիրա հօրը, թէ կը գաս քու տատներկու սինոթատեանների հետ իմ օթախը, որ էսաի բան կա։ Հէրն յիրա սինոթատեանները առաւ էկաւ, օթախըմը նստեց։

Մի մարթ խօսող էլաւ ոչ։ Սովդաքեարի հարսը վե կալաւ՝ ասեց. Ես արեմուտի Թաքաւորի տղէն եմ, ես իմ հօրը ինչ ջուղար տամ, թէ ինչ լսեցի։ Ես քեզնից խնթրըմ եմ, ըտեղից մի առակ ասող ըլի՝ ես լսըմ։ Ասեց ու ձէնը կտրեց։

— Զահիլ Թաքաւորի որթի, ասեց Ջաուիէքանց մինը, որ նի էր մտել բարցի տակը, գու համփերա, ես մի շատ լաւ առակ ասեմ, գու յանկաճ դիր։

Ժամանակով մի գեղացի կար, գրան ունէր մի շատ, Թաքաւորալայաղ ախչիկ։ Իրեք Թաքաւոր գրան ուզող էկաւ։ Դրանք յիրանց մէջը վճռեցին, որ մեր տղէքը տանք յուսումի, որ տղէն Թէդ գուս գա յուսումից, էտ ախչիկը նրան ըլի, էլ ոչ ես նեղանամ, ոչ գու։ Տարան Ստամբոլ տղէքը, լաւ յանկաջ դի, Թաքաւորի որթի, էս լաւ առակ ա, մինը գնաց սաղի (քաջընթացիկ) յաշկերա, մինը գնաց լոխմանի (բժշկի), մինն էլ գնաց տատղապաշաի։ Էտ իրեք տղէն իրեք տարի ծառայեցին։ Օրերի մի օրը էտ իրեք տղէն յիրար կուշտ էկան։

— Մեր հէրերը լաւ անխելք մարթ են ըլել, ասեց էն մի տղէն։

— Ընչի՞ հըմար, ա՛յ տղա։

— Դէ մի ախչիկ ա, կուզէն մընես՝ կեթար, էլի։ Բալ չի բտաի ծառայենք մենք։

Էն մինը Թէ՝ տղէք, հըլա համփերեք, յիրիկվա տատը ճառագայթելու ժամանակն ա, Թող ես տենեմ էտ ախչիկը կա՞ Թէ կա ոչ։ Թէ չէ մեր ծառայութունը զուր ա։

— Օ՞ֆ տղէք, շատ համան հիւանդ ա, ափսոս, ափսոս, հազար ափսոս, որ ինչ ախչիկ էր։

— Ախ, ասեց լոխմանի աշկերտը, մի պարաշոկ գեղ տայի կը լաւանար, անտեղի մեռնել պտի։

Տաղէն ասեց. Տուր ես տանեմ, մին չի։

Սարքեց գեղը ավուց տաղէն. տաղէն տաւ հասցրուց ախչիկանը՝ ախչիկը լաւացաւ։

— Դէ ախպէր, ասեց լոխմանի աշկերտը, վե կաց էթանք՝ տենենք էտ ախչիկը լաւացել ա։

Էկան, տեհան լաւացել ա։

Էտ իրեք տղի հէրերն էլ էկան։ Ի՞նչ էք ասում, ասեց ախ-

քաղաքը։ Գնաց մի պուճուր օթախ բանէց, նստէցին ըտեղ։ Ինէցին քշերը ըտեղ, լիսը բացվէց, ասեց. Այ հէր, ես էթում էմ բաղար բանէլու։ Գնաց ֆահլէքանց մէջը կանգնեց. Եթմիշ իքի (72) միլլէթ կար էտ ֆահլէքանց մէջը, բիրադի բանվէցին, գնացին բանէլու, էտ ադին մի մարթ չհարցրէց թէ ինչ ադա էս, ես ինչ էս ուզում։ Ձեռները դրէլ էր ծոցը՝ կանգնէլ էր։ Էն հանիցը մի կարմիր ձիաւոր էկաւ, տեհաւ էտ ադէն ըտեղ կանգնած։

Ասեց. Ադա, ինչ ադա էս։

Ասեց. Ղարիբ ադա էմ։

Ասեց. Ի՞նչ ունէս ըտէղ։

Ասեց. Մի հէր։

— Բա ըտեղ ինչ էս անում, ասեց։

Ասեց. Էկէլ էմ էթամ բանէլու։

— Բա խի՞ չգնացիր բանէլու, ասեց։

Ասեց. Ի՞նչ անէմ, ադա ջան, եթմիշ իքի միլլէթ կար, բիրադի բանվէցին գնացին, ինձ մէկը չըհարցրէց, թէ ա՛յ ադա, որդիանցի էս։

Ձիաւորն ասեց. Յարի, էթանք ինձ մօտ բանի։

Տղէն ընդաւ ձիու քամակը՝ գնաց։ Գնաց հասաւ մի բանցը ամարաթնէրի, ձիուցը վէր էկաւ, տղէն ձին տարաւ նեքսև կապեց։ Դէհ, ասեց, այ ադա, յարի էթանք վիրև։ Տղէն բանցրացաւ վիրև, տեհաւ որ մի սուփրա փռած ա, Աստծու մի հոգին միչին դրած (ամէն բան կար մէջը)։

Ասեց. Ա՛յ ադա, յարի իմ կողքին նստի։

Տղէն գնաց էտ մարթի կողքին նստեց, մինչանք յիրիկուն կէբան, խմէցին։ Յիրիկվա ժամէրը ավեց։ Դէհ, ասեց, այ որթի, վէ՛ կաց, գնա։ Հանէց ջիրիցը մի մանէթ, ավեց էտ ադին, ասեց. Դէ էս էլ տար հօրդ համար բան ու ման կառնէս, հէրդ սոված կըլնի, համա, ասեց, յէքուց յառաւօտ էլ ուրիշ տեղ չէս էթա, կըդաս գուշ ըստէղ։

Տղէն շնորհակալ էլաւ էտ մարթիցը՝ գուս էկաւ գնաց։ Գնաց բաղար, տաս շահուն բանը ման առաւ հօր համար, տարաւ տուն։

Հէրը հարցրեց. Ա՛յ որթի, ըսօր ինչ իր անում։

Ասեց. Ավի ջան, գնացի բաղար, ինչքան ֆահլա կար՝ ըբռնէցին տարան, ինձ մի մարթ չհարցրէց, թէ որդիանցի էս։ Էկաւ ճաշ դառաւ, մի կարմիր ձիաւոր էն հանիցն էկաւ, ասեց. Ա՛յ ադա, որդիանցի էս, ասեցի. Ղարիբ ադա էմ։ Ասեց. Ըստեղ էլ ինչ ունէս։ Ասեցի. Ես էմ մի հէր։ Դէ, ասեց, յարի, էթանք

Գնաց, թուրը քցեց, յիրա գլուխը կտրեց։ Ախպէրն ասեց. Ա՛յ կնիկ, մի ձին բռնա, տենեմ էտ ողէն ինչ էլաւ։ Գնաց տեսաւ, որ գլուխը կտրած, մարթ կա ոչ։ Բան, ասեց, իմ ախպէրը ինձ հրամար, իմ էրէխանց հրամար մատաղ էլաւ, քաշկա գնացած չըլէի, օվ, ճվ, ասուց յիրա շլինքն էլ կտրեց։

— Ա՛յ հէր, մի էս ձիանը բռնա, տենեմ էտ ողէրն ինչ էլան, նի ինոդը դուս գալիս չի։

Կնիկը նի մտաւ եկեղեցին, տեսաւ էրկրսի շլինքն էլ կըտրված ա, լաց էլաւ, լաց էլաւ, ու ննջաց։ Յերազին ասեցին, որ վե կենտա, սրանց գլխները տեղը դնես՝ դրանք կը սաղանան։ Վե կացաւ, տեքոր գլուխը դրուց մարթու գլխի տեղը, մարթու գլուխը տեքոր գլխի տեղը։ Հրմի լաւացան, տէրն ասում ա էս իմ կնիկն ա, մարթն ասում ա իմ կնիկն ա, ջանում։ Էս ում պոի հասնի, ջանէլ թաքաւորի ողա։

Ըլէա գալմաղալն ընկաւ էտ սինոթականների մէջը։ Սոյլամազ խանումն ասեց. Իմ հօր հացը ձեր պնչերքովը վե դա, որ կարում չէք մի կնկանը տեղաւորէք։ Էտ կնիկը կը հասնի գլխին, ա՛յ անխելքներ, էտ գլխի հետ ա փսակվել։

— Դու էլ կը հասնես էս ողին, ասեց Սոյլամազ խանումի հէրը. ըլէա ձէնները կտրեցին։

— Թաքաւոր, ես մաթալ եմ ինացել, թէ իմ հօրն ինչ ասեմ, ասեց սովդաքեսրի հարսը։ Ես խնթրում եմ՝ մի թեթեւ ասակ ասող ըլի՝ ես յանկաճ գնեմ։

—Անհամբեր թաքաւորի որթի, համբերա, ասեց էն մի ջաղէն ոնների ասակիցը, ես մի ասակ հասնեմ, դու լա, տես ինչ լաւն ա։

— Մի խառատ, մի դերցիկ, մի տէրտեր յիրար հետ ճանապար ին էթում։ Գնացին մէջէն, մութն ընկաւ. տէրտէրը հալիւոր էր, ասեց. Իրեքն էլ որ քնենք՝ մեզ գիլանը կուտեն, էկէք սրով դարաւուլ քաշենք։ Սրթթա դարաւուլ քաշեց խառատը։

Վե կացաւ խառատը, ցախ թոի արուց, կրակ արուց, համարեա քշերվա կէսն էր, մի հատ փէտից ախչիկ շինեց, ըրթեց դերցըկին, թէ վախտն ա՝ վե կաց, ես էլ եմ մեղի։ Դերցիկը վե կացաւ, կրակը թեժացրուց, տեսաւ մի հատ ախչիկ կանգնած ա, տեսաւ փէտ ա. Հա, ասեց, յիրանց հունարները շանց ա տվել, հա, դու համբերա։ Վե կացաւ, շորերը բաց արուց, մի ձեռք շոր կարեց, հաքցրուց։ Տէրտէր, վեր, ա՛յ անաշէն, վախտն ա, վեր, ձէն տվուց տէրտէրին. յինքը գնաց քնեց։

Տէրտէրը կրակը թեժացրուց, տեսաւ մի սիրուն ախչիկ կանգնած. Հա, ասեց, յիրանց հունարները շանց են տվել, լիսն ու ժուրթն էլ բաժանվում էր, առաւ սաղմոսը, կարդաց ու լաց էլաւ,

ով սուրբ Աստվածածին, դու էս ախչիկը ֆոքի տաս։ Ախչիկը գլուխ տվուց ու կանգնեց։ Իրեքն էլ վեր կացան. հրմի խառադն տալմ ա՝ իմն ա, գերցիկն տալմ ա՝ իմն ա, ակրատէրն տալմ ա՝ իմն ա։ Էս ում պրտի հասնի, Թաքաւորի տղա։

Էլի զալմազալն ընկաւ սինոթականների մէջը, չկարեցան տեղաւորիլ էտ ախչիկան, թէ ում պրտի հասնի։

— Իմ հօր հացը խի էք ուտում, որ խելքնորդ ըդալն էլ չի կարում, ասեց Սոյլամազ խանումը, էտ ախչիկը ակրատէրին կը հասնի, մարթի համար յաւաչինը ֆոքին ա։

— Դու էլ էս տղին կը հասնես, ասեց Սոյլամազ խանումի հէրը։

— Դէ, ա՛յ տղա, նշանդ հասնա։

Տղէն մատանիքը տվուց Սոյլամազ խանումին։

— Դէ գնացէք դինջացէք, որ լիսը բացվի՝ փսակվէք։

Յառաւօտը լիսը բաց էլաւ, Թաքաւորն էկաւ Սոյլամազ խանումի կուշտը, ասեց սովդաքեարի հարսին. Ա՛յ տղա, ուզա տամ, իմ որթին ես։

— Թաքաւոր, սաղութունդ եմ ուզում։

— Իմ սաղութունը քեզ մի բան անիլ չի, ուզա տամ։

— Որ ըսենց ա, Թաքաւոր, իժդար ուզա արածացնող ունես, չորան ունես, իլխըշի ունես, զանթ պըհող ունես, կանչա դան գեազմիդ տակը, ես որին կհաւանեմ, մինը վեր կունեմ։

— Ա՛յ հա՛յ, ա՛յ հա՛յ, ախտոս իմ ախչիկը, սրան էլ խելք ունի ոչ։ Ուզա քաղաք, ուզա խաղինա, որ ես քեզ բախշեմ, տղէն լոչ պրտես անի, աշխարքը լիքը տղա։ Քանըչորս տարվա իմ ախչիկա խոսալը զուր գնաց, որ մեր փէսին խելք ունի ոչ։

Իժդար նոքարներ ունէր, կանչեց գեազմի տակը, Թաքուհին, Թաքաւորը, սովդաքեարի հարսը դուս էկան գեազմէն, սովդաքեարի հարսն յաշկը ման ածեց, տեհաւ մարթը կուչ էկած. ընդար կեզա կա վրին, որ շանմար օյը քցես վրին՝ դուս դալ չի կեզդի ձեռիցը։ Աղուխը բռնեց, լաց էլաւ կնիկը. Փառք քեզ, անմահ Թաքաւոր, ըտ էլ ինձ զամաթ արիր, ասեց մտքի մէջը։

— Ես ուզում եմ էն տղէն, Թաքաւոր։

— Վա՛յ, վա՛յ, ախտոս, Թագուհի, մեր ախչիկը, որ խելք ունի ոչ մեր փէսէն։

— Դէ, որթի ջան, վեր կալ։

Վէկալաւ բաժինքը, ախչիկը, էտ նոքարը, ատագին զօշուն հեռը, գնաց։ Նոքարն էկաւ, ասեց. Թաքաւորի տղա, որ էտ լաւութունը ինձ արիր, թող Թաքաւորը ինձ մի հատ ձի տա, նիլնեմ, հեռանիրդ դամ, ոնեիրս ցաւում ա, կարալ չեմ ոտով գալ։

Մի ձի էլ տարան ավին, նի էլաւ, էկան հասան սովդաքեաբի չայիրը։ Դոշընին եա դարցրուց։ Սովդաքեաբի տղէն տեհաւ, էս յիրանց չայիրն ա։

— Վեր էկէք ըտեղ, ասեց սովդաքեաբի հարսը, նոքարն էկաւ ձիու օրղանդուն բռնեց՝ վեր էկաւ։

— Շուն շան որթի, օրղանդուն ըտենց կը բռնեն, ասեց սովդաքեաբի հարսն ու էա նոքարին մի սիլա տվուց։ Դէ գուք ըտեղ հաց քցեցէք, ընչանք ես դամ։

Սովդաքեաբի հարսը ընենց գնաց կեսուր կեսուրի կուշը, որ նստած չայ ին խմում։

— Գնիկ, էս էկողը հէնց ընենց ա գալի, որ մեր շընինքը կարիլ պըտի, ասեց կեսուրը կեսուրին։

— Ա՜յ մարթ, էս օրը ճաշին հօ մարթ չէն սըպանիլ, բա դու մենց ես սովդաքեաբուԹուն անում։

Ճակատին գրած թուրը հարսը նի մտաւ, ասեց. Բարի յաչողում, հէրն ու մէր։

Տեղիցը կանգնեցին հէրն ու մէրը։

— Դուք էԹալ պրտէք ձեր չայիրը, թէ չէ ձեր էրկի շընինքն էլ կը կարեմ։

Դրանք հացն ըտենց թողին, գնացին չայիրը. ընդար շընկրվեցին, որ տան դուռն էլ փակեցին ոչ։

Սրանք գնացին գըրա չայիրը, ինչ ունէր հարսը հանեց, հաքաւ փսակի շորերը, վե կալաւ մօր ըտրած իրեք հատ խնձորը, գնաց գըրա չայիրը։

Սոյլամազ խանըմը տեհաւ էա էկողը յիրա մարթն ա, համա կնիկ ա։ Սովդաքեաբն էլ ճանանչում չի, թէ էն նոքարը յիրա տղէն ա։

Էկաւ հասաւ, բարով տվուց կեսուր կեսուրին, ասեց. Էս ձեր տղէն ա, ձեզ փեշքաշ ըլի։ Նոր գլխի ընկան, որ էս յիրանց հարսն էր, էն էլ յիրանց տղէն էր։

Սոյլամազ խանըմին էլ ասեց. Սոյլամազ խանըմ, ես էլ քեզ պէս ախչիկ եմ, համի ինչ պըտի անես դու։ ԷԹաս հօրդ տունը՝ յերես չես ունենալ, դաս ըտի կանգնես՝ ինձ նոքար պըտես ըլի։ Համի որն ես ուզում։

— Շատ լաւ ես ասում, սովդաքեաբի հարս, լաւն էն ա՝ ըտեղ նոքար կըլեմ, էԹալ չեմ իմ հօր տունը։

Տղէն գնաց յիրա շորերը հաքաւ, էկաւ կանգնեց հօր յառաջը. կեսուրն ու կեսուրն էկան ու հարսի ճակատը պաչեցին. Հալալ ըլի էն կաթը, որ ծծել ես, որթի։

Կեսուրը գնաց, տեղերը քցեց հարսի, մի քանի բան ասին սարվացրուց, նորից միացան էս սիչրկա հետ։ Իրեք տարի քաշեց, էս հարսը մի հատ տղա բերուց. տղէն զատաւ տասը տարեկան։ Լուսնի լրման վախտն էր ծնվել էս տղէն, շատ սիրուն, շատ մարիֆաթով էր։

Պապի ֆոքին թոռի հետ էր, որ մի հրատպա տենում չէր, ֆոքին քանդվում էր։

Հարսը ինքիրեց. Իմ տղի յուսումի վախտն ա, ավէք յուսումի։ Շատ բան կիմանա շատ ման էկողը, ման էկած ատն էլ քաբի կատնի։

— Դէ, որթի, մի ձեռք լաւ շոր կարեմ թաքաւորի նման, որ իմ թոռը թաքաւորի տղի նման ա։ Փասք քեզ, անմահ թաքաւոր, յաշկը կրլի, որ ըդրա փասկը էս տենեմ։ Դէ, որթի ջան, գնա ծծերը պաչա, որ յուսուսանց էթալ պրատնք։

Տղի անդամը Ասատուր էր, յուսուսանց վե կացաւ, պապի ձեռը պաչեց, էս զատաւ տատի ծծերը պաչեց. Դէ մէր, ինձ օրհնա, որ էթամ եմ։

Մէրն ասեց. Ինչ տեղ էթաս՝ բարով գաս, Ասոված հետդ լրի, իմ կամքը քեզ հալալ լրի։

Նատեցին ձիանը, գնացին Դոնա քաղաքը, թաքաւորանիստ էր, ըսի մի յուսումնարան կար, թաքաւորի տղէքն ին ըսի կարթում։ Տատնեկու թաքաւորի տղա ին կարթում։ Սովդաքեաքը գնաց մի սովդաքեաքի տուն վեր էկաւ, սովդաքեաքը տեհաւ, որ էս էրեխի նման ոչ չիրանց քաղաքումը կա, ոչ հրեղէնների մէջին։

— Սովդաքեար, ասեց, հարցնելն ամօթ չրլի, էս էրեխէն որ թաքաւորի տղէն ա։

— Էս էրեխէն իմ թոռն ա։

— Ասոված քի բաշխի, ինչ տղա ա, որթի, յարի, մի թշերդ պաչեմ. Ասոված քի երկար կեանք տա, ճամփէս բաց լրի, ինչ մուրաղ ունենաս՝ կատարի Ասոված։

— Բա ընչի համար էս բերել։

Ասեց. Յուսում տալու։

— Բաս, ասեց, յուսուսանց էթանք վաղրբի կուշտը, ասիլ մի իմ թոռն ա, ասա արևելի թաքաւորի պուճուր տղէն ա։

Յուսուսանց վեկալան, գնացին վաղրբի կուշտը, վաղրբի կնիկը դուռ էկաւ ասեց. Ինչ մարթ էք։

Ասեցին. Թաքաւորի տղէն ա, բերել ենք ատանք կարթալու։ Վաղրբը ատանն ա։

Վաղբրի կնիկն ասեց. Էրանեկ դրա տիրոջը, որ էտ ջուրա էրեխա ունի։

Կնիկը նի մատաւ նեքսև, ասեց. Էրկու մարթ են էկել, մի էրեխա են բերել ատն կարթալու։ Շատ ապիկ էրեխա ա։

— Դէ կանչա՝ գա։

Տղէն վե կալան բերին վաղբրի օթախը, վաղիրն էլ թողուց ոչ ատբը խոտա, յիրանց քաղաքի սովդաքարը խոտաց, ասեց. Էս արևելի թաքաւորի պուհաուր տղէն ա, բերել ա տա յուսումի։

Ասեց. Բա թաքաւորին մարթ ունէը ոչ, որ ըտա ա բերել։

— Դէ, յինքը ըտեղի ծանօթ մարթ ա, ըդրա հըմար էլ յինքն ա բերել։

Վաղիրը էտ ապին ունթունեց, զրկեց յուսումարան, ասեց. Իրեք տարուց եղը կը դաք, ապին կը տանէք։ Պապը վե կացաւ, էտ գառաւ՝

Իրեք տարին թամամելուց հետո, տղէն յամէն բան սարվեց, տատներկու տղի գլխաւորը էտ տղէն դուս էկաւ։ Դունա թաքաւորի տղի հետ շատ սրի ին, որ մի հրոպա յիրար տենըմ չին, սրտները էթըմ էր։

Իրեք տարուց հետո պապն էկաւ թոռին տանելու։ Տղէն գնաց Դունա թաքաւորի տղի կուշը մնաց բարով ասելու, Դունա թաքաւորի տղէն ասեց. Դէ կաց, ա՛յ տղա, մի յիշատակ տամ քեզ, առ էս իմ թաքաւորութունի լէնթը, որ տենդն ասի՝ թաքաւորի տղա ես, որ միտ բերես ինձ։

— Բա ես ինչ տամ քեզ, ախպէր։ Մօր տված մատանիքը տվուց թաքաւորի տղին. էս էլ իմ փէշքաշն ըլի, ասեց, որ մատանն անես ոչ ինձ։

Պապի հետ ձիանը նստեցին, գնացին։ Գնացին, հասան մի մէշի։ Տեհան քշերը մի կրակ ա մոտիկ էրեբմ։

Ասեց. Պապի, ես էթամ կրակիցը մի քիչ կրակ բերեմ, կրակ անենք, մրսըմ եմ։

— Դու կը վախենաս, որթի, թող՝ ես էթամ։

Պապը վե կալաւ որ յինքն էթա, տղէն թողուց ոչ՝ յինքը գնաց։

Բանի գնաց, կրակը հեռացաւ։ Ջանըմ, ասեց, էս կրակը մոտիկ էր, էս խի ա հեռանըմ։ Գնաց լիսը ըսցվեց. տեհաւ որ մի պղպատից տուն սարի գլխին. ման էկաւ չորս դրազը, ծառը ճուղը շատ կա, համա դուս կա ոչ։ Ասեց. Ա՜խ մի հրեղէն ձի ունենայի, թռցընէի, տենէի էս տներըմը եա էս բախչըմը ինչ կա։

Ձիուն դամշի տվուց, ձին հետց ոչ տակին. վեր էկաւ ձիուցը՝ ձիու շըլինքը կարեց. էլ ինձ հարկաւոր չես, ոտով էթամ աւելի

լաւ ա։ Մէն էլ պարավեց տան չորս դիհը, տեհաւ մի հատ ընենց ախչիկ դուռ էկաւ, որ լսի պէս փայլում էր։

— Բարով, այ ազա, ասեց, էտ ընչի՞ ես մահ գալի։ Բա իմ ախպօրանց ձէնը դուռ լսել չէ՞ս։

— Ընչի՞ հրմար, ախչի։

— Ճանչ էլ չի՞ գալի իմ ախպօրանց ֆողի վրա, դուռ էդ ինչ ջուռա ազամարթ ես, որ էկել ես իմ ախպօրանց ֆողը աբրարում ես։

Սավդաքեարը տեհաւ, որ թոռն էկաւ ոչ, նստեց լաց էլաւ, լաշկերիցը կրակ էկաւ. Հէյ վախ, ասեց, կորցրի իմ անդին քարը, ես ինչ ջուղազ ատամ դրա մօրը։ Փոր ու փոշման էկաւ դրբա տիրան քաղաքը։ Տեհաւ մի սավդաքեար դրբա յիրան ա գալիս։

Սավդաքեարը մօտացաւ՝ ասեց. Բարաչոդրմ։

Ասեց. Ասում բարին։

Ասեց. Սավդաքեար, էտ խի՞ ես նոթիրդ կիտել։

Ասեց. Բա չես ասի՞ մի թոռն ունէի, ամէլ ի յուսումի, դընացի որ բերեմ, էկանք, քշերը մէշրմը կացանք, մի կրակ էրեաց, թոռս գնաց, որ էտ կրակից կրակ բերի, որ կրակ անենք, տաքանանք, գնաց էլ չէկաւ, ես էլ մաթալ եմ մնացել, թէ ինչ անեմ։

Ասեց. Վա՜յ, վա՜յ, բաեզ մի հրեղէն ախչիկ կա, նրա ձեռն ընկած բլի, կարալ չես քթնել։ Ինամ չունեմ, շատ զօչաղ ազա բլի, էթա դրա ձեռից առնի՞ բերի։

Ասեց, գնաց յիրա ճամփէն։

Գնաց էկաւ հասաւ յիրանց տուն, տղի մէրը տեհաւ, որ շատ ունքերը կիտած ա, ասեց. Ախու, բա իմ Աստու�ը։

— Էհ, որթի, ասեց. ցաւ չունեմ. ասեց ու լաց էլաւ։

Թող գրանք էտեղ լաց ըլեն, մենք գանք տղի կուշտը, տղէն ոտիտա ա։

Էտ ախչիկն ասեց տղին. Տղա, ես քեզ անազ պըտեմ անիլ։

— Ընչի՞ հրմար, ինձ սրպանելու։

— Չէ, այ ազա, մեր տանը ինձ մի պատկեր քաշող ունեմ. կէթանք կը քաշվենք էրկուս էլ, թէ ընձանից սիրուն էլար՝ զաթի յիրար կառնենք, սիրուն չէլար՝ էրկու հատ արար ունենք, կառնեմ շըլինքդ կը կալեն, մենձ ախպէրս իանի միս ա ուրում, կուտի։

Էտ ախչկանն էլ օխտը ախպէր ունի, գնացել են աւ։

Ախչիկը տղին վե կալաւ, գնաց տուն։

— Ախչի, ինձ թող՝ մի բախչէն ման գամ, տենեմ էս ինչ ջուռա բախչա ա, գիտեմ ինձ սրպանիլ պտես։

Տղին թողուց բախչէն, էլի դուռը շինեց։

Տղէն գնաց, տեհաւ ոչ մի երկրում ընենց բախչա չկա. մի հատ մառմառ հավուզ կա, անթառան ծաղկով լիքը, տենողի ֆոքին ա վառաւորվում։

Վէ կացան. գնացին վիրի օթախը. կանչեց պատկերը քաշել տվուց, թամաշ արուց, տեհաւ որ յիրանից սիրուն ա, ասեց. Ես քեզ իմ ախպօրատնցից կը պըհեմ, մի հնարքով քե կազատեմ, կառնեմ։ Տարաւ, մի ջոկ տեղ պըհեց։

Յիրիկունը ախպէրտինքն էկան, ասեցին. Ըսախան խանի ֆոտ ա գալի։

— Ա՜յ ձեր տունը շինվի, մենք խան ենք, խանի ֆոտը մեզնից ա գալի, որդիան ա գալի, ասեց ախչիկը։

— Ախպըրտինք, ինձ ընչար ե՞փ կը թողաք ձեր տանը, ձեր մուրազն ինչ ա։

— Մեր մուրազն էն ա, ա՛յ քիր, որ ընենց մի տղա գա, որ մեր օխտն ախպօրը զօռի՝ մենք մեր քիրը տանք յիրան։

Ախպէրտինքը ընեցին, ախչիկը դուս էկաւ։

— Ա՜յ տղա, քնած ես, թէ զարթուն։

— Ա՜յ քու տունը շինվի, քու պատկերը տենողի քունը կը տանի։

— Դէ վե՛ կաց, ըսլ ա, էթանք մեր դոմը. մի հատ ձի կա, տամ քեզ, ընենց ձի տամ քեզ, որ հէչ տեհած չըլես. թէ կարենաս նիլլես։ Ասեց, կանչեց արարներին, հրամայեց, որ մի հատ լաւ ձի քաշեն։ Արարները ձին քաշեցին, մի հատ հազարին զալխան ըներին, մի հատ ջուհարդալ թուր ըներին, ասեցին տղին. Էթանք նեքսե, իրեք հատ դուրզ կա, որ մեր ուժը պատում չի վեր ունել, դու որն ուզում ես՝ վե՛ կալ։

Տղէն նի՛ մտաւ նեքսե, յէրեսը խէչ հանեց, ձեռը քցեց յամենազլխաւոր դուրզը, արարներն էլ մնացին մոլորած, թէ մեր օխտը ազէն էլ կարացել չեն վեր ունել էտ դուրզը, էս ինչ թաւուր տղա ա, որ վե՛ կալաւ։

Դուս էկաւ հայեաթը, ախչիկը դուռը բաց արուց. Դէհ, տղա, Աստված հետդ ըլի, համա փախչես ոչ, գալ պըտես իմ օխտը ախպօրս տիտես՝ որ ինձ տանես։

Տղէն նստեց ձին, թուրը քցեց շըլինքը, զալխանը քցեց յուսը, կատցաւ դուրզը վե՛ կալաւ, մնաց բարով ասեց ախչկան, ու քշեց։ Ասեց. Ես մի քարի զլխով մի թռցնեմ ձին, տենեմ թըռնը՞մ ա ձին։ Ձիուց վեր էկաւ, զօլան զոշզունը զայիմ կապեց, էլի

նի էլաւ, ձիու փորին մի դամշի քաշեց, ձին քցեց յիրան, բախ-
չի պատին էլ մօտիկ էր, ընենց բանցրացաւ, որ բախչէն ոնց որ
մի բախչա յատաջդ ըլի։ Վեր էկաւ ձիուց ու պաչեց ձիու յաշկերը,
ասեց. Ես գիտեմ, որ ես հըմի իմ մուրազին կը հասնեմ։ Գնաց
մի քարի տակի, հափընջին քաշեց վրին՝ քնեց։ Թող լիսը բացվի։
Տղէն էկաւ մէյդանի գլուխը կտրեց։

— Ա՛վ ա տնեքի տէրը, գա, գանչու (ինձ հետ կռվող) եմ ուզում։

— Մենձ ախպէրն ասեց պուճուրներին. Գնա՛ մի տես էտ ինչ ձէն ա։

Պուճուր ախպէրը դուս էկաւ, տեսաւ մի աղիզ ազա նստած ձիու վրա գալիս ա. Երկինք գետինք հարամ ա, ասը ձեռը գող էլաւ. գնաց ասեց. Մի ասլանի պէս ազա ա էկել, դրա ջուղապը մենք կարալ չենք տալ։

— Զանթի, մեր քիրը մեր գլուխն ա ծարաւել. ես գիտեմ. յերկկ էլ ասում էր։ Մահ կա՝ մեր պայմանիցը հետ դառնալ չկա։ Ասէք՝ ձիանը դուս քաշին։

Ձիանը դուս քաշեցին, օխտն ախպէրն էլ նի էլան։ Քիրն էկաւ գետամէն, փորը քցեց ճաղին, քսան յուսը մի գնիցը կախ էլաւ, քսանը մի գլնից, քսանին տարաւ բերուց, տենդի ֆոքին էր վառվում։

— Բարով քեզ, ա՛յ ազա, ասեց մենձ ախպէրը, սրէն քունն ա, քցա գուրգդ։

— Բանից չի, դուք քցիլ պտէք, ես զնաղ եմ։

— Տղէք, ասեց մենձ ախպէրը, ես էթում եմ, ընենց տանք որ սրպանենք ոչ, ընենց անենք, որ սաղ կալնենք, հետ մեր գաղարը մենք կանենք։

Մենձ ախպէրը ձին շատ արորեց, որ հաւալամիշ ըլի, գնաց էկաւ՝ գուրգը քցեց՝ ասեց. Էկա՛ւ, ազա։ Տղէն ձեռը քցեց, գուրգը կալաւ. Ա՛ռ, ասեց, հանաքի վախտը չի, առ կարին քցա։ Ախչիկը ձէն տվուց. Ջան ազա, ջան, քու բիլագիդ գուրբան։

Մենձ ախպէրն ասեց. Տղէք, իմ տա՛ ու ձեռը խառնըվել ա, էկէք գուք քցէք։ Միշտէկ ախպէրը գնաց ձին շատ արորեց, ընենց քրտնեց ձին, որ արին քրտինք մտաւ, ձիու սաղրու հետ գըղվեց, ու թամբի մէջին կանգնեց. Էկա՛ւ, ազա, գուրգը, ասեց ու քցեց։ Գուդաւոցը սարերն ընկաւ։

— Առ գուրգդ՝ զայդով քցա, ասեց ազէն ու գուրգը բանեց, տվուց յիրան։

Մենձ ախպէրը կաննեց թէ՝ Ախպէր, քու ուզածն ինչ ա մեզնից, ուզա տանք, էս կռիւը վերչացնենք։

Ասեց. Քանի աշխարհըմը կամ, կամ ես մնալ պտեմ, կամ դուք։ Կռիւը կռիւ ա։

Էս ժամանակ աղէն տեհաւ, որ մի բոզ ձիաւոր գալիս ա, ընենց ա գալիս, որ թոզի միչին կորել ա։

Էկաւ. Բարաջողըմ, ասեց, որթի ջան, ես էկա, վախիլ մի։ Տղէն տեհաւ որ մէրն ա, աւելի զվարթ առաւ։ Մէրն ասեց. Դու դինջացի, ես կռիւ անեմ։

Ձէ, ասեց, դու կաննի թամաշ արա, ես կռվիլ պտեմ։

Տղէն քաշեց դուրդը, ավուց հարամբաշու դլխաւորին, ալրէալը չորացաւ. հինդ դուրդ քցեց, հնդին էլ վե կալաւ։ Էն էրկուսը թուրը քցեցին շըլընքնեբը, էկան ռահի էկան թէ՝ ինչ կուզես կտանք, մեր հօր օջաղը քանդիլ մի։ Տղէն դուրդը դրուց ցած, ձիուց վեր էկաւ, մէրն էլ վեր էկաւ, գնացին դըրա տուն։ Էրկու ախպէրն յիրանց հինդ ախպօր մէյիդի հային էլան։ Մեռելնեբը թաղեցին, ձեռնեբը լվացին, նի էլան վիրև։

— Ուզածդ ինչ ա, այ տղա, ասեցին, ուզա՝ տանք։

— Ուզածս ձեր քիրն ա։

— Քեզ փէշքաշ։

— Դէ ձիանը սարքեցէք, որ էթալ պրաենք։

Ախչիկը ուրախութունից ոտը կտրեց գեննիցը։ Գնաց հաղբրվեց, արաբնեբը ձիանը դուս քաշեցին, նի էլան, գնացին։

Գնացին հասան յիրանց քաղաքը։ Մէրն ասեց. Մի քիչ բանդ ըլէք, էթամ տունը սարքեմ։

Գնաց տուն, թաղարէքը տեհաւ, էկաւ առաք փառաք տարաւ տուն։

— Դէ, այ տղա, ում անենք քեզ քաւոր։

— Ինձ քաւոր ունեմ։

— Ո՞վ ա։

— Դունա թաքաւորի տղէն։

— Ո՞վ պըտի ըսի։

— Ես։

Տղէն վե կացաւ, գնաց Դունա քաղաքը, քաւորին առաւ բերուց, օխան օր, օխտը քշեր հարսանիք արին, փառակվեցին։ Փառակվեցին, մէրը կնաառին ասեց, թէ ըզդար պարտականութունի տակ ես չեմ մնա։ Սոյլամազ խանըմին տանեմ յիրա հօրն յանցնեմ, դամ։

Վէ կայաւ, Սոյլամազ խանըմին տուաւ, գնաց թաքաւորի կուշտը, ասեց. էս քու ախչիկը, քու Սոյլամազ խանըմը, ում կը տան՝ տուր, քու մեղկը քեզ հետ. ես էլ դրա պէս մի ախչիկ եմ, ես էն տղի կնիկն եմ, որ էս ախչիկը օխտը տարի զաթրչի բանացրուց, ես էլ էկա յիրան տարա, տանըչորս տարի պըհեցի։ Հըմի ինչ ուզըմ ա, թող անի։ Մնաք բարով, ես գնացի։

Ասեց, ձին քշեց եկա դուրս։

Դրանք հասան յիրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

Երկնքից իրիք խնձոր վիր էկաւ, միանգամայն էրկուսն էլ լաղնեցին։

ԿԱՐԱՊԵՏ ԲԼԿԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Աշտարակ *)

Ժամանակով ելել մ մի Սայատ անունով մարթ։ Էտ մարթը ուշպար ա ելել. դրան ունենում ա երկու եղ. օրական էթում ա յիրա համար վար անելու։ Յիրիկունը ետ գառնալուս կնիկը ջուր ա գնում, տաքացնում, հղներին լեղացնում, ու իրեք բուռը ջուր ա խմում հղների ոտի տակի ջրից, թէ ամաքատար են, մեր աշխատաւորներն են։ Օրերից մի օր Սայատը վեր ա ունում էթում ա էլի վար անելու. ըտօրը հաց չի տանում հետը։ Երկու ճամփորթ գալիս են Սայատին ասում են. Մենք սոված ենք, մի քիչ հաց տուր, ուտենք։

Սայատն ասում ա, թէ էսօր հաց բերել չեմ հետս, աղէք, ասեց, դուք հղներին մուղաթ կացէք, ես էթամ հաց բերեմ ձեզ համար։

Էտ մարթիկը մնացին հղների կշտին, Սայատը գնաց տուն՝ հացի։

Մարթիկն ասեցին. Պարապ մնալու տեղ, վե կենանք վարը վարենք, խի՞ ես մարթու վարը խափան մնաս։

Վեկացան երկու ակօս քշեցին, վրա իրեքին եղը կանգնեց, էլ գնաց ոչ։ Էտ ճամփորթի մինը քաշեց եղին իրեք ճիպոտ տվուց, ասեց. Անիծած, խի՞ չես էթում։

Եղն Աստու հրամանով լեզու էլաւ, ասեց. Ա՜յ մարթ, խի՞ ես մեզ ասում անիծած, անիծածը դուք էք, որ ձեր միտն ուտվում չի, և ձեր կաշին հագնվում չի։

Ճամփորթները մնացին մոլորած կանգնած։

---

*) Պատմեց 1912 թ. օգոստ. 21-ին Աշտարակ գիւղում նոյն գիւղացի Աւետիս Գրիգորեանը, որ ժողովրդից կոչւում է Զառ Աւետիս, որպես թէ շատ լաւ հնիթաթ ասող։

Էն մի եղն էլ ասեց. Իմ տիրուհին մի տղա պըտի ըլի, անըմը դնի Կարապետ, և սաղ աշխարքին թագաւոր ըլի։

Էտու Սայատը էկաւ, հացը բերուց, տվուց էտ մարթկերանցը։

Ճամփորթներն ասեցին. Էս հացը մեզ համար ես բերել, տուր առնենք, մենք յուրիշ տեղ կուտենք։

Սայատն ասեց. Ախպերներնք, խի էք տանըմ յուրիշ տեղ ուտում, ըտեղ կանաչ տեղ ա, նստեցէք, կերէք։

Էտ ճամփորթներն ասեցին Բանի որ քու եղնեերդ ըստի են, մենք կարալ չենք հաց ուտի։

Սայատն ասեց. Ա՜յ մարթ, մարթ էլ եղիցը կամանչի։

Ասեց. Քու եղնեերիդ իրենք ճիպատ տվինք, անիծած ասեցինք, եղնեերը լիզու էրան, ասեցին. Մեզ խի՞ ես անիծած ասըմ, անիծածը դուք էք, որ ձեր միտն ուտվըմ չի և ձեր կաշին էլ հագնվըմ չի։ Քու էն մի եղն էլ ասեց, որ իմ տիրուհին մի տղա պըտի ըլի, անըմը Կարապետ պըտի դնեն, սաղ աշխարքին թագաւոր պըտի ըլի։

Սայատն յիրիկունը եղնեերը բերուց տուն, հանդի մէջ եղնեերը ինչ որ խօտացել են, պատմեց կնկանը։ Կնիկն ասեց. Ա՜յ քու տունը շինվի, ասեց, ուխանասուն տարեկան դու ես, ուխանասուն տարեկան ես եմ, նոր պըտի մեզ տղա ըլի։

Յանցկացաւ էրկու շաբաթ, Սայատի կնիկը տեսաւ որ յիրա փորի մէջ մի էրեխա հաղըմ ա։ Մի օր մարթին ասեց. Ա՜յ մարթ, ասեց, ես, ասեց, էրկու ֆոքիս եմ։

Իսկ մարթը ձեռը տարաւ կնկա փորին դրուց, տեսաւ որ էրեխէն հաղըմ ա է՛, ասեց, փառք քեզ Աստված, որ եղնեերի տասը կատարվել պըտի։

Էկաւ ժամանակը, ինը ամիս, ինը, օր ինը սըհաթ, ինը հրապա թամամելուն պէս էկաւ էտ մարթու կնիկն ազատվեց, բերուց մի տղա։ Տղին մկրտեցին, անըմը դրին Կարապետ։

Էտ տղէն օրական մեծանըմ էր, վեց ամսական վախտը որ մէրը դուս էր բերըմ, խալխն ասըմ են, թէ էս վեց տարեկան ա, ոչ թէ վեց ամսական։ Օրական ըդար մեծանըմ էր։ Դառաւ տասներկու տարեկան տղա, համարեա յուրիշները ասըմ են, դա կըլի քսանըչորս տարեկան։ Տասներկու տարեկան ժամանակը տղէն հօրն ասեց. Ավու, ասեց, ինչ ես նստել, մարթս ֆոդից կը կշտանա, վի կալ մեր եղնեերը, էթանք վար անենք։

Էտ օրը թագաւորի հրաման էր, որ անըմը որձ չպրտի դուս դար հանդը, որ թագաւորի տիչիկը պտէր դուս դար ման գալու։

Թաքաւորի ախչիկը ձի նստեց, էկաւ յիրա զարաւաշի հետ տեհաւ մի հալիվոր մարթ, մի պուճուր էլ ոդա ըսի վար են անում։

Դրանք էկան բարով ովին, Սայատը ոդին ասեց. Կարապետ ջան, տենը՞մ ես ինչ լաւ ձիաւորներ են։

Կարապետը բանցը ձէնով ասեց. Ախու, ասեց, լաւ ձիաւորներ են, ափսոս, ասեց, մինն էք ա, մինը որձ։

Թաքաւորի ախչիկն յիմացաւ էտ բանը, էտ գառաւ յիրա զարաւաշին ասեց. Մեր սըան էս ոդէն յիմացաւ։ Էկաւ կանչեց հալիվորի կշտին. Բիձա, ասեց, որդիանցի ես։

Բիձէն ասեց Ես մուղնըցի եմ։

Ասեց Էս ոդէն քու ինչն ա։

Հալիվորն ասեց. Էս ոդէն իմ ոդէն ա։

Ասեց. Քու անումն ինչ ա։

Ասեց. Իմ անումը Սայատ ա։

— Էս ոդի անումն ինչ ա։

Ասեց. Կարապետ ա։

— Ձեր տունը, ասեց, Մուղնի ինչ տեղ ա։

Ասեց. Մեր տունը գեղի գլխին ա։

Թաքաւորի ախչիկն ըտանց անումներն ու տեղը գրեց, գնաց, մտաւ հօրդան դօշակի մէջ, խարար գնաց թաքաւորին, թէ ախչիկտ շատ հիւանդ թեք ա ընկած։

Թաքաւորն ասեց. Վա՛յ, ես եմ՝ մի ախչիկ, ըտ էլ հիւանդ ա։

Թաքաւորն էկաւ ախչկանը տեսութիւն։ Տեհաւ որ ախչիկը թեք ընկած ա հօրդան դօշակի մէջ։

Թաքաւորն ասեց. Ախչի՜, խի՞ ես հիւանդ։

Ախչիկն ասեց թաքաւորին. Ախու, ես մեռնում եմ։

Ասեց. Խի՞, որթի, ցաւդ ասա, բժիշկ բերեմ՝ քեզ փրկի։

Ասեց. Ախու, իմ ցաւս ինձ յէրազի մէջ ասեցին, որ մի Սայատ անումաւոր մարթ կա, նրան ունի մի ոդա, անումը Կարապետ, եթէ էտ ոդին բերել տաս մորթես, նրա արնովը ես լեղանամ, ես կը լաւանամ։

Թաքաւորը կանչեց յիրա նազրին, մի տարրակ վոսկի տվուց, ասեց. Գնա էտ Սայատ անումաւոր մարթի ոդին փողով առ բեր, եթէ տա էլ ոչ՝ զօռաքին պըտի սրպանես՝ արնոտ շարիքը բերես։

Նազիրն էկաւ հարցրուց, քթաւ Սայատին, ասեց. Դու ես Սայատը։

Ասեց. Քու ոդէդ թաքաւորն ուզում ա։ Էտ վախտը ոդէն տան դուս էկաւ, նազիրը տեհաւ, որ շատ լաւ ոդա ա, ասեց. Էս տարրակով վոսկին առ, ոդէդ տուր տանեմ։

Հէրն ասեց. Ես վասկին ինչ եմ անում. իմ ոգին ես տալ չեմ վասկով։

Մէրն էլ ասեց. Իմ ոգին ես վասկով տալ չեմ։

Տղէն ասեց. Ամու, դու, ասեց, վախտուն տարի ա սըշպաբուխտուն ես անում, ինչ ես աշխատել, որ հըմի ինչ աշխատես, թող ես էթամ, որտեղ որ ըլեմ, ես քու տղէն եմ։

Հէրն ասեց. Որթի ջան, թաքաւորը քեզ վախում եմ ինամի։

Հէրը շատ դէմ ընկաւ, մէրը շատ դէմ ընկաւ, Կարապետը նազբրին ասեց. Դու տարբակիդ վասկին վի քցա, ձիդ հետ դարձրու, ես վասկով կրգամ, քու թարքին կը նստեմ, քեզ հետ կը գամ։

Վազիրը վասկիքը վի քցեց ըսեղ, հետ գառաւ. Կարապետը վազկով թռաւ ձիու թարքը, նստեց։ Գնացին հասան թաքաւորի հանդը։

Ասեց. Նազիր, ես լիմացա, որ թաքաւորն ընչի համար ա կանչում։ Յարի, ես գիտեմ, որ քեզ էլ ոգա չունես, յարի ինձ քեզ ոգա շինա, տար ձեր աուն, իմ ծնած վախտը ըսաի մի կնիկ էլ ա ոգատվել, ոգա ա բերել, նրա անքին էլ ա Կարապետ, հըմի նա մահացել ա, հըմի կը բերեն ակրաէրով տիրացու

— Էհ, ասեց, փառք Աստու։

Օրվա մի օրը Թաքաւորը պատրաստութուն էր քաշում զոնախլըզի, որ յիրան համեմատ մարթիկ կանչի, զոնաղ անի։

Թաքաւորը ջառչի քցեց քաղաքի մէջը, ով կարա ձուկը բռնի, ձուկ բռնի՝ բերի։

Մի քանի հատուն հոքի որը թոռ քցող, որը ձեռով բռնող, ասեցին. Թաքաւորն ապրած կենա, մենք կեթանք կը բերենք։

Թաքաւորն ասեց. Դէհ, գնացէք թէղ բերէք, ես պատրաստութուն տենեմ։

Էտ տղէքը գնացին ձուկը բռնելու, մի ախքատ կնիկ յիրան մարթին ասեց. Ա՜յ տունդ շինվի, դու էլ մարթ ես, գնա դու էլ ձուկը կալ տար Թաքաւորին, մի քանի շահի մեզ էլ փող կը տա, աղիզ օր ա՝ կը խարջենք։

Ասեց. Շատ լաւ ես ասում, ա կնիկ, էթամ։

Գնաց գետի մէջ տեղը մի սալի վրա կանգնեց, տեհաւ որ էտ ձուկը կալնողները որը թոռով, որը ձեռով ձուկն են բռնում, այ՜ աղա, ասեց, մի ես էլ ձեռս կոխեմ իմ կանգնած սալի տակը։ Ձեռը կոխեց սալի տակը, տեհաւ մի բան դիրաւ ձեռին, վա՜յ, ասեց, վայ թէ սա ձուկը ըլնէր, եռո ձեռը տարաւ մի հատ ձուկը բռնեց, տեհաւ որ դեղին, վոսկու նրման պսպղում ա, ասեց. Նաւաշ, մինն էլ կա։ Էտ մինն էլ հանեց, էլաւ երկուսը։ Ասեց. Զանում, էս երկուսը բոլ ա, տանեմ Թաքաւորին, քանի էտ մարթիկը էկել չեն։ Էն ժամանակը գնաց, որ Թաքաւորը գեազմըմը պոլթի էր տալիս։ Օխտը հետ գլուխ տվուց, Թաքաւորը տեհաւ էտ մարթին. — Հը՛, ասեց, ինչ կա, ա՜յ տղա։

Ասեց. Թաքաւորն ապրած կենա, քեզ համար ձուկն եմ բերել։

Ասեց. Բեր վիրեմ։

Տղէն ձուկը տարաւ Թաքաւորի կուշտը։

Ասեց. Բայ արա՝ տենեմ յէրեսը։

Տղէն որ ձուկը շանց տվուց, Թաքաւորը զարմացաւ, ասեց. Ա՜յ տղա, ինչ լաւ ձկներ են։ Նայիր, ասեց, տար էս տղին մի էրկու բուռ ոսկի տուր՝ թող էթա։

Մարթն ուրախ-ուրախ էկաւ յիրանց տուն։ Թաքաւորը մի հատ վոսկի թեշթ շինել տվուց, ու էտ ձկնիրը քցեց մէջը։ Զոնախլըզն արուց, վիրջացրուց, շհարցիք (քաղաքացիք) սկսեցին գալ ձկնիրին մոտիկ տալ։ Զահէլ հարս, երիտասարդ ես մենձ մարթիկ էկան տեհան, շատ զարմացան, ասեցին թէ Թաքաւոր, քանց բան չի ըլիլ։ Էտ լուրը հասաւ Թաքաւորի ախչկանը, Թաքաւորի ախչիկը մի նամակ գրեց հօր վրա՝ Ափու, խնթրում եմ,

ձկները գրկես տենեմ։ Համա հասկացիր տես, էք են՝ գրկիր, եթէ որձ են՝ գրկես ոչ*)։

Թաքաւորն ասեց. Ով կիմանա սրանց էքն ու որձը։

Բիբաղի սենեթապետներն ասեցին, թէ ծովեղէն բան ա, մենք չենք յիմանում։

Թաքաւորը տեսաւ որ գրանց մէջ յիմանող չկա, ասեց նաղբրին. Նապիր, երկիր շատ ես ման էկել, և փորցված մարթ ես, էս ձկների էք ու որձը պրտի յիմանաս։

Նաղիրը ասեց. Թաքաւորն ապրած կենա, ես ինչ յիմանամ, ծովեղէն բան են։

Ասեց. Չեմ գիտում, իրեք օր քեզ ժամանակ ա, քթար՝ քթար, քթար ոչ՝ քու գլուխդ կը կտրեմ։ Դէհ, ասեց, գնա մտածա։

Նաղիրն էկաւ յիբանց տուն, շատ տխուր տրտում նստեց, Կարապետն էկաւ ասեց. Ախու, խի՞ ես ըռենց տխուր։

Է՞, որթի, ասեց, գնա բանիդ, գու չգտել ես։

Ասեց. Ախու, յոյս Աստված, որ գու իմ տրենս ազատեցիր, ես էլ քու տրենդ կազատեմ։

Նստեցին. հացի ժամանակը Նաղիրը հաց կերաւ ոչ, քանի որ սիրտը տխուր էր։

Կարապետն ասեց. Կեր, կեր։

Անցաւ երկու օր ժամանակ. վրա իրեք օրը ասեց. Ախու, ըսօր քեզ կը կանչի թաքաւորը, ինչ պրտի ասես։

Ասեց. Որթի, ինչ պրտի ասեմ, գլուխս պրտի կտրի էլի։

Ասեց. Ախու, գնա թաքաւորին ասա, մի ազա ունեմ, բալքի գա յիմանա էտ ձկների էք ու որձը ու գրանց ծիծաղալու պատճառը։

Նաղիրը ճարը կտրած գնաց թաքաւորին ասեց. Թաքաւոր, ինձ մի ազա ունեմ, կարելի՞ ա որ գա յիմանա ձկների էք ու որձ ընելը, ու ծիծաղալու պատճառը։

Թաքաւորն ասեց. Քեզ ազա չունես, խի՞ ես սուտ խօսում։

Ասեց. Թաքաւորն ապրած կենա, քու պապիդ ժամանակը երկիրը քոչէ քոչ էլաւ, մենք ընտեղ մի մանուկ էրեխա թողինք, մի հոգեվախ մարթ վեր ա կալել էտ էրեխուն պըշել, լաւ յուսում ա տալ տվել, և աշխարհի յամէն մի բանը հասկացրել։

Թաքաւորն ասում ա. Ինձ հմար մին ա, գնա բեր։

Նաղիրն էկաւ, ազին լաւ շորեր հագցրուց, տարաւ թաքաւորի կուշտը։

---

*) Էտ խօսքի վրին ձկները ծիծաղացին. ծակ տվին ու ընկան ջրի մէջ։

Թաքաւորը որ ազին տեհաւ, ասեց. Նազիր, էրանեկ քեզ, որ էտ լիսպասին ապա ունես։

Ասեց. Ա՛յ ապա, կարաս էս ձկնեքի էք ու որձն յիմանաս։

Տղէն ասեց. Թաքաւորն ապրած կենա, եթէ քու ախչկա ղրկած նամակը կարդաք, ես կիմանամ։

— Նազիր, ասեց, վե կալ էտ նամակը, կարթա։

Նազիրը վե կալաւ նամակը կարդաց, որ ձկնեքը թէ էգ են՝ ղրկա տենենք, եթէ որձ են՝ ղրկես ոչ։

Էտ ժամանակին ձկնեքը ծիծաղացին, ընկան ջրի մէջ, ասեց. Տեհար, որդի, էտ հնարքը, հրաշքը։

Ասեց. Հա, տեհա։

Ասեց. Թաքաւորն ապրած կենա, թէ որ էտ ձկնեքի ծիծաղելու պատճառն ասեմ, դու կը փոշմանես, ձկնեքն էլ էք ենու ես որ, ասեց, մօրիցս ծնվեցի, ատամէքը ինձ փաթըթած վախտը մի ատա՛ ասեց. կարելի՞ ա էտ ատակն ասեմ, նոր ինչ կամենըմ ես՝ արա։

Թաքաւորն ասեց. Ասա։

Ասեց. Ժամանակով մի թաքաւոր կար, թաքաւորին ունէր մի հատ զուշ, զափաղըմը դրած։ Էտ զուշը թաքաւորի հաց ուտելու վախտը խօսըմ էր, թէ յիրիկուն, թէ յաուաւօտ թաքաւորը յիրա մէջը շատ ուրախանըմ էր ու ասըմ էր, թէ հարար ուրիշ թաքաւորներին էս ջուտա զուշ ունեն, թէ չէ։

Թաքաւորը մարդ ասուց տեհաւ, որ մի սարի զուշ էկաւ թաքաւորի ղշի հետ շատ խօսացին. բոի թաքաւորին մի յիմաստուն նազիր ունէր, կանչեց նազիրին ասեց. Տես էն սարի զուշը ինչ ա ասըմ։

Ասեց. Էն սարի զուշը մեր ղշի հետ հօրօխրօր ապէք են, նրանց հարսանիք ունեն, էկել ա մեր ղշին կանչըմ ա հարսանիք։ Մեր զուշը ասըմ ա. Ես թաքաւորի տէր եմ, ինձ կը թողա որ ես գամ ձեր հարսանիքը։

Թաքաւորն ասեց Իրաւունք տուր իրեք օր ժամանակի մեր զուշն էթա։

Զուշը զափաղիցը դուս էկաւ, թաքաւորին գլուխ ավուց, ու էտ ղշի հետ գնաց։ Իրեք օրը թամամեց, զուշն էկաւ, մի պաղի դան (կորիզ) կոցցին բերուց թաքաւորի սեղանի վրին դրուց, գնաց մտաւ յիրա սենը։ Վեկալան էտ դանը մարդ արին, ճանանչեցին ոչ, թէ ինչ աւ։ Թաքաւորին մի բաղման ունէր, կանչեց բաղմանին, ասեց՝ կըտանես էս կորիզը կը տնկես, տեհնենք ինչ դուս կըգա սրանից։

Բաղմանը տարաւ էտ կորիզը տնկեց, իրեք տարի հետ

տեղաց, որ դա կանանչեց, խնձորի ծառ դառաւ։ Վրա չորս տարին ավուց իրեք խնձոր. շատ թամուզ, ընտիր խնձոր, որ աշխարհի մէջը էտ ջուտա խնձոր հէչ չէր ճարվիր։

Բաղմանը մի հատ քաղեց, գրուց բոթնոցի մէջ, որ տանի թաքաւորին փեշքաշ, գնաց որ յիրաւ պատը դուս դա՝ բաղմանի ձեռները ցխոտ էր, խնձորը վի գրուց պատի վրա, ու ձեռները լվաց. մի թշնամի օց դուս էկաւ պատիցը՝ խնձորին եաղաւ (թոյն) ավուց ու մատաւ պատի մէջ, համա բաղմանը յիմացաւ ոչ, թէ ինչ էլաւ։ Խնձորը վի կալաւ, տարաւ գրուց թաքաւորի յատաջը՝ խնձորի շոգրը փայլեց էտ օթախի մէջը. թաքաւորն ասեց. Բաղման, էտ ինչ խնձոր ա։

Ասեց. Բաւ դշի բերած կորիզն ա, անկիլ եմ, չորս տարին ժամանակի իրեք խնձոր ա տվել, մինը քաղեցի, բերի քեզ փեշքաշ։

Թաքաւորը մտածեց, ինչ յիմանանք էտ խնձորը չար ա թէ բարի ա, ասեց. Խնձորը կտրեցէք, պրատի փորձենք։ Ինձ մի ուխտատուն տարեկան պատ ունեմ, եթէ էտ խնձորը կերաւ՝ մահացաւ, էն ժամանակը մենք կիմանանք, որ դուշը մեզ դուշման ա, եթէ պատը կերաւ ջանկացաւ, կիմանանք որ դուշը մեր դոստն ա։ Դիլիմը տարան տվին պատին, պատը կերաւ՝ տրաքեց։ Թաքաւորը բարկացաւ դշի վրա, ասեց. Բալի էտ խնձորը մենք ինք ուտում, մենք մահանայինք։ Եաղիր, ասեց, դշի գլուխը պոկի։

Եաղիրը դշի գլուխը պոկեց։

Էտ խնձորի եկելուխանը սաղ քաղաքի մէջ տարածվեց. թէ թաքաւորին բանց մի մարդասպան խնձոր ունի։ Եաս, էտ բաղմանին մի կնիկ ունէր, բաղմանը օրը իրեք հետ կնկանը կը ծեծէր, բաղմանի կնիկը ասեց. Էթամ էն խնձորիցը մի հատ քաղեմ, ուտեմ, մեռնեմ, սրա ձեռիցը պրծնեմ։ Էկաւ մի հատ խնձոր քաղեց, գրուց բերանը՝ ծամեց, կուլ ավուց, գառա տատնրինց տարեկան ախչիկ։ Բաղմանը գնաց յիրանց տունը, որ կնկանը ծեծի, տեղաւ կնիկը տանը չի, ասեց. Վնաս չունի, կը մնա յիրիկունը կը ծեծեմ։ Բաղմանը եաս գառաւ էկաւ յիքին, տեղաւ որ մի ախչիկ էատեղ կառնած ա։ Ասեց. Ախչի, ինչ գործ ունես բան։

Էտ ախչիկը ծիծաղաց։ Ասեց՝ Ես բան եմ ասում, դու ծիծաղում ես, քաշվի կորի գնա։

Ախչիկն ասեց. Ա՛յ մարդ, դու ինձ ճանանչում չե՞ս, ես քու կնիկն եմ։

Ասեց. Իմ կնիկը վախտուն տարեկան պառաւ ա, համա դու տատնրինց տարեկան ախչիկ ես։

Ախչիկն ասեց. Ես էկա, որ էս խնձորիցը ուտեմ, մահանամ, քու ձեռիցը աղատվեմ, կերա, ջահէլ ախչիկ դառա, հրէս ըսէլ կէս խնձորը։

Կէսն էլ մարթը կերաւ՝ դառաւ տասնըհինգ տարեկան դալիղանլի։

Ասեց. Ա՜յ կնիկ, որ ըսենց ա, արի էս մի հատն էլ քաղենք, տանենք Թաքաւորին։

Տարան Թաքաւորին փէշքաշ. Թաքաւորը մտիկ արուց, տեհաւ, որ էրկու ֆոդի նեքսև մտան, ասեց. Էս ինչ տեղի մարթ էք։

Բաղմանն ասեց. Թաքաւորն ապրած կենա, ես քու բաղմանն եմ, էս էլ իմ կնիկն ա։

— Բա ասեց, ոնց դուք ըսենց դառաք։

Ասեց. Մենք էս խնձորներից մինը քաղեցինք կերանք, որ մեռնենք, համա ըսենց ջահելացանք։ Էս մի հատն ա մնում, բերինք քեզ փէշքաշ։

Թաքաւորն ասեց. Խնձորը կտրեցէք, ինձ մի տատ ունեմ, թէ կերաւ մահացաւ, ձեր էրկսի էլ գլուխը կը կտրեմ, թէ չէ ջահելացաւ, ձեզ մենձ պարգև կըտամ։

Խնձորի մի գիլիմը տարան տվին Թաքաւորի տատին։ Տատը ուտելուն պէս՝ դառաւ տասնըհինգ տարեկան ախչիկ. էկաւ գնաց Թաքաւորի կշտին նստեց.

Թաքաւորն ասեց. Ա՜յ ախչի, ինչ գործ ունես ըստի։

Տատն ասեց. Ես քու տատն եմ, ես ախչիկ չեմ։

— Բա մենց ըսենց էլար։

— Որ դու խնձորի գիլիմը դրկեցիր, ես կերա, ջահելացա։

— Թաքաւորն ապրած կենա, դշի սըպանիլը Թաքաւորը փոշմանեց թէ՝ ոչ։

Թաքաւորն ասեց. Բա, էն ջուտա դուշը կը մորթեն, շատ ախտոս էկաւ, համա եդի էր։

Ասեց. Թաքաւորն ապրած կենա, ես էլ որ էս ձկնրի ծիծաղալու պատճառն ասեմ, դու էլ կը փոշմանես։

Թաքաւորը միքիչ մտածեց, ասեց. Սա ուզում ա ինձ խափի, ասեց. Ձկլաւ, չելաւ, ձկնրի ծիծաղալու պատճառը ասա։

Տղէն տեհաւ որ չիլում, Թաքաւորը բան չի հասկանում, էլի ասում ա ձկնրի ծիծաղալու պատճառը ասիլ պտես, ասեց. Թաքաւորն ապրած կենա, ինձ որ տանում ին ժամ կնքելու՝ էն վախտը տատմօրիցը մի առակ էլ սարվեցի։ Էն էլ ասեմ, եռև գու գիտես։

Թաքաւորն ասեց. Ասա։

Ասեց. Մի թաքաւորի մի տղա ունէր, էտ թաքաւորի տղէն մի հատ թաղան զուշ ունէր, էտ զուշը վեր էր ունում էթում էր տաբ։ Յամէն օր թաքաւորի հմար կաբաւ էր բերում, ապունիկ էր բերում։ Օրվա մի օրն էլ զուշը վե կալաւ գնաց մէշէն, էտ զշին բաց թողաց, զուշն ընկաւ մի յուրիշ զշի հետ ու գնաց։ Զուշը գնաց, դա ձին քշեց հեռուցը. տեհաւ որ յիրա թաքաւորի ֆոզիցը զուս ա էկել, ոչ հաց ա կերել, ոչ էլ չայ ա խմել, տեհաւ որ օրը մթնել ա, յիրա զշին էտ կանչեց, զուշն տուաւ թեւին, էկաւ դրա յիրանց տունը։ Ճամփին ծարաւութունը շատ սխտեց, մի քարափի տակով յանց էր կենում, տեհաւ, ըսխան ջուր ա կաթում, յիրա ծոցի թասը հանեց, բռնեց էտ կաթող ջրի տակ, թասն էկաւ լցվեց, ուզեցաւ որ խմի, զուշը տվաց թասի ջուրը թափեց։ Ասեց. Վայ քու տիրուչ հէրն անբծվի, զու ուզում ես, որ ես ծարաւ մեռնեմ։ Քաշեց զշի գլուխը պոկեց։ Զին կապեց ըսի քարափիցը. նի էլաւ քարափի գլուխը, տեհաւ որ ըսի մի ուշար էն արպանել, արեր տվել ա, էտ ուշարի եաղուն ա հալել ա, քարափիցը թափում ա։ Ծղէն փոշմանեց, որ զշի գլուխը կորեց, թէ որ, ասեց, էս եաղուն ես խմէի, կը մահանայի։ Վայ, ասեց, տխոռ իմ զուշը, որ ես արպանեցի։ Թաքաւորն ապրած կենա, ասեց, զուշը արպանեց լաւ էր, թէ ասղ մեռաւ լաւ էր։

Ասեց. Զէ, ասղ մեռաւ լաւ էր։ Էն զուշն յիմասաուն էր։

— Ուրեմն փոշմանեց զշի արպանելը, չէ։

— Շատ փոշմանեց։

— Ես էլ, ասեց, որ էս ձկնելի ծիծաղալը ասեմ՝ զու էլ կը փոշմանես։

Էլի թաքաւորը միաք արաւ, ասեց. Պրաի ասես անպատճառ։

Ասեց, մի առակ էլ գիտեմ, որ սարվել եմ իմ քաւորիցը, ժամիցը որ իմ քաւորը ինձ խոբատած բերում էր մեր տուն, ճամփին մի առակ ասեց։ Թաքաւորն ապրած կենա, թող էտ առակն էլ ասեմ, հետո զու գիտես։

Ասեց. Ասա։

Ասեց. Ժամանակով մի թաքաւորի մի օց ունէր գանապան, ինչ մարթի սիրաը որ բարի էր ըլում, օցը նրան ճամփա էր տալի, գալիս ին թաքաւորի կուշտը, ինչ մարթի որ սիրաը խային էր ըլում, օցը թողում չէր գա։ Թաքաւորի սինոթապետները մի օր ասեցին յիրար։ Էհ մենք մարթ ենք, բան ա թէ մի օր բարկացանք, խային թամաշ արինք թաքաւորին, օցը մեզ վնաս կըտա։ Էկէք, ասեցին, մի տասնըչինգ օր էթանք ոչ սինոթ։

Տասնըչինգ օր գնացին ոչ սինոթ, թաքաւորը մարթ ղրկեց

դրանց ետեւը. Խե՜, ասեց, սինոթ չէք գալիս։ Սինոթապետները ասեցին, թէ թաքաւորը ապրած կենա, թէ օգդ կը վերջացնես, մենք կը գանք սինոթ, թէ վերջացնել չես՝ մենք էլ գալ չենք։ Թաքաւորը միակ արուս, ասեց յիրա մէջ. էս տասներկու մարթի խաթրը ինչ կոտրիմ մի օրի խաթեր։

Թաքաւորը վի կացաւ տեղիցը, յիրա թուրը պատից կախած էր, թուրը տեղիցը հանեց, որ օրին սրպանի, թուրը վրա բերուց օրին, օրը փախաւ, պոչիցը կարվեց մի թզաչափ. թաքաւորին մի թոռն ունէր, օրը գնաց թաքաւորի թոռին կծեց ու փախաւ։ Օրական թաքաւորը ճնաներ քաշեց, մի օր խաբար բերին, թէ Ֆլան երկիրը գալեցին, մի օր խաբար բերին, թէ զոշունդ Ջարթեցին։ Յամէն օր մի նոր նեղութունի մէջ ընկաւ։ Թաքաւորն յիմացաւ, որ յիրա դոլվաթն էտ օրի գլխին էր, վայ, ասեց, ափսոս իմ օրը։ Թաքաւորը շատ նեղութուններ քաշեց, սաղաղ օրի խաթեր։ Թաքաւորը էրկաթէ տրեխ հագաւ, էրկաթէ գաւազան առաւ ձեռը, գնաց օտար աշխարհ մեն գալու, որ յիրա դոլվաթ օրը քթնի, համա քթաւ ոչ։ Ետ դառաւ ղըրա յիրա տունը, էկաւ յիրանց քաղաքի գլուխը, անհաւ մի սարի տակից օրը գուս էկաւ։ Հը, ասեց, թաքաւոր, ինչ բանի ես մեն գալի։

Թաքաւորն ասեց. Օր ջան, իմ դոլվաթը փախել ա ինձնից, յարի էթանք մեր տունը, յառաջվա պէս ծառայս։

Օրը ասեց. Գնա՛ քու բանիդ, ոչ իմ պոչի հարէն կը սաղանա, ոչ քու սրտի հարէն կը սաղանա։ Դու գնա՛ քու բանին, ես էլ կեթամ իմ բանին։

Թաքաւորի օրը չեկաւ. Թաքաւորը շատ փորձանքներ քաշեց օրի ուչա (պատճառով)։ Թաքաւորն ապրած կենա, օրը սաղ մնար լաւ էր, թէ սղանեցին՝ լաւ էր։

Թաքաւորն ասեց. Չէ, օրը սաղ մնար լաւ էր, էն թաքաւորութունը կը մնար։

— Է՜հ, ասեց, էն օրի տէր թաքաւորը փոշմանեց, թէ փոշմանեց ոչ։

— Փոշմանեց։

— Ես էլ, ասեց, որ էտ ձկնորի ծիծաղալը ասեմ, դու էլ կը փոշմանես։

Թաքաւորը մտածեց, իրեք առակից մի բան հասկացաւ ոչ, ասեց. Կարելի չի, ձկնորի ծիծաղը ասիլ պտաս։

— Դէհ ասեց, որ ըանեց ա, կանչա թաքաւորուն, որ էս ձկնորի ծիծաղալու պատճառը քու ախչկա օթախումը պըտի ըլի։

Թաքաւորը կանչեց յիրա թաքաւորուն. ձկնորը գրուց թեշտի մէջը, ավուց նաղլրին, ասեց. Վա՜ կալ էթանք։

Թաքաւորը, թաքուէին, նազիրը ու Կարապետը գնացին ախչկա օթախը։ Ախչիկը տեսաւ թաքաւորը, յիրա մէրը, յիրանց նազիրը, մնէլ մի ջահել ազա բերին ձկնեերը օթախի մէջ տեղը վե դրին։ Թաքաւորի ախչկա ջասիէքը վե կացան, թաքաւորին գլուխ տվին։

Կարապետն ասեց. Թաքաւորն ապրած կենա, ըսօրվա իրաւունքը իմն ա, ինչ որ ասեմ, պըտի կատարէք։

Թաքաւորն ասեց. Շատ լաւ։

Ասեց. Էս եռեսունը ութ զարավաշերը պըտի դուս գան։ Եռեսունը ութ զարավաշերը դուս էկան, գնացին յիրանց բանին։ Էրկուսը մնացին բան։ Մինը թաքաւորի ախչիկն էր, մինն էլ ախչկա սրտով սիրած զարաւաշն էր։

Կարապետն ասեց. Թաքաւորն ապրած կենա, պըտի ախչիկդ տկլորանա։

Ախչիկն ասեց. Թաքաւորն ապրած կենա, ինչ ես ընկել էս ջահելի խելքին։ Ես որ տկլորանամ, ինձ ես չունի, դու իմ հէրն ես, էն էլ իմ մէրն ա, բա էս նազիրն ինչ անենք։ Բա էս ջահել ազէն ինչ անենք։

Ասեց. Վնաս չունի, պըտի տկլորանաս։

Տկլորացաւ, պրծաւ, շորերն ըլէդ հաքաւ, գնաց յիրա տեղը նստեց։

Կարապետն ասեց. Պըտի էս մի զարավաշն էլ տկլորանա։

Ախչիկն յառաջ ընկաւ, թէ դուք ինձ տեսաք, ինձ ես չունի, հէր ու մէր, բարեկամ էք, համա էս ախչիկը օտար ախչիկ ա, արևելի թաքաւորի ախչիկն ա, օրը տասը տեղից նամակներ ա ըստանում, արևմուտքի թաքաւորի ազէն ասում ա, յարի ինձ առ, հարաւային թաքաւորի ազէն ասում ա՝ յարի ինձ առ, հիւսիսային թաքաւորի ազէն ասում ա՝ յարի ինձ առ, ոչ մեին էլ ասում չի. ամօթ ա, էս ջուտա բան մինք պահանջիլ. էս ախչիկը տկլորանալ չի։

Կարապետը ձկնեերին ասեց. Ձկներ, էս ախչիկը տկլորանա, թէ չէ։

Ձկնեերը ծափ տվին, ծիծաղացին, ընկան ջրի մէջը։

Թաքաւորը հրամայեց նազիրին, որ անպատճառ էթա, ախչկա շորերը հանի։

Ախչկա շորերը հանելու ժամանակը, տեսան, ինչ տեսան, տեսան որ դա ազա ա։

Ասեց. Թաքաւորն ապրած կենա, ասեց, էս ձկնեերի ծիծաղելու պատճառն էն ա, որ որձը յիրա կշտին պահում ա, քեզ հա-

ւատացնում ա, միթամ (միգուցե անգամ) ես ձկնորի որձիցն էլ եմ ամանչում։

Կարապետն ասեց ձկներին. Ձեր ծիծաղի պատճառը էս ախչկա համար ա, թէ ոչ։

Ձկները ըլէր ծիծաղացին, հա, հա, ասեցին, էտ ա պատճառը։

— Դէհ, ասեց, թաքաւորն ապրած կենա, հըմի դու գիտես քու ախչիկը։

Թաքաւորն ասեց. Ուրեմն իմ ախչիկը ինձ խայտառակեց, թէպ, ջանլաթ։

Ջանլաթը կանչեց, ախչկանը կատորիլ տվուց։

Կարապետն ու նազիրն էկան յիրանց տունն։

Մի տատն օր ժամանակի գնացին ոչ թաքաւորի կուշտը, համա թաքաւորը տեհաւ, որ Կարապետին մենձ իմաստութուն ունի, բէկութուն տվուց, Կարապետ բէկ ասեց։ Էկան յիրանց տունը, մի վախտ քաշեց, նազիրին ասեց. Նազիր, վե կաց էթանք թաքաւորին տեսնենք։

Գնացին թաքաւորին տեհան, որ թաքաւորը նստած լալիս ա։ Կարապետ բէկը հարցրուց թաքաւորին. Ի՞նչ ես լալիս։

Ասեց Բա ի՞նչ անեմ, ես ի էտ մի ախչիկը, զուր տեղը սըպանեցի, կը տայի էտ տղին, իմ թաքաւորութունը կը ժառանգէին։ Բա հըմի ես ի՞նչ անեմ առանց ժառանգի։

Կարապետ-բէկն ասեց. Թաքաւորն ապրած կենա, ես քեզ իրեք առակ ասեցի, դու հէչ բան չհասկացար, ինձ մեղք չունեմ։

Կարապետ-բէկն էկաւ նազիրի տունը. Է՜յ նազիր, ասեց, հըմի ի՞նչ ես ասում։

Նազիրն ասեց. Որթի, ի՞նչ պըտի ասեմ. դու գիտես։

Ասեց. Իրաւունք տուր, էթամ իմ հօրն ու մօրը տեսնելու, էս էլ ա իմ տունը, էն էլ ա իմ տունը։ Նազիրը բոլ վոսկի տվուց Կարապետ բէկին. Դնա, ասեց, քու հօրն ու մօրը տես։

Էկաւ յիրանց տունը, դռան յառաջին տեհաւ, որ հէրը մի դիհ ա նստած, մէրն էլ մի դիհն ա նստած, բարով տվուց. Ափու, ասեց, զոնաղ չէ՞ք ուղիլ էս յիրիկուն։

Ասեց. Զոնաղն Աստուն ա։ Ճանանչեցին ոչ որ յիրանց տղէն ա։ Յիրիկունը նստեցին. հէրն ասեց.

— Ապա, դու որդիանցի ես։

Ասեց. Ափու, ինձ ճանանչում չե՞ս։ Ես քու Կարապետ տղէն եմ։

— Ա՜յ որդի ասեց, հէրը, իմ Կարապետ տղէն թաքաւորը տարել ա, գիտեմ ոչ ինչ ա արել։ Խարար չկա։

Ասեց Ափու, հաւատա, որ ես ձեր ազէն եմ, թաքաւորն ինձ բէկութիւն տուաց, հրամի ինձ Կարապետ-բէկ են ասում։

Հէրն ու մէրը շատ ուրախացան, էկան փաթաթվեցին ազին, պաչեցին, սիրեցին, ուրախացան։ Մի հինգ տասն օր կացաւ բանց, ասեց. Ափու, մեր եղնները մեռում են։

Ասեց Որթի մեռում են։

— Դէ, ասեց, յառաւօտը չուքդ սարքա, էթանք վար անենք, էս փողը ուտելով կը հատնի, իսանը ֆողից կը կշտանա։

Ջուքը լցեցին, գնացին յիրանց յարաը. տեսաւ որ էտ յարաի միջին մի պուճուր կոնա կա, ասեց. Ափու, ես էս կոնաը վարիլ պտեմ։

— Որթի, ասեց, էտ կոնաը հարիր տարվա փարախ ա, էտ վարվիլ չի։

Ասեց. Ափու, դու միքիչ համփերա, կը տեսնես։

Տարաւ եղները դէմ արաւ էտ կոնաին, մի մենձ սալ պոկ էկաւ, բացվեց մի զաղի բերան։

Ասեց. Ափու, Սուլթան Մուրադի թաքաւորութունը ըսաի ա, ես կը մեռնեմ էս զաղի մէջը, կը հաքնեմ սուլթան Մուրադի թաքաւորութունի շորերը, դու վախենաս ոչ։

Մտաւ ազին զաղի մէջը, հաքաւ թաքաւորութունի շորերը, դուս էկաւ, որ հէրը տեսնի։ Հէրը տեսաւ՝ թոզից փախաւ, վախեցաւ։

Ասեց. Ափու, յարի, յարի. ես եմ, ես, վախենալ մի։

Էկաւ տեսաւ, որ դրուստ յիրա ազին ա։

Ասեց. Ափու, գնա մեր սելը լցա, բեր։

Հէրը գնաց տուն. սելը լցեց էկաւ, ըսի խազինէքը դուս տվին, վոսկի. էրծաթ, թանգագին քարեր, բարձեցին սելին, բերին յիրանց տուն։

Ասեց. Ափու, պտի մեր տները շինեմ թաքաւորի տների նման։

Երկու ամսումը տները շինվեց, հատ, ասեց. Ափու, մի խէյրաթխանա էլ պտի շինեմ, որ երկու հարիր ջան մարթ տանի։ Մի ամսվա մէջ էլ էտ շինեց, պրծաւ։ Իժդար չոլախներ. յաշկից զրկվածներ, ցաւտա մարթիկ կային, էկան թոզ էլան ըսեց։ Կարապետ-բէկն օրը իրեք հետ գրանց հաց էր տալիս. էն հացն էր տալիս, որն յինքն էլ էր ուտում։ Օրն իրեք հետ հաց տալու վախտը քիսէն վոսկի էր լցնում, իրեք հետն էլ վոսկի էր գրում։ էտ ձէնն հասաւ սուլթան Մուրադին։ Սուլթան Մուրադը ասեց. էթամ, տեսնեմ դրուստ ըսենց լաւ մարթ ա էտ Կարապետ-բէկը։

Մի օր իրեք վըոըշիկ (բամբակ գլող) էկան խէյրաթ-խանըմ նստեցին։ Նստեցին, օրը իրեք ժամ հաց կերան, իրեք հետ էլ վոսկի առան, իրեք ամիս մնացին, վի կացան, որ էթան յիրանց տնները, գնացին տեհան էրկու դարբիշ գալիս են։

Էս դարբիշներն ասեցին. Ո՞րդիան էք գալիս։

Ասեցին. Կարապետ-բէկի գեղիցը։

Դարբիշն ասեց. Կարապետ-բէկն ա լաւ մարթ, թէ՞ սուլթան Մուրադը։

Էս վըոըշիկներն ասեցին. Կարապետ-բէկը «մարթ է», սուլթան Մուրադը «ինչ քաք է»։

Դարբիշներն ասեցին մինը մնին Էս մարթիկը մեզ անպատվեցին, կեթանք կը տեսնենք, թէ Կարապետ-բէկը մեզնից լաւ էլաւ՝ սրանց կը պատվենք, թէ փիս էլաւ՝ սրանց գլուխը կը կտրենք։

Էս դարձրին ճամփիցը էս վոըշիկներին, բերին մի տան պահ ավին։ Յիրանք դուշ էկան Կարապետ-բէկի տունը։

Կարապետ-բէկի հէրը տեհաւ, որ էրկու լաւ ձիաւոր էկան, յիրանք դարբիշ մարթիկ, կանչեց նոքարներին, տարան ձիանը կապեցին, Կարապետ-բէկն ասեց. Ախու, էս զոնաղներին բեր վիրև. Կարապետ բէկը տեղիցը կանգնեց, գլուխ վի բերուց դրանց։

Դարբիշն ասեց. Կարապետ-բէկ, խի՞ ես մեզ գլուխ վի բերըմ։

Ասեց. Լաւ, ես գիտեմ դու ով ես։

Էկաւ հացի վախտն էր, նստեցին հաց ուտելու։ Դարբիշները տեհան, որ յիրանք էս ջուռա կիրակուր չեն կերած. հացը կերան, վերչացըրին, Կարապետ-բէկն ասեց. Դուք նստեցէք, ես էթամ մեր խէյրաթ-խանէն։

Գնաց, վոսկին լցրուց տոպրակը, գրուց փէշի տակը, դարբիշներն ասեցին. Մենք էլ ենք գալի տեսութուն։ Կարապետ-բէկն ասեց. Էկէք։ Գնացին, տեհան որ իրեք հարիր, չորս հարիր ջան հաց են ուտըմ, էն հացիցը, որ յիրանք կիրել են։ Հացից հետը Կարապետ-բէկը հանեց տոպրակով վոսկին, մին մին տվուց էս տնքաղներին, ետ դառան էկան տուն։

Դարբիշն ասեց. Կարապետ-բէկ, էս ինչ ես անըմ, օրական ըդար տալիս ես։

Ասեց. Օրական ըդար տալիս եմ։

Դարբիշն ասեց. Կը հատնի քու փողը։

Ասեց. Հատնիլ չի, իժդար որ ես վեր եմ ունըմ իմ փողիցը, տան ըդար ուկնըմ ա։

Մի ամիս մնացին դարբիշները։ Տեհան, որ յիրանցից շատ լաւ մարթ ա, քշերը էրկուսը մի հետ մտըքնաթ արին, ինչ

անենք որ գրան չիմաց տանք, թէ մենք սուլթան Մուրադն ու յիրա վազիրն ենք։ Մտածեցին, բերին մի գիր գրեցին, թէ ես սուլթան Մուրադն եմ, էս էլ իմ վազիրն ա, ես խնդրում եմ քեզ, Կարապետ-բէկ, քու հարսանիքն ըլիցու ժամանակն ինձ իմաց տաս, որ ես քեզ քաւոր ըլնեմ։ Մի վախտ յանցկացաւ, Կարապետ-բէկի հմար հէրը գնաց արեւելի թագաւորի ախչիկն ուզեց, ասին։ Կարապետ-բէկն ասեց. Էթամ սուլթան Մուրադին յիմաց տամ, գա ինձ քաւոր ըլի։ Ձին նի էլաւ, գնաց. շատ գնաց թէ քիչ գնաց, ճամփին մի հալիվոր պատահեց. Հը՛, ասեց, պապի, խի ես նստել էս շարոմը ըսի։

Ասեց. Ոնեկս ցաւում ա, որթի, կարում չեմ էթալ։

Հալիվորին քաշեց թարքը, գնացին։ Գնացին, մի գեղի մոտեցան։

Ասեց. Որթի, ինձ բատի վե գի ձիուցը։ Դու լաւ մարթ ես, կեթաս մի հարուստ տուն, ես ախբատ մարթ եմ, կեթամ մի յոզում կը կենամ։

Էս մարթը գնաց մտաւ գեղի մէջը, տեհաւ որ մի մենձ դարբարդա կա, ասեց. Կարելի ա էս մարթիկը հարուստ ըլնի, դուռը ծեծեց, տան տիրոնչ տղէն դուս էկաւ, տեհաւ մի պատվաւոր մարթ ա։

Ասեց. Ախպէր, գոնաղ չէք ուզում էս յիրիկուն։

Ասեց. Ապա, հանցէք։

Գոնաղին վե բերուց ձիուցը, ձին տարան կապեցին, դարի, դարման տվին ձիուն ու յիրան տարան վերև։ Գնաց տեհաւ օթախումը մի հիւանդ թեք ա ընկած. հիւանդն ասեց. Ա՜յ, հա՛յ, հա՛յ, ասեց, էս ինչ վատ մարթ էր, որ բերիք ըսի։

Էս հիւանդի տղէն ասեց, թէ ախպէր Ջան, նեղանալ մի էս իմ հէրն ա, օխտը տարի ա, հիւանդ ա։

Կարապետ-բէկն ասեց. Ես նեղանալ չեմ, նրա համար որ հիւանդ ա, խելքը գլխին չի։

Բերին տեղ քցեցին, հաց բերին, էս մարթը հաց կերաւ, հատվ էկաւ քնելու ժամանակը, տան տիրոնչ տղէն ասեց. Ճրաքըդ վիչա. քնի։

Ճրաքը վիչեց. քնեց, մեկ գլուխը հանեց լըհերի տակիցը, տեհաւ որ ճրաքը վառում ա, յիրա բերած հալիվորը էս հիւանդի գլխավիրեին կանգնած ա, մի հատ բրչով հիւանդի գլխին տալիս ա։ Բերնիցը մի սև բան հանեց [illegible] տարաւ։ Կարապետ-բէկն յիմացաւ, որ էս մարթը մեռաւ, դուս էկաւ գեղամէն, յիմաց տվուց տղէքանցն, ասեց. Էկէք, ձեր հէրը մեռաւ։

Մենձ տղէն ասեց. Ախպէր, ասեց, ես քու ճամփիս դուրբ-

բան, ինչ լաւ թէթև սա ունէիր, փառք Աստուս, որ մեր հէրը մեռաւ։ Էս օխտը տարի ա, տանջվում էր։

Բերին էրկու եղը մոլթեցին, և հայի թագարէք քաշեցին։ Լիսը բացվեց, Կարապետ բէկն յիրա ձին դուս քաշեց, որ էթա։ Մենձ տղէն էկաւ ասեց. Ախպէր ջան, յուր ես էթում, կաց ըսաի, մեր հօրը թաղենք, դու էլ օղորմի տուր։

Ասեց. Ես կարալ չեմ մնալ, իմ գործը շատ ա։

Հանեց մի բուռը վոսկի ավուց, ասեց. Աստված ֆոքին լուսաւորի։ Դուս էկաւ, գնաց էտ գեղիցը։ Թէ շատ գնաց, թէ քիչ գնաց, Աստված գիտէր, գնաց տեհաւ, ըլէգ էտ հալիւորը ճամփին նստած ա։

— Տօ, բիձա, ասեց, խմ՞ ես նստել էս շոքովը։

Ասեց. Ոնեներս ցաւում ա, կարում չեմ էթալ, մենձ մարթ եմ։

Ասեց. Ի՞նչ անեմ, թէ թողամ էթամ, Աստված դարուլ չի անի, ասեց, յարի, պապի, յարի։

Պապի թեւիցը բռնեց, քաշեց թարքը, գնացին մի գեղի էլ մօտեցան, ասեց. Որթի, ինձ ըսաի վե գի։

Ձիու վրիցը վե դրուց հալիւորին, յինքը գնաց մի հարուստ տուն, դուռը ծեծեց։ Տան տիրուոնչ տղէն դուս էկաւ։

Ղոնաղն ասեց. Բարիրիկուն, մյ տղա։

— Համեցէք, ասեց, ձիուցը վե յարի։

Տան տէրը ձէն ավուց, նոքարներն էկան, ձին քաշեցին նեքսեց, դարի, դարման, խոտ տվին ձիուն, յիրան տարան վիրև։ Գնաց տեհաւ, որ ըսաի էլ մի հիւանդ կա։

Հիւանդն ասեց. Օխայ, ինչ լաւ, անոշ ֆոտ էկաւ։ Էտ ղոնաղին, ասեց, բերէք իմ կուշտը։ Տարան նրա կուշտը նստացրին, շատ լաւ ունթունեց։ Բարով, հազար բարով ես էկել, ասեց, ղոնաղ ախպէր։

Կարապետ-բէկը ասեց. Շնորհակալ եմ, ափու։

Հայ կերան, պրծան, ղոնաղի համար տեղ շինեցին, վե կացաւ քնելու։

Էտ հիւանդն ասեց. Որթի, ճրաքն անցրու, դինջ քնի, բեզարած մարթ ես։

Ղոնաղը վե կացաւ, ճրաքն անցրուց, գլուխը կոխեց լըհերի տակ, ինել գլուխը հանեց, մի ճրաքի տեղ տասը ճրաք ա վառվում։ Տեհաւ որ յիրա բերած հալիւորը մի հատ վոսկէ խնձոր ձեռին դէմ ա անում էտ հիւանդի պնչին, հիւանդը ֆոտ ա քաշում ու ծիծաղում։ Մնել տեհաւ, որ էտ հիւանդի բերնիցը մի լսի պէս բան հանեց, դրուց վոսկէ բոթնոցի մէջ ու գնաց։

Տեհաւ որ հիւանդից էլ ձէն չի դուս գալի, ասեց. Մեռաւ։

Գնաց գիւղմէն, ձէն ու�ուց աղեքանցը, աղէքը դուս էկան. Էր՝, ասեցին, ինչ կա, աղա։

— Էկէք, ասեց, ձեր հէրը մնաւ։

— Վա՛յ, ասեց, քու ճամփիդ դուրբան, անջաղ մեր հէրը մնաւ, էս օխտը տարի ա, հիւանդ էր։

Դրանք սկսեցին հացի թագարէք քաշել, որ յառաւօտն յիրանց հօրը թաղենք։

Կարապետ-բէկը տեսաւ, որ լիսը բացվեց, ձին քաշեց գոմիցը, որ էթա, աղէքն ասեցին. Մ՚յ մարթ, յո՞ւր ես էթում, կաց, մեր հօրը թաղենք։

Կարապետ-բէկն ասեց. Ես շատ գործ ունեմ, կարալ չեմ մնալ։ Հանեց մի բուռը վասկի ուստաց հիւանդի տղին, ասեց. Ատուած փոքին լուսաւորի, ու թողուց գնաց։

Գնաց, ճամփին էլի էն հալիվորը պատահեց, առաւ թարքն ու քշեց գնաց, որ էգ օրը հասնէր սուլթան Մուրադի քաղաքը։ Մօտեցաւ քաղաքին, հալիվորն ասեց. Ինձ վի դիր ձիուցը։ Կարապետ-բէկը վի դրուց։ Հալիվորն ասեց. Ինձ ճանանչում ես, ես քու քաւորն եմ, քու քաւորը սուլթան Մուրադը իրեք օր ժամանակ ունի, մահանալ պտի, ասեց ու անյայտ էլաւ։

Բանեղ Կարապետ-բէկի միտքը բացվեց, որ դա Տէրն յինքն էր։ Բանան գնաց սուլթան Մուրադի տունը, շատ յիրար սիրեցին, յիրիկունը հաց բերին, Կարապետ-բէկը հաց չի կերաւ, սուլթան Մուրադն ասեց. Ստանտէր, խի՞ չես հաց ուտում։

Ասեց. Ի՞նչ ուտեմ, որ սիրտս տխուր ա։

— Ընչի՞ համար ա տխուր։

— Թող, ասեց, իրեք օր ժամանակ ունես, պտի մահանաս։

Սուլթան Մուրադն ասեց. Դրա համար տխրիլ մի, մենք մօրից ծնվել ենք մեռնելու համար։

Կանչեց յիրա նազիր վեզիրին, ասեց. Իմ խազինի դռները բաց արէք, իմգալ որ ինձ խազինումը փող կա՝ բիրադի կը տանէք էրկու ձեռք շոր կը կտրէք, մինն իմ սանամօրս, մինն էլ սանահօրս։ Համա իրեք օրը որ թամամեց, սուլթան Մուրադը մեռաւ։ Բերին Կարապետ-բէկին ճամփա բցեցին, յիրա խալաթովը։ Էկաւ յիրանց տունը, հարսանիքն սկսեցին, օխտն օր, օխտը քշեր հարսնիք արին, ըստոց փսակեցին։ Գնաց յիրա կնկա մօտ, ասեց, որ ինչ աղքատ մարթ որ ըստի կըգա, շորերդ էլ որ ուզի, տուր, խնայիլ մի։ Հարսանիքի լաւ ժամանակը Կարապետ-բէկը կանգնած էր թաքաւոր, տեսաւ մի աղքատ մարթ հարսնորների միջովը գալիս ա դրրա յիրան։ Հա՛, ասեց, աղքատ, ինչ ես ուզում։

Ասեց. Թաքաւորը սաղ ըլնի, տկլոր եմ, շոր չունեմ, էտ հաքիա շորերը տուր ինձ։ Թաւորի ուված շորերը տվուց աղքատին։ Աղքատը թողուց գնաց։ Էտ աղքատը դառաւ մի կնիկ, գնաց կնանոնց մէջը, կնանիքն ասեցին. Ա՜յ աղքատ, յո՞ւր ես էթում, ըտի նստի, քեզ վայ բերինք։

Աղքատն ասեց. Ես վայ չեմ ուզում, պտի էթամ թաքուհու կուշտը։

Գնաց թաքուհու կուշտը, ասեց. Դու տենում ես, որ ես տկլոր եմ, էտ հաքիդ շորերը տուր ինձ։

Շորերը հանեց, տվուց էտ աղքատ կնկանը։ Մնէլ տեհան, որ կնիկ կա ոչ։

Օխտն օրը որ թամամեց, թաքաւորը գնաց յիրա կնկա կուշտը, տեհաւ որ մի եպիսկոպոս բարցի վրա նստած ա, ասեց. Ֆոքիդ տուր, Կարապետ-բէկ։

Ասեց. Էթամ մօրս տենեմ, հօրս տենեմ ու դամ, նոր առ։

Գնաց հօրն ու մօրն ասեց, թէ վարդապետն էկել ա ֆոքիս առնելու՝ ի՞նչ էք ասում։

Հէրն ասեց. Ես քու տեղակ ֆոքի կըտամ, մէրն ասեց, թէ հէրդ տալ չի՝ ես կըտամ։

Ասեց. Դէհ, հայդէ, համեցէք։

Հօրը կանչեց եպիսկոպոսի կուշտը, Կարապետ-բէկն ասեց. Ֆարիզի՞ ա իմ հէրս տա յիրա ֆոքին իմի տեղը։

Ասեց. Մին ա, մի ֆոքի տանիլ պըտեմ։

— Դէհ, ասեց, սանահէր, թէք ինք (պատկիր)։

Սանահէրը թէք ընկաւ, ըսկսեց ֆոքին առնի։ Ետո ջանը ցաւեց, վի կացաւ փախաւ, ասեց. Ես չեմ կարալ իմ տղի տեղը ֆոքի տալ։

Ասեց. Հայր սուրբ, կաց, համփերա, էթամ մօրս կանչեմ։

Մէրն էկաւ, ասեց. Սանամէր, թէք ինք։

Սանամէրը թէք ընկաւ, ըսկսեց որ ֆոքին առնի, մօր ջանը ցաւեց, ասեց. Ես կարալ չեմ իմ որթու տեղակ ֆոքի տալ։ Մէրն էլ թողուց փախաւ։ Համա թաքաւորի ախչիկը փարդի տակից տենում էր էտ բանը, ասեց. Ես մահանամ ֆլաս չունի, համա էս տղէն ախսոս ա, երկիրը կը խաւարի։ Հարսն էկաւ վարդապետի կուշտը կանչեց. Հայր սուրբ, ասեց, որ ես մեռնեմ ֆլաս չունի, համա որ դա մեռնի, երկիրը կը խաւարի։

— Դէհ, ասեց, դու սրա տեղակ ֆոքի կըտաս։

Ասեց. Կը տամ ուրախութիւնով։

— Դէհ, ասեց, թէք ինկ։

Թէք ընկաւ, ֆոքին թոփ արուց, բերուց լիվվի տակն.

ասեց. Տէր, ես ուղղութունով ֆոքի եմ տալիս էս տղի տեղակ, եռո վարթապետը խնահեց, յիրանց տված ողորմութունի ու յիրանց բարեպաշտութունի համար, կեանք տվուց էտ հարսին։ Վեր կաց, ասեց, տեղիցդ կաննի։

Հարսը վեր կացաւ տեղիցը, կաննեց. գլուխ տվուց, մնաց կաննած։ Ասեց. Կարապետ-ըէկ, ես քեզ խնահեցի էս հարսին, գնացէք այսուհետև ապրեցէք, իրեք հարիր տարի ումբրը տվի ձեզ։

Դրանից եռո գնաց էն թաքաւորի ֆոքին աւաւ, որ յիրա ախչկան կոտորել էր։

Կարապետ-ըէկը գնաց՝ նրա տեղը նստեց թաքաւոր։

Նրանք հասան յիրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

Երկնքից իրեք խնձոր վեր էկաւ, մինն ասողին, էրկուսը լսողներին։

ԱՂՎԷՍՆ ՈՒ ԳԷԼԸ,

(Աշտարակ*)

Ժամանակով աղվէսը քուրք կարող էր։ Օրերից մի օրը գիլանն ասեցին. Մենք ըղդալ ոչխար ենք ուտում, փոստը դէն ենք քցում, լաւն էնա, որ փոստը տանենք տանք ուստա Աղվէսին, մեր համար քուրք կարի։ Մի երկու փոստ վեկալան, էկան աղվէսի կուշտը, ասեցին. Բարաչողում, ուստա աղվէս։

— Աղվէսն ասեց. Ասսու բարին, զէլ ախպէրտինք։

— Ուստա աղվէս, ասեցին, մենք օրական մի քանի ոչխար ենք ուտում, փոստանիրը բերինք, մեզ համար քուրք կարես, որ ձմեռը մրսենք ոչ։

Աղվէսն ասեց. Փեշակս ի՞նչ ա, բերէք կարեմ։

Գիլանը գնացին, ոչխար քթան, կերան, փոստը բերին, տվին ուստա Աղվէսին։

Ուստա Աղվէսը խոփեց՝ դրանց, ընչար հարիր մորթի եռաւ, քուրքը կարեց ոչ։

Աղվէսը տեսաւ, որ յիրա ձմեռվա ուտելու խոռակը շատ ա, օրական մի երկու մորթի կերաւ, ճուտեր հանեց, ճուտերն էլ էտ մորթիկը կերան, տըղեցին։

Գիլանն էկան ասեցին. Ուստա Աղվէս, մեր քուրքը պրծել չէռ։

Մի օր ասեց, թեւերն ա մնում, մի օր ասեց, փէշերն ա մնում, մի օր էլ ասեց թիկունքն ա մնում, խափանվելով ձմեռն յանց-կացրուց։ Էկաւ գարունքը, գիլանն Աղվէսին բռնեցին, ասեցին. Ուստա Աղվէս, մեր քուրքը ի՞նչ չես տալի։

Ասեց. Քուրքը հարիր ընիս միչին ա, բաց թողէք, էթամ բերեմ։

Գէլերը բաց թողին, Աղվէսը փախաւ մտաւ յիրա բունը, էլ դուրս չեկաւ գիլանոնց ահից։

---

*) Պատմեց 1912 թ. օգոստ. 22-ին Աշտարակ գիւղում նոյն գիւղացի Աւետիս Գրիգորեան 66 տարեկան անգրագէտ ծերունին։

Աղվէսն յիրա բնըմը ընդալ մնաց, որ յիրա ճուտերին էլ կերաւ։ Վերջը, որ շատ ծարաւացաւ, ասեց. Զանըմ, ինչ կըլի՝ թող ըլի, ես պըտի դուս գամ, էթամ ջուր խմեմ։

Աղվէսը դուս էկաւ, մտիկ արաւ, տեսաւ որ ոչ դէլ կա, ոչ բան, գիլանը մի գեօղրա (դդում) կապել են ծառիցը, քամին տանըմ ա բերըմ, ասի էս քարափին, էն քարափին, ձէն հասնըմ, Աղվէսը հէնց յիմանըմ ա, թէ գիլանոնց աստուծերի շըղշըղկոցն ա։

Աղվէսն ասեց. Վայ, ափսոս իմ ճուտեր, գիլանն ինձ խաբեցին, ըսենց բանով։ Դէ նավաշ, ասեց, տես ես ինչ կանեմ։

Գնաց գեօղրէն ես արաւ ծառիցը, կապեց յիրա պոչից, գնաց ջրի մօտ, Աղվէսն յինքը բանցրըմն էր, ջուրը փոսըմը։ Գեօղրէն թող էլաւ. էս բանցը տեղիցն ընկաւ ջրի մէջ, ջրով լցվեց, Աղվէսին քաշեց, կոխեց ջրի մէջ։

Աղվէսն յաշկերը լպստացրաւ, տեսաւ որ գիլանը քարափի վրին կանգնած են, ասեց. Աման, գէլ ախպէր, Ասսու խաթեր, գեօղրէն ինձ խեղդըմ ա, էկէք ինձ ազատեցէք։ Էթանք ձեր քըրքերը տամ ձեզ։

Գիլանն ասեցին. Սուտ ասան Աղվէս, մենք էլ քուրքը չենք ուզըմ ըլնի, դու ըսի հեղափի, մենք էլ կէթանք մեր բանին։



ՓԷՏԷ ԶԻՆ.

(Աշտարակ *)

Կելի չելի մի թաքաւոր, էտ թաքաւորին մի սիրուն աղջիկ կունենա. նազելի, վազելի աղէն կլդան դրան ուզելու, թաքաւորը կասի. Աղջի, նազելի աղէն էլ, վազելի աղէն էլ էկել են քեզ ուզելու, որին ես ասնում։

Ասում ա. Թաքաւոր, էրկուսին էլ կանչա դա, որին հաւանում, նրան կասնում։

Թաքաւորը կանչում ա, էրկու աղէն էլ գալիս են նեքսև։ Աղջիկը աղէքանցը հարցընում ա. Ի՞նչ փէշակ ունէք։

Տղէքն ասում են. Մինս էլ ա փէշակ չունենք։

— Գնացէք, ասում ա, յամմէքդ մի փէշակի աշկերտ էլէք, էկէք, որիդ փէշակին հաւանում, նրան կասնում։

Տղէքը վեր են կենում, էթում են յուրիշ քաղաք, մինն էթում ա զարգարի աշկերտ, մինն էթում ա խառատի աշկերտ։ Խառատին աշկերտ էթողը ազաչանք ա անում ուստին, թէ ինձ լաւ փէշակ պլատի սարվացընես, որ թաքաւորի աղջիկն ինձ ասնի։ Ես նազելի աղա եմ, փէշակը ինչ եմ անում, սարվում եմ, որ էն աղջիկն ինձ ասնի։ Զարգարին աշկերտ էթողը շինում ա մի վոսկէ ձուկը, լաւ յակներ ա հաքցընում վրին, համա խառատի կուշան էթողը մի փէսէ ձի ա շինում, ընենց որ մարդ ա գալի յիրան յիրան։ Վեր են կենում յիրար հետ գալիս են։ Էն որ զարգարի աշկերտն ա՝ վոսկի ձուկը դնում ա սինու մէջը, մի թամուզ ազլուզ քաշում վրին, տանում ա, դնում թաքաւորի աղջկա յառաջը։ Թաքաւորի աղջիկը թամաշ ա անում, հետ ա գառնում խառատի աշկերտին հարցընում ա. Քու նշանդ որն ա։ Խառատի աշկերտը ասում ա, թէ իմ նշանը նեքսև չի գալ, մուննաթ եմ անում դրանը գաք, թամաշ անէք։ Թաքաւորը, թաքուհին, մնէլ աղջիկը գուս են

---

*) Պատմեց 1913 թ. Յուլիսի 15-ին Աշտարակ գիւղում, նոյն գիւղացի Ներսես Կարապետեան Տէր Մինասեանը։

գալի գեղամը կանցնում են։ Տղէն փէտէ ձին սարքում ա, նի ա ելում, մի էրկու գլուխ էթում ա գալիս։

Ախչիկն ասում ա. Վոսկէ ձուկը յամէն մարթ էլ կարա շինել, փէտէ ձի շինելը հունար ա, ես փէտէ ձի շինողին եմ առնում։

Զարգարը յիրա վոսկէ ձուկը առնում ա էթում, խառատը ճնում ա ընկել, փսակվում ա պրծընում, ձին տալիս ա յիրա միրզամին (անհրաժեշտ) փէշքաշ։ Միրզամը վեր ա ունում ձին, նի ա ելում ման գալու, չարխերը պրտրտում ա՝ գայդեքը իմանում չի, էթում ա գալիս էթում ա դէմ ընում մի ծովի. հաև որ ծովին դէմ ա ընում, ասում ա. Աստված, էլ ուրիշ ճամփա գիտեմ ոչ, ես դէմ կընեմ ծովին կը հեղվեմ, ես յանց կը կենամ, կը պրծնեմ։ Դէմ ա անում ծովին քրշում, մկրատի պէս ծովը կտրում ա՝ յանց ա կենում էն գիշը, էթում ա մի թագաւորանիստ քաղաք։ Էթում ա քաղաքի դրսին մի պառաւի գոնաղ ա ելում. յիրիկունը էթում ա պառավի տունը, ձին քանդում ա, լցնում մի տոպրակի մէջ, գընում գլխի տակն ու քընում։ Յառաւօտը վեր ա կենում, ասում ա. Նանի ջան, իմ տոպրակին գիպչող չելի։

Պառաւն ասում ա. Տղա չունեմ, ախչիկ չունեմ, ես էլ էսա էթումեմ հարևանի տները, ով պրտի ձեռ տա։ Վեր ա կենում տղէն, էթում ա քաղաքը ման ա գալի, գալիս ա տեսնում ա, որ քաղաքի վերի գիշը մի լաւ տներ կա շինած, չորս գիշն էլ հասարը քաշած։ Յիրիկունը գալիս ա տուն, պառաւին ասում ա. Նանի ջան, էս քաղաքը շատ լաւ քաղաք ա, վերի գիշը մի տուն կա շինած, էն տունն ումն ա։

Պառաւն ասում ա. Որթի ջան, էն թագաւորի ախչկա տունն ա. քառասուն ջոխով ապրում ա, յինքը շատ սիրուն ախչիկ ա։

Տղէն ասում ա. Նանի ջան, ես քեզ մի մանէթ էլ փող տամ, քշերը ընչար լիս ճրաքը անցրնես ոչ, ես էթալ պրտում ման գալ, որ քշերը գամ, տունը քթնեմ։

Վեր ա կենում տղէն, ձին նի ա ելում, էթում ա էս տան չորս գիշը ման ա գալի, ճամփա չի քրթնում. գալիս ա մի տեղ, ձիու բուրդուն պրտրտում ա, հասարի գլխովը թռչում ա էն գիշը։ Էթում ա գեղամի տակին կանգնացընում ձին, ձիուցը վեր ա գալի, նարդրմանով նի ա ընում գեղամէն, փանջարովը մտիկ ա անում տեսնում, որ մի շատ սիրուն ախչիկ քնած ա։

Դէնն ա մտիկ տալիս, դէնն ա մտիկ տալիս, տեսնում ա բալանիքը փանջարումը վե դրած։ Վեր ա ունում բալանիքը, բերում ա դուռը բաց անում, տեսնում ա մի շատ սիրուն ախչիկ քնած, մի շամադան ոսկերի տակին ա վառվում, մի շամադան գլխավերին ա վառվում. մի տոլու (բաժակ) շարբաթ էլ գլխավերի-

բևը վեր դրած ա։ Շամադաններըը վեր ա ունում փոխում, շարբաթը վեր ա ունում, ասում ա. Իմ ու քու կենացը՝ խմում, կռանում ա ախչկա երկու թուշն էլ պաչում ա ու ասում ա. Դէ մնաս բարին։ Էթում ա պառաւի տունը։

Յառաւօտը ախչիկը տեղիցը վեր ա կենում, ասում ա շամադանները փոխած, շարբաթը խմած։ Կանչում ա Ջառիէքանցը, ասում ա. Անբոգամեր, ես ձեր հաղանէլիքն եմ, թէ ձեր ծիծաղատեղն եմ, էկել էք իմ շարբաթը խմել, շամադանները էլ փոխել։

Դրանք երթում են ուտում, թէ մենք ոչ քու շարբաթը խմել ենք, ոչ էլ շամադանները փոխել։

Թաքաւորի ախչիկը բարկութունից դուս ա գալի, գեազմը մեն ա գալի, նարդբվանով վեր ա գալի նեբքև, ասում ա որ ձիու ոննատեղեր կա։

— Ա՜յ ջանում, էս ձիու ոննատեղերը ըսանդ թնչ բան ունի։

Ձիու ոննատեղերի խլը բռնում ա, էթում ա հասարի կողքին կանգնում. ասում ա, որ էտ ձին հասարի գլխովը ա թռել էկել։

— Է՛հ, ասում ա, բան չկա, էս էկողը մնել կըգա։

Գալիս ա մի թուղթ ա գրում հօրը, ասում ա որ յիմանուն փութ կուբրը գրկա։ Ախչկերանցին էլ հրամայում ա, ասում ա ըսանդ քանդէք, փոս քցէք։ Քանդում են, փոս են քցում, կուբրը բերում են լցնում էտ փոսի մէջը. էտ օրը շատ թէզ Ջառիէքանցը ասում ա. Դնացէք քնէք։ Էթում են քընում. յինքը շամադանները վառում ա, շարբաթը լցնում՝ գնում ա գլխավիրին, զատատ քուն ա տալի։

Էտ տղէն էտ օրը շատ թէզ ա վի կենում, ձին դուս ա քաշում, ասում ա. Նանի ջան, ճրաքը անցընես ոչ, էս քշիր շատ թէզ կըգամ։ Վեր ա կենում, էթում ա, բագանի գլխովը թռցընում ա էն դինը, քշում ա ըլէզ էն գեազմի տակին կանգնացընում, ձիուցը վեր ա գալի, նարդիվանով նի ա ըլում վերև, էլ ետ էթում ա տունում բանիքը փանջարումը վի դրած։ Բանիքը բերում ա, դուռը բաց անում, շամադանները փոխում ա, շարբաթը վեր ա ունում, ասում ա՝ իմ ու քու կենացը, խըմում. կռանում ա, որ ախչկա թուշը պաչի, ախչիկը տղի բիլակը դայիմ բըռնում ա։

Ասում ա. Ի՞նչ մարթ ես, օցն յիր պորտովը, դուշն յիր թեւովը ըսանդարենք էկել չի, դու ըսանդ թնչ բան ունես։

Ասում ա. Կուբրս բաց թող, էթամ դռան տակին կանգնեմ, քեզ տանեմ։

Ասում ա. Գնա կանգնի, ասա։ Կուբը բաց ա թողում, տղէն փախչում նեբնում ձին, դռում, պըտըրում ա, տենում ա ձին էթում չի։

— Ա՜յ տղա, ասում ա, դէ վեր արի, յարի։

Տղէն յիրա գլխի էկածը ըսեղ ասում ա։

Ախչիկն ասում ա. Ա՜յ տղա, որ ես քեզ առնեմ, կարաս էս երկրիցը տանիլ։

Ասում ա. Որ իմ ձիու ոտները թամբդացընիլ տաս՝ քեզ էս երկրիցը կը տանեմ։

— Շատ լաւ, ասում ա ախչիկը, յառաւօտը ես ձիու ոտները թամբդացնիլ տամ։

Դալիս են ախչիկն ու տղէն, շորերը հանում են, յիրար ձիտ են անում (գրկախառնիլ) ու քընում։

Բարի լիսը որ բացվում ա, շատ թէղ վեր են կենում, տղին տանում ա թարուն տեղ պահում ա, մի թուղթ ա գրում հօրը՝ ասում ջան, մի եսուն փութ ձէթ գրկա գա։

Ձէթը գալիս ա, քառասուն ջանիէքանցը կանչում ա, քսանը մի գիշն ա կանում, քսանն էլ մի գիշն ա կանում։ Ընենց, ասում ա, կը թամբդացնէք էս ձիու ոտները, որ մի մազի դատ գատ չմնա։

Ախչկէրքը թամբդացնում են ձիու ոտները, ընչտը որ գալիս ա յիրիկուր մինում ա, ասում ա. Գնացէք ձեր տեղները քնէք։ Ջանիէրը քընում են, տղին պատած տեղիցը հանում ա, յիրա շորերից որը ծանդը ա վեր ածում, որը թէթև ա՝ վեր ուռնում։ Տղէն նի ա ընում ձին, ախչկանը քաշում ա թարքը, գալիս ա պառաւի դուռը, պառաւին ասում ա. Նանի ջան, դուռ յարի։ Պառաւը դուռ ա գալի։ Ասում ա. Դոբրա բանա։ Էրկու բուռը վոսկի ա լցնում գոբը, ասում ա. Դէ մնաս բարին, նանի ջան։

Պառաւն ասում ա. Էթաք բարին, ձեզ բարի ճամփա ըլի, բարով մուրազներիդ հասնէք։

Ջիու գլուխը նա ա գարցընում, իշ տեղով էկել ա՝ էն տեղովն էլ քշում ա, էթում ա գէմ ընում ծովին։

— Ա՜յ տղա, ասում ա ախչիկը, բա էս ծովը մենց պըտանք յանց կենանք։

— Ըսկի դու վախենալ մի, Աստված կաչողա, մենք յանց կը կենանք։

Քցում ա ծովի մէջը, ձին մկրատի պէս կտրում ա՝ յանց ա կենում էն գիշը։ Որը ծովի քամին, որը սարի քամին, ախչիկը շատ փիս մրում ա։ Հասնում են մէշի մէջը, ախչիկն ասում ա. Ես մրում եմ։

Ասում ա. Որ ընենց ա՝ դու ըսեղ ծառի տակին նստա, հրէս սարի գլխին կրակ ա էրվում, ես էթամ, մի կրակ բերեմ, կրակ անեմ, տաքանանք, վի կը կենանք կենթանք։

Ախչիկն ըսեղ նըստում ա, տղէն թուշ ա անում գըրակ բակն

ու քշում ձին։ Էթում ա կրակը վեր ա ունում, էտ ա դառնում որ դա, կրակիցը մի կտոր ընկնում ա ձիու չարխերի մեջը, ձին էրվում ա տեղն ու տեղը դառնում կրակ։ Տղեն մնում ա չոլի մեջ տեղ։ Աստված ջան, ասում ա, էս ինչ փորցանք էկաւ իմ գլուխը, ֆեն ախչիկն ընտեղ մնաց, ես էլ ըստեղ մնացի։

Տղեն ըտեղ ընկնում ա չոլեչոլ, ախչիկն ըտեղ ա ընկնում չոլեչոլ։

Ախչիկն յառաւօտը վեր ա կենում, մի բարակ ճամփա բռնում ա՝ դուս ա գալի մի ղբքի գլուխ։ Տեսնում ա, մի հալիվոր մարթ նախիրն արածացնում ա ըտեղ։

— Բարաչոդում, ասում ա, ախու ջան։

— Աստու բարին, ախչի ջան։ Ի՞նչ ախչիկ ես։

— Ախու ջան, ես էլ չը գիտեմ ինչ ախչիկ եմ, անտէր անտիրական ախչիկ եմ։

Ասում ա. Ախչիկ ջան, ես ոնչ ազգ ունեմ, ոնչ ախչիկ, յարի քեզ շինեմ ինձ ախչիկ։

— Ես, ասում ա, քեզ կըլեմ ախչիկ, նախիրն ես կը պահեմ, դու դնա տանիցը մի ձեռք հին ազի շորեր բեր, մըն էլ մի զառին բեր։

Հալիվորը վեր ա կենում էթում տուն, մի ձեռք հին շոր ա բերում, մի զառին ա բերում, բերում ա տալիս ախչըկանը։ Ախչիկն էթում ա մի խալվաթ տեղ, շորերը հաքիցը հանում ա, էտ շորերը հաքնում՝ էտ զառին էլ դնում ա գլուխը, մազերը թոփ անում տակը, արևի տակը չորացընում ա, դառնում ա քաչալ, ընչար յիրիկուն գալիս ա էտ հալիվորի հետ պըտրտվում ա, յիրիկունը նախիրը քըշում են բերում տուն, ով որ հարցընում ա. Բիձա, էտ քաչալը քու ի՞նչն ա, ասում ա. Բվորս ազին ա, քիրս մեռել ա, էկել ա, որ իմ կշտին ապրի։

Յիրիկունը տանում ա տուն, կնկանն ասում ա. Ա՜յ կնիկ, մեզ էրեխա չունեինք, Աստված մեզ էրեխա տվուց. բերում ա կնկա շապկի եախովը դուս ա քաշում, ընըմա յիրան էրեխա։

Յառաւօտը քշերով էտ քաչալը վեր ա կենում տեղիցը, հօրը վեր ա կացնում, ասում ա էթանք նախիրը արածացընենք։ Հէրն ասում ա. Որթի ջան, դու գալ մի, ես կը տանեմ մենակ կ'արածացընեմ, կը բերեմ։

Մի իրեք օր, չորս օր էտ քաչալը կամաց կամաց դուս ա գալի, քաղաքի մեջ ման ա գալի, մի օր էլ դուս ա գալի էթում քուչեն՝ քաղաքի թաքաւորը մեռած ա ընում, բերում են գովլաթ ղուշի քըցում, ում գըլխին վե դա, նրան դնեն թաքաւոր։

Քաչալը տեսնում ա, որ մի տեղ մարթիկը թոփ են էլել, յինքն

Էլ էթում ու կողքերին կանգնում ա։ Դոլմաթ դուշին բաց են թողում, գալիս ա դոլմաթ դուշին դրա գլխին վեր ա գալիս։ Չորս դընչիցը թոփ են ընում, չորս դընչիցը գլխին տալիս են՝ Բաչալ, դու ըսանց ինչ գործ ունես, ում տղեն ես։

Բաչալն ասում ա. Ես քաղաքի նախարչու տղեն եմ։

Բաչալին ձեռքով բերում են կոխում նախարչու առանը, ասում.

— Որ բասիան դուս ես էկել՝ քեզ կը սրպանենք։

Էթում են դոլմաթ դուշին նորիցը բաց են թողում։ Գալիս ա երթկովը ճանում, քաչալի գլխին վեր գալի։ Քաղաքի մարթիկը թոփ են ընում, ասում են, թէ Աստված սրան թաքաւոր ա կամեցել, պրտի դնենք թաքաւոր։ Բերում են դընում թաքաւոր։

Մի ամիս, երկու ամիս որ թաքաւոր ա նըստում, տեսնում են, որ բարեխիղճ թաքաւոր ա, գալիս են հավաքվում, ասում են.

— Մեզ մի ճամփա ունենք, ջուր չկա, բե կէսը քաղաքի ծախսովը, կէսն էլ թաքաւորի ծախսովը մի յախրուբ հանա, էկող էթող ջուր խմի, քեզ կիանք արև խնդրվի։

— Ընչի՞ հրամար, ասում ա, ես թաքաւոր ընեմ, ծախսի կէսը ժողովուրդը տա, ես կը հանեմ յախրուբը, էկող էթող ջուր խմի, կիանք ու արև խնդրվի։

Կանչում ա քանդանչիք, ջուրը հանում ա, յախրբրի վրին մի հատ քար ա անկում, յիրա ախչկա գլըզով պատկերքը քաշում ա, քարիցը կախ ա տալի, երկու մարթ զարաուլ ա դընում, ասում ա. Ով որ կը դա բասեղ ջուր կը խմի, ձեռ կը քաշի, նրան կը բանէք, կը բերէք իմ կուշար։

Մի քանի տարուց հետո՝ էտ ախչկա նշանածը աշխարքը ռաքի տակը տալով գալիս ա բասեղ, էտ յախրբրի ջրիցը խմում, վեր ա կենում որ գնա, յաշկը ընկնում ա պատկերքին. Ախ ա քաշում ու երկու ձեռով գլխին տալի։ Գալիս են զարաուլները դրան բռնում են, ասում են. Ա՛յ տղա, դու մեր թաքաւորին հաւան չը կացար, որ ախ քաշեցիր։

— Էկէք, դուք իմ դարդիցը վազն էկէք, թողէք ես էթամ։

Ասում են. Ինչ բաց թողանք, քե պրտի տանենք թաքաւորի կուշար, թաքաւորը կուզի բաց թողա, կուզի սրպանի։

Վեր են ունում, բերում տալի թաքաւորին։

Թաքաւորը ասում ա զարաուլներին. Դէ դուք գնացէք։ Զարաուլները էթում են. էտ տղին տալիս ա յիրա լալին, ասում ա սրան կը տանես կը դնես մի լաւ օթախի մէջ, ինչ կիրակուր ես ուզում եմ, էն կիրակրրիցն էլ սրան կրտաք, ընչանք շաբաթ օրը վճիռ կրլի։

Շաբաթ օրը կանչեց նաղիր, վազրրին, յիրա սինօթապետ-

ներին, ասեց. Էս տղիցը հարցրէք, գիվանը ովի ձեզ, տեսնենք յախրբրի վրին խո՞ ա ախ քաշել։

Տղէն ասեց. Ախ, ձեր ուրին, ձեր գլխին մեռնեմ, ես յախրբրի համար չեմ ախ քաշել, ինչ եմ անում յախրուրը, համա էն պատկերի տէր ախչկան եմ կորցրել, որ իմ նշանածն էր, նրան եմ ման գալի։

Թաքաւորն ասեց. Ի՞նչ էք ասում, սինօթապետներ։

Սինօթապետներն ասեցին. Է՛, թաքաւոր, խելքից պակաս մարթ ա, բայ թող, էթա յիրա բանին։

Թաքաւորն ասեց. Որ էն ախչկանը տեսնես՝ կը ճանանչես։

Ասեց. Թաքաւոր մենց չեմ ճանանչել, որ տեսնեմ, կը ճանանչեմ։

Թաքաւորն ասեց. Մի սհաթ մնուլ ովէք, էթամ ման գամ, սրա նշանածը քթնեմ, բերեմ։

Թաքաւորը նի մտաւ նեքսև. շորերը հանեց, ախչկութեան շորերը հաքաւ, էկաւ ըտեղ կանգնեց։ Տղէն որ տեսաւ՝ վեր կացաւ կոնները փռեց, ընկաւ ճառվը. ասեց. Հաստատ ըլի թաքաւորը, ես քթա իմ նշանածիս։

Ախչիկն ասեց. Սինօթապետներ, լսէք՝ իմ գլխի էկածը ձեզ ասեմ։ Մենց որ նաղլը էլել էր, գլխիցը ընկնց ասեց. Հըմի, ասեց, ես սրա կնիկն եմ, սա իմ մարթն ա, թէ ուզում էք սա ձեզ թաքաւոր ըլի, ես էլ ձեզ թաքուհի, թէ չէք ուզում, ձեզ հըմար թաքաւոր քթէք, մինք կեթանք մեր երկիրը։

Ժողովուրթը կանգնեցին, որ Դու մեզ թաքուհի, դա էլ մեզ թաքաւոր։ Բերին օխտն օր, ծիտը քշեր հարսանիք արին, լաւ կերան, խմեցին։

Նրանք հասան յիրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։

Երկնքիցը իրեք խնձոր վէ ընկաւ, մինն ասողին, էրկուսն էլ յանկաճ դնողին։

ՈՍԿԻ ՔԱՐՈՒՂ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Աշտարակ*)

Հասչվա ժամանակը մի թաքաւոր կար. շատ զօրաւոր թաքաւոր էր. դրան էրկու տղա ունէր, մի կնիկ։ Մնել արար մէհտար (ձիապան) ունէր։ Դրա յամենան մի բանը էտ մէհտարի ձեռովը էր յանց կենում. աղեքանցիցը աւել էր սիրում, որ յիրան հաւատարիմ էր։ Արանքը քաշեց մի վախտ, թաքաւորի կնիկը մեռաւ։ Թաքաւորը շատ էր տխուր, մի հինգ տարի արանքը բաշեց, կանչեց յիրա արար մէհտարին։

— Մէհտար, ասեց, էրկու ձի հաղրա, էթանք մի քիչ մանգանք, սիրտս բացվի։

Արարը վեր կացաւ, էրկու ձի հաղրեց, յիրանց նստաց, անցան, դուրսը և թուրը կապեցին, գնացին հանդը։ Մանք ին գալի, աւդուշ ին անում։ Գնացին քաղաքիցը դուս մի յախբրբի վրա իրանք տիչիկ անհան՝ նստած ջուր են լցնում։ Աչիկեքը մինը մընի հետ խօսաց։ Մենձ քիրն ասեց. Որ թաքաւորն ինձ առնի՝ ես թաքաւորն հրամար մի խալիչա կը գործեմ, որ զօշունը վրին նստի՝ կէսը գարտակ մնա։

Թաքաւորը յանկաճ էր անում էտ խօսքին։

Միշնեկ քիրը ասեց. Որ թաքաւորն ինձ առնի՝ ես մի չատիր կը գործեմ, զօշունը տակին նստի՝ կէսը գարտակ մնա։

Պուճուր քիրն ասեց. Որ թաքաւորն ինձ առնի՝ ես վօսկէ քաքուլ տղա, վօսկէ քաքուլ տիչիկ կը բերեմ։

Թաքաւորն էտ խօսքերը լսելուն պէս՝ ետ դառաւ, գնաց յիրա տանը վէր էկաւ։ Հրամայեց սինօքը նստի, որ ըսօր ես զանգատ ունեմ։ Թաքաւորի խօսքը անտես չառան, սինօքը

---

*) Պատմեց 1913 թ. Յուլիսի 14-ին Աշտարակցի Դաւիթ Դաւթեանցը, խառնուն եւ նիզգ տարեկան անգրագէտ գիւղացին, որ պարապում է այգեպանութեամբ եւ երկրագործութեամբ։

նատեց։ Թաքաւորը խնթրեց սինօթին, ասեց. Իրաւունք ավէք իմ արարին էթա, քաղաքի դրաղին մի յախրուր կա, իրեք ախչիկ կան ընտի, կանչի դան։ Արարը գնաց, տեհաւ ախչիկէքը դրից են անում, ասեց. Ախչիկէքը, ձեզ թաքաւորը կանչում ա։

Ախչիկէքը ծիծաղացին, ասեցին. Մեր վերջին օրն ա, էս ինչ եանղլիշ (սխալ) խօսք էր, մենք խօսացինք։

Ընկան արարի հետ, էկան։ Էկան թաքաւորի սինօթիմը կանչեցին։

Թաքաւորը սինօթին ասեց. Ես ուզում եմ էս իրեք ախչկան էլ առնեմ։

Ասեցին Ո՞նց կարելի ա, իրեքը ըալքի քիր են։

Հարցրին ախչիկերանցը՝ թէ քիր ենք։

Թաքաւորն ասեց. Անպատճառ պտեմ առնիլ, դրք էլ կառնէ՞ք։

Ախչիկէքն ասեցին. Որ դու առնես՝ մենք էլ կառնենք։

Թաքաւորը դրանց հետ փսակվեց. էս իրեք քվորն էլ տարաւ յիրա տունը։ Յառաջի հետը գնաց մենձ քվոր կուշտը՝ ասեց. Ախչի, դու ի՞նչ ես խօսքը ավել։

Ասեց. Թաքաւոր, թէ քու անվանը լայտղ ա՝ գնա բուրթ բեր՝ խալիչէն դարձեմ։

Ասեց. Սրա տակը տայեաղ ա (բան չի իմանում)։ Միւս քշերը գնաց միշնեկ քվոր կուշտը. տեհաւ, սրա տակն էլ ա տայեաղ։ Վերջի քշերը գնաց պուճուր քվոր կուշտը, ասեց. Յախրբրի վրին են ի՞նչ իք խօսում իրեք քվորով։ Հըմի ձեր ասածը ի՞նչ էլաւ։

Ասեց. Թաքաւոր, բոյախանա ա, հըմի տամ քեզ։

Թաքաւորն ասեց. Բա ո՞նց պըտի ըլի։

Ասեց. Վախտին կըստանաս։ Թաքաւորը պահեց էտ իրեք քվորը յիրան կնիկ մի վախտ։ Թաքաւորի յառաջի կնկա էրկու տղէն՝ Պօղոսը ու Պետրոսը՝ յիրանց մոր պէս ին ընթունում էտ իրեք քվորը։

Էկաւ վախտը թամամեց, Ասուս հրամանովը պուճուր քիրը կանչեց ոտի։ Դրա էրկու քիրը տարարին դրկեցին որ մի տատմէր բերի։ Տատմէրն էկաւ, ասեց. Ի՞նչ էք հրամայում, թաքուհիք։

Ասեցին. Մեր քիրը վոտի վրա ա, պըտի ազատես։

Ասեց. Ասատով կազատեմ։ Էկաւ վախտը թամամեց, էտ պուճուր քիրը ազատվեց, մի վոսկէ քաքուլ տղա բերուց։ Էտ վախտը տարարը դրռսեը դարավուլ էր, որ օչով չլսէր թաքուհու ձէնը. էրկու մենձ քիրը որ տեհան վոսկէ քաքուլ տղէն՝ նախանձեցին յիրանց քվորը, որ յիրանց տակը տայեաղ էր, որ յիրանց

խօսքը կատարվեց ոչ, նրա խօսքը կատարվեց։ Կանչեցին արաբին, ասեցին. Արաբ, մի շան թուլա բեր էս սընհաթը, քեզ հինգ հարիր մանէթ փող կըտանք։

Արաբն երկուղիցը գնաց մի որձ շան թուլա բերուց, տվուց դրանց։ Տատմէրը շորի միջին էրեխէն փաթըթեց, տվուց արաբին, տար քցա ծովը։

Արաբը տարաւ դրուց ձիու մտուրքը, եւ դառաւ, ըլէտ էկաւ յիրա տեղը։

Յառաւօտն յաշկալիսէք պըտի էթան թաքաւորին, թէ յաշկդ լիս, քեզ տղա ա էլել։

Արաբը որ գնաց ընելու, էլ ընեց ոչ, էտ էրեխէն վե կալաւ, նի՛լաւ ձին, տարաւ Ծաղկեվանք սար կա, ըտի մի դաղա (այր) կա, էրեխու բարուրը դրուց էտ դաղէն, դուռը շարեց, եւ դառաւ էկաւ ընեց։

Լիսացաւ. ժողովուրթը էկաւ թաքաւորին յաշկալիսէք։ Դրանցից յառաչ էրկու քիրն էկան թաքաւորի կուշտը, նօթերը կիտեցին, ասեցին. Ինչ յաշկալիսէք, քու կնիկը շան թուլա ա բերել։

Թաքաւորն ասեց. Արաբին կանչէք։ Արաբին կանչեցին. ասեց. Արաբ էտ դանջըդին տար քցա ծովը, կորչի։

Արաբը դրան տարաւ դոմը։ Մի էրկու սնաթից եւով թաքաւորը կանչեց, ասեց ինչ արիր։

Ասեց. Տարա, քցեցի ծովը։

Ասեց՝ լաւ արիր։

Էկաւ մութը մթնեց, արաբը գործից պրծաւ, էտ թաքուհուն վե կալաւ, նի հանեց ձին, տարաւ Ծաղկէվանքու սարը, հասաւ էն դաղէն, որ էրեխէն միջին ա, ասեց. Վէր յարի ըստի։

Թաքուհին խնթրեց արաբին. թէ ինձ սըպանես՝ արա՛ փողի տակը, իմ ջանդակս դուրդ (գայլ) ու դուշ չուտի։

Վէր էկաւ, տարաւ էտ դաղէն, ասեց. Դու ինձ քիր, ես քեզ ախպէր, քու քվորտինքըտ են նախանձել քեզ, դու թուլա չես բերել, էս քու վօսկէ քաքուլ տղէն ա, ապրի ըստի, ես քեզ կը պահում ինձ քիր։

Արաբը թաքուհուն թողեց ըտի, յինքն էկաւ էլի յիրա ծառայութունին։ Ցերեկը ծառայում էր թաքաւորին, քշերը օդնում էր թաքուհուն, հաց, շոր կրում էր թաքուհուն։

Պահեց ըտի տասնըչորս տարի։ Տասը տարեկան վախտը թաքուհին խնդրեց արաբին, որ տղի համար մի նետ ու անեզ բերի։ Արաբը բերուց, տվուց տղին, որ աւղուշ անի։ Էտ տղէն յիրա համար աւղուշ էր անում. յինքն էլ, յիրա մէրն էլ մարալի փոստ ին հաքել, յիրա գլուխն էլ ոչխարի դաւին էր պրծացըրել,

որ ճանանչին ոչ։ Միայն շատ յիմաստուն տղա էր. Է, Սողոմանից յիմաստուն էր։

Դա թող ըսի տղի ընչար տասնըհինգ տարեկան դառնալը։ Մենք խարարը տանք թաքաւորիցը։

Թաքաւորը կանչեց արաբին. Արաբ, յարի ըստի։

Արաբն էկաւ, դլուխ տվուց, կանգնեց։

Ասեց. Գնա էրկու ձի տարքա, էթանք մի քիչ ման գալու, սիրտս շատ նեղանըմ ա։

Արաբը էտ հրամանումը պատրաստեց էրկու ձի, ըստուց ընտի կանգնեց։ Թաքաւորը դուս էկաւ՝ նստեցին ձիանը, յիրանց նեռը, անեղը վե կալան, գնացին ման գալու։

— Արաբ, բա դվորն էթանք։

Արաբն ասեց. Կամքը քունն ա, թաքաւոր, դվորը հրամայես՝ դէնը կէթանք։

Ասեց. Արաբ, գնա, դվորը էթաս՝ կը դամ։

Արաբը ձին յառաջ քցեց դըբա Ծաղկէվանքու տարը, որտի որ ապրըմ են թաքուէին ու Վասկէ քաքուլ տղէն։

Էտ տղէն էտ օրը մի մարալ էր տեսել, ուզըմ էր վե քցի՝ տեսաւ էն դըհից էրկու ձիաւոր գալիս են, տատի կացաւ տղէն, ասեց. Թող գան էթան, նոր վե քցեմ։

Էտ աւը թաքաւորն էլ տեսաւ, տվուց վե քցեց։ Աւը տղին մօտ էր, տղէն վե կալաւ ու փախաւ։ Թաքաւորը բարկացաւ, ասեց. Արաբ, էտ տղին վե քցա։

Արաբը նեռը ըսնձր քցեց, որ չառնի տղին։ Տղէն փախաւ, էկաւ մտաւ դաղէն, մօր կուշը։ Մէրն ասեց. Խի՞ ես փախըմ, ռյ տղա։

Տղէն ասեց. Հրէս էրկու գոզի են գալի, նրանք աւը վե քըցեցին՝ ես փախցըրի։

— Բա կարալ չես դրանց մի ջուղալ տալ, անաքին յիմաստութուն ունես։

Թաքուէին դուս էկաւ՝ դաղի դռնիցը թամաշ արուց, տեսաւ մինը թաքաւորն ա, մինը արաբն ա։ Էկան, դաղի դռանը կանգնեցին։

Թաքաւորն ասեց. Ա՜յ տղա, իմ աւը խի՞ բերիր։

— Ասեց. Թաքաւորը հաստատ մնա, աւը տվողինը չի, ընտրվինն ա։

Թաքաւորն էտ էրէխուն տեսնելուն պէս, ոնց որ մի խնձոր ընկնի սիրտը. արինը դրա վրին բըռաց։

Ասեց. Ա՜յ տղա, դու ինչ գիտես ես թաքաւորն եմ։

Ասեց. Համեցէք դռնաղ, կասեմ՝ թէ ով ես։

Թաքաւորը վեր էկաւ, մտաւ զաղէն, տեսաւ էտ զաղի գրութունը, զարմացաւ, խիզար ապրանք կար ըսեն, յինքն էր առել, Ամօթու խօսաց ոչ։

Էտ տղէն գրան պատվեց յամէն մի կիրակիով, մարալի մտով։

Էտ տղէն ըսի մի զուշ էլ ունէր, նախշուն զուշ, տղէն աւ էր արել, բերել էր մօրը զրբցահնկեր։

Հացից հետ Թաքաւորն ասեց. Արաբ, վե կաց, էթանք։

Արաբը վե կացաւ, ձիանը հաղբրեց, Թաքաւորը էն աւը որ վէր էր քցել, Վօսկէ քաքուլ տղէն բերուց Թաքաւորին, ասեց.

— Համեցէք, քու աւը։

Արաբը վե կալաւ, կապեց ձիու Թարքին։ Դուս էկաւ զաղի դուռը, հրամի նի չի ըլնում ձին։

Արաբն ասեց. Թաքաւոր, նի իլ, Է, էթանք։

Ասեց. Արաբ, որ մենք էթանք, բա էս էրէխէն ըստի ինչ անենք։

Արաբն ասեց. Թաքաւոր, ես գիտեմ, պըտի իմ գլուխը կտրես, հաւաշ մի զանգատ ունեմ, ասեմ, թէ կտրելու ես՝ ըստի կտրա։

Թաքաւորն ասեց. Արաբ, դու իմ էրկու տղին պըտի սըպանած ըլես՝ որ ես քեզ չոռ ասեմ։

Ասեց. Թաքաւորն ապրած կենա, քու որբևէրի վախտը, որ գնացինք այն ինչ յախբրի վրին էն իրեք ախչիկը ինչ ին խօսում, քեզ ինչ խօսք ին տալի։

Ինց որ էլածն էր՝ Թաքաւորն ասեց արաբին։

Ասեց. Թաքաւորն ապրած կենա, էն իրեք քիրը որ առար՝ պուճուրը վօսկէ քաքուլ տղա բերուց, էրկու քիրը նախանձեցին, հինգ հարիր մանէթ փող տվին ինձ, հինգ հարիր տատմօրը, մի շան թուլա բերին քցեցին. Թաքուհու տակը, Վօսկէ քաքուլ տղէն տվին ինձ, որ տանեմ քցեմ ծովը, վե կալա բերի ըստի։ Յառաւօտը դու էլ որ հրամայեցիր թէ էտ զանջըղին տար քցա ծովը, Թաքուհուն էլ բերի ըստի. հաւատում չես՝ տես, էս քու վօսկէ քաքուլ տղէն, էս էլ քու Թաքուհին։ Արաբն ասեց ու տղի վօսկէ քաքուլը բաց արուց։

Թաքաւորը որ տեսաւ՝ զարմացաւ, ներողութուն խնթրեց Թաքուհուց, թէ ես արի, դու չանես։

Ենենա ասեց արաբին. Դու շատ լաւութուն ես արել ինձ, համա էս մինը սաղ յանցկացրուց, ես չպըտի կարենամ տակիցը դուս գալ։ Դէ գնա, քաղաքիցը ձի բե, քոմմէքս էլ էթանք։

Արաբը գնաց տուն, յիմաց տվուց Թաքաւորի էրկու տղին,

ասեց։ Յաշկընկրդ լիս ըլի, ձեր մէրն էլ ա քթնվել, ձեր Վասկէ քաքուլ ախպէրն էլ։ Երկու քիրը որ լսեցին, բերանքսբվեր վեր ընկան. մտածում ին, թէ յիրենց գլուխը ինչ պըտի դա։

Թաքաւորը, թաքուհին, Վասկէ քաքուլ տղէն, յիրա դուշը էկան տուն։ Յաշկալիս էկողներն էկան, գնացին, էկան, գնացին, մինը գալիս էր՝ հազարն էթըմ։

Սրանքը քաշեց մի ութ օր. Երկու քիրը մինը մընի հետ խօսացին, ասեցին. Էթանք մեր քվորը տեսնենք, մենք արել ենք, յինքը անել չի։

Սև էրես վե կացան էկան. մտան թաքաւորի օթախը, դուշդ տեսնելուն պէս՝ շուշէն ջարթեց ու փախաւ։ Վասկէ քաքուլ տղէն լաց էլաւ, ասեց. Վայ իմ դուշը կորաւ։ Թաքաւորն ասեց. Լաց մի ըլիլ, դուշդ կը բերեմ։ Տղէն ձէնը կարեց ոչ։ Թաքաւորն ասեր էտ էրկու կնկանը։ Ըզդար ժողովուրթ էկաւ՝ դուշը փախաւ ոչ, դուբ էկաք՝ փախաւ, գնացէք կորէք, էլ ըստի դաք ոչ։

Էտ կնանիքը թողին, գնացին։ Տղէն ձէնը կարեց ոչ։ Պօ-ղոսն ու Պետրոսը էկան կանգնեցին թաքաւորի յառաջը՝ ասեցին. Մենք կէթանք, մեր ախպօր դուշը կը բերենք, թող լաց չըլի։

Ասեց. Դէ գնացէք, բերէք։ Մենձ ախպէրը քառասուն ձիա-ւորով գնաց, որ դուշը բերի։ Գնաց մի յիրիկվա մանկըլըմը վե էկաւ. որ վե էկաւ, կիրակրվեցին, թեք ընկան քնեցին։ Բշերվա մի վախտին մի հաւարի ձէն էկաւ, վե կացան, ասեցին թէ մարթ թալանեցին, վե կացէք, էթանք։

Մի մանկղիլ գնացին, կաքաւի ձէն էկաւ, քառասունը մին ֆոգին դառան քար, մնացին ըտեղ. թաքաւորի տղէն էլ քար էր դառել, համա յաշկի մինը լիս էր, տեսնում էր ինչ ա գալի, էթըմ։

Թող դրանք մնան ըտի, մենք գանք թաքաւորի կուշտը։

Սրանքը քաշեց ութ օր՝ թաքաւորի միշնկ տղէն ասեց. Ախպէրս գնաց չեկաւ, իրաւունք տուր, ես էլ էթամ։

Թաքաւորն իրաւունք տվուց, էտ տղէն քառասուն հընկե-րով գնաց։ Գնաց էն մանդղիլը, որ ախպէրը գնացել էր, ընտի վե էկան, էկան, հաց կերան, քնեցին։ Բշերն ըլէտ մի հաւարի ձէն էկաւ. վե կացան գնացին հաւարի, մի կաքաւի ձէն էկաւ՝ դրանք էլ քարացան։ Էտ ութամասունը էրկու ֆոքին թող մնան ըտի։ Մենք խապարը տանք Վասկէ քաքուլ տղից։

Վասկէ քաքուլ տղէն խնթրեց, թէ իրաւունք տու, ես էլ էթամ, յիրան յայտնի էր թէ ախպէրներինքը քար են դառել։ Թա-քաւորն ասեց. Երկու տղէս գնացին, էկան ոչ, դու էլ էթըմ ես, քա մեր տէրը ով պըտի ըլի, իմ թախտը ում պըտի մնա։

Ասեց. Անկարելի ա, պրանում էթալ։

Ասեց. Որ պրտի էթաս՝ մի հազար ֆռանքի հետդ տար։

— Խմ, ես էթամ եմ կոչ։ Մենակ քու մէհտար արաբին տուր ինձ, բոլ ա։

Արարն էկաւ՝ կշռին կանգնեց. Հրամայա, թաքաւորի տղա, ինչ ես հրամայում։

Ասեց. Մեր հմար մի քիչ բան վեկալ։

— Ինչ վեր ունեմ, բրինձ վեր ունեմ, եղ վեր ունեմ։

— Չէ, մի կէս փութ ճամար վե կալ։

Վե կալան, տանեցին ճնաք բարին, ձիանը նի եկան ու գնացին։

Գնացին, շատ ու քիչն Ասված գիտի, էն տեղը հասան, որ տիպէրտիքը վեր ին էկել. դա էլ վեր էկաւ. արարին հրամայեց, որ մի քաշովի քցի։ Արարը քաշովին քցեց, կերան, խմեցին ու քնեցին։ Գշերվա լաւ վախտին մի հաւարի ձէն էկաւ, դրանք վե կացան, ձիանը նստան ու գնացին միքիչ տեղ. էլի յետ դառաւ, էկաւ տեղը նստեց. թէք ընկան քնեցին։ Համա արարը քնեց ոչ։ Գշերվա մի վախտին տեսաւ մի աղվէս էկել ա քաշովին ուտում ա, ասեց. Թաքաւորի տղա, մի աղվէս էկել ա քաշովին ուտում ա՝ վե քցեմ։

Ասեց. Չէ, տված ա, թող ուտի։

Արանքը քաշեց մի էրկու սրհաթ, արարն ասեց. Թաքաւորի որդի, աղվէսը բինիշիդ (վերարկու) վրա նստած ա, տեմ վե քցեմ։

Ասում ա. Չէ, տալ մի, թող նստի, մեղք ա, տեղը չոր ա ըլել, էկել ա՝ կակղ տեղ ա՝ քթել, թող նստի։

Մի էրկու սրհաթ էլ համբերեց՝ լիսացաւ. տեսաւ աղվէսը վեր ա կացել, էթում ա։ Արարն ասեց. Թաքաւորի տղա, աղվէսը գնաց է, տամ վե քցեմ։

Տղէն ասեց. Չէ, ինչ կամեցաւ ինձ, Ասված կամենա յիրեն, թող էթա։

Աղվէսը եփոր լրսեց էս խօսքը, էս դառաւ, ասեց. Վօսկէ բաքուլ տղա, ինչ ա նպատակդ, ասա, կատարեմ։

Ասեց. Քեզ յայտնի ա, իմ դուշն եմ ուզում, իմ էրկու ախպէրտինքը։

Ասեց. Որ բանենց ա՝ քու ունեցածդ տուր արարին, դու իմ հետ յարի։

Դա ունեցածը տվուց արարին, ընկաւ աղվէսի ետնա՝ գնաց։ Շատ ու քիչը Ասված գիտի, էն թաքաւորի փողը գնաց, որ յիրա դուշը ընտի ա։ Աղվէսն ասեց. Էս գոմբին ա քու դուշդ, նի կը ճնենս, քու դուշը կը բռնես, յուրրշին ձեռ չտաս։

Էս տղէն մտաւ գոմը, տեսաւ հազարաւոր դշիր կան, քոմմա

յիրա դշի նման են. ասեց. Եաւաշիկ էրկուսը բռնեմ։ Հէնց ուղեցաւ բռնի՝ դշերը ձէն տվին, էկան դրան կալան, տարան թաքաւորի կուշտը։

Թաքաւորն ասեց. Բռնում իր՝ քու դուշն իր բըռնել, ընչի՞ հըմար իր ձեռ տալի յուրիշ դշին, որ քեզ բռնեն, բերեն ըստի։

Ասեց. Թաքաւորը հաստատ մեռա, իսանի թամահ էր, ինչ գիտեմ։

— Դէհ որ թամահի ես, Ծաղկէվանքու սարըմը քառասուն հարամի կա, գնա նրանց սև ձին բեր՝ էրկու դուշ փէշքաշ անեմ՝ տար։

Դուս էկաւ դուռը՝ աղվէսն ասեց. Է՛տ ինչ ես արել, ես քեզ բան թամրահ արի, դու խի՞ գնացիր, անտեղի ընկար կրակի մէջը։

Ասեց. Իսանի թամահ էր, ասեցի էրկուսը բերիմ՝ չելաւ։

Ասեց. Յարի։

Վէ կացան, գնացին էն սարը, որ հարամիքն տպրում են։

Ասեց. Կէթաս՝ ձիու դեամը կըտաս գլուխն ու նի կըլես. թամքին ձեռ չտաս։

Էտ ասեց աղվէսը դրան. Վօսկէ քարուլ աղէն գնաց նեքսի, ձիուն գեամեց, տեհաւ որ թամքը էրկու ձի աժի, ասեց. Ձին տանողը որ թամքը տանի ոչ՝ ինչ աժի։

Ուղեցաւ թամքը վեր ունի, թամքը ձէն ածեց, էկան բըռնեցին, տարան հարամբաշու կուշտը։

Ասեց. Ձին տանում իր՝ տանէիր, թամքին խի՞ իր ձեռը տալի, որ քեզ բռնէին բերէին ըստի։

Ասեց. Ձին տանողը որ թամքը չտանէր՝ քանի կապէկ աժէր։

Ասեց. Որ ըտենց զոչաղ ես, Ալագեազ սարըմը մի ախչիկ կա, գնա բեր, ձին թամքեմ, տամ քեզ՝ տար։

Տղէն դուս էկաւ՝ աղվէսն ասեց. Խի՞ ես ըտենց բաներ անում։

Ասեց. Իսանի թամահ ա, ինչ անեմ, ընկնում ենք թալաքը։

Ասեց. Դէ յարի։

Գնացին էն տեղը, որ տասը վերստ տեղ փուշ ու տատաշ (տատասկ) ա։

Ասեց. Ոնեերդ հանա. Թաքաւորի աղէն բորկացաւ։ Ասեց. Էս փուշը կընկնես՝ կէթաս, կասես. Էս ինչ կանանչ յափ ա. եվ որ փուշը յանց կը կենաս՝ կը տենես, որ մի յախբուր արին ու վահրըն ա. դրանից մի բուսը կը խմես, կասես. Էս ինչ անմահական ջուր ա. նա էլ քեզ ճամփա կըտա կէթաս. կէթաս, կը տեսնես մի ուռի ծառ կա, մի էրկու հրոպա տակին կը հովանաս, կասես. Շէն կենա էտ ծառը, նա էլ քեզ ճամփա կը տա՝

կեթաս։ Կեթաս, կը տեսնես դրա տների յառաջին մի եղը կա ու մի ասլան, եղի յառաջին դմակ կա, ասլանի յառաջին խոտ, դմակը կըդնես ասլանին, խոտը կըդնես եղին, նրանք քեզ ճամփա կտան, կեթաս։ Կեթաս՝ կը տեսնես մի ախչիկ նըստած ա. բարով չտաս, աշխատա նրա յուսը կտրա ու դուս յարի։ Իժդար կը գոռան՝ տարաւ հա, տարաւ, ետ չը թամաշ անես, կը դառնաս քար։

Էտ Վասկի քաքուլ տղէն դրա խօսքերն յանկաջին դինտարուց ու գնաց։

Գնաց փուշ ու տատաշի կուշաը, ասեց. Էս ինչ կանանչ յափա, ու վազեց, փուշ ու տատաշը դառաւ կանանչ յափ, դրան ճամփա տվուց. գնաց, տեսաւ մի յախբուր՝ էտ յախբրրիցն էլ մի բուռը ջուր խմեց, ասեց. Էս ինչ անմահական ջուր ա։ Յախբուրն էլ անմահական ջուր դառաւ՝ ճամփա տվուց. գնաց, տեսաւ մի ուռի ծառ, տակին էրկու հրոպպա նստեց, ասեց. Հաստատ մնաս, հովացա. դա էլ ճամփա տվուց, գնաց։ Գնաց, տեսաւ որ էտ ախչիկա դառն յառաջին մի եղը կա, մի ասլան. եղի յառաջին դմակ կա, ասլանի յառաջին՝ խոտ. դա փոխարկեց, խոտը տվուց եղին, դմակը տվուց ասլանին. դրանք էլ ճամփա տվին։ Մտաւ նեքսև, տեսաւ մի սիրուն ախչիկ։ Ախչիկը տեսնելուն պէս տեղիցը վեր կացաւ, ասեց. Բարով, հազար բարի ես էկել, Վասկէ քաքուլ տղա, ես քեզ ճրաթով ի ման գալի, ցերեկով քթա։

Տղէն չը լսեց ախչկա խօսքը, աշխատեց յուսը կտրեց, ու փախաւ։ Սար ու քար ննռուցը գոռաց. Բռնէք հա, բռնէք։

Ախչիկը եղին ասեց. Բռնա։ Ասեց Բռնել չեմ, թող էթա, օխտը տարի ա ես ըստի եմ, դմակ էր յառաջինս, նա էկաւ, խոտը տվուց, թող էթա, Աստված յիրա հետ։

Ասլանին ասեց. Ասլան, բռնա։

Ասլանն էլ էլի եղի խօսքը խօսաց։

Ուռի ծառին ասեց. Ուռի ծառ՝ բռնա։

Ասեց. Թող էթա, Աստված յիրա հետ, էկաւ էրկու հրոպպա տակիս նստեց, ասեց՝ Հաստատ մնա. հովացա, դու գալիս ես, տակիս նրստում ես, քնում ես՝ ասում ես քոքդ չորանա։

Ասեց. Արին ու վահրը, բռնա դրան։

Ասեց. Ես արին ու վահրը չեմ, ես անմահական ջուր եմ, թող էթա, Աստված դրա հետ։

Ասեց. Փուշ ու տատաշ, բռնա, յուսս դու ես։

Ասեց. Ես փուշ ու տատաշ չեմ. կանանչ յափ եմ, փունջ մանիշակ եմ, էթում ա, էթա, Աստված յիրա հետ։

Տղէն էկաւ աղվէսի կուշաը։

— Հը՛, ասեց, բերի՞ր։

Ասեց. Բերի։

Ասեց. Տուր.

Յուսը տվուց յիրան։ Տղէն յառաջ ընկաւ, էտ թամաշ արուց, տեհաւ աղվէսը դառել ա մի լաւ ախչիկ. էն ախչիկը, որ յուսը բերել ա, նրա համն ա տալի։

Ախչիկն ասեց. Էս էն աղվէսն եմ, տար տուր ինձ հարամբաշուն, ձին նստի գնա, ես կըգամ, քեզ կը հասնեմ։

Տղէն ախչկանը տարաւ հարամբաշուն։ Հարամբաշին տեսնելուն պէս խելքամազ էլաւ, ասեց. Գնացէք, ձին թամբէք, տվէք յիրան։

Գնացին, ձին թամբեցին, տվին էտ տղին՝ գնաց։

Էտ ախչիկը հարամբաշու կշտին նստած էր, հարամբաշին ուզեցաւ սաթաշմիշ բլի (գրկախառնի) դրան. Տե՛ս, ասեց ախչիկը, ինչ թաւուր տղամարթ ես, բա քեզ յուրիշ օղլուշազ չունե՞ս, բեր մի հետը խօսանք. էլ հո ես էթողը չեմ։

Հրամայեց, յիրա բառասուն կնանիքն էկան կանգնեցին։ Բառասունն էլ տեհան, որ դա քոմմէքիցը սիրուն ա։

Ասեց. Սրան վե կալէք, տարէք բախչէն մանն ածելու։

Գնացին բախչէն, մանն էկան։

Ասեց. Թվորտինք, քոմմէքս էլ մի մարթի կնիկ ենք, իրաւունք տվէք, յանց կենամ պատի էն դրսին, ջրվէթ անեմ՝ գամ։

Դրանք ասեցին. Գնա, բիրադնիս մեհնաքը դու ես, իսի ես իրաւունք ուզում։

Դա պատն յանց կացաւ էն դիսը, դառաւ էն աղվէսը, պոչը քցեց սաղրուն (մէջքին) ու փախաւ։ Որտեղ ես Վասկէ քաքուլ տղա, էկաւ։

Էն տեղը հասաւ Վասկէ քաքուլ տղին, որ մասեցել ա ղշի թաքաւորի քաղաքին։ Ասեց. Վէր յարի ձիուցը։

Վասկէ քաքուլ տղէն ձիուցը վեր էկաւ քաղաքի դրտղին, ձին կապեց մի մարաք։ Աղվէսը դառաւ մի ձի, մի սև ձի, հարամբաշու ձիու նման, ասեց. Տար ինձ տաւ թաքաւորին, քու ղշերն տա ու գնա, ես կըգամ քեզ կը հասնեմ։

Տղէն էտ ձին վե կալաւ, գնաց թաքաւորի կուշտը. թաքաւորը տեսնելուն պէս ասեց. Գնացէք էրկու դուշ տվէք էտ տղին տանի։ Ձին տատն քաշեցին դոմը։ Էտ տղէն ղշերը վե կալաւ, էկաւ նստեց յիրա ձին, էն ինչ որ մարաքիմը կապել էր, ու գնաց։

Թաքաւորն ասեց. Մի էտ ձին դուս բերէք տեսնեմ, դրա համար ահագին զոշուն եմ փչացրել։

Ձին դուս քաշեցին, մէհտարը մանն էր ածում, որ թաքաւորը

տենի. ձին մէհթարին մի քացի տվուց, մէհտարը ընկաւ, մեռաւ։ Ձին պատը թռաւ ընկաւ ճամփէն, էլի գառաւ էն ազվէսը, էկաւ հասաւ ազին։ Էր՝, ասեց, էկա հասա, քշա ձիդ։

Գնացին էն տեղը, որ արարին թողել էին։ Բարով ավին արարին, նստեցին, հաց կերան, ազվէսն ասեց. Մի ես եմ, մի դու ես, մի քու մէհթարը, իրեք ձի կա, էկէք էս գլխմը միքիչ հաղ անենք, ենենա էկէք, գնացէք։

Թաքաւորի ազէն ասեց. Էթանք. նի՛լան ձիանն ու էս գլխմը հաղ արին։ Գնացին հասան էն տեղը, որ ախպէրտինքն ու զինվորները քար են դառել։

Ազվէսն ասեց Վասկէ քաքաւլ ազա, սրանք ինչ են։

Ասեց. Քար են, համա խանի նման են, ձիու նման են։ Ինչ չիմանամ։

Ասեց. Էս էրկուսը տեսնում ես, սրանք քու ախպէրտինքն են, քար են դառել, համա յաշկունները լիս կա, տեսնում են։

Ասեց. Դէ դուս էկէք մէջիցը։

Դուս էկան, մի կաքաւի ձէն էկաւ, դրանք քոմմա էլ կենթանացան։

Էս զինվորները թաքաւորի ազէքանցը ասում են. Դէ պրծէք, էթանք գուշը բերենք։

Թաքաւորի ազէքը ասեցին. Սուս կանենցէք։ Կանենցին. էկան էս էրկու ազէն Վասկէ քաքաւլ ազի յառաջին ձեռ կապեցին կանենցին, ասեցին. Մեր ազատողը դու ես, մեր տէրը դու ես։

Ազվէսն ասեց. Դէ վերէք էթանք. վեկացան ազվէսի հետ էկան էն տեղը, որ քաշուվի էն քցել։ Վեր էկան ըսի, ազվէսն ասեց. Վասկէ քաքաւլ ազա, քու մի բուսը ձաւարը իմ յաշկերը բռնեց, թէ չէ դու էլ իր քար քու ախպօրանց պէս։ Հըմի մնաս բարին, դու գնա քու հայրենիքը, ես էթամ իմ հայրենիքը։

Ազվէսը գնաց յիրա ճամփէն, իրեք ախպէրն յիրանց դոշունի հետ յիրանց էրկու գուշը, հարամարաշու ձին վի կալած գալիս են հայրենիք։

Խարարը գնաց թաքաւորին, թէ յաշկա լիս ելի, քու ազէքդ էկան սաղ սալամաթ. թաքաւորը յաշկալիսէք տվուց ժողովրթին, կերան, խմեցին, ուրախացան։ Վասկէ քաքաւլ ազէն էկաւ յիրանց տունը նստեց։ Թող դրանք յիրանց տանը մնան մի վախտ (ժամանակ)։

Մի վախտից հետո Պօղոսն ու Պետրոսը, որ թաքաւորի որթիքն են, դրանք թաքաւորին ասեցին, թէ ՅԷքրուց մենք ենք գանդատ անելու, յուրիշ մարթ իրաւունք չունի գանդատի։ Թա-

քաւորը շատ մտածեց, թէ յիրա տղէքը ընչի՞ հըմար են գանգատ անըմ. կարծըքի տակ էր թէ էն էրկուսը ջոկ մօրից են, ուզըմ են Վասկէ քաքուլ տղին քցեն։

Յէքսի օրը էրկու տղէն էկան կանչեցին սինօթըմը, թաքաւորի յառաջին, թաքաւորն ասեց. Խօսացէք, ինչ ունէք ասելու։

Ասեցին. Թաքաւորն ապրած կենա, գիտաս ինչ կա. դու մենձացել ես, կարալ չես թաքաւորիլ, ուզըմ ենք մեր ախպօրը դնենք թաքաւոր, մեզ կարենա պահի։

Թաքաւորն ասեց. Ես յօժար եմ, ու ուրախ եմ, որ դուք ըդպար սիրով էք։

Վասկէ քաքուլ տղէն լաց էլաւ, ասեց. Էտ ծանդը լուծը միք դնի իմ շլընքին, իմ հէրս կենթանի, ախպէրտինքս մեմենձ, իմ՞ էք էս մեխկը քցըմ իմ շլինքը։

Ախպէրտինքն ասեցին. Որ մեզ պահես ոչ՝ կենթանք կընկնենք ծովը, կը խեղդվենք։

Վասկէ քաքուլ տղէն ասեց. Որ ինձ դնըմ էք էս լծի տակը, ինչ որ ասեմ, կը լսէք։

Ասեցին. Կը լսենք։

— Դէ որ ըտենց ա, կառավարութունը կըլի իմը, թող հէրս էլի մնա թաքաւոր։

Ասեցին՝ Լաւ։

Մի ժամանակ մնացին յիրանց տան մէջը, ըլէդ Վասկի քաքուլ տղէն կանչեց յիրա հօրը, ախպօրանցը, յիրանց մէհթար արարին, միքանի մարթկերանց, ասեց. Ես ուզըմ եմ մեր հօրը ղրկեմ կնիկ ուզի մեր համար. ի՞նչ էք ասըմ, ղարուլ էք։

Ասեցին. Ղարուլ ենք։

Ասեց. Ամու, գնա մեր իրեքիս համար ախչիկ ուզա, իրեքն էլ մի հօրից, մի մօրից, իրեքն էլ մի ջուռա, մինը մընիցը սիրուն չըլի։

Հէրն ասեց. Էթամ, ում հետ ես ղրկըմ։

— Արարի։

— Արար, կենթաս։

— Հրամայեցէք, կենթամ։

— Յառաւօտը վի կացէք, դարբշի շորեր հագէք, գնացէք։

Յառաւօտը թաքաւորական ալիրասաը (շորեր) հանեց, դարբշի շորեր հագաւ, նաջախն (տապար) առաւ ձեռը, չանդն (կօկօսի աման) առաւ, արարած աշխարհը ման էկաւ. էկաւ մի քաղաքի դրաղի մի կալըմ նստեցին։ Տեհան մի նախարչի տաւարը բերուց արուց գեղը. էկաւ մտաւ մի տուն, ըտի՝ ինչ դրանք նստած են, էտ դռնիցը մի ախչիկ էր դուս դալի, թեշին ձեռին,

գալիս էր էթըմ, գալիս էր էթըմ, իրեք հետ գնաց էկաւ. դրանք հէնց յիմանըմ ին, թէ մի ախչիկ ա, գալիս ա էթըմ, դու մի ասի՝ թէ իրեքն ա։

Էտ նախրչի մարթն էկաւ, մտաւ էտ տունը, ու փէտը քաշեց յիրա կնկանն ու էրեխանցը ծեծեց, թէ ղօնաղը էկել ա դուռը նստել, խի՞ չէք կանչըմ տուն։

— Ա՛յ մարթ, ասեցին, մենք ինչ գիտենք՝ ինչ մարթ ին, խի՞ ես մեզ ծեծըմ։

Էտ նախրչին դուս էկաւ, ասեց. Դարվիշ բարա, համեցէք, էկէք ղօնաղ։

Թաքաւորն ու արարը գնացին նախրչու տունը ղօնաղ։ Նստեցին, հաց բերին, հաց ին ուտըմ. արարին թաքաւորը ըսենց բլըմ ա, ասըմ ա. Տես յիրա ախչըկերքն են։

Արարն ասըմ ա. Նախրչի բիձա, սրանք քու ախչըկերքն են։

Ասըմ-ա. Հրամանք ես, դարվիշ բարա, իմ ախչըկերքն են։

— Հալալ։

— Հալալ։

— Մի հօրից, մի մօրից են։

— Հա, ինձանից ու էտ կնկանից են։

Բշերը մնացին էտ տանը ղօնաղ, յառաւօտն ընկան ճամբա, որ էթան յիրանց երկիրը։

Գնացին, շատ ու քիչն Աստված գիտա, գնացին, հասան յիրանց երկիրը։ Թաքաւորի տղէքը դուս էկան թաքաւորի յառաջը, ընդառնացին։

Վօսկէ քաքուլ տղէն ասեց. Ափու, քթէք։

Ասեց. Բէտ, հա՞մ իրեք-ամիս ինձ ժամանակ պըտի տաս, որ էթամ էտ ախչըկերքը ուզեմ, նախրչու ախչիկ են։

— Բան չը կա, Աստըծուքթունը մեզ էտ ա արժան տեսել։

Արանքը քաշեց մի ժամանակ, արարին հինգ հազար մանէթ փող տվուց, թէ տար բախշա էն մարթին։ Արարը տարաւ, բաշխեց ու էկաւ։ Իրեք ամսըվա մէջը էտ նախրչուն շինեց թուջար (վաճառական), իրեք ամսից հետո արարին զրկեց, թէ գնա էն իրեք ախչիկը ուզա իմ իրեք տղին։

Արարը վե կացաւ, գնաց թուջարի կուշտը։

— Բարով քեզ, ասեց։

— Աստու բարին։

— Խէր ըլի։

Ասեց. Խէր ա, Աստուն փառք։

— Ի՞նչ ասեմ, թաքաւորը ինձ զրկել ա, որ քու իրեք ախչիկդ ուզեմ յիրա իրեք տղին, ի՞նչ ես ասըմ։

Թուջարը ծիծաղաց ու տխրեց։

Երթամ կերաւ արարը, ասեց. Ասուած վկա, էկել եմ ուղելու։

Ասեց. Դուք որ լայաղ արիք, ես էլ ավի ու ավի։

— Դէ նշանս վիկալ։

Նշանը գրուց քուրսու վրէն, ախչիկերքը էկան յիրանց լայաղ նշանները վի կալան, մենձը՝ մենձինը, միշնակը՝ միշնակինը, պուճուրը՝ պուճուրինը։

— Յաշկալիսէք ընէք, իմեն էտ մարթիքը, ասեց Թուջարը։

Բշերը բաբ կացան, քէֆ արին, յառաւօտը վի կացան, արարը գնաց ըլեա Թաքաւորի մօտ։

— Է՛, յաշկ լիս ըլի, որ նշան եմ գրել։

Շատ շնորակալ էլան արարիցը։

Էն ժամանակը որ գնաց խնամու տանիցը՝ արարն ասեց, թէ մայրսի տանը հնգին պըտի գամ, տանեմ ախչիկ գլուխ *)։

Էկաւ ժամանակը թամամեց, էթալ պըտին հարսը բերին. Վօսկի քաքուլ տղէն կանչեց Թաքաւորին, ասեց. Որ էթալ պըտես հարսները բերելու, իժդար ժողովուրթ ես ուզում տանես։

Թաքաւորն ասեց, թէ հազարաւոր։

Տղէն ասեց. Դու դիտաս, համա էթալուս էն ճամփի յախպըրիցը մի վերստ հեռու վեր արի, գալուս էլ հեռու վեր արի։ Թէ որ կշտին վեր գաս, յիմացի, որ քու տղէն չեմ։

Ասեց Շատ լաւ, որթի, հեռու վեր կը գամ։

Թաքաւորը գափ ու զուռնով գնաց հարսները բերելու։

Գնացին էտ յախպըրիցք մի վերստ հեռու վեր էկան։ Գնացին, հարսանիք արին, յառաւօտը վի կալան ախչիկերքը բերելու, թագաւորը էտ մնաց, խնամու հետը մնաս բարով անի, էկաւ հասաւ, տեհաւ որ վեր են էկել յախպրի վրին։ Կերած խմած մարթիք, էլ չը կարաց գրանց վի կացընի, քըշերը մնացին ետեղ։ Թաքաւորը քնեց ոչ. լիսը մօտ էր, քնել էր, վի կացաւ տեհաւ որ ուշապը զօշընի չորս գիհ պատել ա. յամէն մարթ հասաւ յիրա թրին ու սրին, ուշապը Ասուս հրամանով լիզու էլաւ, ասեց. Հանդարտ կացէք, իմ վրա թուր ու սուր բանիլ չի։

Թաքաւորը գլուխը բաց արուց, ուշապին խնթրեց, ասեց. Ուշապ ջան, ուզա՞ ինչ ես ուզում, որ մեզ ճամփա տաս՝ էթանք։

Ասեց. Իմ ուզածը պըտի գրկես, թէ չէ։

Ասեց. Կը գրկեմ։

Ասեց. Քու Վօսկէ քաքուլ տղէն գրկա՞, գա՞։

*) Այսպէս է կոչւում, երբ աղջկան տանում են փեսացուի մօտ եւ այնտեղ պսակում։

Էտ հարանքքաւորը մի ջուտա էլան, փըշըրվեցին։ Վիշապը դրանց ճամփա տվուց, գնացին։

Վիշապը Թաքաւորին էտ կանչեց, ասեց. Թաքաւոր, չըլի, յանկաճիդ քամակը քցես հաճ, անպատճառ դրկիլ պըտես։

Թաքաւորը խոստացաւ, որ անպատճառ դրկի, որ դրկի ոչ, աւելի նեղութունի մէջ կընկնի։

Թաքաւորը խնթրեց հարանքքաւորին, որ ուրախ էթան, Վասկէ քաքուլ տղէն իմանա ոչ ուշապի ասած խօսքերը, ընչանք հարանքքիցը պրծընեն։ Գնացին հասան տուն, մինձ տղէն էկաւ մինձ ախչիկա կու

ղշերն ուտեն։

Ասեց. Կը բերեմ։

Էս մարթոն վե բերուց գետինը. ծովն յանցկացրուց էն դիհը, դրուց Զինիմաչին թաքաւորի ֆողըմը։

Ասեց. Գնա, Աստված քեզ հետ։

Էս տղէն գնաց մալուլ մշկուլ (տխուր արտում). թող էթա։

Գնաց, մի սարի գլխի տեհաւ իրեք դովա (մարթկային բընութեան ուղտ) կռիւ են անում։ Դրան որ տեհան, ասեցին. Էսա իսան օլին էկաւ, մեզ կը բաժանի։

Գնաց հասաւ դրանց, բարով տվուց, ասեց. Դուք ի՞նչ էք կռիւ անում։

Դրանք ասեցին, որ մենք իրեքս ախպէր ենք, մեզ ունենք բանց իրեք բան, մինը քեչա քիւլլահ ա, մինը բալնիք ա, մինը դաստախուն ա։

Ասում ա. Սրանց շնորքն ինչ ա, որ դուք կռիւ էք անում։

Ասեցին. Էս քեչա քիւլլահը դնես գլխիդ՝ հարիր հազար մարթի միջով էթաս՝ քեզ չեն տեսնի, էս բալնիքը շինած դռան դէմ անես, բաց կանի, բացի դէմ անես՝ կը շինի։ Դաստախունը բաց անես՝ ինչ խնթրվես Աստվածանից՝ կը կատարի։

Իրեք հատ քար Վասկէ քաքուլ տղէն վե կալաւ՝ թող արուց ձորը, ասեց. Գնացէք, վե կալէք, դուդ կաննէք. վորըդ թեզ դաք՝ քեչա քիւլլահը կը տամ, նրանից յետի էկողին՝ դաստախունը կը տամ, վերջի էկողին՝ բալնիքը։

Էս դովտէքը գնացին, ձորի միչին կաննեցին։

Ասեց. Էկէք։

Դրանք սկսեցին վազել։ Տղէն քեչէ քիւլլահը դրուց գլխին, հեռու կաննեց։ Դովտի մենձ ախպէրը հասաւ սարի գլուխը, ասեց. Քեչէ քիւլլահը իմն ա, տուր։ Միչնէկն էլ էկաւ, պուճուրն էլ էկաւ, հրմի կաննել են իրեք ախպէրով մասլահաթ են անում, թէ մեր մասը տարանք, մեր յաշկը հանեցինք։

Ասեցին. Էկէք բանց դուդ էթանք, բալքի դիպչենք դրան, քիւլլահը վեր ընկնի, քթենենք։

Դրանք բանց վազ տվին, տղէն յիրա ճամփէն բռնեց, գնաց դըրա Զինիմաչին։ Գնաց, շատ ու քիչը Աստված գիտա, մի ձորի միջով մի ճամփա էր էթում, մի դըհին քար ա, մի դըհին ծով ա, բաի նատած ա օխտը դովտ, յանց կենալու տեղ կա ոչ։

Դովտերը ասեցին մենը մեն. Հրէս էկաւ մեր աւը, վազուց ա իսանի մեռ կերել չենք։

Էն ժամանակը, որ ուշապը դրան երկընքիցը վե բերուց, դրա յիմաստութունը առաւ, մեզ պէս մի հասարակ մարթ դա-

ռաւ։ Մտածեց մտածեց, տեհաւ որ դաստախուռնը կարա յիրան ճար անել։ Բաց արուց դաստախուռնը, խնթրվեց Աստուն, դրանց ուղղը (ուտեստ), դոլտերը էկան նստեցին, կերան, կերան, կշտացան, ասեցին. Օխտը տարի ա, մենք ըստեղ ենք, ըզդար կիրակուր կերել չենք, ինչ ուզում ես, խնթրա, տանք։

Ասեց. Ջատ ուզում չեմ, ինձ ճամփա տվեք, ես էթամ Զինիմաչին։

Դրանք ճամփա տվին, յիրանց բրթիցն էլ մի քիչ տվին. Որ նեղ տեղն ընկնես՝ տուր կրակին, մենք քեզ կը հասնենք։ Դա վե կացաւ՝ գնաց։ Գնաց մի տեղ տեհաւ, որ մրչյունները ուզում են յիրան վրա տան, ուտեն, էլի դաստախուռնը փռեց, խնթրեց դրանց ուռղղա։ Էտ մրչյունները կերան, կշտացան, ասեցին. Համեցէք, յարի գնա։ Դրանք էլ յիրանց գնգիցը (եղունգ) տվին, թէ նեղ տեղը ընկնես՝ տուր կրակին՝ կը հասնենք։

Էլի գնաց, գնաց, գնաց մի տեղ տեհաւ որ սիպտակ ղշերը ուզում են յիրան քաշեն երկինքը. ըլէտ դաստախուռնը բաց արուց, խնթրվեց ուռղղա, էտ ղշերը կերան կշտացան, յիրանց բմբըլիցը տվին դրան, ու ասեցին. Տուր կրակին, նեղ տեղն ըլես, կը հասնենք։

Էտ տղէն գնաց, գնաց, շատն ու քիչը Առավոտ գիտա, հասաւ Զինիմաչին քաղաքին։ Գնաց նստեց էն չինարի տակին, որ ուշտպի վրիցը տեհել էր։ Գնաց մի պառաւի տան էլաւ զոնաղ, մի հինգ տատն օր ապրեց։

Մի օր պառաւին ասեց. Նանի, գնա թաքաւորի ախչիկն ուղա ինձ։

Պառաւն ասեց. Ա՛ տղա, անել մի, ըլել մի, չարի ճամփիցը էտ դառ, թաքաւորը քեզ ախչիկ տալ չի, քու գլուխը կը կտրի։

Ասեց. Բան չկա, գնա՛ ուղա։

Պառաւը վե կացաւ գնաց, խնամաքարի վրին նստեց. Թաքաւորի ծառէն դուս էկաւ. Ի՞նչ ա, ասեց, պառաւ։

Ասեց. Թաքաւորի ախչիկը ուզում եմ իմ տղին։

Գնաց թաքաւորին ասեց. Նախրչու կնիկը էկել ա, ախչիկդ ուզում ա յիրա տղին։

Ասեց. Գնա՛, կանչա, դա՝ տենեմ։

Էկաւ, պառաւին կանչեց։ Գնաց, թաքաւորին գլուխ տվուց, կանեց։

Ասեց. Հը՛, պառաւ, ինչ ես ուզում։

Ասեց. Քու ախչիկն եմ ուզում իմ տղին։

Ասեց. Ինձ հնարներ ունեմ, քու տղէն կարալ չի հանել գլուխը կը կտրեմ։

Ասեց. Չի կարա՝ կարա։

Ասեց. Գնա, տղիդ կանչա, գա։

Էտ պառաւն էկաւ, տղին տարաւ Թաքաւորի կուշտը։

Թաքաւորն ասեց. Դու իմ ախչիկն ուզում ես։

Ասեց. Ուզում եմ։

Ասեց. Հնարներ ունիս, կարաս հանիլ։

Ասեց. Եսիմ (չգիտեմ), տեսնենք։

Յերրիկունը մթնել էր, Թաքաւորի խեղճ Վասկի քաքուլ տղին տարան դրին ըսենց մի օթախ, բերին օխտը վոխչար էփեցին, դրին դրա կուշտը, ասեցին. Պըտի ուտես էտ քշեր. թէ կերար, ախչիկը կը տանք քէ, թէ կերար ոչ՝ գլուխդ կը կտրենք։ Դուռը շինեցին ու գնացին։

Թաքաւորի տղէն մտածում էր ըտի, թէ ինչ անի, որ կարենա էտ օխտը պղինձը ուտ անի։ Անկարծ միտն ընկաւ զովտի բուրթը. տվուց կրակին, զովտերն էկան, բանիքը դէմ արուց շինած դուռը, բացվեց, նի մտան, նստեցին, յամէն մինը մի պղինձ կերաւ, բերանը սրփեց, թողին գնացին։ Էտ տղէն էլի բանլիքը դէմ արուց դուռը, էլի շինեց, թէք ընկաւ ու քնեց։

Յառաւօտը Թաքաւորը Ջանլաթին կանչեց. Գնա, գլուխը կտրա, բեր։

Ջանլաթն էկաւ տեսաւ, որ էտ տղէն օխտը պղինձն էլ կերել ա՝ թէք ա ընկել, քնել։ Գնաց Թաքաւորին ասեց. Թաքաւոր, կերել ա։

Ասեց. Սիրուն ես տեսել տղին, ափսոսում ես, որ գլուխը կտրես։

Յինքը վեր կացաւ, սոլերը հագաւ, գնաց տեսնելու։ Գնաց, տեսաւ որ դրուստ կերել ա։ Տեսաւ որ կերել ա՝ կանչեց։

Տղէն ասեց. Կիրակուրը անհայ տալ չին մարթի, խի՞ չասիր՝ մեր տանից հաց բերէի։

Թաքաւորը զարմացաւ։

Վեր կալաւ Թաքաւորը էտ տղին, տարաւ տուն, պատիւ տըվուց։ Յէքսի օրը էտ ամբարը լիքը լցրուց դարի, ցորեն, կորեկ, ասեց. Քշերը ընչանք լիս փրեքը իրարից ջկիլ պըտես, ու դուռը շինեց՝ գնաց։

Դա մտածեց, մտածեց, մըրչըմի զունկը տվուց կրակին։ Անկարծ էն իմացաւ, որ պատովը, պատըրհանովը, երթկովը, փանջարովը, դանովը մրջիները թափեցին նեքսեւ, ասեցին. Թաքաւորի Վասկէ քաքուլ տղա, ինչ ես ուզում, ասա։

Ասեց. Էս դարին, ցորենը, կորեկը յիրարից ջըկեցեք։

Ջկեցին էրկու սնաթվա մէջ, պրծան, կանչեցին դրաղ։

Տղէն դուռ էկաւ, դաստախուռնը բաց արուց, մրչմեկրի հրմար ռուզդա խնթրվեց, կերան, գնացին։ Յինքն էկաւ նեքսեկ, քնեց ոչ էտ քշեր, վախեցաւ թէ մինը անկարծ կը գա՝ մի բուռը ցորեն վի կունի, կը քցի գարու վրին։

Յառաւօտը քշերով թաքաւորը ջանդաթին վի կալած էկաւ, որ գրա գլուխը կտրի։

Էկաւ որ դուռը բաց անի, մնի նեքսեկ, տղէն թողուց ոչ. ասեց. Քեզ ասուածավախ մարթ կունենաս, գնա բեր, թող տեսնի, բալքի մի բուռը վի կալար՝ քցեցիր մընի վրէն, ինչ անեմ քեզ։

Թաքաւորը կանչեց յերա ասուածավախ մարթիքը, էկան տեսան, որ ջոկել ա։

Ասեցին. Տարեա թաքաւորի ախչիկը։

Էտ օրն էլ տարաւ թաքաւորը էտ տղին, պատվեց։

Յէքսի օրն ասեց. Ինձ սև դուշ ունեմ, պրտես դու սիպտակ դուշ բերես կոփացընենք։ Իմը ախտի՝ քու գլուխդ կտրեմ, քունը ախտի՝ ախչիկս տամ։

Քշերով որ թաքաւորի դուշն էկաւ, արեվ յատաչը փակեց. տղէն տալդալամիշ էլաւ, դշի բմբուլը ավուց կրակին, թաքաւորի դշի մի հատը մնաց ոչ, բմբլնեբը նի ին ընում երկինքը, ջանդակնեբը վեր թափում գետինը։

Ասեց. Բոլ ա, քու դշերը հեռացրու։

Տղէն երկուղիցը դաստախուռնը բաց չարուց, դշերին խնթրեց, որ հեռանան, ձեր ռուզդէն իմ յաշկի վրէն։ Դշերը հեռացան ըտեղից։

Ասեց. Թաքաւորն ասրած կենա, տարա ախչիկդ։

Ասեց. Տարար։

Տարաւ էտ տղին պատվեց էտ քշեր էլ, յերիկունն ասեց. Գիտես ինչ կա, այ տղա։

Ասեց. Ի՞նչ կա, թաքաւոր։

Ասեց. Իրեք հնար էլ ունեմ, որ հանես ոչ՝ տալ չեմ։

Ասեց. Թաքաւոր, էրեխէքը, վեր հաղարուա, ասում են հանաքը իրեքրին ա, դու էտ ինչ ես անում. մի անքամից հա տուր, հա գլուխս կտրա։

Ասեց. Անկարելի ա, էտ իրեքն էլ հանիլ պրտես։

Ասեց. Իրեք օր ինձ ժամանակ տուր։

Ասեց. Կը փախչես։

Ասեց. Վրիս դարաուլ դի։

Էտ տղէն իրաւունք տուաւ, դարաուլի հետ գնաց յիրանց տունը. տան չորս դրէին չափարեցին զոշընով։ Էտ տղէն տանը

ճնաց նստած, մօր հետ խօսում էր։ Թաքաւորի ախչիկը, էն վախտը որ տղին տանում էն դարաւուլով, փանջարիցը տեսաւ, ախտոս էկաւ դրա ջահելութունին, սիրունութունին, մտածում էր դրա հըմար։

Տղէն պառաւին ինչ էր ասում. Նանի, էս քեչա քիւլահը դի գլուխդ, գնա Թաքաւորի ախչիկա կուշտը, ասա թէ սիրտդ ուզում ա ինձ առնես՝ էտ իրեք հնարն ասա։

Ասեց. Ես կարալ չեմ, այ որթի, ինձ կը տենեն, կը սպանեն։

Ասեց. Էտ քեչա քիւլահը դի գլխիդ՝ տեսնել չեն։

Ասեց. Ես կարալ չեմ։

Տղէն վեր կալաւ ու դրուց յիրա գլուխը։

Պառաւն ասեց. Իսոՙս ու Բրիսոՙս, սատանա էր, անեւրեութացաւ։

Ասեց. Ըսաի եմ, նանի, ըսաի, ես, դու դի գլխիդ, գնա։

Նանը վեր կալաւ, դրուց գլխին, գնաց Թաքաւորի ախչկա օթախը։ Տեհաւ՝ Թաքաւորի ախչիկը մտածում ա, ըսաի յիրա քեչա քիւլահը վեր կալաւ։

Ախչիկը ասեց. Իսոՙս ու Բրիսոՙս, պառաւ, սատանա իր դու։

Ասեց. Չէ, ես էն տղի մէրն եմ, ինչ ես անում, ախըր, թէ որ ուզում ես իմ տղին առնես, իրեք հնարն ասա, թող իմ տղէն հանի։

Ասեց. Նանի, առ էս մատանիքս, մեր չինարին տենը՞մ ես, էն չինարին ա, որ ուշապի վրիցը տեհել ա, յատաւսաը մի հնարն էն ա որ ըսենց մի ջամ (բաժակ) գիւլապ սուի (վարդի ջուր) պնել պըտի գլխին, նիլնի չինարին, թէ որ մի կաթ կաթեց՝ գլուխը կը կարի։ Թող էս մատանիքը դնի էտ գիւլարի մէջը, լիրթ կը գա, թող դնի գլխին, նիլի։ Մինը դա ա. մինն էլ քառասուն ախչիկ սիպտակ շորով քառասուն ձի նիլիլ պըտեն, մեր դարբաղից դուս գալ պըտեն, յատաչի ձին իմն ա՝ բռնա։ Եղի օրը քառասուն սև շորով, քառասուն սև ձիով ըլէտ պըտենք դուս գալ. տատանըչորսը համբրա, տատանըհինգը ես եմ, բռնա։

Յիթսուն մանէթ էլ խալաթ տվուց էտ պառաւին, ասեց. Դէ գնա, տղին ասա, մարիդ քցես՝ ոչ՝ հա։

Պառաւն էկաւ տուն, տղէն ասեց. Նանի, ինչ խաբար ես բերել։

Ասեց. Ասուն փառք ըլի, լաւ ա. ոնց որ ախչիկը պառաւին պատմել էր, ընենց պառաւը պատմեց տղին։

Իրեք օրը թամամեց, վեր կացաւ գնաց։ Դուս գալուն պէս զօշունը չորս դըհիցը պատեցին. ասեց. Ես հօ զաչաղ չեմ, խի էք ըտենց անում։

Տարան Թաքաւորի կուշտը։

Ասեց. Էկա՞ր։

Ասեց. Էկա։

Բշխրով էր, գիւլար սուին լցրին ջամը, գրին գրա գլխին, ասեցին. Նիլ չինարին, վի բեռ, որ մի կաթ կթա, գլուխդ կը կըտրենք։

Ջամը գրուց գլխին, Թաքաւորի ախչիկա տված մատանիքը Թաքուն Թաթախ արուց մէջը՝ լիրթ էկաւ, նիլաւ ծառը։ Կիսին ադէն ասեց. Բոլ ա։

— Ձէ, ասեց Թաքաւորը, պըտես նիլես գլուխը։

Էտ ադէն նիլաւ գլուխը. էս դընին, էն դընին Թամաշ արուց, յիրա հոր երկիրը էրեսց, լաց էլաւ, արտասունքն էկաւ սինու միջին կթաց։

Ասեց. Վէր արի, ջանլաթ, սրա գլուխը կտրա։

Վէր էկաւ ադէն, երկիրն էր ախոռում դրան՝ խնթրեց Թաքաւորին, որ ասուածավախ մարթ ունի, բերի, լեզուն տա, տենի ինչ ա դա, արտասունք ա, Թէ գիւլար սու ա։

Ասուածավախ մարթն էկաւ տեհաւ՝ ասեց. Արտասունք ա։

Ասեց. Բա էս ինչ բան ա։

Ասեց. Հօրս երկիրը տեհա, արտասվեցի՝ իմ արտասունքս ա։

Ազատ արին, տարան պատիւ արին։

Յէքսի օրը քառասուն սիպտակ ձիով ախչիկերքը դռնիցը դուս էկան, ադէն վազեց, յառաջի ձին բռնեց, ասեց. Տանեմ, Թաքաւոր։

Ասեց. Տար։

Տղին էլի տարան պատվեցին։

Յէքսի օրը սև ձիով, սև շորով քառասուն ախչիկ էլի դուս էկան տանից։

Տղէն տասնըչորսը համբըրեց, սաղ ժողովուրթը ասըմ էր Թէ՝ ափսոս, հանդլիշ ընկաւ, էլ կարալ չի ըթնիլ։ Տասնըհինգը բռնեց, ասեց. Թաքաւոր, տանեմ։

Ասեց. Տար, քուռն ա։

Տարան էտ մարթիքը Թաքաւորի տունը, օխտն օր, օխտը գշեր հարսանիք արին, էտ ախչիկը տվին էտ տղին։

Ձէ, էտ տղէն ու ախչիկը յիրար կշտի պըտեն քնիլ։

Տղէն Թուրը հանեց, գրուց մէջտեղը։

Ախչիկն ասեց. Խի՞ ես ըտենց անըմ, քանի տղէք են իմ արնովը մկրտվել։

Ասեց. Իմ նեղութունը ընչի հըմար ա էլել, ուզըմ եմ քառասունք պահեմ, ներողութուն, Թաքաւորի ախչիկ։

Ասեց. Յօժար եմ, պահա։

Մի տան օր մնացին բոնեվ. օրերի մի օրը էտ տղէն մենակ օթախումը նստած էր, գլխի ապլուխը վեր էր կալել, Վօսկի քաքուլը կախ էր էլել, լիսը ավել էր պատերին. անկարծ ախչիկը մտաւ նեքսև. որ մտաւ նեքսև, կարաց ոչ խօսալ, թողուց ու գնաց դրսև։ Գնաց Թաքաւորին ասեց. Թաքաւոր, քու տունը քանդվի, փեսէդ մեռել ա, յարի։

Թաքաւորը, Թաքուհին, էտ ախչիկը յիրար հետ ընչանք էթալը, տղէն յիրա գլուխը ծածկեց։ Էթալուն պէս ախչիկը էտ տղի գլխի բանը վեր կալաւ, ասեց. Թաքաւոր, էս ա քու փեսէն։

Վօսկէ քաքուլը էրևաց, բոլոր պատերը լիս բռնեց։ Թաքաւորը հասկացաւ, որ դա էն Թաքաւորի տղէն ա, որին յինքը հրպատակ ա, ներողութուն խնթրեց, որ էտքան նեղութուն ա տվել։

Տղէն ասեց. Հըմի ինչ էլել ա, էլել ա, ախչիկդ տու, էթամ։

Ախչիկը տվուց դրան, ահագին բաժընքով, խալաթներով, ճամփու դրուց։ Գնացին։

Գնացին հասան ղշի իւրդը. ղշերն էկան թափվեցին, դաստախուանը բաց արուց, դրանց ռուղդան խնթրվեց, կերան, ճամփա տվին՝ գնացին։ Մի քիչ էլ գնացին, հասան մրչըմի իւրդը, միևնուն էլի դաստախուանը բաց արեց, մրչըմի ռուղդան խնթրվեց, կերան, ճամփա տվին, գնացին։ Մի քիչ էլ գնացին, հասան օխտը զոլոի իւրդը. դրանց էլ դաստախուանը բաց արուց, կերան, ճամփա տվին, գնացին։ Մի քիչ էլ էկան՝ հասան ուշապի իւրդը։ Էտ տղէն թեզ թեզ երկինքն էր թամաշ անում, երկուղիցը ախչիկանը երթում էր տալի, «թե ինչ ջուռա եմ քեզ բերել, դու քու Աստվածը։ Ասում էր. Բիր ու ախպօր պէս ինք էկել։

Տղէն էլի երկինք էր թամաշ անում, տեհաւ ուշապը գալիս ա։

Ախչիկն ասեց. Ընչի՞ հըմար ես ըտդար վիրև թամաշ անում։

Ասեց. Բեզ էն ուշապի հըմար եմ բերել։

Ասելուն պէս՝ ախչիկը վիրև թամաշ արուց՝ վախլութունիցը պռոշը ճղվեց, արինը թափվեց։

Ուշարը վեր էկաւ, յիրա խրխին հանեց, քցեց գրաղ, մի սիրուն տղա դառաւ։ Դու մի ասի, էտ ուշապն էտ ախչիկա ախպէրն ա, ճանանչեցին յիրար, փաթըթվեցին ու լաց էլան։

Ախպէրը քվորն ասեց. Բեզ ինչ ջուռա բերուց էս տղէն։

Ասեց. Իրեք հնարն էլ ինքը հանեց, իրեքն էլ ես ասեցի։

Ասեց. Շատ լաւ արիր, որ ասեցիր, գիտես, այ տղա, մեր հէրն անիրաւութուն ա արել, քեզ պէս տղի քեալլով օխտը էտաժանի տներ ա շինել, ես կարացի ոչ էտ բանը տանիլ, Աստուն խնթրվեցի, որ ուշապ դառնամ, նիլնեմ երկինքը, չը տենեմ էտ անիրաւութունը։ Ես քեզ զրկեցի, որ սրան բերես, մեր ֆոքին

ազատվի, առ տար, քեզ եմ բախշում։ Եթե ուշադի խրխին հաքաս, քվորն ու փէսին գրուց միշկին, յանցկացրուց ծովը, տարաս գրուց ազի ֆոզը։ Ասեց. Գնացէք, Աստված ձեզ հետ, համա յիմացի, ոչ ոգա, որ նախրչու ախչկանը թողալ չըպըտես, յառաջ նրա հետ փսակվի, ենենա իմ քվոր։

Տղէն ասեց. Միրզամ (անորորդի), առ էս քեչա քիւլլանը, գառատախունը, բալնիքը, տուր իմ յիմաստութունը, խնթրըմ եմ։

Ուշադն առաս քեչա քիւլլանը, գառատախունը, բալնիքը, տվուց նրան յիմաստութունը, յիրարից բաժանվեցին։ Տղէն գնաց յիրա հայրենիքը, ուշադն էլ բանցրացաս երկինքը։

Գնաց տղէն, մօտացաս քաղաքին, տեհաս մի նախրչի դէմ վազեց, ուշունց տալով ասեց. Թողակ օղլի, էս խի՞ ես էս լիրվը սիպատակ շորով բերըմ մեր բաղաքը, գիտես ոչ, որ Թաքաւորի Վօսկէ քաքուլ ազէն կորել ա։ Ասեց ու գագանակը վեկալաս, որ ատա ազի գլխովը, ազէն մի սիլլա տվուց դրան, պինչը արնեց, չորանը քիթը բանեց ու գուլ վազեց Թաքաւորի կուշաը՝ գանգատ։ Դրանք հասան մի գառնարածի. ազէն մի վօսկի բախշեց գառնարածին, ասեց. Գնա, Թաքաւորին ասա, յաշկդ լիս, քու ազէդ ու հարսդ էկան։

Գառնարածը վազեց, էն տեղը հասաս, որ չորանը գանգատ էր անըմ։ Ասեց. Յաշկդ լիս, Թաքաւոր, ազէդ ու հարսդ էկան սիպատակ շորերով։

Թաքաւորը չորանին ասեց. Զորան, իմ ազէն ա էլել քեզ սիլլա տվողը, ներողութուն, խալաթ ուզա՝ տամ։

— Թաքաւոր, ասեց չորանը, կուլապս (Թազիքէ վերարկու) հին ա, մի կուլապ տուր։

Թաքաւորը գրան համ կուլապ տվուց, համ խալաթ։

Գառնարածին էլ խալաթ տվուց, ճամփու գրուց։ Տղէն ու հարսը հասան քաղաքը. Թաքաւորը գալ ու զուռնով գնաց յառաջը. ազէն էլ յիրանց նշանածների հետ գնացին ախպօր յառաջը, մնաց էն պուճուր քիրը՝ շալինքը ծուռ՝ գեազմըմը (պատըշգամը) կանգնած։ Վօսկէ քաքուլ ազէն էկաս, մօտեցաս ախչկան, ասեց. Վեր յարի, գու իմ յառաջի բախտն ես, ես քու վիրը ծուռը թողալ չեմ։ Իրեք ախպէրով յիրանց նշանածների հետ գնացին փսակվեցին, իսկ Վօսկի քաքուլինը երկուսն էր։ Օխտն օր, օխտը քշի հարսանիք արին, նրանք հասան յիրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։ Աստվածանից իրեք խնձոր վեր էկաս, մինն ասողին, երկուսն էլ յանկաճ գնողին։

ՂՈՐՇ ՓԱՐԻՆ·

(Աշտարակ *)

Ժամանակով մի թաքաւոր ա ըլում, էտ թաքաւորը իրեք աղա ա ունենում, գալիս ա մենձուԹան (ծերուԹեան) ժամանակը՝ քոռանում ա. իժդար հէրիմ Թոի ա ըլում, յաշկերը կարում չի սա-ղացնել։ Եաև մենձ աղին կանչում ա՝ ասում ա, էԹալ պըտես՝ յաշ-կերիս համար դեղ բերես։

Ասում ա. Ես որտեղ եմ գնացել, որ էԹամ քու յաշկերիդ հը-մար դեղ բերեմ։

Ասում ա. ՈրԹի, ընդար գնա, որ ընդի իմ ձիու ոտը դիրած չըլի. ընդիան որ Փող էլ բերես՝ իմ յաշկերին դեղ ա։

Տղէն դուս ա գալի, յիրանց գոմիցը մի ձի ա դուս քաշում, նիլըմա, վեց ամիս ճամփա ա էԹում։ ԷԹում ա, տեսնում մի չոլ տեղ մի հատ յախրուր, յախրրի վրէն մի հատ չոր ծառ։

Ասում ա. Փեռք քեզ, Աստված, ըզդար ջրի վրին էս ծառն ըսենց չոր, մի շվաք էլ չը կա, որ հովըմը քնեմ։ Եափընջին քցում ա ծառին, շվաքըմը Թէք ընկնում՝ քնում։

Վէր ա կենում, տեսնում ա որ ծառը կանանչել ա, խնձորներ ա տվել, յամէն մինը մի դրվանքա։ Մի խուրջին խնձոր ա քաղում, մի հինգ վեց բուԹուրկա ջուր ա վեր ուռնում, ասում ա. Տանեմ հօրս, ըզդար տեղ էկած չիլի։

Վեց ամիս էլ եաև ա դառնում յիրանց տունը։ Հօրն յաշկալիս են գալիս, Թէ մենձ աղէդ էկաւ։ Հէրն ասի ա քաշում՝ Թէ ինչ անեմ Թէ էկաւ, դարտակ գնացել ա, դարտակ էկել։

Գալիս ա աղէն հօր կուշտը, բարով ա տալի. հէրը բարուին

---

*) Պատմեց 1913 թ.-ի Յուլիսի 15-ին Աշտարակ գիւղում նոյն գիւղի բնակիչ Ներսես Կարապետեան Տէր Միքայելեանը, յիսուն եւ մեկ տարեկան անգրագէտ գիւղացին։ Պարապում է այգեգործութեամբ. սրա հայրը եւս շատ հնէիաբներ իմացող է եղել։

ասնում ա, ասում ա. Որթի ջան, ընչանք որդի գնացիր։

Ասում ա. Ախու ջան, ընչանք գնացել եմ, որ քու պապերն էլ տեղել չեն ընդի։

— Դէ ասա տենեմ, որդի գնացիր։

Ասում ա. Ախու, գնացի ընչանք մի յախրուբ։

Հէրն ասում ա. Դու կաց, ես ասեմ, ասում ա. Զոր ծառն էր։ Գնեցիր տակին. կանանչեց, վրին խնձոր էլաւ։

— Հա, ախու ջան։

— Ես, ասում ա, որթի, որ էթում ի. յառաւօտը ընդի չայ ի խմում, էթում ի ընդի ճաշվա հացս ուտում։ Ասեց. էտ զատ լաւացրնել չի։

Միշտնեկ ոդին կանչեցին։

Միշտնեկ ոդին ասեց. Էյ որթի, յարի դու գնա։

Ասեց. Ախու ջան, որ դա կարաց ոչ բերիլ, ես որդիան բերեմ։

Հէրն ասեց. Ինչ անեմ, էթալ պրանս. հնար կա ոչ։

Տղէն գնաց ըլնա զոմիցը մի ձի զուս քաշեց, յիրա հրմար խարջլրզ վե եարաւ, վե կացաւ ու գնաց. վեց ամսից հասաւ էտ ծառի կուշար, ասեց. Ախպօրս տեղը էս ա, իրեք ամիս էլ դէնը գնաց, տեհաւ մի կոնդ (բլուր), կոնդի վրին քանդրպար (սաթ) կա, անդին քար կա, ալմաստ (ադամանդ) կա. ասեց. Որ իմ հէրը բասեգարէնք էկած ըլէր՝ հրմի մեր խաղրնէն ըստուց լիքը կըլէր։ Խուրջինի էրկու յաշկը լիքը լցրուց ու եա դառաւ։ Էկաւ, էլի հասաւ յիրա հօրը։ Հօրն էլի գնացին յաշկալիս. Յաշկդ լիս, միշտնեկ ոդկդ էկաւ։ Էլի հէրը ախ քաշեց։ Է՞, ասեց, էկաւ՝ համա դարդակ էկաւ։

Էկաւ ոդէն նեբան. հօրը բարով ասաց. հօր ձեռը պաչեց։ Հէրն էլ բարովը ասաւ, ոդի թշերը պաչեց։

— Է՞, որթի ջան, ասա տենեմ, ընչանք որդի գնացիր։

Ասեց. Ախու ջան, ընչանք գնացել եմ, քու օխտը պաղն էլ գնացել չի։

— Դէ ասա տենեմ, որթի, որտեղ։

— Ախու, գնացի մի կոնտա ...

— Դէ, ասեց, որթի, ասել մի, որ կոնտան ես գնացել, ես յիմացա։ Ասեց. անդին քար ես բերել, մարգարիտ, ջաւահիր, չէ՞։

— Հա, ասեց. ախու։

— Գնա, ասեց, բե խուրջինդ՝ տենեմ։

Բերին բաց արին, տեհան որ անպէտակը կոխադիգիկ (վանակաս)։

Ասեց. Գնա, գնա, որթի, Աստված քեզ էլ օխնի։

— Դէհ, ասեց, պուճուր տղիս կանչեցէք։

Պուճուր տղէն էկաւ ըտի կանգնեց, ասեց. Ի՞նչ ես ասում, ափու ջան։

Ասեց. Ափուն էս ա ասում, որ էթաս պըտի յաշկերիս հըմար պըտես դեղ բերի։

Տղէն ասեց. Ափու ջան, հրա ես պուճուր եմ, ատնիցը դուս էկել չեմ, ես որդի էթամ քու համար դեղ բերեմ։

Ասեց. Որդի, էթըմ ես՝ գնա, էթալ պըտես. իլաջ կա ոչ։

Տղէն ինադ տրուց, գնաց յիրանց բախչըմը, հաւըզի վրին թէք ընկաւ՝ քնեց։ Յէրազըմը էկան ասեցին. Ա՛յ տղա, խի՞ ես էկել ըտեղ թէք ընկել քնել։

Ասեց. Ի՞նչ անեմ, հէրս ինձ ասում ա գնա յաշկերիս համար դեղ բեր, ես ճամփա գիտամ ոչ, գիտամ ոչ թէ գվորն էթամ։

— Որթի, ասեց, գնա հօրդ ասա. Մատիա մատանիքը տուր, վրիդ թուրը տուր, տակիդ ձին տուր՝ էթամ՝ բերեմ։

Էն հրատարամը տեղիցը վե կացաւ տղէն, էկաւ հօր կուշան, ասեց. Ափու ջան՝ տակիդ ձին եմ ուզում, վրիդ թուրը, մատիդ մատանիքը, կը տաս՝ կէթամ կը բերեմ։

Հէրն ուրախացաւ, տղին խաբուեց, երկու թուշն էլ պաչեց։

— Իմ զօչախ տղէն դու ես, ասեց, գիտեմ, որ կը բերես։

Վե կացաւ յառաւօտը, մատի մատանիքը տվուց, վրի թուրը տվուց, մէհթարին էլ ասեց. Ձիս հագրէք, թամքէք։ Տղէն խակը (գրուստ, ճիշտ որ, շիտակ որ) ձին նի էլաւ ու գնաց։ Գնաց ոնց որ հէրն ասել էր, յառաւօտը տանը չայն էր խմել, ճաշին էլ գնաց էտ չոր ծառի տակին հացը կերաւ, յիրիկվա պահին գնաց էտ կոնտը հասաւ, յիրիկվանը ուզում էր յանց կենա էտ կոնտը՝ տեհաւ որ հրէս մի արև երկնքումն ա, մի արև էլ գեննին ա։

Ասեց. Փառք քեզ Աստված, էս ինչ թավուր աշխարք ա. մի արև երկնքումն ա, մի արև էլ գեննումն ա։

Ձին քշեց, քշեց, գնաց տեհաւ, որ մի բմբուլ. ձիուցը վեր էկաւ, բմբուլն էտ գեննիցը վե կալաւ, խրեց փափախածալը։

Ձին ասեց. Ա՛յ տղա, էտ բմբուլը վե՞ քցա։

Ասեց. Խի՞ վե քցեմ։

Ասեց. Բմբուլիցը քեզ շատ շատ կը գա։

Ասեց. Բմբուլն ի՞նչ ա, որ շատն ի՞նչ ըլի։

Իրեք հետ ասեց ձին, տղէն յանկաջ արուց ոչ։

— Դէ, ասեց ձին, գնա, քու մեղքը քու շըլինքը։

Բմբուլը վե կալաւ ու ձին քշեց։ Գնաց մի թաքաւորի քաղաք. խաբար տարան թաքաւորին, թէ մի տղա ա գալի, մի արև երկնքումն ա, մին էլ դրա փափախածալումն ա։

Թաքաւորն ասեց. Գնացէք, էտ տղին կանչեցէք, բերէք։

Գնացին, տղին բերին Թագաւորի կուշը։

Թաքաւորն ասեց. Ա՛յ տղա, ի՞նչ տղա ես։

Ասեց. Դարբին տղա եմ, էկել եմ էս երկիրը ման գալու։

Ասեց. Էս ի՞նչ արև ա փափախածալըմդը։

Ասեց. Թաքաւոր, մի բմբուլ էր, ճամփին վեր ընկած էր, վեր եմ կալել։

— Դէ, ասեց, առ տեղեմ։

Տղէն հանեց բմբուլը, տվուց Թաքաւորին։

Հէնց Թաքաւորը որ բմբուլը տեսաւ՝ խելքը գլխիցը գնաց։ Ասեց. Դէ գնա, շնորհակալ եմ։ Տղէն գնաց։ Թաքաւորը բմբուլը խրուց պատը ու յաշկը վրիցը չէր վերնում։ Ըժդար դանդատաւոր էր գալի՝ ասում էր, ժամանակը չի, գնացէք։

Մի օր էլ մի պառաւի ճուտերը գողացել էն, էկաւ Թաքաւորի կուշը դանդատ անելու, Թաքաւորն ասեց. Գնա, պառաւ, վախտը չի։

Պառաւը տեսաւ, որ Թաքաւորը յիրա ուշքը քցել ա բմբլին, ասեց. Թաքաւոր, էտ հըլա մի բմբուլ ա, որ ըռենց ուշագնա ես էլել, բալի դրա դուշն էս տենում։

Թաքաւորը էտ դառաւ ասեց. Նանի ջան, սրա դուշն ով կը բերի։

Պառաւն ասեց. Բմբուլը բերողը դուշը բերիլ չի՞. ով որ բմբուլը բերիլ ա՝ դուշն էլ նա կը բերի։

Թաքաւորը մարթ ղրկեց թէ՝ գնացէք էն տղին քթէք, բերէք։

Գնացին, ման էկան տղին, խանիցը վեր կալան, բերին։

Տղէն ասեց. Հա, ասեց, Թաքաւորը էն օրը որ բմբուլը ձեռիցս առաւ՝ խելքը գնաց, խարջլըդ չըտվուց, ըսօր կանչըմ ա, որ խարջլըդ տա. ի՞նչ եմ անում դրա խարջլըդը։

Գնաց Թաքաւորի կուշը տղէն, օխտն անքամ գլուխ տվուց, վրա ութըմը ձեռ կապեց, կանգնեց։

Թաքաւորն ասեց. Տղա, գիտե՞ս խի եմ կանչել։

Ասեց. Ի՞նչ յիմանամ, Թաքաւոր։

Ասեց. Էթալ պտես, էս բմբլի տեր դուշը բերես։

Տղէն ասեց. Ես դարբին եմ, էս երկիրը ըսկի էկել չեմ, ես որդիան բերեմ էտ դուշը։

Թաքաւորն ասեց. Գիտեմ ոչ, որդիան բերում ես՝ բեր, որ բերես ոչ՝ գլուխդ կը կտրեմ։

Տղէն էտ դառաւ, գնաց լաց ըլելով խանը։ Որ շատ լաց էլաւ, ձին ասեց. Յաշկդ դուս դա, բա որ ասում ի վեր մի ունիլ

բմբուլը, վնաս կը քաշես, դու հէնց գիտէիր, քեզ փիս եմ ասը՞մ. հրլա հօ էա չի, ընդամ խաթարալա դա գլուխդ։

Տղէն ասեց. Դէ ինչ անեմ, ձի ջան, ոտիդ ու գնացողներիդ մեռնեմ. նեղն եմ ընկել, էս տեղիցն ազատ արա ինձ։

— Բան չկա, ասեց, տղա, թէք ինկ քնի, ես յառաւօտը էա նեղ տեղիցը կազատեմ քեզ։

Տղէն թէք ընկաւ, ընչանք լիսը բացվիլը տղի քունը տարաւ ոչ։

Յառաւօտը տղէն վի կացաւ, ձիուն մի լաւ թիմարեց, յինքը մըխելի հայ կերաւ. ձին դուս քաշեց, ասեց. Ձի ջան, դվորն էթամ։

— Ձին ասեց. Դու նոխտէս բոշ թող, ես դվորը կէթամ կէթամ։

Բոշ թողուց, ձին շատ էր գնացել, քիչ էր գնացել, շատ ու քիչն Աստված գիտա, հասաւ մի մէշի մէջ, ասեց. Ա՛յ տղա, էս գիտես որ մէշէն ա։

Ասեց. Ես ինչ յիմանամ, գիդեմ ոչ։

Ձին ասեց. Սրան Վերանա մէշա են ասըմ։

Վեր էկաւ ձիուցը։ Ձին ասեց. Դոլանները բոշացրու, դեսմս գլխիցս հանա, մտիկ արա. տենը՞մ ես, մէշի մէշանդը մի բանցը ծառ կա, չինարի, տենը՞մ ես։

Ասեց. Տեսա։

— Դէ. ասեց, էա եսուի տակին մատաս քարից շինած հավուզ կա։ կէթաս էա հավըզի կոխքին մի փոր կը քանդես, նի կը մնես փորի մէջը, տափ կը կենաս (կը թաքնուես), նա մի հուրի փարի ախչիկ ա, բոբ ուրխաթ ա, ասեց. ուրխաթէ ուրխաթ դալիս ա էա հաւըզըմը լեղանըմ ա. կը գա, խըրխին կը հանի, կը դնի դրաղ, տկլոր կը մնի հաւըզի մէջը, եսուն կը լեղանա հաւըզըմը, դուս կը գա, շորերը կը հաքնի, շորերը հաքաւ՝ խօսաս ոչ, խըրխին որ կը հաքնի կը պրծնի՝ յիրա բմբըլնեբը կդրվի, որ բմբըլնեբը դըվեց, կամանց կամանց ձեռդ կը հանես, էրկու ոտիցը դայիմ կը բռնես. էրկու ոտիցը որ դայիմ կը բռնես՝ վի կունես, կը բեբես իմ կուշտը։

Ոնց որ ձին ասել էր, տղէն ընենց փորը շինեց, տափ կացաւ, դուշն էկաւ խրխին հանեց, շորերը հանեց, նի մտաւ հաւուզը, մի շատ լաւ լեղացաւ, դուս էկաւ շորերը հաքաւ, խրխին հաքաւ, ուզըմ էր բմբըլնեբը դըվի, տղէն ձեռը մեկնեց ու դուշը կալաւ։

Դուշն ասեց. Ա՛յ տղա, դու ինձ յարի բաց թող, ինձնից խէր չես տանիլ ձեր տունը։

Տղէն ասեց. Դուշ Ջան, անբամիդ մեռնեմ, ոնեբիդ մեռնեմ, էլ ես էլ եմ Ջանէլ ասա, յաշկա մուբարակ ա, որ քեզ ասանեմ ոչ՝ թաքաւորը գլուխս կը կտրի։

Դուշն ասեց. Դէ դու գիտաս, քու մեխքը քու շալինքը։ Հէնց սեղ գրկեմ, որ էթալդ ելի, գալդ չելի։

Տղէն վեր կալաւ դուշը, բերաց ձիու կուշտը, նիլաւ ձին ու էկաւ թաքաւորի կուշտը։ Բերաց ավուց թաքաւորին դուշը։ Ելա թաքաւորը դուշն ասաւ, բմբալի գայդա, ասեց. Շնորհակալ եմ, գնա։ Մի խարջլրդ էլ ավուց ոչ։

Տղէն վեր կացաւ ելա էկաւ խանը։ Թաքաւորը դուշը դրաց գանձարանի մէջ, պատիցը քաշ ավուց։ Եան թաքաւորը ջիրդ մակի հետ ընկաւ. դուշը խոսում չի, ձէն հանում չի, թաքաւորի սիրտը ուզում ա բերանովը դուս գա, թաքաւորի իլլաջը կտրվեց. Ա՛յ դուշ Ջան, ինչ ուզես կը տամ, թագի հետս խոսա, ես յիմանամ քու ձէնդ ինչ ջուրա ձէն ա։

Դուշն ասեց. Տունդ քանդվի, թաքաւոր, ես ընենց մի ախչիկ եմ, որ արևելքից մեն գաս արևմուտ՝ իմ նմանը քիչիլ չես։ Իմ ուզածը որ բերես, խրխիս կը հանեմ, ես կլինեմ թաքաւոր, դու էլ կլես թաքաւոր գաթի. բոլոր թաքաւորներ կաս, քեզ բախտաւոր կը ասեն։

Ասեց. Ուզա, դուշ Ջան, ինչ որ ուզես՝ ես բերիլ կը տամ։

Ասեց. Իմ ուզածս իմ գարաւաշս ա, Սև ծովի, Սիպտակ ծովի արանքիցն ա. կարմիր գեի ձեռին, էթաս բերես՝ ես գաթի կլինեմ քեզ թաքաւոր։

Ասեց. Դուշ Ջան, ով կը բերի։

Ասեց. Թաքաւոր, ինձ որ էն գժար անելիցը բերաց էն ապին, ընդաց գիլ հեշտ ա՝ կը բերի։

— Դէ, ասեց, գնացէք ապին կանչէք՝ գա։

Գնացին, ապին կանչեցին բերին։

Տղէն ասեց. Ախպէր, կրակի մէջ եմ ընկել. հելա էս հետ էլ էթամ, տեսնեմ ինչ ա ասում։

Տղէն վեր կացաւ գնաց, վոնց որ գայդին էր, թաքաւորին բարև ավուց. ձեռները կապեց կանգնեց։ Թաքաւորը դրա բարևին ասաւ, ասեց. Ա՛յ ապա, գիտես իր եմ կանչել։

— Ես ինչ իմանամ, ասեց, իմ ես կանչել։

— Քեզ կանչել եմ, որ, ասեց, էթաս Սև ծովի, Սիպտակ ծովի արանքիցը կարմիր գեվի ձեռիցը մի ախչիկ կա, իլես, բերես։

— Թաքաւոր, ասեց, ես վոնց եմ դեր մնում ծովը, որ էթամ Սև ծովը, Սիպտակ ծովը յանց կենամ, գեվի հետ կռիվ անեմ, ախչիկը բերեմ։

— Գլուխս, ասեց, շատ տանիլ մի, զաթի կը բերես՝ կը բերես, բերիլ չես՝ գլուխդ կը կտրեմ։

Տղէն եւ դառաւ, ըլէտ լաց ըլլօն գնաց խանը։

Զին ասեց. Հը՛, հըմի ինչ ա ըլել, ինչ ա պատահել։

Ասեց. Ինչ ասեմ, ձի ջան, ոտիդ տակին մեռնեմ, էտ տունը քանդված թաքաւորն ասըմ ա, պըտես էթալ Սև ծովի, Սիպտակ ծովի արանքը, ընտեղ մի ախչիկ կա, կարմիր դէվի ձեռին, կռիւ անես, քաշես, բերես։

Զին ասեց. Այ ապա, լաց մի ըլիր, Ասուած ողորմած ա, դու քամակը մուղաթ կաց. թէք ինկ, քնի։

Էտ քշերը ոաքի թէ տղէն թէք ընկաւ մի պուճուր քնեց։ Յառաւօտը վե կացաւ, վոնց որ էն դանըմը թիմարիլ էր ձիուն, էտ դանըմն էլ ընենց թիմարեց, մի երկու դուռում հաց կիրաւ, ձին քաշեց դուռը, ասեց. Զի ջան, նի՛ ըլեմ, դվորն էթամ։

Զին ասեց. Ռու ինչ պէտկն ա, ես դվորը կէթամ, կէթամ, դու նոխատէս բոշ թող։

Զիու նոխատէն բոշ թողուց, ձին գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, մինակ Ասուած դիդա, հասաւ ծովի ղրաղը։

Զին ասեց. Այ ապա, էս Սև ծովն ա, հըմի վոնց պըտես յանց կենա։

— Այ ձի ջան, ասեց, ես ինչ դիդամ։

Ասեց. Էտ թուրը որ կապել ես վրիդ, ըտու հունարը դիդես։

Ասեց. Չէ, ձի ջան, վոնց որ կապել եմ վրես, ըսկի տեղիցը հանել չեմ։

Ասեց. Էտ թուրը քու հօր թուրն ա, կայծակիցն ա շինած, կը հանես տեղիցը, ոտքը դէմ կանես ճակատես՝ բերանը ջրին, քեզ ճամփա կը տա։ Որ յանց կացար էն դիհը, զաղի միչիցը մի բարակ մուխ ա վեր ըլնըմ, զաղի դառնը կը կանգնես, ձէն կը տաս, կասես. Դէվ, դուս յարի, կռիւ անենք։ Նա կասի. Յարի՛ հաց ուտենք, էթալ չես։ Իրեք հետ որ ասես՝ նա զաղիցը դուս կը գա. թուրը կը հանես՝ վրա կը բերես, դէվի գլուխը կը կտրվի, նի կը ճնի գետնի մէջը, եւ կէթաս ախչիկա կռնիցը կը բռնես՝ կը քաշես թաքդ, թրի բերանն ըլէտ դէմ կանես ջրին, ջուրը ճամփա կը տա, կը բերես ախչիկը, կը տաս թաքաւորին։

Տղէն էլ գնաց, ձիու ասածի պէս ծովն յանց կացաւ, դէվին տվուց սըպանեց, վե կալաւ ախչիկը, բերուց տվուց թաքաւորին։

Թաքաւորն ասեց. Շնորհակալ եմ, դէ գնա. մի խարջլըզ էլ տվուց ոչ։

Թաքաւորն ասեց. Ղուշ ջան, էս ա քու ուզած ախչիկը՞։

Ասեց. Է՞ս ա։

— Դէ, ասեց, ուզածդ բերի, հանա խրխիդ։

Ասեց. Տունդ քանդվի. Թաքաւոր, ես որ խրխիս հանեմ, պատկերս տեսնես՝ կը մեռնես։

— Բա էս վոնց պրտի ըլի, ասեց Թաքաւորը։

Ասեց. Վոնց պրտի ըլի, ասեց, դրկա Կարմիր ծովրմը քառասուն հրեղէն զորախ կա, բեր նրա կաթովը լեղացի, դու էլ դառ հուրի փարի, յիրար հետ ապրենք, որ մեղնից էլած երեխեքը հուրի փարի ըլեն։

Ասեց. Ո՞վ կը բերի էտ զորախները։

Ասեց. Ո՞վ պրտի բերի, ես ինձ բերել ա, իմ դարաւաշին բերել ա, զորախն էլ նա կը բերի։

Թաքաւորն ասեց. Վազէք, ասեց, էն ապէն փախչի ոչ, թէզ վի կալէք, բերէք։

Գնացին տեսան, որ էս ապէն հաց ա ու

Թաքաւորն ասեց. Շատ լաւ կըլի, շատ քշերով կը դրկեմ, կերթա։

Տղէն եւ դառաւ, էկաւ յիրա խանը, Թաքաւորը Թագարէքը տեսաւ, յառաւօտը դրկեց գնաց։ Տղէն էլ ձին նի էլաւ ու գնաց դըրա Կարմիր ծովը։

Որ ծովին մօտացան, ձին ասեց. Տղա, էն որ ասըմ են քառասուն հատ ա, քառասուն հատ չի, եռեսունը ինը հատ ա, մինը մէջս ա՝ եռեսունը ութը՝ քիրա, ես կենա ապա ի, ինադ տրի, էս եռեսուն տարի ա ընկել եմ հօրդ ձեռը. հրմի մէջս ասըմ ա. Ա՞խ, տղէս եվ ընկնել պըտի ձեռս, որ Թիքա Թիքա կոտորեմ։ Ետեւ, ասեց. Ես ծովի դրաղին Թէք կընկնեմ. սրփթա կը բերես բուրթը վրա կը տաս, եռո էլ քէչէն վրա կըտաս, քէչիցը եռն էլ կաշին վրա կը տաս, կերթաս հեռու տաք կը կենաս. ես, ասեց, մի բարակ կը խրինջամ, ծովը յիրար գլխով կը գիպչի, ալեկոծըմ կըլի՝ չվախենաս. եռեւ մէջս, ասըմ ա, ծովիցը դուս կը գա, էն ինչ քվորաինքս են, մի գիհ կը կանենն լաց կըլեն, էն ինչ մէջս ա՝ վրա կը պրծնի ինձ, որ քրքրի. սրփթա կաշին վի կունի իմ վրիցս գէն կը քցի, խօսալ չես, քէչէն էլ վի կունի՝ գէն կը քցի, խօսալ չես. կը հասնի ըրթին՝ ըրթի կէսն էլ որ գէն կածի, կը բեղարի, մի կը ճլըմկոտա, էն վախտը հասի, ոտդ դի օրղանդուն, նիլ վրին, գայիմ նստի, էն վախտը, ասեց, նա հավալամիշ կըլի, նի կըլի երկինքը, որ քեզ օթը խաշի, խակը (խակոյն) կընկնես փորատակը, նա երկնքիցը վի կը գա, կը բերի որ տա գեննովը, նի ինենս գեննի տակը, կը թռչես, ողամարթի պէս թամբի մէջին կը նստես։ Որ նստեցիր, մի ընենց գամշի կըտաս փորատակին, որ կերած կաթը պնչերովը վի գա, ընդուց եռը, ասեց, կասես. Տէրդ ես եմ, գըվորը քշես՝ գէնը կեթա։ Բվորտինքս էլ, ես էլ կընկնենք ենենուդդ, կը գանք։

Էտ տղէն՝ վանց որ ձին ասել էր՝ ընենց էլ կատարեց, գարախը նի էլաւ՝ յիրա քուռակները հետը բերուց Թաքաւորի գոմըմը կապեց։ Գնաց Թաքաւորի կուշտը, ասեց. Թաքաւոր, էս էլ քու գարախները։ Յիրա ձին վի կալաւ, գնաց յիրա խանը։

Ղուշն ասեց. Դէ, Թաքաւոր, կեթել տուր, վախտով լեղացի։

Թաքաւորն ասեց. Ո՞վ կը կեթի։

Ղուշն ասեց. Տնաքանդ, խի բաց Թողիք տղին, էն ա տղէն կեթէր պըտի։

Մարթ ղրկեցին տղին թէ՝ յարի, գարախները կեթա։

Ձին ասեց. Տղա, որ էթըմ ես գարախները կեթելու, ինձ էլ տար՝ ընտեղ կապա, էն վախտը, որ կը կեթես՝ մատանիքդ թելով կը կապես՝ կախ կը տաս պղընձի մէջը, եռեւ թուրդ կը հանես

խնչմերուկ կը դնես վրին, եաև կեթաս զարախները մի մին, մի մին բաց կը թողաս, կը դան պղընձի վրին կը կանգնին, դու ըսենց մի մին, մի մին կը կթես։ Ոչ կթեցիր պրծար՝ շորերդ կը հանես՝ կը լեղանաս, որ թեզայալ պրծար՝ թուրդ կը հանես, կը սրբես, կը դնես տեղը, մատանիքդ էլ կը հանես, կը սրբես, կը դնես մատդ՝ եաև կասես. թաքաւորին ասէք, թող դա՝ լեղանա։ Թաքաւորը որ շորերը կը հանի, կը լեղանայ, էն վախտը որ կը մնի պղընձի մէջ, կոթը կը վառի, թաքաւորը կեռվի, կը դասնա ըսենց մի գունտ բան, վե կունես կը քցես Ջրփորի մէջը, թաքաւորի շորերը վեկունես, կը հաբնես, իսկ (իսկոյն) քու շորերն էլ կը քցես Ջրփորը, եաև կը դաս, թաքաւորի թախտի վրին կը նըստես։

Մանց որ ձին խրատ տվուց, ուղէն էլ կատարեց։ Թաքաւորն էրվեց, յինքը նրա շորերը հագաւ՝ էկաւ թախտի վրին նստեց։

Ղուշը ալրիսին յիմացաւ, որ թաքաւորը վառվել ա՝ յիրա խրխին հանեց, դառաւ մի սիրուն ախչիկ, էկաւ ձեռները քցեց ուղի ճրտովը։ Ես հէնց քու հրմար էս ի աշխատում, ասեց, հրմի դու թաքաւոր, ես թաքուհի։

Ժողովուրթը չիմացաւ թէ ինչ ա ըլել, ինչ չի էլել։ Մի քանի ամիս թաքաւոր նստեց, դոփիլ (յանկարծ) հէրը միտն ընկաւ։ Հէնց որ միտն ընկաւ, նստեց, լաց էլաւ։

Ախչիկը չէկաւ տեսաւ որ ուղէն լաց ա ըլում, ասեց. Ա՛յ քու տունդ շինվի, ինձ ոչէս կնիկ ունես՝ դու էլ մի հատարակ մարթ իր, թաքաւոր դառար, էլ աշխարքի տակին ինչ դարդ ունես, որ նստել ես լաց ես ըլում։

Տղէն ասեց. Թաքուհի Ջան, գլխիդ, արևիդ մեռնեմ, չէ՞ իմ հէրն էլ թաքաւոր ա, հօրս յաշկերը քոռացել ա՝ ես էկել եմ, որ հօրս յաշկերի հրմար դեղ տանեմ, հրմի էկել եմ ըստեղ դայիմ նստել եմ։ Հրմի գիտեմ ոչ, ասեց, հէրս մեռել ա, թէ սաղ ա, ըստ հրմար էլ լաց եմ ըլում։

Ախչիկը ծիծաղաց, ու ձեռները քցեց ուղի ճտովը, ասեց. Ա՛յ քու տունը շինվի, էտ որ քու հէրը քոռացել ա, տասը տարի ենտուցս ման էկաւ կարաց ոչ կանչի, ընդու հրմար էլ քոռացել ա։ Հրմի որ, ասեց, ես տանեմ հօրդ, մատաս աբընացընեմ, քանի հօրդ յաշկերը, էն սրհաթը կը լաւանա։

— Վէր, ասեց, որ ըստենց ա, էթանք քու հօր տունը։

Տղէն կանչեց ժողովրթին, մի լաւ հաց տվուց. Մի լաւ թաքաւոր ընտրէք ձեզ հրմար, ասեց, ես յուրիշ երկիր պրտեմ էթալ։ Ես կը դամ, ես ըսկի չեմ դալ։

Ժողովուրթն յիրանց հրմար մի մարթ քթան, դրին թաքաւոր,

ախչիկն ու տղէն շնորհակալութուն տրին, հասարակ շորեր հագան, յիրանց համար ճամփի խարջլըղ վե կալան, եկեսուինինը զարախը դուս քաշեցին, մին էլ էտ վորձ ձին, վորց ձին նի էլաւ կնիկը, մենձ զարախն էլ տղէն նի էլաւ, շնորակալութուն արին ժողովուրթիցը, դուս էկան քաղաքիցը, մի օրվա ճամփա էլ բերին ճամփու դրին, ժողովուրթը դառաւ յիրա տեղը, տղէն գնաց հոր քաղաքը։

Քաղաքի ղրաղին մի չորան քթաւ, ասեց. Թաքաւորին յաշկալիս տար՝ ասա. Յաշկդ լիս ըլի, քու տղէն էկաւ։

Զորանը գնաց ասեց. Թաքաւոր, յաշկդ լիս ըլի, քու տղէն էկաւ։

Թաքաւորն ասեց. Զորան, ինչ ա բերըմ հետը տղէս։

Ասեց. Փառասուն կապիտ (կապոյտ) ձի ա, համ էլ մի շատ սիրուն կնիկ ա հետը։

Թաքաւորն ասեց. Էհ, փառք քեզ Աստված, թէ հեռու ման էկա, մօտիկ քթա։ Գնացէք, ասեց, չորանին մի կոտ վօսկի տվէք։

Տղէն հասաւ տուն, գնաց հոր ձեռները պաչեց, հէրը նրա թուշը պաչեց, թաքուհին բերուց մատը կարեց, արինը քսեց թաքաւորի յաշկերը, որ քսեց՝ թաքաւորի յաշկերը բացվեց, թաքաւորը վե կացաւ, էտ ախչկա ճակատը պաչեց, թաքը վե կալաւ դրուց տղի գլուխը՝ ասեց. Ըստուց ետը թաքաւորութունը քեզ ա տալըմ, թաքուհութունը՝ սրան։

Նրանք հասան յիրանց մուրազին, դըք էլ հասնէք ձեր մուրազին։

Երկնքից իրեք խնձոր վեր ընկաւ, մինն ասողին, էրկուսն էլ յանկաջ դնողին։

ՀԱԶԻ–ԴԻԼՊԱՐԻ ՀԵՔԵԱԹԸ

(Գիւլաբլու Մակուեցիներ *)

Ժամանակով մէկ թագաւոր կար, ունէր քառասուն տղայ։ Էտ թագաւորն ասաւ, թէ ես պըտի ըզնեմ երկրներ ման գամ, էնենց մէ տուն գտնեմ, որ մէ մարդի քառասուն աղջիկ ըլնի, ուզեմ իմ քառասուն տղին, օր ուրանց մէջները խլրտմունք չըլնի, չը բժրկտուին, խղճըլնան։

Էլաւ ուրան վազիր, վաքիլ վերուց, բաւականի փող վերուց, գնաց երկրներ ման էկաւ. մէկ տուն գտաւ, քառասուն ախչիկ, ուզեց ուր քառասուն տղին։ Էկաւ ուրա տունը, ուրան մարդիկը էկան թագաւորին տեսութան։

—Թագաւոր, դո՞ր գնացիր։

—Գնացի իմ տղէք նշանի, մէկ տուն քառասուն ախչիկ գտայ, նշանի իմ տղերքին։

Մէկ ժամանակ մնաց, թագաւոր պատրաստութեն տեսաւ, գնաց խարսներ բերելու։ Տղէներ յըմմէն տարաւ. բաւականի դոշուն տարաւ։ Պզտի տղէն չգնաց։

Թագաւորն ասաւ. Ինչի՞ չէս գայ։

Ասաւ թագաւորին պզտի տղէն. Թագաւոր, որ մենք յըմմէն գանք, մեր տուն կառավարող չկայ, դու գնացէք։ Ես կը մնամ տուն կառավարեմ։ Թէ էս տեխէն էթալու, թէ էն դեխէն դառնալու Ղըզըլ—Խարաբէն չը մնաք։

—Ինչի՞, թագաւորի տղայ։

—Էնտեղ վտանգաւոր տեղ ա, լաւ տեղ չէ։

—Շատ լաւ, կասէ, շատ լաւ կասես։ Իմաստուն էր պզտի տղէն, թագաւորին յայտնի չէր թէ ուրան տղէն իմաստուն ա։ Գնացին մարդիկը։ Գնացին խասան էտ գեղը, թագաւորի խնամու տունը, իրեք չորս օր մային էտտեղ, ուրան խարսներ պատրաստեց, նաղարով, զուռնով, խաղով, ուրախութենով վերուց էկաւ։ Էկան չուր Ղըզըլ—Խարապէն։ Ղըզըլ—Խարապէն շատ լաւ

---

*) Պատմեց 1912 թ. Օգոստոսի 11-ին Գիւլաբլու գիւղում նոյն Դաւիթ Խալաթեան Աւետիսեանը։

թաքաւորութիւն չես ըստանա։ Արի տես որ, Խոսրով շահը վե կացաւ, իրա թաքաւորական շորերը վե կալաւ, կորաւ։ Գնաց մի քաղաքի թուշ էլաւ, գնաց քաղաքի բաղարը, մի տէրտէր դրան առատ էկաւ, ասեց. Որթիս, նոքար չ՞ս ըլի։

Ասեց. Կըլեմ, տէրտէր։

Ասեց. Կարես լաւ մեհտարութիւն անի, ձի պահի։

Ասեց. Լաւ։ Գնաց մեհտարութիւն արուց։ Տէրտէրը քշերը իրա կնիկա հետ մտածեց, որ սա նոքարացու չի։

Կնիկն ասեց. Տէրտէր, բեր սրան շինենք մեր առաչը աշբաղ (խոհարար)։

Էս տղին մեհտարութունից հանին, շինին աշբաղ։

Խոսրով շահը շատ լաւ զուլլուզ (ծառայութիւն) արուց։ Մարթ ու կնիկ քշերը մտածեցին. կնիկն ասեց. Տէրտէր, սա նոքարացու չի, սա՝ էս թաքաւորի ցեղ ա, էս երանալի տղա ա։

Տէրտէրին ունէր մի հատ ախչիկ, տղա զաւակ չունէր։ Ինքը շատ հարուստ էր, ասեց. Մարթ, ասեց, բեր մեր ախչիկը տանք էս տղին։ Իրիկվա հացիցը էտ կանչեցին Խոսրովին. Խոսրով, ասեց, իմ ախչիկը կառնես, որ տամ քեզ։

Խոսրովը ասեց. Տէրտէր, որ դու տաս՝ ես կառնեմ։

Առաւօտը տէրտէրը մարդիկ կանչեց, նշան ավուց, Խոսրովը էլաւ էս տան տղէն. սկսեց նոքարներ բռնել, լծկանը բռել, տունը լիքը։ Տէրտէրը բերեց դրան փսակեց, տունը էլաւ իրանը։ Խոսրովը իրա վար ու ցանքի հետ էր, իրա թաքաւորի լայեղ շորերը տարել գոմշի մսըրքումն ա պահել։ Մի երկու տարի քաշեց, դրա կինը էտ ընկաւ (յղիացաւ)։

Ցարի՝ խաբարը տանք Խոսրով շահի հօրիցը, թաքաւորիցը։

Թաքաւորը ծերացել էր, օտար թաքաւորներ էկան վրին կռիւ, ասեց. Գնացէք, ասեց, ծերացել եմ, իմ Խոսրովին քթէք։

Դրա նաղիր վազիրը ձի նստեցին աշխարը ման գալու. էկան էն քաղաքը, որդի Խոսրովն էր ապրում։ Հարցրեցին, թէ ըստեղ Խոսրով անունով տղա կա՞։

Ասեցին. Տէրտէրի փեսէն ա։

Դրա նաղիր վազիրը էկան տէրտէրի տունը զօնաղ։ Տէրտէրը, հարուստ մարթ՝ դրանց պատվեց։ Աշընքվա ժամանակն էր, Խոսրովը ցել էր ջրբմ. զօնաղների հետ որ էլան, բոլորի մտիցը գնաց Խոսրովը. դրա կնիկը պատճառաւոր կնիկ էր, էկաւ մօրն ասեց. Մէրիկ, ախր Խոսրովը հրմի սոված մահացաւ. մի մարթի որ հէր ու մէր չունենա, մի՞թէ նա պէտք ա սոված մահանա։

Ասեց. Որթի, էս զըզար զոնաղը թողալ չի ըլիլ, վեր, հաց վեկալ, տար քու մարթին։

—Չէ, չէ, վիշապ ախպէր, չեմ խաբէ, կօղօրկեմ գայ։

Վիշապ ճամբաս տվեց Թագաւորին, ուր զօշունին, ուր տղերքին, ուրան խարտներին, էկան խասան ուրանց քաղաքը՝ նիաթ, տխուր։

Պղտի տղէն խարցուց Թագաւոր, ինչի ուրախութին չէք էնէ։

—Որդի Ջան, ջանս կը ցաւայ, նեղացեր եմ։

—Չէ, չէ, Թագաւոր, ասա տեսնամ։ Ես քեզ չասի՞ Ղըզըլ—Խարապան մի մաց, վիշապն էկաւ ձեզի ըրռնաց։

—Խա, որդի Ջան, էկաւ, ըռնեց։

—Ի՞նչ ասաւ, Թագաւոր։

—Քնզի կուզէր։

—Վնաս չունի, Թագաւոր, ես կեթամ։

—Չէ, որդի Ջան, մի գնա։

—Հապա ինչ, Թագաւոր։

—Խափեցի, ճամբաս տվեց էկանք, էլ բան չկայ։

—Թագաւոր, էնի խափվող մարդ չէ. որ ես չեթամ, կուգայ քաղաքի բոլոր կը բռնայ, յըմմէն կը կոտորայ, ես կըլնեմ պարտական։

—Դու, Թագաւոր, իմ ախպէրներ պսակա, իմ կնիկն էլ պախայ՝ քառասուն օր իմ ճամբաին իշկայ, էկայ՝ էկայ, չեկայ՝ զաթի չէկայ։

Շնորհակալ էղաւ ուրան հօրից, ուրան մօրից, ուրան ախպէրներից, խարտներից. Իմ ճամբաս իշկացէք չուր քառասուն օր, Է կեցէք բարով, ես գացի։

Թագաւորի տղէն գնաց։ Գնաց, խասաւ Ղըզըլ—Խարապէն։ Վիշապը տեսաւ որ տղէն էկաւ, սարից յիջաւ։ Հա, Թագաւորի տղայ, էկա՞ր։

—Էկայ, վիշապ ախպէր։

—Գինաս ինչի իմ զանչէ քեզի։

—Ինչի՞ ես զանչէ, վիշապ ախպէր։

—Էթաս Հաղէ—Դիլպար բերես։

—Է՞ վիշապ ախպէր, եսիմ Հաղէ—Դիլպար դո՞ր ա։

—Գնա խարցընելով գտի։

—Ո՞ր կողմն էթամ։

—Գնա Թըղ արևմուտ։

Տղէն գնաց։ Գնաց հասաւ մէկ եօթ ճամփա բաժին. տեսաւ որ մէկ խալիվոր մարդ նստէ ըստե, բարև տվեց էտ խալիվորին։

Էտ խալիվորն ասաւ՝ Թէ տղայ, դո՞ր կերթաս։

Թագաւորի տղէն ասաւ. կեթամ Հաղէ—Դիլպար բերելու։

—Թագաւորի տղայ, էն վիշապն օղորկեց քեզի։

պղինձ ջուր դրուց, հաղրեց, Խոսրովը էկաւ, դրուց դրան թեշտի մէջը, չինչին (մաքուր) լեղացրուց, իրա թաքաւորութան շորերը հաքցրուց, ընչաք էտ օրը չէր տեսէ, թէ թաքաւորութենի նշանները ունի դրան։ Որ տեսաւ՝ կնիկն էլ զարմացաւ։ Թաքուլը սանդղերից, քցեց քամակը, քթակը դրուց գլխին, ուրախանաս՝ ինչ որ էտ կնիկը ուրախացաւ, թէ փառք քեզ Աստված, որ իմ մարթը թաքաւոր ա։ Թուրը կախ տվուց վրին, մոնց որ թաքաւոր. վեր կացաւ, գնաց վիրև, վերի օթախները նստած քէֆ ին անում թաքաւորի վազիր, նազիրը և տէրտէրը. նեքսև մտնելու միչոցը նազիր, վազիրը վե կացան, դրան գլուխ վե բերին, մինչև անքամ տէրտէրն էլ չը ճանանչեց, որ իրա փէսէն ա։ Տեղ շանց տվին, էկաւ նստեց։

Դրանք գլուխ վե բերին, ասեցին. Զէ, Խոսրով շահ, թաքաւորը քեզ ուզում ա։

Տէրտէրը շատ ուրախացաւ, ասեց. Փառք քեզ Աստված, որ իմ ախչիկը արժանացաւ թաքաւորի։

Էկաւ էտ քշերը մեացին տէրտէրին զօնագ, պատրաստութուն քաշեցին, առաւօտը դուս ըլելու։ Խոսրովը էկաւ, առաւօտը, ձի նստեցին, մի ձի էլ պատրաստեցին բերին, որ իրա կնկանը նի հանի։ Կնկանը նի հանելու ժամանակը, պատճառաւոր կնիկ էր, ոտը որ ուզեցաւ դնի օրդանդուն՝ նրանից դուս էկաւ մի բարակ քամի։

Ասեց. Վե դրէք իմ կնիկը, մեղք ա։ Ասեց. Առ իմ աջու կռան բազմանդը, ինքը ամօթ արուց, ասեց, թէ կը բերես տղա՝ իմ թաքաւորութան բազմանդը կը կապես կուռը, թէ կը բերես ախչիկ՝ կը պահես կուշտդ, ուրախութեամբ, որ գլուխս ազատվի, ես կը դամ, քեզ կը տանեմ։

Բաշեց մի ամիս, երկու ամիս, բարի ճամփա Խոսրովին, տէրտէրի ախչիկը ազատվեց, բերուց մի հատ տղա, անունը դրին՝ Բարակ շահ։ Շատ երկար չասենք, էս տղէն դառաւ մի տասը տարեկան, տէրտէրը վեկալաւ, տվուց ուսումարան։ Ում էրէխէն տարեկան էր սովորում, դա օրական էր սովորում, օրական էլ մեծանում էր։ Ենպէս մի ղլաթով տղամարթ դուս էկաւ որ՝ էրէխանց հետ հաղ անելու վախտը ձեռը որին քցում էր՝ ջնասում էր, ընենց էլաւ որ՝ դրա վարժապետները դրան հաղից արքելեցին, չին թողում, որ հաղ անի, որին ձեռ էր տալի, ջնասում էր։

Բաղաքի մարթը լսեց, որ դա Խոսրով շահի տղէն ա, սկսեցին դանգատվել տէրտէրին, որ քու թոռին հեռացրա։ Էրեխէն էլ

ղացպան Թաղաւորի տղի բարևն առաւ։ Թաղաւորի տղայ, դոր կեթաս։

—Ջաղացպան, կէթամ Հաղէ—Դիլպարին առնելու։

—Վիշապն օղորկից քեզի։

—Հա, Ջաղացպան։

—Ջօռն ա, չես կանայ բերէ։ Ջանդըկից բատան ա շինէ Հաղէ—Դիլպար, գլխից բուրջ, մացէ մէկ հատ պակաս։ Թաղաւորի տղայ, դու ինձի բարև տվիր, ես քի մէ խրատ տամ։

—Ասա, Ջաղացպան։

—Էս իմ մուրքից մէ մազ կըտամ քեզի, քառասուն ղազան կերակուլ, քառասուն օչխար մորթեն, էփեն դնեն ղազանների վրայ, եօթը Ջաղաց գախընցագաղ ալուր աղայ, թըխեն խաց, մէ գիշեր մէննակ պըտի ուտես էտի, խըլըսցընես, որ Հաղէ—Դիլպար քեզի առնի. էն ժամանակ իմ մուրքի մազ կըտաս կրակ, ես որ խասայ, քի բան չունիս։ Գլոխ քար, մէ օր էլ է կշտանամ։ Դէհ գնա, Աստված քու բան յաջողայ։

Գնաց խասաւ Հաղէ—Դիլպարի քաղաք. մէ օր, երկու օր քաղքի մէջ պըտրտաւ, քաղքի ամէն վերը դիր յիմցաւ, գնաց նստաւ վըր Հաղէ—Դիլպարի բինակ—տաշուն (խնամախօսի քար)։

Հաղէ—Դիլպարի ջառիէքը Հաղէ—Դիլպարին ասին. Հաղէ—Դիլպար, քիզի ուզող է էկէ։

Հաղէ—Դիլպարն յէլաւ դուս, տեսաւ որ մէ լաւ երիտասարդ տղայ. Հա, Թաղաւորի տղայ, ընչի՞ ես էկէ։

—Հաղէ—Դիլպար, էկեր եմ քե առնելու։

—Կանաս իմ արած բանները կատարէ, որ առնեմ քեզի։

—Աստված օղորմած ա, Հաղէ—Դիլպար։

—Ես կանայ, Թաղաւորի տղայ, լաւ տղայ ես, ափսոս ես, քեզի կսպանեմ, արի էթանք քեզի լաւ պատվեմ, ճամփու դնեմ, գնա։ Բադանից մէ ջանդակ է պակաս, շատ քեզի պէս ջահիլներ էկած ա, չկարցած ինձի տանել, ըսպաներ եմ։

—Ջէ, Հաղէ—Դիլպար, ինչ կանես արա, ես կայնուկ եմ։

Հաղէ—Դիլպար դանչեց ուր ջառիէքին. Գնացէք մէկ չամի գերան բերէք, մէ հատ քիչից ուրագ բերէք։ Գնացին բերին պատրաստին։

—Թաղաւորի տղայ, էս պըտի ջարդես ուրագով էս գիշեր։

Տղան ասաւ. Շատ լաւ, Հաղէ—Դիլպար։

—Էս տղին տարէք պատվէք, Հաղէ—Դիլպար կասայ։

Տարան տղին պատվեցին, մացին չուր իրկուն։ Իրկուն տղէն գնաց չամի գերանը ըսկսեց ջարդել, խալիվորի մազ քաշեց ուրկի բերան, յելաւ պողպըտից ուրագ, էտ գերանը ջարդեց. ու-

կուռը։ Խոսրով շահը վախեցավեց տղին։ Մի քանի օրից ինքնա Բարակ շահին դոշուն տվուց, ղրկեց որ իրա կնկանն ու անորը բերեն իրա կուշտը։ Բարակ շահը գնաց բերուց։

Բարակ շահը Խոսրով շահի պէս աչքութուն էր անում. մի հինգ—տասը տարուց նոր Բարակ շահը խելքին հասաւ, միենուն հոր ասածի պէս էկաւ, կանչեց հոր առաջը. Վեր արի, ասեց, թախտիցդ, ես նստեմ թաքաւոր։

Խոսրով շահը մտածեց, ասեց՝ Փառք քեզ Աստված, իմ աբրածը իմ առաջն ա դալի։

Ասեց. Որթի, ես ջահել եմ, դու մոնց նստես թաքաւոր։

Ինադ արուց Բարակ շահը, դուս էլաւ՝ գնաց։ Գնաց, մէկ էրկու օր քնահարամ մնաց, գնաց մի աղբրի մօտացաւ, քունը տարաւ՝ քնեց։ Մի վախտ յանցկացաւ, մտիկ տվուց որ կողքին մէկը բրթըմ ա, վեր կացաւ, տեհաւ որ մի հատ ձի։

— Հը՛, ասեց, անասուն, ինչ ես ուզըմ, քնիս լաւ վախտն էր։

Էտ ձին Աստծու հրամանով լիզու էլաւ, ասեց. Վեր, Բարակ շահ, պէտկա տանեմ, քու մուրազին հասցնեմ։

Վեր կացաւ, ասեց. Քու անումը ինչ ա։

Ասեց. Իմ անունը Բուրքուն Ջանլաթ ա։ Ասեց. Աստված ինձ ղրկել ա քու կուշտը, որ տանեմ, քու մուրազին հասցնեմ։

Ձիու վրին ամէն բան պատրաստ էր, նի էլաւ ձին, ասպպանները կապեց, ընկաւ ճամփա։ Գնաց, հասաւ մի ձորի մէջ, ձորի միջին մտիկ տվուց, որ մի լաւ տներ կա շինած։

Բուրքուն Ջանլաթն ասեց. Վեր արի։ Վեր էկաւ։ Ասեց. Իմ զօլանները շատ դայիմ ձքա։ Ձքեց։ Ասեց. Նիլ։ Նիլաւ։ Ասեց. Բարակ շահ, էս տները որ կա շինված՝ էս Օղուզի տներն ա, դրան ունի էրկու քիր, դու պըտի էթաս, նիլես վիրև, դրան պըտի զուռես, քլորտանքը կը մատեն, մենձը կասի մի պուճուր մարթ ա, չի կարալ մեր ախպօրը զուռի, պուճուր քիրը կասի։ Դրա ձին մեր ձիուն կը զուռի, դա էլ մեր ախպօրը կը զուռի։

Բուրքուն Ջանլաթը ասեց՝ Բարակ շահ, գնամս հանա։

Գնամը հանեց, բրախ տվուց։ Բուրքուն Ջանլաթը հասաւ Օղուզի ձիու եալիցը բռնեց, տվուց գեննովը։ Բարակ շահը թուրը քաշեց, նիլաւ վիրև։ Էտ ախչիկերքը մտածեցին. Որ ձին ձիուն զուռեց, դա էլ մեր ախպօրը կը զուռի։ Թուրը ձեռին նիլաւ վիրև, Օղուզը որ տեհաւ՝ դողն ընկաւ ջանը, վեր կացաւ, գլուխը վեր բերուց, ասեց. Էս զամաթ ա, էկել ա, իմ քլորտանց մինը կտամ սրան։ Մենձ ախչիկը մտածեց, որ ես կառնեմ, պուճուրը

Յետոյ դուս, դանչեց ուրան հէրը, իշխանները. վաքիլը, վազիրը։ Էկան թոլի էլան, սկսեցին թագաւորի տղէն ու Հազէ—Դիլպար գիւլաշ կանչել։

Հազէ—Դիլպարն ասաւ, թագաւորի տղին. Թագաւորի տղայ, դու ընձի վրայ չես կանայ, ես զվաթով եմ, որ կը խասնենք յիրար, ես ընձի թոյլ կը տամ, դու տվի գետին։

Էտենց էլ էլաւ, Հազէ—Դիլպար գնաց ուրան օթախը, քառասուն տա փիլաքան բանձր մէկ զաղան բերեցին, քառասուն կանթէն, բերին գինին լիքը լցին, երկու մարդ տկլոցբրին, կայնեցրցին փիլաքաններու տակը, Հազէ—Դիլպար թագաւորի տղին ասաւ. Թագաւորի տղայ, էս իմ մատանիք կըտամ քեզի, կը բռնես ձեռդ, էն զաղան պրտի վերուն դնեն վրը քու թևին, էս քառասուն փիլաքան պրտի բանցրրցուս՝ բերես մօտ ընձի. մուզաթ կենաս՝ մէկ կաթ չթափի, որ թափաւ՝ իմ խէր քեզ կըսպանի։ Իմ էս մատանիք կը քցես զաղանի մէջ, որ մերվի՝ չթափի։

Իսկ էտենց արեցին. զաղան դրին վրը թագաւորի տղի թևին, առաւ յեկաւ, մէկ կաթ էլ չթափաւ, տարաւ դրեց Հազէ—Դիլպարի կուշտ, Հազէ—Դիլպարի ձեռնէն բռնեց, առաւ էկաւ։ Էկաւ. հասաւ հալիվորին, խալիվորն ասաւ. Թագաւորի տղայ, բերիր Հազէ—Դիլպար։

Թագաւորի տղէն ասաւ. Բերի։

—Հազէ—Դիլպար, հալիվոր կասայ, օխտանասուն տարեկան եմ, քու սիրուն էս ճամփու վրէն նստելով սիվտրկայ, դու ըլնես քո Աստված, արի նստիր, իմ գլուխ դնեմ քո չոքի վրէն քնեմ, իմ կարօտս թեն քեզնէ առնեմ, ել գնա։

Հազէ—Դիլպարը էկաւ նստաւ, խալիվոր գլուխ դրեց Հազէ—Դիլպարի չոքի վրէն, քնաւ. որ ուրա քուն առաւ, խալիվորը դարձաւ խոզ։ Հազէ—Դիլպար բերեց էն խալիվորի վրէն մէկ քումբէթ շինեց, քումբէթի վրէն գրեց. Այսիկ Հազէ—Դիլպարի սիրած խալիվորն է, որ նրա սիրուց խոզ դարձաւ։

Յետոյ ընկան ճամբախ՝ գնացին. էկան հասան Ղըզըլ—Խարարէն։ Վիշապ որ սարից տեսաւ, ֆշշալով էկաւ հասաւ։ Երկուզն Հազէ—Դիլպարին առաւ։

—Ա՛խ, թագաւորի տղայ, թէ ես գինի ինձի պիտի բերիր էս վիշապի համար, քեզի շատ սաղ կը թողի։

Վիշապն ասաւ. Հազէ—Դիլպար, մի վախեցի, մի վախեցի, բան չեմ տէ։

Վիշապը էկաւ հասաւ Հազէ—Դիլպարին, ասաւ. Հազէ—Դիլպար, նստի, իմ գլուխ դնեմ քո չոքի վրայ՝ քնեմ։

Հազէ—Դիլպար նստաւ՝ վիշապ գլուխ դրեց ընտրա չոքին,

մէնքը մի ձի նիլան։ Դնացին ճամփի կէսը հասան, ասեց. Օղուզ, էս ախչիկնքանց ովը կառնես։

Օղուզը մտածեց. Ասեց. Թէ մինձին առնեմ, կասի՝ Մինձը ես եմ. թէ պուճուրին կառնեմ, պուճուրը սիրուն ա, մտածեց Օղուզը, ասեց. Եաշով մինձ եմ, մինձին կառնեմ։ Աղէս, ասեց, ես կառնեմ մինձին։

Բարակ շահը շատ հաւանութուն տվուց Օղուզի դըրբցին, ասեց. Դէ, Օղուզ, էս քու կնիկը, էս էլ իմ կնիկը, ովի իլղար (բաշիբեարթմա) անենք, որ քունը ոդա բերի, իմ ախչիկը տամ, քունը ախչիկ բերի, քու ախչիկը տու իմ ոդին։

Էկան տուն։ Օղուզի քվերատանքը սխակալեցին, որ իրենց տուս ոչ, էս ախչկանն տուս, ասեցին, դրանից որ երեխա ելի, քցենք ծովը։

Էկաւ մի տարի անցկացաւ, Օղուզի կնիկն էլ, Բարակ շահի կնիկն էլ երկուքնըրսացան, Օղուզի կնիկը բերուց ախչիկ, Բարակ շահի կնիկը բերուց ոդա։ Բարակ շահի, Օղուզի արհեստը աչքութունն էր. էթիմ ին աւ անիմ, բերուս ոդրուս։ Օղուզի ախչկա անունը դրին Բաղդիկ, Բարակ շահի ոդի անունը դրին Տղա Շիրին։ Բարակ Շահը որտի ուրախութունից Թուրքուն Ջանլաթին մատմոռ արուց։ Տղա Շիրինը էկաւ մեծացաւ, դառաւ տասներկու տարեկան ոդա։ Օղուզի քվորատանքը իրանց ախալոր ախչկանը զոդացան, դրին մի զութու մէջ, մուշամբեցին, քցեցին ծովը։ Էս զութին գնաց գէմ էլաւ մի ջաղացի նաւի, հանեցին, բաց արին զութին, տեհան միչին ախչիկ էրեխա ա, տարան քաղաքի թաքաւորին ընծայեցին։ Թաքաւորը շատ ուրախացաւ էս ախչկա վրին, ասեց. Պահեմ մեծանա, ուզեմ իմ ոդին։

Օրերի մի օրը Բարակ շահը հարցրուց Օղուզին. Ո՞ւր ա Բաղդիկը։

Ասեց. Բաղդիկը մեռել ա, քվորատանքը հաւատացրել ին, թէ Բաղդիկը մեռել ա։

Տղա Շիրինը սկսեց հոր արհեստը բանացընել, թվանքը վի կալաւ, գնաց աղուզ։ Ճամփին մի պառաւ կնիկ ռաստ էկաւ, կուժը դարդակ, տվուց պառաւ կնկա կուժը ջարթեց։

Ասեց. Որթի, խի՞ ես ջարթիմ կուժս։

Ասեց. Դարդակ էկար առաչս։

Ասեց. Թէ նամուսով ես, գնա քու Բաղդիկըդ առ, հրէ Իրմէց երկրբին ա։

Տղա Շիրինը հանեց մի հատ իրեքանոց, տվուց պառաւին,

ասեց. Գնա, քե հմար կուժ առ։ Էլ դնաց ոչ ուի, եա դառաւ էկաւ տուն, սկսեց լաց ըկալը։

Բարակ շահն ասեց. Որթիս, խի՞ ես լալի։

Ասեց, Իմ Բաղդիկը ուր ա, պէտկա ես գնամ Բաղդիկին առնեմ։

Ասեց. Բու Բաղդիկը մեռել ա։

Ասեց. Ոչ, չի մեռել, պէտկա էթամ քթնեմ։

Մէկ օր, երկու օր շատ լաց էլաւ, Բարակ շահը մտիկ տըվուց, որ չէ, տղի խաթրը չի կարալ առնի, զաֆըլդան (յանկարծակի) միտքն ընկաւ Բուրքուն Ջանլաթը։ Վեր կացաւ, գնաց Բուրքուն Ջանլաթի կուշտը, մտիկ տվուց, որ Բուրքուն Ջանլաթը էնդար ա լաց էլել, զարնել ա, դարձել ասեց։ Բուրքուն Ջանլաթին դուս քաշեց, տարաւ ծովի ղրաղը, չին չին (մաքուր) լեղացրուց, բերուց դրուց առաջը ծաղիկ հոնչա, իրիկունը բերուց տվուց լաւ դարի, մի իրեք—չորս օր լաւ պահեց, Բուրքուն Ջանլաթը էփէչա չաղացաւ։ Բուրքուն Ջանլաթը լիդաւ էլաւ Բարակ շահին ասեց. Քանի տարի ա ինձ մտիկ չիր անում, ինչն ա ըստիպել, որ էս քանի օրը ինձ լաւ ես պահում։

Պատասխանեց Բարակ շահը. Իմ Բաղդիկը չի մահացել, ողջ ա, տար Տդա Շիրինին, բեր Տդա Շիրինին։

Պատասխանեց Բուրքուն Ջանլաթը, ասեց. Տանեմ Տդա Շիրինին, ոչ բերեմ Տդա Շիրինին։

Սկսեց ապաչել Բարակ շահը Բուրքուն Ջանլաթին։

Բարակ շահի խաթրը չը կտրեց Բուրքուն Ջանլաթը, ասեց. Տանեմ Տդա Շիրինին, բերեմ Տդա Շիրինին։

Էկաւ Բարակ շահը, դուս քաշեց Բուրքուն Ջանլաթին, կանչեց Տդա Շիրինին. Հը՛, ասեց, որթի, գիտես Բաղդիկի տեղը։

Ասեց. Հարցնելով կը քթնեմ։

— Դէ, ասեց, էս իմ ձին, էս դու, նիլ իմ ձին գնա, Բուրքուն Ջանլաթը՝ որտեղ ըլի, կը քթնի։

Հարաւ իրա մարուը շարիրը, կապեց իրա տապարները, նի էլաւ Բուրքուն Ջանլաթը, ասեց. Հը, տղա, ինձ քշես ոչ, ես իմ կամքովը կնթամ։

Երկար ճամփա գնացին, ճաշին, մտիկ տվուց ճանապարին, տեսաւ երկու ամպ կռվում են, տղեն երկուղեց, սկսեց կանչիլը։

Բուրքուն Ջանլաթը ասեց. Վեր արի, իմ զոլանները զայիմ ձքա։

Վեր էկաւ, կապեց։

Ասեց. Նիլ, քաշի թուրը, էնպէս ինձ կօրզանդես, որ փորս

ծակի, ես շատ որ եկին կեթամ, թուրը կը քցես, սև ամպի մէջ-տեղիցը կը տաս։

Ձիուն որ շատ քշեց, սև ամպին հասաւ, սև ամպի մէջտեղի-ցը ավուց կարեց, ձին անցկացաւ։ Բաւականի գնաց, ետ մտիկ ավուց՝ սիպտակ ամպը քամակիցը գալիս ա։

— Հը՛, ասեց, Բուրքուն Ջանպաթ, հասաւ ինձ, հըմի կը սը-պանի։

Ասեց. Ինձ ետ դարձրու, թուրը քաշա։

Ետ դառաւ Տղա Շիրինը, թուրը քաշեց, ամպը պատռեց, միչիցը դուս էկաւ մի սիրուն մարթ, ուղեցաւ որ տա էտ մար-թին, ասեց. Հը՛, Տղա Շիրին, ես քու քեռին եմ, ինձ մի սը-պանի։

Ասեց. Մենց իմանամ, որ դու իմ քեռին ես։

Ասեց. Բու մէրն ու Օղուզի կնիկը իմ քվորտանքն են. Օղու-զիցը էլել ա Բաղդիկը, Բարակ շահիցը դու ես, որ անունդ ա Տղա Շիրին։ Էտ ամպը էկել էր, որ ինձ սըպանի, սաբաբը (պատ-ճառ) իմ քվորտանքը, լաւն էն էր որ դու դրան սըպանեցիր, ես էլ դամ քեզ օգնեմ, էթանք Բաղդիկը ըերենք։

Իրա քեռին ընկաւ առաջ, մտիկ ավին, որ մի քաղաքի մո-տացել են, քաղաքի նախրչին մի անծին էրինջ դրել ա մզրախի ծէրին ու դրել յուսին։ Տղա Շիրինը ասեց. Ա՛յ մարթ, մեղքը չի՞ էտ անասունը, դրել ես յուսիդ։

Ասեց. Ես էս քաղաքի նախրչին եմ, շաբաթը մի ընենցը վայ (բաժին) ունեմ, պըտի՞ տանեմ տուն ուտեմ, համեցէք, դուք էլ էթանք ինձ զօնաղ։

Տարաւ իրա տունը, նախիրը բաց թողուց քաղաքը, էրինջը էկաւ քերթեց, նախրչու կնիկը վի կացաւ, կոնները քշտեց, օջաղը վառեց, միսը կոտորեց, զօնաղների հըմար լաւ խաշլամա արեց։ Էտ նախրչին ձին տարաւ կապեց գոմըմը, Տղա Շիրինի քեռին գնաց ձիու կուշտը, նա անմահ էր, հաց չէր ուտում, Տղա Շիրի-նը, նախրչին և նախրչու կնիկը նստեցին լաւ կեր ու խումի, դինին դրին առաջները, խաշլամէն դրին կողքները, շատ անուշ կերան, խմեցին, էկան թէք ընկան քնելու։

Խաբարը տանք, որ նախրչուն մարթկութուն չունի, կնիկն էլ շատ սիրուն ա, նախրչին որ քնում ա, մեռի պէս ա դառնում։ Բշերվա մի միչոցը նախրչու կնիկը վի կացաւ, մտաւ Տղա Շիրինի ծոցը։ Զահէլ տղա, սիրուն կնիկ. իրար հետ քէֆ արին ընչար լիս։ Առաւօտը նախրչին վի կացաւ, գնաց նախիրը, էս տղէն Բաղ-դիկին մատանան արուց, նախրչու կնկա հետ սիրահարվեց։ Կա-ցաւ ընչար վեց ամիս դրա կշտին։ Դաֆիլ Բաղդիկը միտն ըն-

կաւ։ Գնաց Բուրքուն Ջանլաթի կուշաը։

— Էլ՛, ասեց, Տղա Շիրին, անջախ ընկա միտդ։

Վէ կացաւ, ձին դուս քաշեց, նի էլաւ ձին, քեռին ընկաւ առաջ, երկաը ճամփա գնաց. մի ծովի թուշ էլաւ։

Քեռին ասեց. Գնա՞ քու Բաղդիկին բեր, ես ըստեղ կը կենամ ընչար քու գալը։

Բուրքուն Ջանլաթին Տղա Շիրինը քցեց ծովի էրեսը, էնպէս անցկացրուց Տղա Շիրինին Բուրքուն Ջանլաթը, որ սաը չը թրջվեց. գնաց մի քաղաքի թուշ էլաւ. տեսաւ մի պառաւ կնիկ կանգնած ա. Բարև քեզ, ասեց, նանի։

Ասեց. Բարով, հազար բարով, որթի։

— Նանի, ասեց, զօնաղ չէ՞ ուզիլ։

— Որթի, ասեց, զօնաղն Աստծունն ա։

Տարաւ պառաւը զօնաղ տղին։ Ասեց. Նանի, ընչի՞ ա ձեր քաղաքը բանց մալաւ։

Ասեց. Որթի, մեր թագաւորը մի պուճուր ախչիկ բերեց, պատեց մենձացրուց, հրմի ուզիմա որ իրա տղի հետ փսակի, էտ ախչիկը չի առնում էտ տղին, տղուն ասել ա մի ձեւը, խանչալը մի ձեւը, ինձ կը սպանեմ, ասում ա, քու տղին չեմ առնիլ։

— Նանի, ասում ա, էտ ախչկա անունը ինչ ա։

— Էտ ախչկա անունը Բաղդիկ ա։

Ասում ա. Ընչի հրմար չի առնում թագաւորի տղին։

Ասում ա. Ախչիկը ասում ա, որ այսինչ երկրրումը մի տղա կա, անունը Տղա Շիրին, ես նրան պրտի առնեմ։

— Նանի, ասում ա, կարաս ինձ շանց տալ էն ախչիկանը։

Պառաւն ասում ա. Շատ հեշտ ա։

Տալիս ա պառաւին մի տոպրակով վօսկի, պառաւը շատ ուրախանում ա, ասում ա. Որթի, դու, ասում ա, առաւօտը ձիդ նիլ, տրի ծովի ղրաղը, ես ախչկան բերեմ, դու փախցրա։

Առաւօտը տղէն վեր ա կենում, ձին նիլում, էթում ծովի ղրաղը։ Տղէն մատանիքը տալիս ա պառաւին։ Պառաւը տղի մատանիքը վեր ա առնում, էթում ա Բաղդիկի կուշաը, ասում ա. Էկէք, ես Բաղդիկին կասեմ, թագաւորի տղին կառնի։

Շատ ուրախանում էն, պառաւին տանում էն Բաղդիկի կուշաը։

Պառաւը խորվածացընում ա (առանձնացնում) օթախը, մընում էն ինքը ու Բաղդիկը։ Շանց ա տալի Բաղդիկին Տղա Շիրինի մատանիքը։

— Բաս, նանի, դու ինձ մոնց պրտի տանես Տղա Շիրինի կուշաը, ասում ա Բաղդիկը։

Պառաւն ասում ա. Բաղդիկ Ջան, շատ հեշտ ա տանիլը։

Պառաւը վեր ա կենում, գնում ա Թաքաւորի կուշտը. Թաքաւորն ապրած կենա, ասում ա, Բաղդիկը քու տղին առնում ա, հըրաման տուր, տանեմ ծովի ղրաղը, ման ածեմ, սիրտը առնեմ, գա քու տղին առնի։

Թաքաւորը շատ ուրախանում ա։

— Վեկալ տար, նանի, տար, ման ածա։

Պառաւը տանում ա Բաղդիկին ծովի ղրաղը, ընենց որ հետը մարթ չի թողնում, ինքն ու մենակ Բաղդիկն են ընում. ծովի ղրաղը հասած ժամանակը Տղա Շիրինը գալիս ա ձիով, ձեռը քըցում, Բաղդիկին քաշում թարքը, քցում ծովի յերեսն ու փախչում։ Հաւարն ընկնում ա քաղաքը. Թաքաւորը սաղ ըլի, Բաղդիկին փախցրին։

Հաւարին ընչար դուս գալը, տղէն հասնում ա ծովի էն դիհը, իրա քեռու կուշտը։ Վեր ա գալի ձիուցը, շատ քրտնած ա ըլում, շորերը հանում ա յախրերը մը լեղանալու, հաւարը գալիս ա հասնում, Բաղդիկին էլ, տղի ձին էլ վեր են ուռնում, տանում, մնում ա մենակ տղէն, մըն էլ իրա քեռին։ Լաց ա ըլում տղէն, մըղկը�ում ա, թէ Բաղդիկիս տարան, էլ ինց պէտք ա գնամ։

Քեռին ասում ա. Ես քեզ կանցկացրնեմ, որթի, կը գնաս՝ կը բերես, մըն էլ ըսոր վեր չգաս։

Քեռին էլեա հաքնում ա էն ամպի խրխին, վեր ուռնում Տղա Շիրինին, ծովը անցկացնում էն դիհը. էլի քեռին եա ա դառնում գալի իրա տեղը։

Տղէն էթում ա էլ եա պառաւի տունը։

— Նանի, ասում ա, բա ինց պըտի ըլի, որ ես տանեմ Բաղդիկին։

Պառաւն ասում ա. Որթի, քու ձիուն էնդար քարն են բարցել, մէջը պլոկվել ա, ձիուդ դէն են արել, որ դուրդ (գայլ) ու զուշ (թռչուն) ուտի։

— Նանի, ասում ա, հըմի որտեղ կըլի իմ ձին։

— Որթի, ասում ա, գնա հանդերը ման արի, կը քթնես։

Գնում ա քթնում Բուրքուն Ջանլաթին, քաշում ծովի ղրաղը, չին չին լեղացնում, մի էրկու ամիս թամուզ, լաղաթին պահում ա, շատ լաւ չաղացնում ա, քաշում ընըրմ պառաւի տունը, հանում ըսոր վոսկի տալիս պառաւին։

Պառաւը վեր ա կենում, էթում Բաղդիկի կուշտը։

— Նանի, ասում ա, ինչ խարար կա Տղա Շիրինիցը։

— Բաղդիկ Ջան, ասում ա, էկել ա Տղա Շիրինը։

— Նանի, բա ինձ ինչ պըտի տանես Տղա Շիրինի կուշտը։

Ասըմ ա. Շատ հեշտ ա, որթի, Եաւաշ էթամ թաքաւորի կուշտը։

Երկար տարիք ա անց կենըմ, թաքաւորը պառաւին չի ճանանչում։

Պառաւն ասըմ ա թաքաւորին. Թաքաւորն ապրած կենա, Բաղդիկը քու տղին առնում ա, տանում ծովի ղրաղը, ման ածում, գա, քու տղին տանի։

Թաքաւորն ասըմ ա. Պառաւ, էն տարին էլ մի պառաւ էկաւ տարաւ, ման ածեց, խափեց։

Ասեց. Ես լաւ կնիկ եմ, էն պառաւը չեմ։

— Դէ, ասեց, վե կալ տար, ման ածա։

Պառաւը տարաւ Բաղդիկին ծովի ղրաղը, Տղա Շիրինը նիլաւ ձին, էկաւ ծովի ղրաղը, ձեռը քցեց, Բաղդիկին քաշեց թարքը ու փախաւ։ Ծովն անցկացաւ էն դիմը, էլ չը կանանց, ձին քշեց ու գնաց։ Բեռին ընկաւ քամակին ու վազեց, էնքան որ ղըրանց էլ հաւարաւոր չը հասաւ։

Աբի խարաբը տանք նախրչու կնկանից։ Ագատվել ա՝ մի տղա ա բերէ. էտ տղէն գառել ա տանըմինդ տարեկան, Բաղդիկը թարքը քաշած էկաւ մտաւ էտ քաղաքը։ Նախրչու տղէն շատ դվարթով (ուժեղ) էր, մէրն ասեց. Որթի, գնա էտ ձիաւորի առաչը կարա, էտ ախչիկը խլա քեզ հըմար։

Տղէն գնաց Տղա Շիրինի առաչը կարեց։ Դրանց զալմաղալը ընկաւ, ասեց. Վէր արի, կոխ պրծնենք, գու տաս ինձ գեննովը, գու իմ ղլուխը կարա, ես տամ քեզ գեննովը, ես քու ղլուխը կարեմ, ասեց նախրչու տղէն։

Տղա Շիրինը վեր էկաւ ձիուցը, քեռին բանեց ձին, խանչալները հանեցին, մէյդանըմը վե ղրին, կոխ պրծան։ Տղա Շիրինն ու նախրչու տղէն։ Տղա Շիրինը տվուց գեննովը, խանչալը վե կալաւ, որ ղլուխը կարի նախրչու տղի, նախրչու կնիկը էկաւ ընկաւ տղի վրէն. Բերախտ, ասեց, ինչ ես սըպանում էտ թաւուր երիտասարդ տղին, ասեց, քեզանից ա, քու թորամէն (սերմից) ա։

Տղա Շիրինը մտածեց։ Ա՜յ հաճ, էս տղէն ինձանից ա, էլ դմիշը չէկաւ, որ սըպանի, տղին բաց թողուց։ Ետ նի էլաւ ձին, շնորհակալութուն արուց, նախրչու տղիցն էլ, նախրչու կնկանիցն էլ, Բաղդիկին քաշեց թարքն ու գնաց։ Գնաց, հասաւ էն տեղը, որ սև ամպին սըպանել էր, քեռին էլ չը գնաց. քեռին մնաց ետեղ։ Խարաբը գնաց Բարակ շահին. Աչքդ լուս ըլի, ասեցին, էկաւ Տղա Շիրինը, բերուց Բաղդիկին։

Բարակ շահը ասեց. Ա՜յ հայ, նոր ես պէտք ա տեսնամ Տղա Շիրինին։ Հալիվորել էր Բարակ Շահը, շատ էր մտածում։ Տղա Շիրինը դնաց Բարակ շահի կուշտը՝ շատ ուրախացաւ։

— Դէհ, վեր, ասեց, որթի, էլ ըստեղ մեր կենալը հարկաւոր չի։

Ինչ որ դաղել էր՝ բոլորը տվուց Օղուզին, մի ձին ինքը նիլաւ, Բարակ շահը, կնկանը քաշեց թարքը, մի ձին նի էլաւ Տղա Շիրինը, Բաղդըկին քաշեց թարքը։ Դնացին իրենց երկրին մօտեցան, էն ախպրին, որ ինքը Բարակ շահը քնել էր։ Խարար ղրկեց Խոսրով շահին. Յաշկդ լիս ըլի, թաքաւոր, որ էկաւ քու տղէն, Բարակ շահը, կնկանով և լաւ տղա՝ հարսը հետը։

Խարարը տանը, որ Խոսրով շահը շատ հալիվորել էր, մտածում էր Բարակ շահի համար։ Որ դնացին տուն, թաքաւորը շատ ուրախացաւ, վեր կացաւ տղին բարովեց, հարսին, թոռին բարովեց, ասեց. Ըստուց ետը մենձացել եմ ես. Թախտիցը վեր էկաւ, ըներուց թոռին դրուց թաքաւոր։

— Դէ, ասեց, որթի, ես էլ եմ մենձացել, հէրդ էլ ա մենձացել, ըստուց ետը թաքաւորութունը ուրախութենով վայելես։

Նրանք հասան իրանց մուրազին, դուն էլ հասնես քու մուրազին։

Աստծանից իրեք խնձոր վեր ընկաւ, մէկն ասողին, մէկը լսողին, մէկն էլ անկաճ անողին։

ՈՒՀԱՆ ԱՇՂՆ ՈՒ ՔՕՍԼԷՆ.

(Օտական *)

Ժամանակով մի թաքաւոր կըլի, թաքաւորին կունենա իրեք տղա, իրեք ախչիկ։ Ես որ մեռնեմ, կասի թաքաւորը, ով սըփ-թիցը կուզի իմ ախչիկը, կը տաք նրան։

Թաքաւորը մեռնելուց ետը մի բազրգեան կը գա թաքաւորի ախչիկը ուզելու։ Մենձ ախպէրն ու միշնեկ ախպէրը տալիս չեն, պուճուր ախպէրը կասի. Էտ իմ բաժինն ա, ես տալիս եմ։ Կը տա բազրգեանի ոդին։ Մի տարուց ետը էլի ըտենց մի բազրգեան կը գա թաքաւորի ախչիկն ուզելու, մենձ ախպէրն ու միշնեկ ախպէրը էլի տալիս չեն, պուճուր ախպէրը կը գա, կասի. Խի՞ չէք տալի, մեր հօր վասհաթը կատարէք։

Մենձ ախպէրը կասի. Բեզ ի՞նչ, յիրեք ախպէր ենք, յիրեք քիր, դու քու բաժինը տվել ես, էտ մեր բաժինն ա, չենք տալի։

— Ախպէր, կասի, իմ հօր մալը ձեզ, էս ախչիկը տվէք ինձ, պըտի տամ մարթի։

Էտ ախչկանն էլ վեկուսի, կը տա էտ բազրգեանի ոդին։

Մի տարուց ետը էլ ետ մի բազրգեան կը գա թաքաւորի պուճուր ախչիկը ուզելու։ Էլ ետ մենձ ու միշնեկ ախպէրտիքը չեն տա, պուճուր ախպէրը կը գա կասի. Խի՞ չէք տալի։ Զօռ կանի ախպօրտանցը՝ էտ ախչիկն էլ վեր կունի՝ կը տա մարթի։ Յիրեք քիրը կը տա մարթի, մէկի տեղն էլ ա չի յիմանալ, թէ որտեղ ա։ Թաքաւորի էրկու տղէն փսակված են, իսկ պուճուրը աղտի ա, դրա անըմը Ուհան ա։

— Ես, կասի, որ քվորտանցս տվի մարթի պրծա, ես պըտի գլուխս առնեմ, էթամ իմ քվորտանցս քթնեմ։ Բայց կը թողա տղէն, կընկնի ճամփա։

Կնթա, մի ջրի վրա կը նստի, շատ կը մտածի, կը տեսնա որ էտ ջուրը մի պատկերք ա բերըմ, ձեռը կը քցի, էտ պատկերը

---

*) Պատմեց 1913 թ. Օգոստոսի 21-ին Օտականում նոյն գիւղացի անգրագէտ Պետրոս Մուրմայելեան ջրաղացպանը։

կը կալնի։ Մարիկ կը տա, որ ախչկա պատկերքն ա, շատ սիրուն ա։ Կասի. Էնպէս պըտի մեն դամ, որ էս պատկերքի տէրը քըթնեմ։

Պատկերքը կը դնի ծոցը, կեթա մի քաղաքի թուշ կըլի, կը հարցնի, կեթա մեծ քվոր տունը կը քթնի, փէսէն ու քիրը շատ կուրախանան, շատ կը պատվեն։ Կը դան յիրիկունը կը նստեն, զրից կանեն։

Կասի. Էս պատկերքը քթել եմ ես, պէտք ա էս ախչկա տեղը նշանց տաք։

Փէսէն կասի. Ես գիդամ ոչ դրա տեղը, վեր էթանք էն մի բաջանաղիս կուշտը, բալքի նա յիմանա։

Վեր կը կենան փեսի հետ, կեթան միշնէկ քվորը զօնաղ։

Միշնէկ փէսէն էլ դրան շատ կընթունի, հարց ու բարով կանեն, շատ կուրախանան։

Ընդեղ էլ կասի փէսին. Էս պատկերքի տէրը քթէք։

Կասի. Ես գիդամ ոչ, վերէք էթանք պուճուր բաջանաղիս կուշտը, բալքի նա յիմանա։

Վեր կըկենան, կեթան պուճուր բաջանաղի կուշտը, պուճուր քվորը զօնաղ։ Դրանք էլ շատ կուրախանան։ Սրանց էլ պատկերքը շանց կը տա, կասի. Էս պատկերքի տեղը ինձ ասէք։

Պուճուր փէսէն կասի. Շատ դժար ա, թաքաւորի ախչիկ ա, քեզ չեն տա։

Սաղը կը դնի գոշին, կասի. Եա քթէք, եա ես կը դժվեմ։

Փէսէն կասի. Ես կարալ չեմ, դու դնա, բալքի մի հնար անես։

Վեր կըկենա տղէն, դրանցից շնորհակալութուն կանի, կընկնի ճամփա, կեթա էտ թաքաւորի քաղաքը կը քթնի, սաղը կը դնի գոշին, կեթա մի զայֆախանա, մի քանի բերան հաղ կասի։ Շատ կը հաւանեն դրան, կը տանեն վերև կը նստացընեն։ Մի քանի օր կը մնա էտ տղէն էտ զայֆէքըմը, խաբարը կընկնի քաղաքը, որ ըսենց լաւ աշըղ ա էկել։

Թաքաւորը կասի. Բերէք էտ աշըղին մըխելի տսի, մենք էլ յանգաջ անենք։

Մարթ կը ղրկի, աշըղին կը տանեն թաքաւորի կուշտը։ Մի քանի բերան հաղ կասի, թաքաւորը շատ կը հաւանի։ Էլ թողալ չի որ դա իրա օթախիցը էթա։ Ախչիկն էլ շատ կը հաւանի։ Ախչիկը իրա մըտքի մէջը կասի. Երանի թէ իմ հէրը ինձ տա էս տղին։

Թաքաւորը կը մտածի, կասի. Երանի թէ էս տղէն առնի իմ ախչկան, ըսենց աշըղ չիլի, ըէլլու ա, որ սա թաքաւորի ցեղ ա։ Մի օր կը հարցնի. Իմ ախչիկը առնիլ չե՞ս, որ տամ քեզ։

Կասի. Թաքաւոր, որ դու տաս, ես խիղ չեմ առնի։

Կը բերի ախչիկը կը տա էտ տղին, խօսքերը կը միանա, կը բերի, հարսանիք կանի, օխտն օր, օխտը քշեր հարսանիք կանի։

— Դէ, Կասի, որթի, դու տան ուզ տղէն ես, ես որ ախչիկս տվի։

Կասի. Թաքաւորն ապրած կենա, ես այսինչ թաքաւորի տղէն եմ։

Թաքաւորը կը մտածի, Կասի. Փառք քեզ Աստված, որ ալչախ (վատ) մարթի տղի չեմ տվէ ախչիկս, թաքաւորի տղի եմ տվէ։

Մի տարի քիմի (չափ) էտ տղէն կը ՃՃտ թաքաւորի կշտին։ Բիրդան իրա մէրը կընկնի իրա միտը, Կասի. Թաքաւորը սաղ ըլի, իրին տուր, էթամ մեր տունը։

— Վէր, Կասի, գնա, որթի։

Թաքաւորը լաւ ձի կը տա տղին, լաւ փայ ու բաժին կը դնի հետը, Կասի. Տարէք ճամփու դրէք իմ փէսին, ետ դառէք, էկէք։

Իրա ֆողիցը զօշունը ետ կը դառնա, իր կնիկը վե կունի ու կեթա։

Ճամփին կը տեսնա, որ մի իրեք ոննանի ձի, մի մարթ նի էլած էկաւ։ Կը գա դրա գլխին կը տա՝ ախչիկը կը խլի՝ կը տանի։ Տղէն ախ անելով կեթա պուճուր փէսի տունը, Կասի. Բերի կնիկս, մի մարթ ձեռիցս խլեց, ձին էր յիրեք ոննանի։

Փէսէն Կասի. Էն քօսէն ա, նրանից գլուխ հանիլ չի ըլի, մենք էլ էթանք, մեզ էլ կը սըպանի։ Վե կը կենա, տղէն նի կըլի ձի, կընկնի ճամփէն, կեթա։ Կեթա ընչար Քօսի տունը։ Կը տեսնի, որ ախչիկը նստած ա. Վէր, Կասի, ախչի, յուր ա Քօսէն։

Կասի. Քօսէն ընած ա, էս յիրեք օր ա քնել ա, հըլա չորս օր էլ պըտի քնի։

Վե կը կենա, նի կըլի ձին, ախչկանը կը քաշի թարքը, կընկնի ճամփէն, դէ, քշա, դէ քշա, որ Քօսէն դա ոչ մեզ հասնի։

Քօսէն քնատեղիցը վե կըկենա, կը տեսնի ախչիկ չըկա։ Հը, Կասի, Սանդուխա, յուր ա իմ կնիկը։

Ձին Կասի. Տարաւ տղէն։

— Վե կենամ, էթանք։

Վե կըկենա, նի կըլի ձին, դրա յիրեք օրվա գնացած ճամփէն Քօսէն մի սըհաթըմը կեթա։

—Հը՛, Կասի, տղա, ուր ես տանըմ ախչիկը։ Փեսը կը քաշի

կը տա, աղի գլուխը ջարթ ու փուրթ կանի, ախչիկը ձեռիցը կը խլի։

Կերթա տղէն իրա պուճուր փէսի տունը, փոր ու փոշման։

Փէսէն կասի. Հը՛, ինչ կա, ես որ ասըմ ի՝ մի էթիր, նրանից գլուխ հանիլ չի ըլի. էլ չկա ընենց ախչիկ, որ ուզեմ քեզ. նրանից լաւը կուզեմ։

Տղէն կասի. Փեսա, որ մեռնեմ էլ, պըտի էթամ, իմ կնիկը բերեմ։

— Ա՛յ տղա, կասի, նրանից քնար չես հանիլ (գլուխ չես հանիլ) նրա ձին հրեղէն ա, որտեղ ըլի, քեզ կը կալնի, կը սըպանի։

Տղէն յանկաճ չի անիլ, վե կը կենա, նի կըլի ձին, կընկնի ճամփէն, կերթա ընչար Բօսի տունը։ Կերթա, կը տեսնի ախչիկը նստած ա դեռազմըմը (պատշգամբ)։

— Ախչի, կասի, յո՞ւր ա Բօսէն։

Կասի. Բօսէն քնած ա։

— Բանի՞ օր կա, որ Բօսէն զարթնի։

Կասի. Հըլա հինգ օր կա, որ Բօսէն զարթնի։

— Դէ վե կաց, նիլ ձին, փախչենք։

Տղէն նի կըլի ձին, ախչիկանը կը քաշի թարքը, կընդնեն ճամփէն, կերթան։

Բօսէն կը զարթնի տեղիցը, ձէն կը տա. Սանդուխտ, յո՞ւր ա ախչիկը։

Ձին կասի. Տարաւ տղէն։

Կասի. Կարանք հասնի։

Կասի. Վէր կաց, հինգ օրէն գնացած ճամփէն մի սըհաթըմը կերթամ։

Բօսէն կասի. Տղի աջալը էկել ա, տամ էս դոնըմին (անգամին) սըպանեմ։

Հայ կանի ձին, նի կըլի երկինքը։ Հրեղէն ձի՛, մի սըհաթը կը հասցնի տղին։ Փէտը կը քաշի. Տղա, կասի, էս հետն էլ եմ բախչըմ, ջահել ես, չեմ ղըմբշըմ։ Կը տա, գլուխ մըլուխը կը ջարթի տղի։ Ախչիկը վե կունի ու կը գա։ Տղէն եարալու կերթա պուճուր փէսի տունը։

Բիրն ու փէսէն կը մղկըտան, կասեն. Բոլ ա, նրանից գլուխ հանելու չի՛լիլ, կը սըպանի, անտեղի կերթա ջանդ։ Ես նրանից սիրուն ախչիկ կուզեմ քեզ։

Մի քանի օր կը պահեն, տղի եարէքը կը սաղանա, էլ ետ տղէն կը կանենի, կասի. Պըտի էթամ, փէսա, եա սըպանվեմ, եա բերեմ իմ կնիկը։

Փէսէն կը մտածի, որ ճար չի ելի սրան, տղէն անտեղի կը սպանուի, կասի. Տղա, դէ որ էթալ պըտես, ես դրա հնարքը ասեմ։ Դա էտ ձին ֆելան ծովիցն ա հանել, ժամանակն ա, շոք ա, էտ ծովի ձիանն դուս են գալի, էթըմ սառն յախպրները լեղանըմ, գնա, կարաս, հընար քթի, ըտեղան ձիանոնցիցը մինը կալնա։

Տղէն վե կը կենա, ձին նի կելի, կեթա։ Կեթա, յախպըրները կը քթնի։ Կեթա, հեռու սարըմը տափ կը կենա։ Կը տեսնի, որ Ղըսխըլու զորախը դուս էկաւ իրա քառասուն քուռակը հետը, գնաց սառն յախպըրներըմը լեղանըմ են։ Էլետ գնացին թափեցին ծովը։ Էտ տղէն էկաւ յախպըրի կուշտը, գնաց մոն էկաւ, յախպըրի ակը քթաւ, գնաց փէսի տանիցը էրկու բարգան (պարկ) բուրթ, և էլ մի հատ բահ վեկալաւ, գնաց էն սառն յախպըրի կուշտը, յաղբրի ակը քանդեց, բուրթը ճեռեց ըտեղ, ջուրը կտրեց, էկաւ յաղբրի կողքին մի փոս քանդեց, իրա ձին ըրբոխ տվուց սարը, գեամը վեկալաւ, էկաւ։ Ճաշվա շոքին Ղըսխըլու զորաղը էկաւ, նի մտաւ սառն յաղբրի մէջը, տղէն թաքուն վե կացաւ, քուռակները փախան, թափեցին ծովը, զորաղը ծանրած զորաղ էր, գեամը տվուց բերանը, նի էլաւ. մի հանք քշեց դըբա սարը։ Ղսրաղն ասեց. Ընչի՞ ես քշըմ, ծանրած եմ, քուռակներս կը քցեմ, էլմով (ծանր) քշա։

Տղէն հաւաշացաւ, ասեց. Բե տանըմ եմ, որ Բօսէն իմ կընկանը տարել ա, որ փախցընենք, իմ կնիկը տանենք։

Ասեց. Տղա, Բօսի ձին իմ քուռակն ա, արխէին կաց, որ քու կնիկդ կը բերեմ։

Ձին քշեց, էկաւ Բօսի տունը։

— Ախչի, ասեց, յուր ա Բօսէն։

Ասեց. Բնած ա, մընըմ ա էս օր, որ վե կենա։ Մեղկ ես, էս անքամին կը սպանի։

Կասի. Վեր, սպանըմ ա՝ սպանի։

Ախչկանը կը վեկալնի, նի կելի ձին, կը քաշի թարքը։

Ղըսրաղը կասի. Տղա, մի վախենա, էլմով քշա ինձ։

Բօսէն տեղիցը կը զարթնի, կասի. Սանդուխտ, յուր ա իմ կնիկը։

Կասի. Տարաւ տղէն։

Կասի. Սոված եմ, հաց ուտեմ, թէ վե կենամ նի ելեմ։

Կասի. Հաց էլ կեր, չիրուխ էլ քաշա, հելա նոր գնաց։

Բօսէն հաց կուտի, չիրուխ կը քաշի, վե կը կենա, ինաա ինաա թուրը կը կապի վրիցը։ Բոլ ա, կասի, Ջանիս հասցըրիր, տամ էս անքամին սըպանեմ։

Նի էլաւ ձին, ընկաւ ճամփա, երկնքովը գնաց դրա գլխավիրքը, ձէն տվուց։

— Հը՛, ասեց, տղա, աջալդ էկել ա, էս անքամին պլտի սըպանեմ։

Տակնուց ձէն տվուց Ղըրխըլու զորաղը, ասեց. Սանդուխտ, աղունըկի զայդա Թարքը տուր, Բօսէն ըլի հազար կըտոր։ Մօր ձէնը առնելու պէս Սանդուխտը շուռ անցաւ Թիկունքի վրա, Բօսէն դիպաւ գիննովը, էլաւ հազար կտոր։ Վեր էկաւ Սանդուխտը գետինը, տղէն բաց Թողուց զորախին, նի էլաւ Սանդուխտը, կնկանը քաշեց Թարքը, Ղըռխըլու զորախին բաց Թողուց, գնաց իրա քուռակների կուշտը։ Ուրախ ուրախ տղէն ընկաւ ճամփա, էկաւ իրա պուճուր քվոր տունը, շատ ուրախացաւ քիրը և իրա փէսէն։ Մի երկու օր լաւ կեր ու խում արին պուճուր փէսի տունը։ Վեկալաւ պուճուր քվորը ու պուճուր փէսին բերուց միշնեկ փէսի տունը, դրանք էլ շատ ուրախացան, մի քանի օր էլ ըտեղ քէֆ արին։ Վե կալաւ Ջուխտ փեսին էլ Ջուխտ քվորն էլ, էկան մենձ քվոր տունը, մի քանի օր էլ ըտեղ քէֆ արին, վե կալաւ յիրեք քվորն էլ, յիրեք փեսին էլ, էկան իրենց տունը, իրա ախպըրտանքն էլ, իրա մէրն էլ շատ ուրախացան։ Բերին ախպէրտանքը հաց պատրաստեցին, օխտը օր, օխտը քշեր քաղաքին հաց տվին, յաշկալխէք տվին, Փառք քեզ Աստած, որ մեր ախպէրը էկաւ, մեզ հասաւ։ Ախպըրտանքը կանչեցին զրաղ, պուճուր ախպօրը դրին Թաքաւոր։ Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։

Աստծանից յիրեք խնձոր վեր ընկաւ, մէկն ասողին, մէկը լսողին, մէկն էլ յանկաճ դնողին։

ԱՌԱՋՈՒ ՏՂԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Օշական *)

Ժամանակով մի աւէր կլի, կունենա մի հատ տղա, աւէլին որ կը մահանա, կնիկը շատ խելքով կըլի, տղին կըտա ուսումարան. ըս տղէն շատ յաջող կըլի, շատ լաւ կը կարթա։ Կը դառնա տատ—տատնըհինդ տարեկան, ուսումարանիցը գալու վախտը էրէխէքը վէրի հաղալուս կըլնին, աւէլու տղէն կը քա, վիքանը չուռ կանի. էտ տղէքը ուշունց կը տան դրան։ Մու աւէլու ըսենց ընենցը, խի՞ ես մեր վիքանը չուռ անըմ։ Աւէլու տղէն վիքանը վե կը քցի, սիրտը լիքը կենթա տուն, մէրը կը հարցնի, կասի. Որթի, խի՞ ես լաց ըլըմ։

Կասի. Մէրը, ես ուզմ տղէն եմ։

Կասի. Աւէլու տղէն ես։

— Իմ հօրը, կասի, ինչ ունի։

Կասի. Մի թվանք, մըն էլ մի հատ դարբա (վառօդակալ)։

Կասի. Տուր, ես պըտի էթամ աւ անեմ։

Կասի. Գնա, կարթա։

— Ձէ, կասի, հէրս ինչ արհեստ բանացրել ա, ես էլ էն արհեստը պըտի բանացնեմ։

Կասի. Որթի, մեղկը քու շրլինքը։ Կըտա թվանքը տղին, կը հաղրվի, կենթա աւ։

Մէրը շատ խելքով կըլի, ինքը ռամդար, կասի. Որթի, որ էթըմ ես՝ ինչքան մանր դաս՝ քշերը արի տուն, չըլի թէ չոլըմը կենաս։

Տղէն ամէն օր աւդուշութուն կանի, քշերը կը դա տուն։

Օրերի մի օրը, կասին՝ Մասսու գոշումը ջէյրանները շատ ա ըլըմ, տղէն վէ կը կենա կենթա Մասսու սարը, շատ մանր կը դա, ձեռը աւ չինկնի, իրիկունը մութը կընկնի՝ կըտա մէշըմը,

---

*) Պատմեց 1913 թ. Օգոստ. 21-ին Օշական գիւղում նոյն գիւղացի միեւնոյն Պետրոս Մաքայելեանը։

կեթա մի ծառի փըթըրկի մէջ տաղ կանի։ Բշերվա մէջ վախտը մարիկ կուա, որ մի լիս դըբա իրան ա դալի։ Այ հայ, կասի, էս ջանավարը ա, կը գա՝ ինձ կուտի։ Թվանքը ձեռին հազիր կը պահի։ Կը տեսնի, որ ջանավարը դալիս ա դըբա իրան, թվանքը կը քաշի վերի վատը, կը տա ջանավարին վի կը քցի։ Կը լիսացը-նի էտ քշեր ըտեղ. յառաւօտը վի կըկենա կեթա կը տեսնա, որ ջա-նավարը շամ չրաղն ինքն ա, կը քերթի էտ ջանավարին, փոստը կոլորի, կը դնի ղոլթուղը՝ կեթա։ Կը բերի տուն, մէրը կասի. Խի՞ մնացիր քշերը դրսեր։

Կասի. Մէր, իմ բերած աւը էս ա, պըտի տանեմ թաքաւո-րին փէշքաշ անեմ։

— Տար, կասի, որթի, տանես էլ փոշմանութուն ա, չըտա-նես էլ փոշմանութուն ա։

Առաւօտը տղէն վի կունի էտ փոստը, կը տանի թաքաւորի ամարաթը, նաղիրը կասի. Էտ ինչ ա, աչու տղա։

Կասի. Փոստ ա, բերել եմ թաքաւորին փէշքաշ անեմ։

Նաղիրը որ կը տեսնա, շամ չրաղի փոստն ա, կասի. Աչու տղա, առ հարիր մանէթ փող տամ, էտ փոստը տուր ինձ։

Կասի. Թաքաւորը որ ինձ փող էլ չը տա, ես պըտի փէշ-քաշ անեմ թաքաւորին։

Կը տանի, փէշքաշ կանի թաքաւորին։ Թաքաւորը շատ կու-բախանա, կասի. Նաղիր, տար իմ խազնիցը աչու տղին բաւա-կանին փող տուր։

Կը տանի նաղիրը, էտ տղին խուռվածի պէս, քաշի էրկու սիլլա կը տա, և էրկու կոպէկ փող։

Էտ տղէն ամօթու թաքաւորին չի ասիլ, բայց կը թողա, կը գա իրանց տուն։ Մէրը կասի. Որթի, ինչ տվուց թաքաւորը։

Կասի. Նաղրրի տունը քանդվի, տվուց էրկու սիլլա, էրկու կոպէկ փող։

Էլ ետ տղէն վի կացաւ գնաց աւի։ Թաքաւորը իրիկունը էտ փոստը հանեց գրեց իրա բալկոնը. էտ քաղաքը ընկնց լիս էլաւ, մոնց որ ցերեկը։ Շատ ուրախացաւ թաքաւորը։

Նաղիրն ասեց. Թաքաւոր, հըլա էտ ես տեհել՝ ուրախացել, եթէ ֆլի օսկուից մի հատ ամարաթ տեսնես, ինչքան կուրա-խանաս։

Կասի. Ո՞վ կը բերի ըտղդար ֆլի օսկուը։

Կասի. Աչու տղէն կը բերի։

— Ա՛յ գիտի, կասի, գնայէք, աչու տղին կանչէք՝ գա։

Աչու տղէն կը գա թաքաւորի կուշտը, գլուխ կը տա՝ կը կանի։

Թաքաւորը կասէ. Պըտի էթաս ֆլի օսկոռ բերես, շինեմ մի հատ ամարաթ։

Աւչու տղէն մաքի հետ կընկնի, ետ կը դառնա դըբա իրանց տունը։

Մէրը կը հարցնի, կասէ. Որթի, խմ ես տխուր։

Կասէ. Ինչ անեմ, այ մեր, Թաքաւորը ընենց բան ա ասըմ, որ գլուխս գալու բան չի։

Կասէ. Ի՞նչ ա ասըմ Թաքաւորը։

— Այ մէր, կասէ, Թաքաւորը ուզըմ ա ֆլի օսկոռ, ես որդիան բերեմ։

Կասէ. Էտ հեշտ ա, որթի. կենթաս Թաքաւորին կասես. Ինձ կը տաս քառասուն բեռը բուրթ, քառասուն բեռը օխտը տարէն քացախ, քառասուն բեռը արաղ, քառասուն բեռը գինի, քառասուն բեռը չամիչ, ամէն բեռին մի մարթ՝ կացինը ձեռին, դանակը ձեռին, ըտանք բոլորը պըտի ըլի նազբրի քիսիցը, թէ որ քիզանից ըլի՝ չեմ կարալ բերի։

Թաքաւորը կը կանչի նազբրին, կասէ. Էս բանը դու ես ասէ, արի տու էս ծախսը, թէ որ չտաս՝ քու գլուխը կը կտրեմ։

Նազիրը կը դա կատորագրի, ունեցած չունեցածը վե կը դնի, ըտանք բիրաղի կը պատրաստի, կը բարցի, ճամբու կը քցի։

Տղէն կենթա մօր կուշտը. Մէր, կասէ, զրկեցի, ես ուր էթամ ախր։

Կասէ. Որթի, կենթաս Ալագեազու տարը, մի հատ յաղբուր կա, բուրթը, բամբակը կը ճիտես էտ յաղբրի յակը, ջուրը դայիմ կը կտրես, տակի ջրերը թամուզ կը յըտաբկես, էտ քացախը, գինին, արաղը շուտ կը տաս յաղբրի յակը, չամիչը շաղ կը տաս հանդը, բեռ բեռ վե կածես, ֆլերը կը դան չամիչը կուտեն, արտանները կերվի, կը դան կընդնեն քացախի, գինու ու արաղի վրէն, կը խմեն, կը հարբեն, վե կը թափեն. կը հրամայես հետիդ օքմինտերին, ամէնքը իրենց կացինը կը քաշեն, ֆլերին կը մորթեն։

Էտ տղէն ձին նի կըլի, մօր ասածի պէս կընկնի ճամբէն, կենթա, կը դա կը հասնի էտ յաղբուրը, ջրերը կը կտրի, արաղ գինին կը լըցնի, չամիչը շաղ կը տա, կը տեսնա որ ճաշվա շոքին ֆլի նախիրը էկաւ. կուտեն չամիչը, կը դան կը խմեն գինին, քացախը, կընարբեն, վե կը թափեն, կը հրամայի էտ մարթկերանցը, կացիններին ու դանակները կը քաշեն, ֆլերին կը մորթեն, միսն ու կաշին կը թափեն գետինը, օսկոռը վե կունենն, կը բարցեն իրենց ուզտերին, կը բերեն, իրենց թաքաւորին փէշքաշ կանեն։

Թաքաւորը կասի. Նազիր, տար աւչու տղին իմ խազինիցը տուր բաւականին փող։

Նազիրը կը տանի խազնէն, տղին կը տա չորս կոպէկ փող, էրկու հատ էլ լաւ սիլլա։

Տղէն էլ էտ ամօթու թաքաւորին բան չի ասի, վե կը կենա դրբա իրանց տունը։

Մէրը կասի. Խի՞ էս տխուր, որթի։

Կասի. Ի՞նչ անեմ, ա՛յ մէր. Նազիրը ավուց չորս կոպէկ փող, էրկու սիլլա։

Կասի. Բան չը կա, որթի, գնա քու արհեստին։

Տղէն վե կը կենա, թվանքը կը քցի ուսը՝ կեթա աւղուշ։ Թաքաւորը կսկսի յուստէք բերիլ, Գլի օսկոռից շատ լաւ մի օթախ կը շինի։ Թաքաւորը միչին կը նստի, շամ չրաղը կը գնի գեաղ-մէն (պատշգամը), ընենց կուրախանա թաքաւորը, ինց որ տատ-նըհինգ տարեկան տղէն։

Նազիրը կասի. Թաքաւոր, հըլա դու դրա վրին էս ուրա-խանըմ։

— Էլ ինչ կա, Նազիր։

— Եթէ դրախտական ծառը քու դառնը ըլէր՝ բա ինչքան կուրախանայիր, թաքաւոր։

Կասի. Ո՞վ կը բերի էտ դրախտական ծառը։

Կասի. Աւչու տղէն կը բերի։

Թաքաւորը կը կանչի աւչու տղին, կասի. Որթի, դու պըտի դրախտական ծառը բերես ինձ համար։

Տղէն մալուլ էտ կը դառնա, կը գա իրանց տունը։

Մէրը կասի. Որթի, ընչի՞ համար էս մալուլ։

Տղէն կասի. Թաքաւորի տունը քանդվի, հէնց բան ա ասել՝ բերելու չիլիլ։

Մէրը կասի. Որթի, դա նազրի արածն ա, թաքաւորին մեղք չունի։ Կեթաս թաքաւորին կասես. Մի հատ գեամի կը շի-նես ծովի յէրեսին, քառասուն խալվար ցորեն կը գնես մէջը, քա-ռասուն խալվար կորեկ, քառասուն խալվար ըրինձ, էրկու հատ մարթ կը գնես մէջը՝ դանակները ձեռներին, կը քցես ծովի յերես-ը, գեամին կը քշես ներքև, ամէն յապըմին (քայլին) մի թայ կը ճղես, շուռ կը տաս ծովը, կը քշես դրբա վերև, ամէն յապըմին մի թայ կը ճղես, շաղ կը տաս ծովը, ծովի յէրեսին էտ գեամին ընդար ման կածես, որ էտ թայերը բիրադի հատնի։ Ծովի մէջը ցամ ա ընկել, կը տա ձուկը քեզ դրախտական ծառը։

Էտ խրատը կը տա մէրը. տղէն կեթա թաքաւորի կուշտը, մոնց որ մէրը ասեց, կասի թաքաւորին. Թաքաւորը տարած կե-

նա, էտ բոլորը պըտի պատրաստես՝ հըմա բիբադի պըտի ըլի նապըրի քիսիցը, թէ չէ թլիսմը կը քանդըվի։

Թաքաւորը կը կանչի նապըրին, կասի. Նապիր, պըտի էս բիբադի հազրես։

Նապիրը էլած չկածը վի կը գա՝ կը հազրի։ Գեամին կը շինի, կը քցի ծովի յիրեսը, ցորեն, կորեկ ու ըրինձը կը տանի կը դնի մէջը, էրկու մարթ էլ կը տանի կը դնի գեամու մէջը։

Տղէն կը գա մօր կուշտը, մէրը կասի. Դէ գնա, որթի, Աստված քեզ հետ, գնա շատ տուր ծովի մէջը։

Տղէն կէթա նի կըլի գեամին, կը քշի, էտ ադէքը հա թայերը կը ճղեն. շատ կը տան ծովի մէջը. մինչի վիրև, ներքև կանեն, կը հատնի էտ ապրանքը։ Ծովի տակը կը լիանա, գեամին կը գա ծովի մէջտեղը, ձգան թաքաւորը կը բանցրանա. Տղա, կասի, էս ա օխտը տարի իմ ծովի տակը սով էր, դու ոնց լիացրիր, քու մուրազդ ասա, կատարեմ։

Տղէն կասի. Թէ վիշքաշ ա, մուրազ չունեմ, որ կատարես։

Զուկը կասի. Տղա, ասա, կունենաս, ասա, մի ամանչի։

— Դէ որ ասում ես, կասեմ, ես էկել եմ դրախտական ծառը տանեմ։

Կասի. Է՛յ ադա, շատ դժար բան ասեցիր, համա որ մեռնեմ էլ, պըտի մուրազդ կատարեմ։ Կասի. Զեռիդ կա՞ ուր դանակ։

Կասի. Կա։

Կասի. Հանա՛ քու դանակը. ես որ բանցրանամ, իմ մէջտեղի թեջակիցը մի մաղ կը կտրես, թղթի միչի կը կոլոլես, իշտեղ թաղես՝ կը դառնա դրախտական ծառ։

Զուկը կը բանցրանա, ադէն դանակը կը քցի, դրա թեջակիցը մի հատ մաղ կը կտրի. կտրելու պէս ձուկը կէթա ծովի անդունդը. թղթի միչին կը կոլոլի, կը դնի ծոցը, կը դայիմացնի։ Շատ կը մտածի ադէն, կը գա մօր կուշտը. Ա՛յ մէր, կասի, ես մի ձկան թեջակի մաղ եմ բերել, էս չի դառնա դրախտական ծառ։ Թաքաւորը իմ գլուխը կը կտրի։

Համա մէրը իմաստուն ա, իմացաւ որ դա դրախտական ծառն ա, ասեց. Ո՞ւթի, կէթաս թաքաւորին կասես. Ո՞ւրդի պըտի անկես, ինձ տեղն ասա, ես կը անկեմ։

Տղէն կը գա թաքաւորի կուշտը, գլուխ կը տա՝ կը կանչի։

Թաքաւորը կասի. Հը՛, Աւչու ադա, բերե՞լ ես դրախտական ծառը։

— Հրամանք ես թաքաւոր, կասի, բերել եմ։

Թաքաւորը շատ կուրախանա, կասի. Բա յուր ա։

Տղէն կասի թաքաւորին. Ինձ տեղը շանց տուր՝ ես կը տընկեմ։

Թաքաւորը տղին շանց կը տա տեղը՝ ֆլի օթախի փանջարի յառաջը։

Տղէն բաց կը թողա, կեթա իրանց տուն, իրիկունը որ մութը կըընկնի, տղէն թաքուն կը գա՝ թաքաւորի տասած տեղը պուճուր փոս կանի, էտ մալը ըտեղ կը տնկի, բաց կը թողա, կեթա յիրանց տուն։

Թաքաւորը կըքնի, յառաւօտը վե կըկենա, մտիկ կը տա որ օթախը մութն ա, փանջարէն բաց կանի, որ մի հատ ծառ ա փէյդահ էկել իրա փանջարի յառաջին, մտիկ կը տա, որ դրախտական ֆոտ ա գալի էտ ծառիցը, մի դիհը ամառ՝ մի դիհը ձրմեռ. դշերը վրին ծըվվըմ, մէյվի մի դիհը հասած, մի դիհը ցոկոլակ (խակ)։ Թաքաւորը շատ կուրախանա էտ բանի վրա։ Ֆլի օսկոռից օթաղ, շամ չրաղը միչին վե դրած. դրախտական ծառը յաշկի յառաչին, ընենց կուրախանա թաքաւորը՝ ընենց կը սիրի տղին, մանց որ իրա որթին։ Կասի. Գնացէք, կանչէք գա Աւչու տղէն։

Կեթան կը կանչեն, կը գա Աւչու տղէն։ Թաքաւորը ուրախ ուրախ տեղ շանց կը տա, կշտին կը նստացընի. շատ կարքով տղին կը պատվի։

— Հը՛, կասի, նազիր,- կասի, Աւչու տղին կը տանես իմ խազնէն, ինչքան կամքումը կա՝ իրա համար վօսկի վեր ունի։

Նազըրի սրտին հասել ա, Աւչու տղին կը տանի խազնէն, կը տա վեց կոպէկ փող, էրկու հատ էլ սիլլա, կասի. Դէ, գնա, քու հախը էտ ա։

Տղէն մալուլ եա կը գա մօր կուշտը։

Մէրը կասի. Ո՞րթի, խի՞ ես տխուր։

— Ի՞նչ անեմ, այ մէր, տվուց նազիրը վեց կոպէկ փող, էրկու սիլլա։

Կասի. Բան չկա, որթի։

Տղէն վե կունի թվանքը, էլ եա կեթա աւղուշ։

Խաբարը տանք նազրից.

Նազիրը կասի. Թաքաւոր, հըլա դու դրա վրին ես ուրախանըմ, ֆլի օսկոռից օթախ, շամ չրաղը միչին, դրախտական ծառը դռանդ, դու ջահել թաքաւոր, այսինչ երկրըմը մի թաքաւորի մի ախչիկ ունի, անունը Փերիվակ խանըմ, բա որ էն էլ քու կնիկը ըլի՝ ինչքան կուրախանաս։

Թաքաւորը կասի նազրին. Ո՞վ կը ըսրի էտ ախչիկը։

Կասի. Աչու ապէն կը բերի։

Մարթ կը զրկի, թէ կանչէք՝ գա Աչու ապէն։ Կը գա Աչու ապէն, գլուխ կը տա, կը կանգնի։

Թաքաւորը կը կանչի, կշտին կը նստացնի. Հը՞, կասի, Աչու ապա, այսինչ երկրամը կա մի թաքաւոր, նրան ունի մի շատ սիրուն ախչիկ, անունը Փերիպակ խանում, պրատի էթաս՝ բերես ինձ համար։

Տղէն շատ ախուր վի կրկենա, կերթա մօր կուշտը։

Մէրը կասի. Որթի, խի՞ ես ախուր։

Կասի. Ի՞նչ անեմ, ա՛յ մէր, թաքաւորը ընենց բան ա ուզել, որ գլուխ գալու բան չի։

— Ի՞նչ ա ասել, ա՛յ որթի։

Տղէն պատասխանում ա մօրը. Ասում ա գնա այսինչ երկրի թաքաւորի ախչիկը բեր ինձ համար։ Ես ինչ բերեմ թաքաւորի ախչիկը, իմ գլուխը կը կտրին։

Մէրը մտածելով տղին սկսում ա խրատել. Որթի, էտ էլ հեշտ ա։ Դէ անկած արա, քեզ խրատ տամ. կերթաս, թաքաւորին կասես. Ինձ համար կը շինես գեամի, էնքան ըլի մենձութունը, որ քու քաղաքի չափ, մի հատ օթախ կը շինես, քու ամարաթի պէս, էտ գեամու մէջը պրատի ըլի հարիր սազ ածող, հարիր ձեռք զուռնաչի, հարիր հատ երիտասարթ տղա, հարիր հատ ջահել ախչիկ, պար էկող, հարիր հատ մենձ կնիկ, հարիր հատ մենձ մարթիկ, լաւ ուտող խմող, քէֆ անող։ Մի խօսքով թիֆլիսեցի, էնդատը, կասի, որ քաղաքի չափ մարթիկ վի կուենի։ Դրաղից էկողը չիմանա թէ գեամի ա, կիմանան որ քաղաք ա։ Էտ դդաբ ուտող խմողին քառասուն տարվա ապրուստ կը դնես մէջը, թէ ուտելիք, թէ խմելիք։

Տղէն վի կը կենա, կերթա թաքաւորի կուշտը, գլուխ կը տա, կը կանգնի։ Թաքաւորն ապրած կենա, կասի, պրատի շինես ծովի վրա մի հատ գեամի, մենձութունը մեր քաղաքի չափ, մէջը դնես հարիր հատ լաւ սազ ածող, հարիր ձեռք զուռնաչի, հարիր հատ ջահել տղա, հարիր հատ ջահել ախչիկ, լաւ պար էկող, հարիր հատ միջակ կնիկ, հարիր հատ միջակ տղամարթ, լաւ ուտող, խմող, պրատի գրանը բոլորը շինված ըլի նազբերի քիսիցը, թէ չէ թելեամը կը քանդվի։

Թաքաւորը կը կանչի նազբերին. Նազիր, կասի, էս բանը դու ես գլխի քցել, պրատի քու փողովը շինվի։

Նազիրը վեկացաւ էլած չելածը ծախեց, էտ բոլորը հազբրեց։

Տղէն գնաց մարիկ ավուց, տեհաւ որ ոնց որ Թիֆլիզու քա-

դաքը, մի կողմից ղուռնա են ածում, մի կողմից սաղ են ածում, մի կողմից ջահէլները երգ են ասում, մի կողմից ախչկերքը պար գալի, մի կողմից մարթիկը ուտում են, խմում, քէֆ են անում։ Տղէն շատ ուրախացաւ։ Եա դառաւ էկաւ մօր կուշը. Մէր, ասեց, հրմի յուր էթամ, էտ բանները սաղ հաղրվիլ ա։

Ասեց. Որթի, տէրը քեզ հետ, ըստուց ետն էլ բան չգիդամ։ Գնա նստի թամուղ օթախի մէջը, լաւ կեր, քէֆ արա, քառասուն տարվա, բան որ, ապրուստ կա միչին, քշա գետամին անց կաց, դէմ արա մի չորի վրա, ընդուց ետ ոնց ապրում ես, ապրի։

Տղէն մօրը շնորհակալութուն արուց, ծիծը պաչեց, էլ յուս չունէր ետ գալու, գնաց մտաւ գետամու մէջ, օթախըմը նստեց։ Գետամըմը դուս էր գալի, սրա հետ խըմում, նրա հետ խըմում, օր էր անցկացնում։ Գետամին քշեց տարաւ դէմ արուց չորին, ընենց էր, որ միչի մարթիկը չին իմանում, թէ ծովի մէջ ին։ Էս տղէն իր միչին մատեց, ասեց. Երկար մնամ էստեղ ինձ օգուտ չի բերիլ, վե կենամ, էթամ աշխար ման գամ։

Էս տղէն գնաց, նի մտաւ դուքանը, մի թաս գինի խմեց, գետամուց դուս էկաւ, ընկաւ ճամփէն. մտածելով գնաց էտ տղէն։ Շատ ու քիչը Աստված գիտի, գնաց թուշ էլաւ մի մեշի. մտիկ տվուց, որ մեշըմը մի հատ մարթ կա, վայրենի մէշտ ա, էտ մարթը հատ ծառերը քոքահան ա անում, ըստեղան տանում ա ուրիշ տեղ տնկում։ Մինը քոքահան ա անում, տանում ուրիշ տեղ տնկում։ Աւչու տղէն որ տեսաւ՝ զարմացաւ. Ա՛յ մարթ, ասեց, մի մարթի՞ էլ էտ զասը զվարթ կըլի՞։

— Ախպէր, ասեց, խի՞ ես զարմանում, ինձ հրմար հաղ եմ անում, զարմացքը Աւչու տղինն ա։

Աւչու տղէն ասեց. Զարմացքը խի՞ Աւչու տղինն ա։

Ասեց. Աւչու տղէն բերուց շամ չրաղը, բերուց ֆիլ օսկոռը, բերուց դրախտական ծառը, զարմացքը դրանն ա։

Աւչու տղէն ասեց. Ես եմ Աւչու տղէն։

— Որ դու ես, ասեց, ես քու ախպէրն եմ, ես քու հետ պրտի գամ, մին չըլենք, ըլենք երկու։

Ընկան ճամփէն, գնացին։

Շատ ու քիչ գնացին, մի քաղաքի թուշ էլան, մտիկ տվին՝ ըտեղ մի մարթ կա նստած, ինչքան հաց են բերում տալի, ինչքան միս են բերում տալի, դա ուտում ա, մի կողմից դռսում ա. Սոված մնում։

Աւչու տղէն ասում ա. Ա՛յ ագա, էտղտար խոռակը քու փորը ոնց ա տանում։

Էտ մարթն ասում ա. Ինչի՞ համար ես զարմանում իմ ուտելու

վրին, էս մի մենձ հունար չի, հունարը Աւչու տղինն ա, որ գը-նաց շամ չրաղը բերուց, Ֆլի օսկոռ բերուց, դրախտական ծառը բերուց։

Աւչու տղէն ասեց. Էտ Աւչու տղէն ես եմ։

— Որ ըտենց ա, ասեց, ես քու ախպէրն եմ, ես քեզ հետ պըտի գամ, երկու չըլենք, ըլենք իրեք։

Վեկացան գնացին, շատ ու քիչը Աստված գիտի, գնացին պատահեցին մի գետի, որ մի մարթ կռացած՝ էտ ջուրը քաշըմ ա փորը, մի կողմից էլ ըղաւըմ. Ծարաւ մեռա։

Աւչու տղէն ասըմ ա. Ա՜յ մարթ, քու փորը կը պատռի։

Ասըմ ա. Ինչի ես զարմանըմ. հունարը Աւչու տղինն ա։

— Ինչ ա արել, ասըմ ա, Աւչու տղէն։

Ասեց. Աւչու տղէն բերեց շամ չրաղը, բերուց Ֆլի օսկոռը, բերուց դրախտական ծառը։

Ասեց. Ես եմ Աւչու տղէն։

— Որ ըտենց ա, ասեց, ես քու ախպէրն էմ, իրեք չըլենք, չորս ըլենք, ես պըտի գամ քու հետ։

Ընկան ճամփա գնացին։ Երկար գնացին, մի սարի գոշի մոտիկ տվին որ մի չոպան ըլուլ ա ածըմ, էտ ոչխարը թէվ են բռնէ հաղըմ են, չեն արածըմ։

Աւչու տղէն ասեց. Ա՜յ մարթ, ասեց, էտ էլ շատ հունար ա։

Պատասխանեց չոպանը. Հունար, հունար Աւչու տղինն ա, որ գնաց բերուց շամ չրաղը, բերուց Ֆլի օսկոռը, բերուց դրախտական ծառը։

Աւչու տղէն ասեց. Էտ ես եմ։

— Որ դու ես, ասեց չոպանը, ես էլ եմ քու ախպէրը, չորս չըլենք, հինգ ըլենք։

Էլան ախպէր, գնացին, շատ գնացին, քիչ գնացին, Աստված գիտի, գնացին տեհան մի մարթ գլխի վրին ցից էլած։

Աւչու տղէն ասեց. Ախպէր, ընչի՞ ես գլխիդ վրին ցից ըլել։

— Ես, ասեց, յանկաճ եմ անըմ, որտեղ խօսան՝ ես իմանամ։ Ես ձեր ճամփէն ի պահում, որ ես էլ ձեր հետ ախպէրանամ։ Հինգ չըլենք, վեց ըլենք։

Վեց ախպէրը ընկան ճամփէն գնացին։ Գնացին, Չոպանը ասեց Աւչու տղին. Ի՞նչ ա քու մուրաղը։

Ասեց. Իմ մուրաղը՝ թաքաւորի ախչիկը բերենք ինձ համար։

— Լաւ, ասին հինգ ախպէրը, գնացին։

Գնացին հասան թաքաւորի քաղաքը, խնամաքարին նստեցին։ Խապար արին թաքաւորին, որ քու ախչիկը ուզող ա էկել։ Թաքաւորը շատ ընդունեց դրանց, մաքուր օթաղ շանց տվուց,

գնացին, նստեցին, սպասեցին թէ ինչ ա ըլնելու։

Թաքաւորը ճաշ պատրաստեց դրանց համար։ Որ հացը կերան պրծան, նստած վեցով զրից ին անըմ. էտ գլխի տնկըվողը գլխի վրին տնկվեց, ասեց. Տենամ ինչ ա խօսըմ Թաքաւորը։

Թաքաւորը իրան վազըրի, նաղըրի հետ խօսաց, ասեց. Ո՞նց անենք, որ մեր ախչիկը չտանք էտ տղին։

Նաղըրների մէկը վեր կալաւ ասեց. Թաքաւորն ապրած կենա, բեր դրանց համար մի ճաշ պատրաստենք, ինչքան զօշունիդ հաց ա էթըմ, էտ զտար հաց պատրաստենք, ինչքան միս ա էթըմ, ինչքան ըրինձ ա էթըմ, ըդարը պատրաստենք, ասենք, թէ կերաք, ախչիկը կըտանք, թէ չը կերաք՝ ախչիկը չենք տա, ձեր գլուխը կը կտրենք։

Էկաւ էս գլխի վրին ցից ըլողը վեր էկաւ, ասեց. Ախպըրտանք, շատ դժվար ա ձեր բանը։

Աւչու տղէն ասեց. Խի՞ ա դժվար։

Ասեց. Թաքաւորը մասլահաթ ա արէ, որ իրա զօշընին ինչ զդար հաց ու խօրակ ա էթըմ, էն զդար ձեզ տա, թէ ուտէք, ախչիկը կըտա, թէ չուտէք, գլխներս պըտի կտրի։

Էտ շատ հաց ուտողը ասեց. Թող էտ դա իմ ջանին, ես մենակ կուտեմ։

Թէք ընկան քնեցին։ Առաւօտը վեկացան, Թաքաւորը հրաւիրեց։ Գնացին հեռու նստեցին, էտ շատ հաց ուտողը կանգնեց յառաջ, հացը բերին՝ ճխտեց պըլտուխը, սալով միսը բերին՝ ճխտեց պըլտուխը, սինով փլաւը բերին՝ ճխտեց պըլտուխը, մի կողմից ձէն ա տալիս՝ Սոված մեռա։ Թաքաւորի պատրաստած կիրակուրը քոմմա կերաւ։

Թաքաւորը էն մնացած հինգ ախպօրը բերուց օթախը կանոնաւոր ճաշ տվուց։

Էկաւ իրիկունը մթնեց, որ պէտք ա քնեն, էտ գլխի տնկըվողը էլ եթ տնկըվեց։ Թաքաւորի մասլահաթը էս էր, որ առաւօտը փահլըվան ուզենք, կոխ պրծնեն։ Ունէր Թաքաւորին մի հատ առիւծ, կապած, խամ, դրի վրին բաց Թողա՝ կը ճղի։ Էտ գլխի ցից ըլողը վեր էկաւ, ասեց. Ախպէրտինք, մեր գործը շատ դժար ա, վերէք փախչենք։

Ասեցին. Ընչի՞ համար փախչենք։

Ասեց. Մեզանից առաւօտը փահլըվան պըտի ուզի, մի հատ առիւծ ունի, բրախ կըտան, մեզ կը ճղի։

Էն ծառ քոքանան անողը ասեց. Էտ իմ յաշկի վրա, արխէին քնէք։

Առաւօտը լիսացաւ, Թաքաւորը կանչեց. Պըտի փահլըվան

բերէք, իմ փոխլվանի հետ կոխ բռնի, թէ չէ՝ գլխներդ կլկտրեմ։

Ծառ քոքահան անողը գնաց նի մտաւ մէյդան, զօչալ ապէն ձեռը քցեց առուծին, քաշեց մէջ տեղից ճղեց, մի ոտը մի դին քցեց, մի ոտը մի դին։

Թաքաւորն ասեց. Հա՛յ, հայ, տարան իմ ախչիկը։

Թաքաւորը տարաւ էտ մարթկանցը իրա օթախը, ճաշ արվուց, ճաշ կերան։ Գնացին էլ եթ իրանց տեղը։ Գլխի վրի ալնկըվողը էլ եթ անկըվեց։ Թաքաւորը ասեց. Իմ ախչիկը կըտանեն, ո՞նց անենք։

Նապըրի մինը ասեց. Բերէք դրանց տակը քանդենք, բարութ լցնենք, կրակ տանք, կոտորվեն։

Գլխի վրի անկըվողը վեր էկաւ, ասեց. Ախպըրտանք, մեր տակը պըտի լախըմ տան, վերէք փախչենք։

Ջուր խմողը ասեց Էտ էլ իմ յաշկի վրա։ Վեկացաւ գնաց ծովի ղրաղը, բերանը դէմ արուց ծովին, ծովը սաղ քաշեց փորը, էկաւ տեսաւ որ դրանց տակը լաղըմել են, դա բաց թողուց իրան փորի ջուրը, գետնի օխտը դաթն անցկացաւ, բարութը նամացաւ, ինչքան կպցրին, էլ չկպաւ։

Խապարը գնաց Թաքաւորին, որ չոր բարութը լցնում են, Թաքաւորն տպրած կենա, դառնում ա ցեխ, չի կպչում։

Թաքաւորը մտածեց, ասեց. Ա՜յ հա՛յ, ասեց, տարան իմ ախչիկը։

Էլ եթ գլխի վրի անկըվողը անկըվեց։ Թաքաւորը մասլահաթ էր անում, ասեց. Ժամանակը դըզվեց մո՞նց անենք։

Մէկը վեկալաւ, ասեց. Բերէք դրանց դեղենք։

Աշպազին հրամայեց Թաքաւորը. Երկու տեսակ կիրակուր կեփես, մէկը դեղած, մէկը Թամուզ։

Գլխի վրա կաննողը էլ եթ վեր էկաւ ասեց. Ախպըրտինք, վերէք փախչենք։

Աւչու ապէն ասեց. Ընչի՞ համար։

Ասեց. Մեզ պըտի դեղեն։

Զոպանն ասեց. Էտ էլ իմ յաշկի վրա։

Առաւօտը Թաքաւորը դրանց կանչեց ճաշի վեցը մի դին նստեցին, Թաքաւորի մարդկանցից վեցն էլ մի դին նստեցին։ Աշպազը բերուց ամանիքը. դեղած ամանիքը դրուց էտ մարթկերանց յառաջը, անդեղը դրուց Թաքաւորի մարթկերանց յառաջը։

Զոպանն ասեց Թաքաւորն տպրած կենա, էս ճանճերին հրամայա մեզանից հեռանան, որ մենք ճաշ ուտենք։

Ասեց. Ես ո՞նց ճանճերին հրամայեմ, որ հեռանան, ձեռով ըսենց արէք, կը հեռանան։

Ասեց. Ինձ իրաւունք տուր, ես հեռացընեմ։

Ասեց. Իրաւունք ա։

Դա ըլլուլը դրուց բերանը, ածելու պէս էտ ճանճերը բանցրացան, հաղում ին։ Դրանք ըոլորը էսպէս յաշկերը քցեցին ճանճերին, էտ ամանիքն էլ տեղից հռացին, դեղած ամանիքը գնացին Թաքաւորի յառաջը, անդեղ ամանիքը էկան դրանց յառաջը։ Հէնց որ տեհաւ ամանիքը փոխվեց, ըլլուլը վեր դրուց։ Դէ, ասեց, կերէք հայնելդ։ Սկսեցին հաց ուտելու, Թաքաւորի մարթը ձեռը հացի չտվուց, իմացան որ դեղած ամանիքը էկել ա իրանց յառաջը։

— Դէ վեր, ասեց Աւչու տղէն, քու ախչիկը տուր, տանենք։

—Վեր, ասեց, գնանք քու քաղաքդ տեսնենք, նոր ախչիկս տամ։

Վեկացան մի ձի Թաքաւորը նստեց, մի ձի Աւչու տղէն, քշեցին գնացին Աւչու տղի քաղաքը տեսնելու։ Էկան նի մտան Աւչու տղի օթախը. գնաց քաղաքը ման էկաւ, տեհաւ կեր ու խումի քաղաք ա, շատ հաւանեց։ Եա էկաւ տեղը, ասեց. Տվի որ տվի։

Ախչիկն ասեց. Ընչար ես էթամ ոչ տեսնամ դրա քաղաքը՝ առնիլ չեմ։

Վեկացաւ ախչիկը, ձի նստաւ տղի հետ, որ գան քաղաքը, տեսնան։ Աւչու տղէն ասեց ախպօրտանցը. Վերէք, տարա ախչիկանը։ Էկան հասան Աւչու տղի օթախը, տարաւ իրա քաղաքը մտան ածեց, ջահել ախչիկ, լաւ քէֆը որ տեհաւ, մի սրհաթ մի տեղ կանգնեց, հինգ սրհաթ մի տեղ կանգնեց, սրտիցը չէր տալի, որ էտ քաղաքիցը դուս գա, իրա հինգ ախպէրն էլ նի ին մտել քաղաքը, հետը մանին գալի։ Աւչու տղէն հրամայեց, գեամին երընմիշ էլաւ, գեամին հասաւ ընչար ծովի մէջ տեղը, էս ախչկա սրտիցը տալիս չէր, որ քաղաքիցը դուս գա, ասեց. Արի տղա, էթանք, ես քեզ առնում եմ։

Մնէլ էկաւ տղի օթախի կուշտը, տեհաւ որ ծովի մէջ տեղն ա. Այ հայ, ասեց, տղա, էս ինչ օյին բերիր իմ գլուխը։

Ասեց. Քեզ առնում եմ։

Ասեց. Չես կարա տանի։ Ախչիկը գլխի լաչակը վեկալաւ, քցեց ծովը։

Տղէն տեհաւ որ գեամին ետ դառաւ դըրա չորը։ Տղէն ասեց. Ա՜յ հայ, ախչիկը փախաւ։ Զուկը դուս էկաւ. Հը՛, ասեց, ինչ ա, տղա։

Ասեց. Լաչակը քցեց ծովը։

Զուկը հրամայեց, ձկների մէկը լաչակը վեր կալաւ բերեց, տվեց տղին։ Տղէն դրուց ջերը, գեամին էլի ետ դառաւ։

Ախչիկն ասեց. Ձեռ կարա տանի, տղա։ Հանեց դանակը քցեց ծովը։

Գեամին եռ դառաւ դըբա էլ եթ էն կողմը։

Ջուկը դուս էկաւ. Հը՛, ասեց, ինչ ա, Աւշու տղա։

Ասեց. Դանակն ա քցել ծովը։

Հրամայեց ձկներին, գնաց մէկը դանակը վեկալաւ բերուց։ Աւշու տղէն առաւ, դրուց ջէրը։ Գեամին էլ եթ եռ դառաւ դըբա իրանց դիրը։

Ախչիկն ասեց. Ձեռ կարա տանի, ա՛յ տղա։ Ասեղը վեկալաւ քցեց ծովը։ Էլ եթ գեամին եռ դառաւ դըբա դէնը։

Ջուկը դուս էկաւ, ասեց. Ի՞նչ ա, Աւշու տղա։

Ջուկը հրամայեց մանդը ձկներին, մանդը ձկները ասեղը վեկալան, բերին տվին Աւշու տղին։ Գեամին եռ դառաւ էլ եթ դըբա Աւշու տղի դիրը։

Ախչկա թլիսմը հատաւ։

Ասեց. Ըսուց եռը ես քեզ կառնեմ ու կառնեմ։

Էկան նստեցին, հինգ ախպէրը, մընէլ էտ ախչիկը, մընէլ Աւշու տղէն, ուրախ ուրախ մի լաւ հաց կերան։

Ախչիկն ասեց. Դէ, տղա, ասա, ինձ քեզ համար ես ասենըմ։

Ասեց. Չէ, ասեց, քեզ ասենըմ եմ մեր թագաւորի համար։

Ասեց. Ես կը մեռնեմ, թագաւորին չեմ ասնի, ես պըտի քեզ ասնեմ։

Ծառ քոքահան անող տղէն ասեց. Ես որ հասնեմ ձեր քաղաքը, բոլորին կը սպանեմ, քե կը դնեմ թագաւոր։

Էկան դուս էկան չորը։ Էտ տղէքը բոլորը միասին, մէկ էլ ախչիկը նի էլան ձիանը, էկան թագաւորի պալատը։ Հասնելուն պէս՝ էտ ծառ քոքահան անողը սըֆթա տվուց նաղըրին սըպանեց, եռա տվուց թագաւորին սրպանեց, եռա տվուց դրա նաղիր վաղըրին սըպանեց։ Բերին Աւշու տղին դրին տեղը թագաւոր, օխտն օր, օխտը քշեր քաղաքին հաց տվին, Աւշու տղին հարսանիք արին, Աւշու տղէն տեղը նստեց թագաւոր, էտ տղերանց մէկին նաղիր դրուց, մէկին վաղիր դրուց, բերատղին էլ դրուց դուլլուղի։

Ներանք հասան իրանց մուրաղին, դըք էլ հասնէք ձեր մուրաղին։

Ասաըծանից վեր ընկաւ իրեք խնձոր, մէկը ասողին, մէկը լսողին, մէկը յանկաճ դնողին։

ԲԵՐԴԱԿ ԹԱԳԱՒՈՐ.

(Օշական *).

Ժամանակով մի թաքաւոր կար, էտ թաղաւորին մի տղա ունէր, անունը Բերդակ։ Արի տես, էտ տղէն հասակը հասաւ, հէրը ուզեց փսակի. տղին ասեց. Ա՛յ որթի, միտք ունեմ քեզ փսակեմ, համա քու դրութունիցդ տեղեակ չեմ, աշխարք դուս չես էկել, որ էտպէս ա՝ գրկեմ գան վաքիլ, վազրրի, սադրաղամի տղէքը՝ նրանց հետ ձին նստէք, գնացէք ման գալու։

Ասեց. Շատ լաւ ես ասում։

Կանչեցին սադրաղամի, վաքիլ, վազրրի տղէքը, նի էլան ձիանը, գնացին մանգալու։ Օրը մի կողմի վրա։ Առաջին օրը արևելեան կողմը գնացին, երկրորդ օրը հարաւային կողմը գնացին, չորրորդ օրը հիւսիսային կողմը գնացած ժամանակը շատ ման էկան դէս դէն, բեղարեցքն, մի յաղրրի վրա վեր էկան. գաց կերան, ջուր խմեցին, հովացան, թէք ընկան քնեցին։ Համա էս թաքաւորի որթու քունը չատաւ։ Հնկերները որ քնեցին, յինքը վե կացաւ, նիլաւ ձին, պըտատեց էս կողմը, էն կողմը, նիլաւ սարի գլուխը, մտիկ տվուց էն գըհի դաշտը, տեհաւ շատ չադրներ, էլիաթ (ժողովուրդ)։ Ա՛ւ անեկու ժամանակը աւն էկաւ աղաքը, աւի քամանն ընկաւ՝ յետ ածեց, գնաց, նի մտաւ էտ էլիաթի մէջը, տեհաւ որ շատ մարթիկ թոփ էլած են մի տեղ, հարցրուց նրանց, թէ էտ ինչ մարթիկ են թոփ են ելել ըտեղ, ասեցին. էս թաքաւորի ախչիկը տալիս են մարթի, ուզընկան ա էկել։

— Ուզընկանը ո՞նց ա ուզում։

Ասում են. Ախչիկա յառաջին մի սինի կա, սինու մէջ մի խնձոր, էն ուզընկանը թէ կարեցաւ էն խնձորին նետով տալ,

---

Պատմեց 1913 թ. Յուլիսի 17-ին Օշական գիւղում նոյն գիւղացի Մկրտիչ Զարգարեանը, 57 տարեկան ծերունին, որ այժմ ժամկոչ է եւ փոքր ինչ գրագէտ։

էն վախտը էտ ախչիկը նրանն ա. թէ չէ՝ նրանը չի։ Շատերը ըտենց գալիս են, չեն բաշարում, դարդակ էթում են։

Էս Թաքաւորի տղէն ասեց. Եկէք տենամ, ես կռփում տալ։

Էտ քաշվեցին, ախչկա պատակերը տղին էրևաց, տղէն ուշաթափ էլաւ, ընկաւ գետին։ Ջուր բերին, ածեցին վրէն, տղէն յուշքի բերին։ Տղէն վեր կացաւ, կանգնեց։ Նիլաւ ձին, նետը առաւ ձեռը։ Մտիկ արեց ախչկա յառաջի խնձորին, նետով տալու հետ խնձորը թռաւ՝ դիպաւ ախչկա գոշին. ախչիկը ընդեղ ձէն տվուց՝ ասեց. Գնա, տղա, ով որ քու կռճակները դուս ածի և մէջը ածի, նրան առնես։

Էտ տղէն թողուց էկաւ։ Էն յաղբրի վրին, ինչ վեր են էկել, տեհաւ որ ընկերներ չկա. դու մի ասիլ՝ ընկերները վեր են կացել, տեհել Թաքաւորի տղէն իրանց կշտին չի, ընկել են ման են գալի։ Էս տղէն տեհաւ որ տղէքը սարքմն են ման գալի, կանչեց. Էկէք, էկէք։ Էկան կուշտը՝ դրան գնամիշ արեցին (նախատել). Ա՛յ քու տունը Աստված շինի, առանց մեզ յուր իր գնացել. մենք մեռանք քեզ ման գալով, մեր։

— Դէ, ասում ա, իմ քունը չը տարաւ, ասեցի նիլնեմ ըտեղրանք մի քիչ ման գամ։ Ման գալած ժամանակը նիլա սարի գլուխը, տեհա որ էնդիհը էլիաթ, շէլլիկ կա, աւն ընկաւ յառաջս, դրա քամակիցը ընկա, գնացի նի մտա էտ էլիաթի մէջ, տեհա մի բոլուկ մարթիկ թօվ էլած են, հարցրի դրանց թէ էտ ինչ բան ա՝ դրանք ինձ ասեցին, Թաքաւորի ախչիկն ա, ուզող ա էկել։ Եռև ես ասեցի, թէ էտ ինց են ուզում։ Ասեցին. Թաքաւորի ախչկա յառաջը մի սինի կա դրած, մի հատ խնձոր միչին, ինչ մարթ էկաւ ուզնկան, թէ էն սինու միչի խնձորին նետով տվուց՝ էն ախչիկը նրանն ա, թէ չկարողացաւ՝ դարդակ էլ կենթա։ Ես ասեցի, թէ եղէք տենամ ես կռփում տալ, էտ մարթիկը էտ քաշվեցին, էտ ախչկա յերեսը տենալուն պէս յուշս գլխիցս գնաց. հետո էկան, թոփ էլան ինձ վրա, ջուր ածեցին, յուշկի բերին, վեր կացա կաղնեցի, նիլա ձին՝ նետս առա ձեռս, մտիկ արի խընձորին, նետով տալուն պէս՝ առաւ խնձորին, խնձորը դիպաւ ախչկա գոշին։ Ախչիկը ձէն տվուց. Գնա, ասեց, տղա, քի տենամ, ով որ քու կռճակներդ դուս ածի, մէջը ածի, նրան արժանի ըլես։ Բաց թողացի, էկա, ախպէրտանք։ Նոր ըտիանց քշեցին էկան պալատը, էտ ձին բաց թողուց, ընկերտանցը բաց թողուց, նի մտաւ իրա օթախը, ոչ խօսալ, ոչ ասիլ, ոչ էլ հաց ուտիլ. հէնց ըտենց մնաց։ Հէրը, մէրը հաց ղրկեցին՝ ետ ղրկեց, ինչ որ իրեն պէտք էր ղրկեցին՝ ետ ղրկեց. բանի ձեռ չտվուց։ Հէրը, մէրը մնացին

շիվարած, թէ էս տղէն խէ՞ պըտի ըսենց ըլի։ Հէրը մօրն ասեց. Ա՛յ, կնիկ, քու տղէն ա, բալքի մի խօստովանանք ղրից ունի. ինձ չի ասըմ, բալքի քեզ ասի. գնա խօսացրու, տեսնանք ի՞նչ ա ասըմ էտ տղէն։ Մէրը գնաց խօսացրուց, բան չխօսաց, հէրը գնաց խօսացրուց, բան չխօսաց. էկան մարթ ու կնիկ մասլահաթ արին. կանչենք յիրա հընկորտանցը, բալքի նրանք էթան խօսացնեն. կանչեցին հընկորտանցը. Գնացէք տղին խօսացրէք, մաքի մէջ ա ընկել, իրան փչացընըմ ա, տեսնանք ի՞նչ ա դրա միտքը, ինչ ուզըմ ա, կատարենք։ Տղէրքը գնացին խօսացըրեցին՝ բան չխօսաց։ Էս տղէքը եօ դառան, դրան գնամիշ արին (նախատեցին). Դու թաքաւորի որթի, մենակ տղա, մարթ պակաս չի, մի ցաւ չունես, դու ի՞նչ ասես, որ քու հէրդ կատարի ոչ. թէ հօրդ ասըմ չես՝ մեզ ասա, մենք կէթանք, հօրդ կասենք, ինչ որ ուզըմ ես՝ ասա։ Տղէն վէ կալաւ՝ ասեց։ Մի բան էլ չեմ ուզըմ. մի տեղ մի ախչիկ եմ տեսել, էս մեր ման էկած սարի քամակըմն ա. էն ախչիկն եմ ուզըմ, թէ կուզի, իրան տղէն եմ, թէ չի ուզիլ՝ ըսենց պըտի փչանամ՝ էթամ։

Էկան էտ ասեցին իրա հօրը. հէրը կանչեց մօրը, ասեց. Ա՛յ կնիկ, մեր տղէն ըտդամ ինչ միտք ա անըմ, կնիկ ա ուզըմ։

Մէրը վէ կալաւ հօրը ասեց. Բա ի՞նչ ես ասըմ, ա՛յ մարթ։

Ասեց. Ա՛յ կնիկ, ինչ պըտի ասեմ, ես ունեմ մի տղա, էլ ուրիշ ժառանգ չունեմ, նա ուզենա հարսանիք ըլի, ես անեմ ոչ, կարամ։

Էտ թաքաւորն էր՝ թօփ արուց իրա սինօթականները, ասեց. Գիտէ՞ք ընչի համար եմ թօփ արել ձեզ, որ իմ տղէն միտք ունի փսակվելու, ուստի ախչիկն էք յարմար տեսնըմ, էթանք ուզենք։

Ասեցին. Թաքաւոր, մեր ասելովը չի՞լիլ. տղին հարցրէք, տեսնենք ուստի ախչիկն ա ուզըմ։

Գնացին, տղին հարցրին, տղէն ասեց. Մեր էս սարի էն գիհը մի ախչիկ եմ տեսել, էն ախչիկն եմ ուզըմ, ումը կըլնի, կըլնի, թէ նախրչու, թէ թաքաւորի, ինձ դարուլ ա։

Էկան ասեցին թաքաւորին։ թաքաւորն ասեց. Դէ գնացէք, ասեց, էտ ասած ախչիկը ուզէք։

Վէ կացան գնացին, գնացին հարցնելով քթան, որ այսինչ թաքաւորի ախչիկն ա։

Գնացին թաքաւորի տանը վեր էկան, ասեցին, խօսացին ու ուզեցին էտ ախչիկը. էկան իրանց թադարէքը քաշեցին, գնացին փսակեցին, առան էկան տղի հօր տունը։

Օխտն օր, օխտը քշեր կերան, խմեցին, ուրախացան. օխտն օրից ետը հարսանիքը վերչացաւ, տարան մի օթախ, որ էս տղէն

ու ախչիկը յիրար կշտի քնեն. էն քնելու վախտը տղէն թուրը հանեց, ախչկա ու իրա արանքը դրեց, թէք ընկան քնեցին. ըտենց քաշեց մի շափաթ, մի ամիս, մի տարի։ Ախչիկը նեղացաւ. Իմ հէրս ի՞նչ բան բռնեց, ես ախչիկ, էս ախչիկ, էլ սա իմ ընչի՞ս ա պէտքը։

Վէ կացաւ, գրեց իրա հօրը. Ա՛յ հէր, էս ի՞նչ բան բռնեցիր դու ինձ վրա, սա էլ ախչիկ, ես էլ ախչիկ. ինձ քցեցիր կրակի մէջ։ Բա հըմի ես ի՞նչ անեմ։

Հէրը կարթաց թուղաթը, կանչեց մօրը, ասեց. Ա՛յ կնիկ, մեր ախչիկը գիր ա գրել ինձ, թէ էս տղէն ախչիկ, ես ախչիկ, իմ ընչի՞ս ա պէտքը, ըսենց ա գրել, բա ի՞նչ անենք։

Ասեց. Ա՛յ մարթ, որ ըսենց ա՝ բերենք մեզ զօնախ, փորցենք, բալքի մեր ախչիկը սուտ ա խօսըմ։

Ասեց. Շատ լաւ ես ասըմ, կնիկ, ասեց։

Վէ կալաւ թաքաւորը գիր գրեց յիրա խնամի թաքաւորի վրին, թէ իմ փէսէն էլ, իմ ախչիկն էլ գրկի իմ տունս զօնաղ։

Վեկացաւ էտ թաքաւորը իրա հարսն էլ, իրա տղէն էլ գրկեց իրա խնամու տունը։ Էկան ըտի, թաքաւորը վեկալաւ կնկանն ասեց. Կնիկ, ասեց, մի կերպով փորձ առ, տենանք սուտ ա, թէ զորթ էտ բանը։

Փորձ առաւ՝ տեհաւ որ գրուսատ ա, ախչկա ասածն ա։

— Բա, ասեց, ի՞նչ անենք. կանչենք գրկենք Դէվստուն, ուրիշ ճար չկա։

Օրերի մի օրը թաքաւորը նստեց իրա փէսի հետ հաց էր ուտըմ, շատ ախ ու վախ արած վախտը, փէսէն հարցրուց, թէ հայրիկ, ի՞նչ շատ ախ ես քաշըմ։

Ասեց. Որթի, ախ չքաշեմ, ի՞նչ անեմ, ասեց. Դէվստունի թաքաւորից ինձ վրա թուղթ ա էկել, որ կուվենք պըտի, ես էլ կարալ չեմ, ըտրա հըմար ախ եմ քաշըմ։

Ասեց. Ըսկի ախ մի քաշի, թէ դու կարալ չես, ես կարամ։

— Որթի, ասեց, նա Դէվստունի թաքաւորն ա, ինց կարաս նրա հետը կուվիլ։

Ասեց. Դու ընչի՞ պէտքն ա, դու իրաւունք տուր՝ ես կարամ՝ կը կուվեմ։

Թաքաւորը իրաւունքը տվուց դրան, էս տղէն էր նի՛լաւ ձին, նետը քցեց քամակը, կանչեց Աստված, ու գնաց։ Դէ Աստված նրան բարի ճանապարհ տա, թող էթա։

Թաքաւորը, թաքուհին մասլահաթ արին (խորհրդակցեցին), թէ էտ էտ ա գնաց, էլ ետ գալ չի, մեր ախչիկը հըմի ՞ում տանք։

Բերին տվին վազըրի տղին։ Հարսանիքն արին, մի օթախ

տվին, որ էթան միտեղ քնեն։ Որ գնացին, տղէն թէղ շորերը հանեց, նի մտաւ տեղը. ախչիկը միտք էր անում, դէս ու դէն էր ընկնում։

Տղէն ասեց. Թաքաւորի ախչիկ, դէ արի քնենք, էլ քանի դէս ու դէն ընկնես։

Ասեց. Ես դայատ ունեմ, պըտի էթամ դուռը, էթամ դամ, նոր նի մտնեմ տեղս։

Էտ ախչիկը գնաց դուռը, էտ տղէն տեղի մէջին դէս շուռ էկաւ, դէն շուռ էկաւ, մտիկ տվուց տեհաւ, որ էն պուճախից (անկիւն) մուկը դուս էկաւ, գնաց էն պուճախը. դա տեղիցը վեր կացաւ, գնաց դռան տակիցը աւիլը բերուց, հէնց որ մուկը դուս էկաւ, որ գնալ պտէր էն պուճախը, աւլով տվուց՝ սըպանեց։ Ընչանք ախչկա դալը՝ իրեքը սըպանեց։ Վեր կացաւ, սինին վեր բերուց պատիցը, իրեքն էլ դրուց էն սինու մէջը. դրուց դրաղ։ Թաքաւորի ախչիկը նեքսեկ էկաւ, տղէն ասեց. Յարի, տես էս ինչ բան եմ սըպանել, իրեք հատ ջանաւար եմ սըպանել։

Ախչիկն ասեց. Բա խի՞ ես դրել էտ սինու մէջը։

— Ա՜յ քու տունը Աստված շինի, ասեց, սրանք ահագին ջանավարներ են, սրանք որ տանենք հօրդ շանց տանք, մենծ պարգև կունենանք։

Ախչիկն ասեց. Ամօթ ա, ամօթ, տար դէն քցի։

Տղէն ասեց. Չէ՜, ես կըտանեմ Թաքաւորին շանց կըտամ։

Ախչիկը գնաց դուռը, ասաց. Ա՜յ հայ, ասեց, էն Թաւուր մարթը ես կորցնեմ, սրա քամակը էթամ, իրեք մուկ ա սըպանէ՝ իրեք ջանավար ա շինում։ Ես պըտի էթամ նրան քթնեմ, սարու

ընեմ, քարում ընեմ, քոլուն ընեմ, ուղում ա սըպանվիմ, ուղում ա սաղ մնամ։

Ախչիկը ըտիան գնաց նի մտաւ մէհտարխանէն (ախոռ), էս դլխիցը ձիանոցը մտիկ տալով գնաց ընչար պուճախը. ձեռը տալուն մի ձի էլ ա տատանմիշ չելաւ. գնաց պուճախըմը մի սև ձի կար, արաբստանու ձի, էն ձին լաւ էլաւ իրա համար. բերուց էտ ձին թամքեց, մէհտարի շորերը հաքաւ, մզրախն առաւ ձեռը, ձին դոմիցը դուս քաշեց, նի՛ լաւ ձին ու քշեց ճամփէն, կանչեց Աստված ու գնաց։

Էն տղէն թող իրա տեղի մէջը մնա։

Էտ օղլուշաղը գնաց, Աստված գիտա՝ թէ ինչդամ ճամփա գնաց. գնաց նի մտաւ Դէվստանի երկիրը. տեհաւ որ մարթ մա-դաթ չկա, մտիկ տվուց Դէվստանի թաքաւորի պալատին, քշեց դըբա պալատը, արի տես, որ էս տղէն Դէվստանը վերչացրել ա բոլորը, թէ էգ, թէ արձ կտրել ա, մենակ մնացել ա ինքը պա-

լաստի միջին. արնի մէջը ինքը, ձին շաղախված, էկաւ վեր էկաւ՝ չար-հաւուզի վրա, որ լվացվի, ձիուն լողացնի։ Մըն էլ մարիկ ավուց դըբա դարբազէն, ուհաւ մի մարթ ա գալի։

— Ա՜յ ջանըմ, ասեց, ես Դէվլատուն վերջացրել եմ, էլ մարթ չկա, էս ինչ մարթ պըտի ըլի, գալիս ա դըբա ինձ։ Վա՜յ թէ, ասեց, որանից ինձ վնաս գա. էլ եթ նեաը քցեց քամակը, նի՛լաւ ձին. քշեց դըբա էտ մարթը։ Մխելի գնաց, մօտացաւ, հրեշտ իրա կնիկը։

Ասեց. Ա՜յ ախչի, դու ոնց ըստեղ։

Ասեց. Որտեղ դու, ես էլ ընդի, ապրինք միասին, մեռնինք միասին։

Ջիուցը վեր էկաւ, գնացին չար-հաւուզի կողքը նստեցին։ Ախչիկը ուհաւ, որ ոդէն արնոտ, ձին արնոտ ա, ասեց. Տղա, դու նստի դինջացի, ըհոգարած ես, ես ձիու թամքը կը լվանամ, կը թամբդացնեմ։ Տղէն նստեց, ախչիկը ձիանը լվաց, տարաւ կապեց գոմըմը, խոտը դրուց առաջը, էկաւ թամքերը լվաց, դրուց արևի դէմը, գնաց վիրևիցը բերուց մի թեշթ, սապոն, սանդր, պղինձ, բերուց օջախ արուց, ջուրը տաքացրուց, դէ, ասեց, տղա, շորերդ հանա, լվանամ։ Ինքը գնաց տղի կօճակները դուս ածեց, շորերը հանեց, տարաւ լվաց, փըռեց։ Ասեց. Տղա, գէ յարի, քեզ էլ լողացընեմ։

Տղէն ասեց. Դէ որ ըստենց ա, յարի յառաջ դու լեզացի, հետո ես։

Ախչիկը ասեց. Չէ, յառաջ դու լեզացի։ Տղէն ախչկա խօսքը չկոտրեց, յինքը լեզացաւ, ասեց. Ախչի, յարի հըմի էլ դու լեզացի։ Ախչիկը շորերը հանեց, մտաւ թեշաը, տղէն սկսեց լեզացնել, լեզացրեց, գլուխը սանդրեց, էն սանդրելու վախտը մազերիցը թախկուճ (սանդրելիս դուս եկած մազեր) դուս էկաւ, էն թախկուճը տղէն փըթափեց մատին, հանեց քցեց չար-հաւուզը։ Հետո դուրս էկան, շորերը հագան, հագնելու վախտը ախչիկը տղի չափրատանները մէր քցեց։ Տղէն էլ հագցըրուց ախչկա շորերը։ Նի էլան վիրև, իրենց հըմար հաց պատրաստեցին, նստեցին կերան։

Վի կացան ման էկան, մարիկ ավին դէս ու դէն՝ ընչանք էկաւ իրիկվա քնելու վախտը։ Ախչիկը տեղ քցեց, էրկըսով նի մտան մի տեղի մէջ, ախչիկը ձեռ մեկնեց էս տղին, տղէն վի կալաւ, ասեց. Ժամանակով ես մէկ ախչիկ տեսա, նրա ուզող տղէն պըտէր նրա յառաջի խնձորին նեատով տար, որ ուզէր, շատ տղէք ին էկել չէին կարացել, ես տվեցի նրա յառաջի խնձորին, էտ ախչիկը ձէն ավուց, ասեց. Գնա, տղա, քի տենեմ, քու չափրատանները օվ որ դուս ածի, մէր ածի, նրան արժանի ըլիս։

Կասես՝ էն ախչիկը դու ըլնես։

Ախչիկը ասեց. Ինձ էլ մի տղա պատահեց, և իմ յառաջի խնձորին որ տվուց, ես ձէն տվի ասեցի. Գնա տղա, օվ որ քու չափրաստներդ դուս ածի, մէր ածի, նրան արժանի ըլես։ Կասես էն տղէն դու ըլես։

— Էն տղէն որ կա ես եմ, էն ախչիկն էլ դու ես, ըսօր դու իմ կոճակներս դուս ածեցիր, մէր ածեցիր, դու իմն ես, ես քունը։

Ձիա տրին, քնեցին, էլ տղէն թուրը հանեց ոչ գնի տրանքը։

Ճտեղ սկսեցին տպրիլ. տղէն կեթար աւ կը բերէր, ախչիկը կեփէր, կուտէին։

Օրերի մի օրը ախչիկը տղին հարցրուց. Մ՚յ տղա, ասեց, իմ գլուխս որ սանդրեցիր, սանդրի դուս բերած թախկուճը ինչ տրիր։

Ասեց. Փըթաթեցի մատիս, հանեցի քըցեցի չար-հաւուղը։

Ախչիկը վա՛յ քաշեց, տղէն՝ թէ խի՞ ես վա՛յ քաշում։

— Բա ինչ անեմ, ասեց, ա քու տունը շինվի, խի՞ իր քըցում ջուրը, նրանով մենք ջաս կը քաշենք։

— Տնաշէն, ասեց, եքա Դեվստունը ես փըչացրել եմ, նրանով ջաս չենք քաշում, էն մի պուճուր թախքըճովը պըտի քաշենք։

Մնացին դրանք ըսի տպրելով։

Գանք՝ խաղարը ուսեցեց տանք.

Էս թախքուճը չար-հաւուղի բըբովը (խողովակ) ընկաւ ծովը, էտ ծովը էտ թախքուճը տանելով, տանելով հանեց մի թաքաւորի չար-հաւուղում։ Էտ թաքաւորին էլ ունէր լաւ ձիան, մէհտարներ (ձիապան)։

Օրերի մի օրը մէհտարները ձիանը քաշեցին չար-հաւուղի վրա, որ ջրեն։ Ձիանոց յաշկը առաւ էտ ջրի տակի թախկուճին, որ աստղի պէս պսպղում էր։ Ձիանը հուշտ էլան, էլ ջուր չխմեցին։ Մի շաբաթ քաշեց, թաքաւորի տղէն նի մտաւ մէհտարխանէն, տեհաւ որ ձիանը վեր են դիպել (լղարել են), մէհտարներին դուս արուց, ասեց, ըստուց հաբ ես պըտի պահեմ ձիանը։ Էկաւ ձիանը ջրելու ժամանակը, քաշեց ձիանը չար-հաւուղի վրին, տեհաւ ֆուռացրրին, ետ քաշվեցին, չխմեցին։ Դա ձիանը ըաց թողուց, մակ արուց չար-հաւուղին, տեհաւ մի բան աստղի պէս պիծին ա տալի հաւուղի տակին։

Ասեց. Կա՛, չկա՞ սրանից ա. էս ի՞նչ բան պրտի ըլնի։

Ղրկեց քաղաքից լեղվոր բերեց, ասեց. Ի՞նչ էք ուզում, որ էտ հաւուղի պսպղացող բանը հանէք։

Ինչ որ իրանց հարմն էր, առան, նի մտան էտ հաւուղի տա-

կլոյ էտ պսպղացող բանը հանեցին, ավեցին թաքաւորի տղին։ Թաքաւորի տղէն մեհտարնեերին էլեթ կանչեց, ասեց. Տարէք ձիանը դուք պահեցէք, էլ հուշտ չեն ընիլ։

Տղէն վի կալաւ էտ պսպղող բանը, մտիկ արուց, տեհաւ վոսկի ծամ ա. դրուց թղթի մէջ, դրուց ջիբը, էկաւ տուն, լուռ ու մունջ նստեց. խօսացընելուս չխօսաց, բան չասեց, հէրը, մէրը կպան հարէն. Ա՞յ որթի, ասեցին, քեզ ինչ պատահեց, էտ ինչ մտածութան մէջ ես ընկիլ։

Տղէն վի կալաւ ասեց. Ուրիշ միտքը չունիմ, հանեց ջիբիցը էն վոսկէ ծամը շանց տվուց. Իմ մտածութունը էս ա, ասեց, ըտաւ տիրուհնէը ուզում եմ ձեղանից, որդի ըլի, պըտի բերէք։

Հէրն ու մէրը միացին շիվարած։ Սրա տէրը պըտի Դէվատնուհի ըլի, Դէվատուն ով կարա էթալ, որ բերի։

Թաքաւորն էր՝ Ջառ (հրովարտակ) քցեց իրա երկիրը, թէ էկէք տեհնանք, ով կարա էս ծամի տէրը բերի, ինչ ուզի՝ կըտամ. ոչ մի մարթ էլ ա չլինք առաւ ոչ։ Մի պառաւ կնիկ էկաւ կանչեց դրա յառաչը. Թաքաւորն ապրած կենա, ասեց, ես կը բերեմ։

— Դէ, ասեց, նանի, բերը, ինչ ուզես՝ կը տամ։

Ասեց. Թաքաւոր, ես էս խօսքմ եմ, համա պըտի տղիդ տանեմ հետս։

— Դէ, ասեց, որ էտենց ա, տղին խօսացընենք, տեհնանք՝ ինչ ա ասըմ։

Տղին հարցրին, ասեց. Դըվորը տանի՝ կեթամ։

— Դէ, ասեց պառաւը, ինձ համար մի նաւ շինիլ տուր։

Շինիլ տվուց. պառաւ կնկանը, իրա տղէն էլ, իրա պառաստութունն էլ հետը։ Պառաւն էլ նստեց նաւը, տղի հետ դընաց։ Շատ գնաց, քիչ գնաց, դուս էկաւ Դէվատուն։ Էտ նաւը ծովի դրտղին թողեց, էտ տղէն էլ հետը, ասեց. Տղա, ընդամ կը մնաս, ընչանք ես դամ։ Պառաւը վի կացաւ ու գնաց ընչար Դէվատունի թաքաւորի ամարաթի տակը։ Ամարաթիցը մի ակուշկա մտիկ էր անըմ ծովին. դրա տակին վի ընկաւ, ձէն էր տալի.

— Խանը՞մ, անճար եմ, անդամալուծ եմ, խղճացէք ինձ։

Մի օր էս թաքաւորի ախչիկը բերուց, ջուր վեր ածեց ակուշկովը, տեհաւ մի պառաւ կնկա ձէն ա գալի. բանի տեղ չդրուց. էտ պառաւը պըտըտվելով գնաց դարբաղէն քթաւ. մնաց ըսկ նստած. իրիկունը թաքաւորի տղէն էկաւ, ընկաւ դրա ոտը։

— Աղա ջան, ասեց, խեղճ եմ, հիւանդ եմ, խղճացէք։

Թաքաւորի տղէն դրա ասածը բանի տեղ չդրուց, անցկացաւ, գնաց տուն։ Իրան կնկանը վի կացրեց. Թաքաւորի ախչիկ, ասեց, գալիս, ասեց. դարբաղի դրանը մի պառաւ կնիկ կար, լաց

էր ընում, միկրոբում էր, սիրուս շատ կսկծաց նրա հըմար. ի՞նչ կըլնի՝ նրա հըմար մեզի հաց տանես, ուտի։

Կնիկը վե կալաւ, մարթին ասեց. Դէ թող կորչի, նրանից մեզ ինաս կըգա, յերես մի տալ։

— Ա՜յ, անաշէն, ասեց, նա ի՞նչ բան ա, որ նրանից մեզ ինաս գա, կըլի որ, ասեց, նա մեզ հարկաւորվի, հաց ուտացընենք, պահենք, մեզ ծառայութուն կանի։

Կնիկը չլսեց, թաքաւորի տղէն հաց, բան վե կալաւ, տարաւ տվուց էտ պառաւին՝ կերաւ։

Յեքսի օրը ժրեց պառաւը, էկաւ նարդիվանը սրրեց, հա սրրեց, էն յէքսի օրը բալկոնը սրրեց, ջուր բերուց։ Թաքաւորի տղէն կնկանն ասեց. Տեսար, որ ասեցի պահենք, մեզ պէտքը կըգա։

Դէ, թաքաւորի տղէն էր, ասեց. Նանի, էլ դրսեը մնալ մի, յարի նեքսև, օթախը։

Էտ պառաւը գնաց օթախը, դրանց հըմար աւիլ արուց, տեղ քցեց, օջաղ արուց, մին օր, հինգ օր, տասն օր։ Տասն օրից ետը թաքաւորի ախչկանն ասեց. Ափսոս, որ մի քշերվան քէֆ ունես։

Թաքաւորի ախչիկն ասեց. Ի՞նչ անենք, նանի, Աստված մեզ ըսենց ա կամեցել։

Մնաց էն յէքսի օրը, էլ ետ ասեց. Ափսոս, թաքաւորի ախչիկ, որ մի քշերվա քէֆ ունես։

Ասեց. Լաւ, նանի, որ չկա, ի՞նչ անենք։

Պառաւն ասեց. Զէ, որթի, որ քու սիրտը ուզի՝ կըլի։

Ախչիկն ասեց. Շատ էլ էս հրոպպէիս սիրտս ուզում ա, Դէվատունն աւիրված, մարթ չկա, մադաթ չկա, որտիան ընի։

Պառաւն ասեց. Որ ըլի, կընթունե՞ս։

Ասեց. Որ ըլի, խի՞ չեմ ընդունի։

— Դէ, ասեց, յարի ինձ խոսքը տուր, ես վորդկանց ըլի՝ բերեմ։

Ասեց. Խոսք եմ տալի, բեր։

Պառաւն էլ բաց թողուց ու գնաց։ Գնաց ծովի ղրաղը. Հը՜, ասեց, տղա, նաւիցը դուս յաթի։ Առաւ տղին, բերուց ամարաթ։

Թաքաւորի ախչիկը տեհաւ, մի լաւ, պատկերքով տղա, սիրտը կպաւ։ Ցերեկը նրա հետ էր անցկացնում, քշերը յերա մարթու։ Մի քշեր իրան մարթի հետ քնած վախտը մարթը զարթնում ա, տեսնում ա, որ յերա կնիկը քամակը իրեն ա արել, էրեսը շուռ տվել էն դիհը. ձէն ա տալիս, ասում ա. Է՜ թաքաւորի ախչիկ, էտ ի՞նչ բան ա, յերեսդ շուռ ես տվել էն դիհը, քամակը ինձ ես արել։

— Բա ի՞նչ անեմ, ասեց ախչիկը, մի կողքի հո ընչար լիս

քնիլ ըլնիլ չի, էս կողքս թմրեց, գառա էն կողքիս։

Յէքսի քշերը տեհաւ որ էլ եթ յերեսը շուռ ա տվել էն դիհը, քամակը յերան արել։

— Հը՞, թաքաւորի տխչիկ, ըսօր թինչ պատահեց։

— Սխալվել եմ, ներողութուն։

Էկաւ յէքսի օրը՝ էլ եթ տեհաւ, յերեսը շուռ ա տվել էն դիհը, քամակը իրան արել։ Էլ խօսաց ոչ թաքաւորի տղէն, ասեց. Հա՜, ըստեղ մի բան կա։ Առաւօտը քշերով վեր կալաւ, նեսը քցեց քամակն ու գնաց. ամարաթի դէմեցդէմ ձորի էն դիհը մի յախրուր կա, վրին էլ մի մեծ ծառ, որ քանի մարթ մանի էտ ծառի մէջը, հէչ մարթ չի մանալ։ Նի՛լաւ ծառի գլուխը, մտիկ տվուց իրա ամարաթը, տեհաւ որ մի լաւ տղա, մէկ էլ իրա կնիկը, մինն էլ էն պառաւ կնիկը յիրար հետ ման են գալի, թաքաւորի տխչկան առել են իրենց մէջ տեղը։ Մնաց շիվարած։ Միտք էր անում, իրա մտքի հետ էր, տեհաւ որ մի դավրիշ էկաւ յախրրի վրին վեր էկաւ, իրան քաշկուլը դրեց դեարենը, խուրջինը ուսից վեր ընեց, խուրջինի միջից հաց հանեց, փռեց, ծոցիցը մի խնձոր հանեց, տվուց բաց արուց, միջիցը հանեց մի նաղանի օղլուշաղ, դրուց կուշաը՝ նստեցին հաց կերան։ Կերան պրծան, դավրիշն ասեց. Կնիկ, քունս տանում ա, նստի, գլուխս դնեմ ծնկանդ, քնեմ դինջանամ, վեր կենամ, էթանք։ Դավրիշի կնիկը նստեց, դավրիշը գլուխը դրուց ծնկանը, քնեց։ Որ քնեց, կնիկը խուրջինը մոտեցրուց, դավրիշի գլուխը վեր կալաւ դրուց խուրջինի վրա, ինքը նստեց, հաց բաց արուց, ձեռը տարաւ ծոցիցը մի խնձոր հանեց, տվուց բաց արեց. միջիցը հանեց մի սիրուն տղա, դրուց հացի դրաղը՝ յիրար հետ հաց կերան։ Հացը ուտելուց ետը, դարվիշի կնիկը էս տղի հետ քէֆ արուց, պրծաւ, էտ տղին դրուց խնձորի մէջը, խփեց ու դրուց ծոցը։ Դնաց նստեց, դավրիշի գլուխը վեր կալաւ, դրուց ծնկանը։ Շատ քնեց, քիչ քնեց, դավրիշը դարթնեց, դարթնելուց ետը, յերեսը լվաց յախրրրմը, չիրուխ շինեց քաշեց, կնկանը դրուց խնձորի մէջը, խփեց, դրուց, ծոցը, խուրջինը վեր կալաւ որ էթար՝ թաքաւորի տղէն ծառիցը ձէն տվուց. Է՛յ դավրիշ, կանգնի։

Դավրիշը շըշկըլվեց, էս վորտիանց ա գալի էս ձէնը։ Դէս մտիկ արեց, դէն մտիկ արեց, բան քթաւ ոչ, ուզեց որ էթա՝ էլ եթ ձէն տվուց ծառիցը. Դավրիշ, կանգնի, վեր եմ գալի։ Դավրիշը վիրև մտիկ արուց, տեհաւ մի թրնդած (քաջ) մարթ, տաղ արուց, կանգնեց, ընչանք էտ մարթը վեր էկաւ։

— Դավրիշ, ասեց, իմ դոնտան ես։ Յարի էթանք իմ տունը։

Գցեց քամակը, տարաւ իրա տունը։

Ասեց. Պառաւ, օջախ արա, հաց պատրաստա։

Ասեց. Ա՜յ որթի, էսօր աւ չես բերել. ի՞նչ էփեմ։

Ասեց. Դէ մի քաշովի էփա։ Պառաւը քաշովին էփեց, պրծաւ, թաքաւորի տղէն ասեց. Բեր սուփրէն (կամ դասատախտն) փռի, օխտը հաց, օխտը բաժին կիրակուր բեր։

Ասեց. Մենք յիրեք փոքի ենք, մին էլ դավրիշը՝ չորս, էլ խի՞ ես օխտը բաժին ուզում։

Ասեց. Ես ասում եմ բեր, բեր։ Պառաւը օխտը հացը, օխտը բաժինը բերուց, սուփրի վրին դրուց ջերկով։

Թաքաւորի որթին ասեց. Դավրիշ, կողքիդ ամանին մի տէր եմ ուզում քեզնից։

Դավրիշն ասեց. Ես մի ջան եմ, էլ մարթ որդիան բերեմ։

Ասեց. Գլուխտ կը կտրեմ, պըտի բերես։

Դավրիշը տեհաւ որ ճար չկա՝ ձեռը տարաւ ծոցը՝ խնձորը հանեց, ձեռով տվեց, տապակ արուց, մէջիցը հանեց մի օղլուշաղ, դրուց յիրա կողքի ամանի վրա։

Էտ դառաւ, դավրիշի կնկանն ասեց. Էտ կողքիտ ամանին քեզնից մի տէր եմ ուզում։

Դավրիշի կնիկը ասեց. Ես որդիան բերեմ։

Ասեց. Անկարելի ա, գլուխտ կը կտրեմ։

Տեհաւ ճար չկա՝ դավրիշի կնիկը ձեռը տարաւ ծոցը՝ խնձորը հանեց, ձեռով տվուց, տապակ արուց, մէջից մի ջահէլ տղա հանեց, դրուց էն ամանի վրա։

Դավրիշը տեհաւ, գլուխը կախ քցեց։

Թաքաւորի տղէն ասեց. Պառաւ, էս թաքաւորի ախչկա կշտի բաժընին քեզանից մի տէր եմ ուզում։

— Ա՜յ, որթի, ասեց պառաւը, դու գիտես, ես ինչ օրով եմ էկել ընկել ըստի, ես տէր որդիան բերեմ։

— Պառաւ, ասեց, տենը՞մ ես էս թուրը, մի հետ կը տամ, խօսալ մի, գնա բեր։

Պառաւը գնաց, էն տղի կռնիցը բռնեց ու բերուց, էտ ամանի վրին նստացրուց։

Էտ տղին որ պառաւը բերուց՝ դավրիշը բանձրացըրուց, մտիկ արուց էն տղին՝ թաքաւորի ախչկանը, մտիկ արուց յիրա կնկանը, գլուխը տարաւ բերուց։

Թաքաւորի տղէն ասեց. Դավրիշ, ինձ ի՞նչ .շատ մտիկ ես անում, էն տղէն իմ կնկա սիրողն ա, էտ տղէն քու կնկա սիրողն ա, դրանց իրաւունքը տվի քեզ՝ դատի։

Դավրիշն ասեց. Թաքաւորի որթի, որ տվեցիր ինձ սրանց իրաւունքը՝ ես էլ տվեցի քեզ, ոնց կը դատես՝ դատի։

ԻՍԱՍՏՈՒՆ ԻԾԻ ՀԵՔԻԱԹԸ.

(Օշական *)

Կար չկար իրեք ախպէր կար, իրեքն էլ կնկա տէր։ Մէկ էլ մի Ջաղացպան կար։ Էտ Ջաղացպանին ունէր մի իմաստուն էծ, էտ իրեք ախպօրն էլ ունէին մի իմաստուն ձի։ Էտ իրեք ախպէրը Ջաղացպանի իծիցը խապար չէին, Ջաղացպանն էլ էտ իրեք ախպօր ձիուցը խապար չէր։ Օրերի մի օրը էտ իրեք ախպօր հացը հատել էր, մենձ ախպէրը ցորենը բարցեց ձիուն, տարաւ Ջաղաց։

Ջաղացպանը էս ձիուն տեհաւ թէ չէ, յիմացաւ էս ձիու իմաստութունը. ձիու տիրոնչը ասեց. Մարթ, ինձ մի էծ ունեմ քու ձիուդ գայիար, յարի մարջ գանք, դու քու ձիուդ վրա, ես իմ իծի վրա, տափ կենանք, իրեք հետ ես, իրեք հետ դու։ դու քթար՝ իմ էծը քեզ, ես քթա՝ քու ձին ինձ։

Ասեց. Ջաղացպան, դէ որ ըտենց ա՝ յարի ես իմ ձիու հունարն ասեմ, դու քու իծի հունարն ասա։

Ասեց. Լաւ։

Ասեց. Իմ ձին ընենց մի հունար ունի որ՝ հարամու մէջ ընկնի, յիրա տիրոնչը ընենց կը պահի, որ մարթ չի տենա։

— Դէ, ասեց, դու էլ քու իծիդ հունարն ասա։

Ջաղացպանն ասեց. Իմ իծին ընենց հունար ունի, որ տասը մարթ կամ տասնըհինգ մարթ բերես զոնաղ, ասես. Ա՛յ էծ, մորթվի, քերթվի, փրթվի, էփվի, յիրեք տեսակ կերակուր ել, յարի էս մարթկերանց յաղաքը փռվի, ուտեն, խմեն, քէֆ անեն, էն հրոպպէին կը կատարի։

Նոր էտ մարթիկը մարջ էկան, նա ձին դրուց օրալըդ, նա էլ էծը դրուց օրալըդ։ Համա Ջաղացպանի էծը կշտին չէր, նորաթչու ձին հետն էր։

Պատմեց 1913 թ. Յուլիսի 17-ին Օշականում նոյն գիւղացի միեւնոյն Մկրտիչ Զարգարեանը։

— Դէ, ասեց, հըմի ես տափ կենամ, թէ դու։

Զիատէրն ասեց. Դու տափ կաց։

Ջաղացպանն ասեց. Գնա յաշկերդ խփա։

Զիատէրը գնաց, յաշկերը խփեց, Ջաղացպանը տափ կացաւ։

Զիատէրը եա բաց արեց յաշկերը՝ ման գալու։ Շատ ման էկաւ դէս դէն, չկարաց քթնի։ Զին ասեց. Ա՜յ տղա, ըտենց մանգալով չես կարալ քթնիլ, գնա նի մէտ ցրտոնը, (Ջրաղացի անիւի տակը) ձէն տուր, ասա. Տափանի տակին ես, դուս յարի տափանի տակից, մեղք ես, կը մրսես։

Տափանի տակիցը դուս էկաւ. Տղա, ասեց, խփի, տարար իմ էծը։ Տղէն խփեց յաշկը, Ջաղացպանը գնաց ալիրը եա տվուց, մտաւ ալրատունը. ալիրը քաշեց վրին։ Էս տղէն աշկերը բաց արուց ման գալու, շատ ման էկաւ՝ քիչ չը գտաւ։ Զին խօսաց տղի հետ, ասեց. Ա՜յ տղա, ըտենց ման գալով կարալ չես քթնես, գնա, ասեց, ալիրը եա տու, ալրատանն ա. ասա. Վէ կաց, Ջաղացպան, քանի ալրի թողին մնաս, մեղք ես։

Տղէն գնաց ալիրը եա տվուց, ասեց. Վէ կաց, Ջաղացպան, քանի ալրի թողին մնաս, մեղք ես։

Ջաղացպանը վէ կացաւ ասեց. Խփի, իմ էծը տարար։

Տղէն խփեց յաշկերը, Ջաղացպանը գնաց նի մտաւ նաւի տակը։

Էս տղէն յաշկերը բաց արուց ման գալու, շատ ման էկաւ, քիչ՝ չքթաւ։ Զին ասեց տղին թէ հրէն նաւի տակին ա, գնա ձէն տու, ասա. Բանի տանջվես, մեղք ես, դուս յարի։ Տղէն գնաց նաւի կուշտը, ձէն տվուց. Ջաղացպան, մեղք ես, դուս յարի։

Ջաղացպանը դուս էկաւ. Տղա, ասեց, տարար իմ էծը։

— Հըմի, ասեց, Ջաղացպան, նորաթը իմն ա, գնա խփի տափ կենամ։

Էս Ջաղացպանը յաշկերը խփեց, էս տղէն դէս ընկաւ, դէն ընկաւ, որ տափ կենա, տեղը քթաւ ոչ։ Զին ասեց. Ա՜յ, տղա, ըտենցով կարալ չես, յարի նի մտի հալիս տակը։ Գնաց տղէն նի մտաւ ձիւ հալի տակը։

Ջաղացպանը յաշկերը բաց արուց ման գալու, ման էկաւ քթաւ ոչ, ձիւն դէս քշեց, դէն քշեց՝ չելաւ, իլլաճը կորվեց, ասեց. Տղա, դուս արի։ Տղէն դուս էկաւ։

— Հը, ասեց, տղա, տարար իմ էծը։

— Դէ, ասեց, խփի, Ջաղացպան, յաշկերտ։

Ջաղացպանն յաշկերը խփեց, տղէն ընկաւ դէս դէն, որ տափ կենա. տեղ քթաւ ոչ։ Զին ասեց. Ա՜յ տղա. յարի, յարի նի մտտ,

ասեց, պոչիս տակը։ Նի մտաւ ձիու պոչի տակը։ Ջաղացպանը յաշկերը բաց արուց ման գալու։ Ման էկաւ դէս դէն՝ քթաւ ոչ։ Էկաւ ձիուն առաւ ձեռ. պնչին տվուց, գլխին տվուց, եալը բանցրացրուց, քթաւ ոչ. իլլաճը կտրվեց, կանչեց ղրաղին, ձէն տվուց. Տղա, դուս յարի, կարըմ չեմ քթնիլ։

Տղէն ձիու պոչի տակիցը դուս էկաւ։

— Հը՛, ասեց, Ջաղացպան, ինց ա։

— Տղա, ասեց, տարար իմ էծը։

— Դէ, Ջաղացպան, խփի՛ էս մի հետն էլ։

Ջաղացպանը յաշկերը խփեց, էս տղէն դէս ընկաւ, դէն ընկաւ տափ կենալու, տեղը քթաւ ոչ։ Ձին կանչեց տղին, ասեց Ա՛յ տղա, յարի նի մտի ճոներիս արանքը։ Տղէն էկաւ նի մտաւ ձիու ճոների արանքը։ Ջաղացպանը յաշկերը բաց արուց ման գալու, դէս ման էկաւ, դէն ման էկաւ, քթաւ ոչ, էկաւ ձիուն առաւ ձեռ, նիլաւ, քշեց, վի էկաւ, պոչը բանցրացրուց, եալի տակը ման էկաւ, պնչերը ման էկաւ, իլլաճ չելաւ, կանչեց ղրաղին՝ ձէն տվուց. Տղա, դուս յարի։ Տղէն դուս էկաւ կանչեց ղրաղին. Դէ, ասեց, Ջաղացպան, գնա էծը բէ։

Ջաղացպանը վի կացաւ, գնաց իքին, էծը բերուց, տվուց ձիատիրոնչը։ Ձիատէրը առաւ էծը, իրա դանը բարցեց ձիուն, գնաց տուն։

Էծը տարաւ տուն, ախպրտանքը հարցրին. Էս ի՞նչ էծ ա։

— Ախպէր, ասեց, էս Ջաղացպանի էծն՝ ա, մի մարիֆաթով էծ ա, մարդ ինք էկել, տարել եմ։

— Ի՞նչ մարիֆաթ ունի, ասեցին։

— Դէ որ ըտենց ա, ասեց, գնացէք կանչեցէք տէրտէրին, իրիցփոխին, տանուտէրին, օքնականին, կանչեցէք՝ դան զօնաղ, իծի մարիֆաթը կը տենաք։

Գնացին, կանչեցին տէրտէրին, իրիցփոխին, տանուտէրին, օքնականին, էկան նստեցին էտ մարթի տանը։

Ասեց. Ա՛յ էծ, մորթվի, քերթվի, փրթվի, էփվի, էլ իրեք տեսակ կիրակուր, յարի քաշվի էս մարթկերանց յառաչը։

Էծը էն սհաթը մորթվեց, քերթվեց, էփվեց, էլաւ իրեք տեսակ կիրակուր, էկաւ քաշվեց էս մարթկերանց յառաչը։ Կերան խմեցին, լիացան։ Շնորհակալութուն արին, որ էթան, տեհան էծը մկլկալով դէնը գնաց։

Ախպէրը վի կալաւ ախպըրտանցը ասեց. Էս իծի մարիֆաթը էս ա։

Օրերի մի օր, դրանց մենծ ախպօր կնիկը սիրեկան ունէր, ասեց. Էս լաւ ա, հաղիր բան ա, բերեմ իմ սիրեկաններին

պատիւ տամ։ Գնաց կանչեց իրա սիրելիներին ու տանուտէրին ընդուց տուն, նստացրուց ու ասեց իծին. Ա՛յ էծ, մարթելի, քերթելի, փընթելի, էվի, էլ իրիք տեսակ կիրակուր, յարի փուվի էս մարթկերանց յաղաքը։ Էծը էս դառաւ անաղ ուվուց, հա, հա հա արուց։ Կնիկը իծի վրին բարկացաւ, ասեց. Բու ուվոդիգ հէրն անիծած, ասում եմ՝ էլ կիրակուր, արի էս մարթկերանց յաղաքը։ Էլ էթ էս դառաւ Էծը անաղ ուվուց, հա, հա, հա արուց։ Էս կնիկը փէսը վի կալաւ, դրա պողերի մէջտեղումը ուվուց. փէսը կպաւ իծի պողերից, էս կնիկն էլ կպաւ փէսիցը։

Տէրտէրը ասեց. Օրհնած, դու մեղ պըտի խայտառակէս, էս ինչ արիր։ Ասեց տէրտէրը, վի կացաւ, որ էթա փէսիցը էս օղլուշաղը պոկէր, տէրտէրն էլ կպաւ էս օղլուշաղից։

Տանուտէրն ասեց. Տէր-տէր, ինչ արիր։

— Դէ օրհնած, ինչ անեմ, արի ինձ պոկի, ազատվինք ըստեղից, էթանք։

Տանուտէրը վի կացաւ, որ տէրտէրին պոկի, տանուտէրն էլ կպաւ տէրտէրից։

Էկաւ գեղի մէջը մահենիք (ենջիցեալ) պատահեց, տէրտէրին մատն էկան, քթան ոչ, իրիցվոխը սալըդ առաւ, թէ ֆլանի տանն ա, վի կացաւ գնաց, տեսաւ որ ըսեղ ա։

— Տէրտէր, ասեց, մեռել կա, դու էկել ես ըստեղ բանտ ըլել, բա ինչ ասենք էս մարթկերանց։

— Ինչ անեմ, օրհնած, որ ըսենց ա ըլել, կարաս՝ յարի պոկի, վի կենանք, էթանք։

Իրիցվոխը գնաց, որ պոկի տէրտէրին, ինքն էլ կպաւ տէրտէրից։

Էկաւ գեղի մէջը նաչալնիկ, պրիստաւ էկաւ, հարցըրեց, թէ տանուտէրն յուր ա, կանչեցէք։ Մատն էկան, քթան ոչ։ Հարցըրին՝ թէ ֆլանի տանն ա։ Գզրին զրկեցին, թէ գնա կանչի։ Գզիրը գնաց, տեսաւ որ հրէս յիրար ուրից կպած են։

Ասեց. Տանուտէր, ախր նաչալնիկ, պրիստաւ ա էկել, քեզ ուզում են, ինչ ես էկէ բանտ ըլէ ըստի։

— Ինչ անեմ, ա՛յ որթի, խաթի մէջ եմ ընկէ, թէ կարաս՝ յարի պոկի, վի կենանք էթանք։

Գզիրը գնաց, որ տանուտէրին պոկի։ Գզիրն էլ կպաւ տանուտէրիցը։

Էս մարթիկը մնացին էս տանը, էծը դվորը երըմիշ էր ըլում, դրանք էլ հետը երըմիշ ին ըլում։

Մնաց ընչանք իրիկունը. իրիկունը էս կնանոնց մարթիկը

էկան աշխատութան տեղիցը, տեհան իրանց տունը լիքը մարթ, էն պուճուր տղի կնիկը օթախումն էր, էն միշնեկ տղի կնիկը տանը թունդիրը կախ էլած էր։ Էտ ախպէրտանքը էկան, էտ թունդիրը կախ էլած օղլուշաղին հարցրին՝ էս մարթկերանց ով ա կանչել ըստեղ։

Ասեց. Մենձ տեքերակինս։

Գնացին օթախը, պուճուրին հարցրին, նա էլ ասեց. Մենձ տեքերակինս ա կանչել։

Էկան կանչեցին էտ մարթկերանց կուշտը, էտ մենձ ախպէրն ասեց Գզիր, դու խի՞ ես էկել էս տունը։

— Նաչալնիկ էր էկել, տանուտէրին ուզում ին, իմացա որ ըստի ա՝ էկա որ կանչեմ, տեհա ըսենց իրար կպած։ Ուզեցա տանուտէրին պոկեմ, ես էլ կպա տանուտէրիցը։

— Է՛ծ, ասեց, գզիրին բաց թող։

Էծը գզիրին բաց թողուց։

— Դէ, ասեց, գզիր. դու գնա։

Գզիրը գնաց։

Ասեց. Իրիցվոխ, խի՞ ես էկել։

Ասեց. Ննջեցեալ պատահեց, էկա որ տէրտէրին կանչեմ, տեհա ըսենց։ Տէրտէրը ասեց՝ օրշնած, արի պոկի, վի կինանք էթանք, ուզեցի պոկեմ, ես էլ կպա տէրտէրիցը։

— Դէ, ասեց, էծ, իրիցվոխին էլ բաց թող։

Էծը իրիցվոխին բաց թողուց։

— Դէ, իրիցվոխ, դու էլ գնա։

— Է՛, տանուտէր, դու խի՞ ես էկել։

Տանուտէրը գրից քիթաւ ոչ որ ասի։

Ասեց. Էծ, տանուտէրին բաց թող։

Էծը տանուտէրին բաց թողուց, իրեք ախպէրն էլ փէտը վեկալան՝ էս տանուտէրին էնքան տվեցին, հալից քցեցին, վի կալան տարան քցեցին քուչէն, էկան նեքսև։

Ասեցին. Տէրտէր, դու խի ես էկել, դու քահանա մարթ։

Տէրտէրը բան չկարաց ասի։

Ասեց. Է՛ծ, տէրտէրին բաց թող։

Էծը բաց թողուց. իրեք ախպէրը փէտը վի կալան, ինչ դդամ տանուտէրին ին ծեծել, էրկու էն դդամ տէրտէրին ծեծեցին. վի կալան, տարան քցեցին քուչէն։ Էկան նեքսև։

Հարցրեց էտ մենձ ախպէրը իրա կնկանը՝ էտ մարթկանցը խի՞ իր կանչէ։

Մեղաւոր էր, չկարեցաւ բան ասի։

— Դէ, էծ, ասեց, էս օղլուշաղին բաց թող։

Ասեց. Էհ, փէսան էլ բաց թող։

Էն երկու ախպէրը մօտացան ոչ, մենձ ախպէրը փէսը վեկալաւ, իրան կնկանը տուր թէ կը տաս. էնքան տվուց, հալից քցեց։

— Դէ, ախպերտանք, գիտաք ինչ կա։ Ես էս երկրի հացը էլ չեմ ուտում, տուն էլ ձեզ, տեղն էլ ձեզ, ես Թարդիվաթան եմ ըլնում, կորչում։

Ասեց ու դուս էկաւ էտ մարթը, գնաց։

Օրը օրի վրովը անցկացաւ, էն միշնակ ախպէրը ասեց. Ես էլ չեմ ուտում էս հացը, իմ ախպէրը գնաց՝ ես էլ եմ էթում։

Մնաց էն յէքսի օրը՝ էտ պուճուր ախպէրը գնաց իրա կընկա կուշտը։ Կնիկ, ասեց, դու քու կաթըդ, օխտը տարի ճամփա կը պահես, օխտը տարէն վրին էկա՝ դու իմն ես, ես քունն եմ, թէ չէկա՝ ընդուց դէնը դու գիտաս։ Էտ տղէն էլ ընկաւ ճամփա, գնաց ախպօրտանցը հասաւ։ Ճամփի կիսին յիրար պատահեցին. էթանք միտեղ (միասին) աշխատանք, ապրենք։ Է՞, ընկան ճամփա ու գնացին։

Շատ գնացին, քիչ գնացին՝ Աստված ա գիտաղ, չոլումը մութը տվուց վրա, դէս մտիկ տվին, դէն մտիկ տվին, շէնլիկ չկա, դեղ չկա։ Սարի գոշին մի կրակ էրեաց։

Էն մենձ ախպէրն ասեց. Տղէք, էկէք էս կրակը բռնենք, էթանք, բալի թէ դեղ ա, կամ տուն ա։

Գնացին էտ կրակը բռնած, նի մտան ըտեղ, տեհան մի տուն ա, մի օղլուշաղ կա մէջը, իրեք ախչիկ։ Նի մտան բարևեցին։ Էտ օղլուշաղը առաւ դրանց բարևը, ասեց. Բարով, հաղար բարին էք էկել, էկէք նստէք։

Նստեցին, պինջացան, էս օղլուշաղը ասեց. Բեղարած կըլէք, տեղ քցեմ՝ քնէք։

Մի օթախի մէջ երկու ջերկ (կարգ) տեղ քցեց, մի ջերկը էտ տղէքը քնեցին, մի ջերկը իրա ախչըկերքը։ Պուճուր տղէն քնեց ոչ, ասեց. Կարելի ա ըստեղ մի բան կա, որ էտ պառաւը ըսերուց էտ ախչըկերանցը ըստեղ քնացրուց։ Կացաւ՝ կէս քշերին տեհաւ ձէն ա գալի. ուսուլով վի կացաւ՝ գնաց դռնիցը մըտիկ տվուց, տեհաւ էս պառաւը ատամները քսըմ ա քարի, քսըմ ա տախտակի։ Ասեց իրա մէջը. Էս օղլուշաղը պըտի մեզ վնասի։ Էկաւ ախպօրտանցը վեկացրուց. Վեր էք, ասեց, վեր էք, մենք մահի դռանն էնք։

Ախպէրտանքը վի կացան, ասեցին. Հը՛, ինչ կա։

— Դէ, ասեց, մեր տեղը բաց արէք։

Իրանց տեղը որ բաց արեցին, մի ախպօրը կանչեց իրա

հետ, էկան էտ ախչըկերանցը մի մին վե կալան տարան իրանց տեղը դրին, իրանց փափախները դրին էտ ախչըկերանց գլխընները։ Ախչըկերանց աղլուխը վե կալան իրանց գլուխը կապեցին, նի մտան էտ ախչըկերանց տեղը՝ էտ երկու ախպէրը էլ եթ քնեցին, էտ պուճուր ախպօր քունը տարաւ ոչ, քնեց ոչ։

Շատ մնաց, քիչ մին էլ տեհաւ Ազրաիլի պէս պառաւն էկաւ՝ վրա պրծաւ տղերանց տեղի վրա, էտ ախչըկերանցը փըրթեց, ճխլտեց, վեր ածեց, գնաց ու թէք ընկաւ քնեց։

Պուճուր տղէն ախպօրատանցը վե կացրուց. Վեր էք, ասեց, վախտով կորչենք. մեր գլուխը քեսալակ կը գա։

Վե կացան ու ընկան ճամփա, եա հու հալլահ։

Գնացին հասան մի կարմնջի. էտ կարմնջի անըմը երթմկերած կարմունջ էր, պառաւը երթըմ էր կերել, որ էտ կարմունջը անց կենար ոչ։

Շատ էր քնել, քիչ էր քնել պառաւը, քնիցը զարթնեց, տեհաւ իրա ախչըկերանց ասը (ձայն) ասուը չկա։

Ասեց. Ա՛յ ջանըմ, էս իմ ախչըկէրքը խի՞ չեն վե կենըմ։ Վե կացաւ պառաւը, գնաց նի մտաւ օթախը՝ տեհաւ որ տղա չկա, ախչըկէրքն էլ վրթված վե թափած են։

Ասեց. Վա՛յ գլխիս, ըս ի՞նչ օյին ա էկել իմ գլուխը։

Նի՛լաւ կտուրը, մտիկ տվուց դրբա երթըմկերած կարմունջը, տեհաւ որ տղէքը անց են կացել կարմունջը. է՞ դիտի, ասեց, գնացէք, երթըմկերած կարմունջը անց էք կացել, էլ ֆայդա չունի։

Էս օղլուշաղը վեր էկաւ ու գնաց կսկըծու թէք ընկաւ քնեց։

Էս տղէքը գնացին. շատ, քիչ, գնացին մի քաղաքի թուշ էլան, ըտեղ մնացին, որ աշխատեն մի տեղ (միասին) ապրեն։ Գնացին թաքաւորին էլան մէհտար (ձիապան), շատ լաւ ծառայեցին։

Էտ պուճուր ախպէրը թաքաւորի յաշկին շատ դեր էկաւ։ Թաքաւորը կանչեց իրա յառաչը, ասեց ձեռ ու ոտ (կառավարիչ, որի ձեռքով պիտի անցնի ամէն բան)։ Էն երկու ախպէրտինքը բախլեցին դրան, սկսեցին չարտիոսիլ։

Օրերից մի օր թաքաւորը ուզեց ձի նի ելի՝ որ էթա մանգալու. էտ երկու ախպէրը ձիանը սարքեցին, դուս բերին, թաքաւորը շատ հաւանեց դրանց սարքած ձիուն, տղէքն ասեցին. Թաքաւոր, ի՞նչ շատ մայիլ ես ելըմ, բա որ ձին էլ լաւ ընի, ի՞նչզըդամ լաւ կընի։

— Խի՞, ասեց թաքաւորը, իմ ձին լաւը չի՞։

— Լաւն ա, թաքաւոր, համա մի պառաւ կնիկ կա ֆլանտեղը, նրան մի հատ ձի ունի քու լայեզ։

— Էտ ով կը բերի, հարցրուց թաքաւորը։

— Քու յառաչի տղին կը բերի, ոչ մինը կարալ չի բերի։

Կանչեց իրա յառաչի տղին, ասեց. Ա՛յ տղա, ասում են, ֆլանտեղը մի պառաւ կա, նրան մի հատ ինձ լայազ ձի ունի, գնա բե։

— Թաքաւոր, ասեց, նրա կուշտը էթալ ըլիլ չի, նա մի ազրաիլ բան ա, ոնց կարամ էթա ընտի։

Ասեց. Ինչաճ չկա, պըտի էթաս ըներես, թէ չէ գլուխտ կը կարեմ։

Ասեց. Թաքաւոր, դէ որ ասում ես, ինձ ժամանակ տուր մի օր։

Գնաց մալուլ մուշկիուլ (մոլորված) օթախումը նստեց։

Թաքաւորի կնիկը էկաւ էտ տղի օթախը, տեսաւ մալուլ նստած ա, ասեց. Ա՛յ տղա, խի՞ ես մալուլ նստել։

Ասեց. Ի՞նչ անեմ, թաքուհի, թաքաւորը ընենց մի բանի ա դէմ արել, որ մնացել եմ մալուլ կանգնած։

Ասեց. Ի՞նչ բան ա ասում քեզ։

Ասեց. Ասում ա գնա ֆրլանտեղը, մի պառաւ կնիկ կա, նրան մի ձի ունի ինձ լայեզ, գնա բեր ինձ հըմար։

Թաքուհին ասեց. Դրա հըմար ես մալուլ։

— Հա, ասեց, դրա հըմար ա։

Ասեց. Դրա հըմար միտք մի անիլ, շատ հեշտ ա. կեթաս թաքաւորիցը մի տոպրակ քիշմիշ կուզես. և մի հատ էլ քըլունք կուզես, կեթաս գոմի էն մըսըրքի վրիցը մի վերստ հեռու կը չափես, էն հեռվիցը լաղում կըտաս, կը գաս, կը հասնես մըսըրքի տակը, էն մըրքի տակիցը որ ծակեցիր, ձին որ ծակը տեհաւ՝ գոմը գլուխը կանգնի, կէթա էն դիհը. կըգա էս դիհը. էն քիշմիշիցը կանես ձեռը, փոռ փոռ անելով դէմ կանես դնչին, կամաց կամաց ձին կըգա էն քիշմիշի վրա, կուտի, որ կերաւ՝ քիշմիշի տոպրակը կը քցես գլուխը, նա քիշմիշը կուտի, դու ծակը մենձացրու, որ մենձացրիր, նի կը մտնես, գնամը կըտաս գլուխը, թամքն էլ կոգքին դրած ա, կը թամքես ու կը քաշես կը բերես դուս, նի կըլնես կը գաս։

Էտ ասելուն պէս՝ էս տղէն էթում ա թաքաւորի կուշտը, մի տոպրակ քիշմիշ, մի քըլունկ առնում, էթում ա պառաւի տունը, թաքուհու ասածի պէս ձին դուս քաշում բերում։

Պառաւը մի յաշկը քուն, մինը զարթուն տենում ա որ ձիու ձէնը շատ գալիս ա, ասում ա. Զոռ, յանտէր, ինչ ըլիլ ա, ինձ ա ըլել, քիզ ի՞նչ ա ըլել։

Մնում ա մի էրկու սըհաթ, իրեք, տենում ա որ ձիու ձէնը

կտրըվեց, ասըմ ա. Ջիուս ձէնը կտրվեց, էթամ տենամ էտ ինչ էլաւ։ Գալիս ա տենըմ, որ ձի չկա գոմումը։ Մտիկ ա տալի, որ մսըրքի տակիցը ծակել են, քաշել տարել են։ Դուս ա գալիս կտուրը՝ մտիկ տալի, տենըմ ա հրէն տղէն ձին նի ա էլել, երթում կերած կարմունջը ետ կացել։

— Է՜, ասըմ ա, տարաթ, հողեղէն, տարար. սրտի կսկծուն էթըմ ա վեր ընկնըմ, քընըմ։

Էս տղէն ձին բերըմ ա Թաքաւորի աղաքին կանանցընըմ, ասըմ ա. Փէշքաշ ա քեզ, Թաքաւոր։

Թաքաւորը շատ սիրըմ ա դրան, մենծացընըմ ա, էս ախպէրտանքը աւելի ոխակալըմ են։

Մին օր ասըմ են. Թաքաւոր, էտ ինչ բան ա, մի ձի ա հըլա, բա էտ պառավին մի ծառ ունի, բա էն ինչդամ լաւ ա, որ մի ճուղքը ամառ ա, մի ճուղքը ձմեռ ա, մի ճուղքը գարունք ա, մի ճուղքն էլ աշունք ա։

Թաքաւորն ասըմ ա՝ էտ ով կը բերի։

— Էտ ձին բերող տղէն կը բերի, ով կը բերի, ասըմ են ախպէրտինքը։

Կանչըմ ա Թաքաւորը էտ տղին, ասըմ ա. Ա՜յ տղա, էս ձիու տիրոնչը մի լաւ ծառ ունի, պըտի բերես, թէ չէ գլուխտ կըտամ։

— Թաքաւոր, ասըմ ա, էտ հըլա ձին էր՝ նի էլա բերի, ծառը ոնց բերեմ։

— Իլլամ չկա, պըտի բերես։

— Դէ, ասեց, մի օր ինձ ժամանակ տուր։

Տղէն խեղճ, շըվարած գնաց օթախըմը նստեց, մըտքի հետ ընկաւ, տեհաւ Թաքուհին էկաւ։

— Հը՜, տղա, խի՞ ես մալուլ։

— Թաքուհի, ասեց, ինչ անեմ, պառաւին մի ծառ ունի, Թաքաւորը ասըմ ա, պըտի էթաս բերես. ես ծառը ոնց բերեմ։

— Ա. քու տունը Աստված շինի, շատ հեշտ ա. կէթաս Թաքաւորիցը մի սազ կուզես, վե դնես էլ ածի, վեր ունես էլ ածի. մի ալմաստ էլ կացին կուզես, մի տոպրակ էլ աղ ու տաքտեղ (պղպեղ) վե կունես. կէթաս պառաւի չարդախը, տոպրակը շըլակիդ՝ կը նստես սազը կածես, սազի ձէնին նա քու կուշտը կը գա, նի կը մտնի նեքսև տատմեները սըրելու, դու տոպրակը կախ կանես օճոքիցը, սազն էլ կը կապես տոպրակիցը, էտ ալմաղ կացինը վե կունես, կէթաս դըբա ծառը, էտ պառաւը դուս կըգա չարդախը, կը տենա որ սազի ձէնը օճոքումն ա գալի, ընենց կիմանա դու օճոքն ես բանցրացէ, կըտա տոպրակին, աղն ու

տաքտեղը կը թափի յաշկերը, սրտի կըսկըծուն կեթա վե կընկնի. դու ծառը կը կտրես, վե կուենես, կը բերես։

Տղէն էթըմ ա թաքաւորից սաղ, մի ալմաստ կացին, մի տոպրակ աղ ու տաքտեղ ա առնում, էթըմ ա պառաւի տունը, չարդախումը կանընըմ սաղը ածըմ։

Պառաւը սաղի ձէնին դուս կը դա կասի. Բարով, խանաորթի, էկել ես հա։

Կասի. Էկել եմ։

Պառաւը նի ա մանում նեքսև, տոտամները սրըմ, տղէն տոպրակը կախ ա անըմ օճառքիցը, սաղը կապըմ ա տոպրակի վրէն, կացինը վեր ա ունըմ էթըմ ա ծառի կուշտը։

Պառաւը դուս կըդա կը տենա որ տղէն հրէն բանցրացել ա օճառքից ա կպել, կը թուչի կըտա տոպրակը կը ճղի, աղ ու տաքտեղը կը թափի դրա յաշկերը։ Աւելի կը կսկծա դրա ջանը, կեթա ու վե կընկնի։

Էս տղէն կացինը կտա ծառի քոքին, կը կտրի, կը դնի ուսին ու եանլա։ Սար, ձոր, քար, քոլ ձէն կըտա. Հողեղէնը տարաւ, տարաւ։

Էս պառաւն էլ լըսըմ ա, համա ջանի կսկծուն վե չի կենըմ։ Միսելի մնըմ ա, հանդարտըմ ա՝ Ա՜յ ջանըմ, ասըմ ա, սար, ձոր, քար, քոլ ձէն էր տալի հողեղէնը տարաւ, էթամ տենամ էտ ինչ բան ա, հը՞։

Էթըմ տենըմ ա որ ծառը չկա։

— Վա՜յ գլխիս, ասըմ ա, ծառս էլ տարան։

Նիլլում ա կտուրը, մտիկ տալի, տենըմ ա որ տղէն հրէն ծառը ուսին երգմկերած կարմունջը անց ա կացել. էլ եթ էթըմ ա կսկծուն վեր ընկնըմ։

Էս տղէն ծառը բերըմ ա, թաքաւորի պալատի յառաջը կանանցընըմ։

— Փէշքաշ ա, թաքաւոր, քեզ։

Թաքաւորը մտիկ ա տալի ծառին, ճուղերին. շատ հաւանըմ ա, էս տղին աւելի սիրըմ ա, աւելի մենծութուն ա տալի։

Ախպէրտինքը նախանձից տրաքըմ են։ Էրկու ախպէր մասլահաթ են անըմ. Սա մէր պուճուրն ըլի, մեզանից մենծանա, բա ինչ անենք, ախպէր։

Էն մի ախպէրն ասըմ ա. Բերենք ղրկենք պառաւի հըմար. էթա փչանա, էլ չդա։

Էն միսն էլ ասըմ ա. Շատ լաւ ա էտ։

Դուս են գալի տենըմ են որ թաքաւորը էս ծառի գլխովը պըտրտըմ ա, շատ սիրըմ ա։

Ասում են. Թաքաւոր ինչ շատ հայիլ մայիլ ես ըլիլ։

— Որթի, լաւ բան ա, յե։

— Թաքաւոր, ասում ա, էտ ծառն ա, բա դրա տէրը տեսնես. ինչդամ լաւն ա։

Թաքաւորն ասեց. Ո՞վ կարա բերի դրա տէրը։

Ախպէրտինքն ասեցին. Էտ տըղէն կը բերի, էլ օչով չի կարա բերի։

Կանչեց Թաքաւորը տղին. Տղա, ասեց, էս ծառի տիրոջը աւելի լաւ են ասում, պըտի բերես։

— Թաքաւոր, դրա տէրը ես ոնց բերեմ, ախր։

— Էլ մի՛ շատ խօսալ, պըտի բերես, կը բերես՝ կը բերես, չես բերի, գլուխտ կնթա։

Տեհաւ իլլաճ չիլուում, մի օր ժամանակ ուզեց։

Գնաց իրան օթախըմը մալուլ նստեց. մաքի հետ ընկաւ. մին էլ տեհաւ Թաքուհին էկաւ։

— Հը՞, ասեց, տղա, ինչ ես մալուլ նստել։

Ասեց. Ի՞նչ անեմ, Թաքուհի, էս գոնըմ (անգամ) Թաքաւորը ընենց բանի ա դէմ ալել, որ ըլիլու բան չի։

— Ի՞նչ ա, ասեց Թաքուհին։

— Ինձ ասում ա, թէ գնա էս ծառի տիրվոնչը բէ։ Ես ոնց էթամ բերեմ։

— Ա քու տունը շինվի, շատ հեշտ ա, դու դրա հըմար միաք ես անում։ Ասեց. Տղա, կէթաս Թաքաւորին կասես, քեզնից ուզում եմ մի զանդուղ, չորս հատ էլ սըրրդ (երկար մեխ). մի հատ էլ սէիդի (նոխատ) փոստ, ամէն մաղին մի բոժոժ, էտ կէթաս կառնես Թաքաւորից, կը գաս իմ կուշտը։

Տղէն վի կացաւ, գնաց Թաքաւորի կուշտը, Թաքուհու ասած բաները առաւ, բերուց Թաքուհու կուշտը։

Թաքուհին ասեց. Տղա, էտ բոժոժի ձէնը որ վեր յիլաւ, էն պառաւը ընենց կիմանա, թէ իրա հոգիատն ա, էկել ա իրա հոգին պըտի առնի։ Էտ փոստն էլ, էտ զանդուխն էլ վի կունես, կէթաս պառաւի տունը, զանդուխը չարդախումը վի կը դնես, բերանը բաց կանես, մեխերն էլ կը դնես կուշտը, էտ փոստը վի կունես՝ նի կըլես կտուրը, կը քցես վրիդ, հերթըկի զրաղին կը կաննես, որ մի քիչ կը թափտաս, պառաւը կը զարդանդի, կը մտցնես էս զանդուխի մէջ, կը բերես։

Տղէն առաւ զանդուխն ու փոստը, գնաց նի մտաւ պառաւի տունը, զանդուխը դրուց չարդախը, ինքը նի էլաւ կտուրը, փոստը քցեց վրին, մօտացաւ հերթըկին, իրան ժամ տվուց, պառաւը սարսափեց. իմացաւ թէ Գաբրիէլ հրեշտակը էկել ա ֆոքին

առնի, ձէն ասուց. Ի՞նչ էք ուզում ինձանից, ժամանակ տվէք իմ հաշիվները վերջացնեմ, նոր հոգիս առէք։

Տղէն մէկ էլ իրեն թափ տուց։ Պառաւը ասեց. Որ սարը չէք անցում, թողէք գլուխս էլա շինեմ, ջանս թիլացաւ։ Տղէն ձէն տուց. Որ ըտենց ա, չարդախումը մի զանդուղ կա, գնա նի միա մէջը, ժամանակ տամ։ Պառաւը վեր կացաւ գնաց չարդախը, տեսաւ զանդուխը, գնաց նի մտաւ մէջը։ Տղէն վեր էկաւ. ու էն հրաղպէյին զանդուխի բերանը փակեց, մխերը տուց չորս կողքերը, չաթուն քցեց, շլակեց, եռելան։

Պառաւը հասկացաւ, որ էս էն տղէն էր, ասեց. Տղա՜, տանում ես, հրամա երդմկերած կարմունջը որ հանենք, ինձ իմացնիր։

Էտ տղէն գնաց, հասաւ երդմկերած կարմունջը, ըտեղ կանգնեց։ Պառաւն ասեց. Տղա, իմ կանչեցիր։

— Ասեց. Նանի՜, երդմկերած կարմունջն ա։

Ասեց. Ա՞նց ես կացել, թէ նոր ես էթում կարմունջը։

Ասեց. Շատն անց եմ կացել։

— Դէ որ, ասեց, անց ես կացել, տար, պրծաւ աշխարքը։

Էս տղէն վեր կալաւ, տարաւ թաքաւորի կուշտը։ Տարաւ վեր դրուց, ասեց. Ըհը՛, թաքաւոր, փէշքաշ ա։

Ասեց. Տղա՜, դէ բաց արա։

— Թաքաւոր, ասեց, ըսդար ժամանակ ինչ ասել ես՝ ես լսել եմ, մի բան էլ ես ասեմ, դու ինձ լսի։

Թաքաւորն ասեց. Ասա՜, որթի։

Ասեց. Թաքաւոր, իրեք օր ինձ ժամանակ տուր, գամ բաց անեմ, մտիկ տու։

Ասեց. Լաւ, իրեք օր քեզ ժամանակ։

Տղէն էտ ժամանակը առաւ ու էկաւ գլուխն առաւ ես հոգ եալլա, փախչի, որ պրծնեմ, գլուխս իրան երկիրը։ Իրեք օր ճամփա էկաւ, մտածեց թէ կարալ չեմ պրծնիլ պառաւի ձեռիցը, մի ձորի մէջ մտն էկաւ մի զաղա քթաւ, զաղի բերանին էլ մի ջաղացի քար կար քցած, գնաց կողքերը պըտըտվեց, մի տեղից ծակեց, նի մտաւ էտ զաղէն, ճնաց ըտեղ։

Իրեք օրը որ թամամեց, թաքաւորը՞ տեսաւ տղա չկա, ինքը բաց արուց, բաց անելու բաչատն, տիւծ Ազրաիլը դուս էկաւ, ոչ թաքաւոր թողաց, ոչ քաղաք թողաց, ոչ գեղ թողաց, խանաթի փոտը կարեց, ընկաւ էտ տղի քամակը մտն գալու։ Մտն գալով էկաւ էտ ձորը, գնաց տեսաւ մի զաղա, ջաղացաքարը բերանին քըցած։ Ջաղացաքարի ծակովը մտիկ տուց զաղէն, տեսաւ էտ տղէն էտ զաղըմը։ Տօ խանաթրթի, բա էտ գլխին ես էկի ըտեղ, ասեց։

Ասեց. Ջաղացի քարի ծակումը ում էկու։
Ասեց. Ես էլ կամրամ գալ։
Տղէն ասեց. Մի՞ չես կարալ գալ։

Պառաւը գլուխը դէմ արուց էտ Ջաղացաքարի ծակին, չարչարվեց, գլուխը անց կացաւ, Ջանդաքը էթըմ չի, հըմի ուզըմ ա գլուխը դուս քաշի, գլուխն էլ դուս չի գալի։ Էտ տղէն վէտով ըզեց էտ քարի սեղին, սեղը որ դուս էկաւ՝ քարը վեր ընկաւ, պառաւը տակը մնաց Ջնջըխվեց։ Նոր տղէն ազատվեց պառավիցը։ Հանդիստ ընկաւ ճամփա դըբա իրա տունը. էկաւ տեհաւ կնիկը նստած ա, էն ախպըտանց կնանիքը չկան։ Խոշ ու բէշ արեց կնկա հետ։

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։

Ասաըծանից իրեք խնձոր վեր էկաւ, մինն ասողին, մինը լսողին, մինն էլ անկաճ գնողին։

ԱՍԼԱՆ ԹԱԳԱՒՈՐ.

(Օշական *).

Կ՚ելնում ա մի թաքաւոր, թաքաւորին ելնում ա օխտը հատ տղա, մի հատ ախչիկ, էտ թաքաւորը օխտը տղեցը շատ սիրում ա մի հատիկ ախչիկանը։ Թաքաւորի մենձ հարսը նախանձում ա ախչկա վրին, որ օխտը տղեց շատ ա ուզում դրան։ Քշերվա մի վախտը վեր ա կենում իրա էրեխուն մորթում, դանակը տանում դընում ախչկա ջէրը. մորթելուց հետա վեր ա կացընում իրա մարթին, ասում ա. Տունդ քանդվի, ոչ էս թաքաւորութունը ելի, ոչ էտ թաւուր թաքաւոր տղէն ելի, իմ տղէն օրօրոցի մէջ մորթել են։ Հաւարը քցում ա թաքաւորի ամարաթի մէջ։ Թաքաւորը իմանում ա՝ ասում ա. Հասցեցէք լիսանա։ Որ լիսանում ա, մենձ հարսը վազում ա մտնում թաքաւորի սինօդի մէջը, ասում. Թաքաւոր, ոչ դու ելես, ոչ քու թաքաւորութունը, էս ինչ բան ա, որ իմ տղէն օրօրոցի մէջ մորթել են։

Թաքաւորն ասում ա. Հարս, դիվանը տվի քեզ, թէ կարաս՝ քթի սըպանողը, դիվանը քունն ա, ինչ կանես, արա։

Ասում ա. Բեր քու պալատիդ մէջը ինչքան մարթ կա, ես խուզարկեմ (գիւղացիք գործ են ածում այս բառը)։

Դա բոլորը հաւաքում ա, հարսը սկսում ա խուզարկել, էթում ա թաքաւորի ախչկա ջիբիցը արնոտ դանակը հանում ա, ասում ա. Թաքաւոր, քթա իմ թշնամին։

Թաքաւորը ասում ա. Պատժա, ինչ որ դու գիտաս։

Հարսը ասում ա. Բերէք սրան տարաղաջ հանենք, խեղտենք։

Անելօք մարթիկ հաւաքվում են, ասում են. Թաքաւորի դռանը թաքաւորի արին թափել չեն, վի կալէք տարէք յուրիշ տեղ, ինչ

---

*) Պատմեց 1913 թ. Յուլիսի 18-ին Օշական գիւղում նոյն գիւղացի Գէորգ Սոսաֆելեան, անգրագէտ, 55 ամեայ ծերունին, որ պարապում է երկրագործութեամբ. մեծ մասամբ ապրել է գիւղում։

կուզէք, արէք։ Բերում են էտ ախչկանը տալիս են էրկու ջանլաթի, որ տանեն սրսպանեն։

Դրանք վեր են ունում տանում են մի մէջի մէջ, մի յաղբուր ա պատահում, տանում են էտ յաղբրի դրաղին, ասում են. Էլ չմոր-թենք, ոնները ծնկից նեբքև կտրենք, շորերը արնոտ անենք տա-նենք։ Ընենց էլ անում են։ Որ էթում են տուն, ասում են. Տարանք մորթեցինք, էս էլ շորերը արնոտ բերել ենք։

Թող դրանք ըտեղ մնան։

Մի թաքաւորի աղա՝ անունը Ասլան, աւ անելիս ա ելում, գալիս ա տենում, որ ըտեղ մի ախչիկ վեր ընկած ա, ասում ա. Էս ինչ սիրուն ախչիկ ա, հարաբ սա ինձ կանի՝ ես սրան առնեմ։ Ասում տակին յուխտ ելի, ես սրան առնեմ, ինչ ուզում ա ելի, կոնտ կելի, ինչ կելի՝ կելի։

Ախչիկը քնած ա ելում, վեր ա կացընում, ասում ա. Ախչի, դու ինչ ախչիկ ես, մարթ ունես, տէր ունե՞ս, ինչ ես։

Ախչիկն ասում ա. Զատ չունեմ, ինչ ես ասում, ա՛յ աղա։

Ասում ա. Որ ոչինչ չունես, ես քեզ կառնեմ, դու էլ ինձ կառնես։

Ասում ա. Ա՛յ աղա, դու ինձ չես առնի, իմ ցաւիցը հեռացի։

Ասում ա. Ասում տակին ուխտ եմ դրէ, որ քեզ առնեմ, միա-միտ կաց։

Ասում ա. Որ ինձ պրտի առնես, իմ ոնները կտրած ա։

— Ինչ որ ելի, ինձ դարուլ ա։

Ասում ա. Որ դարուլ ա, հրէս կտրած ոնները, վեկալ ուր կը տանես ինձ՝ տար։

Տղէն վեր ա ունում ախչկանը, դնում ձիու թամքին, ոնները կապում կողքերից, տանում։ Որ մոտենում են քաղաքին, աշկալու-սէք ա դրկում իրա հօրը, թէ յաշկդ լիս, ես կնիկ առա, բերում եմ։

Հէրը իշխաններով էկաւ աղաքը, տարաւ տուն։ Գնաց իրա տեղը նստեց։ Մի իրեք օր, չորս օր անցկացաւ՝ թաքաւորն ու թաքուհին ասեցին. Էթանք մեր հարսին տենանք։ Գալիս են հար-սին տենում են, հարսը անջախ չոքերի վրա մի քիչ կանում ա. Եռև դրանք ընծա են տալի հարսին։ Թաքաւորն էլ, թաքուհին էլ շատ նեղացած դուս են ելնում, ասում են. Դա խի՞ ոտի վրա չկան-նեց, մեզ լայեզ չարու՞ց։ Կանչում են Ասլանին, ասում են. Ասլան, էտ ինչ թաւուր կնիկ ես առել, որ մենք էկանք, վեր չկացաւ մեր յառաջին։

Ասում ա. Թաքաւոր, թաքուհի, նեղանալ մեք, դրան ոնները չունի։

— Խի՞ իր առնում, որ ոնները չունէր։

— Ոնները չտեսած ըխտաղբվեցի, որ դրան տանեմ։

— Էհ, շատ լաւ ա, որթի. որ քեզ ձեռք ա տալի՝ մեզ էլ ձեռք կը տա։

Պահեց մի տարի ժամանակ, մի թաքաւոր էկաւ դրա վրա կռվելու։ Ասլանը զօրքը վեր կալաւ գնաց։ Աչողութեան լուրը ամէն օր գալիս էր։

Էկաւ թամամեց ինները ամիսը, ինները օրը, ինները սրհաթը, ինները հրապարէն, էտ ախչիկը բերուց էրկու հատ տղա. կնքեցին, մընի անունը դրին Խուրշուդ, մընինը դրին Ջումշուտ։ Էտ թող ըսի կանցի։

Սալրդ տանք ումից —թաքաւորի հարսիցը, որ իր էրեխէն սրպանել էր։

Ասեց. Ընենց չելաւ, Ջանլաթիների առածին չեմ հաւատա, մի հնարք անեմ, տենամ սրպանելՔ են, թէ ուտ ա։

Գնաց օխտը ճամփի մէշտեղը մի խէյրաթխանա շինեց. էկողին տարաւ նեքսև, էթողին տարաւ նեքսև։ Խօսացընում էր էտ մարթիկանցը, հարցընում էր, դրանց ջիբերը ման էր գալի, որ իմանա, թէ էտ ախչիկը սաղ ա, թէ վերչացել ա։

Եռով Ասլան թաքաւորի հէրը գրեց աշքալիսէք Ասլանին. Ասլան, աշքդ լիս ըլի, քու կնիկն տղաավել ա, էրկու տղա ա բերել. մընի անըմը Խուրշուտ, մընինը Ջումշուտ։ Նամակը տալիս են մի մարթի, որ տանի Ասլանին։ Էթում ա էտ հարսի շինած խէյրաթ —խանին թուշ ըլըմ. դրան կանչում են նեքսև, ուտացընում, խըմացընում, հարփացընում, ջիբիցը գիրը հանում. կարթում են, հարան իմանում ա որ էտ ախչիկն ա՝ որ սաղ ա։ Էտ նամակը ճղում ա, թաղա դրում ա. Ասլան, ոչ դու ըլես, ոչ քու բերած կնիկը, էտ զանջղը, էտ անղգամը բերել ես քցել մեր կուշտը, մեզ խայտառակ արուց հրկրի մէջը, ցութել ա էրկու շան թուլա ա բերել։ Դնում են թուղթ տանողի ջէբը։ Թուղթ տանողը զարթնում ա, վեր ա կենում, ընկնում համփէն. տանում ա թուղթը տալի Ասլանին։ Ասլանը կարթում ա, լաց ա ըլըմ. դրում ա պատասխանը։ Բան չկա, պահէք ընչանք ես գամ։

Թուղթ տանողը նամակը վեր ա ունում, էտ ա գառնում, գալի էլի էն խէյրաթ—խանէն։ Էլի դրան տանում են նեքսև, խմացընում, ջէրը ման գալի, թուղթը հանում. տենում են, որ ասել ա. Պահէք ընչանք ես գամ, հարսը մտածում ա. Ա՜յ հաչ, որ գա, բան չի անել, կը պահի էտ կնկանը, եռոյ իմ արած լանը արշա կընկնի (յայտնի կը լինի)։ Նամակը ճղում ա. թաղա դրում ա. Թաքաւոր , ես դրանից խաբար չեմ, ես դրա կուշտը հըլա չեմ գնացել, էտ շան թուլէքը խմ ա բերել. քանի ես էկել չեմ, թէղ դրան կորցընեա։

Վեր ա կենում քնած տեղիցը թուղթ տանողը, ընկնում ա ճամփէն էթում, թուղթը տանում ա տալի թաքաւորին, թաքաւորը կարթում ա՝ լաց ա ըլում. Վա՛յ, ասում ա, ես ի՞նչ ի գրէ, ինչ ա պատասխանել։ Վեր ա ունում լաց ըլելով ասում ա. Տարէք էտ հարսին էրէխէքը հետը քցէք ծովը, թող կորչի։

Տանում են ծովի ղրաղը. մի պուճուր դաղա (խուղ) ա ըլում, դընում են դրա մէջ, բաց են թողում, գալի, ասում թէ՝ տարանք քցեցինք ծովը։ Էտ հարսը մնում ա ըտեղ, գեղացու տղէքը մինձանում են տարով, դրա տղէքը մինձանում են օրով. իրեք տարեկան որ դառնում են, մինձ մարթի խելք են ունենում։ Մէրը էրկու հատ տսեղ կըռացնում ա՝ շինում չանդալ. տալիս ա տղերանց, տղէքը էթում են չանդալ քըցում, ձուկը կալնում, բերում են ուտում։ Մին օր չանդալ քցելուս մի շատ սիրուն ձուկն ա ընկնում Խուրշուդի չանդալին, պաչում ա ձկանը, քցում ա ծովը, ասում ա. Էսքան նախշուն ձուկը մին օր պէտքը կը դա մեզ։ Վեր են կենում էթում տուն։

Զումշուդը մօրն ասում ա. Ա՛յ մէր, Խուրշուդը մի լաւ ձուկը կալաւ, քցեց ծովը, ես թողում չի, շատ լաւն էր։

Մէրն ասեց. Բան չը կայ, հէնց իմանանք՝ էտ էլ կերանք։ Զկան սայիցը (ձկանն արած լաւութեան փոխարէն) մին օր էլ Աստուած մեր բանը կը յաջողացնի։ Էքսի օրը էլի ըթում են չանդալ քցելու, մի դարբիշ գալիս ա ծովի ղրաղիցը Խուրշուդին վեր ա ունում, փախչում։ Զումշուդը լաց ա ըլում, էթում ա տուն, մօրն ասում ա. Խուրշուդին դաւրէշը տարաւ։ Մէր ու տղա նստում են լաց ըլում։

Դավրէշը, որ Խուրշուդին փախցընում ա, տանում ա մի գաղի յառաջի վեր ա դնում. ասում ա. Գիդոս քեզ ընչի համար եմ բերէ։ Բերել եմ, որ էս գաղի միջիցը էն երևացող շամադանը հանես։ Խուրշուդը էթում ա շամադանի կուշտը, շամադանը վեր ունում, որ դուս բերի, բերում ա գաղի դուռը, էլ եթ ձեռիցը թռչում ա՝ էթում յիրա տեղը։ Զորս օր, հինգ օր չարչարվում ա, չի կարում դուս բերի, վեր ա կենում էթում ա ծովի ղրաղը ման ա գալի։ Էն օրվա յիրա կալած նախշուն ձուկը գալիս ա ծովի ղրաղը, ասում ա. Ա՛յ տղա, խի՞ ես ըստի բանդ էկել։

Ասում ա. Ի՞նչ անեմ, գավրէշը ինձ բերել ա ըստի, ասում ա գաղի միջի շամադանը պրտի հանես, որ չը հանես՝ քեզի կը սպանեմ։

Ձուկը ասում ա. Կեթաս էտ գավրիշին կասես. Կեթաս՝ օխտը սէլի ղղար իլղունի ու փալուդի չոր ցախ կը բերես, գաղի դռանը կը կիտես, դու մի տասը վերստ կը հեռանաս, հենա դու էտ ցա-

խը կը վառես, նի կը մանես դաղէն, շամադանի ըլանիքը՝ կողքին մի քար կա, քարի տակէն ա, վի կունես, շամադանը կը քանդես, կը լցնես ապլբխի մէջը, մի պուճուր, ըսդաբ փէտ էլ հետն ա, դուս կը դաս ու քեզ կը քցես ծովը, դավրիշը եաւիցդ կը վապի, որ քի կալնի, կը դա կլընկնի կրակի մէջը՝ կերվի, էլ վախես ոչ, որ ընկնես ծովի մէջը։

Տղէն ձկան տասածը էթըմ ա դավրիշին ասըմ ա. Դավրէշ, պլամ էթաս, օխտը սէլ ցախ բերես, փալուդի ու իլղունի, բերես դաղի դռանը կիտես, դու մի տասը վերստ հեռանաս, որ շամադանը քեզ տենալուս փախչըմ ա, որ ես էտ կրակն անեմ, կրակի ուժովը նի մանեմ դաղէն, շամադանը հանեմ։

Դավրէշը ասըմ ա. Էս սրհաթը կը բերեմ ցախը. մի ոտին օխտը սէլ ցախ ա բերըմ մի հետ։

Էս գոնուշ ապէն ասըմ ա. Դէ դու հեռացի։

Դա հեռանըմ ա, ապէն մնըմ ա դաղէն, քարի տակիցը ըլանիքը հանըմ, քանդըմ ա շամադանը, լցնըմ ա ապլբխի մէջ, վեր ունըմ, փախչըմ պուճուր փէտի հետ, ընկնըմ ծովը. ձուկը հասնըմ ա՝ ապէն վեր ունըմ ու տանըմ հանըմ չորը։ Դաւրէշը դրա քամակից վազըմ ա, որտի հերսիցը իրան քցըմ ա կրակը, էրվըմ ա։

Ձուկը ապէն որ հանըմ ա չորը, ասըմ ա. Ոնց որ սարքած էր շամադանը, էլ ընենց սարքա։

Տղէն սարքըմ ա։

—Դէ, ասըմ ա, վիչտով խփա էտ շամադանին, ասա, քեզանից ուզըմ եմ ուտելիք, խմելիք, սաղ, սանթուր, չալղըչի։

Տղէն խփըմ ա՝ դուս ա գալի ըտոնք պատրաստ։

Ձուկը շամադանի ամէն հնարքները սարվացընըմ ա ապէն. ենտա ասըմ ա. Դէ գնա, տղա, ես քու պարտքիցը պրծա, էն քու արած լաւութունդ, էս էլ իմը։

Տղէն ընկնըմ ա ճամփէն՝ էթըմ. էթըմ ա՝ մի մենձ հասար ա պատահըմ, դէս ա ընկնըմ, դէն ա ընկնըմ, պատիցը մի ջրի ծակ ա ելըմ, էտ ծակովը մտնըմ ա տղէն, էն գիհը, տենըմ ա մի շատ լաւ բաղ, բոխչա։ Ընեղ մնըմ ա ընչար մութն ընկնըմ ա։ Մի ասի, էտ բաղ ու բոխչէն մի թաքաւորի ախչկա ա, որ մութն ընկնըմ ա, տղէն շամադանը սարքըմ ա, ուզըմ ա ամէն բանը, ուտելիքը, խմելիքը, սաղ ածողները, քէֆ անողները, վառըմ ա ճրաքները, սկսըմ ա բաղի մէջը սարքել հաղալը. ընենց ա տրորըմ էտ բաղի մի դրաղը, որ էլ ես ասելու։ Փանջարիցը թաքաւորի ախչիկը մտիկ ա տալի, տենըմ ա, որ բաղի մի գիհը բռնած հաղըմ են։ Թաքաւորի ախչիկը քառասուն զարավաշը վեր ա ունըմ գալի, ասըմ ա. Էկէք, էթանք տենանք էտ ինչ բան ա՝ բաղի մի

դիհը բռնել են, քանդեցին մեր բաղը։ Գալիս են մօտանում, դը-բանց շրփրլտոցը որ աղէն առնում ա, շամադանին տալիս ա խա-փանում ա։ Ախչկէրքը տեսնում են, որ բաղի մի դիհը մութը մնաց, ոչ մարթ կա, ոչ բան։

Տղէն գնաց մտաւ ջրի ծակը։

Դարուվաշները ասեցին թաքաւորի ախչկանը. էտ էրազ էր, ինչ բան էր։ Առաւօտը վեկացան ախչկէրքը էկան տեհան բաղի մի դիհը տրորած, ջարթած ա. յէքսի քշերը էլի տղէն սարքեց շամադանը, էլի ըտենց քէֆ անողները սկսեցին քէֆը, ախչիկը էլի կարեցաւ ոչ բռնի տղին։ Տղէն էլի շամադանին տվուց խա-փանեց, էլի մտաւ ջրի ծակը։ Յէքսի քշերը ախչկա ջանին հա-սաւ, տղէն որ սարքեց շամադանը, սարքեց քէֆ անելը, թաքա-ւորի ախչիկը շորերը հանեց, ոտները հանեց, որ քոլի չկոչի, ձէն հանի, սուս ու փուս էկաւ, տղին բռնեց։ Վէ կալաւ տարաւ իրա օթախը։

Տղին ասեց. Դու իմ բաղին էս դդար ինաս ես տվէ, պլտի ջաւրմէն տաս։

Ասեց. Ախչի, ինչ ես ասում, ես ինչ եմ արէ, ինչ ունեմ, որ ջաւրմէն տամ։

Ախչիկը տեհաւ տղէն իրա տրածը պահում ա, Դէ, ասեց, բան չկա, մի աղա, էտ հնարը սարքի, մի քիչ քէֆ անենք։

Տղէն սարքեց, հաղացին, քէֆ արին։ Տղին հարբացրուց ախչիկը, շամադանը ձեռքից առաւ, տվուց մի նոքարի շլակ, ասեց. Տարէք էս տղին դէն քցէք։

Տարան դէն քցեցին տղին։

Լիսայաւ, տղի ուշքը գլուխն էկաւ, վէ կացաւ տեհաւ որ ոչ շամադան կա, ոչ բան։

Տղէն գժվեց, գնաց նի էլաւ սարը, մի պուճուր խուրջին վէ կալաւ, մրն էլ մի դվիթ գալամ (թանաքաման) ընկաւ էտ սարի մէջը, ծաղիկ քաղեց, քոլ քաղեց, ընկաւ ման գալու, ասում էր՝ հե-քիմ եմ, ջառահ եմ. մի ասի, ախչիկը ուզում ա շամադանիցը բան հանի, թաքաւորին, թաքուհուն ուրախացնի, չի հասկանում, որ շամադանին տալիս ա, գուն ա գալի հարիր արաբ, քուրդ, դա-դանագները ձեռներին, տալիս են էտ թամաշաւորին, թաքաւո-րին, թաքուհուն, ջարթ ու խուրթ անում։

Էտ տղէն որ ման ա գալի, ասում ա հեքիմ եմ, ջառահ եմ, լսում են մարթիքը, խարար են տանում թաքաւորին, ասում են ըսենց մի աղա կա, ասում ա հեքիմ եմ, ջառահ եմ։

Թաքաւորը ասում ա. Գնացէք, բերէք էտ տղին, լալի մեզ լաւացնի։

Բերում են էտ տղին. Հը՞, ասում ա, ա՛յ տղա, դու ինչ թաւուր հեքիմ ես, որ մեզ լաւացընես, ինչ ուզես կը տամ։

Ասում ա. Ի՞նչ ուզեմ՝ կը տանք։

Ասում են. Կը տանք։

Ասում ա. Ընեղ մի ամանաթ կա, էտ տվէք, ես քոմմքիդ լաւացընեմ։

Ախչիկը մտածում ա, ասում ա.Էլ նոր պահեմ ինչ անեմ շամադանը, որ կարում չեմ բանացընիլ, սրանից էլ լաւ տղա չեմ կարա քթնի, համ շամադանը տամ իրան, համ էլ իրան առնեմ։ Շամադանը տվուց տղին։ Տղէն շամադանին տվուց, ասեց. Շամադան, քեզանից էն գեղը կուզեմ, որ քսած սնաթը ըստոնց լաւացընի։ Շամադանին տալու հետոյը՝ բերուց գեղը, բիրտնով էլ լաւացան։

Թաքաւորն ասեց. Տղա, իմ ախչիկը տվի քեզ։

Սարքեցին օխտն օր, օխտը քշեր հարսանիք արին, տղէն վուսակվեց։

Մի քանի ժամանակ մնալուց հետոյ, տղէն թաքաւորի ախչըկանն ասեց. Մենք պտի էթանք, ես էլ եմ հօրն ու մօր տէր։

Թաքաւորի ախչիկը ասեց, որ ըռենց ա, թաքաւորին ասա։

Թէ՝ ինչ թաւուր ասեմ ես։

Ասեց. Թաքաւորը առաւօտը տեղիցը վի կենալուս, որ ջուր ածես ձեռին լվացվի, էտ մնալը կիմանա, որ էթալու ես։ Ինչ որ ասելու ա, կասի։

Տղէն առաւօտը վի կացաւ, գնաց թաքաւորի ձեռին ջուր ածեց։

Թաքաւորն ասեց. Հը՞, ինչ կա, որթի։ Ինձ տղա չունեմ, բան չունեմ, էտ մի ախչիկն ա, կաց, էս թաքաւորութունը քեզ կըլի։

Տղէն պատասխանեց, ասեց. Թաքաւոր, ես էլ հօր տէր եմ, մօր տէր եմ, տղի տէր։

— Դէ, ասեց, որ կէթաս, դու գիտես։

Բերուց տղին շատ մենձ բաժրնքով ու զօշընով ճամփու դըրեց։

Մի քիչ գնացին, տղէն ետ դարձրուց զօշընին, թաքաւորի գրած բաժինքը, փողը, ոսկին ցրվեց զօշընին, ասեց. Ես շնորհակալ եմ, դուք ետ դառէք, գնացէք։ Շամադանին տվուց, հինգ հարիր գլուխ արաբ, հինգ հարիր գլուխ քուրդ, հինգ հարիր գլուխ էլ զօշուն պատրաստեց, քցեց յասաջ, ասեց. Ինչ դուշման գա իմ վրա, տվէք ջախուփուրթ արէք։ Ընկան ճամփէն ու գնացին։

Խարարը ումից տանք։

Ջումշուդիցն ու մօրիցը։

Զումշուդը մօրն ասեց. Ըստի մեր մնալը դուր ա։

Մէրն ասեց. Բա ոնց էթանք ըստեղից, ինձ վոտ չունեմ, չեմ կարալ էթալ, դու էլ պուճուր ես։

Զումշուդն ասեց. Բան չկա, քիչ քիչ կը շըլակեմ, կը տանեմ։

Ըտեղան որ դուս էկան, քիչ քիչ շըլակըմ էր, տանըմ էր։

Շատ տարաւ, քիչ տարաւ, Աստված գիտէր, բեզարեց, նըստեցին։ Զումշուդը զլուխը դրուց մօր ծնկան վրա, քունը տարաւ, քնեց, էրազըմը տեհաւ էրկու աղունիկ վեր էն էկէ իրանցից մխելի հեռու, իրար հետ խօսըմ են. մինն ասեց. Վա՛յ, խեղճ տղա։

Էն մինն ասեց. Խի՞ ա խեղճ։

Ասեց. Բա խեղճ չի, ինչ ա, մօրը վոտ չունի, ինքն էլ պուճուր ա, կարըմ չի տանի։

Էն մինն ասեց. Բան չկա, մենք ըստեղան կը թռչենք, էրկու ըմբուլ վի կընկնի մեզնից, եռով տղէն քնատեղիցը վի կը կենա, յիրանց նստած տեղը կը քանդի, ըտեղ յաղբուր դուս կը քցի անմահական, կը խմեն, մօր կտրած վոտները կածի ջուրը, մօր չոքերն էլ կը դնի ջուրը, Աստծու հրամանքովը վոտները կը վոտիչանա, ամէն վոտը կը դնի իրա տեղը, եռով էտ մեր ըմբուլը վի կունի, յաղբրիցը ջուրը վի կունի, կը քսի վոտներին, կը սաղանա, կըլի մօրէն մէկ։ Վի կըկենան, կընկնեն ճամփէն։

Զումշուդը քնիցը վի կացաւ, տեհաւ էրկու ըմբուլ ըտի վեր ընկած, գնաց ըմբըլները վի կալաւ, էկաւ իրենց նստած տեղը փորեց, անմահական յաղբուրը դուս քցեց, մօր վոտները քցեց ջուրը, չոքերը կոխեց ջուրը, Աստծու հրամանքովը դրանք ողջացան, ամէն վոտը դրուց իր տեղը, ըմբուլով ջուրը վի կալաւ, քսեց վոտներին, վոտները լաւացաւ, էլաւ մօրէն մէկ։

Մէրն ասեց. Էս ինչ բան էր։

Ասեց. Էրազըմըս տեհա, որ էրկու աղունիկ ընտի վեր են էկէ։

Մէրն ասեց. Դրուստ ա, էրկու աղունիկ ըտի կային, թռան։

Զումշուդը պատմեց էրազը։

Մէրը փառք տուց Աստծուն, վի կացան, ընկան ճամփէն։

Շատ գնացին, քիչ գնացին, խարաբը ուսից տանք՝ Խուրշուդը ըտգար գոշընով, քրդերով, արաբներով գալիս էր։ Մտիկ արուց Խուրշուդը, որ էրկու հոգի գալիս են, մտիկ արուց տեհաւ, մինն էլ մէրն ա։ Շաշմիշ էլաւ, ասեց. Թէ էս իմ մէրն ա, իմ մէրը վոտներ չունէր, նա որ Զումշուդն ա։ Տվուց շամադանին, գոշունը, արաբները, քուրդը խափանեց, որ չէթան, տան, վնասեն

ախալօրը։ Եռով գնաց մօտացաւ, տեսաւ որ իրա մէրն ա, ու իրա ախալէրն ա։ Էկան յիրար բարովեցին։

— Մէր, ասեց, էս ինչ էլաւ՝ քու վոնները լուացաւ։

Ոնց որ էլել էր՝ ընենց էլ ասեց Խուրշուդին, եռով եա դառան էկան էն անմահական յաղրբրի կուշտը, նրանք էլ ջուր խըմեցին, լվացվեցին, էկան հասան իրանց յառաչվա դաղէն։ Ըսեղ շամադանի հնարքովը շինեցին մի թաքաւորական պալատ։

Թող բարի նստեն. մենք խարարը ուսմից տանք։

Ասլանիցը։

Ասլանը կովից եա դառաւ էկաւ, տեսաւ որ տանը կնիկը չկա, թաքաւորին ասեց. Թաքաւոր, ինչ նամակ իր գրէ ինձ։ Չէ՞ եա գրեցի, թէ պահէք ընչըմ ես դամ։

Թաքաւորն ասեց. Ասլան, քու կնիկը փիս չէր, մի խելօք, մի հնազանդ օղլուշաղ էր, էրկու ազա էր բերէ, մինը մընիցը սիրուն, էա ինչ նամակ իր գրէ, թէ ըստեղ էօրցրա, ես էլ կորցրել եմ։

Ասլանը վե կացաւ, ընկաւ հանդը մանդալու։ Մանդալով գնաց էն տեղը, որ էա կընկանը բերել էր, նստեց յաղրբրի վրա, մտածում էր իրա համար. դու մի ասի, էա տեսչկա մենձ ախալէրը մտածեց, ասեց, իմ անդգամ կնիկը, մի քիր էր՝ օխտն ախալէր ինք, մըզնից կորցրրուց։ Եարար ման գամ՝ կարամ քթնի։ Ման գալով էկաւ էա յաղրուրը, որ բերել ին, չոքերը կտրել ին, վեր ին դրէ։ Էկաւ տեսաւ որ մի մարթ էլ կա բան։ Մուքթն էր օրը, էկաւ դրան բարով ասուց, անծանօթ յիրար հետ բարովեցին։

Ասեց. Ա՛յ մարթ, դու ինչ մարթ ես. մուքթն ա, մնանք էս յաղրբրի վրա։ Խոսացին, ասեց. Քշերը ոնց պլտի լուացընենք, յարի դու քու դլխի անցածը ասա, ես էլ իմը, մինչի լիսանա, դու կլեթաս քու բանին, ես էլ կլեթամ իմ բանին։

Խոսացին, յամէնքը յիրա դլխի էկածը ասեց։ Խոսքերիցը բելլու արուց, որ Ասլանի ըստեղան տարած ախչիկը, թաքաւորի աղէն մտածեց, թէ էս կա չկա՝ իմ քիրն ա։ Էրկբսի խոսալը քիչ յիրար մօտ էկաւ. Ասլանն ասեց. Իմ կնկանն եմ ման գալի, թաքաւորի աղէն էլ ասեց. Իմ քվորն եմ ման գալի։

Քնեցին. առավօտը վե կացան, ասեցին. Էրկսիս ասածն էլ մին ա, ընկան յիրար հետ գնացին։

Գնացին, շատ ու քիչ Ասամած գիտա, գնացին մօտացան էն տեղին, որ Խուրշուդ, Ջումշուդը մնըմ ին։ Ջումշուդը դուս էկաւ դուռը, մտիկ արուց, տեսաւ էրկու մարթ ա գալի, հաւար տարաւ, ասեց. Խուրշուդին տանող դաւրէշները գալիս են, ես էթըմ եմ դրանց սըպանեմ։ Մէրը դուս էկաւ հետը, մտիկ արուց

էտ մարթկերանցը, տէհաւ որ մինը իրա մարթն ա, մինն էլ իրա ախպէրն ա։ Զումշուդին ասեց. Բան չկա, թող գան. ըտոնք գավրէշ չեն։

Էկան մօտացան, բարով տվին, դրանց ղօնաղ վե կալաւ, տարաւ դրուց մի ջոկ օթախի մէջ, եռով տղերանցն ասեց. Խուրշուդ, Զումշուդ, էն մինը ձեր քեռին ա, էն մինն էլ ձեր հէրն ա։

Ասեցին. Մենց, մեզ հէրը որտեղան ա։

— Դէ, ասէց, որ ինձ հաւատում չէք, գնացէք դուանը յանկաճ դրէք։

Գնացին յանկաճ դրին։

Քեռին ասեց. Էտ իմ քիրն ա։

Ասլանն ասեց. Թէ որ քու քիրն ա, իմ էլ էնիկն ա, էտ ա որ նրա վոնները կտրած էր, ըտունը սաղ ա, դրա համար ես շաշմիշ եմ ըլում։

Տղէքը խարար տարան մօրը, ասեցին. Այ մէր, վոնց ասում ես, ընենց ա. քեռին ասում՝ էտ իմ քիրն ա, մէր հէրն էլ ասում ա դրա վոնները կտրած էր, դրանից քընար չեմ հանում։

Դրանց պատվեցին, պահեցին ընչար լիսացաւ, ճամփու քցեցին։ Մէրը դրանց խուրջընի մէջը մի թաս դրուց։ Դրանք որ ճամփին էթում ին, մէրը ղրկեց Խուրշուդին, ետ դարձրուց ճամփիցը, բերուց տուն, ասեց. Այ մարթիք, գողութունը չոլըմը կանեն։

Ախպէրը պատասխանեց. Ընչի՞ հրմար. մենք հօ գող չենք։

Ասեց. Որ գող չես, պըտի խուրջինդ ման գամ։

Ման էկաւ խուրջինը, թասը հանեց, ասեց. Բա էս ի՞նչ ա։

Ասեց. Հա՛յ, հա՛յ, հայ, շատ թէ ըտենց շատ. ա՛յ քիրս, Աստծու խաթեր, մենք գող չենք, մենք աւազակ չենք, էս շատը խի՞ կպցրիր մեզանից։

Ասեց. Էտ շատ ա, քու կնդա տրածը շատ չի՞, ա՛յ անջիգեար ախպէր, ասեց ու փաթափվեց ախպօրը։ Լացին, իրար պաչեցին, նստեցին, դարթլամիշ էլան։ Եռով վե կացան, ծանդրը վեր ածեցին, թեթեր վե կալան, գնացին դըրա Ասլանի տունը։ Աշկալիսէք տարան Ասլանի հօրը թէ՝ տղէդ հարսիդ ու թոռներիդ հետ գալիս են։ Թաքաւորը ուրախացաւ, դափով զուռնով գնաց յաղաքը, բերուց տուն։ Նորից հարցրին, թէ նամակը ով ա տարել։ Իմացան, կանչեցին։ Նամակ տանողը էկաւ, հարցրին նամակ տանողին, թէ դու նամակը տանելուս որտեղ մնացիր։

Նամակ տանողը ասեց. Մնացի օխտը ճամփի մէջտեղը, որ

խէյրաթ խանա էն շինէ։ Ըտեղ ինձ պատվեցին, հարսիացրին, էլ չեմ յիմանում՝ ինչ ա ըլել։

Ասեցին. Խէյրաթ—խանէն ումն ա։

Ասեցին. Ֆըլան թաքաւորի հարսն ա շինէ։

Կանչեցին էտ խէյրաթ—խանա շինող հարսին, թաքաւորին մի զաթիր ունէր, օխտը տարի դուս չէին քաշէ, հարսին զաղարելու (պատժելու) համար կապեցին զաթըրի պոչիցը, ըրախեցին հանդը. մինձ թիքէն մնաց էրկու յանկաճը։

Նորից ըրին մի լաւ հարսանիք արին, օխտն օր, օխտը գշեր կերան խմեցին, քէֆ արին։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։

Աստծուցը իրեք խնձոր վեր ընկաւ, մինն ասողին, մինը լսողին, մինն էլ յանկաճ անողին։

ԻՐ ՀԱՐՍԻՆ ԱՂՔ ԴՆՈՂ ԹԱԳԱՒՈՐԸ.

(Օշական *)

Ժամանակով կար, չկար մի թաքաւոր. ունէր երեք որթի։ Նաղիր վաղիրը թոփ էլան, ասեցին. Թաքաւոր, տղէքանցդ պըտի փըսակես, հասել են։

Թաքաւորն ասեց. Շատ լաւ, թող գան իրանց նեռերը բցեն, որի դուռը ընկնի՝ նրա ախչիկը ուզեմ։

Առաջ մեծ տղէն քցեց իրա նեռը, ընկաւ նաղըրի դուռը, ենոնա միշնէկ տղէն քցեց, ընկաւ նաղըրի դուռը. էկաւ պուճուր տղէն, նեռը քցեց, գնաց դէմ էլաւ մի լեռ քարափի։ Թաքաւորը էրկըսին փսակեց, հարսնիքը բերուց տուն։ Ետ դառաւ Թաքաւորը ասեց պուճուր տղին. Արի մըն էլ քցա նեռդ։

Պուճուր տղէն պատասխանեց. Չէ, իմ բախտը էն քարափն ա։ Վե կացաւ գնաց էն քարափի տակը կանգնեց, սկսեց լաց ըլել։ Աստանից էր, էկաւ էտ քարափի մէջ մի դուռը բացվեց, տղէն նի մտաւ նեքսև, տեհաւ մի պառաւ նստած ա։

Պառաւն ասեց. Ո՞ւրթի, օրն իր պըրատվը, դուշն իր թեռվը կարալ չի ըսաի դա, դու մոնց էկար։

Տղէն ասեց. Նանի, իմ զամանը ըսանեղ ա, տուր տանեմ։

Պառաւն ասեց. Բալի Աստված ա կամենալ, կը տամ։

Վե կալաւ պառաւը իրա պուճուր ախչիկը տվուց տղին՝ ասեց. Ըհը՝, էս ա քու զամանը, տա գնա։

Տղէն վե կալաւ, էկաւ հոր տունը։ Հէրը օխտ որ, օխտը քշեր հարսանիք արուց, դրան փսակեց։

Յարի որ էտ ախչիկը շատ սիրուն էր, թաքաւորի միտքը փոխեց, ասեց. Ա՜յ հայ, ես թաքաւոր ըլեմ ու ըսենց կնիկը իմ տղէն պահի։

---

*) Պատմեց 1913 թ. Սեպտ. 1-ին Օշականում նոյն գիւղացի Աւետիս Նազարեան անգրագէտ ծերունին, որ այժմ ջրաղացպան է։

Թաքուհին տեհաւ՝ ընկաւ մըտքի հետ, դուսա (դարդ) արուց, մեռաւ։

Թաքուհին որ մեռաւ, թաքաւորը էլ ըսկի քաշվեց ոչ, ուղեց տղին փչացնի, որ հարսը մնա իրան. կանչեց, ասեց. Մէրդ խաղնի ըլանիքները հետը տարել ա, պըտի էթաս ըներես, թէ չէ գըլուխդ կը կտրեմ։

Տղէն ընկաւ մտքի հետ՝ մտածեց, ասեց. Աստված, իմ ճարը ինչ պըտի ըլի։

Կնիկն ասեց. Դարդ անիլ մի, գնա իմ մօր կուշտը, նա մի ճար կանի։

Տղէն ընկաւ ճամփա, գնաց իրա անոր տունը, ասեց. Այ նանի, իմը դու, քուռն Աստված, իմ հէրը էս դաղարին (պատժին) ա դէմ արէ։

Նանն ասեց. Որթի, եուաշ կանչեմ տղես, նա մի իլլաջ կանի։

Նանը կանչեց տղին, ասեց. Որթի, փեսիդ պըտի տանես էն դիւնիէն, մօրիցը խաղնի ըլանիքները ըներ։

Միրզամը (անեբորդին) ասեց. Դէ, նանի, մխելի բուրթ ու մի շոր ըն, փըթաթեմ մեր փէսին, որ չը մրսի։

Նանը բուրթ ու շոր ըներուց, դայիմ փթաթեց փէսին, միրզամը փէսին դրեց յուսին՝ ընկաւ ճամփա, նի հանեց էն դունիէն (աշխարհ)։ Վեր դրուց ըսեղ, բուրթը ետ արուց, ասեց. Փէսա, դու էս ճամփէն ըռնես կէթաս, ինչ կը տեսնաս, հարց կանես, յառաջդ կը դա մի գետ, նոր ընտեղ ձէն կը տաս քու մօրը, մէրդ կը դա, նոր ինչ ասելու ես՝ կասես։

Տղէն ընկաւ ճամփա. գնաց։ Գնաց տեհաւ մի չընդիլ (քարքարոտ) տեղ, մի եղը կանգնած. շատ չաղ էր էտ եղը։ Էլ եթ գընաց, տեհաւ մի լաւ արօտատեղ, մի եղը կանգնած, էնքան առըխ (վտիտ) ա, որ վոտի վրա չի կարըմ կանգնի։ Տղէն թողուց էլ եթ գնաց. գնաց տեհաւ մի պառաւ, թունդիրը վառել ա, ծծերով փարատըմ ա, որ հաց թխի, անցաւ գնաց հասաւ գետին, ձէն տըվուց մօրը, ասեց. Մէր, խաղնի ըլանիքները որտեղ ա։

Մէրն էկաւ, որ տղին տեհաւ, ասաց. Վա՛յ, վա՛յ, դու էլ ես էկէ ըստեղ։

Տղէն ասեց. Զէ, էկել եմ խաղնի ըլանիքներին։

Մէրն ասեց. Հըլա էն քարը հետդ ընկած ա։ Գնա, որթի, հրէ գետամի սան տակին ա ըլանիքները։

Տղէն ետ դարձաւ, էկաւ հասաւ էն պառաւին՝ ասեց. Նանի ջան, իմ ես դու ծծերով փարատըմ էտ թունդիրը։

Նանն ասեց. Որթի, էն դունիումը ես հաց թուխ ի, ինչքան

մուրտաս շոր ըլլամ էր, ընդով ես թունդիրը սրփում ի, հրմի ըստեղ ծծերով պլտի սրփեմ, որ ազատուի իմ ֆոքին։

Տղէն անցաւ գնաց, հասաւ եղանը, ասեց. Ա՛յ եղը, տեղդ խոտ, ջաննաթ (դրախտ) ա, բա խի՞ ես առըխ։

Եղն ասեց. Հէյ հողածին, էկել ես մեզնից բան ես հարցընում, էն աշխարհի միչումը մենք շատ մեծատուն ինք, հրմի ըստեղ առըխ են պահըմ։

Տղէն շարունակեց ճամփէն, էկաւ չընդըլի եղան կուշտը, ասեց. Ա՛յ եղը ջան, էս չընդըլի միչին ինչ ես ուտըմ, որ ըտդար չաղ ես։

Եղը ասեց. Ես էն աշխարքըմը ախկատ ի, հրմի ըստի Աստըված չաղութուն ա տվել։

Տղէն շարունակեց ճամփէն, էկաւ իրա միրդամի կուշտը, միրդամը դրուց դրան բրթի մէչը, փթաթեց, դրուց յուսին, բերուց իրանց քարափը։ Պառաւն էկաւ պաչեց ջխտի թուշը, ասեց. Բալա ջան, դէ Աստված քեզ հետ, գնա, յաչողութուն ըլի։

Տղէն նանի ծիծը պաչեց, ետ դառաւ գնաց իրանց տունը։ Գնաց տեհաւ որ հէրը քար ա դառել մտածեց թէ էս մոր անէծքիցն ա, որ ասեց, թէ էն քարը հլա հետդ ընկած ա։

Ախպէրտինքը բերին դրան շինեցին թաքաւոր։ Դրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։

Աստանից յիրեք խնձոր վեր ընկաւ, մինը ասողին, մինը լսողին, մինն էլ յանկաճ դնողին։

ՑԱՆԿ

I. Աշխարհակ.

1. Անայ թագաւորի հեքիաթը, պատմեց Գէորգ Գէորգեանը . . . . 9— 27
2. Արդար թագաւոր . . . » » 28— 40
3. Հրայի հեքիաթը . . . » » 41— 46
4. Հուրի թագաւորի ախչկա հեքիաթը . » » 47— 62
5. Օհան ընչպարի տղի հեքիաթը . » » 63— 73
6. Զէյրան օղլի . . . . » » 74— 82
7. Ամիր-Շամիրի հեքիաթը . . » » 83— 97
8. Սուրա . . . . . » » 98—109
9. Դիւլչանի հեքիաթը . . . » » 110—124
10. Հաղարան Բլրուլ կամ Ալօ-Դինօի նաղլը, պատմեց Աւետիս Գրիգորեանը . 125—143
11. Թամբալ տղի հեքիաթը . » » . 144—152
12. Սոյլամազ խանումի հեքիաթը » » . 153—168
13. Կարապետ-բէկի հեքիաթը » » . 169—188
14. Ալվէսն ու Գէլը . . » » . 189—190
15. Փէտէ Զին, պատմեց Նէրսէս Տէր Մինասեանը . 191—197
16. Ոսկէ Բաքուլ տղի հեքիաթը, պատմեց Դաւիթ Դաւթեանցը . . . . 198—220
17. Ղուշ Փարին . . . . » » 221—233

II. Օտարաշ.

18. Խոսրով շահ, պատմեց Պետրոս Մուքայէլեանը . 234—244
19. Օհան աշըգն ու Բօսէն. » » . 245—251
20. Աչու տղի հեքիաթը . » » . 252—264
21. Բերդակ թագաւոր, պատմեց Մկրտիչ Զարգարեանը 265—276
22. Իմաստուն իծի հեքիաթը » » 277—289
23. Ասլան թագաւոր, պատմեց Գէորգ Առաքելեանը . 290—300
24. Իր հարսին աչք գնող թագաւորը, պատմեց Աւետիս Նազարեանը . . . . . 301—303

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0068524

2666